891.99
Ч-40

-6 NOV 201

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերություն № 7

зала 7
шкафъ LXVI
полка 8 № 73

ՆԱՐ-ԴՈՍ

ՄԱՀԸ

ՎԷՊ

387

ԹԻՖԼԻՍ
Էլէկտրատպ. Օր. Ն. Աղանեանցի, Պոլիս. 7
1912

Սոֆիայի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն № 7

891.99
Հ-40
Арм.
2-1267а

ՆԵՐ-ԳՈՍ

ՄԱՀԸ

ՎԷՊ

Инв № 16875

ԹԻՖԼԻՍ
Էլէկտրական Օր. Ն. Աղաճանի, Պօլից. 7
1912

10.07.2013

46186

39922-63

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀՈՐԱՀԱՐԻՐԱՄԵԱՅ

ՅՕԲԵԼԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿ

1512—1912

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Բաթումից երկաթուղու մարդատար գնացքը սլանում էր դեպի Թիֆլիս։ Թէև ամառը դեռ չէր վերջացել, բայց օդի մէջ արդէն զգալի էր վաղահաս աշնան ցուրտ շունչը, որ դուժկան էր 1890—91 թուականի խստաշունչ ձմրան։ Շոգեմեքենայի և վագոնների հանած միակերպ աղմուկն ուղևորների համար անլսելի էր կացուցանում փոթորկի ձայնը, որ կատաղօրէն սուլում ու մռնչում էր դուրսը, Իմերէթի լեռնուտների վրայ։ Նկատելի և հազիւ լսելի էր լինում միայն, թէ ինչպէս անձրևի խոշոր կաթիլներն ուժգնութեամբ զարկւում էին վագոնների փակ լուսամուտների ապակիներին և թրջում։ Արտասուող ապակիների միջից ոչինչ չէր երևում դուրսը։ Միայն յաճախ, երբ գնացքն անցնում էր փորուած տեղերով, յանկարծ երևում և արագօրէն, կարծես պտտուելով, հակառակ կողմն էր վազում բարձր մնացած հողաթմբերի մութ զանգուածը։

Երկրորդ կարգի վագոններից մէկում, երկայն նստարաններից մէկի վրայ երեսն ի վեր պառկած էր մի երիտասարդ, ձմեռուայ տաք վերարկուի մէջ կոլոլուած։ Ամառուայ սպիտակ գլխարկը ցած էր քաշել

մինչև ականջները, այնպես որ հապիւ էին երևում նրա ոսկեպատ ակնոցի պարզ ապակիները, գլուխը յենել էր վագոնի պատն ի վեր ցից դրած ճանապարհորդական բարձին, ձեռները ներս էր կոխել վերարկուի թևերի մէջ և նիրհում էր, վագոնի հետ օրօրուելով։ Հանդէպի նստարանի վրայ ոչոք չկար։ Միւս նստարանների վրայ նստած էին կէնտուկունտ մարդիկ, որոնք ծուլաբար մի-մի խօսք էին փոխանակում իրար հետ, և նրանց ձայնը վագոնի միակերպ խուլ աղմուկի մէջ հնչում էր մի առանձին խորհրդաւորութեամբ, ինչպէս դաւադիրների քչփչոց։

Դռներից մէկը բացուեց, ցուրտ օդի մի հոսանք ներս թողնելով, և շրխկալով փակուեց նորից։

—«Միխայլովո»,—լսուեց կոնդուկտորի ձայնը։

Երիտասարդն աչքերը բաց արեց, ձեռները կամաց հանեց վերարկուի թևերի միջից, ոտները դանդաղօրէն ցած թողեց նստարանից, նստեց և գլխարկը բարձրացրեց աչքերից։

Կոնդուկտորն անցաւ վագոնի երկայնքով և դուրս գնաց հակառակ կողմից, դուռը նորից շրխկացնելով իր ետևից։

Լսուեց շոգեմեքենայի երկար խուլ սուլոցը, որ կարծես հորից էր դուրս գալիս, և մի քանի րոպէից յետոյ գնացքը, կամաց-կամաց դանդաղեցնելով իր ընթացքը, անդգալի կերպով կանգ առաւ «Միխայլովո» կայարանում։

Երիտասարդը վեր կացաւ և մի րոպէ տատանման մէջ էր՝ դուրս գնայ, թէ ոչ։ Բայց, տեսնելով որ ամենքը դուրս են գնում, ինքն էլ հետևեց նրանց։

Հէնց ոտը դրեց պլատֆորմի վրայ և ուզում էր ուղղուել դէպի բուֆետի դահլիճը, մէկը, որ՝ մի փոքրիկ ճամպրուկ ձեռին բռնած՝ շտապ քայլերով անցնում

էր նրա առաջով, յանկարծ կանգ առաւ և նայեց նրան։

Դա մօտ երեսուն տարեկան, խիստ համարձակ և վերին աստիճանի կրակոտ աչքերով մի երիտասարդ էր, որի այրական գեղեցիկ արտաքինին ուրոյն գրաւչութիւն էր տալիս զուտ արտիստական ճաշակով կարուած նրա հագուստը—կինամոնագոյն փափուկ կաստորի գլխարկը, նոյն գոյնի մահուդի կարճ բաճկոնը, աջ ուսից ձախ կողքին կախ ընկած սև պայուսակով, և երկարաճիտ պլպլան կօշիկները։

—Շահեանն... Լևոն,—բացականչեց նա, ճամպրուկն աջ ձեռից արագութեամբ փոխադրելով ձախ ձեռը։

Շահեանն իր պլպլան ակնոցի միջից կէս-զարմացած, կէս-ապուշ հայեացքով նայեց նրա ահագին սևաթոյր աչքերին։

—Բա... բա...—մեքենայաբար արտասանեց նա, ըստ երևոյթին ջանք անելով յիշելու նրա անունը։

—Հա, հա, Բաղէնեան,—վրայ գցեց նրան իր անակնկալ բարեկամը և պինդ սեղմեց նրա ձեռը։—Տընաշէն, մի՞թէ այնքան թոյլ յիշողութիւն ունիս, որ մինչև անգամ ինձ էլ չես կարողանում միանգամից յիշել։ Բա-բա ես անում, կարծես Զատկի գառը լինիս։ Կարծեմ, ես այնքան էլ չեմ փոխուել։ Իսկ դու... Երեւակայիր, որ միայն ակնոցիցդ ճանաչեցի քեզ։ Դէմքդ այնքան սպիտակել և քնքշացել է, որ կարծես աղջիկ լինիս... Բայց այս ինչպիսի բան է. մենք գալիս ենք այս միևնոյն գնացքով և միայն այստեղ ենք հանդիպում իրար։

—Դու էլ այս գնացքով ես գալիս,—զարմացաւ Շահեանը։

—Եկայ, և գնացքն այստեղից կըշարունակի իր

ճանապարհը, առանց այլևս իմ մարմնի ծանրությունը կրելու։

—Այստեղից բաժանվում ենք։

—Այո՛, բարեկամս. ես գնում եմ Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ, Կարս և այլն... Գիտեմ, իսկոյն պիտի հարցնես, թէ որտեղից եմ գալիս։ Գալիս եմ ուղղակի Ղրիմից։ Իսկ որպէսզի աւելորդ նեղութիւն չտաս քեզ հարցնելու ինձ, թէ ինչ բանի եմ, այդ մասին քեզ հետ կըխօսեմ Թիֆլիսում, երբ այս կողմերն անելիք կարճ էքսկուրսիայիցս յետոյ կըգամ այնտեղ և մի անգամ առանձնապէս կըտեսնուեմ քեզ հետ։ Առ այժմ... Լսիր, քանի՞ տարի կըլինի՝ չենք տեսել իրար։

—Եթէ չեմ սխալւում, տաս-տասներկու տարի կայ։

—Մի՞թէ։ Երևում է, ժամանակը շատ առողջ թեւեր ունի։ Ցտեսութիւն։ Ներիր, որ այսպէս շուտ եմ բաժանւում քեզնից։ Ես մենակ չեմ։ Տեսնում ես այն կինոջը։—Բազէնեանը մատով ցոյց տուեց դահլիճի դռան մօտ կանգնած բարձրահասակ մի կին, որի դէմքը Շահեանը չկարողացաւ տեսնել, որովհետև այդ կինը նայում էր դէպի դահլիճ։—Նա լեհացի է։ Ճանապարհին ծանօթացայ և ընկերացայ հետը։ Ամուսինը ռուս է, ծառայում է Կարսում։ Գնում է նրա մօտ... Ինչ, դու ժպտում ես։

Շահեանն այս անգամ ծիծաղեց։

Բազէնեանը հանգստութեամբ նայեց նրա անալի դէմքին և նոյն հանգստութեամբ նկատեց.

—Եթէ այդքան անհամ չծիծաղէիր, ես քեզ լրջօրէն կապացուցանէի, որ նա պատուաւոր կին է... Բայց ցտեսութիւն։ Նա սպասում է ինձ։ Մենք, երևի, կըճաշենք այստեղ ու—հայդա։ Հա, ես դեռ կառք էլ պիտի վարձեմ։

Եւ Բազէնեանը, ճամպրուկը նորից փոխադրելով աջ ձեռը, վազեց լեհացի կնոջ ետևից։ Վերջինս, տեսնելով, որ նա գալիս է, յամր քայլերով ներս մտաւ դահլիճ, չափից դուրս հարուստ մազերով ծածկուած գլուխը բարձր բռնած։

Շահեանը, երկմիտ ժպիտը դէմքին, հետևեց նրանց և, նստելով դահլիճի հեռաւոր անկիւններից մէկում դրուած մի առանձնակի սեղանի մօտ, պատուիրեց, որ իր համար թէյ բերեն։

Գրեթէ ամբողջ գնացքը փոխադրուել էր դահլիճ։ Ոմանք ձեռաց ուտելու բան էին պահանջել, ոմանք թէյով կամ ուրիշ խմիչքով էին ուզում կենդանութիւն տալ իրենց թմրած անդամներին։ Կային և նոր ուղեւորներ, գլխաւորապէս ամարանոցներից վերադարձող ընտանիքներ դպրոցական երեխաներով և անհամար մանր-մունր իրեղէններով։

Շահեանից ոչ շատ հեռու, մի բոլորովին առանձնացած սեղանի մօտ, լուսամուտի առաջ, իրար դէմուդէմ նստած էին Բազէնեանն ու լեհացի կինը։ Բազէնեանը, արմունկները սեղանի վրայ դրած, ամբողջ մէջքով թեքուել էր դէպի իր ուղեկցուհին և խօսում էր նրա հետ այնպէս, կարծես ինչ-որ ծածուկ բան էր պատմում նրան։ Յետոյ նա վեր կացաւ, արագ քայլերով մօտեցաւ բուֆետին, ինչ-որ պատուիրեց այնտեղ,—երևի ուտելու բան,—և նոյն արագ քայլերով դուրս գնաց, պլպլացնելով իր փայլուն երկարաճիտ կօշիկները։

Լեհացի կինը մնաց մենակ սեղանի մօտ իր հպարտ իրանով շիփ-շիտակ նստած։

Շահեանն այս անգամ տեսնում էր իր ակնոցի

միջից այդ կնոջ դէմքը։ Դա պատկանում էր այն հաղուագիւտ կանանց տեսակին, որոնց առողջ մարմնակազմը, լաւ խնամուելով, տարէցտարի աճում, փարթամանում է կաղնի ծառի պէս, ընդմին պահպանելով իր շնորհալիութիւնը։ Զնայելով, որ նրա տարիքը երեսունից անց էր երևում, բայց և այնպէս թւում էր, թէ նրա մարմինը դեռ ևս ընդունակ է շքեղօրէն զարդանալու։ Նրա չափից դուրս հարուստ մազերը հաղիւ էին ծածկւում գլխարկի տակ և իրենց ծանրութեամբ կարծես անդօր կերպով ճնշում էին նրա հպարտօրէն բարձրացած խոշոր գլուխը։ Ինչպէս խոշոր էր գլուխը, այնպէս և խոշոր էին աչքերը, որոնց վերևը, սակայն, կարծես յոնքեր չկային—այնքան բարակ և աննկատելի էին այդ յոնքերը։ Գուցէ մի քիչ աւելի լայն էր բերանը, որ նա ամենևին չէր էլ աշխատում փոքր ցոյց տալու. ընդհակառակը, կարծես, դեռ հպարտանում էլ էր իր բերանի լայնութեամբ, որը մի առանձին ինքնավստահ յաղթական գեղեցկութիւն էր տալիս նրա դէմքի խոշոր, տպաւորիչ գծերին։ Բայց թւում էր, թէ աւելի ևս հպարտանում էր կորսէթի մէջ խիստ սեղմուած իր փարթամ կրծքով, որ լեռնացած էր նրա լիքը կղակի տակ։

Շահեանը դիտում էր նրան արուի վախկոտ ցանկասիրութեամբ և տեսնում էր, որ դահլիճում եղած տղամարդկանցից ոչ մէկը աչքից բաց չէր թողնում նրան։

«Ինչպէս մենք ամենքս նման ենք իրար», մտածեց նա իր և այն բոլոր տղամարդկանց մասին, որոնք նայում էին այդ կնոջ վրայ ցանկասէր արուի դիշատիչ հայեացքով, և այն միտքը, որ ինքը նման էր ամենքին և ամենքը նման էին իրեն, ստիպեց նրան ամաչելու իր այն ստոր զգացումից, որ այդ կնոջ արտաքինը յարուցանում էր իր մէջ։

Վերջացնելով թէյի երկրորդ բաժակը, տասը կոպէկ աւելի վճարեց սպասաւորին և վեր կացաւ։ Հակառակ իր կամքին, անդիմադրելի փափագ էր զգում մի անգամ ևս նայելու լեհացի կնոջը, բայց վախկոտութիւնից թէ ամօթից՝ չկարողացաւ նայել և արագ քայլերով դիմեց դէպի դուրս։

Դուրսը, դահլիճի դռան մօտ, նրա դէմն ելաւ նորից Բազէնեանը։

—Կառքն արդէն վարձեցի,—ասաց նա։—Մնում է, որ իրեղէնները ստանամ։ Լսիր, Լևոն, ինչ եմ ասում։ Թիֆլիսում անպատճառ ուզում եմ քեզ տեսնել։ Էլի հին տանն էք կենում։

—Միշտ միևնոյն տանը։

—Շատ գեղեցիկ։ Թիֆլիս կըգամ մի՝ կամ, եթէ շատ ուշացայ, երկու ամսից յետոյ։ Ես քեզ շատ բան ունիմ պատմելու։ Մենք պէտք է վերանորոգենք մեր հին բարեկամութիւնը։ Դէհ, այժմ շտապիր, երրորդ զանգը շուտով կըտան։ Ցտեսութիւն։

Երբ Շահեանը մտաւ վագոն, տեսաւ, որ բաւականաչափ նոր ուղևորներ են աւելացել և արդէն վառուած է առաստաղից կպած լապտերը, թէև մութը դեռ չէր կոխել։ Նա նստեց իր տեղը և սկսեց մտածել Բազէնեանի մասին։ Շատ լաւ յիշում էր լրբի չափ յանդուգն իր դասընկերին, որի հետ ուսումնարանում եղած ժամանակ կապուած էր ընկերական կրաւորական այն տարօրինակ կապով, որը շատ անգամ երկիւղի և նախանձի արդիւնք է լինում։ Օր չէր անցնում, որ Բազէնեանը միորևէ խայտառակութիւն չգործէր, բայց միշտ դուրս էր պրծնում անվտանգ։ Ինչպէս Շահեանը, այնպէս և միւս դասընկերներից շատ շատերը նրանից անհամեմատ աւելի բարեխիղճ և աշխատասէր աշակերտներ էին, բայց, դրա փոխարէն, Բազէնեանը զարմա-

նալի ընդունակութիւն ունէր ամենքի վրայ իշխելու։ Նա բոլորովին որբ էր, և ոչոք չէր իմանում, թէ ով էր վճարում նրա ուսման վարձը և ով էր պահում նրան. բայց նա դրպանում միշտ փող էր ունենում և ինքն էլ միշտ լաւ էր հագնւում։ Մի անգամ, դեռ ուսումը չաւարտած, նա ոտով-գլխով կորաւ, և Շահեանը, որ նրա ամենամտերիմ ընկերն էր, սկզբում տրխրեց, յետոյ իսպառ մոռացաւ նրան։ Բայց ահա, երկար տարիներից յետոյ, նորից հանդիպում է Բազէնեանին ինչ-որ թափառաշրջիկի պաշտօնով մի ինչ-որ «պատուաւոր» կնոջ հետ...

Շահեանը նորից ժպտաց։

Բայց իսկապէս ինչ պաշտօնէր Բազէնեանի պաշտօնը, և ո՞վ էր այդ յաղթանդամ կինը...

Սակայն, Շահեանը չուզեց ապարդիւն ենթադրութիւններով տանջել իր թմրած ուղեղը, բարձը քաշեց գլխի տակ, պառկեց և աշխատեց քնել։

Գնացքը շարունակում էր իր ճանապարհը։ Վագոնը նորից բարձրացրել էր իր սրտամաշ աղմուկը։ Անձրևի կաթիլները կտկտալով զարկւում էին լուսամուտների ապակիներին և, նրանց վրայ ջրային ցանցեր կազմելով, թորում էին ներքև։ Առաստաղից կպած լապտերի մէջ մոմի ճրագը ցնցւում, դողդողում էր և իր ցոլքերով խաղում Շահեանի ակնոցի երկու պլպլան ապակու մէջ։

Շահեանը ոչ քնած էր, ոչ արթուն. նա ընկել էր ճանապարհորդներին յատուկ կիսաքուն տանջող դրութեան մէջ։ Մէկ էլ—վագոնում տիրած խաղաղութիւնը յանկարծ սթափեցրեց նրան։ Նա նստեց և տեսաւ, որ գնացքը կանգ է առել մի ինչ-որ կայարանում։ Նստած տեղից մեկնուելով, աշխատեց թրջուած ապակու միջից դուրս նայել դէպի կայարան, սակայն ոչինչ չտեսաւ,

բացի վառ լապտերների շաղ անցած լոյսից և մի քանի մարդկանց ուրուագծերից, որոնք շտապով այս ու այն կողմն էին անցնում։ Կայարանում տիրում էր կատարեալ անդորրութիւն։ Երևում էր, որ քամին ու անձրևը եթէ ոչ դադարել, գոնէ մեղմացել էին։ Լսւում էր միայն շոգեմեքենայի փչշոցը և վագոնների անիւներին խփած մուրճի հարուածների ձայնը, որ խուլ արձագանգ էր տալիս ամայի կայարանի մէջ։

Շահեանը պինդ կոլոլուեց իր ձմեռուայ վերարկուի մէջ, գլխարկը նորից ցած քաշեց մինչև ականջները, ձեռները կոխեց վերարկուի թևերի մէջ և կուչ եկաւ նստարանի անկիւնում։

II

Թրջուած անձրևակալը ձեռին, վերարկուի օձիքը բարձրացրած և աներևակայելի ցեխոտ երկարաճիտ կօշիկներով ներս մտաւ մի պարոն—նոր ուղևոր։ Ուրագութեամբ աչքի անցնելով վագոնում նստողներին և անձրևակալը դնելով դռան մօտ, նա նստեց Շահեանի դիմացի նստարանի վրայ։ Նա հասակն առած մարդ էր, համակրելի, ուրախ դէմքով և փոքր ինչ դուրս ցցուած փորով։ Անձրևը բաւական թրջել էր նրան։ Նա վերցրեց գլխարկը, դրեց կողքին, վեր կացաւ, վերարկուն հանեց, կախ արեց, դիտեց իր ցեխոտ կօշիկները, ոտները թափ տուեց և, թաշկինակով սրբելով քրտնած ճակատն ու ճաղատ ծոծրակը, նորից նստեց։

Շահեանն, առանց դիրքը փոխելու, ոչխարի աչքերով մի անգամ միայն նայեց նրան և նորից սկսեց նիրհել։

Նոր ուղևորն ուշադրութեամբ դիտեց նրան և շարունակեց սրբել ճակատը, ծոծրակն ու վիզը։

Շոգեմեքենան սուլեց, և գնացքը շարունակեց առաջ շարժուել։

Շահեանը մի անհանգիստ շարժում գործեց և նստեց ուղիղ։ Նոր ուղևորի հարևանութիւնը սկսել էր խանգարել նրան իր նիրհը շարունակելու։

—Չէք կարողանում քնել, հա,—դիմեց նրան նոր ուղևորը, քաղցրութեամբ ժպտալով։

Շահեանը վիզն աւելի ներս կոխեց վերարկուի օձիքի մէջ։

—Ոչ,—պատասխանեց նա։

—Ձանձրանում էք։

—Այո։

—Իսկապէս շատ ձանձրալի է երկաթուղով ճանապարհորդելը. մարդ մի տեսակ յիմար դրութեան մէջ է ընկնում. ոչ կարողանում է քնել, ոչ արթուն մնալ և ոչ գոնէ մի բանի մասին մտածել։ Այդպէս չէ՞։

—Այդպէս է։

—Զարմանալի արարած է մարդս առհասարակ,—շարունակեց Շահեանի անծանօթ ուղեկիցը։—Երկաթուղին ամենայարմար և ամենաարագ միջոցն է, չէ՞, փոխադրութեան համար. բայց արի տես, որ մարդս էլի դժգոհ է. ուզում է այնպիսի մի նոր միջոց, որով կարելի լինի աւելի կարճ միջոցում աւելի երկար ճանապարհ կտրել։ Ես հաւատում եմ մտքի յաղթանակին և ամենևին չեմ տարակուսում, որ այդպիսի մի միջոց կը-գտնուի անպատճառ, հէնց թէկուզ այնպիսի մի բան, որով մարդ կարողանայ թռչել օդի մէջ, ոչ թէ օդապարիկով, ոչ,—օդապարիկն էլ շատ վտանգաւոր բան է,—այլ ուղղակի թռչունի պէս։ Սակայն, այդպիսի փորձեր, կարծեմ, եղել են, չէ՞։

—Կարծեմ։

Նոր ուղևորն, ըստ երևոյթին, ուզում էր շարունակել խօսակցութիւնը, բայց, տեսնելով որ երիտասարդ ուղեկիցը տրամադրութիւն չունի խօսելու, լռեց։ Սակայն, երկար չհամբերեց և հարցրեց.

—Դուք անշուշտ Բուխարէստից էք գալիս, այնպէս չէ՞։

«Ինչո՞ւ անշուշտ», մտածեց Շահեանը և պատասխանեց.

—Ոչ։

—Կամ Աբասթումանից... կամ Բորժոմից։ Հա՞։

—Ոչ, այդ կողմերից չեմ գալիս։

—Ուրեմն անշուշտ Բաթումից։

«Էլի անշուշտ», մտածեց Շահեանը և պատասխանեց.

—Այո։

—Եւ Թիֆլիս էք գնում։

—Այո։

Շահեանը նորից կոլոլուեց վերարկուի մէջ, նորից կուչ եկաւ նստարանի անկիւնում և աչքերը փակեց։

—Ներեցէք, ես ձեզ, գուցէ, ձանձրացնում եմ,—շտապեց նկատել նոր ուղևորն այնպիսի քաղցրութեամբ, որ Շահեանը նոր զգաց, որ իր վարմունքը մի ցոյց էր նրա հարցասիրութեան դէմ։

Նա ժպտաց և նորից նստեց ուղիղ։

—Ամենևին,—պատասխանեց նա բնաւորութիւն չունեցող մարդկանց յատուկ կակղութեամբ։—Ընդհակառակը, ես շատ ուրախ եմ, որ դուք ուզում էք ինձ ընկերակցել։

—Այդ աւելի լաւ թէ ձեզ և թէ ինձ համար,—վրայ բերեց ինքնակոչ բարեկամն աւելի մեծ քաղցրութեամբ,—որովհետև, կարծում եմ, ոչինչ այնքան տաղտկալի չէ, որքան մենակ ճանապարհ գնալը։ Այդպէս չէ՞։

—Այդպէս է։

—Ուրեմն, կարծում եմ, կարող ենք ծանօթանալ առանց այլևայլութեան։

—Համեցէք։

—Ձեր անունը բաշխեցէք ինձ։

—Լևոն... Շահեան։

Նոր ուղևորն աչքերը չռեց։

—Շահեա՞ն,—հարցրեց նա։

—Այո։

—Դուք Շահեանի որդի՞ն էք։

—Այո։

—Կարապե՞տ Շահեանի։

—Այո։ Դուք ճանաչո՞ւմ էք հօրս։

—Վա՜հ, ինչպէ՞ս չէ,—բացականչեց նոր ուղևորը վերին աստիճանի աշխոյժով։—Մի ժամանակ ես ու ձեր հայրը լաւ բարեկամներ և լաւ հարևաններ էինք, բայց յետոյ... մեր յարաբերութիւնները կտրուեցին, առանց մի որևէ պատճառի։ Դուք նկատած կա՞ք, որ շատ մօտիկ բարեկամների մէջ կամաց-կամաց, աննկատելի կերպով այնպիսի փոփոխութիւններ են կատարւում երբեմն, որ չես հասկանում, թէ ինչպէս եղաւ, չես կարողանում ըմբռնել պատճառը։ Ձեր հօր և իմ միջև եղած յարաբերութիւններն էլ հէնց այդպէս կըտրուեցին։ Սկզբում կլուրում էլի երբեմն-երբեմն հանդիպում էինք իրար, բայց վերջին տարիներս նա էլ չի երևում։ Ասում են, հիւանդ է, ճշմարի՞տ է։

—Այո։ Տնից բոլորովին դուրս չի գալիս։

—Ի՞նչ էք ասում։ Ինչո՞վ է հիւանդ։

—Իսկապէս... ինքս էլ չգիտեմ։ Բժիշկներն ասում են, որ աղիքների հիւանդութիւն ունի։ Բայց շատ է տանջւում. երբեմն ցաւից այնպէս բղաւում է, որ ականջ պէտք է՝ դիմանայ։

—Ի՞նչ էք ասում։ Խե՜ղճ մարդ։ Ես յիշում եմ, որ նա այդպիսի մի հիւանդութիւն ունէր։ Երևում է՝ հնացել է, ժամանակին չի բժշկուել։ Ի սէր Աստուծոյ, տուն որ գնաք, բարևեցէք նրան իմ կողմից և ասացէք, որ ես անկեղծ ցաւում եմ և չեմ մոռացել իրեն։ Կասէ՞ք։

—Ուրախութեամբ։

—Ներեցէք, ես մոռացայ ձեզ ազգանունս յայտնել.—Մարութեան... Գէորգ։ Ձեր հայրն ինձ իսկոյն կը յիշի։ Հա՛յ գիդի աղա Կարապետ... Հախ Աստծու, շատ լաւ մարդ է, վերին աստիճանի բարի մարդ է։ Ափսոս, հազար ափսոս... Ես ձեզ յիշում եմ. դուք այն ժամանակ շատ փոքր էիք։ Ձեր հայրն երբեմն բերում էր ձեզ դրասենեակը։ Այժմ մեծացել, հասունացել էք։ Ներեցէք, դուք Բաթումում պաշտօն ունի՞ք։

—Ոչ։

—Գիտեմ, որ համալսարան էիք գնացած. աւարտե՞լ էք։

—Ոչ,—յապաղելով պատասխանեց Շահեանը։

—Ինչո՞ւ։

—Հիւանդութեանս պատճառով ուսումս կիսատ թողի։

—Հա՜... Ինչո՞վ էիք հիւանդ։

«Սա ի՞նչ հարցուփորձ է», նեղացած մտածեց Շահեանը և պատասխանեց.

—Վատառողջ էի... կրծքացաւ ունէի։

—Հա՜... շատ պարապելուց, երևի։ Ներեցէք, հապա Բաթումում ի՞նչ էիք շինում։

Շահեանը զգաց, որ արդէն անտանելի է դառնում այդ երկար ու բարակ հարցուփորձը, բայց և այնպէս այդ հարցին էլ պատասխանեց.

—Ես իսկապէս Բաթում չէի, այլ—Սոչի։ Բժիշկ-

399922-67

ների խորհրդով գնացել էի այս ամառ կաղդուրուելու։

Ուրիշ մի քանի հարցեր էլ տուեց Մարութեանը, որից յետոյ արդէն իրենից սկսեց պատմել, թէ ուրտեղից է գալիս և ուր է գնում։ Նրա երկար ու բարակ պատմութիւնից Շահեանն իմացաւ, որ նա այդ ամառ ընտանիքով Աբասթումանումն է եղել. դրանից մի շաբաթ առաջ թողել է ամառանոցը և, Թիֆլիս վերադառնալիս, դիջելով Գորում բնակուող իրենց մի ինչ որ բարեկամի խնդրքին, ամբողջ ընտանիքով հիւր է գնացել նրա տուն մի քանի օրով։ Բարեկամի տանը շատ քաղցր հիւրասիրութիւն վայելելուց յետոյ, Թիֆլիս վերադառնալուց առաջ, այդ օրն առաւօտեան «ձեռաց վազել է» հէնց նոր անցած կայարանի մօտ գըտնուած սեպհական այգիները դիտելու, որոնց այնքան էլ լաւ դրութեան մէջ չի գտել, և այժմ վերադառնում է Գորի, որտեղ, կայարանում, այժմ սպասելիս պիտի լինի ընտանիքը՝ այս միևնոյն գնացքով ուղղակի Թիֆլիս գնալու համար։

—Բայց չեմ կարծում, որ այս գիշեր նրանք կամենան Թիֆլիս գնալ, որովհետև եղանակը սարսափելի է, և մեր բարեկամն էլ չի թողնիլ,—աւելացրեց Մարութեանը։—Նայեցէք մէկ կօշիկներիս. գիւղից կայարան գալիս՝ ոտներս ուղղակի չէի կարողանում հանել ցեխի միջից։

Մինչև որ գնացքը «Գորի» կայարան կը հասնէր, ինքնակոչ ծանօթն իր շատախօսութեամբ փառաւորապէս ձանձրացրեց Շահեանին։ Մարութեանը պատկանում էր այն մարդկանց կարգին, որոնց համար լռութիւնը մի տանջանք է, և եթէ մարդ չգտնեն, որ իրենց լսի, կըխօսեն իրենք իրենց հետ և իրենք էլ կըլսեն իրենց։

Մասնաւորից ընդհանուրին անցնելով, Մարութեանը խօսում էր մամուլի, գրականութեան, կուսակցութիւնների, թատրոնի, առևտրի, քաղաքական անցքերի, ազգային գործերի մասին։ Պարզ երևում էր, որ նա ջերմ կերպով հետևում էր այդ բոլորին, և նրա ունեցած տեղեկութիւնները բաւական հիմնաւոր էին։ Այդ ընդհանուր խնդիրներն էլ կամ ամենևին չէին հետաքրքրում Շահեանին, կամ նրա ունեցած տեղեկութիւններն այնքան վայրիվերոյ էին, որ նա չէր համարձակւում վիճաբանութեան բռնուելու Մարութեանի հետ, երկիւղ կրելով, թէ մի գուցէ իր անգիտութիւնն երևան հանի այդ մարդու առաջ, որի վրայ սկզբում բարձրից էր սկսել նայել։ Մարութեանն ասաց, որ ինքը Խալիպեան դպրոցի հին սաներից է, որ մի ժամանակ ջերմ փափագ ունէր գրականութեան նուիրուելու, բայց հանգամանքներն ստիպեցին իրեն վաճառական դառնալու։

Ձեռները վերարկուի թևերի մէջ կոխած, Շահեանն իր պարզ ակնոցի միջից ապուշի պէս նայում էր խօսակցի վերին աստիճանի շարժուն կենսուրախ դէմքին և նրա հարցմունքներին պատասխանում էր ծուլաբար արտասանած կարճ, անորոշ, խուսափողական նախադասութիւններով։

Մարութեանն աննկատելի կերպով դարձաւ այդ միջոցին Հայաստանում երևան եկած խառնակութիւններին, որոնց մասին հեռագիրը լուրեր էր հաղորդում լրագրներին։ Շահեանը կարդում էր այդ լուրերը. գիտէր, որ յունիսի կիսին Երզրումում թուրք իշխանութիւնը խուզարկել էր հայոց եկեղեցին ժամերգութեան ժամանակ, կասկածելով, թէ այնտեղ զէնք կայ պահուած, որից և մի ընդհարում էր առաջացել թուրք զինուորների և հայերի միջև. գիտէր նոյնպէս, որ յուլիսի 15-ին Կ. Պոլսում, Կում-Կափուի մայր եկեղեցում, ժողովուրդը յարձակում էր գործել Աշըղեան պատրիարք-

քի վրայ, այնպէս որ պատրիարքը ստիպուած էր եղել փախչել և թաղնուել մօտակայ տներից մէկում.— բայց միայն կարդացել և անցել էր անտարբեր կերպով, ինչպէս կարդում և անցնում էր նոյն այդ ժամանակներում Բրազիլիայի և Արգենտինեան հասարակապետութեան մէջ կատարուող պետական յեղափոխութիւնների մասին նոյն հեռագրի հաղորդած լուրերը։ Ընդհանուր հայութիւնը ցնցող այդ մեծ գործի նախաբանն էլ անկարող էր եղել որևէ թել շարժել նրա մեռած հոգու մէջ։ Այդպէս չէր Մարութեանը. տարիքով Շահեանից անհամեմատ մեծ և գրեթէ ծերունի, նա, այդ նշանաւոր դէպքերի մասին խօսելիս, ոգևորուած էր պատանու պէս և ապագայի վրայ նայում էր ամենալաւ յոյսերով։

—Դուք ճանաչում էք իմ որդուն,—յանկարծ հարցրեց Մարութեանը։

—Չէ։

—Արմենակ Մարութեան։ Դուք երևի չէք յիշում նրան, բայց անկարելի է, որ նրա յօդուածները կարդացած չլինիք. սկզբում Գերմանիայից, յետոյ Լոնդոնից թղթակցում էր մեր լրագրներին Արմենակ ստորագրութեամբ։

—Ախ, յիշեցի. Արմենակ... Ինչպէ՞ս չէ. ես նրա գրածները կարդում էի. բաւական խելացի յօդուածներ էին նրա քաղաքական յօդուածները։ Այժմ նա ո՞ւրտեղ է. էլ ոչինչ չի գրում, կարծեմ։

—Նա... Այժմ նա... այնտեղ է,—ասաց Մարութեանը ձեռքի մի խորհրդաւոր նշանով, որից Շահեանը, սակայն, ոչինչ չհասկացաւ։

Լուռեց շոգեմեքենայի երկարատև խուլ սուլոցը։ Դուրսը, վագոնի լուսամուտների առաջով սկսեցին յետ

փախչել ինչ-որ վառ ճրագներ, վայրկեան առ վայրկեան լուսաւորելով կիսախաւար վագոնի ներսը։

Մարութեանը շտապով վերկացաւ։

—Նա այնտեղ է, ուր պէտք է, ուր պարտաւոր է գնալ ամեն մի հայ երիտասարդ,—շարունակեց նա մի տեսակ ցնծագին տրամադրութեամբ։—Ե՛ս չէի ուզարկողը. նա ինքը գնաց... իր ներքին դրդումով... Ողջ կըվերադառնայ այնտեղից, թէ ոչ, միայն Աստծուն է յայտնի, բայց որ մեր նորագոյն պատմութեան մէջ կըփառաւորի իր և իմ անունը,—դրան ես համոզուած եմ և ոչ մի տարակոյս չունիմ, որովհետև... Ինչևիցէ։ Այդ մասին մենք դեռ կըխօսենք։ Իսկ այժմ արդէն հասանք Գորի։

Նա ծածկեց գլխարկը, վերարկուն հագաւ և վերցրեց անձրևակալը։

—Եթէ մերոնք հիմա եկել են կայարան, խօ լաւ, իսկ եթէ ոչ, ապա մնաք, այսինքն գնաք բարեաւ, ցտեսութիւն։ Կարծում եմ, որ քաղաքում մենք դարձեալ կըտեսնուենք իրար հետ, այնպէս չէ՞. մենք խօ բարեկամներ ենք արդէն։

—Անպատճառ, անպատճառ,—ժպտալով պատասխանեց Շահեանը, սեղմելով Մարութեանի ձեռքը։

—Ուրեմն ցտեսութիւն։ Զմոռանաք իմ կողմից բարևել ձեր հօրը։

Երբ Մարութեանը դուրս գնաց, Շահեանը կարճ ժամանակ մնաց անորոշ մտախոհութեան մէջ։ Նա ինքն էլ չէր իմանում, թէ ինչ է մտածում. միայն նրա աչքի առաջ կարծես թէ քարացել էր այն խորհրդաւոր շարժումը, որ արաւ Մարութեանը ձեռքով, աւելի ևս խորհրդաւոր «այնտեղ» բառն արտասանելիս...

Նրան ուշքի բերեց կայարանում տիրող ժխորը և նա դանդաղօրէն դուրս գնաց։

III.

Դահլիճում մի կտոր խաւեարով բուտերբրոդ և չափից դուրս հում բիֆստեքս ուտելուց և վրան էլ մի քանի բաժակ գարեջուր խմելուց յետոյ, երբ Շահեանը վերադարձաւ վագոն, տեսաւ, որ վագոնը գրեթէ լցուած է նոր ուղևորներով։ Նոր ուղևորներից մի քանիսը բռնել էին իր հանդէպի նստարանը և մինչև անգամ իր նստարանի վրայ փառաւորապէս բազմել էին երկու գորեցի՝ խուրջիններով, կողովներով և ուրիշ կապոցներով։ Նա ուզում էր խուրջինների վրայից շէք տալով անցնել իր տեղը, լուսամուտի տակ, նստելու համար, երբ յանկարծ լսեց Մարութեանի ձայնը.

—Պարոն Շահեան, համեցէք այստեղ, համեցէք այստեղ։

Շահեանը նայեց այն կողմը, որտեղից եկաւ այդ ձայնը, և տեսաւ Մարութեանին, որ իր ընտանիքի հետ տեղաւորուել էր ուրիշ երկու նստարանի վրայ վագոնի միւս ծայրին։

—Այստեղ, այստեղ, ձեր տեղը բռնել են, եկէք մեզ մօտ,—բղաւում էր Մարութեանը։

—Շնորհակալ եմ. ինձ համար էլի տեղ կայ,—պատասխանեց Շահեանը, ժպտալով։

Այս անգամ նա տեսաւ, որ երեք կին և մի երեխայ հետաքրքրութեամբ նայում են իրեն սպասողական դրութեան մէջ։

—Դէհ, մենակ խօ չէք նստիլ այդտեղ. եկէք կըխօսենք, էլի։ Տեղ շատ կայ այստեղ, մի վախենաք. եկէք։

Շահեանը մէկ ուզեց վերցնել իր բարձը, առանց

իմանալու թէ ինչու, բայց թողեց և գնաց Մարութեանների մօտ։

Մարութեանն անմիջապէս ծանօթացրեց իր ընտանիքի անդամների հետ և իր կողքին տեղ տուեց նրան։ Այդ ընտանիքը կազմում էին չորս հոգի. Մարութեանի կինը—Թեկլէն, աղջիկը—Եւան, եղբօր աղջիկը—Աշխէնը և չորս-հինգ տարեկան տղան—Սուրէնը։

Առհասարակ հասարակութիւնից խոյս տալով, Շահեանը միշտ խոյս էր տուել մանաւանդ կանանց հասարակութիւնից։ Նա գիտէր, որ կանանց զբաղեցնելու համար տուանձին շնորք էր հարկաւոր, իսկ այդպիսի շնորհք ինքը չունէր։ Կանանց մօտ եղած ժամանակ շփոթուում, կարմրում էր և չէր իմանում ինչպէս պահի ձեռները։ Այդ բանը սաստիկ տանջում էր նրան, որովհետև չափազանց ինքնասէր և կասկածամիտ էր։

Այժմ նրա մօտ նստած և հետաքրքրութեամբ դիտում էին նրան մի տարիքաւոր կին և երկու հասունացած օրիորդ, որոնց առաջին անգամն էր տեսնում և չգիտէր, թէ դրանք ինչ հոգու, ինչ մտքի, ինչ բնաւորութեան տէր էին։ Դրանց ներկայութիւնը շատ ծանր պէտք է լինէր նրա համար, եթէ Մարութեանի ներկայութիւնը փոքր առ փոքր համարձակութիւն չընծերշնչէր նրան։ Իսկ Մարութեանն այս անգամ նրան ներկայանում էր այնպէս, որ այդ մարդու հետ կարծես ծանօթ էր շատ վաղուց։

Բանից երևաց, որ Թեկլէն և Եւան պակաս հետաքրքրուող ու շատախօս չեն եղել Մարութեանից։ Մի կողմից Մարութեանը, միւս կողմից Թեկլէն, երրորդ կողմից Եւան այնքան բաներ էին հարցնում, որ նա չէր իմանում որի՞ հետ խօսի, որի՞ հարցին պատասխանի։ «Ո՞րտեղից են հաւաքուել այս շատախօսները», մտածում էր նա ժպտալով և զարմանքով զգում էր, որ

եթէ ամբողջ օրերով, այդպէս նստած, խօսի նրանց հետ, երբէք չի ձանձրանալ։ Մինչդեռ մի կէս ժամ առաջ էր, որ նա վերին աստիճանի ձանձրացել էր Մարութեանի շատախօսութիւնից։

Իսկոյն երևում էր, որ Մարութեանի ընտանիքն ինտելիգենտ ընտանիքներից էր։ Մամուլի և հասարակութեան մէջ շօշափուած առօրեայ ոչ մի խնդիր, ինչպէս երևում էր, բաց չէին թողնում նրանք։ Այդ միջոցին էլ նրանց խօսակցութեան նիւթն այդ առօրեայ խնդիրներն էին։ Շահեանը զարմանքով տեսնում էր, որ Մարութեանը, կինը, աղջիկն երբեմն բոլորովին տարբեր, շատ անգամ հակառակ կարծիքներ էին յայտնում միևնոյն նիւթի մասին և բաւական տաքացած վիճաբանում էին իրար հետ, մանաւանդ—հայրն ու աղջիկը։ Երբ չէին կարողանում իրար համոզել, նրանք դիմում էին Շահեանին, իբրև մի հեղինակաւոր մարդու, որի կարծիքը վճռական նշանակութիւն պիտի ունենար։ Շահեանը շատ լաւ տեսնում էր, որ իր խելքը նրանց խելքից բարձր չի հասնում, և իր տեղեկութիւնները, նրանց ունեցած տեղեկութիւնների հետ համեմատած, շատ վայրիվերոյ են, ուստի այդպիսի դէպքում ի ներքուստ խիստ ամաչում էր, որ իրեն այդքան մեծ նշանակութիւն են տալիս. միևնոյն ժամանակ երկիւղ էր կրում, թէ մի գուցէ իրեն անծանօթ նիւթի մասին յանկարծ այնպիսի անհեթեթ կարծիք յայտնի, որ միանգամից հիասթափեցնէ նոր ծանօթներին իր վերաբերմամբ։ Այդ պատճառով հարկաւոր դէպքում չափազանց զգոյշ էր պահում իրեն և ամեն կերպ աշխատում էր, որ պատուով դուրս գայ որոգայթից, թէև նրա պատասխանները կցկտուր և անորոշ էին լինում։

Շահեանին ամենից աւելի դիւր էր գալիս Եւայի

վիճաբանութիւնը։ Եւան խօսում էր համարձակ, արագ. նախադասութիւնների կիսում յանկարծ կանգ էր առնում, մտառու աչքերով անթարթ նայում էր խօսակցի դէմքին, կարծես քառեր էր որոնում միտքը լաւ արտայայտելու համար և շարունակում էր նոյն համարձակութեամբ, նոյն արագութեամբ. իրեն ուղղուած հարցերին պատասխանում էր իսկոյն, շատ անգամ բառը կիսատ թողնելով հարցնողի բերնին. յաճախ պատասխանելու տեղ ինքն էր հարց առաջարկում։ Եւ այդ բոլորի հետ ձեռներով, աչքերով, յոնքերով այնքան անհանգիստ շարժումներ էր անում, որ Շահեանին թըւում էր, թէ նա խօսում է ոչ միայն լեզուով, այլ և ձեռներով և բոլոր դիմագծերով։

Եւան նստած էր Շահեանի դիմացը, մօր կողքին։ Կապոյտ ներկուած բամբակի փոքրիկ թեթև շալը վերցրել էր գլխից և դրել էր ծնկներին։ Փայլուն մազերը հիւսուած էին մի հաստ գիսակի մէջ, որով գագաթի վրայ մի սպիտակ գիծ էին ակոսել դէպի ետև սկսած ճակատից։ Նա սովորութիւն ունէր երկու ձեռքով շուտ-շուտ ուղղելու մազերը և ականջների ետևը քաշելու։ Երբ ժպտում էր, նրա աչքերը հեգնական, կծու արտայայտութիւն էին ստանում, իսկ զարմանալիս նրա այնքան շարժուն դիմագծերը յանկարծ սառչում, քարանում էին և առանց այն էլ խոշոր աչքերը զարմանալի կերպով մեծանում էին ու խորանում։

Ժամանակը թռչում էր աննկատելի կերպով։ Շահեանի ձանձրոյթը չքացել էր։ Խօսակցութիւնը շարունակւում էր անվերջ։ Բայի Սուրէնից, որ, գլուխը հօր ծնկան վրայ դրած, քնել էր, խօսակցութեանը չէր մասնակցում մէկը. դա Մարութեանի եղբօր աղջիկն էր—Աշխէնը։

Նա նստած էր նստարանի ծայրին, լուսամուտի

մօտ, գունատ ու վտիտ և կարծես աշխատում էր, որ իր ներկայութիւնն աննկատելի մնայ։ Շահեանն երբեմն հետաքրքրութեամբ նայում էր Աշխէնին, և նրան զարմացնում էր այդ աղջկայ երկայն նիհար դէմքի վերին աստիճանի անշարժ, քարացած արտայայտութիւնը։ Այն ինչ՝ Աշխէնը տգեղ չէր. նա մինչև անգամ կարող էր գեղեցկուհի համարուել, եթէ չափից դուրս նիհար չլինէր։ Եւան շատ յաճախ դիմում էր նրան զանազան հարցերով, բայց նա պատասխանում էր կարճ, կտրուկ և բոլոր ժամանակ նայում էլ լուսամուտից դուրս, որտեղ անվերծանելի խաւարի մէջ դէպի հակառակ կողմն էին թռչում շոգեմեքենայի ցանած կայծերը։ Երբեմն միայն իր խելացի աչքերը հեռացնում էր լուսամուտից և հանդարտ, անտարբեր հայեացքով նայում էր Շահեանին, նայում էր այնպէս, որ կարծես նրա բռնած տարածութիւնը դատարկ տարածութիւն լինէր, և ինքը նայում էր այդ դատարկ տարածութեան մէջ և չէր տեսնում Շահեանին։ Այդ միջոցներին միայն Շահեանը կարողանում էր ուղիղ նայել նրա դէմքին և ամենևին չէր կարողանում հասկանալ, թէ ինչ տպաւորութիւն է թողնում այդ աղջիկն իր վրայ. միայն զգում էր, որ եթէ Աշխէնը խօսէր իր հետ, ինքը չէր կարողանալ նրա հետ խօսել այնպէս ազատ, ինչպէս խօսում էր Մարութեանի, նրա կնոջ և նրա աղջկայ հետ։

Ինչ-որ զսպող և ճնշող բան կար Աշխէնի խելացի աչքերի և կրծքային ձայնի մէջ։

IV.

Ուշ գիշերին գնացքը «Թիֆլիս» կայարան հասաւ։ Մարութեանները վերցրին իրենց ձեռքի իրեղէնները և շտապեցին դուրս գնալ վագոնից։ Շահեանն էլ առաւ իր բարձն ու ճամպրուկը և հետևեց նրանց։

—Դէհ, շուտ գնանք, որ կառք ճարենք,—ասաց Մարութեանը, բռնելով փոքրիկ Սուրէնի ձեռքից, և, կայարանում խռնուող ժողովուրդը ճղելով, առաջ անցաւ։—Եկէք այս կողմը, չկորչէք... Այս կողմը, այս կողմը... Թեկլէ, Աշխէն, Ե՛ւա... այս կողմը... Պարոն Շահեանն ի՞նչ եղաւ... Հա, դուք գալի՞ս էք...

Դուրսը, կայարանի հրապարակի վրայ, մարդիկ և կառքեր իրար էին անցել։ Ամեն կողմից կառք էին կանչում։ Կառապանները հայհոյում էին իրար։ Վերևից բարակ անձրև էր մաղում։ Եղանակը խոնաւ էր և ցուրտ։ Մարութեանն իր բոլոր ընտանիքով ներս թափուեց առաջին պատահած կառքը։ Շահեանն էլ իր համար մի կառք ճարեց և, ճամպրուկն ու բարձը դնելով այնտեղ, շտապով մօտեցաւ Մարութեանների կառքին, որի մէջ նրանք տեղաւորուելու վրայ էին։

—Պարոն Մարութեան, դուք շատուոր էք, դժուարութեամբ կըտեղաւորուէք. լաւ չի՞ լինիլ, որ երկու հոգի դաք ինձ մօտ։

—Հա, եթէ այդպիսի բարութիւն կանէք,—ասաց Մարութեանը։

—Ե՛ս կընստեմ պարոն Շահեանի մօտ,—կանչեց Եւան և իսկոյն ցած թռաւ կառքից։

—Ուրիշ ո՞վ է գալիս,—հարցրեց Շահեանը։

—Սուրէն, Սուրէն, դու արի,—կանչեց Եւան։

Շահեանը խոտեց Սուրէնին և, նրա ծանրութեան տակ տնքալով, տարաւ դէպի իր կառքը։

Շահեանն ու Եւան նստեցին միասին և Սուրէնին առան իրենց մէջ տեղը։

Կառքերն առաջ շարժուեցին։

Կարճ ժամանակ Շահեանն ու Եւան լուռ էին։

Եւան իրեն յատուկ արագ շարժումներով զբաղուած էր փոքրիկ եղբօրը շալի մէջ փաթաթելով։ Իսկ Շահնանը մտածում էր, թէ ինչ խօսի, որ լուռ չմնայ։ Այդ առաջին անգամն էր, որ նա մէն-մենակ նստած էր մի օրիորդի հետ միմիայն մի փոքրիկ երեխայի ներկայութեամբ։ Նա ուզում էր այդ երեխայի հետ խօսել, բայց երեխայի հետ խօսելու եղանակն էլ չգիտէր։ Թէև նրա լեզուի ծայրին էր եղանակի մասին խօսելու մշտապատրաստ նիւթը, բայց որովհետև մի տեղ կարդացել էր, թէ խօսելու նիւթ չգտնող անշնորհք մարդիկ լուռ չմնալու համար միշտ եղանակի մասին են սկսում խօսել, այդ պատճառով աւելի լաւ համարեց լռել, քան թէ եղանակի մասին խօսել սկսելով իր անշնորհքութիւնը ցոյց տալ։

Բայց Եւան կամ չէր կարդացել խօսելու նիւթ չգտնող անշնորհք մարդկանց մասին նրա կարդացածը, կամ ամենևին չվախեցաւ, թէ ինքը կարող է այդպիսի անշնորհքներից մէկը համարուել, եթէ եղանակի մասին խօսակցութիւն բանար։

—Ի՜նչ վատ եղանակ է, Տէր իմ Աստուած,—ասաց նա, ոտները կուչ ածելով և մի ձեռքով ամուր գրկելով եղբօրը։—Խոնաւ, ցուրտ, մառախլապատ... Ի՜նչ լաւ է, որ դուք ձմեռուայ վերարկու էք վերցրել։

—Ես մրսկան եմ,—ասաց Շահնանը և իսկոյն մտածեց, թէ «տղամարդուն» վայել բան էր արդեօք իր ասածը։

—Եւ գիտէք, կան մարդիկ,—շարունակեց Եւան,—որոնք սիրում են այսպիսի եղանակ։ Այ, օրինակ, Աշխէնը, հօրեղբօրս աղջիկը։ Նա այսպիսի եղանակ սիրում է։ Ասենք, այսպիսի եղանակ չէ։ Եղանակը հիմա ուղղակի անպիտան է և զզուելի։ Ուզում եմ ասել սարսափելի եղանակ։ Սարսափելի եղանակը գիտէ՞ք որն

է.—երբ սև ամպերն ու գետնի փոշին խառնւում են իրար, երբ կատաղի փոթորիկը ծռում է ծառերի կատարները, երբ երկինքը փայլատակում, գոռում ու ճայթում է...

—Լաւ, այդպիսի եղանակի մէջ ի՞նչ կայ սիրելու, որ սիրում է ձեր հօրեղբօր աղջիկը։

—Այ, ասեմ։ Մի անգամ, անցեալ մայիսին, գիշերը, յանկարծ սկսեց սաստիկ անձրև գալ, ուղղակի հեղեղ։ Երկինքը սարսափելի փայլատակում և այնպէս որոտում էր, որ լուսամուտները զրնգզրնգում էին։ Որ գիտենաք, ինչպէս վախենում եմ երկնքի որոտումից, մանաւանդ գիշերը, երբ ամեն ձայն լուռ է շուրջդ։ Կարծում եմ, թէ ահա որտեղ որ է՝ կայծակ պիտի ընկնի և—ուղղակի մեր տան վրայ։ Մերոնք ամենքն արդէն քնած էին։ Ես էլ նոր էի պառկել։ Աշխէնն էր միայն զարթուն իր սենեակում, որ իմ սենեակին կից է։ Նա միշտ ամենից ուշ է քնում։ Ճրագը հանգցրել էի։

Սենեակս այնպէս լուսաւորւում էր փայլատակումներից, որ թւում էր ինձ, թէ վերմակի տակ, աչքերս փակած ժամանակ անգամ տեսնում եմ այդ ելեկտրական սարսափելի լոյսը։ Դողը բռնել էր ամբողջ մարմինս։ Վերջը, երբ տեսայ, որ այլ ևս չեմ կարողանում դիմանալ, վեր կացայ և գնացի Աշխէնի մօտ, որ մենակ չլինէի։ Երևակայեցէք. նա բաց էր արել լուսամուտը, կանգնել էր առաջը և նայում էր երկնքին։ Նոյն րոպէին, երբ ես մտայ նրա սենեակը, հրեղէն փայլակն օձի նման սողաց մութ երկնքի վրայով և մի քանի վայրկեան յետոյ երկինքն այնպէս ճայթեց, որ ես ճչացի սարսափահար և փռուեցի յատակի վրայ։ Աշխէնը վերկացրեց ինձ, լուսամուտը փակեց, և տեսնեմ ծիծաղում է։ Բարկութիւնս բռնեց։ «Ես,—ասում եմ,—քիչ էր մնում այստեղ վախից մեռնէի, իսկ դու ծիծա-

զում ես։ Եւ ի՞նչպէս չես սարսափում այդ փայլատակումներից, այդ ահարկու ձայներից»։—«Սարսափում,—զարմացաւ նա։—Ընդհակառակը. ես սաստիկ սիրում եմ տարերքի այդ կատաղութիւնը, որովհետև վերին, իդեալական ոյժի մասին ոչինչ ինձ այնքան պարզ ու շօշափելի գաղափար չի տալիս, որքան այն, երբ մութ երկինքն այդպէս յանկարծ փայլատակում և ճայթում է։ Ինձ թւում է, թէ,—աւելացրեց նա,—այդ բոլորն աւելի հրաշալի պիտի լինի ծովի վրայ, փոթորկի ժամանակ, եթէ նաւով ճեղքում ես անյայտ անհունը»։ Ահա թէ ինչ բանի համար է սիրում Աշխէնն իմ ասած սարսափելի եղանակը։

Շահեանն ակամայ մտախոհութեան մէջ ընկաւ։

—Մի՞թէ օրիորդը ձեզ հետ է ապրում,—հարցրեց նա։

—Այո, Աշխէնը մեզ մօտ է ապրում։ Նա բոլորովին որբ է... Սուրէն, մրսո՞ւմ ես։

—Ոչ,—պատասխանեց Սուրէնը և պինդ կպաւ քրոջ կողքին։

—Իսկոյն տուն կըհասնենք, չքնես։ Դուք ո՞ր փողոցումն էք ապրում, պարոն Շահեան։

Շահեանը տուեց իրենց փողոցի անունը։

—Ո՜ւռ,—բացականչեց Եւան,—ուրեմն դուք կիջնէք ճանապարհին։

—Ոչ, ի՞նչպէս կարելի է, օրիորդ. մինչև ձեր տուն ճանապարհ կըդնեմ ձեզ, յետոյ յետ կըդառնամ։

—Նեղութիւն չի՞ լինիլ ձեզ համար։

—Ի՞նչ նեղութիւն։

—Ուրեմն շնորհակալ կըլինիմ։ Ո՜ւֆ, ինչպէս խոնաւ է օդը։ Սուրէն, խօ չե՞ս քնում։

—Ոչ,—պատասխանեց Սուրէնը շալի տակից։

—Դուք եղբայր ունի՞ք, պարոն Շահեան։

—Երեք եղբայր ունէի։ Մեռան։ Երեքն էլ մի ամսում։

—Մի՞ ամսում... երեքն էլ,—արտասանեց Եւան սարսափած։—Այդ ի՞նչպէս կարելի է։ Երևի կատակ էք անում, հա։

—Այստեղ ի՞նչ կայ կատակ անելու։

—Երեքն էլ մի՞ ամսում, Տէր իմ Աստուած...Այդ սարսափելի՞ է։ Դրանից խօ գժուել կարելի է... Ինչի՞ց մեռան։

—Դիֆտերիտից։

—Ա՜խ, այդ դիֆտերի՞տը, այդ դիֆտերի՞տը,—շշնջաց Եւան, աւելի ևս պինդ գրկելով փոքրիկ եղբօրը։—Երևի փոքր էին, հա։

—Ամենից փոքրը երեք տարեկան էր, ամենից մեծը—տասը տարեկան։

—Ա՜խ, խե՜ղճ, խե՜ղճ մանուկներ... Դուք սիրո՞ւմ էիք նրանց

—Իբրև եղբայր, ի հարկէ, սիրում էի։

—Իսկ քոյր... ունի՞ք։

—Մի քոյր ունէի, նա էլ մեռաւ։

—Նա էլ... Տէր իմ Աստուած... Դուք սարսափելի բաներ էք ասում... Երևակայում եմ, թէ ինչքան դժբախտ պիտի լինիք դուք, չէ՞։

—Ի հարկէ, մեծ դժբախտութիւն է, երբ մարդ զրկւում է երեքից...

—Նա ինչից մեռաւ,—հարցրեց Եւան, խօսքը կիսատ թողնելով Շահեանի բերանին։

—Թոքախտից։

—Ո՜ւֆ, երանի ոչինչ չէի հարցրել։ Այս ի՞նչ սարիք ինձ։ Բոլորովին փչացրիք տրամադրութիւնս։ Իսկ նա, ձեր քոյրը, երևի, մեծ էր, հա։

—Տասնհինգ տարեկան։

—Տանեմ՞թ... Իմ հասակո՞ւմ... Ո՛չ, ո՛չ, էլ ոչինչ չեմ ուզում, էլ ոչինչ չասէք... Եւ չէ՞ որ դուք նրան աւելի էիք սիրում, քան թէ... Ձեր քրոջն աւելի էիք սիրում, այնպէս չէ՞։

—Ես նրան սաստիկ սիրում էի։

—Եւ նա էլ ձեզ, ի հարկէ... Որ գիտենաք, պարոն Շահեան, որքա՞ն ես վախենում եմ մեռնելուց... Ո՛չ, ո՛չ, այդ մասին չեմ ուզում մտածել։ Խօսենք ուրիշ բանի մասին, ուրիշ, բոլորովին ուրիշ բանի մասին... Ուրեմն միայն դո՞ւք էք մնացել։

—Որ մեռնե՞մ,—վրայ բերեց Շահեանը և ծիծաղեց։

—Ո՛ւֆ,—տնքաց Եւան սաստիկ նեղացած։—Ի՞նչ վատ մարդ էք եղել։ Ինչո՞ւ էք ինձ վիրաւորում։

Շահեանը ներքին գոհունակութեամբ զգաց, որ նա նեղացաւ անկեղծօրէն։

—Ես կատակ արի, օրիորդ,—ասաց նա, շարունակելով ծիծաղել։

—Զար կատակ։ Ես այդպիսի կատակներ չեմ սիրում։

—Հէնց թէկուզ ես էլ մեռնեմ, ի՞նչ կայ որ։

Եւան շատ լուրջ կերպով նայեց նրան։

—Պարոն Շահեան, եթէ դուք կըշարունակէք, ես իսկոյն եղբօրս հետ կիջնեմ և կընստեմ մեր կառքը։ Հաւատացէք, ես լուրջ կերպով եմ խօսում։

Շահեանը ստիպուած էր ներողութիւն խնդրել։ Եւայի անկեղծութիւնը սկսել էր վերին աստիճանի դրաւել նրան։ Նրան թւում էր, թէ այդ կարճ միջոցում, այդ խօսակցութեան շնորհիւ, ինքն արդէն ճանաչում է այդ աղջկան, ճանաչում է նրա սիրտը, հոգին, զգացումները, բնաւորութիւնը, կարծես թէ իր

մանկական ընկերուհին լինէր նա, որի հետ ամեն օր խաղ էր արել և որին պատրաստ էր սիրելով ջգրացնելու։

—Կեանքիս մէջ ես միայն մի անգամ եմ մահ տեսել,—ասաց Եւան։—Բայց այդ մի անգամն էլ բաւական էր, որ զգայի մահուան պատճառած բոլոր սարսափն ու վիշտը։ Մեռնողն իմ ընկերուհին էր։ Նա չափազանց լաւ աղջիկ էր։ Չեմ կարծում, թէ հարազատ քրոջս այնքան սիրէի, որքան նրան էի սիրում։ Նա էլ ինձ համար հոգին չէր խնայիլ։ Ամեն օր իրար տեսնելը մի կատարեալ պահանջ էր դարձել մեզ համար։ Երեւակայեցէք, որ նրա հիւանդ ժամանակ գիշերներն անգամ չէի հեռանում նրանից։ Իսկ նա միշտ այն էր ասում, որ եթէ մահից ազատուելու լինի, կազատուի միմիայն իմ սիրոյ զօրութեամբ։ Բայց սէրս չկարողացաւ փրկել նրան։ Որ մեռաւ, հիւանդացայ վշտից։ Թաղման օրը քիչ էր մնում, որ մայրս փակի ինձ տանը։ Բայց, ի հարկէ, ես դարձեալ գնացի։ Դագաղը տանում էին ընկերուհիները—բոլորն ինձ հասակակից աղջիկներ։ Այն ժամանակ ես տասներեք տարեկան էի։ Այս բոպէին էլ, կարծես, տեսնում եմ նրան դագաղի մէջ, թարմ ծաղիկներով զարդարուած, գլուխը ձախ ուսի վրայ ծռուած, ծնոտը սպիտակ թաշկինակով կապուած։ Այդ առաջին անգամն էր, որ աչքովս տեսնում և ականջովս լսում էի, թէ ինչպէս են թաղում մեռելը։ Տէր իմ Աստուած, ի՞նչ զարհուրելի դրդռոց, ի՞նչ սարսափելի փոշի... Մի՞թէ կարելի է այդպէս անխիղճ և անտարբեր կերպով քարերի ու հողի տակ ջարդել մի արարած, որ երբեմն մեզ պէս շնչել, զգացել, մտածել է... մարդիկ գաղանացած էին թւում ինձ այդ բոպէին։ Ես ուշաթափուեցի, բայց ոչ թէ վշտից, ոչ թէ այն գիտակցու-

թիւնից, որ այլ ևս երբէք, երբէք չպիտի տեսնէի իմ սիրելի ընկերուհուն, այլ—սարսափից, այո, միմիայն սարսափից, այն սարսափից, որ ինձ էլ մի ժամանակ... Ո՛չ, ո՛չ, այս մասին չեմ ուզում մտածել։ Այս սարսափելի է, սարսափելի... Գիտէք ես ինչ եմ մտածում, պարոն Շահեան. շատ լաւ բան է, որ հայերիս մէջ կանանց համար սովորութիւն չկայ թաղման ժամանակ դերեզմանատուն գնալու։ Երկաթի ականջ և ջղեր են պէտք այդ գրգռոցի ձայներին դիմանալու համար։

—Իսկ ինձ թւում է, թէ այդ վատ սովորութիւն է։ Կանայքդ թոյլ, վախկոտ և ջղային էք հէնց նրա համար, որ չէք վարժեցնում ձեզ այդպիսի սարսափների։

—Ոչ, ոչ, ի՞նչ էք ասում։ Ուզում էք, որ մենք էլ գազանանայինք ձեզ պէս։ Այնպիսի եռանդով էք յարձակւում անպաշտպան դիակի վրայ և քարերի ու հողի տակ ջարդում, որ կարծես դատարկ հոր էք լցնում։ Եւ չէք մտածում, որ այնտեղ մարդ կայ պառկած։

Շահեանը ծիծաղեց։

—Լաւ, հապա ի՞նչ կը հրամայէք, որ անէինք դիակը։ Այրէ՞ինք, ինչպէս...

—Պարո՛ն Շահեան։ Վերջապէս այս բանի նման չէ։ Թողնենք այս յիմար խօսակցութիւնը։ Չեմ ուզում։ Մի՞թէ ուրիշ բան չկայ խօսելու... Սուրէն, Սուրէն ջան, մի՛ քնիր։ Ա՜խ, ի՞նչ անեմ, դու կը մրսես։ Սուրէն, սիրելիս, այ, տուն ենք հասնում... Դուք գիտէք, պարոն Շահեան, որ ես մի եղբայր էլ ունիմ։

—Այո, ձեր հայրը պատմում էր նրա մասին։

—Ի՞նչ էք կարծում, ճի՞շտ է այն ասացուածքը, թէ՝ «քոյրն ասաց եղբայր ունիմ, եղբայրն ասաց՝ քոյր չունիմ»։

—Ինչի վրայ էք ասում այդ։

—Օ՜, մի կարծէք, թէ իմ եղբայրս այն եղբայրներից է, որ ասի քոյր չունիմ։ Ընդհակառակը։ Անջատման ժամին գիտէք ինչ էր անում։ Չէր ուզում ինձ գրկից բաց թողնել։ Եւ գիտէք ինչպէս էր լաց լինում... Ինչո՞ւ տղամարդիկդ այդքան ուշ-ուշ էք լաց լինում, բայց որ լաց էք լինում, քարի սիրտ պիտի լինի, որ ձեզ դիմանայ։ Ձեր արտասուքը, կարծես, հեղուկ չէ, այլ քարի պէս մի պինդ մարմին, որ փշուր-փշուր լինելով է դուրս գալիս։ Ինձ թւում է, թէ արտասուքն ամենևին թեթևութիւն չի պատճառում ձեզ, և դրա համար է, որ ուշ-ուշ էք լալիս, և երբէք չէիք լալ, եթէ կարողանայիք մինչև վերջը զսպել ձեզ, ինչպէս եղբայրս չկարողացաւ զսպել իրեն։ Նամակներն էլ նա միշտ իմ անունով է գրում։ Բայց և այնպէս, ես նրան աւելի եմ սիրում, քան թէ նա ինձ։

Շահեանը դարձեալ ծիծաղեց։

—Սէրը դուք մասշտաբով էք չափում,—հարցրեց նա։

—Այո։ Թէև ուզում եմ, որ իմ սիրոյ մասշտաբը միշտ աւելի մեծ լինի, քան թէ նրանը, որին սիրում եմ։

—Ուրեմն էլ ինչո՞ւ էք տրտնջում ձեր եղբօր վրայ։

—Տրտնջում եմ, որովհետև շատ ուշ-ուշ է նամակ գրում. ամիսն ընդամենը երեք-չորս անգամ։

—Եւ այդ շատ ուշ-ուշ է։

—Իսկ ես իմ մասշտաբով գիտէք քանի անգամ եմ գրում.—գրեթէ ամեն օր։

—Ամեն օր... իսկ նի՞ւթ։

—Նի՞ւթ... Մի՞թէ ամբողջ աշխարհը լիքը նիւթ չէ։ Սակայն ի՞նչ հարկաւոր է ամբողջ աշխարհը. իմ ներքին աշխարհն էլ բաւական է։ Ես չափազանց հետաքրքիր և չափազանց տպաւորուող եմ։ Այդ բանն

օգնում է ինձ միշտ նոր բան գրելու եղբօրս։ Ա՜խ, ինչպէ՞ս կուզէի իմանալ, թէ այս բոպէիս ինչ է անում նա այնտեղ...

Եւան, մի ձեռքով գրկած փոքրիկ եղբօրը, գլուխը կամաց կպցրեց նրա գլխին և կարճ ժամանակ տխուր մտախոհութեան մէջ ընկաւ։ Յետոյ յանկարծ գլուխը հեռացրեց եղբօր գլխից և նայեց Շահեանին։

—Գիտէ՞ք, պարոն Շահեան, երբեմն ինչ եմ մտածում։ Այս բանն առաւելապէս պատահում է այն ժամանակ, երբ նրան նամակ եմ գրում, որովհետև նամակ գրելիս ամենից աւելի եմ կարօտում նրան։ Ի՞նչ կըլինի, մտածում եմ, երբ յետ նայեմ և տեսնեմ, որ նա կանգնած է ետևս և ժպտալով նայում է ինձ... Այդ միտքն երբեմն այնպէս պաշարում է ինձ, որ մինչև անգամ վախենում եմ յետ նայել...

Կառքերը գրգռալով առաջ էին վազում. նրանց լապտերների ցնցուող լոյսն այս ու այն կողմից լուսաւորում էր անձրևի գրերով ծածկուած խորթուբորթ սալայատակը։ Եւան խօսում էր առանց մի բոպէ դադար առնելու, և Շահեանին զարմացնում էր այն հանգամանքը, թէ որպիսի դիւրութեամբ նա անցնում էր մի նիւթից միւսը։

—Սուրէն, Սուրէն, այ մեր փողոցը... Ահա և մեր տունը,—լացականչեց Եւան, երեխայի պէս ուրախացած։—Պարոն Շահեան, տեսնո՞ւմ էք այն լապտերը, այն դուռը լապտերի առաջ. այն է մեր տունը... լուսամուտներում որ ճրագ չկայ... վերին յարկում։ Տեսնո՞ւմ էք։

Կառքերը կանգ առան Մարութեանների տան առաջ, փողոցի լապտերի տակ։ Շահեանն իջաւ կառքից և նախ իջեցրե՛ց Սուրէնին, յետոյ, ձեռքը տալով Եւային, օգնեց նրան իջնելու։ Մարութեանները խնդրեցին

նրան, որ մտնի, բայց նա, ժամանակն անյարմար համարելով, հրաժարուեց։

—Որ այդպէս է, մեզ չմոռանաք, մեր տունն արդէն գիտէք,—ասաց Մարութեանը, կրկին սեղմելով նրա ձեռքը։—Բարևեցէք ձեր հօրը։ Շնորհակալութիւն, որ մեզ բարի ծառայութիւն մատուցիք։

—Չարժէ, չարժէ,—ուրախ բացականչեց Շահեանը և թեռաւ իր կառքը։

—Շնորհակալութի՛ւն, պարոն Շահեան,—կանչեց Եւան։

—Չարժէ՛, չարժէ՛,—կրկնեց Շահեանը և կառքը քշել տուեց իրենց տան կողմը։

V

Մօտ տասն բոպէից Շահեանն արդէն իրենց տանն էր։ Նախասենեակում, երբ նա վերարկուն հանելու վրայ էր, շտապով դուրս եկաւ նրա առաջ մայրը։ Թամարը ժամանակից շատ վաղ ծերացած մի կին էր զարմանալի սպիտակ դէմքի խիստ համակրելի, աղնիւ և փափուկ գծագրութեամբ։ Նրա, կարծես յոգնած, աչքերը հանգիստ տխրութիւն էին արտայայտում մինչև անգամ այդ բոպէին, երբ, երկու ամսուայ անջատումից յետոյ, նորից տեսնում էր իր մինուճար զաւակին։

—Լևոն ջա՛ն,—կամաց արտասանեց նա և կամաց գրկեց նրա գլուխը։—Վերջապէս եկար... Բայց այս անիրաւ եղանակին...

—Անիրաւ եղանակն ի՞նչ պիտի անէր, մայրիկ, քանի որ վագոնում ինձ համար տաք նստած էի։ Հայրիկն ի՞նչպէս է, լա՞ւ է։

—Հայրդ էլի այնպէս է, ինչպէս որ կար։ Դա՛ռ

ինչպէս ես, դու։ Ապա մէկ լաւ նայեմ երեսիդ, խօ չ�լղարել։

Շահեանը ծիծաղեց։

—Դու էլ, մայրիկ... այնպէս ես ընդունում, որ կարծես տասը տարի է՝ չես տեսել։ Երկու ամիս է, էլի, որ գնացել եմ։

—Ա՜խ, անաստուած, երկու ամիսը քիչ է՞ ինձ համար։ Ասա, խօ լաւ ես։

—Շատ լաւ եմ, մայրիկ, այնպէս լաւ, որ երբէք այսպէս չեմ եղել։

—Բաս թող համբուրեմ։

Եւ մայրն իր փափուկ, խորշոմած, սառն շրթունքները կպցրեց որդու ժպտող այտին։

Շահեանն երբէք չէր սիրել մօր համբոյրները, իսկ մայրն այդ կողմից միշտ շատ շռայլ էր եղել դէպի նա։ Զէր սիրել նոյնպէս և այն բոլորը, ինչ որ առհասարակ կանացի թոյլ, քնքոյշ զգացումների դեղումն է։ Զէր սիրել, որովհետև այդ բոլորի մէջ միմիայն իր տղամարդկային արժանապատուութեան ստորացումն էր տեսել, այն արժանապատուութեան, որը տղամարդուն թելադրում է միշտ բարձր մնալ կնոջից և առհասարակ այն ամենից, ինչ որ կանացի է։ Դրա պատճառը թերևս այն էր, որ Շահեանը տղամարդ չէր և չունէր տղամարդի արժանապատուութիւն, բայց ուզում էր տղամարդ լինել և տղամարդի արժանապատուութիւն ունենալ։ Մօր համբոյրները նրան երեխայի դրութեան մէջ էին դնում, և այդ բանն էր, որ նրան չափազանց անախորժութիւն էր պատճառում։

Սակայն այս անգամ նա ոչ թէ միայն անախորժութիւն չզգաց մօր համբոյրից, այլ և ինքը համբուրեց նրան, որպիսի բան երբէք չէր պատահել։ Ինչու։

—Ո՞վ գիտէ, թէ նոր, տակաւին շատ թարմ տպաւորութիւնները և այդ տպաւորութիւններից ծնուած նոր, անծանօթ, թէև տակաւին իրենց որոշ գոյնը չընդունած, զգացումներն ինչպէս և որքան փոխում են մարդու ներքինը գոնէ այնքան ժամանակ, որքան այդ տպաւորութիւններն ու զգացումները թարմ են...

Տեղեկանալով, որ հայրը դեռ ևս քնած չէ, Շահեանն ուղղակի գնաց նրա մօտ։ Երբ մայր ու որդի մտան՝ աղա Կարապետի սենեակը, վերջինս, խալաթը հագին և թրքական ֆէսը գլխին, նստած էր իր սովորական լայն բազկաթոռի մէջ և սպասողական հայեացքով նայում էր դուռը։ Ծնկների վրայ նա դրած էր Աստուածաշնչի Ընկերութեան աշխարհաբար թարգմանած աւետարանը և ձախ ձեռքի ցուցամատը դրել էր ընթերցումը կիսատ թողած երեսների մէջ։ Առաստաղից կախուած մեծ լապտերն ընդարձակ տափակ լուսամփոփով առատ լոյս էր սփռում նրա բոլորովին լերկ ծոծրակի վրայ, որը պլպլում էր սոխի կճեպի պէս։

Շահեանի հայրը մօտ վաթսուն տարեկան մարդ էր խոշոր արտաքինով։ Նրա մարմինն աւելի ուռած էր երևում, քան դէր։ Ֆիզիքական երկարատև սուր ցաւերը ձգձգել, սառցրել էին նրա սափրած դէմքի մկանունքները։ Աւետարանի շարունակ ընթերցումից նա չէր սովորել համբերատար լինել. տրտնջում էր ամեն բանի, առաւելապէս իր հիւանդութեան դէմ, որ իսկապէս սաստիկ տանջում էր նրան։ Մինչդեռ նա վերին աստիճանի բարի մարդ էր, թէև զուրկ չէր փող դիզելու ընդունակութիւնից։ Հիւանդութիւնը սաստկանալուց յետոյ, վերջ էր դրել իր առևտրական գործերին և ամուրդների ժամանակ քաղաքում ձեռք էր բերել մօտ քսան տեղ զանազան շէնքեր, որոնք բաւական արդիւնք էին տալիս նրան։ Զնայելով, որ հիւանդութիւնը շատ էր նեղում նրան, բայց և այնպէս կալուածա-

ներն անձամբ ինքն էր կառավարում։ Նրա գովելի յատկութիւններից մէկն էլ հէնց այն էր, որ նա սիրում էր գործ կատարել,—մի յատկութիւն, որից զուրկ էր փափկակեցութեան մէջ մեծացած և ինքն իր կամքին թողնուած նրա որդին։

Որդուն շատ էր սիրում, թէև միշտ տրտնջում էր նրա դէմ այն բանի համար, որ նա չի օգնում իրեն։ Իսկ որդուն ամենևին չէին հետաքրքրում հօր գործերը, և նա կատաղում էր ամեն անգամ, երբ հայրն սկսում էր այդ մասին տրտնջալ։ Դուրսը մուկ լինելով, տանը կատարեալ բռնակալ էր Շահեանը։ Շատ անգամ ամենաչնչին պատճառով այնպէս բըզաւում էր հօր և մօր վրայ, որ նրանք վախեցած լըռում էին։ Թէև նա հասկանում էր, որ իր վարմունքն անարդար և անվայել է, բայց չէր կարողանում զսպել իրեն։ Ծուլութիւնը, զրկելով նրան բնաւորութիւնից, նրա մէջ զարգացրել էր սաստիկ նեղ անձնասիրութիւն, որը վիրաւորւում էր ամեն մի չնչին բանից։ Այն ինչ այդ անձնասիրութիւնը սաստիկ վախկոտ էր օտար մարդու առաջ. օտարն ապտակ էլ տար նրան, նա կըլռէր։ Նա չէր կարողանում տանել միայն հօր և մօր կշտամբանքը, ինչքան էլ որ չնչին և արդարացի լինէր այդ։ Շատ քիչ կըպատահէր, որ նա հաշտ աչքով նայէր ծնողների վրայ, որոնց յանցանքն այն էր միայն, որ նրանք ամեն կերպ հոգում էին նրա բարեկեցութեան համար։

Այդ սակաւ ժամերից մէկն էլ այժմ էր, երբ նա համբուրեց մօրը, իսկ հօր հետ սկսեց մինչև անգամ կատակներ անել։

Տեսնելով որդուն ուրախ տրամադրութեան մէջ և բաւական կազդուրուած, հայրն ու մայրը կատարեալապէս երջանիկ էին զգում իրենց, այնքան երջանիկ, որ

աղա Կարապետը մինչև անգամ մոռացել էր իր ֆիզիքական ցաւերը և այլ ևս չէր տրտնջում։

Սակայն, Շահեանն երկար չմնաց ծնողների մօտ։ Հրաժարուելով մօր առաջարկած ընթրիքից, նա քաշուեց իր ննջարանն և անմիջապէս պառկեց, որ քնի։ Բայց, չնայելով որ ճանապարհից բաւական ջարդուած էր, շուտ չկարողացաւ քնել։

Փափուկ անկողնի մէջ պառկած երկար ժամանակ մտածում էր Բազէնեանի և նրա ուղեկցուհու մասին, մտածում էր հօր մասին, մօր մասին, Մաթութեանների մասին, Եւայի մասին, առաւելապէս Եւայի մասին։

Տպաւորութիւնները դեռ ևս շատ թարմ էին, իսկ երիտասարդական պարապ երևակայութիւնը—վառ։ Այդ թարմ տպաւորութիւնների տակ ցնորքներ էին, որ վիստում էին նրա գլխում։ Երիտասարդական պարապ ու ծոյլ կեանքի մէջ, երբ նրա ուղեղն իր գործունէութեան համար իրական ոչ մի յենակէտ չէր ունեցել,—երևակայութիւնը միշտ թռել էր դէպի վերացական աշխարհը, որտեղ երևոյթներն ու պատկերները հոգի ու մարմին չունին, ուրեմն և ոչ մի կենդանի կապ իրական կեանքի հետ։ Այո, ցնորքներ, ցնորքներ...

Ցնորքները հրաշալի են և միտք ունին, երբ դրանց ստեղծում է այն մարդկանց երևակայութիւնը, որոնց մէջ գործելու եռանդ ու կրակ կայ, որոնց կեանքը նըպատակ, վսեմ նպատակ ունի, որոնք ապրում և գործում են լաւագոյն ապագայի բաղձանքներով. բայց նա, որ իր երակների մէջ արեան տաքութիւն չի զգացել երբէք, որ ոչ մի եռանդ, ոչ մի ձգտում և այդ ձգտման հասնելու կամք չի ունեցել և կեանքը քարշ է տուել ամենաողորմելի կերպով, քարշ է տուել իբրև արդէն ուժից ընկած, թմրած ու փտած ծերունի,—ինչացու են եղել այդ ցնորքները։ Դրանք լոկ բոպէական զուար-

ճութիւն են պատճառել նրան, անմիտ, յիմար զուարճութիւն, որպէսզի յետոյ աւելի վառ գոյներով ցոյց տան նրան իր կեանքի ատելի դատարկութիւնը։

Հետևեալ օրը բաւական ուշ էր, որ նա արթնացաւ։ Օրը սաստիկ մառախլապատ էր, տխուր և ծուլութիւն ազդող։ Փոշու նման անձրև էր մաղում դուրսը։ Նա երեսն ի վեր դարձեալ ընկաւ բարձի վրայ և մնաց այդպէս։ Ինչո՞ւ վերկենար, ո՞ւր պէտք է գնար, ի՞նչ պէտք է անէր։ Եղանակն անպիտան, տունը տաք, կերակուրը պատրաստ, հոգսերից էլ բոլորովին ազատ։ Մի՞թէ սա փառաւոր կեանք չէ, որին երանի են տալիս միլիոնաւոր մարդիկ։ Չէ, նա ծակ փիլիսոփայութիւն է անում, որ շատ յաճախ, ձանձրանալով այդպիսի կեանքից, դժգոհութիւն է յայտնում։ Ի՞նչ ձգտում, ի՞նչ նպատակ, ի՞նչ եռանդ։ Դրանք կամ անմիտ բառեր են գեղեցիկ խօսելու համար հնարուած, կամ դրանցից իւրաքանչիւրը ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ մի-մի անվերջ տանջանք, հոգս և արեան զուր վերդովմունք։ Մարդկանց, բոլոր մարդկանց ձգտումը մի՞թէ այն չէ, որ կարելոյն չափ ապահով և հանգիստ կեանք վարեն. մտքի և արուեստի աշխարհում ինչ որ կայ և ինչ որ ստեղծւում է նոր, չէ՞ որ բոլորը մարդկային բարեկեցութեան համար է. գործ, աշխատանք, ամեն ինչ կեանքի անդորրութեան համար չէ՞ միթէ։ Աստուած առատաձեռն կերպով տուել է նրան այդ ապահով կեանքը, բարեկեցութիւնը, անդորրութիւնը, էլ ի՞նչ է հարկաւոր։

«Ուֆ...», յիշեց նա Եւայի սովորական բացականչութիւնը, ժպտաց, շուռ եկաւ պատի կողմը և սկսեց անթարթ աչքով նայել ծաղկանկար պաստառի մի սպիտակ գծի, որը նրան Եւայի դագաթի վրայ մազերի մէջ տեղից դէպի ետևն անցնող սպիտակ գիծը յիշեցրեց։

Նրա գլխում նորից սկսեցին ցնորքներ վխտալ, մի հրաշալի իդիլիա ստեղծելով։

Այդ իդիլիան ներկայացնում էր գարնանային այն հրաշալի մէջ-գիշերներից մէկը, երբ երկիրը ննջում է որպէս մանուկ, երբ պայծառ լուսինը լուսաւորում է իր փափուկ լուսով, որի մէջ երկրի հորիզոնները, կարծես, գոլորշիանում, կամաց, աննկատելի կերպով բարձրանում են դէպի վեր, և մարդը, լցուած մեղմ, անհասկանալի բաղձանքներով, գերեզմանական լռութեան մէջ հազիւ լսում է ընութեան ձայնը, որը թւում է մերթ, թէ անհուն վշտի ողբ է և մերթ—թէ անհուն երանութեան օրհներգ։ Սենեակում ճրագը մարած է։ Լուսինը ներս է նայում լուսամուտից և խորհրդաւոր կերպով ժպտում։ Լուսամուտի առաջ նստած են Շահեանն ու Եւան իրար գրկած, գլուխ գլխի կպցրած։ Եւան ամբողջապէս սպիտակ հագուստի մէջ է, որը պլաստիքական նրբութեամբ գծագրում է նրա կուրծքը և ծնկները։ Շահեանը սեղմում է նրա իրանը, և նրան թւում է, թէ այդ իրանն առաձգական է ռետինի պէս։ Եւայի փափուկ մազերը, կարծես շնչելով, կրքոտ համբոյր են տալիս նրա ականջին։ Նրանք նստած են անշարժ ու լուռ. այնտեղ, ուր զգացումներն են խօսում, լեզուն պապանձւում է. այնտեղ, ուր ինքը կենդանի բանաստեղծութիւնն է խօսում, պրոզան փախուստ է տալիս։ Լուռ են, բայց ուշի ուշով լսում են իրար շընչառութիւնը, իրար սրտի զարկը և հոգիների հրաշալի զուգաւորութեամբ զգում են, թէ մտածութիւններով, զգացումներով և իղձերով մի են, ինչպէս մի է Շահեանն առանձնապէս, ինչպէս մի է Եւան առանձնապէս, և երկուսը միասին լրացնում են իրար։ Այդպէս միացած նրանք նայում են լուսնի կաթնաւուն լոյսի մէջ գոլորշիացող հորիզոններին, և նրանց թւում է, թէ իրենք

ևս գոլորշիանում են կամաց-կամաց, խառնւում են իրար հետ, բարձրանում և անէանում... Լուսինը չարաճճի կերպով նայում է նրանց և շարունակում է ժպտալ խորհրդաւոր կերպով...

Դուռը զգուշօրէն բացուեց, և Շահեանի մայրը ներս կոխեց գլուխը։

Իդիլիան չքացաւ։ Շահեանը շուռ եկաւ և երազից սթափուողի նման նայեց մօրը։ Ըստ երևոյթին, թամարը կարծում էր, թէ որդին դեռ ևս քնած է, բայց տեսնելով, որ արթուն է, ներս մտաւ և դուռը յետ դրեց։ Իր հետ բերել էր որդու տաք ֆուֆայկը, որ հագնէր, չմրսէր։

Անախորժ տպաւորութիւն գործեց Շահեանի վրայ մօր անժամանակ ներս մտնելը,—անժամանակ, որովհետև նա կամենում էր կարելոյն չափ երկար ապրել պարապ երևակայութեան ստեղծած ցնորական քաղցր կեանքի մէջ, մինչդեռ, մօր ներս մտնելուց սթափուելով, դուրսն այդ ցնորական կեանքի ատելի հակապատկերը ներկայացաւ նրա աչքին։ Ինչպէս մռայլ էր երկինքը. ինչպէս բարակ, սիրտ մաշող կերպով մաղում էր անձրևը։

Մօտ մի ժամ տևեց, մինչև որ նա մի քանի անգամ շուռումուռ եկաւ անկողնում, նստեց, նորից պառկեց, նորից նստեց, մատների խաղերը ճըրթճըրթացրեց, յօրանջեց, ճլմկոտաց, ոտները կոխեց փափուկ մաշիկների մէջ, լուացուեց, հագնուեց, սանրուեց և, վերջապէս, ակնոցի ապակիները թաշկինակի ծայրով սրբելով, դուրս գնաց սեղանատուն, ուր հայրն ու մայրը վաղուց սպասում էին նրան թէյի։ Չնայելով այդ ծանր ու բարակ գործողութիւններին, որոնց կատարելու համար ուղտի համբերութիւն էր հարկաւոր, Շահեանն այնուամենայնիւ, հակառակ իր սովորական մեռած տրամադրութեան, առանձին աշխոյժ էր զգում իր մէջ այդ օրը։

Գիշերը հօրն ու մօրը թռուցիկ կերպով արդէն պատմել էր Մարութեանների մասին. այս անգամ մանրամասնութիւնների մէջ մտաւ և իր հիացքը յայտնեց առանձնապէս Մարութեանի մասին։

—Միայն մի պակասութիւն ունի,—աւելացրեց նա.—չափից դուրս շատախօս է։

—Միայն այդ պակասութիւնը չէ,—նկատեց աղա Կարապետը.—նա անպիտան մարդ էլ է։

—Ի՞նչ,—բացականչեց Շահեանը։

Հայրը նայեց որդու զարմացած դէմքին և ծիծաղեց, ինչ որ շատ հազիւ էր պատահում. որդու ուրախ տրամադրութիւնը տեսնելով, նա ինքը շատ ուրախ էր։

—Ասենք, ես մի քիչ խիստ ասացի,—ասաց նա։—Մի վախենար. Մարութեանը էլի քո կարծած լաւ մարդն է, միայն... մի փոքրիկ անպիտանութիւն է արել։

—Եղբօրը որ հօրական ժառանգութիւնից զրկեց,—հարցրեց կինն ամուսնուն։

—Հա։

Եւ աղա Կարապետը պատմեց որդուն Մարութեանի հետևեալ «անպիտանութիւնը»։ Մարութեանը մի եղբայր ունէր. այդ եղբայրը շատ ողորմելի մարդ էր, այնքան ողորմելի, որ եղբօր հետ չէր կարողանում համարձակ խօսել։ Ընդ սին նա ծոյլ էր և անուղղելի արբեցող։ Հօր մահից յետոյ Գէորգը բանն այնպէս էր սարքել, որ հայրական բաւական մեծ կարողութիւնից արբեցող եղբօրն ընկել էր մի խրճիթ և մի համեստ գումար։ Բայց դրանով էլ գոհ էր մնացել ողորմելի եղբայրը և, ունեցած-չունեցածը խմելուց յետոյ, իր կնոջ հետ մեռել էր վերջին ծայր աղքատութեան մէջ։

Հօր պատմութիւնը միանգամից հիասթափեցրեց Շահեանին Մարութեանի վերաբերմամբ, և այդ բանը վերին աստիճանի անախորժ էր նրա համար. նա չէր ուզում, որ Մարութեանն այդպէս վարուած լինէր իր եղբօր հետ, և այդ զգացումը նրան թելադրողը ոչ թէ այն էր, որ նա ցաւակցում էր Մարութեանի եղբօրը, կամ այն, որ մարդկանց անխիղճ արարքներն առհասարակ խորապէս ազդում էին նրան,—ոչ. այլ Մարութեանն այն աստիճան լաւ տպաւորութիւն էր թողել նրա վրայ, և նա այն աստիճան նպաստաւոր կարծիք էր կազմել այդ մարդու մասին, որ հօր ասածները խիստ հակասական կերպով էին ազդում նրան։ Պարզն այն էր, որ նա չէր ուզում միորևէ արատ տեսնել այն ընտանիքի մէջ, ուր կար Եւայի պէս մի աղջիկ...

—Հիմա խօ եղբօր աղջկան ինքն է պահում և եղբօր կենդանութեան ժամանակ էլ խօ ինքն էր այդ աղջկան ուսման տուել,—ասաց Թամարը։—Շուտով էլ կըպսակի, լաւ փող ու բաժինք կըտայ և քաւած կըլինի հին մեղքերը։ Ասում են, որ եղբօր մահից յետոյ շատ է զղջացել։ Եղբօրն էլ, կնոջն էլ խօ ինքը թաղեց։

—Գնա մեռիր, ասում է, արի սիրեմ,—նկատեց աղա Կարապետը։

Մօր խօսքերի վրայ Շահեանը յիշեց Աշխէնին, յիշեց նրա դէմքի կանոնաւոր, երկայն, սառած պրոֆիլը միայն, այն դրութեամբ, երբ այդ աղջիկը նայում էր վագոնի լուսամուտից դէպի դուրս, և նրան թուաց, թէ Աշխէնն այդ միջոցին մտածում էր իր որբութեան և այն մասին, թէ որքան ծանր է մի անտէր ու աղքատ աղջկայ համար ուրիշի խնամքի տակ ապրելը։ Անցեալ գիշեր վագոնի մէջ Շահեանն ուշադրութիւն չէր դարձնում Աշխէնի վրայ, երևի նրա համար, որ Եւան էր գրաւել նրան, կամ նրա համար, որ Աշ-

խէնը ոչնչով ցոյց չէր տալիս իրեն. բայց այժմ այդ աղջիկն սկսեց հետաքրքրել նրան, և այդ հետաքրքրութիւնը լոկ կարեկցութիւն էր շարժում նրա բարի սրտում։

VI

...Անցաւ մի, երկու, երեք... տասն օր։ Շահեանը սաստիկ ցանկանում էր Մարութեաններին այցելել։ Թէև ինքն իրեն չէր ուզում խոստովանուել, բայց պարզօրէն զգում էր, որ իրեն դէպի Մարութեանների տուն գրաւողն Եւան էր։ Բայց նրա բնաւորութեան իրեն սաստիկ ատելի կողմերից մէկն էլ այն էր, որ նա երբէք այնքան համարձակութիւն չէր ունեցել, որ ազատ կերպով այցելէր ոչ թէ միայն իր նորածանօթ կամ հեռաւոր բարեկամներին, այլ և, մինչև անգամ, ամենամօտ ազգականներին։

Ամօթխածութիւնը չէր միայն, որ այդ համարձակութիւնը չէր տուել նրան, այլ և իր վերին աստիճանի կասկածամտութիւնը. նրան միշտ թուում էր, որ եթէ աննպատակ կերպով, հէնց այնպէս, լոկ այցելած լինելու համար, այցելէր իր բարեկամներին, նրանք պէտք է ընդունէին իրեն լոկ քաղաքավարութիւնից դրդուած և մտքներումը պիտի ասէին դժգոհութեամբ՝ ինչու է եկել։ Այդտեղ էլ երևում էր նրա նեղ, վախկոտ անձնասիրութիւնը, որը միշտ այն հոգսումն էր, թէ ինչպէս անի, որ ոչոք, թէկուզ մտքումը, չվիրաւորի իրեն։ Այդ էր պատճառը, որ նա չէր վստահանում գնալ Մարութեանների տուն։

Մի երեկոյ, վերջապէս, ստիպեց իրեն, որ գնայ, գնաց և... յետ դարձաւ Մարութեանների դռնից։

Այդպէս անցաւ մօտ երկու շաբաթ։ Մարութեան-

ներին այցելելու և Եւային տեսնելու ցանկութիւնն սկսեց հետզհետէ սառչել նրա մէջ. նոյն իսկ Եւայի նրա վրայ թողած տպաւորութիւնն սկսեց անցնել։

Այդպիսով նրա կեանքը նորից սկսեց մտնել իր հին, առանձնակի, դանդաղ ընթացքի մէջ, երբ մի օր փողոցում հանդիպեց Մարութեանին։

Իրար հետ ծանօթանալու օրից այդ առաջին անգամն էր, որ նրանք հանդիպում էին իրար։ Մարութեանը կշտամբեց նրան, որ նա չի կատարել իր խոստումը և չի այցելել իրենց։ Շահեանն արդարացաւ նրանով, որ ասաց, թէ սաստիկ զբաղուած էր, ժամանակ չէր գտնում այցելելու և խոստացաւ, որ մօտ օրերում անպատճառ կայցելէ։

Այս անգամ էլ փոքրիշատէ համարձակութիւն ստացաւ և վճռեց, որ հետևեալ օրն անպատճառ գնայ Մարութեանների տուն։ Սակայն հետևեալ օրն աւելի լաւ համարեց իր այցը յետաձգել միւս օրուան։ Միւս օրն էլ յետաձգեց երրորդ օրուան, ամեն անգամ մի պատճառ հնարելով, իր սովորական անհամարձակութիւնն արդարացնելու համար իր աչքում։

Այսպիսով գլորուեցին, անցան դարձեալ մի քանի օրեր, և նա դեռ գնում էր Մարութեանների տուն։ Վերջապէս, մի երեկոյ, ուղղակի ամօթից, և ոչ թէ համարձակութիւն ստանալուց, հազիւ հազ, հազարումի նախատինք թափելով իր գլխին, վճռեց գնալ և—ճիշտ որ գնաց։

Կառք նստած, նոր էր մտել Մարութեանների փողոցը, երբ յանկարծ աչքովը ընկաւ Մարութեանի եղբօր աղջիկը։ Ձեռքերը սև, հասարակ վերարկուի գըրպանները կոխած, Աշխէնը մայթի վրայով գնում էր հակառակ կողմը։ Շահեանը շտապով վերցրեց գլխարկը և գլուխ տուեց նրան։ Աշխէնը կանգ առաւ, զարմացած նայեց նրա կառքի ետևից և, երբ կառքը հեռացաւ, շարունակեց իր ճանապարհը։

«Ճանաչեց», մտածեց Շահեանը, այդպիսի դէպքերում սովորական անհամ դրութեան մէջ զգալով իրեն։

Երբ կառքը կանգ առաւ Մարութեանների տան առաջ, Շահեանն ինքն էլ զարմացաւ, թէ ինչպիսի համարձակութեամբ ցած թռաւ, փողը դրեց կառապանի բուռը և ամուր սեղմեց ելեկտրական զանգակի կոճակը։ Ճանապարհին և այժմ, երբ սպասում էր, որ դուռը բանան, նա մտածում էր, թէ ինչ բառերով պիտի դիմաւորի Մարութեանին, նրա կնոջը և աղջկան և ինչով պիտի արդարացնի իր այցելութեան յետաձգումը։

—Տա՞նն են,—սովորականից աւելի բարձր ձայնով հարցրեց նա դուռը բաց անող ծառային։

—Ո՞ւմ էք կամենում,—իր պստիկ, ցաւագար աչքերով նայելով նրան, հարցրեց ծառան։

—Մարութեաններին։ Տանը չե՞ն։

—Ո՞վ է,—վերևից, նախասենեակից, լսուեց Թեկլէի ձայնը։

Շահեանը տեսաւ Մարութեանի կնոջը, որը ոլորապտոյտ սանդուղքի վանդակապատից նայում էր ներքև։

—Ես եմ, տիկին։ Բարև ձեզ,—կանչեց նա և շտապով ներս մտաւ։—Կարելի՞ է։

—Ա՜խ, դո՞ւք էք։ Համեցէք, համեցէք խնդրեմ։ Վերջապէս մեզ յիշեցիք։

—Ի՞նչ անեմ, տիկին,—վրայ բերեց Շահեանը, շտապ քայլերով վերև բարձրանալով.—ամեն օր մի նոր գործ էր պատահում, այնպէս որ այսօր միայն հազիւ կարողացայ ժամանակ գտնել ձեզ այցելելու։

Այդ խօսքերը նա պատրաստել էր Մարութեանի

համար, բայց տեսաւ, որ դրանք շատ յարմար եկան նրա կնոջն ասելու։

Թեկլէն հրաւիրեց նրան հիւրասենեակ, խնդրեց, որ նստի, և ինքը նստեց նրա դիմաց։ Ասաց, որ ինքը մենակ է մնացել տանը. Աշխէնը հէնց նոր դուրս գնաց, իսկ ամուսինն ու աղջիկը Սուրէնի հետ ճաշից յետոյ գնացել են զբօսանքի և, երևի, շուտով կը վերադառնան։

Լսելով այդ, Շահեանն անաջող համարեց իր առաջին այցելութիւնը։ Նրան սկսեց մտահոգութիւն պատճառել այն հանգամանքը, թէ ինչ պիտի խօսի ինքը մէն-մենակ այդ կնոջ հետ մինչև Մարութեանի և Եւայի վերադարձը, իսկ նրանք կարող էին շատ ուշանալ։ Սակայն շուտով ուրախութեամբ տեսաւ, որ Թեկլէն գրեթէ չի թողնում իրեն խօսելու։ Տիկինը խօսում էր անվերջ. խօսում էր իր մասին, իրենց ընտանիքի անդամների մասին, թատրոնում ներկայացուած նոր պիէսի մասին, իրենց տան ներքին յարկում ապրող չինովնիկի մասին, իրենց ծառաների մասին։ Խօսում էր այնպիսի մանրամասնութիւններով, որ Շահեանը զարմանում էր, թէ ինչից է գտնում այդքան բառեր և ինչպէս չի յոգնում կամ չի մոռանում, որ այդ բաները կարող են չհետաքրքրել իրեն։

Բազկաթոռի վրայ նստած, Շահեանն իր պարզ ակնոցի միջից ուշադրութեամբ նայում էր այդ անչափ շատախօս կնոջ տակաւին թարմ, բայց փոքր ինչ կոպիտ դէմքին ու մի քիչ շիլ աչքերին և մտածում էր՝ «ինչ յիմար կին է»։

Դուրսն արդէն մթնել էր։ Ներսը, սեղանի վրայ, վառւում էր հսկայ լամպը ձմերկաձև չեչոտ լուսամփոփով։ Շահեանն արդէն բաւական ձանձրացել էր տիկնոջ շատախօսութիւնից և Աստուած-Աստուած էր անում, թէ երբ պէտք է գան Մարութեանն ու Եւան։

Նախասենեակում լսուեց դռան էլեկտրական զանգակի աղմկալի ձայնը, որը չափից դուրս երկար շանակուեց։

—Այ, հիմա չի՛ դադարիլ,—ասաց Թեկլէն և, դէմքը թթուեցրած, երկու ձեռքով փակեց ականջները, մինչև որ զանգակը, երկարատև աղմուկ հանելուց յետոյ, վերջապէս լռեց։—Աղջիկս է,—բացատրեց Շահեանին։—Միշտ այսպէս է. մի անգամ խօ չի ածում ու սպասում. մինչև ծառան դնայ դուռը բանայ, շարունակ պիտի ածի զանգակը։ Օ՛հ, պէծի կրակ է տեղնուտեղը։

Հիւրասենեակի դուռը շլխկոցով բացուեց, և շտապով ներս մտաւ Եւան գլխարկով և աշնանային վերարկու հագին։ Շահեանին տեսնելուն պէս կանգ առաւ դռան մօտ, յոնքերը սաստիկ բարձրացրեց, որից նրա քթածակերը լայնացան, ժպտաց և ուսի վրայից յետ նայեց բաց դռնից դէպի նախասենեակը։

—Հայրիկ, պարոն Շահեանն է եղել,—կանչեց նա։

—Ա՜հ, վերջապէս,—լսուեց Մարութեանի ձայնը նախասենեակից։

Շահեանը վեր կացաւ և շտապեց դէպի Եւան։ Եւան ծանր և հանդիսաւոր քայլերով առաջ գնաց դէպի նա և, չարաճճի ժպիտը դէմքին, ձեռքը լուռ մեկնեց նրան։ Շահեանը սեղմեց ձեռնոցի մէջ պինդ սեղմուած այդ փոքրիկ ձեռքը։ Հէնց առաջին հայեացքից տեսաւ, որ Եւայի այդ շինծու ծանր ու հանդիսաւոր ընդունելութիւնը մտերմական բաց կեղծաւորութիւն էր և արտայայտում էր նրա ուրախութիւնն իր այցելութեան համար։ Եւ շնորհակալութեան նման մի քաղցր զգացում համակեց Շահեանին։

—Զգիտեմ, ե՞րբ պէտք է թողնես քո այդ սովո-

բութիւնը, որ զանգակի ձայնով այլ ես զահլա չըտանես,—դժգոհութեամբ նկատեց մայրն աղջկան։

Եւան կրունկների վրայ արագ շուռ եկաւ դէպի մայրը։

—Մայրիկ, ախր վախենում եմ, որ ծառան չըլըսի՛,—բացականչեց նա, նորից յոնքերը սաստիկ բարձրացնելով։

—Խուլ չէ, կըլսի։

—Ո՜ւռ, դու կարծում ես, թէ միայն խլութիւնից է, որ չեն լսում։ Հապա ծուլութիւնը, դանդաղաշարժութիւնը։ Վերջապէս, խօ գիտես, որքան ես անհամբեր եմ. մի վայրկեան որ ուշացան, արդէն ջղերս գրգռւում են։ Բայց գիտե՞ս, մայրիկ, ուր գնացինք։ Թանգարան, թափառական թանգարան։ Մումիա տեսանք, եգիպտական մումիա։ Դուք չէ՞ք տեսել, պարոն Շահեան։

—Ոչ։

—Ո՜ւռ, ինչ սարսափելի՜ է, որ տեսնէք... Երկու հազար տարեկան է... այսինքն ուզում եմ ասել՝ երկու հազար տարուայ է, գիտէ՞ք... թէ՞ չորս հազար տարուայ։ Չորս հազար տարուայ, չէ՞, հայրիկ,—հարցրեց Եւան, արագ դառնալով դէպի հայրը, որ շտապով ներս մտաւ այդ բոպէին։

—Ի՞նչը,—հարցրեց հայրը։

—Մեր տեսած մումիան։

—Չորս հազար տարուայ։

—Չորս հազար տարուայ, պարոն Շահեան,—բացականչեց Եւան։ Ո՛չ, չեմ հաւատում, թէ դիակն այդքան երկար ժամանակ դիմանայ։

—Փառք Աստուծոյ, աչքովդ տեսար,—ասաց Մարութեանը, որ իրեն յատուկ պարզ ուրախութեամբ

Շահեանին բարևելուց յետոյ, խնդրեց նրան, որ նստի, և ինքը նստեց նրա մօտ։

—Կարծես թէ չէր կարող կեղծ լինել,—նկատեց Եւան։—Եւ, ի հարկէ, կեղծ էր։ Երևակայեցէք, պարոն Շահեան, փտած փայտի վրայ փտած փալասներ են փաթաթել, մի փտած դերան փորել մէջն են դրել և անունը դրել են չորս հազար տարուայ մումիա։

—Հապա դէմքը, բերանը, քիթը, աչքերը։

—Ոչինչ չէր երևում, բոլորը մաշուած էր. զօրով մաշել էին, որ հին բան երևայ։

—Զօրով էլ մաշել կըլինի։

—Ինչո՞ւ չի լինիլ. մարդիկ այնքա՞ն խորամանկ են։ Կեղծ էր, կեղծ։ Չեմ հաւատում։

—Լաւ, լաւ, գլխարկդ վերցրու, վերարկուդ հանիր,—նկատեց մայրը։—Չես հաւատում, մի՞ հաւատա։

—Չեմ հաւատում, չէ՞,—կրկնեց Եւան ձեռնոցները արագ դուրս քաշելով ձեռքերից։—Կուզե՞ս այս բոպէին խաբեմ քեզ, հայրիկ։

—Ի՞նչպէս թէ խաբես։

—Հապա տասը մատդ այնպէս համարիր, որ տասնամէկ երևայ։

—Ահա՛. մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթ, ութ... տասը, տասնամէկ։

—Ինն կուլ տուիր, այդ չեղաւ։ Հիմա՝ տես ինչպէս եմ քեզ խաբում։—Եւան ձեռնոցները շպրտեց աթոռի վրայ։—Նայիր մատներիս։ Դուք էլ, պարոն Շահեան։ Դու էլ, մայրիկ։ Լաւ նայեցէք։ Մէկ, յետոյ—երկու, յետոյ—երեք, յետոյ—չորս, յետոյ—հինգ, վեց, եօթ, ութ, ինն, տա՛ս։ Տասն էր, չէ՞։

—Այո, և ոչ թէ տասնամէկը։

—Սպասիր, է՛։ Ես խօ քեզ պէս ինն կուլ չտուի։ Տասը։ Հիմա յետ համարենք։ Տասը... ինն... ութ...

եօթ... վեց։ Այս մի ձեռքիս մատները լրացան վեցով, չէ՞։ Ուրեմն վեց։ Այս ձեռքս էլ հինգ՞մատ ունի. վեց, պլիւս հինգ—տասնմէկ։ Ի՞նչպէս էր, հայրիկ։ Մումիայի տէրն էլ այսպէս է քեզ խաբել։

Եւ նախ, քան հայրը, մայրը, Շահեանն ուշքի կըգային ֆոկուսի այդ անսպասելի լուծումից, Եւան աթոռի վրայից թռցրեց ձեռնոցներն ու դուրս վազեց։

Ցանկարծ ընդհանուր քրքիջ բարձրացաւ։

—Տեսնում ՞ս... ճիշտ որ խաբեց,—բացականչեց Մարուքեանը։—Ի՞նչպէս արաւ։

Եւ նա կրկնեց աղջկայ ֆոկուսը։ Դարձեալ ընդհանուր քրքիջ բարձրացաւ։

—Չեմ հաւատում, չէ,—կանչելով ներս մտաւ Եւան, գլխարկն ու վերարկուն հանած։ Նա շտապով մի աթոռ վերցրեց, դրեց մօր բազկաթոռի մօտ և երկու ձեռքով ուղղեց շրջազգեստը ծնկների վրայ։

Հայրը նայեց նրան և լուռ դողդոջուն կերպով ծիծաղեց։

Եւան իր կողմից լուռ նայեց հօր աչքերին։ Դէմքին նա այնպիսի կեղծ-լուրջ արտայայտութիւն էր տուել, որ Մարուքեանի հետ չկարողացան չծիծաղել նաև Թեկլէն ու Շահեանը։

—Զարմանալի է. ի՞նչ էք ծիծաղում,—նկատեց Եւան։

—Ի՞նչպէս արիր, ինչպէ՞ս. հապա մէկ էլ արա,—ասաց Մարուքեանը։

—Չէ, հայրիկ. ֆոկուսը մի անգամ կանեն, այլապէս համ չի ունենալ։ Նոյն իսկ քո այն իսկական համարած մումիան մի անգամ էլ որ տեսնես, այլ ևս հետաքրքրութիւն չի շարժիլ։ Բայց գիտէ՞ք, պարոն Շահեան, թանգարանում ի՞նչ ազդեց ինձ վրայ աւելի։

—Ի՞նչ։

—Մարի Ստիւարտը մահապատժից առաջ... Դուք կարդացել էք Շիլլերի դրամը։

—«Մարի Ստիւարտը»։ Կարդացել եմ։

—Հրաշալի է, չէ՞։ Բայց պէտք է տեսնէք այդ անբաղդ թագուհու մոմից ձուլուած պատկերը, որ խոր, շատ խոր տպաւորութիւն ստանաք։ Այնքան կենդանի, այնքան վեհ, այնքան հանգիստ վիշտ է արտայայտում նրա գեղեցիկ դէմքը, որ... մինչև անգամ ցանկանում ես նրա տեղը լինել։

—Ի՞նչ յիմարութիւն,—նկատեց Մարուքեանը։

Եւան զայրացած նայեց նրան։

—Հայրիկ, դու անսիրտ մարդ ես։

—Որովհետև չեմ ցանկանում, որ Մարի Ստիւարտի պէս ինձ տանեն կառափնարան։

—Ո՛ւֆ, ի՞նչ ես ասում, հայրիկ. ես խօ այդ չեմ ասում։

—Հապա։

—Ես այն եմ ասում, որ Մարի Ստիւարտի վիճակը չի շարժում քո կարեկցութիւնը։

—Եւ ի՞նչ կարիք կայ, ասա խնդրեմ, որ շարժի։

—Տեսնում էք, պարոն Շահեան. տղամարդիկ միշտ այսպէս գործնական տեսակէտից են նայում բանի վրայ։ Նրանք ամենևին չեն ուզում դէթ մի բոպէ զգացմունքով ապրել։

—Տղամարդուն այդպէս էլ վայել է, հապա,—նկատեց Մարուքեանը։—Հէնց որ տղամարդն սկսեց ապրել զգացմունքներով կամ, ուրիշ խօսքով ասած՝ վերացական աշխարհի մէջ, նա այլ ևս տղամարդ չէ, նա կին է։

—Նախ խնդրում եմ, հայրիկ, յարգանքով խօսիր կնոջ մասին։ Նկատիր, որ ես կատակով չեմ ասում այս։ Ցեռոյ... ինչու՞ վերացական աշխարհի մէջ։ Մի՞թէ

զգացմունքներով ապրելը նշանակում է վերացական աշխարհի մէջ ապրել։

—Հապա ինչ։

—Հապա այն, որ զգացմունքներով ապրել նշանակում է զգալ, կարեկցել, քարասիրտ չլինել։

—Ես այդպէս չեմ հասկանում։

Եւան բարկացած նայեց հօրը և ուզում էր, ըստ երևոյթին, տաքացած խօսել, բայց հանդիստ կերպով դարձաւ Շահեանին։

—Տեսնում էք,—ասաց նա.—մենք միշտ այսպէս ենք վիճաբանում իրար հետ. հայրս միշտ հակառակում է՞ ինձ։

—Զարմանալի է. այդ ինչ՞ցն է, որ դու իրաւունք ունիս հակառակելու քո հօրը, իսկ ես, որ քո հայրն եմ, պէտք է զրկուեմ այդ իրաւունքից,—նկատեց Մարուքեանը և աչքով արեց Շահեանին։

—Է՛հ,—զայրագին արտասանեց Եւան, ձեռքը խըփելով ծնկանը, և լռեց։

Շահեանը նկատեց, որ Մարուքեանը կատակով է վիճաբանում աղջկայ հետ և սիրում է նրան բարկացնել։

VII

Անցել էր մօտ երկու ժամ, որ Շահեանը նստած էր Մարուքեանների հիւրասենեակում։ Եւան հէնց նոր դուրս էր գնացել թէյի պատրաստութիւն տեսնելու, երբ լսուեց դռան զանգակի ձայնը։

—Աշխէնն է,—ասաց Թեկլէն։

—Տանը չէ՞ր։ Ո՞ւր է գնացել,—հարցրեց Մարուքեանը։

—Աշակերտուհիներից երկուսն այս մի քանի օրը

գալիս չեն եղել. ասաց, որ գնում է տեսնելու ինչ է պատահել։

Շահեանը զարմանքով նկատեց, որ Աշխէնի մասին խօսք բացուած ժամանակ սառնութեան նման ինչ որ զգաստութիւն տիրեց Մարուքեանին և նրա կնոջը։ Նա յիշեց հօր պատմութիւնը Մարուքեան եղբայրների ժառանգութեան մասին և զգաց, որ իր ուրախ տրամադրութիւնը խանգարուեց։ Բայց այդ ոչ թէ այն պատճառով էր, որ Մարուքեանը նրան վատ մարդ երևաց, այլ այն պատճառով, որ նա, կարծես ընդդիմամբ, զգաց, թէ Աշխէնի ներկայութեամբ ինքն այնպէս ազատ չպիտի լինի այդ տան մէջ, ինչպէս նրա բացակայութեան ժամանակ։

—Դուք գիտէ՞ք, պարոն Շահեան, որ եղբօրս աղջիկը չքաւոր մարդկանց երեխաներին ձրի դասեր է տալիս տանը,—ասաց Մարուքեանը։

—Չէ։

—Հապա։ Այդ կողմից նա էլ որդուս պէս իդէալիստ է կամ իդէալիստուհի, ինչպէս ուզում էք ասացէք։ Ասենք, այստեղ իդէալիստութեան ոչինչ չկայ, կարծեմ. աւելի լաւ է բարի գործ կատարել, քան թէ պարապ նստել։ Այնպէս չէ՞։

—Ի հարկէ։

Մարուքեանը կանչեց աղախնուն և պատուիրեց, որ Աշխէնին ասի՝ չի՞ ցանկանալ արդեօք իրենց մօտ գալ, հիւր ունին։ Աղախինը դուրս գնաց։

Մի քանի րոպէից հանդարտ քայլերով ներս մտաւ Աշխէնը և, տեսնելով Շահեանին, հետաքրքրութեամբ նայեց նրան իր լուրջ աչքերով։ Շահեանն իսկոյն վերկացաւ, շտապեց դէպի նա, բայց, տեսնելով, որ նա չի ճանաչում իրեն, շփոթուած կանգ առաւ։

—Չե՞ս ճանաչում,—շտապով դիմեց Մարուքեանն

եղբօր աղջկան։—Ամառանոցից գալիս չծանօթացնք վագոնում։

—Ա՜խ,—յանկարծ յիշելով, արտասանեց Աշխէնը, շտապով առաջ գնաց դէպի Շահեանը և, մի հիւանդոտ ժպիտ դէմքին, սեղմեց նրա ձեռքը։—Խնդրում եմ, ներեցէք. մութ կերպով մտաբերում էի, որ ուր որ տեսել եմ ձեզ, բայց չէի կարողանում յիշել։ Ով գիտէ, դուք էիք, որ այս երեկոյ գալիս էիք կառքով և բարևեցիք ինձ։

—Ես էի,—ասաց Շահեանը վախկոտ ժպիտով։

—Ուրեմն դաբձեալ ներեցէք, խնդրում եմ. ես կրկնակի յանցաւոր եմ ձեր առաջ։

—Խնդրեմ, խնդրեմ,—վրայ բերեց Շահեանը, բաւական անյարմար դրութեան մէջ զգալով իրեն այդ բարակ, հիւանդոտ աղջկայ առաջ, որը թէև պարզ ու անկեղծ կերպով ներողութիւն էր խնդրում իր «յանցանքի» համար, այնուամենայնիւ մի անհասկանալի ճնշող տպաւորութիւն էր գործում նրա վրայ։

Աշխէնը կրկին հիւանդոտ կերպով ժպտաց, թեթեւակի գլխով արաւ և գնաց նստեց հօրեղբօր բազկաթոռի մօտ, դահաւորակի վրայ։

Շահեանը նոյնպէս նստեց իր տեղը և ուզեց նայել նրան լաւ դիտելու համար, բայց հայեացքը միայն թռցրեց նրա դէմքի վրայով, որովհետև այդ միջոցին ինքն Աշխէնն իր սառած, կարծես ոչինչ չտեսնող, բայց ճնշող աչքերը յառել էր նրա դէմքին։

—Այդ ո՞ւմ երեխաներն են, որ չեն գալիս,—հարցրեց Մարութեանը, դիմելով եղբօր աղջկան, և Շահեանը նրա թէ ձայնի և թէ հայեացքի մէջ նկատեց այդ բաց ու կենսուրախ մարդուն չսազող մի տարօրինակ ինքնազսպում և յարդանք։

—Մէկը կալատող Սարգսինը, միւսը խարազ Զաքարինը։

—Յետո՞յ։ Իմացար ինչու չեն գալիս։

—Մէկի մայրն է հիւանդ,—սաստիկ տենդ ունէր,—մօտը նստած պահում է, միւսին ծնողներն ուխտ են տարել Բոլնիս։

—Այդ ո՞րն է Բոլնիս գնացողը։

—Խարազ Զաքարը։

—Մտիկ արա։ Տանը հաց չունի ուտելու և Բոլնիս է գնում։

—Այն էլ այս ցրտերին։ Յետոյ ի՞նչ ցրտեր,—նկատեց Թեկլէն։

—Ի՞նչ է, մրսո՞ւմ էք,—կանչեց Եւան, իրեն յատուկ փութկոտութեամբ ներս մտնելով։—Իսկոյն թէյը պատրաստ կըլլինի։

—Գիտե՞ս Աշխէնն ինչ է ասում,—դիմեց նրան հայրը։

—Ի՞նչ։

Եւան նստեց Աշխէնի մօտ և ձեռքերի արագ շարժումով մազերը քունքերից քաշեց ականջների ետևը։

—Հապա իմացիր ինչու խարազ Զաքարի աղջիկն այս քանի օրս չի եղել գալիս դասի։

—Երևի հիւանդ է։ Հմ, Աշխէն։

—Ոչ. ծնողներն, ասում է, ուխտ են տարել իրենց հետ Բոլնիս։

—Հապա ո՞ւմ մօտ պիտի թողնէին, հայրիկ, որ չըտանէին։

—Ձեզ հասկանում ինձ. ես խօ երեխային տանելու կամ չտանելու մասին չեմ խօսում։

—Հապա՝։

—Ես ուզում եմ ասել, թէ ախր ի՞նչ ունին նրանք, որ դեռ հեռաւոր տեղեր ուխտ էլ են գնում։

—Հայրիկ, այդպէս ինչպէս կարելի է դատել. միթէ ունևորութեան կամ չունևորութեան հետ որևէ կապ ունի հաւատի գործը։

—Հաւատ էլ ասում է։ Յիմարութիւն ասա։

—Եւ նախապաշարմունք,—ամուսնու խօսքին վերայ բերեց Թեկլէն։

—Ոչ, մայրիկ ջան. դու էլ ես սխալւում, հայրիկն էլ։ Դա հաւատ է։ Ի՞նչ անենք, թէ նրանք աղքատ են։ Դուք ուզում էք, որ նրանք համ փող չունենան, համ էլ զուրկ մնան հաւատի մխիթարանքից։

—Ես ուզում եմ, որ նրանք եթէ փող չունին, գոնէ խելք ունենան,—բացականչեց Մարութեանը։

—Այդ, ի հարկ է, աւելի լաւ է, հայրիկ. բայց և այնպէս հաւատն էլի հարկաւոր է։ Վատն այն է, որ մարդ փող էլ է ունենում, խելք էլ, բայց հաւատ չի ունենում։ Չեմ յիշում կարդացի՞լ եմ, թէ ինձ ասել են, որ խոր հաւատ են ունենում միայն շատ զարգացած և մէկ էլ շատ տգէտ մարդիկ։ Գլադստոնն, ասում են, իր քաղաքական ծանր գործերից յետոյ կատարեալ մխիթարութիւն և հանգստութիւն է գտնում աւետարան կարդալով։

—Ասելդ ի՞նչ է. որ Գլադստոնն ի՞լ կարող է խարազ Զաքարի պէս ուխտ գնալ Բոլնիս։

Եւ Մարութեանն սկսեց ծիծաղել։

—Սպասիր, հայրիկ ջան, մի ծիծաղիր. մենք ըսկսել ենք լաւ նիւթի մասին խօսել։ Այ, թող պարոն Շահեանն ասի։ Պարոն Շահեան, ի՞նչ էք կարծում. խարազ Զաքարի Բոլնիս գնալը յիմարութիւն է, թէ հաւատ։

—Ես չեմ ճանաչում խարազ Զաքարին։

—Հարկ էլ չկայ ճանաչելու։ Ընդունեցէք մի հասարակ արհեստաւոր, որը ծանրաբեռնուած է բազմամարդ ընտանիքով և օր աշխատում է օր ուտում, իսկ այն օրը, որ ոչինչ չի աշխատում, քաղցած է մնում իր ընտանիքով։ Այդպիսի մի մարդու ուխտ գնալը յիմարութիւն է, թէ հաւատ։

—Ասա՝ այս ցրտերին և Բոլնիսի պէս վաթսուն վերստ հեռու տեղ ուխտ գնալը,—նկատեց Մարութեանը։

—Այո, այս ցրտերին և Բոլնիսի պէս վաթսուն վերստ հեռու տեղ ուխտ գնալն այդպիսի մարդու համար յիմարութիւն է, թէ հաւատ։

—Այդ պէտք է իրեն՝ խարազ Զաքարին հարցնել,—ոչ իսկոյն պատասխանեց Շահեանը և ծիծաղեց։

—Դժբաղդաբար, այս րոպէիս նա Բոլնիսումն է. ես ձեր կարծիքն եմ հարցնում, պարոն Շահեան։

Շահեանի դէմքը լարուած մտքի արտայայտութիւն ստացաւ։

—Իմ կարծիքով... յիմարութիւն չէ,—ասաց նա։

—Ուրեմն հաւատ։

—Ոչ էլ հաւատ։

—Հապա՞։

—Նախապաշարմունք միայն։

—Այդ, կարծեմ, մայրիկս էլ ասաց։

—Դէ, յիմար նախապաշարմունք է, բաս ի՞նչ է,—զայրացած կանչեց Թեկլէն։—Ի՞նչ է նշանակում մանրմունը երեխաներին առնել ու գնալ այս ցրտերին մի քանի օր վայր ընկնել բաց երկնքի տակ։ Յիմարութիւնից էլ վատ։ Դեռ չեմ ասում, որ նրանք տաք շոր էլ չունին հագնելու։

—Ա՛յ, ա՛յ, մայրիկը մօտեցաւ խնդրի լուծմանը։ Հէնց այդ պատճառով էլ ասում եմ, մայրիկ ջան, որ խարազ Զաքարի Բոլնիս գնալը հաւատից է, և ոչ թէ յիմարութիւնից կամ նախապաշարումից, որովհետև,—լսիր, հայրիկ, ինչ եմ ասում,—որովհետև եթէ հաւատից

և խոր հաւատից չլինէր, ոչ մի մարդ, մանաւանդ աղքատ մարդը, ինչքան էլ որ տգէտ և նախապաշարուած լինէր, երբէք չէր առնիլ իր մանր-մունր երեխաներին և չէր գնալ տասնեակ վերստեր այս ցրտերին բաց երկնքի տակ անցկացնելու խաչի տակ։ Վերջապէս, դու ասա, Աշխէն. ճիշտ չե՞մ ասում։

—Ես լիովին համաձայն եմ քեզ հետ,—ասաց Աշխէնը։

Եւան վեր թռաւ տեղից։

—Բռաւո,—բացականչեց նա երեխայի պէս ուրախացած և ծափ տուեց։—Հայրիկը յաղթուե՞ց, հայրիկը յաղթուե՞ց։

Մարութեանը ծիծաղեց։

—Ի՞նչպէս չէ, կարծում ես, նկատեց նա։

—Ոչ թէ կարծում եմ, այլ իսկապէս այդպէս է։ Յաղթուեցի՞ր, յաղթուեցի՞ր, յաղթուեցի՞ր,—հօրը ջրդրացնելով արագ-արագ վրայ տուեց Եւան, աջ ձեռքը բռունցք կազմած՝ խփելով ձախ ձեռքի ափին։

—Դէ, սպասիր, է՞։

—Ո՞չ, դու սպասիր, հայրիկ, և լսիր ինչ է ասում Աշխէնը։

—Թէ վիճաբանում ես, դու վիճաբանիր ինձ հետ, թէ չէ՝ ի՞նչ՝ ես Աշխէնին մէջ գցում։

—Ի՞նչ, դու կարծում ես, ես խուսափում եմ քեզ հետ վիճաբանելուց։ Սխալւում ես, պարո՛ն հայրիկ։ Բանը որ վիճաբանելուն գայ, մինչև լոյս կընստեմ և կըվիճաբանեմ քեզ հետ այս խնդրի մասին։ Բայց ես դեռ ևս կարծիքներ եմ հաւաքում։ Այժմ...

—Դէ թող, որ ես էլ խօսեմ, է՞։

—Ոչ, հայրիկ ջա՛ն, սպասիր. այժմ Աշխէնի հերթն է,—ասաց Եւան աղաչական տոնով և նորից նստեց

Աշխէնի մօտ։—Դու ուզում ես քո կարծիքը յայտնել, չէ՞, քոյրիկ ջա՛ն։

Աշխէնը քնքոյշ սիրով նայեց Եւայի չքնաղ աչքերին և կամաց ծիծաղեց։ Այնուհետև նա նորից ընդունեց իր սառած դէմքի խաղաղ արտայայտութիւնը և կարճ ժամանակ լուռ մնաց։

Ամենքը նայում էին նրա լուրջ դէմքին սպասողական դրութեամբ։

—Սխալմունքն այն է, որ ամեն բանի վրայ նայում ենք մեր տեսակէտից,—ասաց նա, կարծես իւրաքանչիւր բառն արտասանելուց առաջ կշռատատելով, որպէսզի ամփոփ և կարճ կերպով արտայայտած լինի իր միտքը։—Դուցէ այլ կերպ նայել չենք էլ կարող. բայց այդ ճանապարհով, ես կարծում եմ, երբէք չենք հասնիլ ճշմարտութեանը։ Եւ պարոն... պարոն Շահեանը, իմ կարծիքով, սխալ չասաց, թէ իրեն՝ խարաղ Զաքարին պիտի հարցնել՝ ինչո՞ւ է այս ցրտերին և այդքան հեռու տեղ մանր-մունր երեխաներով ուխտ գնացել խաչի դուռը. թէև պարոնը, ինչպէս նկատեցի, կատակով ասաց այդ և յետոյ փոխեց իր խօսքը։ Այրը սաստիկ նախապաշարուած էր... այսինքն ուզում եմ ասել խիստ հաւատացող կին էր և անկեղծ նեղանում էր, երբ ես ասում էի նրան, որ խաչերին ուխտ գնալն անօգուտ բան է. որ երազները դատարկ բաներ են և այլն։ Յիշում եմ. երկար ժամանակ նրա աչքերը ցաւում էին. ուխտեց եօթն անգամ բոբիկ ոտով Ծաղկեվանք գնալ, գնաց և առողջացաւ։

—Եւ ինչից, հայրիկ,—վրայ բերեց Եւան, նորից ջրդրացնելով հօրը.—հաւատից, ի հարկ է, և ոչ թէ քո ասած յի...

Նա յանկարծ կծեց շրթունքը և սաստիկ կարմրեց։

Հայրը հասկացաւ նրան և շինծու խստութեամբ շարժուեց նստած տեղում։

—Իմ՞նչ... ինչ էիր ուզում ասել...

Եւան ոտը զայրացած խփեց յատակին։

—Է՛հ, գնա՛ է՛... այնքան կուզում ես հետս, որ վերջը յիմարացնում ես։

Իմացա՛ք, պարոն Շահեան, լսեցի՛ք... Լսեցի՛ք՝ աղջիկս, հարազատ աղջիկս ինչ էր ուզում ասել ինձ... ինձ, իր հարազատ հօրը...

—Ո՛ւֆ, ինչ անտանելի հայրիկ ես... ես չեմ կարող քեզ լսել։

Եւ Եւան, աչքերը զայրոյթի արցունքով լցուած, վեր թռաւ տեղից ու դուրս վազեաւ։

Հայրը բարձրաձայն ծիծաղեց նրա ետևից։

Ամենքը հասկացել էին, թէ բանն ինչումն է, և խնդում էին։

—Հա՛, ծիծաղեցէք, ծիծաղեցէք,—մի բոպէից ներս մտնելով, ասաց Եւան և խռովածի պէս նստեց հեռու։—Ձեր ջգրու ես այլ ես չեմ խօսիլ։

—Այդ աւելի լաւ,—նկատեց Մարութեանը.—այլ ես չես վիրաւորիլ հօրդ։

—Երբ որ այդպէս է, էլի կը խօսեմ։

—Այսինքն՝ էլի կըվիրաւորես հօրդ։

—Ո՛ւֆ... Հայրիկ, դու իսկապէս որ անտանելի հայրիկ ես եղել։ Ուզում ես, որ քաշուեմ սենեակս և այլ ես դուրս չգամ այս երեկոյ այստեղ։

—Լաւ, բաւական է,—լրջութեամբ նկատեց մայրն աղջկան, առաջինը վերջ տալ ուզելով կատակին։—Թէյն ինչ եղաւ։

—Ես գործ չունիմ թէյի հետ։

—Զարմանալի է. համ վիրաւորում ես, համ էլ ինքդ ես բարկանում,—նկատեց հայրը ծիծաղելով։

—Քեզ հետ չեմ խօսում, հայրիկ։

—Գոնէ առանց թէյի մի թողնիր։

—Կասեմ, որ թէյն այստեղ բերեն։

Եւան վերկացաւ, դուրս գնաց և վերադարձաւ աղախնի հետ, որն արծաթէ մատուցարանով բերում էր թէյը։ Խռովածի պէս նա դարձեալ նստեց հեռու, բայց թէյ առաւ։

—Եթէ խռոված ես, թէյ էլ չպէտք է խմես,—նկատեց հայրը։

Եւան ոչինչ չպատասխանեց։

Կարճ ժամանակ լռութիւն տիրեց, որի միջոցին ամենքը ժպտալով նայում էին Եւային, իսկ Եւան ոչոքի չէր նայում և նստած էր ուռած-փքուած։

—Եւա,—կանչեց Աշխէնը։

—Ի՞նչ է։

—Երէկ ես վարոյի մօտ էի։ Ասաց, որ ինքը և իրենց մի քանի վարժուհիներ թատերասէրների հետ ուզում են մի ներկայացում տալ բարեգործական նպատակով։ Ցարմար են դատել խաղալ «Ռուզան», բայց Ռուզանի դերը կատարող չեն ճարում։ Արի դու վերցրու այդ դերը։

—Հա՛,—ասաց Մարութեանը, դառնալով Աշխէնին։—Հէնց նոր, որ վերադառնում էինք տուն, պատահեցինք օրիորդ Սահակեանին։ Նա մեզ էլ ասաց այդ և այն էլ ասաց, որ Ռուզանի դերը քեզ են առաջարկել, բայց դու մերժել ես։ Ինչո՞ւ։

Աշխէնը ժպտալով նայեց հօրեղբօր դէմքին, որին Մարութեանը միշտ լուրջ արտայայտութիւն էր տալիս եղբօր աղջկայ հետ խօսելիս։

—Ինքներդ ասացէք, հօրեղբայր, ես կարող եմ կատարել Ռուզանի դերը։

—Ի՞նչ է, ինչո՞ւ չես կարող։

—Է՛հ, թողէք։ Ի՞նչ իմ բանն է։

—Ընդհակառակն, օրիորդ. ես կարծում եմ, որ դուք շատ լաւ կը կատարէք Ռուզանի դերը,—մէջ մըտաւ Շահեանը, որպէս զի, վերջապէս, մի բան էլ ինքն ասած լինի։

Աշխէնը նայեց նրա ակնոցին։

—Ինչո՞ւ դուք այդպէս էք կարծում։

Շահեանը շփոթուեց. շփոթուեց թէ նրա տարօրինակ յամառ հայեացքից և թէ առաջարկուած հարցի պատասխանը չունենալուց։

—Որովհետև... ինձ այդպէս է թւում,—ասաց նա և զգաց, որ յիմարաբար ժպտում է։

Աշխէնը ձեռքի հանդարտ շարժումով յետ քաշեց ճակատի վրայ ընկած մազերը և ոչինչ չասաց։

Այդ լռութիւնից Շահեանն աւելի շփոթուեց և ձեռքը մեքենայաբար մեկնեց դէպի թէյի բաժակը։

—Եւ, ի՞նչ ես ասում,—նորից դիմեց նրան Աշխէնը։—Կը վերցնե՞ս Ռուզանի դերը։ Ես կարծում եմ, որ դու շատ լաւ կարող ես կատարել այդ դերը։

«Ա՞յս ինչ է. ծաղրո՞ւմ է ինձ», մտածեց Շահեանը և նայեց Աշխէնին։ Բայց Աշխէնը, որ այդ բոպէին նայում էր Եւային, ըստ երևոյթին, ամենևին չէր էլ մըտածում նրա մասին։

—Ինչո՞ւ դու այդպէս ես կարծում,—հարցրեց Եւան նոյն եղանակով, ինչ եղանակով որ Աշխէնը տուեց այդ հարցը Շահեանին։

Շահեանը հայեացքն Աշխէնի դէմքից փոխադրեց Եւայի դէմքին։ «Սա էլ է ինձ ծաղրում, թէ՞... պաշտպանում է ինձ», մտածեց նա։

—Որովհետև քո մէջ կայ՞ յանկարծ բռնկուող այն

կրակը, որ հարկաւոր է Ռուզանի դերը կատարողին,—պատասխանեց Աշխէնը։

—Խնդրեմ։ Իմ մէջ ո՛չ մի կրակ չկայ։

—Թող, ի սէր Աստուծոյ,—նկատեց Թեկլէն։—Հիմա բեմ դուրս գալն է պակաս։

—Վերջապէս, ի՞նչ դրա բանն է դրամատիկ դերեր կատարելը,—նորից սկսեց ջղրացնել աղջկան Մարուքեանը։—Ես այդ օրիորդ Սահակեանին էլ ասացի. նա, ախր, դրան էլ առաջարկեց Ռուզանի դերը։ Դրան ասա սուբրէտի թեթև դերեր կատարի։

—Հայրիկ, ասացի, որ քեզ հետ չեմ խօսում։

—Լաւ, քեզ հետ ո՞վ է խօսում։

—Դո՛ւ. հէնց այս բոպէիս—չե՞ս խօսում։ Ա՛յ, պարոն Շահեանի, մայրիկի, Աշխէնի հետ կը խօսեմ, քեզ հետ չեմ խօսիլ։

—Լաւ. ես լռում եմ. տեսնենք ինչ ես խօսում։

Եւան աթոռը մօտ քաշեց։

—Պարոն Շահեան, Աշխէնն ասաց, որ ես Ռուզանի դերը կարող եմ շատ լաւ. կատարել, որովհետև իմ մէջ յանկարծ բռնկուող ինչ-որ կրակ կայ եղել. մայրիկն ասաց, որ ինձ բեմ դուրս գալն է պակաս, իսկ հայրիկն ասաց, որ Ռուզանի պէս դրամատիկ դեր կատարելն իմ բանը չէ և որ ես շատ-շատ կարող եմ կատարել սուբրէտի թեթև դերեր։ Դո՞ւք ինչ էք կարծում, պարոն Շահեան, իմ ընդունակութիւնների մասին։

—Ես կարծում եմ, որ դուք... հիանալի կըլինիք Ռուզանի դերում։

Եւան հանգստութեամբ վերկացաւ տեղից և մի քանի քայլ հեռացաւ։

—Շահեանը սարսափեց։ «Չլինի՞ թէ յիմար բան ասացի», մտածեց նա։

—Փորձենք,—ասաց Եւան։—Ես այս բոպէիս կը-

ներկայացնեմ այն տեսարանը, ուր Ռուզանը, հօր երկիրը փրկելու համար, փախչում է ծնողական տնից և դնում է թշնամու բանակը։ Այդ տեսարանումն է, կարծեմ, արտասանում նա այն մենախօսութիւնը, որի մէջ ասում է...

—Նա լռեց և մատը դրեց ճակատին։

Շահեանն ազատ շունչ քաշեց. նա տեսաւ, որ ոչ մի յիմարութիւն դուրս չի տուել։

—... որի մէջ ասում է. «...և այս սահմանի վրայ սուր իմ հոգին»։—Աստծուն է դիմում։—«Թող այս սահմանը լինի իմ գերեզմանը...» և այլն։ Ես, ի հարկէ, չեմ կարող այդ մենախօսութիւնն արտասանել այնպէս, ինչպէս որ բնագրի մէջ է գրուած, որովհետև միայն ներկայացումն եմ տեսել։ Մենախօսութիւնը կարտասանեմ և շատ բան էլ ինձնից կըսարքեմ. բաւական է, որ ես հասկանում եմ Ռուզանի դրութեան հոգեբանութիւնը և գիտեմ, թէ անձնական ինչպիսի ծանր զոհաբերութիւն է անում նա իր հայրենիքը փրկելու համար։ Մայրիկ Ջան, թոյլ կըտաս, որ գոնէ մեր տանը բեմ դուրս գամ։

Մայրն, առանց կատակի ընդդիմացաւ, Աստուած գիտէ, թէ ինչու, այդ բանը նրա հասակին անվայել երեխայութիւն համարելով։ Աշխէնն սկսեց թախանձել թեկլէին, որ թոյլ տայ։ Շահեանն էլ իր կողմից մի քանի անգամ «ինդրում եմ, տիկին, խնդրում եմ» ասաց։ Մարութեանը դիտմամբ լռում էր։

—Այստեղ տարաձայնութիւններ կան,—ասաց Եւան։—Ա։ կլի լաւ է, ձայն հաւաքենք։ Խնդրում եմ, մի՛ նեղանար, մայրիկ Ջան. տարաձայնութիւնները միշտ տարաձայնութիւններով են վճռում։ Պարոններ, ով ուզում է, որ ես արտասանեմ Ռուզանի մենախօսութիւնը, թող մատ բարձրացնի։

Մատ բարձրացրին միայն Աշխէնն ու Շահեանը։

—Մէկ, երկու,—համարեց Եւան։—Երկու հոգի ցանկանում են, չի ցանկանում միայն մի հոգի—մայրիկս։

—Հապա ես,—բացականչեց Մարութեանը։—Ես էլ, ախր, մատ չբարձրացրի։

—Դու ձայն չունիս, հայրիկ. ասացիր, որ լուռ ես։

—Դա՞ ինչ է նշանակում, դա ինչ բռնութիւն է։ Ես բողոքում եմ։ Դու իրաւունք չունիս ինձ զրկելու ձայնի իրաւունքից։

—Լաւ. ես քեզ ձայնի իրաւունք եմ տալիս, հայրիկ, և իմ ձայնը միացնում եմ պարոն Շահեանի և Աշխէնի ձայնի հետ։ Ուրեմն, պարոն Շահեանը, Աշխէնը և ես,—երեք հոգի,—ցանկանում ենք, որ ես արտասանեմ Ռուզանի մենախօսութիւնը, իսկ դու և մայրիկը,—երկու հոգի,—չէք ցանկանում։ Եւ որովհետև երեքը շատ է երկուսից, հետևաբար ես կարտասանեմ Ռուզանի մենախօսութիւնը։

—Երբոր այդպէս է, ես ձայն չեմ ուզում։

—Իսկ երբոր այդպէս է, հայրիկ, ձայնս միացնում եմ մայրիկի ձայնի հետ, այսինքն ուզում եմ պահպանել status quo-ն, ինչպէս որ գրում են լրագրների քաղաքական բաժնում, և զրկում եմ քեզ ինձ Ռուզանի դերում տեսնելու հաճոյքից։

Եւ Եւան կոմիքական հանգստութեամբ նստեց մօր կողքին։

Սենեակում ընդհանուր քրքիջ բարձրացաւ։

VIII

Առաջին այցելութիւնից յետոյ Շահեանն այլևս չէր ուզում Մարութեանների տուն գնալ։ Նա շատ լաւ

ճանաչում էր իրեն. գիտէր, որ Մարութեանների պէս մի ընտանիքի յաճախ այցելելու համար հարկաւոր էր քիչ թէ շատ հետաքրքրելու կամ գոնէ լոկ խօսելու շնորհք ունենալ։ Ոչ այս ունէր, ոչ այն։ Իսկ Նորահարսի պէս լուռ նստելը թէ ձանձրալի էր, թէ անհամ։ Թէպէտ նա տարակոյս չունէր, որ Մարութեանները միշտ սիրով պիտի ընդունէին իրեն, հէնց թէկուզ իրենց շատախօսութեանը յաղուրդ տալու համար միայն, բայց ինքը—Շահեանը խօ նոյնը պիտի մնար, ինչ որ կար—վարուելու ընդունակութիւնից զուրկ, խօսելու պաշար չունեցող, անդադար երկմտող, կասկածոտ ու վախկոտ անձնասէր։ Ոչ, աւելի լաւ էր հեռու մնալ. այդ ամենալաւ միջոցն էր հոգու անդորրութեան համար։

Բայց Եւայի պատկերը խորապէս տպաւորուել էր նրա հոգու մէջ։ Թէև այդ աղջկայ ազատ վարուեցողութիւնը, սեղհական խելքով դատելու ընդունակութիւնը մի կողմից մտավախութիւն էր պատճառում նրան, բայց միւս կողմից Եւայի մէջ տեսնում էր մի բան, որը միանգամայն գրաւել էր նրան։ Այդ մի բանը երևխայական այն պարզամտութիւնն էր, որ արտայայտում էր Եւան ամենքի հետ խօսելիս, նոյն իսկ լուրջ բաների մասին դատելիս։ Բացի դրանից, Շահեանը Եւայի մէջ ամենևին չէր տեսնում դիմացինի անձնաւորութեանը քննական աչքով նայելու սովորութիւն,—մի բան, որից նա խոյս էր տալիս միշտ սարսափով։ Եւան շարունակ զբաղուած էր իրենով, իր զգացումներն ու մտքերն արտայայտելով և ժամանակ չունէր Աշխէնի պէս լռելով դիտելու, որպէս զի յետոյ հարցնի դիմացինին՝ «ինչո՞ւ էք դուք այդպէս կարծում».

Այժմ աւելի, քան առաջ, ինքնավստահութիւն չունենալով այլևս այցելելու Մարութեաններին, Շահեանն

օրը երկու-երեք անգամ անցնում էր նրանց տան մօտակայ փողոցներով այն բաղձանքով, որ գէթ դուրսը տեսնէ Եւային, կամ նրա մօրն ու հօրը (Աշխէնին տեսնելու միտքը նրան վախեցնում էր)։ Այդպիսի դէպքերում նա անցնում էր գործի գնացող մարդու շտապ քայլերով, որպէս զի եթէ հանդիպելու լինէր Մարութեաններին և նրանք հարցնէին (նրան այնպէս էր թըւում, թէ անպատճառ պիտի հարցնէին), թէ ինչ է շինում այդ կողմերը, կարողանար ասել, թէ գործի է գընում կամ գործից է գալիս։

Յիրաւի, մի անգամ պատահեց Եւային ու նրա մօրը, բայց ոչ այն փողոցներում, ուր թափառում էր նրանց տեսնելու յուսով, այլ բոլորովին ուրիշ փողոցում և հէնց այն ժամանակ, երբ նրանց տեսնելու յուսով չէր դուրս եկել տնից։ Հանդիպումն անակնկալ էր։ Բայց զարմանալի է. նրա ամենօրեայ տենչն այն էր, որ հանդիպէր նրանց, այժմ կատարուած էր նրա տենչը, և մի տաս-քսան քայլ էր մնում, որ մօտենային, բարև տային իրար, խօսէին իրար հետ. բայց նա Եւային ու նրա մօրը տեսնելուն պէս ծռեց ճանապարհը և անցաւ հեռացաւ, իբր թէ չտեսաւ նրանց։ Մինչդեռ նրա սիրտը սկսել էր թրթռալ։ Բաւական հեռանալուց յետոյ ծածուկ յետ նայեց, բայց այլ ևս չտեսաւ Եւային ու նրա մօրը։ Նա կանգ առաւ ակամայ և ինքն իրեն հարցրեց, թէ ինչո՞ւ այդպէս արեց. ինչո՞ւ ցոյց տուեց, թէ չտեսաւ նրանց, քանի որ տեսաւ և ուզում էր տեսնել... Բան չհասկանալով իր այդ անմիտ վարմունքից, նա միայն ուսերը վեր քաշեց տարակուսանքով։

Բայց աւելի զարմանալին այն էր, որ այդ փորձն ամենևին խրատ չեղաւ Շահեանի համար։ Գրեթէ նոյնպիսի պայմաններում նա մի անգամ ևս հանդիպեց Ե-

ւային ու նրա մօրը և էլի ցոյց տուեց, թէ չտեսաւ նը-
բանց։ «Վերջապէս, բաւական է, այ ջրի տարած, մի
քիչ մարդ եղիր», կատաղեց նա իր դէմ և մի անգամ
էլ, երբ արդէն պատրաստւում էր «մարդ» լինել, էլի
փորձանքի հանդիպեց։ Բայց այս անգամ փորձանքն
այնպիսի փորձանք էր, որից, հաղար էլ ուզենար, չէր
կարող խոյս տալ։

Կիրակի երեկոյ էր։ Շահեանը դարձեալ դուրս էր
եկել այն մտադրութեամբ (ասենք, նա ուրիշ մտադրու-
թիւններ չունէր), որ հանդիպէ Մարութեաններին, և
շտապ քայլերով անցնում էր նրանց տան յարակից փո-
ղոցներից մէկով։ Մարութեաններից ոչ-ոքի չհանդի-
պելով, արդէն ապարդիւն էր համարել այդ երեկոյի
աշխատանքը և պիտի ծռուէր միւս փողոցը, ուղղակի
տուն վերադառնալու համար, երբ երկու փողոցների
հէնց անկեանը յանկարծ երես առ երես հանդիպեց Ե-
ւային։

Շահեանը դողաց և կանգ առաւ. կարծես գող լի-
նէր և յանկարծ բռնեցին նրան գողութեան տեղում։

—Ուհ, պարոն Շահեան,—բացականչեց Եւան։
—Ով գիտէ, մեր տուն էիք գնացել։ Հմ։

—Ոչ, օրիորդ,—պատասխանեց Շահեանը, յան-
կարծակիի եկած։—Ես այստեղ... մէկի մօտ գործ ու-
նէի...

—Կիրակի օր ինչ գործ։ Եկէք գնանք մեր տուն։
Զարմանալի է. դուք կարծես թէ խուսափում էք մեզ-
նից։ Քանի անգամ մենք տեսել ենք ձեզ փողոցում, և
դուք չէք կամեցել մեզ բարև տալ։

—Ո՞րտեղ... ե՞րբ... ինչ էք ասում,—կմկմաց Շա-
հեանը շփոթուած։—Ներողութիւն, երևի չեմ տեսել.
չէ՞ որ ես կարճատես եմ։

—Ուհ, ճիշտ որ,—ծիծաղեց Եւան։—Ես մոռա-

ցայ, որ դուք ակնոց էք կրում։ Դէ գնանք. մենք այս-
տեղ խանգարում ենք մարդկանց անցուդարձը։ Տանը
ոչոք չկայ. Աշխէնն է միայն։ Կըգնանք, մի քիչ զրոյց
կանենք։ Գնանք։

—Դժբաղդաբար...

—Կարծեմ, մեծ դժբաղդութիւն չէ։ Ի՞նչ կայ որ։
Կիրակի օր է. չեմ կարծում թէ ձեր գործը մի առան-
ձին կարևորութիւն ունենայ։ Մենակ մնալն ինձ հա-
մար ուղղակի սպանիչ բան է։ Իսկ Աշխէնը շարունակ
պարապում է։ Բայց այս երեկոյ ես կըստիպեմ նրան,
որ մեզ ընկերանայ։ Գնանք։

Շահեանը քիչ չվախեցաւ, երբ իմացաւ, որ ոչ
Մարութեանն էր տանը, ոչ նրա կինը. վախեցաւ ա-
ռաւելապէս, երբ լսեց Աշխէնի անունը։ Մի բոպէում
պատկերացրեց իր առաջ երկու օրիորդների մէջ մենակ
մնալու տխուր հեռանկարը և վճռեց միանգամայն խոյս
տալ։

—Ոչ, օրիորդ... ես ամենայն ուրախութեամբ...
բայց... տանը կանհանգստանան,—կմկմաց նա նորից։

Եւան քրքջաց իր բարձրահնչիւն ծիծաղով։

—Ի՞նչ էք ասում, պարոն Շահեան,—բացական-
չեց նա։—Աղջիկ խօ չէ՞ք... Սակայն, ես ձեզ չեմ ստի-
պում,—աւելացրեց նա լրջութեամբ։—Տեսնում եմ, որ
դուք չէք ուզում գալ մեր տուն։

—Ընդհակառակը...

—Ուրեմն գնանք։

Շահեանը հետևեց Եւային չափազանց նուաստա-
ցած և ամօթահար։ «Աղջիկ խօ չէ՞ք». Եւայի այդ
խօսքերը և դրա հետ միասին նրա բարձրահնչիւն ծի-
ծաղը մեխի պէս ցցուեցին Շահեանի ուղեղի մէջ, և
նա զգաց, որ այդ սպանիչ խօսքերն ու ծիծաղը եր-
բէք չպիտի կարողանայ մոռանալ։ Բայց այժմ այդ

մասին նա շատ քիչ էր մտածում. նրան մտահոգութիւն էր պատճառում այն հանգամանքը, թէ ինչպէս պիտի անցկացնէր մի քանի ժամ Եւայի և Աշխէնի մօտ, առանց Մարութեանի և նրա կնոջ։

—Գիտէ՞ք ինչ, պարոն Շահեան,—ասաց Եւան կամաց, երբ տուն հասան, և Շահեանը նախասենեակում հանում էր վերարկուն։—Մենք ուղղակի կըմտնենք Աշխէնի մօտ։

—Ասում էք պարապում է. չենք խանգարիլ։

—Այդ քաջութիւնը ես եմ յանձն առնում։

Եւան մօտեցաւ Աշխէնի սենեակի դռան, նախ միջամտով թրխկթրխկացրեց, յետոյ կամաց բաց արեց և գլուխը ներս կոխեց։ Շահեանը նրա ուսի վրայից տեսաւ Աշխէնին գրասեղանի մօտ նստած, լամպի լուսով գիրք կարդալիս։

—Կարելի՞ է,—հարցրեց Եւան։

Աշխէնը գլուխը բարձրացրեց գրքի վրայից և նայեց նրան։

—Դու ե՞ս, Եւա։

—Ես չեմ, հիւր է։

—Ո՞վ է։

—Պարոն Շահեանը։ Կարելի՞ է։

—Եկէք, ինչու՞ չէք գալիս։

—Պարոն Շահեան, խնդրեմ։

Եւ Եւան ճանապարհ տուեց։

Շահեանը շշափեց սիւրտուկի կոճակները և ներս մտաւ։

—Իսկ ես՝ խկոյն,—ասաց Եւան և անյայտացաւ։

Հիւանդոտ ժպիտը դէմքին, Աշխէնը բարևեց Շահեանին և աթոռ առաջարկեց, որ նստի։

Շահեանը յետ քաշեց աթոռը և նստեց։

—Կարծեմ, մենք խանգարեցինք ձեզ,—ասաց նա

և խկոյն մտածեց, թէ ինչու՞ արտասանեց «մենք» բառը։

—Ոչ, ես արդէն յոգնել էի,—պատասխանեց Աշխէնը, լամպի պատրոյգը մի քիչ ցածրացրեց և նստեց իր առաջուայ տեղը։

Շահեանը լռեց։ Նա մտածում էր, թէ այժմ ինչ ասի։

—Գիտէ՞ք, օրիորդն ինձ զօրով քարշ տուեց այստեղ,—ասա՞ց նա և ծիծաղեց։

—Ինչու՞ զօրով։ Չէի՞ք ուզում գալ։

—Ոչ... Ընդհակառակը... Ուզում եմ ասել, որ փոքր ինչ գործ ունէի... Ասենք, այնքան էլ կարևոր չէր։

Եւ Շահեանը նորից լռեց։

Աշխէնը նոյնպէս չէր խօսում։ Նա, կարծես սաստիկ յոգնած, հանգստանում էր։ Սակայն, դժուար էր որոշել՝ Աշխէնը յոգնած էր, թէ տխուր։ Նրա երկայն դէմքն, ըստ սովորականին, խաղաղ էր վերին աստիճանի. կարծես մի ծանր վիշտ ունէր, որի հետ վաղուց հաշտուել էր, բայց որը խլել էր նրանից կեանքով և իր շրջապատով հետաքրքրուելու ընդունակութիւնը։ Նա նստած էր անբռնազբօսիկ կերպով, լուռ ու անտարբեր և, ըստ երևոյթին, ամենևին ուշադրութիւն չէր դարձնում Շահեանի վրայ։

—Իսկ Շահեանը, սաստիկ նեղուելով իր դրութիւնից, շուտ-շուտ նայում էր դռան կողմը, սպասելով Եւայի վերադարձին, և դիտում էր սենեակը։

Սենեակը փոքր էր, համեստ, գրեթէ աղքատ կահաւորանքով, բայց լաւ տպաւորութիւն էր գործում։ Աչքի էր ընկնում կարգ ու կանոն և վերին աստիճանի մաքրութիւն։ Փղոցի կողմը նայող երկու լուսամուտի տախտակէ փեղկերը փակ էին։ Գրասեղանի

վրայ վառուող լամպի կապոյտ լուսամփոփին առաստաղն ու պատերը կիսից բարձր ներկել էր կապտաւուն գոյնով, որից սենեակի մէջ հանգուցիչ կիսախաւար էր տիրում։ Պատերից մէկի մօտ դրուած էր դրքերի մի մեծ պահարան ապակեայ դռներով, բոլոր դարակները դրքերով լի։ Գրասեղանի վրայ ճկճկում էր նիկէլի մի փոքրիկ, կանացի ժամացոյց ղայթանի շղթայով։ Շահեանի աչքովը ընկաւ լամպի տակ դրուած մի երիտասարդի լուսանկար գեղեցիկ կանգուն շրջանակի մէջ։ Դարձեալ մի բան ասած լինելու համար, ուզեց հարցնել, թէ ով է այդ երիտասարդը, բայց վախեցաւ, որ դարձեալ չոր ու ցամաք պատասխան ստանայ և նորից նայեց դռան կողմը։

IX

Լռութեան ճնշումն արդէն անտանելի էր դառնում մինչև անգամ Աշխէնի համար, որը, ըստ երևոյթին, ամենևին ընդունակութիւն չունէր հիւր զբաղեցնելու, երբ իրեն յատուկ աշխոյժ քայլերով ներս մտաւ Եւան հագուստը փոխած։ Նրա ներս բերած շարժումն այնքան կենդանարար էր, որ սենեակում տիրող կիսախաւարն անգամ, կարծես, պայծառացաւ։

—Ձէս զարմանում, Աշխէն, որ ես հայրիկին ու մայրիկին թողի այնտեղ և տուն եկայ,—մտնելուն պէս ասաց նա և, մի աթոռ առնելով, նստեց հօրեղբօր աղջկայ մօտ։—Նրանք ուզում էին ինձ պահել այնտեղ, որ յետոյ կլուր տանեն, բայց ես չուզեցի։ Գալիս էի, որ նամակ գրեմ Արմենակին,—դիտես, այս շաբաթ ոչ մի նամակ չեմ գրել,—բայց ճանապարհին հանդիպեց պարոն Շահեանը, և մենք եկանք մի քիչ ժամանակ անցկացնելու քեզ հետ։ Ի՞նչ ես կարդում։—Եւան մի ձեռքով գրկեց Աշխէնի ուսը, գլուխն առաջ տարաւ և միւս ձեռքով բաց արեց գրքի երեսը։—Ընդհանուր պատմութիւն։ Պարոն Շահեան, դուք չէ՞ք ձանձրանում։ Գիտէ՞ք ինչու եմ հարցնում.—որովհետև ես չափից դուրս շատ եմ խօսում,—ինչպէս մեր տանն ամենքը, բացի Աշխէնից,— և վախենում եմ, որ այս անգամ էլ շատ խօսեմ, թէև արդէն, կարծեմ, շատ եմ խօսում։ Գիտէ՞ք, ես ամեն բանից կարող եմ խօսել, թէ ինչպէս —այդ ուրիշ հարց է։ Օրինակ, հէնց ընդհանուր պատմութիւնից, որից, այս էլ ասեմ, շատ բան մոռացել եմ։ Կամ թէ—ձանձրանալու մասին։ Պէտք է խոստովանուեմ, որ ես առհասարակ շատ խօսել սիրում եմ առաւելապէս այնպիսի բաների մասին, որոնց համար հարկաւոր է խելքին զօր տալ։ Ի դէպ. խօսենք ձանձրանալու մասին։ Այստեղ երեք հոգի ենք. տեսնենք ով ինչից է ձանձրանում։ Գիտէ՞ք, այսպիսի դատարկ բաների մասին խօսելիս մարդու ուղեղի մէջ երբեմն խելացի մտքեր են յղանում։ Ես, օրինակ, ձանձրանում եմ, երբ մարդ չկայ մօտս, որ խօսեմ. Աշխէնը ձանձրանում է պարապ մնալուց,—այդպէս չէ՞, Աշխէն.—իսկ դո՞ւք ինչից էք ձանձրանում, պարոն Շահեան։ Շատախօսներից։

Շահեանը ծիծաղեց։

—Չէ, հաւատացէք, պարոն Շահեան, խօսենք լըրջօրէն։ Զարմանալի է, Աշխէն. ինչո՞ւ, որ ես խօսում եմ, ամենքը կարծում են, թէ կատակ եմ անում։ Հայրիկը խօ բոլորովին կատաղեցնում է ինձ։ Դու էլ, ասենք, քիչ ու միչ... այնպէս, էլի... Տեսնո՞ւմ ես, ծիծաղեցիր։ Պարոն Շահեանն էլ է ծիծաղում, տես։ Հաւատացէք, պարոն Շահեան. եթէ իմ շատախօսութիւնը ձանձրացնում է ձեզ, քիչ կը խօսեմ, կաշխատեմ քիչ խօսել։

—Ընդհակառակը, օրիորդ։

—Ի՞նչ ընդհակառակը. որ իմ շատախոսութիւնը զբաղեցնում է ձեզ։

—Այո։

Եւան ուսերը վեր քաշեց։

—Այդ աւելի վատ։ Ուրեմն դուք միայն զուարճանում էք ինձ վրայ և, դուցէ, թեթևսոլիկներից մէկն էք համարում ինձ։

—Ի՞նչ էք ասում, օրիորդ,—անկեղծ յանդիմանութեամբ նկատեց Շահեանը։

Եւան այս անգամ նայեց նրան շատ լուրջ կերպով։

—Նկատեցէք, պարոն Շահեան, ես շատ նեղանում եմ, երբ մարդիկ ճիշտ չեն ասում այն, ինչ որ մտածում և զգում են։

—Հաւատացնում եմ ձեզ, օրիորդ, ես ճիշտ եմ ասում։

—Ի՞նչն էք ճիշտ ասում. որ դուք զուարճանում էք իմ շատախօսութեան վրայ։

—Ո՛չ... Այսինքն... որ... ձեր շատախօսութիւնը ձանձրալի չէ ինձ համար։

Եւան յօնքերը սաստիկ բարձրացրեց։

—Ա՜, ուրեմն դուք ինձ իսկապէ՞ս շատախօս էք համարում։ Շատ շնորհակալ եմ ձեր այդ կոմպլիմենտի համար։

Եւան այդ բառերն արտասանեց այնպիսի կոմիքական հանդիսատ զարմանքով, որ Աշխէնը չկարողացաւ զսպել իր ծիծաղը։

Շահեանի դէմքը ճակնդեղի պէս կարմրեց, բայց նա էլ ժպտաց, զգալով հանդերձ, որ այդ չարաճճի աղջիկը, թերևս ակամայ, յիմարացնում է իրեն։

—Շատ բարի,—ասաց Եւան։—Երբ որ ես շատախօս եմ, և իմ շատախօսութիւնը ձանձրալի չէ ձեզ համար, ես շատ կը խօսեմ, այնքան կը խօսեմ, մինչև որ ձանձրանաք։ Դուք հեռու էք նստած, խնդրում եմ մօտիկ նստեցէք։

Շահեանը փոքր ինչ առաջ քաշեց աթոռը։ Նա շարունակ ժպտում էր ինչ-որ բութ ժպիտով։

—Այժմ սկսենք։ Մենք պէտք է խօսենք ձանձրանալու մասին, այսինքն այն մասին, թէ մեզնից ով ինչից է ձանձրանում։ Ասացի, որ ես ձանձրանում եմ, երբ մօտս մարդ չի լինում, որ խօսեմ. Աշխէնը ձանձրանում է պարապ մնալուց. իսկ դո՞ւք ինչից էք ձանձրանում, պարոն Շահեան։

—Ե՞ս... կեանքից,—դուրս թռաւ Շահեանի բերանից։

—Ինչ ասացի՞ք... կեանքի՞ց,—բացականչեց Եւան խիստ զարմացած։ Նրա դէմքի վայրկենական փոփոխութիւնը պարզ ցոյց տուեց, որ նա ամենևին չէր սպասում, թէ կատակով արած իր այդ հարցմունքին այդպիսի պատասխան կը ստանայ։

Աշխէնը հետաքրքրութեամբ նայեց Շահեանի ակնոցին։

Իսկ Շահեանը թէ վախեցաւ և թէ շփոթուեց։

—Նկատեցէք, պարոն Շահեան, մենք այժմ արդէն կատակով չպէտք է խօսենք,—զգուշացրեց Եւան խօսակցութեան թեթև տոնը լրջութեան փոխելով,—որովհետև դուք շատ լուրջ բան ասացիք։

Շահեանի երկիւղն աւելացաւ. նա զգաց, որ թակարդն է ընկնելու և, այդ բանից խոյս տալու համար, ուզեց կատակի ձև տալ իր ասածին։ Բայց Եւան պինդ բռնեց նրան։

—Ես չեմ թոյլ տալ, որ դուք յետ կանգնէք ձեր ասած խօսքից, պարոն Շահեան, որովհետև ես չափից

դուրս սիրում եմ կեանքը, իսկ դուք ասացիք, որ ձանձրանում էք կեանքից և, որքան նկատեցի, կատակով չասացիք այդ։ Ինձ համար շատ հետաքրքրական է իմանալ, թէ ինչպէս կարելի է ձանձրանալ մի բանից, որը միայն մի անգամ է տրւում մարդուս։ Կեանքը... Զէ՞ որ այդ ես եմ, այդ դուք էք, այդ այս գիրքն է, այս թանաքամանը, այս լուսանկարը,—իմ եղբայրը,—ամբողջ տիեզերքը, այն բոլորը, ինչ որ տեսնում, շոշափում և զգում եմ... Ի՞նչպէս կարելի է ձանձրանալ այս բոլորից... Խնդրում եմ բացատրեցէք։

Շահեանը կատարելապէս վախեցաւ։

—Հաւատացնում եմ, օրիորդ, ես իսկապէս կատակ արի,—այս անգամ ուղղակի ուզեց խոյս տալ նա։

—Ո՛չ, ո՛չ։ Խնդրում եմ բացատրեցէք։ Դուք կատակ չարիք, ո՛չ։ Գուցէ ես չեմ ճանաչում կեանքը, գուցէ սխալ է կեանքի մասին իմ ունեցած հասկացողութիւնը։ Դուք չգիտէք, թէ որքան հարցասէր եմ և որքան ուզում եմ միշտ նոր բան իմանալ, նոր բան սովորել։ Դուք տղամարդ էք և անշուշտ անհամեմատ աւելի փորձուած էք, աւելի լաւ էք ճանաչում կեանքը, քան թէ ես։ Խնդրում եմ։ Ինչո՞ւ է կեանքը ձեզ ձանձրալի թւում։

Ճար չկար։ Շահեանը սիրտ տուեց իրեն և վճռեց ասել այն բոլորը, ինչ որ իր տաղտկալի կեանքի մէջ, իր սիրած յոռետես փիլիսոփաների գրուածքների ընթերցման ազդեցութեան տակ, մշտական խորհրդածութեան նիւթ էր դարձել իր պարապ ուղեղի համար։ Մտքերն արդէն պատրաստ էին, թէև խառնիշփոթ, և այդ մտքերն այժմ աւելի խառնւում ու շփոթւում էին Եւայի յամառ հարցասնդումների առաջ։

—Ես նոր բան չպիտի ասեմ, օրիորդ,—սկսեց նա ակնոցն ուղղելով։ Ժպիտն արդէն չքացել էր նրա դէմքից, և այդ դէմքը մտքի բռնի լարուած դրութիւն էր արտայայտում։—Կեանքն առհասարակ ձանձրալի է... Ամեն մարդ ձեզ նոյնը կասի։

—Ես, օրինակ, տեսնում էք, նոյնը չեմ ասում։

—Դուք... այո... բայց... Մինչև անգամ ամենալաւատես մարդը չեմ կարծում, թէ գոհ լինի կեանքից... եթէ միայն, ի հարկէ, նա չի կեղծում։

—Հաւատացնում եմ ձեզ, ես չեմ կեղծում, իսկ ես այնքա՛ն լաւատես եմ, այնքա՛ն լաւատես...

—Ես ձեզ համար չեմ ասում, օրիորդ։ Ես կատարելապէս հաւատացած եմ, որ դուք երբէք չէք կեղծում։ Ես խօսում եմ գլխաւորապէս իմ մասին։ Ասացի, որ ձանձրանում եմ կեանքից։ Ձանձրանում եմ ինչո՞ւ։ Որովհետև... նրա համար, որ... տեսնում եմ, որ... ամեն բան ունայն է... բացարձակ ունայնութիւն է տիրում աշխարհիս երեսին... սկսած թագաւորի պալատից մինչև ամենավերջին մուրացկանի խրճիթը... բացարձակ ունայնութիւն... մնայուն ոչինչ չկայ։

Զարմացած, մեծ աչքերով Եւան անթարթ նայում էր Շահեանի ակնոցին և ահագին հետաքրքրութեամբ սպասում էր, թէ նա կըշարունակի. բայց Շահեանը նրա հայեացքի ազդեցութեան տակ կորցրեց իր մտքերի պաշարը և լռեց։

—Յետո՞յ, յետո՞յ։ Շարունակեցէք խնդրեմ,—բացականչեց Եւան։

—Էլ ի՞նչ շարունակեմ։ Ասացի, էլի...

—Զէ, սպասեցէք։ Այդ այնքան հետաքրքրական նիւթ է, որ ես կուզէի աւելի շատ բան իմանալ ձեզնից։ Սպասեցէք։ Ուրեմն կեանքը ձեզ ձանձրալի է թւում նրա համար, որ ամեն ինչ ունա՞ն է աշխարհիս երեսին, որ մնայուն ոչի՞նչ չկայ։

—Այո։

—Զարմանալի է... Շատ լաւ։ Բայց մի՞թէ իսկապէս մնայուն ոչինչ չկայ։

—Ի՞նչ կայ։

—Ի՞նչպէս թէ ինչ կայ։ Նախ ասացէք, խնդրեմ, մնայուն ասելով ի՞նչ էք հասկանում։

—Մնայո՞ւն... Ա՛յն, որ... մնում է, չի մեռնում։

—Շատ լաւ։ Եւ դուք մնացող, չմեռնող ոչի՞նչ չէք գտնում աշխարհիս երեսին։

—Ոչինչ։

—Ի՞նչ էք ասում, պարոն Շահեան։ Հապա լաւ գործը, լաւ անունը, լաւ յիշատակը—մի՞թէ դրանք չեն մնում, մի՞թէ դրանք մեռնում են։ Մի՞թէ մեռած են, օրինակ, այս թանաքի, այս գրչի, այս գրերի հնարողները, որոնց շնորհիւ ես կարողանում եմ իմանալ ոչ թէ միայն այն, թէ ինչ է կատարուել ինձնից դարեր առաջ, այլ և կարող եմ հաղորդել ինձնից դարեր յետոյ գալիք սերնդին, թէ ինչ է կատարուում այժմ։ Մի՞թէ մեռած է այս լուսանկարչութեան հնարողը, որի շնորհիւ ես ամեն րոպէ, ամեն վայրկեան, երբ կամենամ, կարող եմ տեսնել իմ սիրասուն եղբօր պատկերը այնպէս, որ կարծես թէ նա կանգնած լինի առաջս։ Ո՞ւր մէկն ասեմ, կարելի՞ է միթէ միառմի թուել։ Եթէ մենք լաւ նայենք մեր շուրջը, լաւ քննենք մեզ շրջապատող առարկաները, հէնց թէկուզ այս չնչին լուցկին, որի շնորհիւ մենք միշտ կարող ենք կրակ ու լոյս ունենալ,—մենք կըտեսնենք, որ այս բոլոր առարկաներից ամեն մէկը կապուած է մի լաւ գործի, մի լաւ անուան, մի լաւ յիշատակի հետ, որը մեռած չէ և երբէք էլ չի մեռնիլ, քանի մարդկութիւնը գոյութիւն կունենայ։ Ես այսպէս եմ կարծում։ Իսկ դուք, պարոն Շահեան, խնդրում եմ, դո՞ւք ինչ էք կարծում։ Մի՞թէ

լաւ գործը, լաւ անունը, լաւ յիշատակը, յիրաւի, չեն մնում, մեռնում են։

Շահեանը դարձեալ ուղղեց իր ակնոցը։

—Լաւ գործը, լաւ անունը, լաւ յիշատակը... իհարկէ, դրանք, կարելի է ասել... մնում են, չեն մեռնում. բայց... միշտ չէ... մի որոշ ժամանակ... բայց... պէտք է ասել, որ... էլի մեռնում են։

Եւան դարձեալ սպասեց, որ նա կըշարունակի, բայց տեսնելով, որ էլ ոչինչ չի ասում, դարձեալ ինքը խօսեց։

—Շատ լաւ։ Ուրեմն դուք ուզում էք, որ ամեն բան յաւիտեան մնայ, երբէ՞ք չմեռնի։

—Այո։

—Մարդն էլ։

—Մարդն էլ։

—Եւ, ձեր կարծիքով, ամե՞ն, ամե՞ն բան մեռնում է։

—Ամեն բան։

Եւան ծիծաղեց և նայեց Աշխէնին։

Աշխէնը շարունակում էր հետաքրքրութեամբ նայել Շահեանին։ Շահեանը նրա տարօրինակ յամառ հայեացքից և շարունակ լուռ մնալուց աւելի էր շփոթուում, քան թէ Եւայի անհանգիստ, արագ հարցուփորձերից։

—Ներողութիւն, պարոն Շահեան,—ասաց Եւան ժպտալով։—Ինձ թւում է, թէ մենք շեղուեցինք մեր խօսակցութեան նիւթից. մենք սկսեցինք խօսել ձանձրանալու մասին... չէ՛, դուք պէտք է խօսէիք այն մասին, թէ ինչո՞ւ էք ձանձրանում կեանքից, և եկանք հասանք մինչև ամեն բանի մեռնելը... թէ՞ չմեռնելը։ Այդպէս չէ՞։

Շահեանն ակամայ ժպտաց։

—Այդպէս է։

—Բայց ինչպես չունի. դուք աւելի լուրջ բանի մասին սկսեցիք խօսել. այդ աւելի է հետաքրքրում ինձ։ Շարունակենք։ Չէ, սպասեցէք։ Գիտէք ձեր խօսքերն ինչ տպաւորութիւն են գործում ինձ վրայ։ Ինձ թւում է, թէ դուք ինչ-որ սարսափելի բաներ գիտէք, որ չէք ուզում ուղղակի ասել, երևի նրա համար, որ վախենում էք, թէ ես կըհիասթափուեմ։ Հմ։

Շահեանը դարձեալ ակամայ ժպտաց։

—Այո, օրիորդ։

—Իզուր, բոլորովին իզուր։ Դուք ինձ ճշմարտութիւնն ասացէք, և ես չափազանց շնորհակալ կըլինիմ ձեզնից։ Ի՞նչ անենք. թէ հիասթափութիւնը ծանր կըլինի։ Աւելի լաւ չէ՞ ճշմարտութիւնն իմանալ, քան թէ սուտ երազներով ապրել։ Իմ բնաւորութեան՝ չգիտեմ ամենալաւ, թէ ամենավատ կողմն այն է, որ ես հաւատում եմ անպայման, կուրօրէն, եթէ կեղծ ոչինչ չեմ գտնում. իսկ եթէ տեսայ, որ կեղծ է—պլծաւ։ Ուստի խնդրում եմ, ինչ որ ասելու էք, ասացէք պարզ, անկեղծ. ասացէք այնպէս, ինչպէս ձեզ կասէիք։ Խընդրում եմ—ի՞նչ գիտէք։

Շահեանը կատարելապէս կրակն էր ընկել։ Նա տեսնում էր, որ ինքն իսկապէս ոչինչ չգիտէ, ոչինչ չի կարող ասել։ Այդ հարցասէր աղջիկն իր ջերմ հետաքրքրութեամբ բոլորովին խճճում էր նրա դանդաղ միտքը։ Նա լիովին զգում էր իր մտաւոր բոլոր թուլութիւնը Եւայի՝ կայծակի պայծառ ցոլացումների պէս թռչկոտող ճկուն մտքի առաջ, իսկ միւս կողմից տեսնում էր Աշխէնի յամառ, ճնշող հայեացքն իր ակնոցի վրայ քարացած։

—Ոչ, օրիորդ, աւելի լաւ է, ուրիշ բանի մասին

խօսենք,—ասաց նա, վճռելով այս անդամ բոլորովին խոյս տալ։

—Ոչ, ոչ, ոչ։ Աղաչում եմ, պարոն Շահեան։ Համարեցէք, թէ ես ձեր աշակերտուհին եմ և բան եմ ուզում սովորել ձեզնից։ Ինչո՞ւ դուք ուշադրութիւն էք դարձնում այն հանգամանքի վրայ, որ ամեն բան մեռնում է աշխարհիս երեսին, և ինչո՞ւ ուզում էք, որ ոչինչ չմեռնի։

—Մի՞թէ դուք չէք ուզում։

—Ա՜խ, ի՞նչպէս չէ։ Կեանքն այնքա՜ն սիրելի է... Որքան էլ տխրալի բան է մահը, որքան էլ ես վախենում եմ մեռնելուց, այնուամենայնիւ հաշտուում եմ, որովհետև տեսնում եմ, որ ուրիշ կերպ չի լինում, ուրիշ կերպ չի կարող լինել, և այդ պատճառով աւելի ևս սիրում եմ կեանքը։ Բայց դուք այդպէս չէք երևում. դուք յուսահատուում էք, ձանձրանում էք, չէք սիրում կեանքը։ Ինչո՞ւ,—ինչո՞ւ—հարցնում եմ ձեզ։

—Հաւատացնում եմ, օրիորդ, լաւ կըլինի, որ այս մասին չխօսենք,—ասաց Շահեանը, կարծես աղերսելով, որ նա խնայէ իրեն։

Բայց Եւան իր պարզամտութեամբ չհասկացաւ նրա միտքը։

—Է՛հ,—արտասանեց նա, թեթև նեղացած։—Իմ տեղ դուք էք վախենում։

—Ես չեմ վախենում, օրիորդ, այլ ուզում եմ, որ... այսպիսի տխուր բաների մասին չխօսենք... Վերջապէս ես մտադիր չեմ երկար խօսելու... և նոր բան էլ չպէտք է ասեմ։ Ես միայն այս եմ ասում, որ... կեանքն ինքնըստինքեան յուսահատեցուցիչ է (Շահեանն այդ բառն արտասանեց լիզուի ծիծաղելի խըճճումներով, որից նա աւելի շփոթուեց), որովհետև...

ընդհանուր բացարձակ ունայնութեան գիտակցութիւնը չափից դուրս արդէն ճնշում է մարդուս...

—Ընդհանուր բացարձակ գիտակցութիւնը,—մըտառութեամբ կրկնեց Եւան։—Ներողութիւն, ինչպէս ասացիք։

—Ընդհանուր բացարձակ ունայնութեան գիտակցութիւնն, ասացի, չափից դուրս ճնշում է մարդուս։

—Ընդհանուր բացարձակ... ունայնութեան... գիտակցութիւնը... Սպասեցէք մտածեմ։

Եւ Եւան, անթարթ նայելով Շահեանի ակնոցին, դարձեալ նոյն մտառութեամբ կրկնեց հատ-հատ այդ բառերը, որի ժամանակ նա գլուխը յետ ու առաջ էր շարժում։

—Այսինքն դուք ուզում էք ասել, որ մարդ գիտէ, որ ամեն բան ունայն է, և ճնշումն է այդ գիտակցութիւնից։

—Այո։

—Շատ լաւ։ Յետոյ։

—Յետոյ ինչ։

—Ուրիշ ոչինչ։

—Ուրիշ ոչինչ։

Եւան նորից տարակուսանքով վեր քաշեց ուսերը և սառեց։

—Ես ծուծն եմ ուզում, դուք միայն ընդհանուր բառեր էք ասում։ Լաւ, այլևս չխօսենք այս մասին. ես չեմ ուզում ձեզ ստիպել։

Եւ Եւան վերկացաւ, կանչեց աղախնուն և պատուիրեց, որ թէյ բերի։

Նրա այդպէս յանկարծ սառչելը սպանիչ ազդեցութիւն ունեցաւ Շահեանի վրայ։ Երբէք այնպէս ողորմելի, այնպէս մտավախ չէր թուացել ինքն իր աչքում, ինչպէս այդ րոպէին։

Կարճ ժամանակ տիրեց նրա համար վերին աստիճանի ծանր լռութիւն։

—Ներողութիւն, պարոն Շահեան,—լսուեց Աշխէնի սովորական հանգիստ ձայնը.—ուզում եմ ձեզ մի բան հարցնել։

Շահեանն իր պլպլան ակնոցի միջից նայեց նրան և դողաց։

—Հրամայեցէք,—ասաց նա, թուքը ցամաքած։

Աշխէնն խսկոյն չսկսեց իր ասելիքը։ Նա խոնարհուեց գրասեղանի վրայ և մատներով սկսեց խաղալ առջևը դրած գրքի թերթերի հետ։

Շահեանը սպասում էր։ Այդ օտարոտի հանգիստ աղջկայ խօսելու հանդիսաւոր եղանակն ուղղակի սարսափեցնում էր նրա վախկոտ միտքը։

Եւան կանգնել էր հեռու և մեծ հետաքրքրութեամբ սպասում էր նոյնպէս, թէ ինչ է ասելու հօրեղբօր աղջիկը։

—Ասացէք խնդրեմ,—վերջապէս սկսեց Աշխէնը և կանգ առաւ։—Ներողութիւն,—միջանկեալ ասաց նա,—որ ես ուզում եմ դառնալ ձեր շօշափած հարցին, հէնց թէկուզ միայն նրա համար, որ մի որոշ եզրակացութեան բերենք Եւային։—Նա բարձրացրեց գլուխը, նայեց Եւային, ժպտաց և, նորից հանգիստ կերպարանք ընդունելով, շարունակեց խաղալ գրքի թերթերի հետ։—Ասացէք խնդրեմ, պարոն Շահեան. ընդհանուր բացարձակ ունայնութեան գիտակցութեան տակ—ինչպէս դուք ասացիք—չճնշուելու դէմ մի՞թէ դուք միջոց չը-գիտէք։

—Միջոց։

—Այո։

—Ո՞րն է այդ միջոցը։

—Այդ միջոցը։ Ես կարծում եմ այն պիտի լինի, որ կոչւում է ձգտում

—Զգտում։

—Այո—ձգտում։

—Ի՞նչ ձգտում։ Զգտումներ շատ կան։

—Այդ միևնոյն է։ Հէնց թէկուզ, օրինակի համար, այնպիսի մի ձգտում, որի իրագործումը կարող էր երջանկութիւն բերել ոչ թէ լոկ ձեզ, այլ և ուրիշի համար, որքան կարելի է՝ շատերի, օրինակ՝ այն հասարակութեան կամ ազգի համար, որին պատկանում էք դուք... Մի՞թէ դուք այդպիսի ձգտում չունիք։

Շահեանի ձեռքերը դարձեալ բարձրացան դէպի ակնոցը։

—Մի՞թէ այդպիսի ձգտումը կամ առհասարակ որևէ ձգտում կարող է դեղ լինել ունայնութեան դէմ... այսինքն ուզում էի ասել—ունայնութեան գիտակցութեան ճնշման դէմ,—ասաց նա և ինքն էլ չհասկացաւ, թէ ինչու ժպտաց։

Աշխէնը նայեց նրան։

—Ես կարծում եմ, որ կարող է,—պատասխանեց նա և նոյնպէս ժպտաց. բայց նա հասկացաւ, թէ ինչու ժպտաց։

Շահեանն էլ հասկացաւ նրա ժպտի իմաստը և զգաց, որ տաք արիւնը յանկարծ սկսեց այրել իր դէմքը։ Այնուամենայնիւ հարցրեց այս անդամ մեքենայաբար։

—Ի՞նչպէս։

Աշխէնը գիրքը յետ քաշեց առաջից։

—Շատ հասարակ կերպով։ Զգտումներ ունեցող մարդը ժամանակ չի ունենում ունայն բաների մասին մտածելու, հետևաբար նրա մէջ ունայնութեան գիտակցութեան ճնշում էլ չի լինում։ Եթէ չեմ սխալւում, այդպէս է։

Եւ Աշխէնը նորից ժպտաց։ Որքան մեղմ, նուրբ էր նրա ժպիտը, այնքան աւելի սպանիչ էր Շահեանի համար։

Շահեանը, մահուան ցնցումների մէջ եղած մարդու նման, հաւաքեց իրեն և վերջին ճիգը թափեց, որ պահպանի իրեն կատարեալ անկումից։

—Բայց... ունայնութեան մէջ... ինչ ձգտում... և ինչի՞ է պէտք այդ,—թոթովեց նա։

Աշխէնն այլ ևս չէր դադարում ժպտալուց։ Նա կարծես երեխայի հետ էր խօսում։

—Իսկ ես ձեզ կասեմ, պարոն Շահեան, թէ ձգտումների մէջ ինչ ունայնութիւն և ինչի՞ է պէտք այդ մասին մտածելը...

Ամեն ինչ կատարեալ էր։ Վարագոյրի վերջին ծալքն էլ բացուեց, և Շահեանը նուաստացած տեսնում էր, որ ուրիշի աչքերից այնքան խնամքով ծածկած իր նկրքին ոչնչութիւնը դրուած է բեմի վրայ այդ երկու օրիորդների առաջ, որոնցից մէկը նայում է և ժպտում, միւսը նայում և ապշում։

Նա այլ ևս ապարդիւն համարեց այդ նիւթի մասին խօսելը կամ, աւելի ճիշտն ասած, նրան այլ ևս չխօսեցրին այդ մասին։ Զգաց, որ իրեն հասկանում են և խղճում։

Աղախինը ներս բերեց թէյը։ Շահեանը մեքենայաբար վերցրեց իր բաժակը, թէև մի ումպ խմելու էլ ախորժակ չէր զգում։

Աշխէնը վարպետութեամբ փոխեց խօսակցութեան նիւթը և, զարմանալի է, այս անդամ խօսողը գրեթէ նա էր միայն։ Մեղմ ժպիտն ամենևին չէր հեռանում նրա խաղաղ դէմքից. նա կարծես նստած էր երեխաների մէջ և մանկական զուարթ հեքիաթ էր պատմում, նրանց զբաղեցնելու համար։ Բայց այդ հեքիաթի զը-

ւարթութիւնը գուցէ ինքն էր միայն, որ զգում էր։

Եւան նորից նստել էր նրա մօտ և այլ ևս ոչ մի ոշխոյժ չէր ցոյց տալիս։ Նրա այնքան շարժուն դէմքը սառել, բայց աւելի շնորհալի գեղեցկութիւն էր ստացել։ Նա գրեթէ չէր խօսում այլ ևս, այլ միայն խոշոր, լուրջ աչքերով նայում էր Շահեանի ակնոցին յամառօրէն, կարծես մտածում էր զարմանքով, թէ ինչո՞ւ է այդ ակնոցը դրուած նրա աչքերին։

Շահեանն իր ուղտի տաժանելի համբերութեամբ հաշուում էր բոպէները և սպասում էր, թէ ե՞րբ պիտի հասնի այն յարմար բոպէն, երբ ինքը կարող կը լինի վերկենալ և հեռանալ այդ անտանելի պատժարանից։

Եւ հասաւ, վերջապէս, այդ բոպէն, և փախաւ նա։

Դա տղամարդու բարոյական ոչնչութեան մի փախուստ էր կնոջ, հետևաբար աւելի զօրեղ, բարոյական ոյժի հալածանքից։

X

Մի կատարեալ դժոխք էր, որ այդ երեկոյ Շահեանը տարաւ իր մէջ Եւայի և Աշխէնի մօտից։ Այդ չարաբաստիկ երեկոն դրոշմուել էր նրա ուղեղի մէջ իբրև մի անտանելի ծանր յիշատակ, որ շուտ չի մոռացուում։ Նրա ինքնասիրութիւնը չափից դուրս նեղ էր և զգայուն. նա չափից դուրս ներքին, փակ կեանքով էր ապրում, որպէս զի այդ երեկոյի յիշատակն երկար ժամանակ սպանիչ ազդեցութիւն չունենար նրա վրայ։ Ամեն բոպէ, ամեն վայրկեան զգում էր, թէ դեռ ևս նստած է Աշխէնի սենեակում, տեսնում է Աշխէնին ու Եւային այն դրութեամբ, ինչպէս որ դրանք ներկայանում էին նրան այդ երեկոյ—մէկին՝ մեղմ, խորհրդաւոր կերպով ժպտալիս, միւսին՝ հիասթափութեան ապշութեամբ իրեն դիտելիս։ Տեսնում էր և իրեն՝ դասը չիմացող աշակերտի պէս ողորմելի դրութեան մէջ կուչ եկած, լեզուն հաղիւ շարժելիս, անդադար կարմրելիս։ Ի՜նչ խայտառակ դրութիւն...

Դա մահ էր, բարոյական մահ՝ թելադրուած այն գիտակցութիւնից, որ իր հոգեկան ու մտաւոր սնանկութիւնը հրապարակ էր հանուել իբրև ծաղրի, հիասթափութեան ու խղճահարութեան առարկայ։ Եւ հրապարակ հանողներն ովքե՞ր էին.—երկու աղջի՛կ... իսկ իր անունը երիտասարդ էր, տղամա՛րդ... Բարոյական մի թեթև հարուածով այդ երկու աղջիկը տեղից շարժել էին անշարժութեան մէջ փտած երիտասարդին, ցնցել էին նրա թմրած ուղեղը և միմիայն այն պատճառով, որ իրենք կին էին և իրենց կին տեղովը նրան կեանքի նպատակն էին ցոյց տալիս,—տակն ու վրայ էին արել նրա ամբողջ էութիւնը։

Ամօթը սպանում էր Շահեանին։ Սեպհական ապիկարութեան գիտակցութիւնը շիկացած երկաթի պէս շանթում էր նրա ուղեղը։

Թերևս այդ փտած երիտասարդի մէջ ևս խօսում էր տղամարդու անձնապաստանութիւնը,—դարերից ի վեր որոշ հանգամանքների շնորհիւ տղամարդու մէջ զարգացած այն մեծամտութիւնը, թէ կինը կարող չէ իր հասկացողութեամբ, ոգով ու գաղափարներով բարձրը լինել տղամարդուց...

Իր հոգու ամբողջ կարողութեամբ Շահեանն սկսեց ատել իրեն։ Նրա նեղ ինքնասիրութիւնն իր ողորմելի անզօրութեան մէջ դարձաւ իր հակառակ ծայրին—փոխուեց ինքնատեսութեան։

Սակայն նրա ատելութիւնն իրենով միայն չսահմանափակուեց. նա սկսեց միաժամանակ ատել ամենքին

և ամեն ինչ, և ամենից աւելի նրանց, որոնք իր պէս մի անհիւթ ու անալի արարած էին լոյս աշխարհ բերել, կարծես, նրա համար միայն, որ մարդիկ խղճահարութեան մի առարկայ ունենային։

Այժմ նա արդէն կատարեալ պատիժ դարձաւ իր ծնողների գլխին. բառիս բուն նշանակութեամբ նա լացացնում էր հօրն ու մօրը և, կարծես, մխիթարւում էր նրանց արտասուքով։ Շատ անգամ չէր ուզում տեսնել նրանց երեսը և սպառնում էր կատաղած, որ, եթէ նրանք այս կամ այն կերպ կանհանգստացնեն իրեն, կըգնայ ջուրը կընկնի կըխեղդուի, ատրճանակ կըպարպի իր ճակատին, թոյն կըխմի, մի խօսքով—վերջ կըտայ իր ատելի և անտանելի կեանքին, որպէսզի, վերջապէս, ազատուի նրանց և աշխարհի ձեռքից։

Շահեանը գլխից խսպառ հանեց Մարութեանների հետ իր բարեկամութիւնը շարունակելու միտքը։ Այդ ընտանիքը, որի մասին հրճուանքով էր մտածում իր նոր ծանօթացած ժամանակ, այժմ միանգամից կորցրեց նրա աչքում իր բոլոր գրաւչութիւնը։ Այժմ ոչ միայն չէր ցանկանում Մարութեաններին այցելել, ոչ միայն չէր ձգտում թափառել նրանց տան մօտակայ փողոցներում՝ նրանց դէթ հեռուից տեսնելու տենչով լցուած, այլև, եթէ հնար լինէր, խսպառ կըջնջէր այդ ընտանիքն իր յիշողութիւնից և նորից կըդառնար իր նախկին կեանքին, ուր թէև մխիթարական և ցանկալի ոչինչ չկար, բայց և չկար գոնէ սեպհական ոչնչութեան գիտակցութեան և անձնաքննութեան ծանր ճնշում։

Շահեանի մէջ վառուող ինքնատեսցութեան զգացումը, կամաց-կամաց բթանալով, փոխուեց խոր մելամաղձութեան։ Այդ այն զարհուրելի մելամաղձութիւնն էր, որի ժամանակ մարդու հոգին կաշկանդւում

է, միտքը թմրում, զգացմունքները բթանում, աշխարհը մութն է թւում, կեանքն—անտանելի, մահը ցանկալի։

Շահեանի համար նոր չէր հոգեկան այդ դրութիւնը. համարեա պատանեկական հասակից նա շատ յաճախ ենթարկւում էր այդ դրութեան, որը մի տեսակ հոգեկան պարբերական հիւանդութիւն էր դարձել նրա համար և միշտ երևան էր գալիս այն ժամանակ, երբ կեանքի միօրեայ նոր երևոյթ, նոր ծանօթութիւն առիթ էր տալիս նրան անձնաքննութեան։ Երբեմն ամբողջ օրեր շարունակ այդ դրութեան մէջ էր լինում, այնպէս որ սարսափում էր, թէ մի գուցէ խելագարուի։ Իսկ նա ոչ մի բանից այնքան չէր սարսափում, որքան խելագարութիւնից։

Աշխարհից հեռացած ճգնաւորի պէս, Շահեանը փակուեց իր սենեակի չորս պատերի մէջ, փակուեց այնպէս, որ, կարծես, մտադիր չէր այլևս դուրս գալ այնտեղից։ Անձնատուր եղած ծանր ու ճնշող մտածմունքների, գրեթէ ամբողջ օրը նստած էր մնում լուսամուտի առաջ և ապակու միջից մռայլ հայեացքով նայում էր դուրս։ Եւ դուրսը ուրախառիթ ոչինչ չէր գտնում։

Դաժան ձմռան գուժաբեր աշունն օր օրի վրայ խստանում էր։ Արևը, զրկուած իր կենարար ջերմութիւնից, չէր համարձակւում դուրս նայել պղտոր ամպերի ետևից, որոնց ցուրտ քամին, պատառ-պատառ անելով, ցան ու ցիր էր անում, սակայն երբէք թոյլ չտալով, որ նրանք բաց անեն երկնքի կապուտակը։ Երբեմն քամին տեղի էր տալիս հանդարտ եղանակի. բայց այդ հանդարտ եղանակն աւելի ևս մռայլ էր լինում. արճճագոյն մառախուղը թանձր գոլորշու նման վաղ առաւօտից ծանրութեամբ իջնում էր ներքև, ծածկելով միտքը թմրում, զգացմունքները բթանում, աշխարհը մութն է թւում, կեանքն—անտանելի, մահը ցանկալի։

կում էր ամբողջ տարածութիւնն երկնքի և երկրի միջև, շարժւում էր անախորժ սառնութեամբ և իր թանձրը խոնաւութիւնից փոշենման անձրև էր կտրւում տեղն ու տեղը։ Բնութիւնն էլ, կարծես անիծելով իր կեանքը, ողբում էր իր գոյութիւնը, ինչպէս իր անմիտ գոյութիւնը ողբում էր Շահեանը։ Շահեանին թըւում էր, թէ մի չար ձեռքով իր հետ ստեղծուած բընութիւնն էլ տանջւում է իր ոչնչութեան գիտակցութիւնից և երջանիկ կըլինէր, եթէ զրկուէր իր մէջ ապրող և իրեն ապրեցնող կենսական ոյժից և սառէր, անհետ կորչէր տիեզերքի և ժամանակի անվերջ տարածութեան մէջ։

Շահեանը յիշեց իր սիրած յոռետես փիլիսոփաներին, որոնց առժամանակ մի կողմն էր դրել և կարդում էր գլխաւորապէս այն ժամանակ, երբ իր անշարժ, միակերպ կեանքն արդէն չափից դուրս տաղտկալի էր թւում նրան։ Իր դատարկ հոգու մխիթարութիւը դրանց գրուածքների մէջն էր գտնում։ Համաշխարհային թշուառութեան և բացարձակ բացասութեան այդ ողբերգակներն իսկևիսկ նրա սրտիցն էին ջուր խմում, և նա ագահութեամբ լափում էր դրանց մռայլ ուղեղի մռայլ արտադրութիւնները, չնայելով որ դրանք շատ տեղ այնքան խորիմաստ էին, որ նրա սահմանափակ և դժուարաշարժ ուղեղը միայն անորոշ ու մութ հասկացողութիւններ էր դուրս բերում։

Մի գիշեր, երբ, անկողնում պառկած, կարդում էր Շոպենհաուէրի վարդապետութիւնը բացատրող ռուսերէն մի գրուածք, յանկարծ խելքին փչեց, որ թարգմանի այդ գրուածքը։ Այդ միտքը կամաց-կամաց այնպէս պաշարեց նրան, որ վերջիվերջոյ վերկացաւ անկողնից, լամպը տեղափոխեց գրասեղանի վրայ և նըստեց, որ գործն սկսի։ Այդ գիշեր մեծ տանջանքով և

անդադար բառարանների նայելով թարգմանեց մօտ երկու երես, մինչև որ նրա սաստիկ լարուած միտքը բթացաւ և աչքերի կոպերը ծանրացան։ Ժամը երեքն էր, որ ճրագը հանգցրեց և պառկեց քնելու իր կատարած գործից գոհ մարդու խաղաղ երջանկութեամբ։ Առաւօտեան սովորականից վաղ վերկացաւ և թարգմանութիւնը շարունակեց։

Գրուածքը վերաբերում էր մահուան և անմահութեան փիլիսոփայական բացատրութեան։ Շահեանը կարծում էր, որ իր գործն առաջ է գնում անսպասելի աջող կերպով. գոնէ մի առանձին դժուարութիւն չէր կրում այն տեղերում, ուր հեղինակն առաջ էր բերում խնդրի էմպիրիկական տեսակէտը, որովհետև այդ տեղերում շոպէնհաուէրեան փիլիսոփայութիւնը հիմնւում էր ամեն մարդու հասկանալի բնական առօրեայ երեւոյթների վրայ. իսկ այն տեղերում, ուր խնդիրը քընարկւում էր մետաֆիզիկայի, հոգեփոխութեան, զանազան կրօնների և այլ դժուարամարս տեսակէտներից, Շահեանը պարզապէս բան չէր հասկանում։

Այսպէս, թէ այնպէս, Շահեանն այժմ հոգու կայտառութիւն էր զգում։ Առաջին անգամն էր, որ ճաշակում էր սեպհական աշխատանքի քաղցրութիւնը։ Իր անընդունակութեան գիտակցութիւնն այլևս չէր հալածում նրան. նա տեսնում էր, որ կարող է գործ կատարել և կատարում էր, և զարմանում էր, թէ ինչպէս կարողացել էր մինչև այժմ սպանել իր ժամանակը պարապ։

Նա այժմ դուրս էր գնում փողոց բաց ճակատով, անցնում էր մարդկանց առաջով հպարտօրէն, անցնում էր առանց շտապելու, որովհետև այժմ ամենևին երկիւղ չունէր, թէ մարդիկ նրա դանդաղ քայլերից կարող էին եզրակացնել, թէ պարապ է. ինքը համոզուած

էր, որ գործ է կատարում, իսկ թէ մարդիկ ինչ կը-
կարծէին,—այդ նրա հոգը չէր այժմ։ Նա միայն մի
բանի մասին էր հոգում, այն է՝ որքան կարելի է,
շուտ վերջացնել թարգմանութիւնը և տպագրութեան
տալ։ Գրականութեան մէջ անուն վաստակելու անմեղ
փառասիրութիւնը պաշարել էր նրա բոլոր ուշքն ու
միտքը և սկսնակ գրողներին յատուկ անհամբերութիւն
էր ներշնչել նրան։

Նրա աչքն այժմ նորից քաղցրացել էր հօր և մօր
վրայ, որոնք, այդ բանից ուրախանալով հանդերձ, զար-
մացել էին, թէ ամբողջ օրն իր սենեակում նստած՝
ինչ է գրում նա։ Մի անգամ հայրն այդ մասին հար-
ցրեց նրան, և Շահեանը սկսեց բացատրել նրան Շո-
պենհաուէրի վարդապետութիւնը, իհարկէ, այնպէս,
ինչպէս ինքն էր հասկացել, թէև շատ բան չէր հաս-
կացել։ Հայրը լսեց նրան, լսեց և գրեթէ ոչինչ չհաս-
կացաւ։

Մի երեկոյ, համարեա ամբողջ օրը թարգմանու-
թեան վրայ տանջուելուց յետոյ, Շահեանը դուրս գը-
նաց փոքր ինչ թարմանալու։ Նա խիստ գոհ էր իրե-
նից, իր կատարած գործից, ուստի հանգիստ խղճով
կարող էր զբօսնել, ինչքան քէֆը տար։ Եղանակը ցուրտ
էր և չոր։ Թայլերը դանդաղ շարժելով, մտքումը կրկ-
նում էր թարգմանութեան իր հաւանած այս ու այն
պարբերութիւնը, այս ու այն պարագրքը, երբ յան-
կարծ լսեց, որ մէկը կանչում է իրեն։ Նա յետ նայեց
և տեսաւ, որ մէկը արագ քայլերով մօտենում է իրեն։

Դա մօտ երեսուն տարեկան ցածրահասակ, փոքր
ինչ գէր երիտասարդ էր շատ թուխ դէմքով և նկատե-
լի մեծ քթով. հագուստը նոր էր, բայց խիստ ան-
ճաշակ. սև կաստորի գլխարկն էր միայն, որ խուզա-
ցած և սաստիկ ճխլտուած էր, իսկ կրկնակօշիկները

վաղուց արդէն կորցրել էին իրենց փայլը և ցեխի գոյն
էին ստացել։

Շահեանն այն ժամանակ միայն ճանաչեց նրան,
երբ նա ժպտալով մօտեցաւ։

—Մինասեանն...

—Մեծ մարդ ես դառել, չես լսում,—ասաց Մի-
նասեանը, սեղմելով նրա ձեռքը, և նրա թևից բռնած՝
առաջ անցաւ։—Ինչի անգամ կանչեցի լուսամուտից,
չիմացար։

—Ի՞նչ լուսամուտից, ո՞րտեղից,—զարմացաւ Շա-
հեանը։

—Ա՛յ, այնտեղ, հիւրանոցումն եմ իջած։

—Ես ինչ գիտէի, թէ դու այստեղ ես։

—Այսօր առաւօտն եմ եկել։ Ուզում էի գամ քեզ
մօտ—չկարողացայ. խիստ խառնուած եմ։ Ուսումնարա-
նի գործն էլ գլուխ բերի, վերջապէս եկել եմ մի վար-
ժուհի տանեմ։

—Ուսումնարանն ես բաց արել գիւղում։

—Վա՜հ, բաս նոր ես իմանում։ Չորս տարի է աշ-
խատում եմ դրա համար։ Բայց ասա տեսնենք՝ ո՞նց
ես. ինչ ես անում, ինչ չես անում։

—Ոչինչ. օրերս սպանում եմ առաջուայ պէս։

—Այդ լաւ է։ Իսկ ինձ օրերն են սպանում։ Եւ ինչ
շուտ են թռչում այս անիծուած օրերը։ Երևակայիր.
հոկտեմբերն արդէն վերջանում է, և ես դեռ նոր պի-
տի վազվզեմ վարժուհու ետևից։ Ասենք, բան չկայ. ուշ
լինի ու նուշ լինի։ Չէ՞։ Գիտէ՞ս, հոգիս դուրս եկաւ,
մինչև որ մեր պնդագլուխ գիւղացիներին հասկացրի
ուսումնարանի օգուտը և կարողացայ մի քանի կոպէկ
կորզել մեր հարուստներից։ Այս էլ ասեմ, որ գործին
քիչ արգելք չէին լինում բնական պատահարները. ան-
ցեալ երկու տարիները մօրեղբն իրար վրայ ահագին

վնասներ տուեց մեր կողմերում, իսկ այս տարուայ կարկուտը շատ բերք փչացրեց։ Գիւղացու դրութիւնը, յիրաւի, շատ վատ է։ Բայց ճրբ է մեր գիւղացու դրութիւնը լաւ եղել։ Եթէ գիւղացու տնտեսական դրութեանը նայելու լինինք, առմիշտ պիտի թողնենք նրա կրթութեան մասին մտածելը։

Մինասեանն երկար և տաք-տաք խօսում էր այդ մասին, այն միտքը պաշտպանելով, թէ կրթութիւնն առհասարակ եթէ մի՞ակ միջոցը չէ գիւղացու տնտեսական դրութեան բարւոքման համար, գոնէ գլխաւոր միջոցներից գլխաւորագոյնն է։

Շահեանն ամենևին դաղափար չունէր ոչ գիւղացու և ոչ նրա տնտեսական կամ այլ դրութեան մասին և ամենևին չէր էլ հետաքրքրւում այդպիսի խնդիրներով, ուստի Մինասեանին կատարեալ ազատութիւն էր տուել իր ուզածին չափ խօսելու և դատելու. իսկ ինքը, Շոպենհաուէրի փիլիսոփայութեան թարմ տպաւորութեան տակ, մտածում էր թէ ինչ նպատակ կար, որ այդ երիտասարդն այդպէս եռանդով խօսում և կաշուց դուրս էր գալիս գիւղացու համար։ Ընդունենք, թէ այդպիսի Մինասեաններ գիւղերում ուսումնարաններ էլ բաց արին, գիւղացու տնտեսական դրութիւնն էլ բարելաւեցին,—դրանով վերացաւ մարդկութեան թշուառութիւնը, այն թշուառութիւնը, որին դատապարտուած է նա ծնուելու օրից և յաւիտեանս յաւիտենից...

Մինասեանը բաժանուեց Շահեանից, ասելով, որ գնում է իր ծանօթ մի վարժուհու մօտ՝ նրանից իր բաց արած ուսումնարանի համար վարժուհու տեղ հարցնելու։

Շահեանը խնդրեց, որ նա անցնի իր կողմը և մինչև անգամ առաջարկեց, որ հիւրանոցից տեղափոխուի իրենց տուն։

տանն էք ապրում, թէ չէ վախենում էի, որ դուռն անծանօթ մարդ բաց անի։

—Է՛հ, որդի, այնքան երկար ապրել ենք այս տանը, որ կարծում ենք մեր սեպհական տունն է։

—Բարև ձեզ, երեխայք,—կանչեց Մինասեանը, դառնալով տաս-տասնմէկ տարեկան մի տղայի և մի աղջկայ, որոնք դաս էին պատրաստում նստած թէյի սեղանի մօտ, որի վրայ քլթքլթում էր մի փոքրիկ մաքուր սամովար, պլպլալով առաստաղից կախուած լամպի պայծառ լոյսի տակ։—Պօ, ինչքան մեծացել էք։ Աչքով չտամ։

Երեխաները, որոնք արդէն ոտի էին կանգնել, ամօթխածութեամբ ժպտացին։

Մինասեանը մատով խփեց նրանց կզակին և նորից դարձաւ պառաւին։

—Ուրիշ, մայրիկ. ի՞նչպէս էք, ի՞նչպէս չէք։ Օրիորդը տա՞նն է։

—Տանն է, տանը,—լսեց Մինասեանը մի ուրախ ձայն և, շուռ գալով, հարևան սենեակի դռան շեմքի վրայ տեսաւ օր. Սահակեանին, որը սաստիկ հարուստ կրծքով, ճաշակով հագնուած, առողջ, դէր, ոչ-գեղեցիկ և տարիքն արդէն անցրած մի աղջիկ էր—պառաւի աղջիկը։

Մինասեանն արագ մօտեցաւ նրան։

Օր. Սահակեանն իր ուժեղ բազկով թափահարեց նրա ձեռքը։

—Ոչ թէ չորս, այլ հինգ տարին լրանում է, որ դուք այլևս լայեղ չէք անում մեր հին բարեկամութիւնը մտաբերելու,—ասաց նա։

—Լայեղ բառը չի սազում գիւղացուն,—նկատեց Մինասեանը։—Ուրիշ բան ասացէք։

—Ես ձեզ շատ բան ունիմ ասելու։ Նախ եկէք այստեղ։ Մայրիկ, թէյ պատրաստիր։

Մինասեանը գլխարկն ու վերարկուն ձգեց աթոռի վրայ և օր. Սահակեանի յետևից ներս մտաւ հարևան սենեակը։

Այնտեղ կլոր սեղանի մօտ, գահաւորակի վրայ, նստած էր Աշխէնը, որ իր խաղաղ հայեացքով հետաքրքրութեամբ նայեց իրեն անծանօթ հիւրին։

—Աշխէն ջան, խնդրեմ ծանօթացիր։ Սա այն Մինասեանն է, որի ժողովրդական բանահիւսութիւնների ժողովածուն անցեալ օր կարդում էինք միասին։ Հա, լաւ միտս եկաւ, պարոն Մինասեան. ինչո՞ւ ձեր վերջին հրատարակութիւնից մի գիրք չուղարկեցիք ինձ։

—Ձեմ ուղարկել, որովհետև ինձ միայն մի օրինակ է ուղարկուել գիւղը, իսկ մնացածը բաժանուած է այստեղ դրավաճառանոցներին։ Հէնց վաղնևեթ մի օրինակ կըվերցնեմ և կըբերեմ ձեզ համար։

—Ա՜, չլինի՞ թէ դրա համար էք եկել Թիֆլիս։

—Ոչ, դրա համար չեմ եկել, բայց ինչի համար որ եկել եմ, էլի ձեզ հետ կապ ունի։

—Հա-ա։ Ախար գիտէի, է՛, որ ուրիշ կերպ չէիք յիշիլ ինձ։ Դէհ, նստեցէք տեսնենք, այդ ի՞նչ բանի համար էք եկել, որ կապ ունի ինձ հետ։

Մինասեանն առաւ օր. Սահակեանի առաջարկած աթոռը և նստեց սեղանի մօտ։ Օր. Սահակեանը մի ուրիշ աթոռ առաւ և նստեց նրա մօտ։

—Ես եկել եմ, օրիորդ, ահա թէ ինչ բանի համար։ Զգիտեմ ձեզ յայտնի է, թէ ոչ. մի քանի տարի է, աշխատում էի մեր գիւղում ուսումնարան բանալ։

—Այս հինգ տարում ձեր երեսը տեսել ե՞մ, որ իմանայի թէ ինչ էք անում այնտեղ։ Յետոյ։

—Հազար ու մի դժուարութիւններ յաղթելուց

քը նոր ծանօթ մի նրիտասարդի մասին, որը գործելու անդ զբաղուած է աշխարհի և մարդու ստեղծագործութեան խորհուրդը քննելով և այն նրբակացութեան է եկել, թէ որոշենաև աշխարհս ունայն է և ամեն բանի վախճանը՝ ոչնչութիւն, ուստի ոչ եռանդն է բանի պէտք, ոչ ձգտումը, ոչ գործը, ոչ իդէալը—ոչինչ, այլ հարկաւոր է միայն ուտել, խմել, քնել և... դարձեալ ուտել, խմել, քնել, մինչև որ մի օր ոտները կը ձգի իբրև մի անպէտք անասուն, որի կաշին անդամ չի կարելի քերթել բանի պէտք ածելու համար։

—Ո՞վ է այդ երիտասարդը։

—Ես չեմ ճանաչում։ Ազգն ինչպէս ասացիր, Աշխէն։

—Շահեան։

—Շահեան,—զալ մացաւ Մինասեանը։—Լեոն Շահեան։

—Կարծեմ Լեոն է,—ասաց Աշխէնը։

—Դա խօ իմ ընկերն է, իմ հին և ամենալաւ ընկերներից մէկը,—բացականչեց Մինասեանը, ծիծաղելով։—Այս բոպէիս պատահեցի նրան փողոցում։

—Պարոն Մինասեան, դուք ուզում էք ինձ զայրացնել։ Ինչպէս չէք ամաչում այդպիսի դատարկ և ծոյլ արարածներին ձեր ընկերն անուանելու։

—Իզուր էք զայրանում, օրիորդ. նա իսկապէս իմ ընկերն է։ Ես նրան ճանաչում եմ դեռևս աշակերտական նստարանից։ Ճիշտ է, վերջին չորս-հինգ տարին ես նրան չեմ տեսել և չգիտեմ, թէ ինչպէս է եղել, որ նա յանկարծ յոռետես է դարձել, բայց նախկին ծանօթութեանս վրայ հիմնուած կարող եմ ասել, որ նրա պէս լաւատես մարդ հազիւ թէ գտնէք։

—Ուրեմն դու սուտ ես ասել, Աշխէն... պարոնը հերքում է քո ասածները։

—Ամենևին մտքովս էլ չի անցել հերքելու օրիորդի ասածները։ Ասացի խօ, որ վերջին չորս-հինգ տարում չեմ տեսել նրան և չգիտեմ, թէ ինչպէս է եղել, որ նա յանկարծ յոռետես է դարձել։ Եթէ այդպիսի մի փոփոխութիւն կատարուել է նրա մէջ, ապա ես դրա համար ուրիշ բացատրութիւն չունիմ, բացի այն, որ նա մի քիչ հիւանդոտ է, մի քիչ ծոյլ, գործի էլ անընդունակ, աշխարհից հեռու ապրող, թոյլ կամքի տէր, երբէք չի փորձել, թէ ինչ է նշանակում քաղցած փոր, բայց վերին աստիճանի բարի, բարեխիղճ ու մտածող և հիւանդութեան չափ ինքնասէր։ Այսպիսի բնաւորութեան տէր մարդիկ առհասարակ տրամադիր են լինում մելամաղձութեան և յոռետեսութեան, և, եթէ խորը քննենք, կը տեսնենք, որ այդ մելամաղձութիւնն ու յոռետեսութիւնն արդիւնք են լինում ոչ թէ այն բանի, որ նրանք կեանքն ունայն են համարում, այլ այն գիտակցութեան, որ իրենց կեանքն ունայն է անցնում, հակառակ իրենց կամքի և ցանկութեան։

—Խօսք չկայ, դուք լաւ փաստաբան կը լինիք։

—Փաստաբան լինելու հարկ չկայ. պէտք է միայն ճանաչել մարդու։ Ինչևիցէ։ Այս թողնենք և գանք իմ գործին։

Մինասեանը յայտնեց, թէ վարժուհին ինչ առարկաներ պիտի աւանդէ, քանի դաս պիտի ունենայ և, բնակարան, վառելիք ու լուսաւորութիւն ունենալով հանդերձ, որքան ռոճիկ պիտի ստանայ։

Օր. Սահակեանը գտաւ, որ ռոճիկը շատ քիչ է, որ այդքան ռոճիկով ոչ մի վարժուհի չի համաձայնիլ գիւղ գնալ։

Մինասեանը պատասխանեց, որ ինքն էլ այդ շատ լաւ գիտէ, բայց ճար չկայ. ժողովուրդն աղքատ է։

—Լաւ, վարժուհին ինչ մեղաւոր է,—բացականչեց օր. Սահակեանը։—Վարժուհի որ ուզում էք, այն էլ լաւ վարժուհի, հապա ապրուստի միջոց չպի՞տի տաք։ Ես զարմանում եմ ձեզ վրայ, որ դուք գործի վրայ նայում էք ոչ թէ ուսուցչի, այլ հոգաբարձուի աչքով։

—Իսկ ես զարմանում եմ ձեզ վրայ, օրիորդ, որ դուք շահադիտական տեսակէտից էք նայում գործի վրայ։ Վարժուհին այնքան կը ստանայ, որ բոլորովին բաւական կը լինի իր ապրուստի համար և, եթէ ուզենայ, դեռ մի բան էլ կարող է յետ ձգել։ Էլ ի՞նչ էք ուզում։ Գիւղ է, քաղաք խօ չէ՞, որ մեծ ծախսեր ունենայ։ Ես, ահա, բոլորովին ձրի պիտի ծառայեմ։ Բայց բանն այդ չէ։ Մի՞թէ չի կարելի մի փոքրիկ զոհաբերութիւն անել գործի սիրոյն։

—Զարմանալի է. դուք այնպէս էք խօսում, որ կարծես թէ ինձ հետ էք պայմանաւորւում։ Բայց ես հասկանում եմ ձեզ. դուք իդէալական վարժուհի էք ուզում։ Այդպիսի դէպքում սխալուել էք. ինձ մօտ գալու տեղ պիտի գնայիք ոգիների աշխարհը։

—Դժբաղդաբար, ճանապարհը չգիտեմ,—ծիծաղեց Մինասեանը։

—Ի՞նչ գործի սէր, ի՞նչ զոհաբերութիւն, ի՞նչ էք ասում, որտեղ էք ապրում,—շարունակեց օր. Սահակեանը տաքացած։—Դուք կարծում էք, թէ ամենքը ձեզ պէ՞ս են։ Մօտակայ վիրախօս հայ գիւղերից մէկում մասամբ իմ և մասամբ ուրիշների ջանքով աղջկանց ուսումնարան է բացուած. ուզում եմ մի ներկայացում սարքել այդ ուսումնարանի օգտին, և ի՞նչ էք կարծում, ում դիմում եմ, որ մասնակցեն ներկայացմանը, համարեա ամենքն էլ մերժում են։ Այստեղ խօ, իսկապէս, զոհաբերութիւն էլ չկայ, բայց չեն ուզում մաս-

Դատիցեք [illegible] ասեց. Մարժոդներից մէկն էլ ասեց, մի [illegible] ։

Մարդիկներ։

— [illegible] յանդիմանու թեամբ [illegible], որ ընդունակու- թիւն չունի [illegible] դալ։

— [illegible] անուամ,—բացականչեց [illegible]։— Դիտեմ, որ դու փախ- [illegible] երևալուց, գիտեմ, որ [illegible] այդ ես խօսում եմ [illegible] այդ պատնէրում հա- [illegible] ուզում ունենալ զէ- [illegible] ոք Աստծու, լաւ ապ- [illegible] էհ, շատ ես հուշում, [illegible] ուսումնարան ուղարկա- [illegible] վիցէ, այս թագնենք [illegible] ենն այդպէս, պա- [illegible] ասում եմ, որ ձեր [illegible] դող վարժուհի ճա- [illegible] խօսեմ մէկի հետ, [illegible] ատաստանն էլ, յոյս [illegible] յամ... Մայրիկ, թէյն [illegible]

— [illegible] հարևան սենեակից [illegible]

— [illegible] Էլ վայելիլ, պարոն [illegible] ձեր գիտցած նա- [illegible] լատմեցէք ձեր գիւ- [illegible] երկար պատմու- [illegible] պէս, երբ դուք խո- [illegible] սում ձեզ։ [illegible] հաճոյքով եմ լսում

կոյն երևում էր, որ նա հոգով գիւղացի է և սիրում է գիւղն ու գիւղացուն, թէև վերջնիս հասարակական-բարոյական բարքերը շատ բաներում նկարագրում վերին աստիճանի տգեղ գոյներով։

Օր. Սահակեանն էր միայն, որ մասնակցում էր նրա խօսակցութեանը, մինչդեռ Աշխէնը գրեթէ բոլոր ժամանակ լուռ էր։ Իր սովորական հանդարտ հայեացքով նայում էր Մինասեանի համակրելի թուխ դէմքին և լսում էր նրան առանձին հետաքրքրութեամբ։ Նրա խաղաղ հայեացքի մէջ տխուր մտախոհութիւն էր նըշմարւում։ Մինասեանի պատմութիւնը վերարտադրել էր նրա մէջ մերձակայ անցեալից մի յիշատակ, որ նա միշտ աշխատում էր հանել իր մտքից, սրտից, հոգուց և խպառ մոռանալ, որպէսզի վերջնականապէս մարէր իր ամբողջ էութիւնը լափող մի սաստիկ հուր, որը երբեմն կատարեալ յուսահատութեան էր հասցնում նրան... Մինասեանը, այդ եռանդուն, գործունեայ երիտասարդը, գիւղացու թշուառ կեանքը պատմելիս, նրան յիշեցնում էր մի այլ երիտասարդ՝ նոյնպէս եռանդուն, նոյնպէս գործունեայ, վեհ ձգտումներով, որոշ իդէալի տենչով լցուած, որը կամովին ձգել էր իրեն դէպի հեռաւոր երկիր, բայց դարձեալ հայրենակիցների, համարիւն եղբայրների մէջ՝ նրանց ծանր լուծն իւրովսանն թեթևացնելու... Որքան որ քաղցր և անձնական ազնիւ հպարտութեան համար հաճելի էր, որ նա իր միտքը, սիրտն ու հոգին նուիրել էր մի այդպիսի երիտասարդի, այնքան աւելի յուսահատական էր նրա համար, որ չէր կարող պատկանել այդ երիտասարդին, նրա հետ միատեղ օդ շնչել, նրա հետ ձեռք ձեռքի տուած գործել և մեռնել միասին... Հերոսական կամք և ասկետական համբերութիւն էր հարկաւոր այդ դրութեանը դիմանալու համար. բայց նա դիմանում էր

և որքան անտրտունջ, որպիսի խոհեմութեամբ, որպիսի անձնազոհութեամբ...

Խօսակցութիւնն անցաւ Թրքա-Հայաստանում նոր երևան եկած շարժումներին ընդհանրապէս և Կում-Կապուի դէպքին մասնաւորապէս։ Օր. Սահակեանն սկսեց սաստիկ յարձակում գործել պատրիարքի վրայ, որ գործն այդպիսի խայտառակ դրութեան էր հասցրել, թէև, միւս կողմից, նա չէր պաշտպանում ցուցաբարներին, որոնց վարմունքն անխոհեմ էր համարում։ Աշխէնը նկատեց, որ վերջին դէպքերին թեթև աչքով չպէտք է նայել, որովհետև այդպիսի ծանր դէպքերն առանց արդարացուցիչ պատճառների չէ որ երևան են գալիս։ Մինասեանն ասաց, որ գործին լաւ ծանօթ չը-լինելով, ինքը դժուարանում է որևէ կարծիք յայտնել։

Բաւական ուշ էր, որ Աշխէնը վերկացաւ տուն գնալու. ուշագրաւ և կենդանի խօսակցութեան մէջ նա չէր նկատել, թէ ինչպէս անցել էր ժամանակը։

XII

Մինասեանն այդ գիշեր անյարմար համարեց Շահի մօտ տեղափոխուել։ Հետևեալ առաւօտ վերցրեց իր ջարդուած ճամպրուկն ու հնացած եափնջին և գնաց ընկերոջ տուն։ Այդ միջոցին Շահեանը զբաղուած էր իր թարգմանութեամբ։ Իմանալով, որ եկողը Մինասեանն է, մի ըոպէ իր սովորական մտավախութեամբ ուղեց թղթերը հաւաքել և պահել, բայց մէկ էլ մտածեց, որ յիմարութիւն կը լինի այդ, քանի որ ինքը լոկ թարգմանութիւն էր անում և, իր համոզումով, այնքան էլ անաջող չէր թարգմանում, որ երկիւղ ունենար ընկերոջ կողմից նկատողութիւններ ստանալու։ Նա

մանուֆեամբ միայն, այլ և [illegible] հա. սրա մաքերը։

—Քարոզում,— [illegible] եմ քարոզել։

—Օր. Սահակեան [illegible]

—Օր. Սահակեան [illegible]

—Դա այն վալ [illegible] երբէկ երիկոյ, քեզնից բաժ [illegible] մի ուրիշ օրիորդ կար։

Շահեանը զգալ [illegible] ընկաւ, որ այդ ուրիշ [illegible] կամ Աշխէնը, բայց [illegible] թէ այդ բանից ամե[illegible]

—Ի՞նչ օրիորդ,— [illegible]

—Աղջիկ չեմ յիշում [illegible], Աշխէն է։

—Հա,— կիզծ [illegible] Շահեանը։

—Նա այնքան [illegible] կրկի, չախչախել է [illegible]— [illegible] մտերմական բարեսիրութեամբ։

Շահեանը վիր[illegible] համար անտանելի է [illegible]

—Ինչից դիտես [illegible] քան էլ յիմար աղջի[illegible] նա [illegible] քեզ այդպէս [illegible]

—Զէ, ամենևին [illegible] նրան համար եմ այդպէս [illegible] Շոպէնհաուէրը հէնց [illegible] էր իր քարոզած մտքերը։ Նա [illegible] շուռաուելիւն էր համարում, բայց [illegible] պէս օդտուեց այդ կ[illegible] [illegible]

րի։ Մարդկութեանը նա դէպի մահ էր հրաւիրում, բայց ինքը շարունակ ատրճանակ էր ման ածում հետը անձնա... չկարծես անձնասպանութեան, ոչ,—անձնասպանութեան համար։ Մարդկութեան թշուառութեան աղբիւրը նա կանանց էր համարում, բայց ինքը շարունակ կանանց գրկումն էր երջանիկ ժամեր գտնում և վերջը, կարծեմ, ապօրինի զաւակներ թողեց։

—Զարմանալի է. ի՞նչ ես դու նրա կեանքն օրինակ բերում իր մաքերի դէմ։

—Նրանը չլինի, իմը լինի, քոնը լինի։ Եթէ գլուխս ես, որ կեանքն անտանելի է, և մեռած ժամանակ միայն մարդ կարող է երջանիկ լինել—էլ ինչու՞ ես ապրում. մեռիր, էլի։ Փառք Աստծու, շատ բան հարկաւոր չէ. մի գնդակ և մի վայրկեան, ուրիշ ոչինչ։ Կամ, եթէ գնդակից վախենում ես,—ջուր կայ. եթէ ջրից վախենում ես—թոկ կայ. եթէ թոկից էլ վախենում ես—թոյն կայ։ Կամ թէ չէ, ուզում ես, Բուդդայի պէս նստիր ծառի տակ և շարունակ նայիր քթիդ ծայրին, մինչև որ սպանես քո մէջ այն, որ քո այդ սիրելի Շոպենհաուէրը «ապրելու անդիտակից կամք» է անուանում։

Շահեանն ակամայ ծիծաղեց։

—Ի՞նչ ես ծիծաղում. ես կատակ չեմ անում։ Ինքդ մտածիր, եղբայր. հէնց միայն այն հանգամանքը, որ մարդ իր ակներև մահուան ամենավերջին րոպէում անգամ ամեն ջանք գործ է դնում, որ մի քիչ էլ ապրի,—այդ արդէն պարզ ապացոյց չէ՞, որ կեանքը շատ էլ վատ բան չէ, և իզուր է քո այդ Շոպենհաուէրը ստիպում, որ մարդ ուրիշ կերպ նայի կեանքի վրայ։ Ի՞նչ ես կարծում, այդպէս չէ՞։

—Ուրեմն, քո կարծիքով, աւելորդ է թարգմանութիւնս,—առանց նրա հարցին պատասխանելու, հարցրեց Շահեանը, կարճ մտախոհութիւնից յետոյ։

—Բոլորովին աւելորդ է։ Մեզ համար, ես կարծում եմ, դեռ շատ վաղ է այդպիսի բաներով զբաղուելը։ Մեր առաջ մեծ գործ կայ կատարելու. նախ մտածենք այն բանի մասին, թէ ինչպէս անենք, որ նպաստած լինինք այդ մեծ գործի կատարման, նախ հոգանք մեր ժողովրդի թշուառութեան մասին, աշխատենք նրան փոքրիշատէ բարօր վիճակի հասցնել, այնուհետև արդէն պարապ ժամանակ շատ կունենանք ընդհանուր մարդկային թշուառութեան մասին էլ մտածելու... Մի բան էլ ասեմ. Շոպենհաուէրին հասկանալը, ախր, հեշտ չէ, իսկ թարգմանելը—առաւել ևս։

Եւ Մինասեանը, խորհրդաւոր կերպով նայելով ընկերոջ ակնոցներին, մեղմօրէն ժպտաց։

Շահեանը ոչինչ չպատասխանեց։ Նա ամաչում էր նայել Մինասեանի դէմքին, ընդդիմամբ զգալով, որ ընկերն իր մտերմական բարեսրտութեամբ կարող է շատ դառն հարեր կլլեցնել իրեն։

Կէս ժամից յետոյ երկու ընկերները աղա Կարապետի և Թամարի հետ սեղանատանը նստած՝ խմում էին առաւօտեան թէյը։ Աղա Կարապետը գովում էր Մինասեանի եւանդը, բայց գտնում էր, որ աւելի նըպատակայարմար կը լինէր ծխական դպրոցի տեղ բանալ գիւղատնտեսական դպրոց։ Մինասեանն ասաց, որ այդ բանը իր իդէալն է, որ ծխական դպրոցը լինելու է ապագայ գիւղատնտեսական դպրոցի մի էտապը, իսկ այդ պակասը առ այժմ լրացնում է իր սեպհական փորձապաշտով, որտեղ գիւղացիները քիչ բան չեն սովորում։

Թէյից յետոյ Մինասեանը շտապեց գնալ գրավաճառանոց, ուր դասագրքեր և դասական ուրիշ պիտոյքներ գնեց նոր ուսումնարանի համար, առաւ իր

վերջին հրատարակութիւնից երկու օրինակ—մէկը օր. Սահակեանին, միւսը Շահեանին նուիրելու, յետոյ գընաց սրբազան առաջնորդի և թեմական տեսչի մօտ ուսումնարանին վերաբերող մի քանի կարևոր գործերի համար, ժամը 3-ին ճաշեց Շահեանենց տանը և երեկոյեան գնաց օր. Սահակեանի մօտ վարժուհու մասին պատասխան ստանալու։

Աշխէնն այս անգամ էլ ընկերուհու մօտ էր։

Երբ Մինասեանը ներս մտաւ, օր. Սահակեանը տաք-տաք խօսում էր Աշխէնի հետ։

—Ես ձեզ չասացի՞, որ ձեր առաջարկած ռոճկով անկարելի է վարժուհի ճարել,—բարկացած կանչեց նա։

—Ի՞նչ է, չաջողուեց։

—Ի հարկէ, չաջողուեց։ Զարմանալի է, որ դուք այդքան խամութիւն էք անում։ Ոչ թէ մէկի, այլ երեք հոգու մօտ եմ գնացել. ոչոք չհամաձայնուեց ձեր առաջարկած ռոճկով գիւղ գնալ։ Դեռ ծիծաղեցին էլ։ Մեր տանն, ասացին, աւելի լաւ կարող ենք ապրել։

—Բաս ի՞նչ պէտք է անենք։

—Ինչ ուզում էք՝ արէք։ Դեռ ձեր պատճառով կռուեցի էլ։

—Իմ պատճառո՞վ։

—Ես դայրացած խփեցի նրանց երեսին, որ նրանք ուզում են միայն լաւ ապրել, որ նրանք ուրիշ նպատակ չունին, բացի լաւ ապրելուց, որ նրանք անարժան են իրենց կոչմանը, որ եթէ այսօր մի հարուստ պառաւ մարդ խնդրի նրանց ձեռքը, նրանք ամեն բան կըմոռանան և ուրախութեամբ կըվազեն այդ հարուստ պառաւի տանը լաւ ապրելու։

—Լաւ, ես մեղաւո՞ր եմ, որ այդ խօսքերը շպրտել էք նրանց երեսին։

—Բաս ե՞ս եմ մեղաւոր,—աղաղակեց օր. Սահակեանը։—Եթէ չյանձնարարէիք ինձ, որ վարժուհի ճարեմ ձեզ համար, կըկռուէի՞ նրանց հետ։

—Ես ձեզ խնդրեցի, որ վարժուհի ճարէք, խօ չխնդրեցի, որ կռուէք։

—Պարոն Մինասեան, շատ մի բարկացնէք, թէ չէ, Աստուած է վկայ, ձեզ հետ կըկռուեմ։

—Տեսնում էք, որ մեղաւորը ես չեմ, այլ ձեր ընաւորութիւնը։ Բայց կատակը մի կողմ մնայ, օրիորդ. ինձ, ախր, վարժուհի է հարկաւոր։ Ես չեմ կարող այստեղ երկար մնալ։ Թեմական տեսուչը չի ուզում խառնուել այս գործին, որովհետև մեր մէջ անձնական հաշիւներ կան։ Յայտարարութիւն տամ, գիտեմ, բան չի դուրս գալ։ Մի ճար պէտք է անէք, թէ չէ։

Օր. Սահակեանը մտախոհութեան մէջ ընկաւ։ Նրա դէմքը մինչև անգամ տխուր արտայայտութիւն ստացաւ։

—Ինչո՞ւ ինձ առաջուց իմաց չտուիք, որ ուսումնարան էք բաց անում և վարժուհու պէտք կունենաք,—ասաց նա կարճ լռութիւնից յետոյ։—Այն ժամանակ ես կըգայի։

—Դո՞ւք։

—Զարմանո՞ւմ էք։ Այո, ես։ Այստեղ, ճիշտը ձեզ ասեմ, ձանձրացել եմ. կուզէի օդը, միջավայրը փոխել։ Հիմա էլ կարող եմ հրաժարական տալ և ձեզ հետ գիւղը գալ, բայց...

—Ի՞նչ էք ասում... Ես երբէք չէի ցանկալ, որ դուք այդպիսի զոհաբերութիւն անէիք։

Օր. Սահակեանը տխրօրէն ժպտաց։

—Դուք այնպէս էք խօսում, որ այդ զոհաբերութիւնը կարծես ձեզ համար պիտի անէի,—նկատեց նա։

—Գիտեմ, որ այդ զոհաբերութիւնը գործի համար պիտի անէիք, բայց... գիւղում և այն՝ չնչին վարձա-

արութեամբ ծառայելն անկարելի պիտի լինի ձեզ համար, որովհետև... ինչ պիտի անէք ձեր պառաւ մօրը, ձեր եղբօր երկու փոքրիկ որբերին, որոնց պահողն ու կերակրողը դուք էք միայն։ Անյարմարութիւններ շատ կան, օրիորդ։

—Եւ կարծում էք, թէ այդ անյարմարութիւնները գոյութիւն չունին ուրիշների համար, որոնցից երեկ դուք զոհաբերութիւն էիք պահանջում։ Մենք մեզ հակասում ենք, պարոն Մինասեան, և անաչառ չենք։ Բայց բանն այդ չէ։ Գործողն այն ժամանակ է միայն գործող, երբ նա անյարմարութիւնների և դժուարութիւնների մէջ է գործում։ Բայց դուք զործող ասացէք, զործող։ Մեր վարժուհիները... Ի՞նչ են մեր վարժուհիները.—դատարկագլուխ, ծոյլ ու բթամիտ արարածներ, որոնք իրենք էլ չեն իմանում, թէ ինչպէս է պատահել, որ վարժուհի են դարձել։ Չես կարող փոքրիշատէ լուրջ բանի մասին վիճաբանել հետները։ Իրենց խօսքերը քալփաթինով պիտի հանես բերաններից, իսկ քոնը մուրճով պիտի ցցես նրանց գլուխը, որ մտնի։ Ժողովներում նստում են վայրի պէս, բայց որ իրենք իրենց մէջ են մնում, տեսնէք, թէ ինչպիսի կչկչան կաչաղակներ են դառնում.—ամենքը սկսում են խօսել միանգամից, կատակներ են անում, բամբասում են, սրան են ծաղրում, նրան են ծաղրում, մէկին մի անուն են կպցնում, միւսին՝ ուրիշ անուն, բութ սրամտութիւններ են անում, ծիծաղում են, հրհռում, իրար կողք են բզում, ծկլթում... մի խօսքով՝ այնպիսի յիմարութիւններ, որ երեխաներն էլ չեն անիլ։ Եւ սրանք են կազմում հայ ինտելիգենտ կանանց այն դասը, որ գործում է հասարակական ասպարէզի վրայ, մանուկ սերունդ է կրթում։ Ասելս այն է, որ այսպիսի մտաւոր և բարոյական մանկներից ինչ գործ, առաւել ևս

—յանուն այդ գործի ինչ զոհաբերութիւն կարող ենք պահանջել։ Այս այնպիսի մի ցաւալի դրութիւն է, որ լաւ որ մտածում եմ, ինքս ինձնից, իմ վարժուհի լինելուցս իսկ ամաչում եմ։

—Ներեցէք, օրիորդ,—նկատեց Մինասեանը ժըպտալով.—ինձ թւում է, թէ դուք մի քիչ չափազանցնում էք։

—Ի՞նչ, դուք չէ՞ք հաւատում։ Ապացոյցի համար, որ ես չեմ չափազանցնում, կըհրաւիրեմ այստեղ մի եօթ-ութ հոգի վարժուհի, ձեզ էլ կըբերեմ կընստեցնեմ այստեղ, կըսկսենք խօսել հասարակական կամ նոյն իսկ մանկավարժական որևէ խնդրի մասին, և ինքներդ կըտեսնէք, թէ քանի՞սն է նրանցից վայրի պէս նստած, քանի՞սն է կարծիք յայտնում և ի՞նչպիսի կարծիք։ Այնուհետև դուք վեր կըկենաք, իբրթէ գնում էք. ես ձեզ թաք կըկացնեմ հարևան սենեակում, և այնտեղից ականջ կըդնէք, թէ ձեր դուրս գնալուց յետոյ ինչի՞ մասին կըսկսեն խօսել.—Նրանք ձեր քթի՞ մասին կըխօսեն, պարոն Մինասեան։

Մինասեանը պինդ ծիծաղեց։

Աշխէնը նայեց նրա մեծ քթին և ակամայ ժըպտաց։

—Ի սէր Աստուծոյ, օրիորդ,—բացականչեց Մինասեանը,—ինչպիսի վարժուհի ուզում էք ճարեցէք, միայն թէ ինձ ազատ պահեցէք քթի մասին դասախօսող վարժուհիներից։

Օր. Սահակեանի ծիծաղը սաստիկ բռնեց։

—Ձեր պայմաններում, ասենք, դժուար թէ աղատ մնաք... նրանք մշտապատրաստ նիւթ կունենան իրենց աչքի առաջ,—սաստիկ ծիծաղի միջից հազիւ կարողացաւ արտասանել նա։—Բայց ես վախենում եմ, որ դուք ինձ էլ քթի մասին դասախօսող վարժուհինե-

ի կարգը դասէք, ուստի թողնենք այս մասին խոսելը։

Եւ օր. Սահակեանը, արագութեամբ զսպելով իր ծիծաղը, նորից լուրջ դէմք ընդունեց։

—Դուք իմ անձնական անյարմարութիւնների մասին մի մտածէք, պարոն Մինասեան,—ասաց նա, դառնալով առաջուայ խօսակցութեանը։—Ես գիտեմ, թէ ինչպէս կըշակեմ այդ անյարմարութիւնները։ Բայց այս տարի չէ, եկող տարի, ձեզ խօսք եմ տալիս առաջուց, ինքս կը դամ գիւղը։ Ուրիշ բան է, թէ դուք չէիք ցանկալ ինձ վարժուհի ունենալ ձեր ուսումնարանում,—աւելացրեց նա կատակով, բայց դարձեալ առաջուայ մեղմ-տխուր ժպիտով։

—Դուք կատակ էք անում, օրիորդ, բայց, հաւատացնում եմ ձեզ, անչափ զոհ կը լինէի, եթէ ինձ պատահէր մի այնպիսի վարժուհի, որ եթէ ձեզ պէս անձնուէր չլինէր, գոնէ մի քիչ սիրէր գործը, որովհետև գիտէք, թէ մանաւանդ ուսուցչական ասպարէզում որքան մեծ նշանակութիւն ունի գործի սէրը։ Ձեր առաջարկութիւնն ես ընդունում եմ, իհարկէ, ամենայն սիրով, բայց այս տարուայ համար պիտի օգնէք—առանց վարժուհու չպէտք է թողնէք։ Ճարներս ինչ։ Միանգամից խո չե՞նք կարող նոր դրութիւն ստեղծել. պէտք է բաւականանանք եղածով։ Յոյսս ձեզ վրայ է։ Երևակայեցէք, որ հաղար ու մի դժուարութիւններով հիմնուած ուսումնարանը վարժուհու պատճառով միայն կարող է փակ մնալ, իսկ այդ բանը կարող է ժողովրդին սառեցնել։

—Գիտէ՞ք, ինչ կայ, պարոն Մինասեան,—ասաց օր. Սահակեանը։—Վաղն ես կըխօսեմ մի ուրիշի հետ, եթէ համաձայնեց՝ խօ լաւ, իսկ եթէ ոչ, այնժամանակ, ճար չկայ, պէտք է մի կերպ աւելացնէք ռոճիկը, թէ

ինչպէս, այդ արդէն ձեր գործն է։ Ես իմս արած կը լինիմ, և դուք ինձնից դժգոհ լինելու իրաւունք չէք ունենալ։

—Լաւ,—ասաց Մինասեանը և մաքումը վճռեց, որ եթէ բանը չաջողուի, երեսը պնդի և դիմի Շահեանին կամ ուղղակի նրա հօրը օգնութիւն խնդրելու։

Մինչ այդ խօսակցութիւնը տեղի էր ունենում օր. Սահակեանի և Մինասեանի միջև, Աշխէնը, իր սովորութեան համեմատ, նստած էր լոլորովին լուռ։ Նկատելի էր, որ նա խորասուզուած է ինչ-որ մտածմունքի մէջ։ Այդ մտածմունքից նրան հանեց օր. Սահակեանը։

—Աշխէն, ի՞նչ ես մտածում,—հարցրեց նա։

Աշխէնը նայեց նրան և սթափուեց։

—Ե՞ս... ոչինչ։

—Հա, պարոն Մինասեան, գիտէ՞ք, որ մեր այս օրիորդն էլ վարժուհի է, բայց կամաւոր վարժուհի, ինչպէս որ կամաւոր զինուորներ են լինում. չքաւոր մարդկանց երեխաներին ձրի դասեր է տալիս տանտվարի։ Դուք այսպիսի իդէալական վարժուհի էք ուզում, բայց Աստուած տայ։

Աշխէնը չկամեցաւ, որ ընկերուհին երկար խօսի այդ մասին։ Ուստի, դիմելով Մինասեանին, խօսք բաց արեց նրա ժողովրդական նիւթերի ժողովածուի մասին։

—Հա, պարոն Մինասեան, բերի՞ք ձեր գիրքը,—հարցրեց օր. Սահակեանը։

Մինասեանը վերկացաւ և, վերարկուի գրպանից հանելով օր. Սահակեանի համար այդ օր գրավաճառանոցից վերցրած իր վերջին հրատարակութիւնը, յանձնեց նրան, Աշխէնին էլ խոստացաւ, որ մի գիրք էլ վաղը նրա համար կը վերցնի։

—Ինչպէս երևում է, պարոն Մինասեան,—ծիծա-

ղելով նկատեց օր. Սահակեանը,—հայ հեղինակներդ աւելի շատ նուիրում էք ձեր գրքերը, քան թէ վաճառում։

XIII.

Աշխէնն, այդ երեկոյ օր. Սահակեանի մօտից վերադառնալով տուն, ուղղակի մտաւ իր սենեակը, նստեց դասեղանի մօտ, վերցրեց մի գիրք, որ կիսատ թողած ընթերցանութիւնը շարունակի, բայց թողեց և մտածութեան մէջ ընկաւ։

Անցաւ համարեա մի ժամ, որ նա՝ գլուխը ձեռքին յենած՝ անթարթ նայում էր մի կէտի։ Նրա ուղեղը զբաղուած էր մի խնդրով, որը վճռելու համար խիստ տատանւում էր։ Այդ խնդիրը նրա գլխում ծագել էր դեռ նախորդ օրուանից, և նա շարունակ մտածում էր այդ մասին, և որքան շատ էր մտածում, այնքան աւելի տատանւում էր։

Դուռը կամաց բացուեց։

Աշխէնը ցնցուեց և նայեց դռան կողմը։

Հանդարտ քայլերով ներս մտաւ Եւան, վերցրեց մի աթոռ և նստեց նրա մօտ։

—Աշխէն, այս երեկոյ խիստ տխուր եմ,—ասաց նա մելամաղձոտ ձայնով։

Աշխէնը զարմացած նայեց նրա դէմքին։ Յիրաւի երբէք այդ սիրուն, այդ չարաճճի դէմքն այդպէս տրխուր, հանդարտ և մելամաղձոտ չէր ներկայացել նրան։

—Ինչու,—հարցրեց նա։

—Մտածում եմ եղբօրս մասին։

—Արմենակի՞ մասին։

—Այո։

Աշխէնը նկատելի կերպով գունատուեց։

—Ի՞նչ է պատահել... նոր նամա՞կ կայ նրանից,—անհանգստութեամբ հարցրեց նա։

Եւան նայեց նրան զարմացած։

—Ինչու՞ այդպէս վախեցած ես հարցնում։

—Որովհետև դու այնպէս ես խօսում, որ կարծես նրան բան է պատահել... Հա՞։

—Նրան ոչինչ չի պատահել։

—Հապա ի՞նչ ես ասում։

—Զարմանալի է։ Ես, կարծեմ, ոչինչ չասացի։ Ասացի միայն, որ տխուր եմ և մտածում եմ նրա մասին։

Աշխէնը հանգստացաւ և ձեռքը մտախոհ կերպով շփեց ճակատին։

—Ի՞նչ ես մտածում նրա մասին,—հարցրեց նա կամաց, կարճ լռութիւնից յետոյ։ Նա այլևս չէր նայում Եւային։

—Ուզում եմ, որ նա այստեղ լինի։

—Դու այդ միշտ էլ ուզել ես։

—Բայց ոչ այնպէս, ինչպէս այժմ։ Այնպէս կարօտել եմ, այնպէս կարօտել... Զարմանալի է. կարծես երբէք այնպէս չեմ սիրել նրան, ինչպէս այժմ, այս րոպէիս։ Պատկերը ձեռքիս էր. նայեցի, նայեցի և... լաց եղայ,—ինքս էլ չգիտեմ ինչու։ Այսպիսի բան երբէք չէր պատահել ինձ։ Այս ի՞նչ նախազգացում է, չեմ հասկանում... Ո՛ւֆ, պէտք է նամակ գրեմ, որ գայ։ Դու էլ գրիր։ Դու էլ խօ սիրում ես նրան։

Աշխէնը վերկացաւ և պինդ փակեց լուսամուտի վառ փակած փեղկը, որ քամին շարժում էր։

—Յետոյ գո՞ծը,—հարցրեց նա, նստելով Եւայից հեռու, մի ուրիշ աթոռի վրայ, այնպէս, որ նրա դէմքը լոյսի հակառակ կողմն էր։

—Ա՜խ, այդ է, որ ինձ յուսահատեցնում է,—բացականչեց Եւան։—Ես գիտեմ, որ այն գործը, որի համար գնացել է նա, աւելի է սիրում, քան թէ ինձ, քեզ, հայրիկին, մայրիկին, Սուրէնին... Ցիշում ես, ինչպէս ոգևորուած խօսում էր նա այդ մասին...

—Եւ մթթէ դրա համար դատապարտում ես նրան։

—Ա՜խ, ոչ է ասում,—նեղսրտութեամբ արտասանեց Եւան։—Ես այս ասում եմ, որովհետև կարօտել եմ նրան, սաստիկ կարօտել, հասկանում ես, թէ ոչ։ Երևակայիր, որ նա այնտեղ մենակ է, բոլորովին մենակ. ոչ մի, ոչ մի սրտակից չունի մօտը։—Չէ՞ որ հազար ու մի ձախորդութիւններ կան, հիւանդութիւն կայ... Վերջապէս, այնտեղ, ինչպէս երևում է, ծանր խառնակութիւններ են տիրում... Մթթէ այս բոլորի մասին կարող եմ հանդիստ մտածել։

Աշխէնը, ինքն էլ չիմացաւ թէ ինչպէս, վերկացաւ, մօտեցաւ նրան, պինդ գրկեց նրա գլուխը և քիչ մնաց, որ լաց լինի։ Նա անհուն սիրով ու քնքշօրէն համբուրեց Եւայի շրթունքները և նորից նստեց իր առաջուայ տեղը, Եւայի մօտ։

—Երբէք, երբէք քեզ այնպէս չեմ սիրել, ինչպէս այս բոպէիս,—կամաց, շատ կամաց արտասանեց նա, առնելով Եւայի ձեռքերը և պահելով իր ձեռքերի մէջ։—Չես կարող երևակայել, թէ որքան դգացուած եմ այս բոպէիս, որ եղբօրդ համար այդպէս հոգում, այդքան մտածում ես։ Հոգա, մտածիր, սիրելիս, որովհետև եղբայրդ այնքան... անգին եղբայր է, որպիսին... ոչ ոք չունի։ Ինքս հոգով չափ... յարգել եմ նրան և երկիւղածութեամբ խոնարհել նրա հաստատուն կամքի և այն դաղափարների առաջ, որ նա այնպէս ջերմ կերպով պաշտպանում, այնպէս ոգևորութեամբ քարոզում էր։ Անձնուրացութիւն թշուառի բարօրութեան օգտին

անձնազոհութիւն հայրենիքի համար—այս էր նրա քարոզը։ Եւ այդ ոչ թէ լոկ խօսքով, այլ և գործով, որ նա այժմ ապացուցանում է։ Խօսքը գործով ապացուցել—այդ այնպիսի մի հերոսութիւն է, որպիսին ուր էր, թէ ամենքն ունենային։ Այս բոպէիս ինչ որ գիտեմ, ինչ որ սովորել եմ և ինչ որ ուզում եմ անել, այդ բոլորի համար մեծապէս պարտական. եմ նրան։ Եւ եթէ գիտենաս, սիրելիս, որքան հպարտանում եմ, որ նա իմ մօտիկ ազգականն է, իմ հարազատը, իմ...

Աշխէնը լռեց և, Եւայի փոքրիկ ձեռքերը ցնցուղաբար սեղմելով իր երկայն մատների մէջ, տիրօրէն ժպտաց։

—Տեսնում ես, սիրելիս, ինչքան ոգևորուեցի,—արտասանեց նա։

—Երևում է, որ դու ինձնից աւելի ես սիրում եղբօրս,—ասաց Եւան, որ մինչև այդ ժամանակ անմեղ լրջութեամբ նայում էր Աշխէնի վառուած աչքերին, լայն, պարզ ճակատին։

—Մթթէ այդ յանցանք է... չէ՞ որ նա և իմ եղբայրն է։

—Ի հարկէ։ Նա էլ քեզ շատ էր սիրում։

—Դուցէ նախանձում ես։

—Նախանձում։ Ի հարկէ, չէի կամենալ, որ եղբայրս ինձնից պակաս սիրուէր, քան թէ քեզնից կամ մի ուրիշից, չնայելով, որ ես... Ա՜խ, ես նրան շատ եմ սիրում, Աշխէն, չափից դուրս շատ եմ սիրում... Ո՞ր գիտենաս՝ ինչքան վատ մտքեր էին պաշարում ինձ այս դիշեր, ինչքան վատ նախազգացումներ... Ո՛ւֆ, այլևս չպէտք է կարդամ այդ անիծուած հեռագրները...

Երկիւղի նման մի մռայլ բան անցաւ Աշխէնի դէմքի վրայով, և նա կաշկանդուած՝ մի բոպէ անթարթ

նայեց Եւայի տխրած աչքերին։ Յետոյ հազիւ նկատելի կերպով ցնցուեց և կամաց վերկացաւ տեղից։

—Դատարկ բան է,—արտասանեց նա, կարծես ինքն իրեն սրտապնդելու համար, և սկսեց անցուդարձ անել սենեակում։—Ճշմարիտ է, հեռագրներն այնքան էլ խաղաղ չեն ներկայացնում այնտեղի դրութիւնը, բայց... ոչ մի լուրջ առիթ չկայ երկիւղ կրելու... Վերջապէս, մի՞թէ պիտի յուսահատուենք և մեզ հետ նրան էլ յուսահատեցնենք։ Ինչի նման կըլինի այդ։ Եւ այդ ան ժամանակ, երբ դեռ ոչինչ չի արուած խնայելու, երբ գործը նոր է սկսւում... Այդ վախկոտութիւն և յանցանք կըլինի մեր կողմից, մեծ յանցանք, աններելի յանցանք... Ընդհակառակը, պիտի պէտք է տալ նրան, պէտք է խրախուսել, ամեն կերպ խրախուսել։ Եւ այդ պարտքն ամենից առաջ մեզ վրայ է ընկնում։ Մենք հպարտանում ենք, որ նրա պէս մի եղբայր ունինք։ Ինչու այնպէս չանենք, որ նա էլ մեզնով հպարտանայ։ Լինինք նրան արժանաւոր քոյրեր, և այդ էլ բաւական է, որ նա սիրտ առնի, ոգեւորուի։

Աշխէնը խօսում էր կարծես ինքն իր հետ, և նրա ձայնի մէջ լսւում էր ինչ-որ արտասովոր ջղայնոտութիւն։ Թեթև քայլերով նա անցուդարձ էր անում սենեակում և ամենևին չէր նայում Եւային։

Եւան աչքերով հետևում էր նրան սենեակի մի անկիւնից միւսը զարմացած։

—Մի՞թէ մենք նրա արժանաւոր քոյրերը չենք,—հարցրեց նա։

—Ո՛չ, մենք արժանի չենք նրա քոյրը կոչուելու։ Ինչո՞վ ենք արժանի։ Նրանո՞վ, որ նստած ենք անգործ, նրանո՞վ, որ պարապիտի դեր ենք կատարում, ուտում, պճնւում, պարում, զբօսնում ու սպասում, թէ ե՞րբ

պէտք է գայ մէկը, որ մեզ հաւանի ծախու ձիու պէս և մեր սանձից բռնած՝ տանի իր ախոռում կապելու։ Սրանո՞վ արդեօք, այս ամօթալի՞ կեանքով... Իսկ նա այնտեղ, անձնական ամեն հանգստութիւն, ամեն վայելք մոռացած, իր հարազատներից, իր սիրելիներից կտրուած, ձգել է իրեն կեանքի ահարկու յորձանքի մէջ, ապրում է՞ ո՞վ գիտէ ինչ պայմաններում, լուսացնում է՞ ո՞վ գիտէ որ ձորում, որ անտառում, օտար երկնքի տակ, ահը միշտ սրտում, մահը միշտ աչքի առաջ, բայց արհամարհելով այդ ահն էլ, այդ մահն էլ...

Աշխէնի ջղայնոտութիւնը սաստկացել էր։ Նա խօսում էր զսպուած, բայց խօսքերը նրա բերանից դուրս էին թռչում հատու և ուժեղ շեշտերով։ Նրա դըժգոյն դէմքի մկանունքները ձգձգւում էին։ Նա արագացրել էր քայլերը և առաջուայ նման չէր նայում Եւային։

Իսկ Եւան վեր էր կացել և մնացել էր արձանացած։ Նա պարզապէս ապշել էր, որովհետև երբէք Աշխէնին չէր տեսել այդպէս տաքացած։ Երբ Աշխէնը լռեց, նա դեռ երկար ժամանակ կանգնած իր նոյն դըրութեան մէջ, կարծես սպասելով, որ հօրեղբօր աղջիկը դեռ պիտի շարունակի իր ասելիքը։

—Աշխէն, լսիր ինչ եմ ասում,—վերջապէս ասաց նա, տեսնելով, որ Աշխէնն այլևս ոչինչ չի ասում և Ջղային քայլերով շարունակում է անցուդարձ անել սենեակի մի անկիւնից միւսը։—Տեսնում եմ, որ մի բան ուզում ես ասել, բայց չես ասում։ Միտքդ ինչ է. պարզ և ուղղակի ասա։ Դու գիտես, որ ես միշտ հետևում եմ քո խորհուրդներին։ Եթէ գտնում ես, որ ես պարապիտից և ծախու ձիուց աւելի մի բան չեմ և անարժան քոյր եմ եղբօրս համար, սովորեցրու, թէ ինչով կարող եմ արժանի լինել նրան։

—Միայն դու չես, ես էլ անարժան եմ նրան... Ես առաւելապէս...

—Լաւ, ինչո՞վ կարող ենք արժանի լինել նրան։

—Նրանով, որ մենք էլ գնանք նրա ընտրած ճանապարհով։

—Այսինքն։

—Չգիտեմ... Միայն թէ այսպէս ապրել այլևս անկարելի է։ Պէտք է ամենից առաջ վերջ տալ այս ձրիակերութեանը, պէտք է թողնել այս անօգուտ, այս վատ կեանքը, որի մէջ փտում ենք անգործութիւնից։ Պէտք է բան անել, պէտք է գործ շինել, օգուտ պէտք է տալ հէնց թէկուզ մեր խղճի հանգստութեան համար...

—Ես ամեն բանի պատրաստ եմ։ Բայց ասա, ի՞նչ անենք, ի՞նչ կարող ենք անել։

Աշխէնը յանկարծ կանգ առաւ և նայեց Եւային տարօրինակ հայեացքով. յետոյ մօտեցաւ և առաւ նրա ձեռքերը։

—Ներիր, սիրելիս, եթէ մի քիչ խիստ խօսեցի։ Բայց ես խօսում էի գլխաւորապէս իմ մասին։ Ինչ վերաբերում է այն բանին, թէ ինչ պէտք է անենք և ինչ կարող ենք անել,—այդ մասին այս րոպէիս ոչինչ չեմ կարող ասել։ Դեռ չեմ որոշել, դեռ պիտի մտածեմ։ Մի բան կայ, որ վաղը կըվճռուի։ Համբերութիւն ունեցիր մինչև վաղը։ Կըհամբերի՞ս, հա։

Եւան ապշած նայում էր Աշխէնի աչքերին, որոնց մէջ ինչ-որ խորհրդաւոր բան էր կարդացւում։

—Դու դրդռում ես հետաքրքրութիւնս,—ասաց նա։—Այս երեկոյ ուրիշ, շատ ուրիշ տեսակ ես երևում... Շատ լաւ, կը սպասեմ մինչև վաղը։

Աշխէնը ժպտաց և Եւայի փոքրիկ ձեռքերը քընքշութեամբ սեղմեց իր կրծքին, կարծես շնորհակալ

լինելով, որ նա համբերութիւն էր յայտնում մինչև վաղը սպասելու։

XIV

Հետևեալ օրը, վաղ առաւօտեան, Աշխէնը մի քանի տող նամակ գրեց և տուեց ծառային, որ շտապով տանի օր. Սահակեանին տայ, քանի նա դեռ ուսումնարանն գնացած չէր լինիլ։ Նամակը հետևեալն էր.

«Սիրելի Վարո.

«Ամբողջ գիշերը մտածելով եմ անցկացրել և ահա գրում եմ հետևանքը։ Արդեօք յարմար չե՞ս գտնիլ պ. Մինասեանին առաջարկել, որ վարժուհու պաշտօնն ինձ յանձնի իր բացած ուսումնարանում։ Շտապով յայտնում եմ քեզ այս մասին, որպէսզի թերևս աւելորդ գտնես ուրիշի հետ պայմանաւորուել։ Կուզէի, առանց մեր սովորական երեկոյեան տեսակցութեանը սպասելու, այսօր այս մասին խօսել քեզ հետ ուսումնարանում։ Միայն չգիտեմ, այսօր ազատ դաս ունի՞ս, թէ ոչ և եթէ ունիս՝ ո՞ր ժամին։ Գրիր։

«Քո Աշխէն»։

Կէս ժամից ծառան վերադարձաւ և օր. Սահակեանից բերեց հետևեալ պատասխանը, որ նա շտապով գրել էր Աշխէնի նամակի միւս երեսի վրայ.

«Եթէ նամակիդ հէնց սկզբումը գրած չլինէիր, թէ ամբողջ գիշերը մտածելով ես անցկացրել, կըկարծէի, թէ փառաւորապէս քնած ես եղել և փառաւոր էլ երազ ես տեսել։ Բայց և այնպէս, արի տեսնենք այդ ի՞նչ սիրուն քամի է փչել գլխիդ։ Այսօր ազատ եմ ժամը 11 ½-ի և 12 ½-ի միջև»։

Ժամը 11 ½-ից մի քանի րոպէ անց Աշխէնը բարձրանում էր ուսումնարանի սանդուղքով։ Դասարաններից լսւում էր դասամիջոցից յետոյ հէնց նոր ներս մտած աշակերտուհիների սովորական ճիչ ու ծկլթոցը. ուսուցիչներն ու ուսուցչուհիները՝ ցուցակները ձեռքներին, շտապում էին իրենց դասարանները։ Ուսուցչուհիներից մի քանիսի հետ ծանօթ լինելով, Աշխէնը բարևեց նրանց և նրանցից իմանալով, որ օր. Սահակեանն ուսուցչական սենեակումն է, գնաց նրա մօտ։

Օր. Սահակեանը մենակ էր։ Նա նստած էր կապոյտ մահուդով ծածկուած երկայն սեղանի առաջ, կաթով սուրճ էր խմում և լրագիր կարդում։

—Ա՜, եկա՞ր, դիւղական վարժուհի,—բացականչեց նա Աշխէնին տեսնելուն պէս։—Նստիր տեսնենք ամբողջ դիշերն ինչպէս ես մտածել։

Աշխէնը ժպտաց և նստեց նրա մօտ։

—Ուրեմն դու վճռել ես ինձ այսօր ազատել կռուելուց։

—Ո՞ւմ հետ։

—Այն վարժուհու, որի հետ պէտք է խօսէի այսօր։

Աշխէնը ծիծաղեց։

—Դէ՛հ, խօսէ՛ր, խօսէ՛ր,—անհամբերութեամբ վրայ տուեց օր. Սահակեանը, լրագիրը ձգելով սեղանի վրայ։—Սուրճ ուզո՞ւմ ես։

—Չէ, շնորհակալ եմ։

—Ես, իհարկէ, հասկանում եմ, սիրելիս, թէ որտեղից է ծագել վճիռդ, և այդ պատճառով այնքան էլ չեմ զարմանում։ Բայց հետաքրքրական է, թէ այժմ ինչ պիտի ասես ինձ։

—Առանձին ոչինչ չունիմ ասելու։ Միայն այս էի ուզում հարցնել, թէ ինչ պէտք է անեմ, որ ուսուցչութեան իրաւունք չունիմ։

—Այսինքն, ուզում ես ասել, ցանկի մէջ չկա՞ս։

—Այո։

—Այդ դատարկ բան է. մի օրում կարելի է թեմական առաջնորդից իրաւունք ձեռք բերել, բայց մի տարուայ համար միայն, որովհետև նա մի տարուց աւելի իրաւունք տալու իրաւունք չունի. իսկ այնուհետև վիկայականներդ կուղարկենք էջմիածին և այնտեղ ցանկի մէջ կըմտցնեն։

—Բայց չի՞ ուշանալ առաջնորդից իրաւունք ձեռք բերելը։

—Ասացի, որ մի օրում կարելի է։ Այդ կողմից հոգդ կաց։ Թեմական տեսուչն այստեղ է. ես ինքս կխնդրեմ, որ միջնորդի։ Նա ինձ հետ լաւ է։ Դու ուրիշ բան ասա։

—Յետոյ այս էի ուզում հարցնել, Վարո։ Ի՞նչ ես կարծում, ես... կարո՞ղ եմ արդեօք... ծառայել այն գործին որին վճռել եմ ինձ նուիրել։

—Այդ դու ինձնից աւելի լաւ պէտք է գիտենաս, սիրելիս. էլ ինձ հարցնելդ աւելորդ չէ՞։

—Չէ։ Բեզ հարցնում եմ, որովհետև դու փորձած ես և ճանաչում ես ինձ։ Գուցէ իմ մէջ կայ այնպիսի մի պակասութիւն, որ ես չեմ տեսնում, բայց դու կարող ես նկատած լինել իբրև դիտող։ Ուսուցչութիւնն ոչ սովորական ինձ չափից դուրս դժուար և պատասխանատու պաշտօն է ներկայանում, որին չեմ կարող թեթևութեամբ վերաբերուել։ Այդ պատճառով խիստ անվստահ եմ... վախենում եմ, որ ոչինչ չկարողանամ շինել և «օթահար մնամ Մինասեանի առաջ։ Այդ բանը պարզապէս անտանելի կըլինի ինձ համար, որովհետև ես հիւնդութեան չափ ինքնասէր եմ... Ահա այս

մասին է, որ Մինասեանին խօսք տալուց առաջ ուզում եմ իմանալ քո կարծիքը։

—Իմ կարծիքը։ Իսկոյն կասեմ,—ասաց օր. Սահակեանը, դատարկելով սուրճի մնացորդը։—Փորձառութիւնից, իհարկէ, շատ բան է կախուած. բայց ո՞ր ուսուցիչը կամ ուսուցչուհին կրթական ասպարէզ է մտել հէնց սկզբից փորձուած։ Ոչոք։ Մէկն էլ դու այդպիսիներից, չնայելով որ ուսուցչական ասպարէզում կարելի է քեզ մասամբ փորձուած համարել, քանի որ դու, ահա քանի ժամանակ է, մասնաւոր դասերով ես պարապում, իսկ չէ՞ որ այդ էլ այսպէս թէ այնպէս նշանակութիւն ունի ապագայ գործունէութեանդ համար։ Այդպէ՞ս է, թէ ոչ։

—Ճշմարիտ է։ Այս բոպէիս հինգ աշակերտուհի ունիմ, որոնց հետ ամեն օր պարապում եմ։ Հէնց սկզբից ուշադրութիւնս դարձած է եղել այն բանին, որ նրանց տարբեր ընդունակութիւնների մէջ մի ընդհանուր գիծ գտնեմ, որպէսզի դրա վրայ հիմնուած՝ կարելի լինի դասաւանդումը բոլորի համար միատեսակ դիւրամատչելի դարձնել։ Թէև այդ դեռ չի աջողուել ինձ, բայց թւում է, թէ անկարելի չէ։

—Օ՜, երբոր այդպէս է, դա մեծ նշանակութիւն ունի, սիրելիս։ Հէնց այդ ուշադրութիւնդ միայն, որ մեր, եթէ կարելի է այսպէս ասել, պաշտօնական վարժուհիների մէջ ճրագով պէտք է որոնենք, ցոյց է տալիս, որ դու օրինակելի վարժուհի կարող ես լինել։ Վերջապէս ուսուցչական պաշտօնին այդպէս պատկառանքով և երկիւղածութեամբ վերաբերուելդ մի՞թէ դրաւական չէ, որ պիտի առաջադիմես, որ դու իսկապէս գործ պիտի կատարես։ Ինքնասիրութիւնդ էլ, որ ասում ես, դա պակասութիւն չէ, դա առաւելութիւն է։ Ո՞ւր էր, թէ մեր վարժուհիներն այնքան ինքնասի-

բութիւն ունենային, որ գէթ կարմրէին, երբ տեսուչը նկատում է նրանց. «Օրիորդ, դուք բան չէք շինում», «օրիորդ, դուք միշտ ուշանում էք», «օրիորդ, դուք շուտ-շուտ էք հիւանդանում»։ Կրկնում եմ. գիտեմ որտեղից է ծագել վճիռդ և պէտք է ասեմ, որ աւելի խելացի կերպով չէիր կարող վարուել։ Ինչպիսի՜ եռանդ և աւելի մեծ տոկունութիւն պիտի ստանայ նա, երբ նմանայ, որ դու անմիտ և յուսահատ անգործութեան մէջ չես սպասում ժամանակդ...

Աշխէնի աչքերի կոպերը դողդողացին. նա պինդ սղմեց շրթունքները և դէմքը դարձրեց օր. Սահակեանից։

Օր. Սահակեանը տեսաւ այդ և հասկացաւ, որ աւելորդ էր հին յիշատակները նորոգել, ուստի շտապեց խօսքը փոխել։

—Ուրեմն այս երեկոյ կըլայտնեմ Մինասեանին քո աւաջարկը։ Նա, իհարկէ, կընդունի ամենայն ուրախութեամբ, և վաղուանից կանենք ամեն բան, ինչ որ հարկաւոր է։

—Բայց, իհարկէ, ռոճկի մասին ոչինչ չես ասիլ,—ասաց Աշխէնը։—Ինչ որ որոշուած է, ես նրանով էլ գոհ կըլինիմ։

—Գիտեմ, գիտեմ, որ դու «լաւ ապրելուց» նպատակով չէքաք է ծառայես, այդ գիտեմ։ Բայց դու ինձ այս ասա, սիրելիս. ձերոնց արդէն յայտնե՞լ ես վճիռդ։

—Դեռ ոչ։

—Եւ նրանք արգելք չե՞ն լինիլ։

—Զեմ կարծում։ Գիտես, որ տանն ինձ բաւական յարգում են։

—Գիտեմ. բայց ինչ ուզում է լինի, էլի քիչումիչ խորթ կըզուայ։ Հօրեղբայրդ—ոչինչ. նա յիմար մարդ չէ և շատ էլ բարի է. բայց նրա կինը...

—Նա էլ է ինձ յարգում, թէև բծախնդիր է և, կարծեմ... շատ էլ... չի սիրում ինձ։ Ասենք նա սահմանափակ և նախապաշարուած հասկացողութիւնների տէր կին է և եթէ անհամ խօսքեր ասի, չեմ նեղանալ։ Ես վախենում եմ միայն Եւայից. նա ինձ շատ է սիրում և կարող է յիմարութիւններ անել։ Երէկ երեկոյ մի քիչ նախապատրաստեցի նրան, բայց նա, երևի, մտքովն անգամ չի անցկացնում, որ ես կարող եմ հեռանալ իրենից։ Ինչևիցէ։ Յոյս ունիմ մերոնց հետ բանը վերջացնելու առանց խոշոր անհամութիւնների և ուրախ եմ, որ վերջապէս կարող եմ անկախ դիրք ստեղծել ինձ համար և ինքս իմ աշխատանքով ապրել, որովհետև վաղուց ի վեր ճնշւում եմ այն գիտակցութիւնից, որ ես մի տեսակ բեռն եմ հօրեղբօրս համար։

—Մեղք է, Աշխէն, այդ մի ասիր։ Հօրեղբայրդ...

—Գիտեմ, գիտեմ, որ նա շատ բարի է և իմ կերած մի կտոր հացը նրա համար ոչ մի նշանակութիւն չունի. բայց ես խօսում եմ իմ հոգեկան դրութեան մասին։ Ես չեմ կարող ուրիշի բարութիւնը շահագործել, թէկուզ այդ ուրիշը լինի իմ հարազատը։ Դա դէմ է իմ խղճին։

—Ինչքան դոռոզ ես, չնեղանաս,—նկատեց օր. Սահակեանը ծիծաղելով։

—Խօ ասացի, որ ես հիւանդութեան չափ ինքնասէր եմ, և դու այդ պակասութիւն չհամարեցիր, այլ առաւելութիւն,—պատասխանեց Աշխէնը ժպտալով և վերկացաւ։—Դէհ, հիմա ի՞նչ ենք անում։

Օր. Սահակեանը նոյնպէս վերկացաւ։

—Մեր անելիքն ահա թէ ինչ կըլինի,—ասաց նա։—Երեկոյեան կըգաս ինձ մօտ, Մինասեանի հետ երես առ երես կըխօսենք ինչ որ հարկաւոր է, նրա հետ բանը կըվերջացնենք, յետոյ վաղը կամ ես կամ նա

քեզ հետ միասին կըգնանք թեմական տեսչի և առաջնորդի մօտ, վկայականներդ կըներկայացնենք, ուսուցչութեան իրաւունք կըստանանք քեզ համար, յետոյ միւս օրը կամ չորրորդ օրը,—այդ քեզնից և Մինասեանից կըլինի կախուած,—կընստէք երկաթուղի և ճանապարհ կըընկնէք։ Այս է։

—Խօսքով ի՞նչ հեշտ է շինւում ամեն բան,—ծիծաղեց Աշխէնը։

—Անվստահներն են միայն, որ գործով էլ ոչինչ չեն կարողանում շինել։

Օր. Սահակեանը մինչև ուսուցչարանի բակի դուռը ճանապարհ ձգեց Աշխէնին, բակում էլի երկար խօսելով նրա հետ։

XV

Այդ գիշեր բաւական ուշ էր, որ Աշխէնն օր. Սահակեանի տնից վերադարձաւ իրենց տուն։ Նա մտաւ իր սենեակը, շտապով մօտեցաւ Եւայի սենեակի դռան, բաց արեց և ներս նայեց։

—Դեռ քնած չե՞ս, Եւա,—հարցրեց ուրախ ձայնով։

Եւան նստած էր սեղանի մօտ և լամպի լոյսի տակ գլխագրեր էր կարում թաշկինակի վրայ։

—Մի քիչ էլ որ ուշ դայիր, լաւ կանէիր,—ասաց նա չոր-չոր, առանց գլուխը կարի վրայից բարձրացնելու։

—Ի՞նչ անեմ, սիրելիս, ուզում էի վաղ գալ, բայց Վարօն զօրով պահեց ընթրիքի։

Այս ասելով, Աշխէնը գլխարկը վերցրեց, վերարկուն հանեց, մտաւ Եւայի սենեակը և նստեց նրա մօտ

ժպտուն աչքերով։ Պարզ երևում էր, որ նա արտասուոր ուրախ տրամադրութեան մէջ է։

—Ի՞նչ ջնասէր աղջիկ ես. ամենքը քնած են, իսկ դու դեռ նստած կարում ես։ Երևի ինձ էիր սպասում, հա՞։

Եւան չպատասխանեց. նա գլուխն աւելի կախեց կարի վրայ։ Նրա կեդրոնացած հայեացքից և սառն դէմքից երևում էր, որ նեղացած է Աշխէնից։

—Եւ դու չվախեցար այս կէս-գիշերին մենակ գալ,—նկատեց նա հանդիստ։

—Ո՞վ ասաց, թէ մենակ եմ եկել։ Ես ուղեկից ունէի, սիրելիս։

—Զէ՞ կարելի իմանալ ով էր ուղեկիցդ։

—Ինչո՞ւ չէ. նա մի գիւղատնտես է, որի հետ այս երկու օրս եմ ծանօթացել Վարոյենց տանը։ Դու ճանաչում ես նրան, թէև ամենևին չես տեսել նրան։

Եւան գլուխը բարձրացրեց, զարմացած նայեց Աշխէնի ժպտող աչքերին և նորից գլուխը կախեց կարի վրայ, առանց մի խօսք ասելու։

Աշխէնը կամաց ծիծաղեց։

—Սպասիր, այս վաղն էլ կարող ես կարել,—ասաց նա և Եւայի ձեռքից առնելով թաշկինակն ու ասեղը՝ դրեց սեղանի վրայ։—Նայիր աչքերիս։ Այդպէս։ Ինչո՞ւ չես հարցնում, թէ ով է այդ գիւղատնտեսը։

—Ի՞նչ հարցնեմ, քանի որ ինձնից թաքուն ինչ-որ բաներ ես բռնում այնտեղ,—առաջուայ պէս չորչոր պատասխանեց Եւան և ուզեց վերկենալ, բայց Աշխէնը բռնեց նրա ձեռքերից և պահեց իր տեղում։

—Կաց, մի փախչիր... և դարձեալ նայիր աչքերիս։ Այդպէս։ Ի՞նչ թաքուն բաներ։

—Ես ի՞նչ գիտեմ։ Երեկուայ տարօրինակ խօսակցութիւնդ, այսօր առաւօտեան վաղ գնալդ չգիտեմ ուր, այժմ այսպէս ուշ վերադառնալդ...

—Եւ դրա համար է, որ այդպէս փքուել ես, հա՞։

Եւան յանկարծ մի խիստ շարժում գործեց, և նրա աչքերը փայլեցին զայրոյթից։

—Լսիր, Աշխէն, եթէ դու կըշարունակես ինձ դարձեալ չարչարել և այս լոպէին չես ասիլ ամենը, Աստուած է վկայ, այնպէ՞ս կըխռովեմ, այնպէ՞ս կըխռովեմ, որ այլևս երբէք չեմ խօսիլ քեզ հետ։ Լսո՞ւմ ես։

Աշխէնը խոնարհուեց նրա դէմքի վրայ, ձեռքերն անցկացրեց նրա թևերի տակով և գրկեց նրա մէջքը։

—Լսում եմ, հոգեակս, լսում եմ։ Բայց վախենում եմ, որ եթէ բանը յայտնեմ, աւելի պինդ խռովես։

—Ո՜ւֆ, արդէն անտանելի է... Զեմ ուզում, էլ ոչինչ մի՛ ասիր։

Եւ Եւան, վերին աստիճանի զայրացած, աշխատեց ազատուել հօրեղբօր աղջկայ ձեռքերից, բայց Աշխէնը մատները հիւսեց իրար մէջ և թոյլ չտուեց, որ վերկենայ։

—Եւա՛ ջան, լսիր. այ, ասում եմ, լսիր։ Ես վըճռել եմ գիւղական վարժուհի լինել և մի քանի օրից յետոյ գնալու եմ գիւղը։

Եւան մի ակնթարթում սառեց նստած տեղը։ Նրա աչքերը սաստիկ մեծացան և յառած մնացին Աշխէնի շարունակ ժպտող աչքերի վրայ։

—Տեսնո՞ւմ ես, ասըշեցիր։ Այդ սկիզբն է,—ծիծաղեց Աշխէնը։—Այժմ լսիր մանրամասնութիւնները։

Եւ Աշխէնը սկսեց մանրամասնօրէն պատմել, թէ ինչպէս ծանօթացաւ Մինասեանի հետ, որին ինչպէս ինքը, նոյնպէս և Եւան արդէն ճանաչում էին նրա դրական երկերից. պատմեց, որ իրենց գիւղում նոր ուսուցիչարան հիմնելով, Մինասեանն եկել էր օր. Սա-

հակեանի միջոցով վարժուհի ճարելու. թէ ինչպէս օր. Սահակեանն անաջողութիւն էր կրել իր միջնորդութեան մէջ և թէ ինչպէս, վերջիվերջոյ, ինքը, Աշխէնը վճռել էր յանձն առնել յիշեալ ուսումնարանի վարժուհու պաշտօնը և այնուհետև ընդմիշտ նուիրուել այդ պաշտօնին։ Պատմեց նոյնպէս այդ օր առաւօտեան օր. Սահակեանի հետ ունեցած տեսակցութիւնը և այն, որ այդ երեկոյ օր. Սահակեանի տանը խօսակցութիւն էր ունեցել Մինասեանի հետ. Մինասեանը նրա առաջարկն ընդունել է ջերմ համակրանքով և շնորհակալութեամբ և խոստացել է վաղնեւթ աշխատել նրա համար ուսուցչութեան իրաւունք ձեռք բերելու։

—Այդպէս ուրեմն, Եւա ջան, երկու կամ, շատ-շատ, երեք օրից յետոյ մնաս բարեաւ կասեմ քեզ և կըգնամ այնտեղ, ուր յոյս ունիմ դէթ փոքր ինչ օգտակար լինելու։ Վարձն այսօր ինձ խիստ խրախուսեց։ Այժմ սպասում եմ քո դատավճռին։ Ի՞նչ կասես։

—Ես քեզ այն կասեմ, որ դու... խելագարուել ես,—ծանր ու հաստատ ձայնով արտասանեց Եւան, առանձնապէս շեշտելով վերջին բառը, և աշխատեց իրանն ազատել նրա ձեռքերից։

Բայց Աշխէնն աւելի պինդ գրկեց նրա մէջքը և ժպտուն դէմքն այնքան մօտեցրեց նրա դէմքին, որ նրանք զգում էին իրար շնչառութիւնը։

—Շատ կարելի է, իմ անգին, իմ աննման Եւա,—շշնջաց նա.—բայց մի՞թէ այսպիսի խելագարութիւնն արժանի չէ խրախուսանքի։

—Խելագարութիւնն առհասարակ կարեկցութեան է արժանի,—վրայ բերեց Եւան,—բայց քո խելագարութիւնը... Դու չպէտք է գնաս, հասկանում ես, թէ ոչ,—յանկարծ կանչեց նա բարկութեամբ և ոտը պինդ

խփեց յատակին։ Նրա աչքերի մէջ արտասուքի կաթիլներ ցոլացին։

Աշխէնն այս անգամ թողեց նրա իրանը. ժպիտը չքացաւ նրա դէմքից։

—Մի՞թէ կատակ չես անում, Եւա,—հարցրեց նա զարմացած։

—Ամենևին միտք էլ չունիմ կատակ անելու, քանի որ ինքդ կատակ չես անում։

—Հապա երէկ գիշերուայ մեր խօսակցութիւնը...

—Այո, երէկ գիշերուայ մեր խօսակցութիւնն այն մասին չէր, որ դու փախչես այստեղից, որ ինձ... մենակ թողնես։ Դու... դու անգութ ես։ Դու ինձ երբէք չես սիրել... այժմ էլ չես սիրում։ Այո, չես սիրում։

Եւան այլևս չկարողացաւ զսպել իրեն. նա դարձաւ աթոռի վրայ, գրպանից հանեց թաշկինակը, սեղմեց աչքերին և հեկեկաց։

Որքան էլ որ անակնկալ չէր Աշխէնի համար Եւայի այդ վարմունքը, այնուամենայնիւ սկզբում նա սառած մնաց։

—Դու ինձ խիստ զարմացնում ես, Եւա։ Բոլորովին չեմ հասկանում, թէ այդ ի՞նչ բացատրութիւն ես տալիս վճռիս և... լաց ես լինում։ Դա արդէն երեխայութիւն է։

—Ի հարկէ, երեխայութիւն կըլինի, քանի որ դու ինձ միշտ երեխայ ես համարել։ Ուզում ես ինձ հաւատացնել, թէ սիրում ես ինձ, մինչդեռ, ընդհակառակը, միշտ սառն ես վարուել ինձ հետ... Եւ ոչ թէ միայն ինձ, այլ և... հայրիկի հետ... մայրիկի հետ։ Կարծես թէ օտար լինիս մեր տանը, կարծես թէ մենք քեզ...

Եւան խօսքը չվերջացրեց և, թաշկինակն աւելի պինդ սեղմելով աչքերին, աշխատեց զսպել սաստկացող հեկեկանքը։

Աշխէնը դառնութեամբ ժպտալով, գլուխը շարժեց։

—Տեսնում ես, Եւա,—ասաց նա իրեն յատուկ հանդարտ ձայնով.—դու ինձ այնպիսի բաներ ես ասում և այնպիսի բաներ ես ուզում ասել, որ... չեմ կարող չվիրաւորուել։ Հարկ չկայ, իհարկէ, որ ինքս ինձ պաշտպանեմ. այդ կընշանակէր քեզ իրաւունք տալ այդպէս բաներ ասելու ինձ։ Ես միայն զարմանում եմ, թէ ինչպէս դու թոյլ ես տալիս քեզ այդպիսի մեղադրանքներ բարձելու ինձ վրայ։

—Հապա ինչու ես փախչում։

—Դէ, բաւական է կրկնես այդ յիմար խօսքը,—բացականչեց Աշխէնը յանկարծական բռնկումով։—Եւ թող այդ երեխայական լացն, ի սէր Աստուծոյ։ Երէկ դիշեր ինչպէս էինք խօսում, այժմ—ինչպէս։ Ուրախուրախ եկայ քեզ մօտ կատարելապէս հաւատացած, թէ պիտի քաջալերես ինձ, իսկ դու... դու միայն աշխատում ես ինձ վիրաւորել։

Եւ Աշխէնը սառնութեամբ վերկացաւ նրա մօտից։

Նոյն վայրկեանին վեր թռաւ տեղից նաև Եւան։

—Ես քեզ չեմ վիրաւորում, հասկանում ես, թէ ոչ,—զայրացած կանչեց նա։—Այդ դու ես, որ այդպիսի բացատրութիւն ես տալիս խօսքերիս։ Դու, իհարկէ, ազատ ես. ինչ ուզում ես, կարող ես անել. ուր ուզում ես, կարող ես գնալ։ Իսկ ես, իսկ ես... Այսքան տարի միասին ապրելուց յետոյ, յանկարծ թողնում հեռանում ես։ Եւ հիշատ ես կարծում, ինչ է, ինձ համար քեզնից բաժանուելը։ Եղբայրս գնացել է, դու էլ ես գնում, իսկ ես... իսկ ես ինչ անեմ մենակ։ Բուի պէս նստեմ դլուխս վմայ տամ։ Կամ ինձ էլ տար հետդ, կամ այստեղ ճարիր՝ ինչ գործ որ ուզում ես, միայն թէ ես քեզ մօտ լինիմ, դու ինձ մօտ լինիս, որովհետև առանց քեզ ես չեմ կարող դիմանալ։ Ես այդ եմ ու-

զում ասել, և ոչ թէ նպատակս է, որ քեզ վիրաւորեմ։ Եւ մի՞թէ իրաւունք չունիմ զայրանալու, որ դու, ինչպէս՞ տեսնում եմ, միայն քո մասին ես մտածել, իսկ իմ մասին—ամենևին։ Մինչդեռ երէկ դիշեր ինչ էինք խօսում... Հա՛, ժպտա, ժպտա. չէ՞ որ ես երեխայ եմ։

Աշխէնը ժպտալով մօտեցաւ նրան։

—Այո՛, սիրուն, խելացի, մեծ երեխայ, որի աչիկները կուզէի այս բոպէիս համբուրել։

—Խնդրեմ, թող այդ փաղաքշական խօսքերը,—զայրացած կանչեց Եւան։

—Մի նեղանար, սիրելիս։ Նեղանալով ու զայրանալով բան չենք հասկացնիլ իրար։ Աւելի լաւ է նստենք և հանդիստ խօսենք։ Նստիր։

Աշխէնը համարեա բռնի կերպով նստեցրեց Եւային և ինքը նստեց նրա մօտ։

—Ամենից առաջ քեզ մի բան ասեմ, Եւա ջան, չնեղանաս։ Դու եսասիրութեան նշաններ ես ցոյց տալիս. ուզում ես, որ փեշս փեշիցդ կարեմ և չբաժանուեմ քեզնից միմիայն նրա համար, որ առանց ինձ չես կարող դիմանալ։ Այդ նշանակում է, որ ես պէտք է քեզ համար զոհաբերեմ ոչ թէ միայն ինձ, իմ ձգտումները, իմ կամքը, այլ և այն գործը, որին յոյս ունիմ դէթ մաղի չափ օգուտ տալու։ Կուզեմ, որ այդպիսի բան անեմ։ Ի հարկէ, ոչ։ Բացի դրանից, մարդուն արդէն խօսք եմ տուել, այժմ մերժեմ, և կուզեմ, որ մերժեմ։ Ի հարկէ, ոչ։ Ասում ես, թէ քեզ չեմ սիրում։ Կարող ես կրկնել այդ խօսքերը ձեռքդ խղճիդ վրայ դրած։

Եւան նստած էր լուռ և աչքերը խոնարհած. նա պարզապէս ճնշուած էր Աշխէնի կարուկ խօսքերի ազդեցութեան տակ։

—Ինչ վերաբերում է այն բանին, թէ ես միայն իմ մասին եմ մտածել և քեզ մոռացել, այդ բանումն էլ սխալւում ես, Եւա Ջան։ Ի՞նչպէս կարող էի քեզ մոռանալ երբէկ գիշերուայ խօսակցութիւնից յետոյ։ Միայն այժմ չթողեցիր, որ քո անելիքի մասին էլ խօսեմ։ Դու էլ ես գործ ուզում։ Շատ բարի։ Ահա թէ դու էլ ինչ կարող ես անել։—Իմ գնալուց յետոյ վերցրու իմ աշակերտուհիներին և իմ տեղ դու դաս տուր նրանց։ Դու այդ կարող ես, որովհետև թէև փորձուած չես, բայց շատ շուտ կարող ես փորձուել, եթէ գործին սիրով կպչես, որի մասին տարակոյս չունիմ։ Նրանք բոլորն էլ, ինչպէս գիտես, շատ աղքատ ծնողների զաւակներ են, և ես նրանցից ոչ թէ միայն ոչինչ չէի առնում, այլ և չէի խնայում ունեցածս նրանց տալու։ Այդ դու նոյնը, ինչոր ես էի անում, և կըտեսնես, որ մի բարի գործ կատարած կըլինիս։ Բայց եթէ այդ բանը քեզ չնչին է երևում, կարող ես մի ուրիշ շատ օգտակար գործ էլ կատարել։ Մենք շատ ծանօթ ընտանիքներ ունինք, որոնց աղջիկները, որոնք քո մօտիկ ընկերուհիներն են, ոչ թէ միայն զուրկ են հայկական կրթութիւնից, այլ և հազիւ հայերէն խօսել ու կարդալ գիտեն։ Հաւաքիր հայութիւնից խորթացած այդ հարուստ աղջիկներին, շաբաթը մի կամ երկու անգամ դրական նրեկոյթի պէս մի բան սարքիր, կարդա նրանց մօտ հայերէն գրքեր, տուր այդ գրքերից, որ իրենք էլ կարդան, ծանօթացրու նրանց մեզ յուզող ազգային-հասարակական խնդիրների հետ, խօսեցէք, վիճեցէք... մի խօսքով՝ արա, ինչ որ կարող ես, որպէսզի օտար ոգւով կրթուած այդ ապագայ հայ մայրերի մէջ հայութեան, ազգային ինքնաճանաչութեան կայծ վառուի։ Մի սերմ, մի հատիկ սերմ էլ բաւական է, որ ձգես նրանց մէջ, և այնուհետև հաւատացած եղիր, որ այդ

սերմն երբէք ապարդիւն չի անցնիլ, ինչքան էլ փոքր, աննշան լինի։ Դա շատ էլ փոքր գործ չէ, եթէ կարողանաս դլուխ բերել։ Բայց ես համոզուած եմ, որ կարող ես, որովհետև նրանք ամենքն էլ սիրում են քեզ և սիրովաէլ կընդունեն քո առաջարկը։ Քեզ բաւական կընպաստի այն հանդամանքը, որ նրանք տգէտ չեն, և վերջին ժամանակներս մեր կեանքում երևան եկած շարժումներն անշուշտ փոքրիշատէ հետաքրքրութիւն են զարթեցրել նրանց մէջ։ Այս է իմ կազմած ծրագիրը քեզ համար։ Հաւանո՞ւմ ես։

Եւան խսկոյն չպատասխանեց։ Նրա դէմքը խիստ լուրջ արտայայտութիւն էր ստացել։

—Այդ բոլորը լաւ ես մտածել,—ասաց նա։—Միայն... այսպէս յանկարծ, այսպէս անպատրաստ... Ես ի՞նչ գիտեմ, որ ինչ սովորեցնեմ։

—Ուրեմն դու ինձ չհասկացար, Եւա Ջան։ Ես խօ չեմ ասում՞ կանոնաւոր դասընթացներ սարքիր, դասախօսութիւններ արա։ Ի հարկէ, դու այդ չես կարող անել։ Եւ թոյլ էլ չեն տալ։ Բայց խօ կարո՞ղ ես հայերէն պարզ գրել-կարդալ սովորեցնել, խօսել նրանց հետ հայերէն, օգնել նրանց իրենց չհասկացածը հասկանալու, ծանօթացնել նրանց մեր գրականութեան, մեր մամուլի, մեր գործիչների հետ։ Վերջապէս, գործն ինքը ցոյց կըտայ, թէ ինչ կարող ես անել և ինչ պէտք է անել։ Փառք Աստուծոյ, խօսել գիտես և սիրում ես, ինքդ խիստ հետաքրքիր ես և բնատուր ընդունակութիւն ունիս գրաւելու։ Սրանք այնպիսի առաւելութիւններ են, որոնցով դու հրաշք կարող ես գործել քո շրջանում։ Այժմ հասկացա՞ր ինձ, Եւա Ջան։

Եւան նստած էր լուռ։ Նրա կեդրոնացած հայեացքից երևում էր, որ նրա մտաւոր աչքերի առաջ յանկարծ բացուել է մի հորիզոն այնքան ընդարձակ,

այնքան նոր ու գրաւիչ, որ վախենում է մինչև անդամ հեռուն նայել չշշմելու համար։ Եւ երբ Աշխէնը կրկնեց իր վերջին հարցը, նա ասաց կարծես ինքն իրեն.

—Զարմանալի է. ինչու այդ բանն իմ գլխովս չի անցկացել մինչև այժմ։ Ես իսկ այդ կարող էի անել։

XVI

Զնայելով օր. Սահակեանի և Մինասեանի աշխատանքին, այնուամենայնիւ համարեա մի շաբաթ տեւեց, մինչև որ Աշխէնը ստացաւ ուսուցչուհութեան իրաւունք։

Եւան հօրն ու մօրը յայտնել էր Աշխէնի որոշումը, առանց սպասելու, որ Աշխէնն ինքը յայտնէ նրանց։

Մարութեանը, որ շատ լաւ էր ճանաչում եղբօր աղջկայ բնաւորութիւնն ու գաղափարները, այնքան էլ չզարմացաւ։ Բայց Թեկլէն սկզբում ապշեց, յետոյ խիստ դայրացաւ։

—Ինչպէ՞ս,—բացականչեց նա։—Նա վճռել է ուսուցչուհութիւն անել և այն էլ—գիւղում... Գժուի՞լ է, ինչ է, թէ՞ մեզ է ուզում խայտառակել։ Ով լսի, ինչ կասի։ Հացի ու ջրի կարօտ է մնացել, որ այդպիսի միջոցների է դիմում։ Տուն չունի՞, տեղ չունի՞, չենք պահում, դուրս ենք անում, որ ուզում է վարձկան վարժուհի դառնալ։ Տէր Աստուած, այդ աղջիկը խելքը կորցրել է բոլորովին։

—Բարկանալդ աւելորդ է, Թեկլէ,—նկատեց ամուսինը հանգիստ։—Աւելի լաւ է...

—Դո՞ւ ինչ ես ասում, չեմ հասկանում,—նրա վրայ էլ բարկացաւ Թեկլէն։—Օրը ցերեկով ուզում են մեր անունը խաղք ու խայտառակ անել, և դու ուզում ես, որ չբարկանամ էլ։ Ի՞նչ կասես, որ էգուցէլօր ամենքը վերկենան ու ասեն, թէ՝ այ, տեսաք, մի որբ ունէին, չպահեցին, դուրս արին, որ այսօր ստիպուած է գիւղերն ընկնել ապրուստի միջոց ճարելու համար։ Ես զարմանում եմ, որ դու այդ մասին իսկի չես մտածում։

—Զեն ասիլ, չէ, մի վախենար։

—Զեն ասիլ, չէ՞... Որ ասե՞ն։

—Զեն ասիլ, որովհետև ամենքը գիտեն, որ մենք նրան մեր հարազատ որդու պէս ենք պահել, և այնքան ճանաչում են նրան, որ կըհասկանան, թէ ինչու է նա գիւղը գնում վարժուհու պաշտօնով։

—Ես չեմ հասկանում ու, ուրիշը ո՞րտեղից կարող է հասկանալ։

—Ա՛յ, ես քեզ խսկոյն կըբացատրեմ։

—Հա՛, հիմա դու գնա ուրիշներին էլ բացատրիր, թէ բանն այդպէս չէ, այլ այսպէս է։

Մարութեանն այլևս չկարողացաւ զսպել իրեն. նա էլ իր հերթին բարկացաւ կնոջ վրայ։

—Դէ՛, երբոր այդպէս է,—բացականչեց նա,—մեր որդու համար էլ պէտք է ասեն, էլի, թէ չկարողացանք պահել, դուրս արինք, որ գլուխն առաւ կորաւ։

—Ասում են, բաս չեն ասում։

—Գլուխները քարոզ են տալիս, որ ասում են։ Այստեղ գործ կայ, ձգտում կայ, նպատակ կայ,—այդ ինչու չեն ասում։ Ամենքի ասէ-կոսէին որ ականջ դնենք, այդ ո՞ւր կըգնայ։

—Դու այդպէս ես ասում, բայց հէնց այդ ասա-կոսէն է, որ մարդու տուն է քանդում։

—Իսկի էլ չի քանդում։ Քեզ պէսներն են, որ, ասա-կոսէներին նշանակութիւն տալով, կարծում են, թէ այս է՝ տուները քանդուեց գնաց։ Փոխանակ ուրա-

խանալու և պարծենալու, որ Աշխէնի պէս լաւ ձրգտումների տէր մի որբ աղջիկ ես պահել մեծացրել, դու ինչ-որ յիմար ասէ-կոսէների մասին ես մտածում և ուզում ես արդելք լինել նրա ամենալաւ ձգտումներին։ Նա մեր անունը բարձրացնում է, և ոչ թէ խաղք ու խայտառակ անում։

—Դէ, դու որ այդպէս ես խօսում, ես էլ ինչ ասեմ,—նկատեց Թեկլէն և, սաստիկ ջղրած, դուրս գընաց, դուռը պինդ շրխկացնելով ետևից։

Նեան, որ մի կողմ քաշուած՝ ամենայն ուշադրութեամբ լսում էր հօր ու մօր միջև տեղի ունեցող այդ խօսակցութիւնը, մօր դուրս գնալուց յետոյ մօտեցաւ հօրը և լուռ համբուրեց նրան։

Հօր ու մօր միջև տեղի ունեցած այդ խօսակցութիւնը Նեան պատմեց Աշխէնին։ Աշխէնն ուրախացաւ, որ նա իրեն ազատել էր հօրեղբօրն ու նրա կնոջն իր տալիք ծանր բացատրութիւնից։ Նա տեսաւ, որ ամեն ինչ կատարւում էր այնպէս, ինչպէս կանխատեսել էր ինքը. հօրեղբայրը համակրում էր իրեն, նրա կինը հակառակ էր. իսկ Նեայի հետ արդէն վերջացրել էր բանը։ Այժմ մնում էր միայն ձևական թոյլտուութիւնը խնդրել Մարութեան ամուսիններից և Մինասեանի հետ ճանապարհ ընկնել։

Բայց այդ ձևական թոյլտուութիւնը խնդրելուց էլ նա ազատ մնաց, որովհետև նոյն օրնևեթ Մարութեանը նրա մենակ եղած ժամանակ մտաւ նրա սենեակը և ասաց իրեն ոչ-յատուկ լրջութեամբ.

—Նեան ասաց, որ վճռել ես վարժուհի լինել և այդ նպատակով գիւղն ես գնում, ճիշտ է։

—Այո, հօրեղբայր,—պատասխանեց Աշխէնն անհամարձակութեամբ—մի բան, որ երբէք չէր պատահել Մարութեանի հետ խօսելիս։ Նա նայեց հօրեղբօր

լուրջ, մինչև անգամ սառն դէմքին և զգաց, թէ յանցաւոր է նրա առաջ։

—Լաւ, երբ որ այդպիսի մի բան մտադրում և վճռում էիր, ինչու մի անգամ, գէթ ձևի համար, խորհուրդ չհարցրիր մեզնից,—նկատեց Մարութեանը, աշխատելով կարելոյն չափ մեղմ արտայայտութիւն տալ իր խօսքերին։—Փառք Աստուծոյ, օտար չենք, և մեր խորհուրդը եթէ օգտակար չլինէր, կարծում եմ, ճնշական էլ չէր լինիլ։ Համաձայնիր, որ դա վիրաւորական է մեզ համար։ Դու վարուել ես այնպէս, որ ուզենք, չուզենք, պէտք է կարծենք, թէ մեզ... բանի տեղ չես դրել։

Աշխէնը նկատելի կերպով կարմրեց։

—Ներեցէք ինձ, հօրեղբայր,—ասաց նա, աչքերը վայր թողած, բայց հանդիստ և հաստատուն ձայնով։—Ես կատարելապէս ղղում եմ, որ այնպէս չեմ վարուել, ինչպէս հարկն էր, բայց բանի տեղ չդնել... Դուք այդ խօսքերը չպէտք է արտասանէիք, հօրեղբայր... Այդ շատ ծանր մեղադրանք է ինձ համար...

—Լաւ, լաւ, մի յուզուիր այդպէս։ Ես ներողութիւն եմ խնդրում և յետ եմ վերցնում իմ խօսքերը։

—Ախ, ոչ, ինչպէս կարելի է... ես խօ այդ չէի ուզում ասել։ Ես ուզում էի խնդրել միայն, որ ինձ խնայէք և իզուր չդատապարտէք։ Ես, իհարկէ, պարտաւոր էի մտադրութիւնս յայտնել ամենից առաջ ձեզ։ Բայց եթէ մինչև այժմ այդ չեմ արել և խորհուրդ չեմ հարցրել ձեզնից, այդ,—Աստուած է վկայ, հօրեղբայր, հաւատում էք խօսքիս,—այդ նրա համար է եղել միայն, որ... քաշւում էի ձեզնից, յետաձգում էի, որովհետև ինքս իմ որոշմանս վրայ վստահ չէի։ Սակայն, ի հարկէ, վերջիվերջոյ պէտք է յայտնէի, խօ չէի կարող գնալ առանց ձեր խորհրդի, առանց ձեր օրհնութիւնը

ատանալու. չէ՞ որ այս բոպէին դուք էք իմ ծնողը և անչափ երախտիք ունիք ինձ վրայ։

—Ինչևիցէ, այդ թողնենք։ Այժմ, երբ խօսք է ընկել գնալուդ մասին, կարծում եմ, կարող ես պատմել, ինչ որ հարկաւոր է։

Աշխէնը հանգստացաւ և համառօտ կերպով պատմեց եղելութիւնը։

Մարութեանը մինչև վերջը լսեց նրան լուռ և ուշադիր և, երբ Աշխէնը վերջացրեց իր պատմութիւնը, կարճ ժամանակ մտախոհութեան մէջ ընկաւ, ապա վերկացաւ։

—Ե՞րբ ես գնում,—հարցրեց նա։

—Վաղը։

—Ա՛յ, տեսնում ես. դու ամեն բան արդէն վերջացրել ես և գնալու ես վաղը, իսկ ես մինչև օրս ոչինչ չգիտէի։ Այդպիսի բան կարելի՞ է, քեզ եմ հարցնում։ Եւ իրաւունք չես տալիս ինձ, որ նեղանամ։ Ինչևիցէ, այս էլ թողնենք։ Երկաթուղով ես գնալու չէ՞։

—Այո։

—Գիշերուայ գնացքով։

—Այո։

—Յեռոյ... Ինչ ես ասում հեռդ։

—Դէ, ինչ որ ունիմ։ Ինձ շատ բան հարկաւոր չէ։

Մարութեանն այլ ես ոչինչ չհարցրեց և ուղղուեց դէպի դուռը։

Աշխէնը նայեց նրա ետևից, մեքենայաբար մի քանի քայլ առաջ դրեց և կանգ առաւ։

—Հօրեղբայր,—շշնջաց նա անհամարձակութեամբ։

Մարութեանն արագ դարձաւ դէպի նա։

—Ի՞նչ է. բան ունիս ասելու։

Աշխէնն աչքերը վայր թողեց։ Նրա ականջների ծայրերը կարմիր վարդ էին կարուել։

—Ինձ թւում է, թէ... չաջողուեց ինձ արդարանալ ձեր առաջ։

—Ա՛յ քեզ բան,—բացականչեց Մարութեանը զարմացած։—Եթէ գիտենայի, որ դու այդ աստիճան կասկածամիտ ես, գի՞ժ էի, ինչ է, որ արտասանէի այն խօսքերը։ Ի՞նչ մի մեծ յանցանք ես գործել, որ դեռ արդարանալու էլ կարիք ես զգում։ Կը նշանակի ինձ դեռ լաւ չես ճանաչում, աղջիկս,—աւելացրեց Մարութեանը, մօտենալով նրան։—Դու գիտես, որ ես քեզ իմ Եւայից ոչնչով չեմ զանազանել և, բացի դրանից, յարգել եմ քեզ, յարգել եմ քո կամքը, քո ազատութիւնը, որովհետև գիտեմ, որ դու երեխայ չես, որ դու խելօք աղջիկ ես և գիտես, թէ ինչ ես անում։ Այժմ էլ ամենայն յարգանքով եմ վերաբերւում քո կամքին, քո ազատութեանը։ Եթէ հէնց սկզբից ներշնչած չլինէիր ինձ այս յարգանքը, որ տածում եմ դէպի քեզ, և այն համոզումը, որ դու առանց լուրջ կերպով կշռադատելու ոչինչ չես անիլ,—ճիշտը քեզ ասեմ, երբէք թոյլ չէի տալ, որ հեռանաս իմ տնից, որովհետև թոյլ տուր նկատեմ, որ ծնողների վերահսկողութիւնն ինչքան էլ որ ծանր թուայ որդիներին, այնուամենայնիւ հարկաւոր է, շատ անգամ ուղղակի անհրաժեշտ է նոյնիսկ լրջոց, որդիների համար։ Բայց քանի որ այդ յարգանքն ու համոզումը դու մի անգամ ընդմիշտ ներշնչել ես ինձ, ես աւելորդ եմ համարում խառնուել քո գործերին. դու կատարելապէս ազատ ես ցանկացածդ անելու։ Եթէ սկզբում մի քանի աւելորդ խօսքեր ասացի, այդ պէտք է վերագրես իմ բարութեանը և այն բանին, որ վճիռդ ինձ մի տեսակ յանկարծակիի էր բերել։ Այս դէպքում, որ դու վարժուհու պաշտօնով գիւղ

ես գնում, ես կարող եմ միայն իմ անկեղծ համակրութիւնը յայտնել, խրախուսել քեզ, օրհնել ճանապարհդ իբրև հայը և ի սրտէ աջողութիւն մաղթել գործիդ։ Գնա, որդիս, գնա այն ճանապարհով, ինչ ճանապարհով որ գնացել է որդիս, և Թող Աստուած անբաժան լինի քեզնից։

Աշխէնը կամաց խոնարհուեց, առաւ հօրեղբօր ձեռքը և սեղմեց շրթունքներին։

Մարութեանը դպաց, որ արտասուքի երկու աչք կաթիլ ընկաւ իր ձեռքի վրայ։ Նա թեթև կերպով ցնցուեց, խոնարհուեց, համբուրեց Աշխէնի մազերը դաղաթի վրայ, ձեռքը դուրս քաշեց նրա ձեռքի միջից և շտապով դուրս գնաց, մի տարօրինակ փափաց արձակելով քթից։

XVII

Գիշերուայ ժամը երկուսից անց էր։ Մարութեանների տանը վաղուց արդէն ամենքը քնած էին։ Այդ ժամին Աշխէնն էր միայն արթուն։ Նա նստած էր իր սենեակում և նամակ էր գրում։ Կնոջ գրին յատուկ բարակ, փաքրիկ, իրարից բաժան-բաժան գրերն արագարագ շարուում էին իրար ետևից, լցնելով պոստի թղթի ամբողջ երեսները։ Նա գրում էր համարեա առանց կանգ առնելու, կարծես գրելիքն առաջուց անգիր էր արել։ Մաղերից մի երկայն, բարակ փունջ կախ էր ընկել թղթի վրայ, և ստուերը խաղում էր ձախ ձեռքի վրայ, որով պահում էր թուղթը։ Նամակը վերջացնելուց յետոյ, ստորագրութեան տեղ խաչ դրեց, յետոյ կարդաց սկզբից մինչև վերջը, մի քանի տեղ շտապ դրելուց բառեր էր բաց թողել՝ ուսուցրեց, մի քանի տեղ էլ բառեր էր կրկնել՝ ջնջեց, փակեց ծրարի մէջ,

հասցէն գրեց և պահեց սեղանի վրայ գրուած գրքերից մէկի մէջ։

Անկողին մտնելով, խկոյն չկարողացաւ քնել, չնայելով որ դիշերից արդէն բաւական անցել էր և ինքն էլ այդ օրը շատ յոգնած էր զգում։ Ինքնագոհանում էր այն սովորական անհանգիստ դրութեան մէջ, որի մէջ լինում է նա, որին կեանքի նոր եկամակ, նոր ասպարէզ է սպասում, որը շուտով գիտի թողնի իր ծննդավայրը, տունը, տեղը, ծանօթ սրտակից անձերը և առաջին անգամ պիտի գնայ ուրիշ անծանօթ տեղ, ուր մարդիկ և իրեր ներկայանում են երևակայութեան ստեղծած ուրոյն կերպարանքով։ Ինչպէս որ թախիծ էր զգում որտի մէջ, անորոշ, ծանր թախիծ, ինչպէս այն մարդը, որ իր ամբողջ էութեամբ ձգտում է ինչ-որ անհասկանալի և անորակելի երջանկութեան, բայց միևնոյն ժամանակ համոզուած է, որ այդ երջանկութիւնը անհասանելի ցնորք է միայն։ Նա դէմքը թաղեց բարձի մէջ, և նրա մաքերը կենդրոնացան այն անձի վրայ, որի ձեռքը պիտի հասնէր նամակը։ Երբեք այդ անձի պատկերը չէր ներկայացել նրա աչքերի առաջ այնպէս վառ ու կենդանի, ինչպէս այժմ։ Նա մտքում կրկնում էր նամակի այն կտորները, որոնք անմիջական զեղուն էին այն վառ զգացմունքի, որ նա այնքան ժամանակ զսպում էր յուսահատական տանջանքով։

Լուսագէմին հազիւ կարողացաւ քնել։ Քունը շատ անհանգիստ էր։ Ուղեղը դեռևս շարունակում էր գործել, ինչպէս ձգուած լարը, որը մի անգամ ուժգին շարժուելուց յետոյ, դեռ երկար ժամանակ ցնցումներ է զգում, չկարողանալով միանգամից հանգստանալ։ Նամակի բառերը շարուում էին նրա ուղեղի մէջ անկապ, անորոշ, տանջող կերպով։

Զնայելով, որ ուշ քնեց, բայց և այնպէս վերկացաւ սովորականից վաղ. պէտք է գնար օր. Սահակեանի մօտ իր ուղևորութեան մասին մի քանի կարևոր բան հարցնելու. շտապում էր, որպէսզի օր. Սահակեանին տանը գտնի, այլապէս հաղիւ թէ այդ օր այլևս ժամանակ ունենար նրան առանձին տեսնելու, որովհետև ճանապարհի պատրաստութիւններ պիտի տեսնէր։

Տանը դեռևս ամենքը քնած էին։ Աշխէնը շտապով լուացուեց, հագնուեց, առաւ գիշերը գրած նամակը, որպէսզի օր. Սահակեանի մօտից վերադառնալիս ձեռքով պոստ ձգի, և դուրս գնաց։

Նրա գնալուց մի քառորդ ժամ յետոյ, յաւուպար աչքերով ծառան, երբ երկար խոզանակը ձեռքին՝ աւելում էր նախասենեակի սանդուղքը, փողոցի դռան մօտ նամակի մի ծրար գտաւ։ Վերցրեց ծրարը, դէս շուռ տուեց, դէն շուռ տուեց, նայեց վրան գրուած հասցէին և, որովհետև կարդալ չգիտէր, բան չհասկացաւ։ Նա զարմացաւ միայն, թէ ինչու պոստային ցրիչը ծրարը չէր ձգել նամակների և լրագիրների համար դռան վերայ շինուած արկղիկը, ինչպէս անում էր միշտ, այլ ներս էր ձգել դռան ճեղքից։ Սակայն դուռը դիտելով, տեսաւ, որ չկար այնպիսի մի ճեղք, որտեղից կարելի լինէր ներս ձգել այդքան հաստ ծրարը, ուստի այդ բանի վերայ էլ զարմացաւ։ Նորից մանրամասնօրէն զննեց դռան չորս բոլորքը և, վերջապէս, այն եզրակացութեան եկաւ, որ ծրարը կարող էր ներս ձգուած լինել դռան տակից, որովհետև այդտեղ կէս մատնաչափ բացուածք էր մնում։ Զարմանքը փարատելուց յետոյ, ծրարը ծոցը դրեց և շարունակեց սանդուղքն աւելել։

Որովհետև այդօր, ըստ սովորականին, հօրից ու մօրից վաղ վեր էր կացել Եւան, ուստի ծառան պատ-

նամակը նրան յանձնեց, յայտնելով, թէ որտեղ էր գտել։

Եւան նայեց հասցէին և իսկոյն ճանաչեց Աշխէնի գիրը։ Նամակն ուղղուած էր իր եղբօրը—Արմենակին։ Ծառայից իմանալով, որ Աշխէնը դուրս է գնացել վաղ առաւօտեան, իսկոյն գլխի ընկաւ, որ ծրարը պատահմամբ ընկել է նրա գրպանից։

Այս դէպքը չափազանց զարմացրեց Եւային։ Նա գիտէր, որ Աշխէնն երբէք իր կողմից առանձնապէս նամակ չէր գրել Արմենակին։ Մարութեանների կողմից հեռացած որդուն յաճախակի գնացող նամակները սովորաբար գրում էր կամ ինքը Մարութեանը, կամ Եւան,—առաւելապէս վերջինս,—իսկ ընտանիքի միւս անդամներն իրենց կողմից մի քանի խօսքով բարևներ էին աւելացնում իրենց ստորագրութեամբ, այնպէս որ այդ նամակներն ընդհանուր բնաւորութիւն ունենալով հանդերձ, բովանդակութիւնն էլ յայտնի էր լինում ամենքին։ Այս հանգամանքն ի նկատի ունենալով, Եւային խիստ անախորժ թուաց Աշխէնի ծածկամտութիւնը, որը նա պարզ կերպով տեսնում էր թէ գրուած նամակի փակ ծրարից և թէ այն բանից, որ Աշխէնը չէր յայտնել, թէ ինքը նամակ է գրելու կամ արդէն գրել է Արմենակին և, ինչպէս երևում է, ամենևին չպէտք է էլ յայտնէր, որովհետև պարզ է, որ նամակը գրել է ծածուկ և վերցրել է իր հետ, որ պոստը ձգի, յատկապէս դրա համար դուրս գնալով տնից այն ժամանակ, երբ ամենքը քնած են եղել։ Բայց ինչ է գրել նամակի մէջ, որ կամեցել է ծածուկ պահել։ Այս հարցն ահագին հետաքրքրութիւն զարթեցրեց Եւայի մէջ, այն աստիճան, որ քիչ մնաց ծրարը պատռէր և նամակը կարդար։ Հազար ու մի կասկածներ անցան նրա գլխով, մէկը միւսից վատ, յուզող և կրքոտ։

XVIII

Լսունց զանգակի և ապա զգուշանոր քայլերի ձայն։ Եան իմացաւ, որ Աշխէնն է։ Այդ միջոցին նա սանրում էր մազերը։ Էլ չանցաւ, որ վերջացնի, անմամբերութեամբ դէն շպրտեց սանրը, շտապով առաւ դամակի ծրարը և դուրս գնաց հօրիզրծը աղջկայ ներսակը։

Երբ նա մտաւ, Աշխէնը շտապով և նկատելի անհանգստութեամբ ինչ-որ բան էր դրոնում գրասեղանի վրայ դարսուած գրքերի մէջ։ Եանը տեսնելուն պէս ինքնուրոյն ոչի շտապ ու անհանգիստ դրոնումը դադարեցրեց։

Եան տեսաւ այդ և ոչինչ չգնաց։ Կարճ ողջունելուց ու փոքրիկ հանգստքով նայեց Աշխէնին, յետոյ հարցրեց ձանր ու հանգիստ ձայնով.

— Այդպէս վաղ ուր էիր գնացել։

— Ուզում էի գնալ Վարոյի մօտ։

— Ուզում էիր գնալ։ Չգնացիր։

— Չէ։ Կէս ճանապարհից յետ դարձայ։

— Խնչպէս։ Նա քեզ մօտ մի գիրք ունի, ուզում էի, որ հետս վերցնեմ իրեն տալու... Չգտնեմ։ Գիրքս գտանեմ։

Եան ոչինչ չասաց։ Նրա վրայ կատարուած ապաստարանի գործից այն հանգամանքը, որ Աշխէնը սուտ էր ասում, որ Վարոն նրա մօտ ոչ մի գիրք չունէր և ամենևին գիրքի համար չէր յետ եկել։ Եան ոչինչ չասաց, միայն Աշխէնը առանց հարցնելու, միայն նրա լուռ թիւնից զգաց, որ նա հաւատացաւ իր սուտին և կարմրեց։

[illegible]

Աշխէն, — վերջապէս ասաց Եան զսպած ձայնով — [illegible]

Աշխէնի շարադրանքը դէմքը [illegible] դժգունեցաւ։ Ներսից բայց [illegible] դուռնից։

— Ե՞ս — [illegible] թէ խիստ զարմացած է։

— Այդ, ասաց — [illegible] Եան և համարձակ [illegible] ձգեց նրա վրայ։ — Ինչպէս ուզիր դա [illegible] մակն ես կորցրել և [illegible]

Եւ, դրպանից հանելով [illegible]

Աշխէնը մեքենայաբար [illegible]

Մի ակնթարթում նրա դէմքը [illegible] նայեց ծուռերին [illegible] քաշեց։

— [illegible] դէմքի փոփոխութիւններին։

— Այդ [illegible]

— Ուրեմն սուտ չէիր [illegible]

— Սուտ էի ասում։ [illegible]

— [illegible]

[illegible]

— [illegible]

[illegible]

դուռն մօտ գտել և յանձնել է ինձ, այնպէս էլ քեզ եմ դարձնում։

—Հապա ինչո՞ւ ես ասում ալդպիսի նամակ։

—Հապա ինչո՞ւ դու այդպէս այլայլւում ես։

Աշխէնը նկատելի տանջանքով դէմքը շրջեց Եւայից։

—Եւա, ասա միանգամից, ինչ որ ասելու ես. տեսնում ես—տանջւում եմ։

—Իսկ ինչո՞ւ ես տանջւում։ Որովհետև զգում ես, որ մեղաւոր ես, չէ՞. որովհետև ինքդ էլ հասկանում ես, որ գրածդ... զրպարտութիւն է, չէ՞։

Աշխէնը տարակուսանքով նայեց Եւայի զայրացկոտութիւնից վառուող աչքերին։

—Զրպարտութիւն...

—Այո՛, զրպարտութիւն,—շեշտեց Եւան, ձայնը բարձրացնելով։—Ի՞նչ է. չլինի՞ թէ ուզում ես ուրանալ, որ զրպարտութիւն չես գրում այդ նամակի մէջ։

—Ի՞նչ զրպարտութիւն, Եւա... ո՞ւմ մասին։

—Մեր մասին։

—Ձեր մասի՞ն...

—Այո՛, մեր մասին—հայրիկի մասին, մայրիկի մասին, վերջապէս—իմ մասին։

Աշխէնն ապշութիւնից մինչև անդամ ժպտաց։

—Ի՞նչ ես ասում, Եւա...

—Ի՞նչ է. սուտ է՞, որ այդ նամակի մէջ չես գանգատւում, թէ մենք ճնշում, նեղում ենք քեզ, թէ մենք ամեն բոպէ երեսովդ ենք տալիս մեր բարերարութիւնը, և դրանից է, որ փախչում ես...

—Աստուած է վկայ, Եւա, դու գժուել ես այսօր։

—Ես չեմ գժուել, այլ ճշմարտութիւնն եմ ասում։ Եթէ դու լաւ աղջիկ ես, եթէ որևէ բանի համար նեղացած ես մեզնից, ուզղակի մեզ կըյայտնէիր գժգոհութիւնդ, և ոչ թէ զրպարտութիւններ գրելով կաշխատէիր Արմենակին կռուեցնել մեզ հետ։

—Ե՛ւա, այդ դո՞ւ ես... այդ յիմարութիւնները դո՞ւ ես ասում։

—Մենք քեզ ոչինչ չենք արել։ Մենք մինչև անդամ ամեն կերպ աշխատել ենք քեզ հետ վարուել այնպէս, որ դու ամենևին չզգաս, թէ մեր տանն ապրում ես իբրև բարերարուած մի որբ, իսկ դու... Դու վատ աղջիկ ես... Դու... դու ապերախտ ես...

—Դէ, բաւական է, Եւա,—աղաղակեց Աշխէնը ծանր վիրաւորանքի յանկարծական բռնկումով, և նրա աչքերը փայլեցին կատաղի զայրացկոտութեամբ։—Ինչպէ՞ս ես համարձակւում ինձ այդպիսի բաներ ասել... Յիմա՛ր, կոպի՛տ, անտա՛ռ։ Ի՞նչ է նշանակում բարերարուած որբ... Ի՞նչ է նշանակում ապերախտ... Հասկանո՞ւմ ես այդ բառերի իմաստը... մտածո՞ւմ ես, թէ որքան վիրաւորական է այդ ինձ համար... Այդ բառերը որ մտքովդ անցնում են, ի՞նչպէս լեզուդ զօրում է արտասանել... Ես խօ կը մորթէի ինձ, եթէ առաջուց իմանայի, որ ինձ վրայ այդպիսի աչքով էք նայում... Ես կը գնայի մուրացկանութիւն կանէի փողոցում և, եթէ քաղցած մեռնելիս լինէի, ձեր հացը կուտէի միմիայն նրա համար, որ խեղդուէի... Ա՛խ, Եւա, Եւա, այս ինչո՞ւ ես ասեցնել տալիս ինձ, այս ինչո՞ւ ես ասեցնել տալիս,—հառաչեց Աշխէնը և, նստելով սեղանի մօտ, գլուխը սեղմեց ձեռքերի մէջ անտանելի տանջանքով։

Եւան տեղնուտեղը ցամաքել էր։ Պարզ երևում էր, որ ամենևին չէր սպասում, թէ իր խօսքերը կարող են այդպիսի փոթորիկ առաջ բերել։ Նա ուզեց խօսել, արդարացնել իրեն, բայց խօսելու տեղ յանկարծ լաց եղաւ։

Աշխէնը նայեց նրան տարակուսանքով, ուսերը վեր քաշեց և գլուխը նորից սեղմեց ձեռքերի մէջ։

—Հապա ինչո՞ւ նամակը ծածուկ էիր պահում,— ասաց Եւան հեծկլտալով, թաշկինակն աչքերին սեղմած։

—Որ դաղտնի էլ պահում, նշանակում է, թէ դրպարտութիւնն՞ էր դրել ձեր մասին, և դու իրաւունք ունես ինձ վիրաւորելու,—նեղասեց Աշխէնն այս անգամ հանդիսաւոր ձայնով։

—Մեղաւո՞ր եմ, որ ծածկամտութեանդ համար այդ ենթադրութիւնն եմ արել։

—Շատ վատ ես արել։ Մեծ յիմարութիւն ես արել։ Ինչո՞ւ հակառակ ենթադրութիւնը չէիր անում։ Չէ՞ որ ձեզնից շնորհակալ լինելու և ձեզ գովելու դէպքում էլ համեստութիւնս չէր թոյլ տալ ինձ, որ նամակս ցոյց տայի ձեզ։ Ինչ որ հասատատ գայանի չէ, անպատճառ պէտք է վատ մտքով թաղարել։

Աշխէնը խօսում էր հանդիսաւոր, բայց վերջին անգամի դանդաղած։ Եւան դադարել էր հեծկլտալուց և մնացել էր արձանացած։ Նա լսողի դիրքում էր իր յանցանքը, ամաչում էր և չէր իմանում ինչպէս անի, որ ուղղի իր սխալը։

Աշխէնը յանկարծ վերկացաւ, ուղղեց գլխարկը, նամակը գրպանը դրեց և դիմեց դէպի դուռը, առանց մի խօսք անդամ ասելու։

Եւան անհամարձակօրէն նայեց նրա թեւից։

—Դու գնո՞ւմ ես,—հարցրեց կամաց։

—Այո։

—Ո՞ւր։

—Վարօյի մօտ։

—Սպասիր մի րոպէ։

—Աշխէնը կանգ առաւ դռան մօտ։

—Բան ունիս ասելու։

—Այո։

—Ի՞նչ։

Եւան խակոյն չպատասխանեց։ Նայում էր յատակին և թաշկինակը ճմռում էր ձեռքին։

—Խնդրում վիրաւորուեցիր ինձնից,—հարցրեց վերջապէս։

Աշխէնը զարմացած դարձաւ դէպի նա։

—Դեռ հարցնո՞ւմ ես։ Կեանքիս մէջ ոչոք չի վիրաւորել ինձ այնպէս, ինչպէս դու։

—Եթէ ներողութիւն խնդրեմ...

—Ի՞նչ օգուտ, երբոր արդէն փշրեցիր սիրտս։

—Ուրեմն... ուրեմն այս դիշեր խոռոմած պիտի բաժանուես ինձնից։

—Ինչո՞ւ խոռոմած։ Երեխայ եմ, ինչ է։ Բայց քեզ հետ այսուհետև շատ խիստ կը վարուեմ, որպէսզի ինձ յարգես։

Եւան յանկարծ զայրացած ոտը պինդ խփեց յատակին։ Արձակ մաղերից մի երկայն փունջ թռաւ ուսի վրայից և ընկաւ կրծքի վրայ։

—Ես քեզ չեմ յարգում, որ այդպէս ես խօսում,—բացականչեց արտասուքն աչքերին։—Աւօ հասկանում ես, որ վիրաւորեցի անգիտակցաբար, վիրաւորեցի իմ յիմարութիւնից, և զղջում եմ։ Ուրիշ ի՞նչ ես ուզում։

—Ես ուզում եմ, որ սովորես նախ լաւ մտածել և ապա ասել այն, ինչ որ ուզում ես ասել։

—Այսուհետև այդպէս կանեմ, հիմա։

—Վախենում եմ, որ այդպէս չանես, եթէ խիստ չվարուեմ քեզ հետ։

Եւան զսպած զայրացկոտութեամբ դէմքը դարձրեց նրանից։

—Գնա, լաւ. այլևս հարկաւոր չէ քո ներումը, քանի որ, ինչպէս երևում է, ընդունակութիւն չունիս

անկեղծությունը հասկանալու,—ասաց, կրծքի վրայ ընկած մազերի փունջը բարկացած յետ ձգելով։—Դու պեղանտ ես, և ես զարմանում եմ ինձ վրայ, թէ ինչպէս կարողացել եմ քեզ այսքան սիրել, քանի որ մեր բնաւորութիւններն այսքան հակառակ են իրար, և դու կարծես զօրով աշխատում ես, որ քեզ ոչոք չսիրի։ Մի՞թէ չես հասկանում, որ քո մի հատարակ, քաղցր խօսքն այս րոպէիս աւելի ազդու և խրատական կարող էր լինել ինձ համար, քան թէ այդ սառն, հպարտ վարմունքը։ Եւ այդպիսի չորացած սրտով ուզում ես նուիրել քեզ մի գործի, որին ծառայելու համար ջերմ ղգացում, վառ սէր, փափուկ սիրտ է հարկաւոր...

Նա լռեց վիրաւորուած հպարտութեամբ, հեռացաւ դէպի լուսամուտը և, նայելով դէպի դուրս, սկսեց հիւսել արձակ մազերն արագ-արագ և մեքենայաբար։

Երկար ժամանակ լռութիւն տիրեց։

Եւան սպասում էր, թէ Աշխէնը կըխօսի. բայց Աշխէնի ձայնը չէր լսւում։ Ոչ միայն այդ, այլ և ոչ մի բանից չէր երևում, թէ նա ներկայ է սենեակում։ Եւային թուաց, թէ նա գնացել է, բայց, յետնայելով, զարմանքով տեսաւ, որ նա կանգնած է դռան մօտ արձանի նման և նայում է իրեն խիստ օտարոտի հայեացքով։ Այդ հայեացքն այլևս առաջուայ սառն, հպարտ հայեացքը չէր, այլ ինչ-որ անակնկալ յայտնութիւն դառած և այդ յայտնագործութիւնից ապշած մի հայեացք, որ ուղղուած էր դէպի ներս, դէպի սեպհական հոգու խորքը։

—Գնա, էլի, ինչ ես կանգնել,—նկատեց Եւան, աւելի ու աւելի զարմանալով։

Աշխէնը դարձեալ մի րոպէ նայեց նրան նոյն հայեացքով, յետոյ մեքենայաբար նստեց հէնց այնտեղ, դռան մօտ, դրուած աթոռի վրայ և տեղն ու

տեղը սառեց։ Այս անգամ նա թոյլ կերպով վայր թողած ձեռքերով, յատակին յառած մտախոհ հայեացքով և անշարժ դրութեամբ նմանում էր անմխիթար մի սպասուրի։

Եւան կատարելապէս ապշել էր։ Նա չէր հասկանում, թէ յանկարծ ինչ մի յեղաշրջում էր կատարուել հօրեղբօր աղջկայ մէջ, որ նրան այդպէս կերպարանափոխել էր։ Նա այլևս չէր համարձակւում ձայն հանել և չռած աչքերով նայում էր Աշխէնին սպասողական դրութեան մէջ։

—Չորացած սրտով... չորացած սրտով,—վերջապէս արտասանեց Աշխէնը շատ կամաց, մտքով ինքն իր մէջ կեդրոնացած։—Դու իրաւունք ունիս... Սրտիս ըմբոնողութիւնը չորացել, ըթացել, անզգայ է դարձել... Այո, իրաւունք ունիս ինձ յանդիմանելու, որ քեզ խիստ չհասկացայ...

Նա ձեռքը ձգեց աթոռի մէջքովը և աչքերը պինդ սեղմեց կռան վրայ։

—Բայց մեղաւորը ես չեմ, այլ... այն դժբաղդ հանդամանքը, որ այսպէս աւերել, ծերացրել է սիրտս...

Նրա ձայնն արագօրէն խլացաւ և յանկարծ կըտրուեց։ Եւային թուաց, թէ արտասուքը խեղդում է նրան, և նա մեծ ջանք է գործ դնում, որ չհեկեկայ։ Նա մեքենայաբար մի քանի քայլ առաջ գնաց, բայց յանկարծ կանգ առաւ փշաքաղուելով. Աշխէնի նիհար ուսերը և մէջքը ցնցւում էին ջղաձգաբար։ Եւան նրանից առաջ վազեց։

—Աշխէն ջան... դու լալիս ես,—արտասանեց, չոքելով հօրեղբօր աղջկայ առաջ և քնքշութեամբ գըբկելով նրա ծնկները։

Այս անգամ Աշխէնի ամբողջ մարմինը ցնցուեց։ Նա աչքերն աւելի պինդ սեղմեց կռան վրայ, բայց և

այնպէս զսպած հեկեկանքը, կարծես կուրծքը պատառուելով, դուրս ժայթքեց նրա սեղմած բերանից։

Եւան այս անգամ ուղղակի կպաւ նրա ծնկներին, և նրա աչքերը լցուեցին խոշոր արցունքով։

—Աշխէն ջան, մի՞թէ քեզ դարձեալ վիրաւորեցի... Հա, վիրաւորեցի։ Բայց չէ՞ որ ես յիմար եմ, և մի՞թէ արժէ նեղանալ ինձնից։ Աղաչում եմ մի լար... Բաւական է... Աստուած է վկայ, ես երբէք, երբէք չեմ վիրաւորել քեզ... Դէ բաւական է, ասում եմ... Աշխէն ջան, լսո՞ւմ ես։

Աշխէնը նստեց ուղիղ, երկու ձեռքով պինդ փաթաթուեց Եւայի վզովը և գլուխը կպցրեց նրա գլխին։

—Ինչո՞ւ ես կարծում, թէ ես նրա համար եմ լալիս, որ դու վիրաւորել ես ինձ,—խեղդող հեկեկանքի միջից արտասանեց նա։—Ո՛չ, ո՛չ Եւա ջան։ Ես լալիս եմ, որովհետև այլ ևս չեմ կարող չլալ... լալիս եմ, որովհետև այս արցունքը վաղուց է, որ ծանրացել է սրտիս վրայ. դու միայն առիթ եղար, որ այլևս չկարողացայ զսպել ինձ... Ո՞ր գիտենաս, թէ ինքս իմ մէջ կիդրոնացած, ամենքից, այո՛, ամենքից, նոյն իսկ քեզնից, ծածուկ հոգեկան ինչպիսի տանջանքներ եմ կրել ես... Ինչպիսի դառն, ինչպիսի սպանիչ թախիծ շարունակ կրծել է սիրտս... Ամեն րոպէ, ամեն վայրկեան ստիպուած եմ եղել ճնշել, մեռցնել մանուկ սրտիս բաղձանքները, վառ երևակայութեանս թռիչքը... գիտակցութիւնս անողոք դահճի պէս շարունակ ջախջախել է իմ մէջ այն, ինչ որ կեանքի հետ մի անգամ է միայն տրուում մարդուս... Այդ է պատճառը, որ ես հոգով ու սրտով այդպէս փորացել, այսպիսի անհիւթ ու անալի արարած եմ դարձել... Քո մանուկ սիրտն է միայն, որ կարողացել է այդպիսի սիրով կապուած մնալ ինձ հետ...

Աշխէնը դադարեց հեկեկալուց, արագ շարժումով թողեց Եւայի վիզը և բռնեց նրա ձեռքերից։ Արտասուքից կարմրած աչքերը ներքին հուր և միևնոյն ժամանակ սանտիկ տանջանք էր արտայայտում։ Կարծես, տենդի մէջ էր։

—Լսի՛ր Եւա,—շարունակեց նա ինչպէս ցածրաձայնելով, որ համարեա չշնչում էր։—Լսի՛ր քեզնից այլևս չեմ կարող թաքցնել։ Ես սիրում եմ քեզ։ Սիրում եմ ոչ այնպէս, ինչպէս որ դու մինչև այժմ կարծել ես... Ես էլ ինձ անբուսն։ Մեզ բաժանուեցինք իրարից, որովհետև մեր միացումն անկարելի էր։ Նա հեռացաւ։ Ես էլ հեռանում եմ։ Մի ամբողջ տարի, տարուց էլ աւելի է, որ մեզ միասին հետ առանձնանալս ոչ մի հաղորդակցութիւն չունեցել, որովհետև փնտրեցի քեզ դուրս թողել իրար մոռանալ։ Բայց այդ հեշտ չէ, այդ անկարելի է։ Գոնէ ես չեմ կարողացել մոռանալ։ Գուցէ և չեմ վարող։ Գիշեր ցերեկ, ամեն ժամ, ամեն րոպէ, չնայելով ինքս ինձ զբաղեցնելուս, ամբողջ սրտով, ամբողջ հոգեմտաւոր դէպի նա եմ ձգտել... Կարօտը, սաստիկ կարօտն անանկի տանջանք է պատճառել ինձ։ Իսկ երբէ՞ դիշեր այդ կարօտն այն աստիճանի հասաւ, որ չկարողացայ ինձանից չլինել։ Դիշերի այն նամակը, որ այնքան քո ձեռքն է ընկել, ճշմարիտ է, այդ նամակն ուղղուած էր ինչպէս ամենքից, այնպէս և քեզնից ծածուկ պահելով։ Ինձ, դիտ, դիտ անգամ Եւա՝ մի՞թէ դուզէի քեզ վերցնել, մի՞թէ դուզէի, որ աստէղը ինձնից մի՞թէ կուզէի, որ ուրիշ աչքով նայէիր ինձ, չէ՞ որ այդ մահ կլինէր ինձ համար, թէև, երդւում եմ արևով, այն՝ ինչ որ տածում եմ դէպի քո եղբայրը, սուրբ է, սրբութիւնից էլ բարձր և այդպէս էլ կմնան, եթէ միայն կըմնան... Ցանցաւոր եմ արդեօք այդ սիրոյ մէջ

և այն բանում, որ աշխատել եմ այդ սէրը ծածուկ պահել քեզնից,— չգիտեմ, քո դատաստանին եմ սպասելիս, բայց...

Նա խօսքը չվերջացրեց և դէմքը ծածկեց ձեռքերով։

Եւան՝ ինչպէս որ չոքած էր նրա առաջ, այնպէս էլ մնացել էր արձանացած։ Աշխէնի խոստովանութիւնն այնքան անակնկալ, այնքան հեռու էր նրա մտքից, որ նրան թւում էր, թէ երազում է։ Նրա դէմքը սառել, աչքերը չռած էին մնացել անմիտ զարմացմամբ։

—Նամակի մէջ գրում եմ այն, ինչ որ այժմ յայտնեցի քեզ,—շշնջաց Աշխէնը, ձեռքերը դէմքից չհեռացնելով։—Յայտնում եմ, որ գնում եմ գիւղը և խորհրդածութիւններ են առհասարակ կնոջ և մասնաւորապէս իմ ապագայ գործունէութեան մասին։ Ուզում ես, տամ կարդաս։

Եւան վեր կացաւ նրա առաջնից և մեքենայաբար թափ տուեց փեշերը։

—Ոչ, ինչ հարկաւոր է,—ասաց սառած ձայնով։

—Որպէսզի չկասկածես...

—Ոչ, հարկաւոր չէ,—կրկնեց Եւան և հանդիսաւոր քայլերով դիմեց դէպի իր սենեակի դուռը։

Աշխէնն արագութեամբ վերկացաւ, ուզեց բան ասել, բայց նորից ընկաւ աթոռի վրայ և դէմքը նորից ծածկեց ձեռքերով։

Եւան, առանց յետ նայելու, նոյն հանդիսաւոր քայլերով դուրս գնաց և դուռը կամաց յետ դրեց իր ետևից։

XIX

Եւայի առաջ իր խոստովանութիւնն անելով, Աշխէնը կարծում էր, թէ պիտի թեթևանայ երկար ժամանակից ի վեր իր սրտի վրայ ծանրացած դաղտնիքը. բայց ընդհակառակը—նրա տանջանքների վրայ նոր տանջանք աւելացաւ։ Տեսնելով և, առաւելապէս, զգալով այն անկարեկից սառնութիւնը, որով Եւան ընդունեց իր խոստովանութիւնը, նրան թուաց, թէ անդառնալի կերպով կորցրեց մի թանկագին բան. կորցրեց իր հեղինակութիւնը Եւայի առաջ, կորցրեց նրա սիրտը, կորցրեց նոյն իսկ նրա հետ ունեցած ազգակցական-բարոյական կապը։ Այժմ նա լիովին զգաց, որ վերին աստիճանի կեղծ պիտի լինի իր դրութիւնն այդ տան մէջ և ապրել այդտեղ այլևս անհնարին կլինի իր համար։ Նրան մխիթարում էր այն հանգամանքը միայն, որ այդ գիշեր պէտք է հեռանար։

Աղախինը մտաւ և ասաց, որ նրան սպասում են թէյ խմելու։

Ոչ թէյի ախորժակ ունէր, ոչ էլ ցանկութիւն Մարութեանների մօտ գնալու։ Երկիւղի և ամօթի նման մի անդիմադրելի զգացում ստիպում էր նրան խոյս տալ Մարութեանների աչքին երևալուց։ Թէև ամենևին չէր կարծում, թէ Եւան այնքան յիմար կլինի գտնուած, որ իր խոստովանութիւնը յայտնած կլինի ծնողներին, այնուամենայնիւ նրան թւում էր, թէ ամբողջ տունն արդէն իմացել է իր գաղտնիքը և ամենքը խիստ թշնամական աչքով պիտի նայեն իրեն։ Այդ ծանր տեսակցութիւնից դէթ առժամանակ ազատ մնալու համար ուրախութեամբ կըգնար օր. Սահակեանի մօտ, եթէ արդէն ուշ չլինէր։ Բայց սենեակում վա-

կուլն էլ միտք չունէր. դրանով կարող էր կասկածի առիթ տալ։ Ուստի գլխարկը վերցրեց, վերարկուն հանեց և դուրս գնաց դէպի սեղանատուն, աշխատելով ընդունել իր սովորական անտարբերութիւնը, որը, սակայն, այս անգամ յուսահատական համարձակութեան էլ նմանում։

Սեղանի վրայ քլթքլթում էր փոքրիկ մաքուր հնչուածով թեկլէն արդէն լցրել էր թէյի բաժակները և ջոր էր աւելացնում թէյնոցի մէջ։ Նրա մօտ նստած էր փոքրիկ Սուրէնը և մեղրաւոր կարագով հաց էր ուտում։ Եւան նստած էր սեղանի ծայրին և այդ օրուայ լրագիրը սեղանի վրայ փռած ամբողջ մարմնով խոնարհուել էր նրա վրայ։ Մարութեանը, խալաթը հագին, նստած էր հեռու լուսամուտի մօտ և նոյն օրուայ մի ուրիշ լրագիր էր կարդում։

Ներս մտնելով, Աշխէնը սովորական բարևը տուեց Մարութեան ամուսիններին և նստեց Եւայի դիմաց, սեղանի հակառակ ծայրին, ուր նստում էր միշտ։ Եւան մինչև անգամ գլուխը չբարձրացրեց լրագրի վրայից։ Նրա դէմքը դժգոյն էր և վերին աստիճանի խաղաղ։ Աշխէնը նայեց նրան և այն կեղծուսացած հայեացքից, որ նա յառել էր լրագրի վրայ մի կէտի, հասկացաւ, որ նա ոչ միայն չի կարդում, այլև չի տեսնում իր առաջ փռած լրագիրը։

Մարութեանը ձեռքին բռնած լրագիրը ծալեց, դրեց լուսամուտի տախտակի վրայ և, աթոռը դեպի վերցնելով, գնաց նստեց սեղանի մօտ, կնոջ դիմաց։ Նա անմիջապէս խօսք բաց արեց Աշխէնի ուղևորութեան մասին և աւելորդ չհամարեց մի քանի խորհուրդ տալ նրան մի առանձին լրջութեամբ, ինչպէս առանձակի խօսում էր երէկ աղջկայ հետ։ Նա ցաւ յայտնեց, որ գործերի խառն դրութեան պատճառով չի կարողացել ուղեկցել Աշխէնին, թէև շատ է հոգում նրա ապահով կերպով տեղ հասնելու համար։

Աշխէնը շնորհակալութիւն յայտնեց և հանգստացրեց նրան, ասելով, որ նրա ուղեկցութիւնն աւելորդ է, քանի որ ինքը մենակ չի գնում։

Այն ինչ թեկլէն դպրոց գժգոհութեամբ մի քանի նկատողութիւններ արեց Աշխէնին և ուզում էր շարունակել, բայց ամուսինը մեղմութեամբ ասաց նրան, թեկլէն այլևս ոչինչ չասաց և միայն վերջը, երբ բողոքի ցոյց, բուրթիւն պահպանեց յամառելն և վրդովուած։

Մակ Եւան ամենևին ձայն չէր հանում։ Լրագիրը շպրտել էր հարևան աթոռի վրայ և մեջքից խոնարհուած, գլուխը վախ խեղճում էր թէյը, ասես բաժակը բարձրացնելու։ Աշխէնն ամբողջ ժամանակ սրիւղով դիտում էր նրան և չտեսաւ, որ նա դէպի մի անդամ նայէր իրեն։

Հազիւ թէյը վերջացնելով, Աշխէնը քաշուեց իր սենեակը։ Արդէն ժամանակ անցուզարձ էր անում ծանրը մտատանջութեան մէջ, յետոյ արագ մօտեցաւ վնասարանին, որ հէնց նոր վառել էր ծառան, դրպանից հանեց նամակը և շպրտեց բոցերի մէջ։

Նոյն բոպէին դուռը կամաց բացուեց։

— Ներս գուրս և արագ դարձաւ դռան կողմը։

Շեմքում կանգնած էր Եւան և անշարժ։ համարեա անդգայ հայեացքով նայում էր ծրարին, որը կրակի բոցերի մէջ ծանր դեղով կարմրեց, սպիտացաւ, ծայրերից ոլորուեց և ապա բոցավառուեց։

— Այն նամակն էր, ասաց Աշխէնը, մարմնը պաշտպանելով իրեն մի քանի դէմ։

— Եւան հայեացքը նրա վրայ դարձրեց։

— Հիշո՞ւ այրիցիր։

—Այրեցի, որովհետև... այդ նամակն եղաւ պատճառը, որ իմ ու քո միջև բացուեց այս... անդունդը։

—Ի՞նչ անդունդ։

—Չգիտեմ, բայց... ինձ թւում է, ես զգում եմ, որ մեր միջև արդէն ինչ-որ անդունդ է բացուել... թւում է, թէ ես արդէն օտար և ատելի եմ քեզ համար։ Չէ՞ որ դու արդէն գիտես, որ եղբօրդ հեռանալու, իր ընտանիքից, իր հարազատներից անջատուելու գլխաւոր պատճառն ես եմ, ես, որ այդ բանից յետոյ դեռ երես եմ ունեցել ձեր խնամքը վայելելու...

Աշխէնի ձայնը հնչում էր խաղաղ. նա այդպէս խօսում էր, ամենևին միտք չունենալով, թէ ուզում է իրեն վիրաւորուած ցոյց տալ կամ վիրաւորել։

Եւան ոտը նեղս դրեց շեմքից, դուռը փակեց և, արագ քայլերով մօտենալով Աշխէնին, կանգ առաւ ուղղակի նրա առաջ։

—Լսիր, Աշխէն,—համարեա շշնջաց նա։—Այդ դու ես այդպէս մտածում, թէ՞ քեզ թւում է, թէ՞ դու համոզուած ես, որ ես եմ այդպէս մտածում։

Աշխէնը դէմքը դարձրեց նրանից։

—Դու ես այդպէս մտածում... Եւ կատարեալ իրաւունք ունես...

—Իրա՞ւ, իրա՞ւ. դու այդպէ՞ս ես համոզուած։

Աշխէնն խլոյն չպատասխանեց։

Եւան սպասում էր անհամբեր։

—Հապա ինչո՞ւ, որ խոստովանուեցի, այնպէս սառեցիր,—վերջապէս արտասանեց Աշխէնը, և նրա ձայնը դողաց։—Ինչո՞ւ մի խօսք, կարեկցութեան, սփոփանքի մի խօսք անգամ չասացիր...

—Զասացի, որովհետև... ի՞նչ կարող էի ասել,—արագ վրայ բերեց Եւան։—Զասացի, որովհետև... հիմա

էլ, մինչև այժմ էլ ինձ թւում է, թէ երազումս եմ... Մի՞թէ ինքդ չես հասկանում, որ խոստովանութիւնդ ուրիշ կերպ չէր կարող ազդել ինձ։ Չէ՞ որ այդ նորութիւն էր ինձ համար, անսպասելի, աներևակայելի, անկարելի նորութիւն... Եղբայրս և դո՞ւ... Ի՞նչպէս, ի՞նչ, մի՞թէ... Բայց ինքդ ասացիր, որ այդ իրողութիւն է... Ի՞նչ կարող եմ ասել... Իրաւունք ունիմ խառնուելու... Ո՛չ, այդ չեմ թոյլ տալ ինձ և չեմ էլ կարող... և չեմ էլ ուզում... Տեսնում ես, բացատրութիւն, մանրամասնութիւն էլ չեմ պահանջում, որովհետև... չեմ ուզում, որովհետև գիտեմ, որ այդ ծանր պէտք է լինի քեզ համար և... ինձ համար... Բայց այդ դեռ իրաւունք չի տալիս քեզ մեր միջև անդունդ տեսնելու։ Այո՛, դու իրաւունք չունես,—լսո՞ւմ ես, իրաւունք չունես,—իմ տեղ վատ-վատ բաներ մտածելու քո մասին։ Հէնց այս առաւօտ, փոքր ինչ առաջ էր, որ դու սաստիկ նեղացար ինձնից, թէ ինչո՞ւ թոյլ էի տուել ինձ քո տեղ վատ բաներ մտածելու մեր մասին։ Այժմ խօ ես էլ իրաւունք ունիմ նեղանալու քեզնից։ Ասա, ունի՞մ, թէ ոչ։

—Ունես, ունես,—շշնջաց Աշխէնը, տեսնելով, որ զգացումների և կասկածների տարօրինակ խառնաշփոթութիւնից կորցրել է իր առաջուայ սառնասրտութիւնը, լոգիկան, բոլոր քաջութիւնը։

Եւան առաւ նրա ձեռքերը։

—Ա՜խ, Աշխէն, քոյրիկս,—ասաց զգացուած,—ի՞նչ ես կարծում, թէ ես այլևս առաջուայ Եւան չեմ, քո՞ Եւան; և իզուր ես կարծում, թէ այսուհետև օտար ես ինձ համար և ես ատում եմ քեզ։ Ատե՞լ... Ես մինչև անգամ չեմ կարող հասկանալ, թէ ինչպէ՞ս և ինչ բանի համար կարելի է ատել։ Ես սիրել միայն կարող եմ, չափից դուրս սիրել և դրանից է, որ քեզ այսօր

այնքան ահռելի թվում պատմությունը։ Չգիտեմ՝ ինչպես
այնքան հոգեբանորեն՝ որ ամեն մի արտասովոր իրադարձություն
ցնցում է ամբողջ էությունս։ Նոյնը պատահեց վաղ առավոտ
ինձ։ Բայց կրկին՝ երբեք մի կարծիր, թե խրոխտավան-
նությունդ վատ տպավորություն է թողել մեզանից։
Ընդհակառակը, փա՛ռք հեղինե՛ զգում եմ դեռ և երբ
բայրակասական զարձրանում եք իմ աչքում, այնքան
բարձրանում, որ մինչև անգամ նախանձում եմ ձեզ
հոգու քաջությանը։ Զգում եմ, որ եթե ուրիշը մեզանից
ձեր տեղը դիտրությամբ կարող էր յանցանք գործել։
Բայց դուք այդպիսի բան չեք արել, որովհետև պատ-
կերացնում էիք, որ անելիք, որովհետև սատանի դերը ժամանակ
նեիք հայրիկին, մայրիկին, ինձ և վերջը կորցրեցիք։
Դուք դժբաղդ եք։ Դու ճանաչում ես ինձ, Աշխեն։
Գիտես՝ որ եթե ես մի բան սարքեմ, ուղղակի աշխա-
տեցնում հոգուցս եմ պատմում մի բան որ պատմեմ ամա-
սրամ կամ ոչ։ Եթե նրա հանդեպ որ այդպես եմ մտածում
այդ նրան համար, որ այդպես եմ զգում։ Ասասելուս
թիվն է այս։ Եթե թերությունը—չգիտեմ միայն գիտեմ
որ լոկ չոր ուղեղով մարդը կարող է միևնույն բանի
հաղար ու մի իրար հակառակ բացատրություններ տալ։
մինչդեռ զգացմունքը—վիրաբը մի բան միայն կարող
է թելադրել մի անկեղծ բան—միակ ճշմարտությունը։
Չոր ուղեղով որքան բացատրություններ կարելի է տալ
այն հանգամանքին, որ դուք ինձանից ձեր գրքերը
պահեք ժողովրդի դարձությունը։ Չոր—ուղ-
ղակի, ցանկանալի է ձեզ ինչպես նկարագրեմ
ինքս ինձ։ Ամենուրեք ինձանից վարվում է սարսափելի
ոտնձգություն։ Զգում եմ, որ ինձ ոչ ոք չի հասկանում
ինչպես դուք։ Ինձ ոչ ոք չի հասկանում։ Ինչպես դուք
դուք կարիք ունեք ինձանից ինքնագրությունս։ Դուք
կիսով բանի, հարաշխարհի հեղափոխության ապրողներ
դուք։ Ինչպես դուք։ Ինչպես դուք։

Այո, չոր ուղեղով ամեն կերպ կարելի է դատել բայց
դա... Ամառուան չանել, որ երբեմն չոր ուղեղը իրեն
իմ մեջ։ Ամենամեծ դժբաղդությունն ինձ համար այն
օրը կլինի, երբ ես դադարեմ մտածելուց։
Այժմ ոչ գիտեմ, թե ինչու միշտ այնպես թվեր,
միշտ այնպես մտածեր էիր լինում թե ինչու միշտ այն-
պես զգոնած էիր պահում քեզ, միշտ քաշուած և հի-
ացած մրցանց չէիր ուրախանում։ Այն առաջուանից որ աչ-
քովս տեսայ, թե ինչպիսի յուսահատություն էր տիրել
քեզ՝ այդ բոլորը նեսելուց և հանկարծակի կանգ
ընկնելուց կարող եմ ամբողջ հոգով չմոռանալ քեզ։ Դա
չկար միևնույնը, ինչ որ դու ես զգացել և զգում։
Աշխենի աչքերը լցուել էին արցունքներով։ Նա ամ-
կում էր խանել, բայց բուկը կարծես հուպ էին տալիս։
— Ոչ գիտեմ, — արտասանեց արտասուքը դուլ
տալով, — որ գիտեմ։ Եվ... երբեմն մինթարեցին
ինձ խնամքով։ Չեմ կարող բառերով արտայայտել։
Ես հիացած եմ։ Ես երջանիկ եմ։

Եւան քնքշորեն գրկեց նրա նիհար իրանը։
— Եղբայրս վաղուց է գնացել։ Դու էլ այդ գիշեր
ես գնում։ — անհուն սիրով և հիրուբեամբ շշնջաց նա։
— Մինչև այժմ հաղթում էի միայն եղբայրս տանջ,
այսուհետև կաղթեմ և քեզ համար։ Իսկ երբ վերա-
դառնամ, մեկ ժամանակ... մեր, ինչպիսի կարծես
կընդունեմ քեզ կրծքիս։
Եւ Եւան դեմքը սեղմեց Աշխենի կրծքին։
Աշխենը գրկեց նրա գլուխը։
Սենեակում խուլ հեկեկանքի ձայներ լսուեցին։

XX մարդու մասին։ Ինչպես դարձրեցի նրան։ Ինչպես
դարձրեցի։ Զմայլելի, որ Շահնազարն էլ Մինասյանին

մատնեցի։ Ինչպես դարձրեցի։ Ինչպես դարձրեցի։

հրաւիրել հիւրանոցից իր մօտ տեղափոխուելու, բայց և այնպէս ընկերոջ ներկայութիւնն իրենց տանը շատ էլ հաճելի չէր նրա համար։ Նա սովոր էր միայնակեցութեան, իսկ ընկերոջ ներկայութիւնը ճնշող դրութեան մէջ էր դրել նրան, թէև Մինասեանը, իր գործերի ետևից ընկած, գրեթէ ամբողջ օրը դուրսն էր անցկացնում և գալիս էր միայն գիշերները՝ քնելու։ Շահհանը չէր սիրում Մինասեանին, թէև նրա մէջ ատելի ոչինչ չէր գտնում։ Թերևս դրա պատճառն այն էր, որ այդ եռանդուն, այդ գործունեայ երիտասարդի մէջ կենդանի նախատինք էր տեսնում իր անշարժութեան, իր անպէտքութեան համար, մանաւանդ, որ Մինասեանը, տեղն ընկած ժամանակ, չէր քաշւում նրա ինքնասիրութիւնը վիրաւորող կծու-հեգնական խօսքեր ասել նրան բարեկամօրէն։ Ի ներքուստ Շահհանը սաստիկ վիրաւորւում էր այդ կշտամբանքներից, բայց, զգալով իր թուլութիւնը, լռութեամբ համաձայնում էր ընկերոջ նկատողութիւններին և այդ պատճառով աւելի ևս նուաստանում էր ինքն իր աչքում։

Մինասեանից իմանալով, որ նրա դատած վարժուհին Աշխէնն է, Շահհանը սկզբում խիստ զարմացաւ, յետոյ ինչ-որ օտարոտի մի թախիծ պաշարեց նրան։ Արդէն ծանօթ լինելով Աշխէնի հայեացքներին, նա հասկանում էր, որ այդ օտարոտի աղջիկն իր ամեն կերպ ապահովուած ու հանգիստ կեանքը զոհում էր գիւղական վարժուհու չարքաշ կեանքին նրա համար, որ իր ոյժերին չափ ծառայած լինի ուրիշի բարօրութեան օգտին։ Դա նոր առիթ էր Շահհանի համար նորից իր սեպհական ապիկար անձի դառն քննութեանը դառնալու և—այնքան աւելի զօրեղ առիթ, որքան պատճառը մի աղջիկ էր հանդիսանում։ Նա իրեն շարունակաբար տեսնում էր նպատակների համար

անձնական թանկ զոհողութիւններ անող անձերով, մինչդեռ ինքը փտում էր սենեակի չորս պատերի մէջ, ժամանակը սպանելով Շոպենհաուէրի փիլիսոփայութեան վերաբերեալ շատ տեղ չհասկացած մի գրուածքի թարգմանութեան վրայ։ Շահհանի թախիծն աւելի ևս սաստկանում էր, իր աչքում նա աւելի ևս չնչին, անպէտք և ողորմելի արարած էր ներկայանում, երբ Մինասեանը սկսում էր խօսել Աշխէնի մասին հիացմունքով։

Մինասեանի և Աշխէնի ուղևորութեան օրը Շահհանն ընկերոջը ճանապարհ դնելու համար ամենևին ցանկութիւն չունէր երկաթուղու կայարան գնալու, որովհետև առաջուց զգում էր, որ այդ գիշերուայ հրաժեշտի ողջոյնները մի անջնջելի դառնութիւն պիտի թողնէին իր առանց այն էլ դառն սրտի վրայ։ Եւ, որպէսզի պատրուակ ունենար ընկերական այդ սովորական պարտականութեան անկատար թողնելն արդարացնելու, ուղեց պատճառ բերել հօր հիւանդութիւնը, որը վերջին օրերը, յիրաւի, վտանգաւոր բնաւորութիւն էր ստացել, բայց, Աստուած գիտէ ինչ բանից, ամաչեց և գնաց։

Գնացքը մեկնելուց մի ժամ առաջ Մինասեանն ու Շահհանն արդէն կայարանումն էին։ Կայարանի դահլիճներում փոքր առ փոքր սկսում էր խռնուել ուղևոր, ճանապարհ դնող և ճանապարհորդներ սպասող սովորական բազմալեզու և բազմատարազ հասարակութիւնը։ Դասական բոլոր պիտոյքները մի արկղ մէջ մեխած՝ Մինասեանը յանձնել էր ապրանքների մասը և, ընկերոջը թողած, ինչ-որ հին բարեկամ էր գտել, որի հետ սկսել էր մի երկար ու բարակ խօսակցութիւն։ Շահհանը կանգնած էր մենակ և նախանձով դիտում էր Մինասեանին, որ իր պարզ վարուեցողութեամբ, իր

հապարակ մինչև անգամ կանգնեցնել հաղորդակցությունը մեջտեղ-
կամ հանակրանքը գրաւում, ինչ որ ինքնուրույն գրան-
էր ներկայացնում։ Շատ չանցած, Մարութեանը մի փոքրիկ
բարձ լեռան տակին առած նա, նեղս մտաւ շտապով մի
բանակցի հետ, որ շալակած էր Աշխէնի իրերը։ Նրա-
նից մարդ թեկլէն, Աշխէնը և օր Սահակեանը
Շահեանը թէև տեսած նրանց, բայց ոչ ոչ ուշադիր
թէ չտեսաւ և կամաց հեռու քաշուեց։ Մինչդեռ Մի-
նասեանը, Աշխէնին և զ. Սահակեանին տեսնելուն
պէս (միւսներին դեռ չէր ճանաչում)։ շտապով գնացին
բարեկամի ձեռքը, ապի հետ կանգնեցին և ընդարձակ
դնաց նրանց։ — Դուք, արդեն այստեղ էք բացակայեց օր.
Սահակեանը։ Այդ բացակայությունն վրայ Մարութեանը կամ-
կացը, կանգ առաւ և հեռաւորութեամբ նայեց Մինաս-
սեանին։ — Պարոն Մարութեան, ասաց Մինասեանը
ինդեմ ձգնաթաղթեր։

Մինասեանը շտապով մօտեցաւ Մարութեանին
յարգանքով տեղեկացնելու նրա ներքը։

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, մեր նայ-
բարի ալտապանեց Մարութեանը, հեռաւորութեան ճայեցաց-
քը չհեռացնելով Մինասեանի թեսի դէմքից։

— Այնպիսի օր Սահակեանը Մինասեանին ասաց
կայացրեց Թեկլէին և նայեցին։ Թեկլէն իսկոյն թեթուած դեմքով կարծես բար-
կացած, նայեց Մինասեանին և չկամենալով ձեռքը
մեկնեց նրան։ Իսկ նա, ապուշ կտրուած մի
տեսանելիք, հայացքով ձեռքը դրեց նրա ձեռքի մեջ։

որ նա սեղմեց նրա աջքերը կարմիր տալ էնոնա-
ռեում էր, որ նա լաց էր եղել և շատ էր լաց եղել։

— Շատ ուրախ եմ, ինչպես կարելի է կրկնեց
Մարութեանը բարձրը միւսներին պակնչանելով և
շարունակելով դիտել Մինասեանի դէմքը։ Ուրեմն
դուք էք պարոն Մինասեանը։ Շատ ուրախ եմ, շատ
ուրախ եմ, որ ծանօթանում ենք։ Ես կարդացել եմ
ձեր գրուածքները։ Շատ դեղեցիկ են։ Գիտակցի մեն։

Այդ միջոցին Շահեանը մօտեցաւ նրանց։

— Մեր մեծ հին գարեկամն է, ասաց բա-
ցականչեց Մարութեանը։ Ինչպէս չենք մոռացել։

— Եկեք, եմ ընկերս, ճանապարհ գնենք, ասաց
Շահեանը ժպտալով և ընդհանուր բարեւաւորեցնամենք
քին։

— Այդ ինչ ընկեր է, ասաց Շահեանը ցայտ վնալով
Մինասեանին։

— Այդ պարոնը, ասաց Մարութեանն ադագնայեց Մինասեանին։

— դարձեալ Շահեանին։

— Միթէ դուք ընկեր էք, նայեցեք նա
զարմացած։

— Եւ հին ընկերներ, նկատեց Մինասեանը։

— Այդ քեզ նորություն է, ասաց գոյակէնը։ Ինչ-
չեմ մի անգամ միասին չեկանք մեզ մօտ։ Ինչպէս նայեցեր
ենք ծանօթանում, ճանաչեր մեր տանը։ Ինչպէս նայեցեր
և ամենակեր գրուածքներ։ Ուրեմն մեզ մեր ձեր
չեն։ Ինչպիսի մեղը նախ։ Սահակեանը։ Ինչպիսի հարկ։
համարեցի այս քանը ասելիքներս։ Մեր գիտեմ,
— այս մասին մենք արդէն բաւական կարդացինք։
հեռ։ — Կատարեցի Մեղաւոր է պարոն Շահեանը, մարդ չեմ

խմանում ինչու, խռովել է մեղնից և այլ ես չի գալիս մեր տուն։

Շահեանը փորձեց իրեն պաշտպանել։

—Ինչևիցէ. այդ մասին ես ուրիշ ժամանակ կը-կռուեմ ձեզ հետ,—վրայ բերեց Մարութեանը։—Իսկ այժմ գնամ տեսնեմ ինչ արին մեր նոր վարժուհու իրեղէնները։

Եւ Մարութեանը շտապեց դէպի բազմոցի բաժանմունքը։

Նրա բացակայութեան ժամանակ Մինասեանը օր. Սահակեանին ծանօթացրեց Շահեանի հետ։ Օր. Սահակեանն իր նոր ծանօթի ակնոցներին նայեց այնպիսի յամառ հետաքրքրութեամբ, որ Շահեանը հասկացաւ, թէ նա առաջուց արդէն լսել է և շատ էլ լաւ գաղափար չի կազմել իր մասին։

Մի քառորդ ժամից ամենքը նստած էին դահլիճում, մի սեղանի շուրջ բոլորած, և Մարութեանն երիտասարդական աշխոյժով հիւրասիրում էր սեղանակիցներին արտասահմանի գարեջրով։

—Խմեցէք, խմեցէք, այս մեր ճանապարհորդների կենացն է,—ասում էր նա։—Պարոն Մինասեան, ձեր կենացը։ Ափսոս, հազար ափսոս, որ նոր ենք ծանօթանում։ Ցանկանում եմ ձեր սկսած գործին կատարեալ աջողութիւն և յարատեւութիւն։ Ապրիք, լաւ գործ էք սկսել։ Աշխէն, քո կենացը։ Բարի ճանապարհ և բարի վերադարձ։ Ցանկանում եմ, որ մեզ նամակի կարօտ չթողնես։ Ի նկատի ունեցիր, որ մեր ուշքն ու միտքը միշտ քո կողմը կլինի։ Եւ ջան, վերցրու բաժակդ։

Եւան վերցրեց բաժակը, հաղիւ կպցրեց շրթունքներին և վայր դրեց։

Նոյնն արեցին և մնացեալները, բացի Մինասեանից,

որը, շնորհակալութիւն յայտնելով, դատարկեց բաժակը։ Բայց ամենքը լուռ էին։

—Ա՞յս ինչ է, միայն ե՞ս էի պարտաւոր բարի ճանապարհ մաղթելու,—նկատեց Մարութեանը զարմացած և դարձաւ օր. Սահակեանին։—Օրիորդ, ձրտեղ է ձեր լեզուն։

—Ես ցոյց կըտայի ձեզ լեզուս, եթէ անքաղաքավարութիւն չլինէր այդ,—ծիծաղեց օր. Սահակեանը։

—Օհ՝, այդ լաւ բան ասացիք։ Ինձ վրայ լեզու հանել հարկաւոր չէ. ես ուզում եմ, որ դուք խօսէք։

—Այդ բանը պահանջեցէք ձեր աղջկանից։ Տեսէք ինչպէս է նստած։

—Եւայից... Եւայից ես մի բան միայն կարող եմ պահանջել, որը, ասենք, առանց իմ պահանջելու էլ կանի—մի քիչ էլ լաց լինել։

Եւան, առանց կատակի, յօնքերը կիտեց և դէմքը բարկացած շրջեց հօրից։

—Լաւ, էլ ինչո՞ւ ես ինձ վրայ բարկանում,—նկատեց հայրը,—բարկացիր Աշխէնի վրայ։

Աշխէնը, որ նստած էր Եւայի մօտ, թեքուեց դէպի նա և շշնջաց նրա ականջին՝

—Եւա, ինչո՞ւ ես ինձ այսպիսի անյարմար դրութեան մէջ դնում։

Եւան ոչինչ չասաց, թաշկինակը հանեց և ծայրով սրբեց աչքերից դուրս ցայտած արտասուքը։

—Չասացի՞, չասացի՞,—բացականչեց Մարութեանը և ծիծաղեց։—Մի բան ասեմ, պարոններ. կա՛յ սրդեօք աշխարհիս երեսին մի ուրիշ տեղ, ուր այնքան շատ արտասուքներ լինին թափւում, որքան երկաթուղիների կայարաններում, նաւամատոյցներում և առհասարակ այն տեղերում, ուր մարդիկ բաժանւում են իրարից։ Եւ ինչ բան է հրաժեշտի ժամը, որ այսքան

ծանր տպաւորութիւն է թողնում մարդու վրայ։ Ինչ-
ևիցէ, փիլիսոփայութիւններ անելու ժամանակ չէ։
Ամենք մի բաժակ էլ։ Գիտէ՞ք ում կենացն եմ ուզում
խմել, պարոն Մինասեան։ Ուզում եմ խմել իմ մեծ
որդուս կենացը, որը...

—Ի դէպ,—վրայ բերեց Մինասեանը։—Օր. Սա-
հակեանից այսօր միայն իմացայ, որ Արմենակ Մարու-
թեանը ձեր որդին է եղել։

—Դուք ճանաչո՞ւմ էք նրան։

—Ես նրա հետ ծանօթացել եմ Լայպցիգում, ու-
սանողական մի ժողովում։

—Սպասեցէք։ Մի՞թէ դուք եղել էք Գերմանիա-
յում,—հարցրեց Մարութեանը զարմացած։

—Ես դիւղատնտեսութիւնը սովորել եմ Ֆրանսիա-
յում, բայց Գերմանիայումն էլ եմ եղել։

—Ա՛յ քեզ բան,—բացականչեց Մարութեանը կա-
տարելապէս ապշած, դիտելով Մինասեանի արտաքինը։

—Իսկ ես կարծում էի, թէ դուք ձեր դիւղից դուրս
աշխարհ չէք տեսել, որովհետև մեզանում տեսնուած
բա՞ն է մի՞թէ գնալ Եւրոպա և վերադառնալ առանց
ցիլինդրի և ձեռնոցների։

—Ես կարծում եմ, որ այդ բանում ձեզ ինձնից
առաջ պիտի համոզէր ձեր որդին,—նկատեց Մինասեա-
նը ժպտալով։

Մարութեանը ըստ օրէն ընկեց նրա թևից, արմուն-
կից բարձր, և, մտքով նրա կողմը, հայեացքը կեդրո-
նացրեց Աշխէնի վրայ։

—Բանն այն է, բարեկամ,—ասաց նա,—որ որ-
դուս մինչև այժմ բացառութիւն էի համարում, իսկ
այժմ տեսնում եմ, որ այդ բացառութիւնն իր երկուր-
նականութեան և այդ երկուորեակը ճարել է իր երրոր-
դորակը,—թէև կարելի է այսպէս ասել,—թէև բոլորովին

ուրիշ, բայց նոյնքան հանրօգուտ ասպարիզում...Ասում
էք Գերմանիայումն էլ էք եղել։ Հիմա ես ձեզ միանգա-
մից ճանաչեցի։ Գերմանական բարձրագոյն դպրոցները
մեզ շատ պիտանի մարդիկ են տուել. նրանք մեզ տը-
ւել են մտքի, գիտութեան, գաղափարի մարդիկ։ Մեր
մամուլը, մեր գրականութիւնը, մեր դպրոցները եթէ
մի բան, մի շօշափելի, մի դրական բան տուել են,
այդ եղել է, անշուշտ, այն մարդկանց շնորհիւ, որոնք
գերմանական մտքի, գերմանական գիտութեան աշա-
կերտներ են եղել։ Ես ինքս եղել եմ Գերմանիայում,
երբ որդիս ուսանող ժամանակ հիւանդացել էր։ Ահա
մի երկիր, ահա մի ժողովուրդ, որը հէնց միայն իր
ազգային միութեան գաղափարով ընտիր օրինակ կա-
րող է լինել մեզ համար։ Իմ որդին... Գիտէ՞ք դուք
այժմ որտեղ է նա։

—Օր. Սահակեանը պատմեց։

—Լա՞ւ է արել թէ ոչ։

—Նրա արածը պատիւ է բերում նրան և ձեզ։

—Ես կարծում եմ։ Գոնէ ես, իբրև հայր, պարծե-
նում եմ նրանով։ Հայ գիդի հա, որ յիշում եմ նրա
հետ ունեցած վիճաբանութիւնները... Նրա կենացը,
պարոն Մինասեան։ Նրա կենացի հետ միասին խմում
եմ և ձեր կենացը։ Գուցէ ձեր և որդուս արածը չնչին
բան է, բայց եթէ մեր բոլոր կարող երիտասարդներից
ամեն մէկը մի-մի այդպիսի չնչին բան անէր, որպիսի
հսկայական գործ դուրս կը գար վերջը... բաժակները
խփենք իրար։ Ա՛խ, ինչքան նեղանում եմ, որ այստեղ
ենք միայն ծանօթանում...

XXI

Դուրսը, ընդարձակ պլատֆորմի ծածկոցի տակ,

խուլ արձագանք տալով, լսուեց զանգի զրնգզրնգոցը։ Դա նշան էր, թէ գնացքը դուրս է եկել մերձակայ կայարանից։

Եւան ցնցուեց և անզգայ հայեացքով նայեց շուրջը։

Դահլիճում իրարանցում ընկաւ։

Մինասեանը շտապով վեր կացաւ։

—Ներեցէք,—ասաց,—պէտք է տոմսակ վերցնել։

—Սպասեցէք, ի՞նչ էք շտապում, դեռ ժամանակ շատ կայ,—պահեց նրան Մարութեանը և նստեցրեց իր տեղում, իսկ ինքը վերկացաւ։—Նստեցէք, ես խսկոյն գալիս եմ։ Օրիորդ,—դիմեց նա օր. Սահակեանին,—խնդրում եմ, մի թողնէք, որ Եւան այդպէս նորահարսի պէս նստած մնայ։

Եւ նա շտապով հեռացաւ։

Եւան բարկացկոտ հայեացքով նայեց նրա ետևից։

Օր. Սահակեանը նայեց նրա դէմքին և ծիծաղեց։

—Լսեցի՞ր ինչ ասաց հայրդ, ուրեմն խօսիր,—ասաց նա։

Եւան այս անգամ հանդիստ հայեացքով նայեց օր. Սահակեանին և դարձեալ լուռ մնաց։

—Լաւ, ինչո՞ւ չես խօսում։

—Ի՞նչ խօսեմ,—վերջապէս արտասանեց Եւան խաղաղ ձայնով։

—Ես ի՞նչ գիտեմ. լռութիւնը քեզ չի սազում։

—Զարմանալի է,—նկատեց Թեկլէն դժգոհութեամբ, ըստ երևոյթին անկարող լինելով այլևս զսպել իրեն. այ, միշտ այդպէս է, ինչպէս որ կայ. չխօսկան հարս է դառել գլխիս, իսկ առաջ գահլա էր տանում, այնքան խօսում ու ծիծաղում էր։

—Պատճառն, ասենք, հասկանալի է. չէ՞ որ քոյրը հեռանում է,—նկատեց օր. Սահակեանը ժպտալով նայելով Եւայի մեծ-մեծ աչքերին, որ նա մտախոհութեամբ ուղղել էր դէպի դահլիճի խորքը։

—Թող այդպէս ասի,—վրայ բերեց Թեկլէն.—թող գոնէ մի անգամ խնդրած լինի, որ չգնայ։

Եւան նեղսրտութեամբ շարժուեց իր տեղում։

—Մայրիկ, ի՞նչ հարկ կայ այդ մասին խօսելու։ Մեծ ցաւ չէ, որ այլևս չեմ խօսում ու ծիծաղում։

—Մեծ ցաւն այն է, որ քեզ այդպէս մաշում ես։ Տես այս երկու օրուայ մէջ ինչ ես դառել։

—Է՛հ,—զսպած զայրացկոտութեամբ արտասանեց Եւան և մինչև անգամ դէմքը շրջեց մօրից։

Թեկլէն նայեց աղջկան խիստ ջղրած, ուզեց բան ասել, բայց զսպեց իրեն և լռեց։ Նա զգում էր, որ Աշխէնի դէմ իր մէջ մի քանի օրուայ ընթացքում հաւաքուած բարկութիւնը պատրաստ է պայթելու, բայց տեղն անյարմար էր։

Մօր և աղջկայ միջև տեղի ունեցած այդ ընդհարման ժամանակ Աշխէնը վերին աստիճանի անյարմար դրութեան մէջ էր զգում իրեն։ Նա աւելի քան հասկանում էր, որ հօրեղբօր կինը կատաղած է իր դէմ. տեսնում էր, որ այդ ընդհարման պատճառն ինքն է, ուստի ինչքան ուզում էր միջամտել իրեն ճնշող այդ խօսակցութեանը վերջ դնելու համար, ոչինչ չէր կարողանում ասել։ Առհասարակ նա զարմանալի վախկոտ էր դարձել Եւային արած խոստովանութիւնից յետոյ։

Կարճ ժամանակ խիստ ճնշող լռութիւն տիրեց։ Մայր ու աղջիկ, կարծես իրարից խռոված, նայում էին իրար հակառակ կողմը։ Աշխէնն անհանգստութեամբ շուռ ու մուռ էր գալիս աթոռի վրայ, մեքենայաբար նայելով դահլիճում իրար անցնող հասարակութեանը։ Իսկ մնացածներն՝ անախորժ, անորոշ տպաւորութեան տակ՝ չէին իմանում ինչ ասեն։

Այդ միջոցին վրայ հասաւ Մարութեանը։

—Է՛ռի-հա՜, մի բոպէ հեռացայ, և դուք ոչինչ չէք գտնում խօսելու,—բացականչեց նա։—Ասենք, Եւան երդուել է այլևս չխօսել, դո՞ւք ինչ էք, մանաւանդ դո՛ւք, օրիորդ,—դիմեց նա օր. Սահակեանին։—Ինչպէս տեսնում եմ, որքան Եւայի քոյրն է հեռանում, նոյնքան և ձերը։ Ես ձեզ այդքան թուլասիրտ չէի կարծում։ Յամենայն դէպս, դուք ամենքդ էլ անշնորհք էք. ձեզ հետ ոչ կարելի է քէֆ անել, ոչ ճանապարհորդել. դուք կըքնեցնէք մարդու։ Պարոն Մինասեան, համեցէք—այս ձեզ, այս էլ—քեզ, Աշխէն ջան։

Այդ ասելով, նա երկու տոմսակ դրեց՝ մէկը Մինասեանի, միւսը Աշխէնի առաջ։ Տոմսակներն երկրորդ կարգի էին։

—Նստեցէք ձեզ համար փափուկ նստարանների վրայ ու հայդա,—աւելացրեց նա, շտապով նստելով իր տեղը։

Մինասեանը զարմացած վերցրեց տոմսակը, նայեց և բերանը բաց արեց, որ բան ասի, բայց Մարութեանը բռնեց նրա թևից և դրանով հասկացրեց, որ աւելորդ է այդ մասին խօսելը։

—Դէհ, խմենք վերջին բաժակը,—կանչեց նա։—Աշխէն ջան, դարձեալ և առանձնապէս քո կենացը։ Հաւատացիր, ես էլ Եւայի նման... նեղողութիւն, երեխայի նման լաց կըլինէի և չէի թողնիլ, որ գնաս, եթէ համոզուած չլինէի, որ ապարդիւն գործի համար չես գնում։ Այս օրուանից ազատ ես, թռիր ուր ուզում ես։ Այն աստիճան վստահ եմ քեզ վրայ, որ խիղճս երբէք չպէտք է տանջի ինձ, թէ վատ բան եմ արել, որ քեզ, եթէ կարելի է այսպէս ասել, քեզ եմ յանձնել։ Ինձ տանջել միայն կարող է կարօտը, և հաբէկ կայ ասելու, թէ ինչպիսի ուրախութեան օր կըլինի ինձ համար այն

օրը, երբ նորից կըտեսնեմ քեզ ողջ, առողջ, անյուսաբեկ։ Բայց յոյսս մեծ է։ Մինչև այժմ իմ ամենամեծ բաղձանքն այն է եղել, որ արժանանամ իմ Արմենակի տեսութեանը. այսօրուանից նոյնպիսի մի բաղձանքի առիթ տալիս է և իմ Աշխէնը։ Բարով գնաս, սիրելիս, զաւակս։ Հայրական սրտով օրհնում եմ ճանապարհդ։ Աստուած տայ, որ դու էլ, իմ Արմենակի նման, մեր ընտանիքի պարծանքը դառնաս։ Խփենք բաժակները։ Այդպէս։ Կեցցէ՛ս։ Կրկին և միլիոն անգամ բարի ճանապարհ և բարի վերադարձ։

Եւ Մարութեանը մի շնչում դատարկեց բաժակը։

Մինասեանը, որը հիացած էր մնացել այդ վերին աստիճանի շարժուն ու կենդանի մարդուց, վերջին խօսքերի ժամանակ արտասուքի կաթիլներ նկատեց նրա աչքերի մէջ։ Նա նայեց Աշխէնի լուրջ, դունատ դէմքին և տեսաւ, որ նրա վայր թողած աչքերն էլ թաց են եղել։

—Է՛ւա, վերջապէս, դա բանի նման չէ, ասաց հայրը,—դատարկ բաժակը փոքր ինչ սաստկութեամբ դնելով սեղանի վրայ։—Հաւատացիր, կատակ չեմ անում. ականջս այն աստիճան սովորել է ձայնիդ, որ ուղղակի անտանելի է ինձ համար, երբ չես խօսում։

Եւայի աչքերի կոպերը դողդողացին։

—Հայրիկ, դու ինձ նեղացնում ես,—արտասանեց նա լացակումած ձայնով և շուռ եկաւ աթոռի վրայ։

Մարութեանը լռեց և տխուր մտախոհութեամբ մնաց նայելիս աղջկայ դէմքին։

Թեկլէն վիրաւորուած հանգստութեամբ նայում էր այս ու այն կողմ և երբեմն-երբեմն անհաշտ հայեացքներ էր նետում Աշխէնի վրայ։

Օր. Սահակեանը կարեկցութեամբ նայում էր Եւային և, հակառակ իր սովորութեան, թէ տխուր էր

և թէ հէնց սկզբից տրամադրութիւն չունէր խօսելու։

Մինասեանը, իբրև օտար, նոյնպէս նայում էր Եւային, և նրան հիացնում էր այդ աղջկայ անբիծ գեղեցկութիւնը, որ այս անգամ, տխրութեան մէջ, ինչ-որ տրագիքական-մելամաղձիկ դրոշմ էր կրում։

Իսկ Շահեանի թախիծն այն աստիճան սաստկացել էր, որ նա մինչև անգամ կորցրել էր դգալու ընդունակութիւնը։

Այն ինչ Աշխէնը, հօրեղբօր խօսքերի զօրեղ ազդեցութեան տակ, չէր իմանում, թէ ինչ է կատարւում շուրջը։

—Կարծեմ, գնացքն արդէն եկել է,—ասաց Մինասեանը։

Մարութեանը յանկարծ սթափուեց իր մտախոհ դրութիւնից։

—Ա՜, արդէն,—արտասանեց նա և մեքենայաբար վերկացաւ տեղից։

Նրա հետ վերկացան և միւսները։

Դահլիճում իրարանցումը սաստկացել էր։ Դէպի պլատֆորմ տանող դուռն անդադար բաց ու խուփ էր լինում, և ներս էին մտնում ամեն տեսակ մարդիկ։ Ձմեռուայ վերարկուների մէջ կոլուած, ճամպրուկներով և բազմազան փաթեթներով։ Դահլիճում գտնուած մարդիկ իրենց հերթին, վերցնելով իրենց ճանապարհորդական իրերը, շտապում էին դէպի դուրս, դռան մօտ ամբոխուելով և իրար բոթբթելով։ Այդ միջոցին Շահեանի աչքովն ընկաւ և իսկոյն էլ կորաւ բազմութեան մէջ մի ծանօթ դէմք։ «Բազէնեանը չէ՞ր արդեօք» մտածեց նա։

Դեռ երկրորդ զանգը չէին տուել, որ Մարութեանները, օր. Սահակեանը, Մինասեանն ու Շահեանն արդէն վագոնումն էին։ Այստեղ արդէն ամենքն էլ հրաժեշտի վերջին րոպէի ծանր ազդեցութեան տակ էին։ Թեկլէի սիրտը կակղել էր, և նրա աչքերի մէջ մինչև անգամ արցունքներ էին նկատւում. նա խորհուրդ էր տալիս Աշխէնին, որ լաւ պահի իրեն, չմրսի, չհիւանդանայ։ Մարութեանը խնդրում էր, որ Աշխէնը որքան կարելի է՝ յաճախ նամակ գրի իրենց։ Օր. Սահակեանը նոյնն էր խնդրում ընկերուհուց։ Մինասեանը սովոր ձեռքով տեղաւորում էր իր և Աշխէնի իրեղէնները։ Եւան լուռ էր և սառն հանգստութեամբ դիտում էր Մինասեանի արագ շարժումները։ Իսկ Շահեանը, ինքն իր մէջ կեդրոնացած, քաշուել էր մի կողմ և ապուշի նման նայում էր մերթ մէկին, մերթ միւսին, նայելով թէ ով էր խօսում, և զգում էր, որ հէնց սկզբից մի աւելորդ մարդ է Մարութեանների, Մինասեանի և օր. Սահակեանի ընկերութեան մէջ, իսկ այժմ վագոնի այդ նեղ պատերի մէջ արդէն խանգարում է նրանց ազատ շարժուելուն։ Սրտի անպատմելի դառնութեամբ նա տեսնում էր, որ ոչ ոք ուշք չի դարձնում իր վրայ, կարծես ինքն այնտեղ չլինէր, կարծես մի երեխայ, մի ծառայ լինէր կանգնած այնտեղ։

[Լսուեց երկրորդ զանգի զրնգզրնգոցը։]

Եւան, առաջուայ նման, դարձեալ ցնցուեց, բայց անշարժ մնաց տեղը։

Մինչդեռ միւսները շտապեցին իրենց հրաժեշտը տալ ուղևորներին։

Թեկլէն մի քանի անգամ համբուրեց Աշխէնին և հաղիւ զսպեց արտասուքը։ «Լաւ պահիր քեզ, որդիս, լաւ պահիր», վերջին անգամ կրկնեց նա։

Օր. Սահակեանը, արցունքն աչքերին, գրկուեց և համբուրուեց հեռացող ընկերուհու հետ և պինդ սեղմեց Մինասեանի ձեռքը։

Մարութեանը ոչ մի կերպ չէր ուզում ընկճուել

հրաժեշտի ծանր բոպէի ազդեցութեան տակ. կարծես իրեն և միւսներին սիրտ տալու համար, բռնի աշխոյժով սեղմեց եղբօր աղջկայ և Մինասեանի ձեռքը, չը-մոռանալով մի անգամ ևս կրկնել, որ Աշխէնը շուտ-շուտ նամակ գրի իրենց։ Բայց և այնպէս նրա աչքերը լիքն էին արտասուքով։

Յետոյ մօտեցաւ Շահեանը և, հազիւ սեղմելով Աշխէնի և ընկերոջ ձեռքը, շտապեց ամենից առաջ դուրս գնալ վագոնից։

Ամենից վերջը Եւան տուեց իր հրաժեշտը հեռացողներին։ Նա ոչ մի խօսք չարտասանեց, միայն կամաց փաթաթուեց Աշխէնի վզովը և դէմքը սեղմեց նրա կրծքին։ Մի վայրկեան նրա ուսերը սաստիկ ցնցուեցին։

Աշխէնի աչքերը վաղուց արդէն լցուած էին արցունքով։ Նա նոյնպէս ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել. միայն դողացող շրթունքներն երկար ժամանակ սեղմած պահեց Եւայի դէմքի վրայ, ականջի մօտ։

—Բաւական է, բաւական է,—կանչեց Մարութեանը, տեսնելով, որ նրանք չեն ուզում բաց թողնել իրար։—Շուտով երրորդ զանգը կըտան։

Եւան յանկարծ թողեց Աշխէնին և, առանց նայելու նրան, դուրս վազեց վագոնից։

Մարութեաններն ու օր. Սահակեանը դուրս խըմբուեցին վագոնի լուսամուտի տակ։ Շահեանը չքաշել էր. նրա բացակայութիւնը ոչ ոք չնկատեց էլ։ Աշխէնը գլուխը դուրս էր հանել լուսամուտից։ Նրա եռևից երևում էր Մինասեանի գլուխը։ Աշխէնի և Եւայի աչքերը սաստիկ կարմրել էին։ Երկու կողմից էլ կցկտուր խօսքեր էին փոխանակւում։

Զանգն երրորդ անգամ զընգզընգաց։ Մի կոնդուկտոր, վառ լապտերը ձեռքին, շտապ քայլերով անցաւ

վագոնների լուսամուտների տակով։ Վագոնների դռները սկսեցին չրխկոցով փակուել։ Լսուեց աւագ կոնդուկտորի սուլիչի դողդոջուն սուր ձայնը։ Շոգեմեքենան սուլեց և տնքաց։ Վագոնների երկայն շարքը յանկարծ ցնցուեց, մի վայրկեան մնաց անշարժ, յետոյ սահուն կերպով սկսեց առաջ շարժուել։

—Գնա՛ք բարեաւ, բարի՛ ճանապարհ,—վերջին անգամ կանչեց Մարութեանը, գլխարկը շարժելով։

Ամենքը մեխուած մնացին իրենց տեղում, մինչև որ վագոնների մութ շարքը միախառնուեց գիշերային մթութեան հետ, հեռուից ուղարկելով միայն անիւների հեռզհեռզ խլացող գրգռոցն ու շոգեմեքենայի արագ հնքը։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Օրերն օրերի, շաբաթներ շաբաթների ետևից անցնում էին Շահեանի համար դանդաղ, միակերպ, տաղտկալի։ Իսկապէս ոչ մի պատկեր չունեցող իր կեանքը նա պատկերաւորում էր այնպէս, որ կարծես ինքը խըրուած լինէր անշարժ, կպչուն ճահճի մէջ և քանի գընում, այնքան խորն էր խրւում, մինչև որ բոլորովին կանհետանար, և ճահճի մակերեսը կըհաւասարուէր, ոչ մի նշան չթողնելով, թէ այնտեղ, խորքում, մարդ կայ թաղուած։ Իր անպէտքութեան և ապիկարութեան մասին ունեցած գիտակցութիւնն այժմ այլևս առաջուայ ուժով չէր հալածում նրան։ Այդ գիտակցութիւնը կամաց-կամաց բթանում և փոխւում էր մի տեսակ ապատիայի, որի մէջ բանաւոր արարածի կեանքը ստորանում է մինչև անբան կենդանու կեանքի աստիճանը, որի մէջ մարդը դառնում է զուտ կենդանական մի մարմին՝ առանց մտածումների, առանց յոյզերի, առանց նպատակների։

Այն գիշերը, երբ Շահեանը, Մինասեանին և Աշխէնին ճանապարհ ձգելուց յետոյ, երկաթուղու կայարանից տուն դարձաւ, հօրը մեռած գտաւ կաթուածից։

Կէս ժամ առաջ աղա Կարապետի սառած դիակը բարձրացրել և դրել էին մահճակալի վրայ։ Խալաթը

դեռ ևս հագին էր. թրքական կարմիր ֆէսն ընկած էր յատակի վրայ. ձախ ձեռքը բռունցք կազմած՝ կախ էր ընկել մահճակալից. դէմքը սառած էր ջղաձգական կըծկումների մէջ։ Գլուխը բարձի վրայ չէր, այլ ներքև և կուրծքն ու փորը սարի նման բարձրացել էին դէմքի և ոտների մակերեսից։

Շահեանը նայեց և յետ քաշուեց սարսափահար։ «Ահա մահը» մտածեց նա և, ազատուելով վշտահար հեծկլտող մօր գրկից, քաշուեց իր ննջարանը։ Ամբողջ գիշեր չկարողացաւ քնել։ Զարմանալի յամառութեամբ նրա մտքից չէր հեռանում մի բան—հօր՝ մահճակալից կախ ընկած ձեռքը։ Նա մտածում էր, թէ բռունցք սեղմած այդ ձեռքն այնքան ծանր պիտի լինէր, որ եթէ մէկը փորձէր բարձրացնել, չպիտի կարողանար։

Հօր մահը նրան խիստ ազդել էր իբրև շարժուող, մտածող, զգացող արարածից մնացած անշունչ, սառած մի մարմին, որը գերանի կտորից ոչնչով չէր տարբերուում։ Մարդը մօտ վաթսուն տարի ապրում, յուզուում, չարչարուում, մերթ ուրախանում, մերթ տխրում էր, անդադար ինչ-որ ծրագներ էր կազմում, հետամուտ էր լինում ինչ-որ նպատակների, և յանկարծ այդ բոլորից յետոյ ոչինչ չկայ այլևս. կայ միայն գերանի կտորից ոչնչով չտարբերուող, մսից և ոսկորներից բաղկացած անկենդան մի մարմին, որը թէկուզ մաս-մաս արա և ձգիր կրակի բոցերի մէջ,—ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չի հանիլ։ Մինչդեռ որպիսի՜ սոսկալի աղաղակ կըբարձրացնէր այդ մարդը կենդանի ժամանակ, եթէ կտրէիր նրա տասն մատներից մի ճկոյթը... Ահա ուրեմն ինչ է մահը.—ոչ մի զգացողութիւն, հետևաբար՝ ոչ մի տանջանք, ոչ մի բողոք. կատարեալ հաշտութիւն և անդորրութիւն...

Հօրն այնպէս թաղեցին, որ Շահեանը մի կաթիլ

արտասուք անգամ չթափեց։ Նրան յուզում էր միայն մօր ծանր վիշտը, սակայն, այդ վիշտն էլ չտեսնելու համար, փակւում էր իր սենեակում։

Այժմ նա բոլորովին կտրել էր իրեն արտաքին աշխարհից։ Հօրից ժառանգութիւն մնացած կալուածների կառավարութիւնը յանձնել էր իրենց հեռաւոր ազգական Ստեփան անունով մի մարդու, որը փառաւորապէս խարում էր նրան և եկամտի մի մասն իր գրպանը կոխում։ Շահեանը գիտէր այդ, բայց ամենևին չէր յուզւում։ Նա միանգամայն գոհ էր, որ ոչոք և ոչինչ չէր խանգարում իր հանգիստը։ Իսկ նրա հանգիստն այն էր, որ ամբողջ օրը կամ չափում էր տաք սենեակի մի ծայրից միւսը, կամ կարդում էր մաղձով լի յոռետես-փիլիսոփաների երկերը, կամ պառկում ու քնում էր օրուայ որ ժամին էլ պատահէր։

Մինչդեռ այդ ժամանակներումն էր, որ Թիւրքա-Հայաստանում յանկարծ երևան եկած շարժումները խլրտումն էին ձգել հասարակութեան մէջ և զբաղեցնում էին մտքերն աւելի ու աւելի։ Երբեմն լրագրների մէջ սպրդած մի չնչին լուր ձեռքից ձեռք էր խլում. մասնաւոր տեղեկութիւնները շրջում էին բերնէ բերան. ամեն տեղ խօսում, դատում, վիճում էին. մէկը տասն էին շինում, տասը—հարիւր։ Ինչ-որ քնած հսկայական մի բան շարժուել էր յանկարծ և իր հուժկու հոսանքի հետ քշում էր ամենքին ուր-որ... Մեռած հայութեան մեռած յոյսերը կենդանացել էին, թէև ապագան ծածկուած էր անթափանցելի մռայլ քօղով...

Մի անգամ, կէսօրին մօտ, երբ Շահեանը, իր սովորութեան համաձայն, չափում էր սենեակի երկարութիւնը, հաճելի խտղանք զգալով ոտներին թոյլ կերպով հագած փափուկ մաշիկների շլպ-շլպոցից, ծառան մտաւ և յայտնեց, որ մի պարոն ուզում է տես-

նել նրան։ Նա պատուիրեց, որ այդ պարոնին ներս հրաւիրէ հիւրասենեակ, իսկ ինքը, զարմանալով, թէ ով կարող է իրեն տեսնել ուզենալ, քանի որ ոչոքի հետ յարաբերութիւն չունէր, դէն ձգեց մաշիկները, հագաւ կօշիկները, շտապով հանեց խալաթը, որ հօր մահից յետոյ սովորութիւն էր արել հագնելու, հագնուեց, մի քիչ էլ կոկուեց և դուրս գնաց հիւրին ընդունելու

Հիւրասենեակում նրան դիմաւորեց Բաղէնեանը, որին նա բոլորովին մոռացել էր։

—Այս էլ ես, իմ սիրելի վաղեմի բարեկամ,—մտերմական շինծու քաղաքավարութեամբ ասաց Բաղէնեանը, երկու ձեռքով սեղմելով Շահեանի ձեռքը։ Նա հագնուած էր վերջին մոդով, մաքուր, գեղեցիկ և հոտաւէտ օծանելիքով սրսկուած։—Հաւատարիմ մնացի խոստմանս և, երկար տարիների բացակայութիւնից յետոյ վերադառնալով այս օրհնեալ քաղաքը, նորից բաղդ ունեցայ քաղցր տեսութեանդ արժանանալու։ Եւ ի նկատի ունեցիր, սիրելիդ իմ Լևոն, որ այստեղի հին բարեկամներից դու ես առաջինը, որին այցելում եմ, չնայելով որ այս կողմերի գաւառական մի քանի քաղաքներն արած էքսկուրսիայիցս մի ամսից աւելի է, որ վերադարձել եմ։

—Երկաթուղու կայարանում, կարծեմ, քեզ տեսայ։

—«Միխայլովո կայարանում։

—Ոչ, Թիֆլիս մտած օրդ։

—Չեմ կարող ասել՝ տեսաը թէ ոչ, որովհետև ես քեզ չեմ տեսել։ Է՛հ, ուրիշ, ինչ բարիդ հարցնենք։ Ծնողներդ ողջ են, առողջ են։

Շահեանը յիշեց, որ հայրը մեռել է, և դէմքին տխուր արտայայտութիւն տուեց։

—Հայրս մեռաւ,—ասաց նա։

Բաղէնեանն աչքերը չուեց անակնկալ լուր լսողի պէս։

—Մեռաւ... ինչ, ինչ ես ասում։ Նստիր տեսնենք։

Եւ, վերին աստիճանի նուրբ կեղծ ցաւակցութեան հետաքրքրութիւն ցոյց տալով, Բաղէնեանը վարուեց այնպէս, որ կարծես ինքը չէր հիւրը, այլ—Շահեանը։ Շահեանի ձեռքից բռնած՝ նստեցրեց նրան և ինքը նստեց նրա մօտ։ Շահեանը համառօտ կերպով պատմեց հօր մահը։

—Շատ, շատ ցաւում եմ,—լրջութեամբ լսելուց յետոյ ասաց Բաղէնեանը, պինդ սեղմելով նրա ձեռքը։—Ափսոս, չեմ իմացել, որ կատարէի ընկերական պարտքս և ներկայ լինէի թաղմանը։ Խնդրում եմ նեարիր։ Այդ օրերն ես նոր էի եկել և այնքան խառնուած էի, որ ժամանակ չունէի մինչև անգամ լրագիր առնելու ձեռքս։ Ցամենայն դէպս, դու էլի բաղդաւոր ես, Լևոն,—աւելացրեց նա հառաչելով։—Գոնէ տուն ունիս, տեղ ունիս, վերջապէս, մայր ունիս։ Իսկ ես... Մանկութիւնից արդէն դատապարտուած էի որբութեան և անտէրութեան, և զարմանալի չէ, որ այնքան փչացած էի։ Նրանից յետոյ աւելի փչացայ։ Երկու անգամ բանտ եմ նստել գողութեան համար։ Մի անգամ էլ մարդ սպանեցի և փախայ արդարադատութեան ձեռքից, և այդ բանը փրկեց ինձ վերջնական անկումից։ Բացի դրանից, ես ընկայ այնպիսի շրջաններ, ուր ինձ կատարելապէս կերպարանափոխեցին, այո, կատարելապէս, այնպէս որ շատ անգամ, երբ համեմատում եմ անցեալս ներկայիս հետ, ինքս էլ ապշած եմ մնում, թէ ինչպէս կարող էի այսպէս փոխուել։ Լինում են մարդիկ, որոնք բնաւորութեան մի ծայրայեղութիւնից ընկնում են միւս ծայրայեղութեան մէջ։ Այդպիսինե-

ըից մէկն ես եմ, երևի։ Գիտես թէ ինչ էի պռաջ, բայց այժմ... Է՛հ, ես իմ մասին սկսեցի խօսել։ Չեմ սիրում,—կանչեց Բաղէնեանը և, վերկենալով, մի ծըխախոտ վառեց։ Աւելի լաւ է քո մասին պատմես։ Ի՞նչ ես անում, ի՞նչ չես անում։

—Իմ մասին խօսելն ամենևին հետաքրքրական չէ,—ասաց Շահեանը շփոթուելով։—Ես, ա՛յ, այսպէս անդործ և անպէտք ընկած եմ տանը։ Դու քո՛ մասին պատմիր։ Ո՞ւրտեղ էիր այսքան ժամանակ, ի՞նչ էիր անում, այդ ի՞նչ փոփոխութիւն է, որ կատարուել է քո մէջ։

—Է՛, այդ մասին որ խօսեմ, օրերով պէտք է նըստեմ քեզ մօտ. դա ձեռաց պատմելու բան չէ։ Բայց այժմ...

Բաղէնեանը զդուշօրէն նայեց հարևան սենեակի դռանը և հարցրեց ձայնը ցածրացնելով.

—Այնտեղ խօ մեզ ոչոք չի՞ լսում։

Շահեանը զարմացած նայեց նրա խորհրդաւոր դէմքին։

—Չէ։ Ի՞նչ է որ։

Բաղէնեանը, շարունակելով նայել հարևան սենեակի դռան կողմը, նստեց Շահեանին մօտիկ և ձայնն աւելի ևս ցածրացրեց։

—Ես քեզ, իբրև վաղեմի մտերիմ ընկերոջս, մի բան պիտի յայտնեմ, որը յոյս ունիմ, մեր մէջ կըմնայ։

Եւ Բաղէնեանը խորհրդաւոր եղանակով ու մութ ակնարկներով սկսեց պատմել ուրուասահմանում կազմակերպուած հայկական մի ինչ-որ կոմիտէի մասին, որի նպատակն է յեղափոխութիւն առաջ բերել Թիւրքիայի հայկական գաւառներում։ Ցայտնեց, որ ինքն այդ կոմիտէի գործօն անդամներից մէկն է և եկել է Կովկաս յատուկ այն նպատակով, որ տեղական մաս-

նաճիւղեր կազմէ, դրամ հաւաքէ և զէնք ուղարկէ։ Ասաց, որ գործն արդէն սկսուած է, ապացոյց բերեց վերջին անցքերը, բացատրեց այդ անցքերի նշանակութիւնն ապագայի համար, մտաւ նոյն իսկ պետութիւնների դիւանագիտութեան նրբութիւնների մէջ և, վերջի վերջոյ, ազատ և անկախ հայրենիքի մի սիրուն պատկեր գրեց ապշած Շահեանի առաջ։

Բաղէնեանը ճարպիկ լեզու ունէր. խօսում էր կենդանի և ազդու կերպով. գիտէր իր պատմածներին խորհրդաւոր գոյն տալ։ Ընդնմին իր շարժումները, արտասանութիւնը, հետաքրքրութիւն զարթեցնելու և լսողին գրաւելու բոլոր ձևերն արտիստիքական կատարելութեան էր հասցրել։

Շահեանը սկզբում սկսել էր վախենալ նրանից։ Բաղէնեանի պատմածները վերին աստիճանի համարձակ բաներ էին թւում նրան, և իր նախկին ընկերն ամեն մի խօսքի վրայ աճում, բարձրանում էր նրա աչքում։ Բայց յետոյ կամաց-կամաց զրաւուեց, իսկ վերջը լսում էր նրան ամենայն հաճութեամբ, նոյն իսկ ագահօրէն։ Նրա ինքնասիրութեան համար խիստ հաճելի էր, որ այդպիսի մեծ գործի նուիրուած մի երիտասարդ հաւատ էր ընծայում իրեն և իր տան մէջ բոլորովին մտերմօրէն պատմում էր իրեն իրենց գաղտնիքները։

Նա խնդրեց, որ Բաղէնեանը ճաշի մնայ իր մօտ։ Բաղէնեանը սկզբում հրաժարուեց, բայց վերջը, զիջելով Շահեանի թախանձանքին, մնաց։ Ճաշին յեղափոխականի գլուխը բաւական տաքացաւ և լեզուն աւելի բացուեց։ Շահեանն էլ այդ օր սովորականից շատ աւելի խմեց Կախէթի ընտիր գինուց։ Երբէք այդ օրւայ պէս լաւ տրամադրութեան մէջ չէր զգացել իրեն։ Նրան թւում էր, թէ այդ օր, ճաշի ժամանակ, երբ գի-

նին արդէն գլուխն էր ընկել, վերածնութեան մի օր է իր համար։ Մի առանձին եռանդ, երակների մէջ մի առանձին տաքութիւն էր զգում, որոնք առաջ բոլորովին անծանօթ էին նրան, և նա էլ սկսել էր շատ խոսել։ Բանն այնտեղ հասաւ, որ երբ Բաղէնեանը բաժակը կրկին բարձրացրեց «սուրբ գործի» կենացը, Շահեանը բաժակը ձեռքին վեր թռաւ տեղից և համբուրեց ընկերոջ փոքրիկ ձիգ բեխերից։

—Այդ գործի օգտին հինգ հարիւր ռուբլի ես եմ նուիրում,—բացականչեց նա։

Այստեղ արդէն Շահեանն այն աստիճան զգացուեց, որ սկսեց ամենայն անկեղծութեամբ խոստովանուել իր ոչնչութիւնը—մի բան, որ դեռ ոչոքի առաջ չէր արել։ Էլ ցեխ ու մուր չմնաց, որ չթափէր իր վրայ։

—Ասա, խնդրեմ, ինչացու եմ ես,—ասում էր նա տաքացած, ռուսերէն լեզուով, որպէսզի մայրը, որ ներկայ էր ճաշին, չհասկանայ իրենց խօսակցութիւնը։—Հ՞ը, քեզ եմ հարցնում, ինչացու եմ ես կամ ինչացու են ինձ նմանները, եթէ միայն ուրիշներն էլ կան ինձ նման։ Ես չեմ ընդունում, թէ ինձ նման մէկ ուրիշն էլ լինի, որովհետև չգիտես, ախր, թէ ինչ եմ ես։ Ես... ինչպէս ասեմ... ես հասարակութեան, ազգի համար մի մինուս եմ, մի զերօ, որը իր մէջ պարունակում է տուրիչելեան դատարկութիւնից էլ մեծ դատարկութիւն։ Ողորմածիկ հայրս թէև,—ինչ ծածկեմ մեղքս,—վախենում էր ինձնից, որովհետև իմ բոլոր մաղձը նրա վրայ էի թափում, բայց երբեմն էլի ուղղակի կամ անուղղակի երեսովս էր տալիս իմ անպէտքութիւնը։ Այդ ինձ կատաղեցնում էր։ Ինչու։ Որովհետև ճշմարտութիւնն էր ասում, և ես օգուտ էի քաղում այն հանդամանքից, որ իր միակ զաւակն էի և նա սիրում էր

ինձ։ Մի անգամ էլ երկու օրիորդի, երկու զարմանալի օրիորդի հետ խօսակցութիւն ունեցայ կեանքի և մարդու գոյութեան նպատակի մասին։ Թէ ինչպէս նրանք ցամաք-ցամաք ցեխը կոխեցին ինձ ու հանեցին իմ յոռետեսական հայեացքներիս համար,—չեմ կարող ասել։ Նրանք պարզապէս հասկացրին ինձ, որ ես յոռետես եմ ձևանում նրա համար միայն, որ ծածկեմ իմ ոչնչութիւնը։ Երբ նրանցից հեռացայ, ինձ թուաց, թէ փողոց եմ դուրս եկել կաշիս մաշկած, անատոմիական ծանօթ նկարի պէս։ Մինչև հիմա էլ, որ մտաբերում եմ, ուզում եմ գետինը մտնել ամօթից։ Հիմա—համեմատենք ինձ ու քեզ։ Ի՞նչ ես դու և ի՞նչ եմ ես։ Դու կրակ ես, ես—սառույց. դու հեղեղ ես, ես—ճահիճ. մինչդեռ դու տարին տասներկու ամիս՝ հանգստութիւնդ, անձնական վայելքներդ մոռացած՝ թափառում ես երկրից երկիր անմահ գործի համար և մութ բանտը, տաժանելի կապանքներն ամեն րոպէ աչքիդ առաջն են, ես ի՞նչ եմ անում. ես, ա՛յ, այս չորս պատերի մէջ առանձնացած, քնում եմ՝ երբ ուզում եմ, քնում եմ՝ երբ ձանձրանում եմ արթուն մնալուց, ապահով միանգամայն այն բանից, որ փողոցի մուրացիկն անդամ չի հալածում ինձ իր աղիողորմ աղերսներով։ Այս ի՞նչ կեանք է։ Այսպէս վերջին մրջիւնն անգամ չի ապրում։ Հաւատա, Բաղէնեան, եթէ մայրս չլինէր, ես վաղուց արդէն անձնասպանութիւն կըլինէի գործած, որովհետև չգիտես, ախր, թէ ինչ զարհուրելի, ինչ անտանելի կեանք է այս, որ ես եմ վարում։ Գիտակցութիւն ունիմ, դուցէ, աւելի, քան պէտք է ունենան ինձ նման ողորմելի արարածները, բայց կամք չունիմ, ընաւորութիւն չունեմ, մի խօսքով՝ փալաս եմ, ամօթ է ասել, նոյն իսկ աղտոտութիւնը սրբելու անարժան մի փալաս...

Բաղէնեանը սկսեց հանգստացնել նրան, լրջօրէն համոզելով, որ իզուր է այդպէս վատաբանում իրեն, որ նրա պէս ազնիւ հոգու և ձգտումների տէր երիտասարդներն, ընդհակառակը, շատ պիտանի են աղդին, իսկ այդպիսի երիտասարդներ շատ չեն գտնիլ։ Նա ասաց, որ Թիֆլիսում, փոքրիշատէ ունևոր դասակարգի մէջ, միայն Շահեանին է հանդիպում, որ խոշոր նուիրաբերութիւն է անում «սուրբ գործի» օգտին—մի բան, որի համար հայրենիքի թշուառ զաւակները երախտապարտ պիտի մնան նրան։ Ինքը, Բաղէնեանը, փող չունի՝ գործով է օգնում, Շահեանը փող ունի՝ փողով է ուզում օգտակար լինել,—մի՞թէ այդ միևնոյնը չէ. օգնութիւնն օգնութիւն է՝ փողով թէ գործով. մէկը միւսից աւելի է և մէկը միւսին լրացնում է։ Այստեղ Բաղէնեանն երկար ու բարակ փիլիսոփայութեան մէջ մտաւ, բացատրելով փողի և գործի փոխադարձ ոյժն ու նշանակութիւնը։

Զնայելով որ գինին արդէն բաւական կպել էր երկսին էլ, խօսակցութիւնն ամենևին թեթև ընաւորութիւն չէր ստանում. ընդհակառակը, նրանք աւելի ու աւելի խոր փիլիսոփայութիւնների մէջ էին մտնում, մանաւանդ Շահեանը, որի հիւանդութիւնն էր վերացական դատողութիւններով զբաղուելը։

Խօսակցութիւնը զուտ նեղ, մտերմական բնոյթ ստացաւ ճաշից յետոյ, երբ նրանք, փափուկ բաղկաթոռների վրայ իրար դէմուդէմ նստած, թանկագին սիգարների ծուխը դէպի առաստաղն էին բարձրացնում։ Շահեանն ամենայն անկեղծութեամբ ասում էր այն բոլորը, ինչ որ սրտումն ունէր, և համոզուած էր, թէ Բաղէնեանն էլ ինչ որ ասում էր, իր սրտինն էր ասում։ Մինչև անգամ ամենևին կասկած չտարաւ այն մասին, որ երբ նորից հարցրեց, թէ ինչպէս է հղել

որ նա այդպէս փոխուել և իրեն «սուրբ գործին» է նուիրել,—Բաղէնեանը հառաչելով պատասխանեց, թէ պատճառը գլխաւորապէս էլզասցի մի աղջիկ էր, զարմանալի, նմանը չունեցող մի աղջիկ, որը գրեթէ խելագարուած էր «ոբվանշի» վրայ։

—Նա կարող էր երկրորդ Ժանն դ'Արք լինել, եթէ հիւանդ չլինէր,—շարունակեց Բաղէնեանը։—Նրա հետ ծանօթացայ Ցիւրիխում։ Ասում էր, թէ փախել է Ստրասբուրգից պարզապէս նրա համար, որ այլևս չը-տեսնէ «գարեջրի հոտած տակառների» երեսը։ Այդպէս էր անուանում գերմանացիներին, որոնք, յիրաւի, հոտած ազգ են և սարսափելի բռնակալ։ Ինքը հասարակ ծնողների զաւակ էր, բայց բաւական զարգացած։ Եղբայրը ծառայում էր գերմանական զօրքի մէջ և—դու տես բաղդի խաղը—թունդ գերմանոֆիլ էր։ Դրա համար եղբօրն աւելի էր ատում, քան թէ իրեն՝ երկաթի կանցլերին։ Եղբօր անունն անգամ չէր ուզում լսել, իսկ երբ խօսակցութիւն էր բացւում նրա մասին, ուղղակի դաւաճան էր անուանում նրան և դառնութեամբ գանգատւում էր, որ իր պէս թշուառ քոյր չկայ աշխարհիս երեսին։ Ես չեմ պատմիլ, թէ ինչպէս ծանօթացայ նրա հետ, ինչպէս մօտեցանք իրար,—դա մի ամբողջ ռոմանի նիւթ կարող է լինել,—այսքանս միայն կասեմ, որ... գժուածի պէս սիրահարուեցի նրա վրայ։ Այո, գժուածի պէս, Լևոն... Ի դէպ. դու երբևիցէ սիրահարուա՞ լ ես։

Այդ հարցի վրայ Շահեանի աչքի առաջ խսկոյն պատկերացաւ Եւան, և նրա սիրտը լցուեց դառն անձկութեամբ։

—Ոչ,—պատասխանեց նա, երկար տատանումից յետոյ։

—Ուրեմն երջանիկ ես։ Այո, երջանիկ ես, Լևոն, որովհետև սիրոյ պատճառած դառնութիւնն աւելի է,

քան քաղցրութիւնը։ Գոնէ իմ սէրն ինձ մեծ տանջանք պատճառեց։ Նա մեռաւ, Լևոն, մեռաւ՝ ինչպէս մեռնում է աղատութիւն սիրող թռչունը վանդակի մէջ, մեռաւ՝ ինչպէս մեռնում է մայր հողից կտրուած ծաղիկն օտար հողի մէջ... Հարկաւոր է արդեօք պատմեմ, թէ նրա մահն ինչ ազդեցութիւն ունեցաւ ինձ վրայ։ Այսքանս բաւական է ասեմ, որ մի անգամ նոյն իսկ փորձեցի անձնասպանութիւն գործել, բայց դարձեալ նրա յիշատակը եղաւ, որ ինձ փրկեց։ Մի անգամ, մի հրաշալի գիշեր,—ա՜խ, այդ սիրոյ գիշերները, երբ լուսնի ծիծաղկոտ լոյսը չես իմանում տանջում է քեզ, թէ փաղաքշում,—այդպիսի մի գիշեր դուրս եկանք զբօսանքի։ Նա ասաց, որ իր հայրենիքի վիճակն երբէք չի տանջում իրեն այնպէս, ինչպէս այդպիսի հրաշալի գիշերներին, և յանկարծ հարցրեց իմ հայրենիքի մասին։ Ինձ թուաց, թէ յանկարծ ինքս էլ համակուեցի նոյն վշտով, ինչ որ նա։ Սկսեցի պատմել մեր հայրենիքի աղէտալի վիճակը և ասացի, որ երկուսս էլ միևնոյն վիճակի մէջ ենք։ —«Ա՛խ, դուք երջանիկ էք ինձնից,—բացականչեց նա, —որովհետև դուք տղամարդ էք»։ Այդ խօսքերն այնպիսի զօրեղ տպաւորութիւն գործեցին ինձ վրայ, Լևոն, որ յետոյ, անձնասպանութեան միտքը յղանալիս, երբ յանկարծ միտս ընկան, ինքս ինձնից ամաչեցի։ Ցիրուի, մի՞թէ ամօթալի բան չէ անձնասպանութիւն գործելը,—մտածեցի ինքս ինձ։—Մի՞թէ տղամարդուն վայել բան է անձնասպանութիւնը։ Չէ՞ որ նա ինձ երջանիկ էր համարում հէնց նրա համար, որ ես տղամարդ էի, այսինքն՝ մի ոյժ, որ աւելի, քան կինը, միջոցներ ունի հայրենիքին օգտակար լինելու։ Մահը մահ է. «Մարդ մի անգամ պիտ մեռնի». բայց աւելի լաւ չէ՞ աղնիւ, խելացի, օգտակար մահը, այնպիսի մի մահ, որով կարելի է կեանք տալ ուրիշներին—աւետարանական ցորենի այն հատիկի նման, որ «եթէ մեռանի՝ բազում արդիւնս առնէ»։ Եւ, ահա, այդ օրուանից ուխտեցի և գլխովին նուիրեցի ինձ սուրբ գործին, այսինքն այնպիսի մի գործի, որի համար, թէև ապարդիւն, բայց ինքն իր մէջ տանջուելով մեռաւ նա։ Նրա մահից անցել է մօտ հինգ տարի, և ես... էհ, ինչ հարկաւոր է հին խոցերը փորփրել...

Բաղէնեանը զօրեղ շեշտով թափ տուեց ձեռքը, վերկացաւ և սկսեց մտաղրաղ ու տխուր անցուդարձ անել հիւրասենեակի փափուկ գորգի վրայ։

Նրա պատմութիւնը խիստ ազդել էր Շահեանին։ Շահեանին թւում էր, թէ Բաղէնեանի վիշտն այնքան մեծ է, որ մեղք է նրան իր դժբաղդ սիրոյ մասին երկար հարցուփորձ անելը։ Բաղէնեանի սիրած աղջկան, ինքն էլ չէր իմանում ինչու, համեմատում էր Եւայի հետ, և նրան թւում էր, թէ էլզասցի այդ աղջիկը ճիշտ Եւայի հասակն ու գեղեցկութիւնը պիտի ունենար և պէտք է որ Եւայի պէս վառվռուն մի աղջիկ լինէր։

Եւ Եւայի, ըստ երևոյթին մոռացուած, պատկերը նորից կենդանութիւն առաւ նրա գրգռուած երևակայութեան մէջ, տանջող անձկութիւն ու տխրութիւն պատճառելով նրան։

II

Շահեանն անկեղծօրէն սիրեց Բաղէնեանին, որին, յիրաւի, բոլորովին փոխուած էր տեսնում։ Հէնց առաջին օրուանից մտերմական այնպիսի մի սերտ կապ հաստատուեց նրանց միջև, որ Բաղէնեանին ամեն օր իր տան մէջ տեսնելը կատարեալ մի պահանջ դարձաւ Շահեանի համար։ Նա վաղուց ի վեր ձգտում էր ունենալ այդպիսի մի մտերիմ ընկեր, որի առաջ կարող

լինէր վստահօրէն թափել իր սրտի բոլոր դառնութիւնը, անկեղծօրէն դատափետել իրեն, իր վարած կեանքը և երկիւղ չունենալ, թէ ինքը կընուաստանայ այդպէս անելով։ Եւ նա աներկիւղ այդ բանն անում էր Բաղէնեանի առաջ։ Իսկ Բաղէնեանը կարճ ժամանակում արդէն ուսումնասիրել էր նրա ընաւորութիւնը, գտել էր նրա թոյլ երակը և մեծ ճարպիկութեամբ շոյում էր անդադար նրա ինքնասիրութիւնը։

Ամեն անգամ, Բաղէնեանին ճանապարհ դնելիս, Շահեանն անկեղծ շնորհակալութիւն էր յայտնում նրան, որ ջերմութիւն էր տալիս իր սառած կեանքին, և խնդրում էր, որ ամեն օր գայ իր մօտ. խնդրեց նոյն իսկ, որ հիւրանոցից տեղափոխուի իր տունը։ Բաղէնեանը վերջին հիւրասիրութիւնից վճռապէս հրաժարուեց, բայց ամեն օր գալիս էր Շահեանի մօտ, փառաւոր ճաշ էր վայելում նրա տանը, շարժում էր իր ճարպիկ լեզուն, ծխում էր նրա թանկագին սիգարները և վերջը, այդ բոլորի համար շնորհակալութիւն ստանալով, հեռանում էր, որ հետևեալ օրը դարձեալ գայ նոյն պաշտօնը կատարելու։

Մի անգամ երկու օր շարունակ չերևաց Բաղէնեանը։ Այդ երկու օրը Շահեանի համար անցաւ շատ տխուր։ Երրորդ օրն առաւօտեան պատրաստուում էր գնալու Բաղէնեանի մօտ, երբ ստացաւ նրա այցետոմսը, որի վրայ խիստ անճոռնի տառերով գրուած էր մատիտով հետևեալը.

«Սիրելի Լևոն, անշուշտ չգիտես, որ անցեալ օր ինձ մի փոքրիկ դժբաղդութիւն պատահեց, որի շնորհիւ այժմ չեմ կարողանում սենեակիցս դուրս գալ։ Աբի, մենակութիւնից սիրտս ճաքում է։ Էլի հին տղումն եմ—«Լոնդոն»։ Գրում եմ ձախ ձեռքով»։

Շահեանը շտապեց։

Երբ նա «Լոնդոն» հիւրանոցում բաց արեց Բաղէնեանի սենեակի դուռը և ներս մտաւ, Բաղէնեանը պառկած էր մահճակալի վրայ, անկողնի մէջ, և լրագիր էր կարդում ձախ ձեռքին բռնած։ Նրա գեղեցիկ դէմքը դժգոյն էր և թւում էր, թէ բաւական նիհարել է։ Շահեանին տեսնելով, ժպտաց և լրագիրը կամաց դրեց կողքին։

—Ա՞յս ինչ է, դու պառկած ես,—զարմացած բացականչեց Շահեանը։

—Էլ ասում ես,—ասաց Բաղէնեանը թոյլ ձայնով և ձախ ձեռքը պառկած տեղից մեկնեց նրան։—Աթոռ մօտ բեր նստիր։

Շահեանն անհամբերութեամբ մի աթոռ առաւ և նստեց նրա մահճակալի մօտ։

—Հէնց նոր պատրաստուում էի քեզ մօտ գալու, որ նամակդ բերեցին։ Ի՞նչ է պատահել։

—Ա՛յ, կարդա,—ասաց Բաղէնեանը ժպտալով և լրագիրը տուեց նրան։—Կարդա ահա այս լուրը,—ձախ ձեռքի ցուցամատով ցոյց տուեց նա։

Շահեանը կարդաց.

«Կիրակի օր, ժամը 12-ին մօտ, Գալաւինսկի պրոսպեկտի վրայ մի կառքի ձիերը յայտնի չէ ինչ բանից խրտնեցին և գլուխներն առան թռան դէպի Բրեաթինսկայա զառիվայր փողոցը։ Կառապանը չկարողացաւ զսպել ձիերը և ցած ընկաւ կառքի ուժգին ցնցումից. մի կողմ շպրտուեց նաև կառքի մէջ նստած մի պարոն. սակայն, բարեբաղդաբար, երկուսն էլ թեթև խեղումներ միայն ստացան։ Այն ինչ ձիերը, բոլորովին ազատ զգալով իրենց, ցած էին վազում աւելի ևս կատաղած։ Այդ միջոցին մի օրիորդ չորս-հինգ տարեկան մի երեխայի հետ մի մայթից միւսն էր անցնում։ Օրիորդը կարողացաւ ազատուել, բայց երեխան

անշուշտ պիտի ճխլուէր կատաղած ձիերի ոտների և կառքի անիւների տակ, եթէ մի պարոն, որ այդ ըոպէին անցնում էր այդ կողմով, իսկոյն օգնութեան չըհասնէր. նա վազեց, խոտեց երեխային և յետ էր վազում, որ մօտեցող կատաղած ձիերից ազատուի, բայց, դժբաղդաբար, կառքը վրայ հասաւ, շուռ եկաւ և մի կողքով դիպչելով պարոնին՝ մի կողմ շպրտեց նրան երեխայի հետ միասին։ Երեխան ոչ մի վնաս չստացաւ, մինչդեռ անձնազոհութեան այսպիսի գեղեցիկ օրինակ ցոյց տուող պարոնը ծանր վէրք ստացաւ, և նրան ուշագնաց տարան հիւանդանոց։ Նրա կեանքը վտանգի մէջ է։ Նրա ազգը Բաղէնեան է»։

Շահեանը կարդաց վերջացրեց և զարմացած նայեց Բաղէնեանի ժպտող աչքերին։

—Այդ դու ե՞ս։

—Ինչպէս տեսնում ես։ Բոլորը ճիշտ է նկարագրուած, միայն մի տեղ գլուխը քարոնվ է տուել լրատուն. կրծքիս վրայ ոչ մի վէրք չեմ ստացել, այլապէս հարուածն այնքան սաստիկ էր, որ տեղնուտեղը բան-հոգի կըլինէի։ Թուս է միայն ճնաստուել. ահա։— Բաղէնեանը վերմակը կամաց յետ քաշեց և ցոյց տուեց աջ թևը, որ ուսից սկսած մինչև արմունկը պինդ փաթաթուած էր սպիտակ շորով, շապկի թևն ուսին հագուած։—Կեանքիս էլ, ինչպէս տեսնում ես, ոչ մի վտանգ չի սպառնում։

—Փառք Աստուծոյ, որ այդպէս թեթև ես պրծել։ Ես էլ ասում եմ ինչու այս երկու օրս չես երևում։ Յետո՞յ, պատմիր տեսնեմ։

—Յետոյ ի՞նչ։ Յետոյ, երբ ուշքի եկայ, տեսայ, որ փառաւորապէս պառկած եմ հիւանդանոցում և ձեռքս պատում ու փաթաթում են ինչ-որ տաշեղներով։ Զարմանալի է. ուրիշ ոչ մի տեղ վէրք չեմ ստա-

ցել և չեմ հասկանում ինչու պէտք է ուշագնաց լինէի։ Բայց, ո՞վ գիտէ, գուցէ, լրատուի ասելով, կառքն իսկապէս կրծքիս կամ մի ուրիշ վտանգաւոր տեղիս է դիպել, թէ չէ՝ ձեռքից չեմ կարծում թէ մարդ ուշաթափուի։ Այս էլ կայ, որ ոչ մի տեղս ցաւ չեմ զգում։ Ձեռքս էր միայն, որ սկզբում սաստիկ ցաւում էր, իսկ այժմ ցաւը բաւական մեղմացել է։

—Բաս ինչո՞ւ ես պառկած։

—Չեմ կարողանում շորս հագնել։ Եւ վերկենամ, ի՞նչ անեմ։ Բժիշկն ասաց, որ մի քանի օր սենեակից դուրս չգամ, ցուրտ է, ասաց, կարող ես ձեռքդ մըրսեցնել։

—Ա՛յ թէ օյին է եկել գլխիդ։

—Օյին ասիր ու պրծա՞ր։ Նոր էի դուրս եկել հիւրանոցից և բարձրանում էի դէպի Գալաւինսկի պրոսպեկտ, որ տեսայ, թէ ինչպէս ձիերը սարսափելի կատաղութեամբ վերևից ներքև էին վազում։ Այն էլ տեսայ, թէ ինչպէս կառքի մէջ նստած պարոնը և կառապանը զնդակի պէս շպրտուեցին մէկն այս, միւսն այն կողմը։ Խեղճ երեխան այնպէս շշկլուել էր փողոցի մէջ տեղ վերևից մարդկանց բարձրացրած աղաղակների վրայ, միւս կողմից էլ քոյրն այնպիսի յուսահատական ճիչեր էր արձակում, որ ես չէ՝ ով ուզում է լինէր, անկարելի էր, որ օգնութեան չհասնէր։ Չէ, լաւ պըրծայ։ Բայց ինձ խիստ ուրախացնում է այն հանգամանքը, որ երեխան անվնաս մնաց։ Նոյն օրն երեխայի հայրն այցելեց ինձ հիւանդանոցում։ Ի՜նչպիսի շնորհակալութիւններ, երախտագիտական զգացման ի՜նչպիսի արտայայտութիւններ... Բայց ճիշտն ասեմ, ես ինքս չափազանց շնորհակալ կըլինէի նրանից, եթէ ամենևին նեղութիւն չկրէր ինձ այցելելու, որովհետև ձեռքիս

կսկծից չգիտէի ինչ անեմ, իսկ նա կատարելապէս զահլա տարաւ իր շնորհակալութիւններով։

—Ո՞վ էր, ինչ մարդ էր։

—Ազգանունն ասաց, տան հասցէն էլ յայտնեց, բայց գլխումս խելք կմը, որ միտս մնար։ Թաթուլեան ասաց, Թումանեան ասաց, չեմ յիշում, ճշմարիտ։ Աշնանային ճանճ տեսել ե՞ս, որ ականջիցդ քշում ես՝ ճակատիդ է նստում, ճակատիցդ քշում՝ քթիդ է նստում։ Այդպիսի մի ճանճի տպաւորութիւն թողեց ինձ վրայ։

Միջանցքից շտապ քայլերի մի ձայն և կնոջ հագուստի խշխշոց լսուեց։ Դուռն ուժգնօրէն բացուեց, և շտապով ներս մտաւ մի յաղթանդամ կին՝ մոխրագոյն ծանր մուշտակով, որ ինջնում էր մինչև ոտների ծայրերը, և նոյն գոյնի մորթէ գլխարկով, որ չափազանց փոքր էր թւում՝ ծոծրակի վրայ շքեղօրէն հաւաքուած սաստիկ հարուստ մազերի հետ համեմատած։ Ըստ երևոյթին, նա բուռն անհանգստութեամբ ուզում էր վազել դէպի Բազէնեանը, բայց, տեսնելով, որ նա մինակ չէ, յանկարծ կանգ առաւ և շփոթուեց, կարծես։

Շահեանն իսկոյն ճանաչեց նրան. դա այն կինն էր, որին տեսել էր «Միխայլովո» կայարանում Բազէնեանին ուղեկցելիս։ Նա բոլորովին մոռացել էր այդ կնոջը, և դրա՝ այդ սենեակում այդպէս անակնկալ յայտնուելը խիստ շփոթեց նրան։ Նա մեքենայաբար վերկացաւ տեղից և չտեսաւ ոչ այդ կնոջ շփոթմունքը և ոչ ինչ-որ անհաճոյ զգացումից առաջացած այն այլայլումը, որ արտայայտեց Բազէնեանի դէմքը այդ կնոջ յայտնուելուն պէս։ Սակայն այդ բոլորը մի քանի վայրկեան միայն տևեց։

—Պանի Զդանևիչ... դուք այստե՞ղ,—կանչեց Բազէնեանը ուսերէն, շտապով վերկենալով և նստելով անկողնի մէջ։

—Պարդոն, ես առանց իմաց տալու մտայ,—ասաց պանի Զդանևիչը ախորժալուր, կրծքային ձայնով և արագ մօտեցաւ նրան։—Բայց ես այնքան անհանգիստ էի...

—Ներեցէք... ես...,—արտասանեց Բազէնեանը, ըստ երևոյթին, ամօթխածօրէն ծածկելով շապկի կուրծքը ձախ ձեռքով։

—Ա՛խ, խնդրում եմ, խնդրում եմ, մի նեղանաք։ Այդ ի՞նչ դժբաղդութիւն է պատահել ձեզ. ես այսօր կարդացի լրագրներում։

—Դատարկ բան է, պանի Զդանևիչ։ Կուռս միայն փոքր ինչ վնասուել է, ուրիշ ոչինչ չկայ։ Խնդրում եմ դարձեալ, որ ներէք ինձ։ Արդեօք չէ՞իք հաճիլ նստել։

Պանի Զդանևիչն արագօրէն նստեց այն աթոռի վրայ, որի վրայ առաջ Շահեանն էր նստած, և մուշտակը յետ ձգեց աթոռի մէջքին, երևան հանելով սև ատլասի հագուստի մէջ պինդ սեղմուած երկայն շքեղ իրանն իր փարթամ կրծքով։

—Ե՞րբ էք եկել,—հարցրեց Բազէնեանը։

—Մի շաբաթ է, որ Թիֆլիսումն եմ։

—Մենա՞կ էք եկել։

—Ոչ... ամուսինս էլ հետս է... և, երևի... շուտով կը վերադառնանք,—պատասխանեց պանի Զդանևիչը տարօրինակ յապաղումով և Շահեանի կողմը անհանգիստ մի հայեացք ձգելով։—Բայց դուք ձերը պատմեցէք։ Ա՜հ, ինչքան ցաւեցի և վախեցայ... մանաւանդ, որ գրուած էր, թէ ձեր կեանքին վտանգ է սպառնում։

—Լրագրների մէջ չափազանցրել են, պանի Զդանևիչ։

—Այո, տեսնում եմ, որ դուք լաւ էք։ Եւ փառք

Աստուծոյ։ Բայց դուք իսկապէս որ օրինակելի անձնազոհութիւն էք ցոյց տուել։ Չէք կարող երևակայել, որքան հիացած եմ... Պարոն,—յանկարծ դարձաւ պանի Զդանևիչը Շահեանին,—ես ձեր տեղն եմ նստել, կարծեմ, և դուք կանգնած էք մնացել։

—Խնդրեմ, խնդրեմ,—արագ վրայ բերեց Շահեանը, մինչև ականջները կարմրելով, և մեքենայաբար նստեց մի ուրիշ աթոռի վրայ։

Բաղէնեանը շտապեց Շահեանին ներկայացնելու պանի Զդանևիչին։

—Այնպէս չէ՞, ձեր ընկերն անօրինակ անձնազոհութիւն է ցոյց տուել,—ասաց պանի Զդանևիչը, դառնալով Շահեանին։—Երևակայեցէք, որ եթէ պարոն Բաղէնեանը օգնութեան չհասնէր, այն խեղճ, այն փոքրիկ երեխան պիտի ջարդուէր մեռնէր, և ի՜նչ սոսկալի թշուառութեան մէջ պիտի ընկնէին նրա ծնողները... Ա՜խ, պարոն Բաղէնեան, չգիտեմ, ճշմարիտ, ինչպէս արտայայտեմ իմ հիացմունքը։

—Պանի Զդանևիչ...

—Լաւ, լաւ, դուք համեստ էք, ես այդ հասկանում եմ. բայց և այնպէս, կարծում եմ, այդ բանն արդելք չպիտի լինի ձեզ մանրամասնութիւնները պատմելու։ Ես չափից դուրս հետաքրքրւում եմ։ Ա՜խ, ինչքան նիհարել էք։ Այստեղ, կարծեմ, ցուրտ պիտի լինի ձեզ համար։ Մի՞թէ վառարան չեն վառում։ Խնդրում եմ, լաւ ծածկուեցէք։ Սպասեցէք...

Պանի Զդանևիչը շտապով վերկացաւ, առաւ Բաղէնեանի ոտների մօտ, մահճակալի վրայ ձգուած պլեդը և ծածկեց նրա ուսերը։

—Ահա այսպէս։ Ներեցէք, որ ես այսպէս տանտվարի եմ վարւում,—ասաց նա նորից նստելով իր տեղը.—բայց որովհետև այն երեխային փրկելով ապացուցել էք, որ ուրիշի կեանքն աւելի թանկ էք գնահատում, քան թէ ձերը, ուստի ուրիշներն էլ պարտաւոր են հոգալ ձեր առողջութեան համար։ Այնպէս չէ՞,—հրաշալի ժպիտով դիմեց նա Շահեանին։

—Անշուշտ,—վրայ բերեց Շահեանը՝ յափշտակուած այդ գեղեցիկ կնոջ անսեթևեթ վարմունքից, և դարձեալ կարմրեց։

—Դուք շատ բարի էք, պանի Զդանևիչ,—արտասանեց Բաղէնեանը։

—Իմ բարութիւնը մի կողմ թողէք և պատմեցէք մանրամասնութիւնները։

Բաղէնեանը սկսեց պատմել։ Նրա պատմութիւնը չոր էր։

Շահեանն արդէն փոքր ինչ ընտելացել էր պանի Զդանևիչի ներկայութեանը և, լուռ նստած, հետաքրքրութեամբ դիտում էր նրան իր պարզ ակնոցների միջից, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ այդ կնոջ ամբողջ ուշադրութիւնը Բաղէնեանի կողմն էր։ Զափից դուրս գեղեցիկ էր թւում նրան այդ հսկայ կինը, աւելի գեղեցիկ, քան այն ժամանակ, երբ առաջին անգամ տեսաւ նրան «Միխայլովո» կայարանում։ Սև ատլասի մէջ ամուր սեղմուած այդ շքեղ իրանը, այդ բարձր կուրծքը, այդ փարթամ ուսերը և հպարտօրէն բարձրացած այդ գլուխն իր չափազանց հարուստ մազերով, իր ազնիւ, պլաստիքական դիմագծերով, որոնց մէջ, չնայելով տարիքին, դեռ ևս նկատելի էր խնամքով պահպանուած երիտասարդական թարմութիւնը,—այդ բոլորը երկիւղ ազդելու չափ վեհութիւն և, միևնոյն ժամանակ, անդիմադրելի հմայքի ոյժ էին տալիս նրան։ «Սա կարող է թագուհի լինել», մտածում էր Շահեանը և զարմանում էր, թէ ինչպէս

այդպիսի մի կին մինչև անգամ լայեղ էր արել մտնել այդ սենեակը։

Բաղէնեանի պատմութիւնը լսելիս պանի Զդանևիչը ջերմ հետաքրքրութիւն էր ցոյց տալիս։ Այնտեղ, ուր կարեկցութիւն էր հարկաւոր, նրա դէմքն արտայայտում էր աւելի, քան կարեկցութիւն, և այդ բանից Շահեանն եզրակացնում էր, որ նա խիստ բարի կին է։

Մինչդեռ Բաղէնեանը պատմում էր, կարծես, ակամայ և ամենևին չէր նայում պանի Զդանևիչին։ Առհասարակ ինչ-որ օտարոտի ինքնազսպումն, նոյն իսկ սառնութիւն էր նկատւում նրա վարուեցողութեան մէջ պանի Զդանևիչի վերաբերմամբ։ Շահեանը տեսնում էր այդ, և ընկերոջ այդ վարմունքն աւելի քան կոպիտ էր երևում նրան։ Ճնշուած այդ բանից, նա նայում էր պանի Զդանևիչին և զարմանքով տեսնում էր, որ այդ կինը կամ չի նկատում Բաղէնեանի այդ կոպիտ վարմունքը, կամ այնքան կրթուած կին է, որ չտեսնելուն է տալիս։

Պանի Զդանևիչը մօտ մի ժամ մնաց Բաղէնեանի մօտ. կարծես, չէր ուզում հեռանալ այդ սենեակից։ Ի միջի այլոց, ասաց Շահեանին, որ ինքն առհասարակ համակրում է հայերին, որոնց մէջ կան այնպիսի երիտասարդներ, ինչպիսին Բաղէնեանն է, որի հայրենասիրական նպատակներին ու գործունութեանն առիթ է ունեցել մասամբ ծանօթ լինելու։ Յետոյ նուրբ հետաքրքրութեամբ սկսեց հարցուփորձ անել իրենց Շահեանին, առաջուց ներողութիւն խնդրելով իր հետաքրքրութեան համար։ Եւ Շահեանը, զարմանալի է, ամենայն անկեղծութեամբ սկսեց պատմել ինչ որ հարկաւոր էր, ինչ որ ճիշտ էր։ Այդ կինը, որի գեղեցկութիւնը սկզբում գրեթէ սարսափեցնում էր նրան, այնքան բարի,

կարեկից ու բարեկիրթ կին էր երևում և իր պարզ ու փոքր ինչ հոլանաւորող վարուեցողութեամբ այնպիսի մի պատկառանք էր ներշնչում նրան, որ նա ամաչում էր դիմել իր սովորական զէնքին—ստախօսութեան։ Եւ պանի Զդանևիչը լսում էր նրան այնպիսի հետաքրքրքրութեամբ, որ կարծես մինչև անգամ շնորհակալ էր, որ նա խօսում էր այդքան անկեղծօրէն։

—Եթէ համեստութիւնից չէ, որ դուք այդքան դատափետում էք ձեզ,—ասաց նա ժպտալով,—ապա ես ձեզ կասեմ հետևեալը. նա, ով զգում է իր պակասութիւնները, կորած չէ. պէտք է միայն կամքի ոյժ ունենալ զգացած պակասութիւններն ուղղելու։ Յամենայն դէպս, դուք այնքան բարի էք, որ այսպիսի դէպքերում չէք մոռանում ձեր ընկերոջը։ Ես շատ ուրախ եմ, որ ծանօթացայ ձեզ հետ։ Յոյս ունիմ, մենք էլի առիթ կունենանք իրար տեսնելու։ Իսկ այժմ,—նա վեր կացաւ տեղից,—ներեցէք։ Պարոն Բաղէնեան, թոյլ կըտաք, որ դարձեալ այցելեմ ձեզ։

—Պանի Զդանևիչ... չգիտեմ, ճշմարիտ, ինչով եմ արժանացել ձեր...

—Դուք թոյլ էք տալիս, ուրեմն դարձեալ կըգամ,—ծիծաղելով ընդհատեց պանի Զդանևիչը և, արագօրէն առնելով մուշտակը, ծածկեց, որի ժամանակ Շահեանը մինչև անգամ համարձակութիւն ունեցաւ նրան օգնելու։—Մերսի,—հրաշալի ժպիտով շնորհակալութիւն յայտնեց նա Շահեանին և ամուր սեղմեց նրա ձեռքը։—Յտեսութիւն, պարոն Բաղէնեան։ Զգոյշ կացէք, չմրսէք։ Յտեսութիւն,—նոյն հրաշալի ժպիտով վերջին անգամ դիմեց նա Շահեանին և դուրս գնաց արագ։

— Դարձյալ մի քիչ... ասում ընդունեցիր, — դարձավ նա Բազենանին։

Բազենանը նայեց ընկերոջը, չյասնի չէ, զարմացած, թէ դուրգող դէմքեցքով։

— Սառը... Մի թէ... Հաւատացնում ես քեզ, — ասաց։

— Ամենևին չէի... Որտեղից որտեղ... Ամենևին չէի նկատում։ Այնքան պատուական կին է... Ամենևին չէի նկատում։

— Այո, պատուական դին է, — ասաց նա լրջու թեամբ, դարձ լուծիչից յետոյ, աչքերից։ — Գլուխս ինչ է։ «Միխայլով» կայարանում քեզ որ տեսայ, նեղա հետ ճիշտը քեզ ասեմ, կանգած տարայ ձեր գաղ բարերութիւնների մասին։ Բայց այժմ իմ դիտակետն արդարացնող ոչ մի ոգնա չտեսայ, գոնէ քո կողմից։ Դու մինչև անգամ կոպիտ լինելու չափ սառն էիր դէպի նա։

— Դուք ինչպէս դուք մանրամասնում եք, ասաց Բազենանը, տարակուսանքով։

Շահեանը դեռ դուռը չփակած, դուրը կանգնած ցուցից, ոչ երեսից Սարուխանի գլուխը։

— Դարձ մնաց Շահեան, — բացականչեց Սարուխանը։ Ինչպէս դուք մանրամասնում եք, ասաց նա, ոչ մի ոգնա չէ։ Ես ինքս ինձ համար ասում եմ։ Ինչպէս դուք մանրամասնում եք։ Ասեցեք դուք, ինչպէս դուք մանրամասնում եք։

Սարուխանն արագ դարձաւ դէպի Բազենանը։

— Ա՛հ, պարոն Բազենան։ Դուք այստեղ էք։ Ինչպէս դուք մանրամասնում եք։ Ասեցեք, ինչպէս դուք մանրամասնում եք։

Սարուխանն ամբողջ ոգնի մասին մոռացաւ։ Նա գնացի հիւանդանոց, ասացին, որ դուրս եկել է։ Ինչպէս դուք մանրամասնում եք։ Ասեցեք, ինչպէս դուք մանրամասնում եք։

—

—Ի սէր Աստուծոյ, շուտով առողջացէք, թէ չէ՝ այդ բանի նման չէ։ Պարոն Շահեանն... դուք այստեղ ինչ էք շինում։

—Ընկերս է, եկել եմ տեսութիւն։

—Հա-ա, մթթէ... Դուք այսպիսի պատուական ընկերներ էք ունեցել,—մէկը Մինասեանը, միւսը սա, —և ես այդ պատահմունքով պիտի իմանամ։ Դուք գիտէք, որ պարոն Բաղէնեանն իմ երեխա է փրկել։

Շահեանը զարմացաւ։ Այդ յայտնութիւնը բոլորովին անակնկալ էր նրա համար։

—Հապա, իմ Սուրէնին։

—Ճիշտ։

—Բաս ինչ ունիմ հիմա այստեղ։ Զէ՞ որ երախտապարտ եմ, մինչև երախտապարտ եմ պարոնին, որի հետ այդ ցաւալի դէպքն է ինձ առիթ տուել ծանօթանալու։ Պարոն Բաղէնեան, դարձեալ և բիւր անգամ շնորհակալ եմ ձեզնից, և չէք կարող երևակայել թէ ինչքան ցաւում եմ, որ այդ գնով էք որդուս կեանքը փրկել։ Որ իմանաք ինչ կըպատահէր մերոնց, եթէ... Ո՛չ, ես սարսափում եմ անգամ այդ մասին մտածելուց։ Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ եմ։

Եւ Մարութեանն ամուր-ամուր սեղմեց Բաղէնեանի ձախ ձեռքը։

Բաղէնեանը ժպտաց և ասաց, որ չարժէ շնորհակալ լինել, որովհետև իւրաքանչիւր մարդու բարոյական պարտականութիւնն է վտանգ եղած դէպքում օգնութեան հասնել ուրիշներին, մանաւանդ անզօր երեխաներին։ Յետոյ խնդրեց, որ նստի, և հարցրեց, թէ երեխան իսկապէս բոլորովին անվտանգ է մնացել։

—Մի մազի չափ անգամ չի ընասուել,—ասաց Մարութեանը։—Այդ կատարեալ հրաշք է։ Աղջիկս միայն փոքր ինչ վախեցել է, բայց այդ դատարկ բան է։ Հիմա գիտէք ինչու եմ եկել, պարոն Բաղէնեան։ Եկել եմ, որ նախ՝ տեղեկանամ ձեր թանկագին առողջութեան մասին և յետոյ՝ խնդրեմ, որ շնորհ բերէք մեր տուն։ Մերոնք այնպէս ցանկանում են ծանօթանալ ձեզ հետ...

—Ամենայն ուրախութեամբ կըգամ, ի հարկէ, երբ առողջանամ։

—Մթթէ հիմա առողջ չէք։

—Առողջ եմ, ի հարկէ, բայց բժիշկն արգելել է, որ սենեակից դուրս չգամ. ձեռքս կըմրսեցնեմ։ Բացի դրանից, չեմ կարողանում առայժմ շորս հագնել։ Եւ դրա համար է, որ պառկած եմ։

—Հա, երբոր այդպէս է, ի հարկէ, լաւ է, որ զգոյշ մնաք։ Բայց որ վտանգն անցնի բոլորովին, խօ կըպա՞ք։

—Շատ եմ ուզում և կաշխատեմ։

—Զէ, ի սէր Աստուծոյ։ Կիսաբերան խօսքեր չեմ սիրում։ Վճռական պատասխան տուէք՝ կըգա՞ք, թէ ոչ։ Թէ չէ, միևնոյն է, ձեզ հանգիստ չեմ թողնիլ։

—Կըգամ։ Անպատճառ կըգամ,—ասաց Բաղէնեանը ժպտալով։

—Այդպէս։ Ա՛, պարոն Շահեանը գիտէ մեր տունը. միասին վեր կըկենաք կըգաք։ Հա, պարոն Շահեան. դուք շարունակում էք մեզնից հեռու մնալ։ Լաւ չէք անում։ Է՛հ, ինչ անենք. Աստուծոյ կամքն էր, որ ձեր ողորմածիկ հայրը վախճանուեց. բայց խօ չի՞ կարելի այդքան երկար սուգ պահել։

—Զէ, ինչ սուգի բան կայ,—ասաց Շահեանը փոքր ինչ շփոթուելով և ուզեց արդարացնել իրեն, բայց չիմացաւ ինչ ասի։

—Դէ, երբոր սուգի բան չկայ, եկէք, էլի, առաջուայ պէս։ Երիտասարդ էք, պէտք է գնաք, դաք, խօ-

[illegible]

[illegible]

[illegible]

շող զգացում։ Նախմնձ էր այդ, չկամութիւն, թէ մի ուրիշ բան,—Աստուած գիտէ. բայց, կարծես, այնքան էլ նրա սրտովը չէր, որ Բազէնեանի ձեռքով աղատուած երեխան Մարութեանի որդին էր։ Եւ, զարմանալի է, ամենևին չէր ուզում, որ Բազէնեանը գնայ Մարութեանների տուն...

—Բարև ձեզ, պարոն Շահեան,—յանկարծ ինչ-որ կանացի ձայն դիպաւ նրա ականջին, և նա միքենայաբար կանգ առաւ։

Նրա առաջ կանգնած էր օր. Սահակեանը՝ աշակերտական մի կոյտ տետրակներ կռան տակին։

—Ձճանաչեցիք,—հարցրեց օր. Սահակեանը ժըպտալով իր համարձակ ժպիտով։

Շահեանը շփոթուեց։

—Ինչպէս չէ... ներողութիւն...

—Ցիշում էք. մենք ծանօթացել ենք երկաթուղու կայարանում, երբ ճանապարհ էինք ձգում մեր բարեկամներին—Աշխէնին և Մինասեանին։

—Այո, այո... Ներողութիւն... Ես... ինչպէս չէ, ինչպէս չէ...

Եւ Շահեանը սաստկացած շփոթմունքից մինչև անգամ կարմրեց։

—Ասենք, ներելի է, որ ինձ իսկոյն չյիշէիք, որովհետև մենք ծանօթացել ենք այնպիսի պարագաներում, երբ մեր ամբողջ ուշադրութիւնը կիդրոնացած էր մեր ամենալաւ բարեկամների վրայ,—ասաց օր. Սահակեանը շարունակելով ժպտալ։—Ինչևիցէ։ Ես այժմ, —ներողութիւն, որ ձեզ անհանգստացնում եմ, — ես այժմ ուզում եմ մի տոմսակ սաղացնել ձեզ վրայ։

—Ի՞նչ տոմսակ։

—Կիրակի օր, այս կիրակի, մի աղքատիկ գիւղի

ուսումնարանի օգտին պարահանդէս ունինք, պէտք է գաք։

—Պարահանդէ՞ս...

Օր. Սահակեանը նայեց Շահեանի՝ մի քիչ ապուշի տպաւորութիւն գործող դէմքին և ծիծաղեց։

—Կարող էք չպարել, բայց տոմսակ, կարծում եմ, կարող էք վերցնել։ Հա, տամ։

—Տոմսակ... Ինչու չէ։ Խնդրեմ։

Օր. Սահակեանը տետրակների կոյտն արագօրէն միւս թևի տակն առաւ, շտապով հանեց յուշատետրը և սկսեց թերթել, որ մի տոմսակ հանի։

—Գիտէք, ուզում էինք ներկայացում տալ, չաջողուեց։ Ներկայացումն, ասենք, զալմաղալ բան էլ է և ծախքեր շատ է պահանջում։ Աւելի լաւ համարեցինք բանը պարահանդէսով վերջացնել։ Համեցէք, երկու ռուբլի արժէ։

Շահեանն առաւ տոմսակը և գինը վճարեց։

—Շնորհակալութիւն։ Տեսնում էք, մինչև անգամ շնորհակալութիւն ենք յայտնում տոմսակ գնողներին, —ասաց օր. Սահակեանը ծիծաղելով։—Ի՞նչ արած, բանն այդտեղ է հասել։ Երևակայեցէք, քսան հատ տոմսակ են տուել ինձ վաճառելու, և այդ ութերորդն է միայն, որ վաճառում եմ, չնայելով որ էլ ծանօթ ու բարեկամ չեմ թողել, որին առաջարկած չլինիմ։ Հայերիս մէջ բանը միշտ այդպէս է առաջ գնում։ Բայց, երևի, մի երկու-երեք հատ էլ կըվաճառեմ։ Դեռ Մարութեաններին չեմ տեսել. չեմ շտապում, որովհետև նրանք ամեն բանում նաղդ են։ Հա, իմացաք ինչ է պատահել Մարութեանի որդուն ու աղջկան։

—Որ կառքի տակ ընկնելուց աղատուել են։

—Այո։

—Ինչպէս չէ։

Մի ժամից երկու ընկերները բարձրանում էին
[illegible]
[illegible] Ամենայն դեպքում, [illegible]
[illegible] Դեմքերը [illegible] Ամենայն դեպքում, [illegible]
[illegible] Ամենայն դեպքում, [illegible]
[illegible] Ամենայն դեպքում, [illegible]
[

Մարութեանների տան սանդուղքով։ Նախասենեակը լուսաւորուած էր առաստաղից կախուած կապոյտ լապտերով։ Հեռաւոր սենեակներից աղջկանց տաք խօսակցութեան և բարձրաձայն ծիծաղի ձայներ էին լսւում։ Աղախինը ներս հրաւիրեց հիւրերին հիւրասենեակ։ Այնտեղ ոչոք չկար։ Սեղանի վրայ վառւում էր բրոնզեայ ջլոտ մարդու ուսին դրած հսկայական լամպը։ Մի բոպէ չանցած, բացուեց հիւրասենեակի խորքում դռներից մէկը, և արագ քայլերով ներս մտաւ Մարութեանը։

—Ա՜, վերջապէս,—ուրախ բացականչեց նա և երկար ու պինդ սկսեց սեղմել իր երկու ձեռքով. Բաղէնեանի ձեռքը։—Ինչքան ցաւում եմ, որ ստիպուած եմ ձեր ձախ ձեռքը սեղմել։ Ի՞նչպէս էք հիմա, լա՞ւ էք։

—Փառք Աստուծոյ։

—Օ՜, որ գիտենաք օրական քանի անգամ եմ փառք տալիս Աստծուն, որ այդպէս հեշտ էք պրծել։ Համեցէք, համեցէք այստեղ։ Չէք կարող երևակայել, թէ ինչքան ուրախացրիք ինձ ձեր այցելութեամբ։ Պարոն Շահեան, բարև ձեզ։ Դուք էլ, վերջապէս, եկաք։ Դուք էլ այստեղ համեցէք։ Սակայն, ազատ էք, պարոններ, ուր կամենում էք՝ նստեցէք։ Սուրէն, Սուրէն արի այստեղ, տես ով է եկել,—կանչեց Մարութեանը, վազելով դէպի այն դուռը, որտեղից ինքը ներս մտաւ։

Սակայն, այդ դռնից, Սուրէնի տեղ, դուրս եկաւ Թեկլէն։

—Արի, արի, դու արի,—կնոջ առաջն ընկաւ Մարութեանը։—Ահա, ներկայացնում եմ քեզ մեր Սուրէնի ազատչին, որին այնքան ցանկանում էիր տեսնել։ Իմ կինս է,—դարձաւ նա Բաղէնեանին։

Բաղէնեանն այդ ազմկալի ընդունելութից չգիտէր ինչ անէր և շարունակ ժպտում էր ինքնավստահ համեստութեամբ։

—Ներեցէք, տիկին, ես ստիպուած եմ ձեզ իմ ձախ ձեռքը տալ,—ասաց նա, թեթև խոնարհուելով։

—Ա՜խ, ձեր աջ ձեռքն է վնասուել,—մեղմօրէն և ցաւագին բացականչեց Թեկլէն։—Ինչքան ցաւում եմ, ինչքան ցաւում եմ։

—Բան չկայ,—նկատեց Մարութեանը,—շուտով բաղդ կունենանք աջ ձեռքը սեղմելու։ Ա՜, արի - այստեղ, չարաճճի,—յանկարծ կանչեց նա և վազեց դէպի Սուրէնը, որ կանգնել էր դռան շեմքում և երեխայական մտատանջ հետաքրքրութեամբ նայում էր հիւրերին։ Հայրը բռնեց երեխայի ձեռքից և առաջ բերեց։—Տես ով է եկել։ Ճանաչում ես այս պարոնին։

Երեխան լուրջ հայեացքով և փոքր ինչ քաշուելով դիտում էր Բաղէնեանի ժպտող դէմքը։

—Չե՞ս ճանաչում։ Սա այն պարոնն է, չարաճճի, որ քեզ ազատեց կառքի տակ ընկնելուց։ Դէ, շնորհակալութիւն յայտնիր։

Սուրէնն այս անգամ նայեց Բաղէնեանին յոնքերի տակից, ժպտաց մանկական ամօթխածութեամբ և սիրուն աչքերը վայր թողեց։

—Սնոլակալ եմ,—շշնջաց նա, հագուստի փէշը մատի վրայ փաթաթելով։

—Է՜, լաւ ասա, է։ Ասա, շատ շնորհակալ եմ, պարոն, որ ինձ ազատեցիք։

—Սատ սնոլակալ եմ, պարոն, ոլ ինձ ազատեցիք,—կրկնեց Սուրէնը։

—Այ այդպէս, ապրիս,—բացականչեց Մարութեանը և կամաց կմշտեց որդու թուշը։

—Ես քեզ ազատեցի, որովհետև այդքան խելօք տղայ ես,—շոյեց երեխային Բաղէնեանը։—Եկ ինձ մատ. մենք այսուհետև բարեկամներ ենք։ Իմ անունն էլ Սուրէն է։

Սմենքը նստեցին։ Բաղէնեանը երկնային առաւ-
լը ծնկների մէջ և սկսեց ձախ ձեռքով փաղաքշել նրա
գլուխը։

—Շուտով աղջիկս էլ քաղդ կունենայ։ Ինչպէս նա-
նալու ձեզ հետ,—ասաց Մարութեանը։

—Հա, ինչպէս է օրիորդը,—վրայ բերեց Բաղէ-
նեանը։—Դախն անցել է։

—Ի՞նչ, դատարկ բան է, ինչ վախ։

—Չէ, այդպէս մի ասիր,—նկատեց կինն ամուսնուն։—Ես բաւական վախեցել է։ Մինչև նկատում ինչ-
պէս ամեն մի հասարակ բանից յանկարծ ցնցւում է։

—Բան չկայ։ Վախը հաւել կրտանք, կանցնի,—
ասաց ամուսինը ծիծաղելով։—Տէս մինչ ազմուկ է սար-
քել նյուռեղ։

Մարութեանն այդ նկատողութիւնն արեց այդ
ընդհանուր յանկարծ բռնկած ուրախ քրքջոցի ձայների
վրայ, որոնք լսուեցին հեռաւոր սենեակներից։ Այնուհետև
հետև քրքջոցի և խառնաձայն խօսակցութեան հետ
նախասենեակում լսուեցին ոտների ձայներ։

Բաղէնեանն ու Շահէանը հեգաբրքրութեամբ ա-
կանջ դրին, մինչև որ ձայները, հեռանալով
լռեցին։

—Գնացին,—ասաց Մարգարիթեանը։—Այս դիշեր
շուտ է վերջացրել դատախօսութիւնները։ Գիտէք ինչ
կայ, պարոն Բաղէնեան։ Այդ աղջիկս է։ Այսպէս շա-
բաթը մի-երկու անգամ հաւաքում է ընկերուհիներին
և հայերէն խօսել-կարդալ է սովորեցնում։ Պէտք է ի-
մանաք, որ այդ ընկերուհիները, բոլորն էլ հայ չեն,
բայց ամեն լեզու գիտեն, բացի հայերէնից։ Գիտէք,
ինչ, ձեր աղջիկս կոչուած բարձր դասակարգի աղջիկ-
ներն ինչ կլինին...

Դուռն ուժգնօրէն բացուեց, և ամիսալի քաղաքա-

ներս մտաւ Եւան։ Իրանին պինդ սեղմուած մոլբա-
դոյն շրջազգեստը, որի ծանր փեղերը հազիւ էին ծած-
կում ոտների ծայրերը, շատ շնորհալի դիրքաբանք էր
տալիս նրա համարձակ հասակին։ Եռ մի քանի քայլ
առաջ շտապեց իր փուքիկոտ քայլերով, բայց յանկարծ
կանգ առաւ և զարմացած նայեց Բաղէնեանին։

Ծառեանի սիրտը ծատիկ թրթռաց և յանկարծ;
կարծես, դադարեց այլևս բաբախելուց։

Բաղէնեանը երեխային կամաց հեռացրեց իրենից
և վերկացաւ։

—Ինչ կանգնեցիր, առաջ ա՛ռ,—ասաց Մարու-
թեանն աղջկան։—Արի ծանոթացիր պարոն Բաղէնեա-
նի հետ, որին դու էլ ես պարտական։

—Ա՜խ, եղբօրս որդի՛ չէ,—բացականչեց Եւան
սնոտիկ ուրախացած և վազեց դէպի Բաղէնեանը, թոյլ
չտալով, որ նա մօտենայ իրեն։—Զգիտեմ ինչպէս պի-
տի արտայայտեմ ձեզ իմ շնորհակալութիւնը, պարոն
Բաղէնեան։ Դուք որ օգնութեան չհասնէիք, եղբայրս
ինչ դրութեան մէջ էր լինելու։ Երեկայցեցէք, խորհրդից
այն տասներեան դորցրել էի լինա, որ բոլորովին չեմ
յիշում ձեր դէմքը։ Մինչև անգամ չեմ յիշում, թէ ինչ-
պէս եղաւ, որ եղբայրս անմոտանգ մնաց։ Խա՛ղ դուք...
Ա՜խ, ինչ դժբաղդութիւն...—Ահա, ձեր ձեռքը դեռ կա-
պած ուներ։

—Ինչ դատ, օրիորդ։ Թող մի՛ անիկոսի ամիս կա-
պած մնայ։

—Մի-երկու ամիս...

—Դուք լսեցէք նրանց։

—Չէ, չէ, դա չարիքացս շատ է։ Դուք էլ ինչպէս դաբե-
ալ է... չեմ ուզում։

—Տեսնում էք, պարոն Բաղէնեան, չի ուզում,—
լուրջ կատակով ասաց Մարութեանը,—ուրեմն ձեր

ձեռքն իրաւունք չունի մի-երկու ամիս կապած մնալու։ Շատ-շատ՝ մի-երկու շաբաթ։

—Ի հարկէ,—պնդեց Եւան։

—Աւելի լաւ չէ՞ մի-երկու օր,—իր հերթին նկատեց Թեկլէն։

—Ուհո, մայրիկս աւելի լաւ ասաց. շատ-շատ՝ մի երկու օր, այսինքն դարձեալ մի-երկու օր, որովհետև մի շաբաթ է արդէն, որ կապած ունիք ձեր ձեռքը... Ա՛խ, պարոն Շահեան,—յանկարծ բացականչեց Եւան, նոր տեսնելով Շահեանին, և արագ մօտեցաւ նրան։—Դուք այնքան հեռու էք նստել, որ ձեզ չնկատեցի։ Բարև ձեզ։ Ինչո՞ւ մեզ մոռացել էք։ Համեցէք մօտիկ նստեցէք, խնդրում եմ։

Շահեանը հէնց սկզբից այնպիսի դրութեան մէջ էր զգում իրեն, որ կարծես ինքն առանձնապէս ոչ մի նշանակութիւն չունի այդ տան մէջ կամ եթէ ունի, այդ էլ նրա համար միայն, որ Բաղէշեանի ընկերն է։ Նրա ինքնասիրութիւնը սաստիկ վիրաւորուեց մանաւանդ այն բանից, որ Եւան, Բաղէշեանով ոգևորուած, չնկատեց իրեն սկզբում։ Եւ չար, անզօր նախանձը, որ երկու օրից ի վեր ծագել էր նրա մէջ դէպի ընկերը, այժմ արդէն զգալի արագութեամբ պաշարում էր նրա ամբողջ էութիւնը։ Զէ՞ որ վնասուած ձեռքը փաթաթանի մէջ դրած, արտիստական ճաշակով հագնուած այդ վայելչահասակ, գեղեցիկ երիտասարդն արդէն կուռք էր դարձած Մարութեանների համար, որոնց երեխային փրկել էր մահից անօրինակ անձնազոհութեամբ։ Մինչդեռ Եւան այնքան շնորհալի, այնքան գեղեցիկ, այնքան հրապուրիչ էր և այնպիսի՜ եռանդուն ուշադրութիւն էր ընծայում Բաղէշեանին...

Շահեանի դրութիւնը հետզհետէ ծանրանում էր։ Նա բոլորովին չէր խօսում, և, ըստ երևոյթին ուշադրութիւն դարձնող չկար նրան։ Երբ Մարութեաններն երբեմնակի մի-մի խօսք էին ուղղում նրան, այդ էլ, Շահեանը կարծում էր, քաղաքավարութեան համար միայն։

Ամենքի ուշադրութիւնը կեդրոնացած էր Բաղէշեանի վրայ։ Հարցեր էին, որ այս ու այն կողմից տալիս էին նրան, և նա ամենքին էլ գոհացնում էր տալիս պարզ, ազատ և ինքնավստահօրէն։

Խօսակցութիւնն ինքնաբերաբար անցաւ Կ. Պոլսի անցքերին և առհասարակ Թրքական Հայաստանում ընկսուած գործին։ Այստեղ Բաղէշեանը, ինչպէս ասում են, մտաւ իր դերի մէջ, և «սուրբ գործն» սկսեց հոլովուել նրա բերանում ամեն կերպ։

Շահեանին թւում էր, թէ նա բառ առ բառ կրկնում է նոյնը, ինչ որ իր մօտ էր ասել. կարծես բերան էր արել այդ բոլորը, ինչպէս մի լաւ դերասան իր բազմիցս խաղացած դերը։

Մարութեանները լսում էին նրան առանձին հետաքրքրութեամբ։ Այդ բանը ոգևորում էր Բաղէշեանին աւելի խորը գնալու։ Արդէն այն հանգամանքը, որ մինչև անգամ շատախօս Մարութեանը լռել էր, պարզ ապացոյց էր Շահեանի համար, որ Բաղէշեանը կատարեալ տիրել էր ունկնդիրներին։

Շահեանը գաղտագողի դիտում էր Եւային։ Եւան կրթնել էր բազկաթոռի թիկունքին և, հայեացքը Բաղէշեանի աչքերին յառած, լսում էր նրան ամենայն մտաւորութեամբ։ Նրա յոնքերի միջև գոյացել էր մի կնճիռ, որ վերին աստիճանի խելացի արտայայտութիւն էր տալիս նրա խոշոր աչքերին։

Եւ որքան Շահեանը շատ էր դիտում Եւային, այնքան աւելի թւում էր նրան, թէ Բաղէշեանի ճառախօսութիւնը սուտ է, խաբերայութիւն է, անամօթ

[illegible]

[illegible]

—Կատարելապես։ Բայց ոչինչ չեմ հասկանում, թե ինչպես կարելի է ոչ ողբերգություն։

Եվ Մարուքեանը [illegible]

—Ինչու չատակալեն ինձ։

[illegible]

—Միայն ամօթ, — դարձեալ [illegible]

—Գրեսոմբիոնը. [illegible]

—Եկել եմ նախ՝ բողոքելու, որ Աշխէնին [illegible]

—Բայց [illegible]

—Նոթ, — հարցրեցի [illegible]

[illegible]

[illegible]

[

աղջկան։

—Եւայլէն։—Օր. Սահակեանն ամբողջ մարմնով արագօրէն դարձաւ դէպի Եւան, ժպտաց և ցուցամատով կամաց խփեց նրա կզակին։—Հա-ա, Եւա, քեզ բողոքեմ։

Եւան գլուխը փոքր ինչ յետ գցեց, որ ապատուի նրա անտեղի փաղաքշանքից, բայց ծիծաղեց։

—Ում ուզում ես բողոքիր,—նկատեց նա,—բայց աւելի լաւ չլի՞ լինիլ ասես՝ ինչ է գրում։

—Կուզէ՞ք կարդամ նամակը։

—Եթէ մասնաւոր ոչինչ չկայ,—նկատեց Մարուքեանը։

—Ներողութիւն. կուզէիք, որ մասնաւորն էլ կարդայի։ Տեսէք ինչ է գրում։

Օր. Սահակեանը շտապով հանեց Աշխէնի նամակը, բաց արեց, պատրաստուեց կարդալու, բայց յանկարծ նայեց Բաղէնեանին ու Շահեանին, որոնք նրա գալուց յետոյ նստած էին բոլորովին լուռ, նամակը նորից ծալեց և պահեց։

—Ներողութիւն, պարոններ,—ասաց նա.—ես լաւ չհասկացայ տանտիրոջ այս բոպէին արած նկատողութեան իմաստը և այնքան անքաղաքավարի դտնուեցայ, որ ուզում էի մասնաւոր գործերով զբաղեցնել ձեզ։

—Խնդրում եմ, օրիորդ,—եռանդով վրայ բերեց Բաղէնեանը։—Մեր ներկայութիւնը թող ամենևին արգելք չլինի ձեզ նամակը կարդալու։

«Իմ տեղ էլ սա է խօսում։ Սա երևելի նշան է», մտածեց Շահեանը։

—Դուք թոյլ էք տալիս։

—Խնդրում եմ, օրիորդ։ Դա ի՞նչ խօսք է։

—Իսկ դուք, պարոն Շահեան։

—Է՜, թողէք, թէ Աստուած կըսիրէք, այդ անտեղի քաղաքավարութիւնները,—նկատեց Մարուքեանը։—Ինչից եղրակացրիք, չեմ հասկանում, թէ նկատողութիւնս արի նրա համար, որ պատուական հիւրերիս չզբաղեցնէք մասնաւոր բաներով։ Եթէ չճանաչէի իմ Աշխէնին, ուղղակի կարգելէի ձեզ նրա գրածը կարդալ։ Բայց գիտեմ, թէ ինչ է նա և ինչ կըլինի գրած, ուստի ամենևին երկիւղ չունիմ, թէ հիւրերս պիտի ձանձրանան նրա նամակը լսելով։ Խնդրում եմ կարդացէք։

Օր. Սահակեանը նորից հանեց նամակը։

—Պարոն Մարուքեանը ճիշտ է ասում, պարոններ. այն, ինչ որ այժմ պիտի կարդամ, անհետաքրքրական չէ և կարող է ընդհանուր խօսակցութեան նիւթ դառնալ։ Պարոն Շահեանը ճանաչում է Աշխէնին, բայց չգիտեմ՝ դուք լսե՞լ էք նրա մասին, պարոն...

—Բաղէնեան,—վրայ գցեց օր. Սահակեանին Մարուքեանը։

—Պարոն Բաղէնեան։ Չգիտեմ՝ դուք լսե՞լ էք օր. Աշխէնի մասին։

—Եթէ չեմ սխալւում, նա ձեր...,—դիմեց Բաղէնեանը Մարուքեանին։

—Եղբօրս աղջիկն է։

—Որը վարժուհու համեստ պաշտօնով գիւղն է գնացել,—վրայ բերեց օր. Սահակեանը։—Տեսնում էք այս տունը. նա ապրել է այս տան մէջ երկար տարիներ,—նա որբ է,—խաղաղ, հանգիստ կեանք է վարել իր յարգելի հօրեղբօր և նրա յարգելի ամուսնու խնամքի տակ, որոնք իրենց հարազատ աղջկանից ոչնչով չեն զանազանել նրան։ Բայց և այնպէս թողել է իր ամենայնիւ ապահովուած կեանքը և զրկանքներով լի գիւղն է գնացել խաւար ժողովրդի մէջ լոյս տարածելու համար։ Նա սիրուած և մանաւանդ յարգուած է ե-

Նաև արագությամբ ընդհատեց նրան.

— Ինչու:

Բաղդասարը ժպտալով,— ձեզ անշուշտ քայլ մանրամասնությունները չեք հետաքրքրի, բայց ես պարտավոր եմ դրանք ասել, որպեսզի դուք հասկանաք, թե ինչպես ինձ հետ ինչ-որ դեպքեր կարող են պատահել, եթե ես ինքս ինձ չեմ հսկում, ինչպես հարկն է, ինչպես ինձ հետ պատահեց Ալեքսանդրապոլում, Ալեքսանդրի մոտ, ինչպես ինձ հետ պատահեց

—Խնդրում եմ, պարոն Բաղէնեան, բոլորովին ապահով եղէք. ես այդքան ըծախնդիր չեմ։ Օր. Սահակեանը կատակ է անում։

Օր. Սահակեանը կոմիքական ապշութեամբ նայեց նախ Եւայի լուրջ դէմքին, յետոյ Մարութեանին և նրա կնոջը։

—Դէ արի ու սրապէնների պատիւը պաշտպանիր, —ասաց նա։—Շատ լաւ։ Երբոր ես կատակ եմ անում, այժմ լուրջ կերպով կըխօսեմ, մանաւանդ, որ պարոն Բաղէնեանն ասում է, թէ խօսակցութիւնը բոլորովին լուրջ բանի մասին է։ Շատ բարի, պարոն Բաղէնեան։ Երբոր դուք կարծում էք, թէ լուրջ բաների մասին խօսելիս շատ էլ ըծախնդիր չպէտք է լինինք քաղաքավարական կանոնները պահպանելու համար, ուստի ես էլ ծալում մի կողմ եմ դնում քաղաքավարական կանոնները և ասում եմ. եթէ, ձեր ասելով, հայ աղջիկներն անգոյն, չնչին, դատարկ արարածներ են ընդհանրապէս, երիտասարդներդ էլ մի բանի նման չէք։ Խնդրում եմ, մի նեղանաք, մենք բոլորովին լուրջ բանի մասին ենք խօսում։

—Ես չեմ նեղանում։

—Ճիշտ։

—Ամենևին։

—Ուրեմն ճիշտ եմ ասում։

—Բոլորովին ճիշտ չէք ասում։

Բաղէնեանն իր պատասխանները տալիս էր շատ հանգիստ, ամենևին ուշադրութիւն չդարձնելով օր. Սահակեանի հեգնական տոնին։ Այդ բանը գրգռեց օր. Սահակեանին։

—Զարմանալի է,—ասաց նա,—և դուք կարողանում էք այդքան հանգիստ մնալ, երբ անարդարութիւն էք լսում։

—Ես հանգիստ եմ մնում հէնց նրա համար, որ անարդարութիւն եմ լսում։

—Ուրեմն ես չարախօսում եմ։

—Ես այդպիսի բան չասացի։ Եւ, կարծեմ, հաշիւ էլ չպէտք է ունենաք չարախօսելու մեր երիտասարդների վրայ,—աւելացրեց Բաղէնեանը իր հանգիստ-յանդուգն հայեացքով դիտելով օր. Սահակեանի տգեղ արտաքինը։

Այդ երկմիտ խօսքերը և մանաւանդ այդ յանդուգն հայեացքը աւելի ևս վառեցին օր. Սահակեանին, բայց և այնպէս նա չկորցրեց իրեն։

—Ես շատ եմ հաւանում, պարոն, ձեր այդ սիրուն պատասխանները,—ասաց նա իր նախկին հեգնական տոնով։—Բայց կարելի չէ՞ արդեօք իմանալ, թէ ինչ ունիք դուք երիտասարդներիդ պաշտպանելու համար։

—Ես ոչինչ չունիմ, օրիորդ, մեր երիտասարդներին պաշտպանելու համար, որովհետև նրանք կարօտ չեն իմ պաշտպանութեանը։ Նրանց կատարած մեծ գործերը հրապարակի վրայ են. պէտք է միայն ընդունակութիւն ունենալ տեսնելու։

—Խոստովանւում եմ, ես այդ ընդունակութիւնը չունիմ և դրա համար խնդրում եմ, որ դէթ մի օրինակ ցոյց տայիք։

—Օրինակ՝ հէնց վերջին շարժումները։

—Ես գիտէի, որ այդ պիտի ասէք, որովհետև ուրիշ օրինակ չէք կարող բերել։

—Մի՞թէ այդ քիչ է։

Մինչև անգամ չափազանց շատ է, ով է ասում։ Բայց դուք ասացիք կատարած գործերը, իսկ ձեր ասած շարժումները նոր են սկսուած, և դեռ չգիտենք՝ երկունքի մէջ եղած լեռն ինչ կըծնի—փի՞ղ թէ մուկ։

[illegible]

Մարուքիանը դրանով խարծես էլ ասիսում էր [illegible]

[illegible] Ամենքս [illegible] ինչ որ մարդն ասի, [illegible] ոչ մի [illegible]

—Ամբողջ. բո գլխս տասնասուն հոգ [illegible]

[illegible] Ամենքս [illegible] ինչ որ մարդն ասի, [illegible] ոչ մի [illegible]

—Ամբողջ. բո գլխս տասնասուն հոգ [illegible]

[illegible] Բայց [illegible] Ամենքս [illegible] ինչ որ մարդն ասի, [illegible] ոչ մի [illegible]

—Ամբողջ. բո գլխս տասնասուն հոգ [illegible]

[

ճարտնութեան մէջ և փախուստ տալ օր. Սահակեանի առաջ։ Դա վիրաւորական էր նրա ինքնասիրութեան համար, մանաւանդ այդ ընտանիքի մէջ, ուր կարճ միջոցում ահագին հեղինակութիւն էր ձեռք բերել։ Վախկոտութեամբ փախուստ տալ ում առաջ ուզում է լինէր, մանաւանդ այդ դէր, այդ անճոռնի աղջկանից, որին պարզապէս արհամարհում էր,—այդ բանը չէր յարմարում նրա բնաւորութեանը։ Բացի դրանից, փախուստ տալ նշանակում էր ընկնել այն բարձրութիւնից, ուր ելել էր նա այդ սիրելի ընտանիքի աչքում։ Եւ Բաղէնեանը հաւաքեց իր բնածին բոլոր յանդուգն համարձակութիւնը, պատրաստուեց դիմադրելու, բայց օր. Սահակեանը ժամանակ չտուեց նրան։

—Ձեր ասած հայ աղջիկներին ես էլ լաւ եմ ճանաչում, պարոն Բաղէնեան և, իհարկէ, շատ աւելի լաւ, քան թէ դուք. բայց իմ ասած հայ երիտասարդներին էլ ճանաչում եմ՝ ինչպէս հարկն է։ Ուրեմն, աւելի լաւ է, լռենք այս մասին և կարդանք այս նամակը, որի գրողը...

—Ոչ, ինչո՞ւ լռենք, օրիորդ,—ընդհատեց նրան Բաղէնեանը։—Լռութիւնը միշտ կասկած է յարուցանում... Մենք կարող են խօսել բացարձակ, եթէ ոչ հիմա, գոնէ ուրիշ ժամանակ. յոյս ունիմ, առիթ կունենանք։

—Անշուշտ. ես միշտ պատրաստ եմ։ Բայց առաջուց պիտի ասեմ ձեզ, որ իմ համոզմունքը ոչ մի պայմանով չէք կարող փոխել։

—Ուրեմն աւելորդ կըլինի մեր վիճաբանութիւնը։

—Ո՛չ, ինչո՞ւ. գուցէ ես եմ փոխում ձեր համոզմունքը,—բացականչեց օր. Սահակեանը և բարձրաձայն ծիծաղեց։

Բաղէնեանը շատ սառն, պարզապէս ատելութեամբ

լի հայեացքով նայեց նրա կախ ընկած չաղ կզակին, որ դողդողում էր ծիծաղից, և նկատեց առանց մի մաղի չափ անգամ շփոթուելու.

—Ինչո՞ւ էք կարծում, թէ իմ համոզմունքը նոյնքան, եթէ ոչ աւելի հաստատ չէ, որքան ձերը։

—Իսկ դուք ինչի՞ց էք կարծում, թէ ես այդպէս եմ կարծում։

—Ձեր խօսքերից։

—Թէև ես այդպիսի բան չեմ ասել, բայց, համեցէք, ընդունում եմ, որ ձեր համոզմունքն աւելի հաստատ է, քան թէ իմը։ Յամենայն դէպս, այդ չի արդելում, կարծեմ, որ մենք դիսպուտի դուրս գանք—ես իմ փաստերով, դուք ձեր փաստերով։ Իսկ այժմ, որպէսզի աւելորդ ժամավաճառութեամբ չզբաղուենք, պարոն Բաղէնեան, կարդանք այս նամակը։

Եւ, որպէսզի Բաղէնեանը շատ չվիրաւորուի, օր. Սահակեանը ժպտաց յաղթանակը տարած մեծահոգի մարդու մեղմութեամբ։

Բաղէնեանը կծեց ներքին շրթունքը և այդպէս էլ մնաց—լուռ, մռայլ։

Երկու հիւրերի միջև տեղի ունեցած այդ ընդհարումը շատ ճնշող տպաւորութիւն էր գործել տանտէրերի վրայ։ Մարութեանն ու կինն անհանգստութեամբ շարժւում էին անդադար իրենց տեղում, գրեթէ յուսահատուած՝ չիմանալով ինչպէս վերջ տան այդ անախորժ վիճաբանութեանը, որ նկատելի չլինի, թէ այդ բանն անում են նրա համար միայն, որ Բաղէնեանին աղատեն նեղ դրութիւնից. ուստի աւելի լաւ էին համարում լռել։

Բոլորովին լուռ էր և Եւան։ Շատ լաւ ծանօթ լինելով օր. Սահակեանի բնաւորութեանը, գիտէր, որ նա կոպիտ լինելու չափ համարձակ էր և վիճաբանու-

[illegible]

[illegible]

[illegible]

ըից մէկը և ժողովրդական բանահաւաք։ Դուք նրան գոնէ մեր գրականութիւնից պիտի ծանօթ լինէիք։

—Մինասեանն... Այդպիսի գրող չեմ ճանաչում։

—Ուրեմն չէք հետևում գրականութեանը,—նկատեց օր. Սահակեանը և պատրաստուեց նամակի ընթերցումը շարունակելու։

Բաղէնեանը զգաց՝ որ կարմրում է դէպի իր հակառակորդը տածած չարութիւնից։

—Ներեցէք, գուցէ նա մի անյայտ...

—Ո՛չ, մեր ժողովրդական գրականութեան մէջ նա բաւական յայտնի է, և յայտնիներ էլ շատ չունինք,—կտրեց նրա խօսքն օր. Սահակեանը և շարունակեց նամակի ընթերցումը.

«Պ. Մինասեանը կրթութեան մէջ ոչ թէ միայն ընդհանրապէս մարդկային առաջադիմութեան միջոց է տեսնում, այլ և—ամենակարճ ճանապարհը, որով գիւղացին կարող է տնտեսական փոքրիշատէ բարւոք վիճակի հասնել։ Տուր գիւղացուն հող էլ, փող էլ, կարճ ժամանակից յետոյ նա նոյն հացակարօտ աղքատը կը մնայ, եթէ կրթութիւն չես տալ նրան, որ այդ հողն ու փողը կառավարել կարողանայ։ Ահա, այս հիմնական միտքն իրեն առաջնորդ ունենալով, պ. Մինասեանը նուիրուել է ուսումնարանի գործին արտասովոր եռանդով։ Այս կատարեալ հերոսութիւն է, եթէ ի նկատի առնենք այն ահագին դժուարութիւնները, որոնց դէմ ստիպուած է նա մաքառել։ Այս երիտասարդն իր հաստատուն բնաւորութեամբ, իր անհանդիստ աշխատասիրութեամբ, նպատակին ձգտող իր յամառ գործունէութեամբ կատարեալէս զարմացնում է ինձ։ Աշխատում է գիշեր-ցերեկ, անում է ամեն բան, չեղած տեղը գործ է ստեղծում, որ պարապ չմնայ։ Գիւղատնտեսութեան մէջ մանաւանդ նրա կատարած գործերն ահագին են։ Գիւղացիները կատարեալ հաւատ են ընծայում նրան, որովհետև գիտէ նրանց բան հասկացնելու կերպը. իսկ գիւղացիներին բան հասկացնելու համար ուղղակի տաղանդ է հարկաւոր ինտելիգենտ մարդուն։ Ասենք, Մինասեանին այս գործում մեծապէս նպաստում է այն հանգամանքը, որ նա, շատերի պէս, երբէք չի կտրել իր կապը գիւղի հետ։ Անցած ամսին այստեղ էր եկել, քսան տարուայ բացակայութիւնից յետոյ, գիւղիս համփա բնակիչներից մէկի ինժեներ որդին ժառանգական-կալուածական մի վէճի համար։ Երբ ինձ ասացին, թէ նա այս-ինչ տան զաւակն է, ուղղակի ապշեցի—այն աստիճան օտար էր նա գիւղին իր լեզուով, սովորութիւններով, նիստ ու կացով, էլ չեմ ասում տարազով։ Ես ու Մինասեանը ներկայ էինք համագիւղացիների հետ նրա ունեցած վէճին։ Մարդն ինձ վրայ շատ լաւ տպաւորութիւն թողեց իր խելացի հայեացքներով, բարի զգացումներով և հակառակորդներին ըստ ամենայնի զիջում անելու ցանկութիւններով. բայց արի տես, որ ամբողջ երկու ժամ խօսում էր գիւղացիների հետ և ոչինչ չէր կարողանում հասկացնել նրանց։ Գիւղացիները բան հասկացան միայն այն ժամանակ, երբ միջամտեց Մինասեանը և մի քանի խօսքով բացատրեց նրանց բանի էութիւնը նրանց լեզուով և զարմանալի պարզ օրինակներով։ Եթէ ասեմ, որ Մինասեանը գիւղի կուռքն է և ամբողջ գաւառում մեծ հեղինակութիւն է վայելում, չափազանցութիւն արած չեմ լինիլ։ Բայց նա ունի և զօրեղ թշնամիներ։ Դրանք, գլխաւորապէս, վաշխառուներն են, որոնցից մէկն այս օրերս դանգատ է տուել նրա դէմ նահանգական դատարանին՝ լրագրի մէջ իր մասին նրա արած մի մերկացման համար։

«Ես գրում եմ իմ առաջին տպաւորութիւնները,

սիրելի վարս։ Զգիտեմ, գիւղն ու գիւղական կեանքն ինձ համար նորութիւն է—դրա համար է ինձ այստեղ ամեն բան մռայլ թւում, թէ այդ իսկապէս այդպէս է։ Գոնէ մխիթարական ես ոչինչ չեմ գտնում այստեղ։ Միակ մխիթարականը և յուսատուն, որ լուսատու մէնաւոր աստղի պէս պայծառ փայլում է այս թխպոտ հորիզոնի վրայ, դա պ. Մինասեանն է։ Բայց մի ծաղկով գարուն կըգայ...»։

—Դու էլ մէկ—երկու, երկուսով խօ կըգայ,—ասաց օր. Սահակեանն Աշխէնի հասցէին և նամակը ծալեց։—Ահա, այս էր, պարոններ, ինչ որ կարող էի կարդալ այս նամակից։ Մի քանի կտորներ էլ կարելի էր կարդալ, բայց վախենում եմ, որ պարոն Բաղէնեանը կարծի, թէ նա ինքնագովութեամբ է պարապում։

Եւ օր. Սահակեանը, նայելով Բաղէնեանին, ժըպտաց։

—Ես պարոն Բաղէնեանի տեղ բողոքում եմ ձեր դէմ, օրիորդ,—բացականչեց Մարութեանը։—Եթէ պարոնը հայ աղջիկների մասին աննպաստ կարծիք ունի, այդ չի նշանակում, թէ նա բացառութիւններ չի ճանաչում։ Այդպէս չէ՞, պարոն Բաղէնեան։

—Զեմ հասկանում,—խիստ հանդիստ արտասանեց Բաղէնեանը, ուսերը վեր քաշելով։ Նա արդէն ատում էր օր. Սահակեանին։

—Ես համաձայն եմ ձեզ հետ, պարոն Մարութեան, որ պարոն Բաղէնեանը չի կարող չճանաչել բացառութիւններ. բայց մի՞թէ այսպիսի բացառութիւններն աւելի քիչ են արժանի ուշադրութեան, քան ընդհանրութիւնը։ Ի՞նչ էք կարծում, տիկին,—դարձաւ օր. Սահակեանը Թեկլէին.—Աշխէնը դատարկ աղջիկ է։

—Ո՞վ է ասում... Երանի չէ՞ր լինիլ որ բոլոր աղ-

ջիկները նրա պէս խելօք լինէին,—ասաց Թեկլէն տխուր մտախոհութեամբ։

—Տեսնում էք։ Իսկ դուք, պարոն Շահեան. ձեր կարծիքն ինչ է. դուք ճանաչում էք նրան։

—Ես համաձայն եմ ձեզ հետ,—ասաց Շահեանը, առանց մտածելու, թէ ինչ է ասում և, ինքն էլ չհասկացաւ ինչու, ժպտաց։

Օր. Սահակեանն արագօրէն դարձաւ դէպի Եւան որ նստած էր իր կողքին։

—Իսկ դո՞ւ, Եւա։

Եւան խնդոյն չպատասխանեց։ Նրա անսովոր-լուրջ հայեացքը մտքի ինչ-որ տխուր-խորհրդաւոր կեդրոնացում էր արտայայտում։

—Այդպիսի մի նամակ էլ մեզ է գրել,—ասաց նա, առանց պատասխանելու օր. Սահակեանի հարցմունքին։

—Հա-ա։

—Բաս ի՞նչ էիք կարծում,—ասաց Մարութեանը։

—Դէ որ այդպէս է, ինչո՞ւ առաջուց չէիք ասում, որ իզուր ժամավաճառ չլինէի կարդալով... Ասենք, ինչս չունի. այդ հարկաւոր էր պարոն Բաղէնեանի համար, որպէսզի պարոնը համոզուի, որ հայ աղջիկների մէջ ևս կան այնպիսիները, որոնց մօտ շատ հայ երիտասարդներ զերօ են։

Բաղէնեանը յետ էր ընկել բազկաթոռի մէջքին և աշխատում էր կատարեալ լռութեամբ արտայայտել իր արհամարհանքը։

—Ներեցէք, պարոն Բաղէնեան, որ ձեր յայտնած կարծիքի մասին այսքան շատ եմ խօսում,—աւելացրեց օր. Սահակեանն այս անգամ դիջողարար ժպտալով։—Ես ինքս համաձայն եմ ձեզ հետ, որ հայ աղջիկները, խիստ մեծամասնութեամբ, դատարկ և չնչին արարածներ են, ինչպէս դուք ասացիք. բայց դուք մի դատա-

պարտէք այդ աղջիկներին, այլ դատապարտեցէք ընտանեկան, թէկուզ և հասարակական այն պայմանները, որոնց մէջ մեծանում են նրանք, որովհետև, ամեն երևոյթ իր պատճառներն ունենալով, այս տխուր երևոյթի մէջ էլ քննութեան առարկան և դատապարտելին ոչ թէ ինքն երևոյթը պիտի լինի, այլ պատճառը։ Բայց, միւս կողմից, թոյլ տուէք նկատեմ, որ հայ երիտասարդներն արդէն իրենք են դատապարտելին, որովհետև նրանք անհամեմատ թէ աւելի ազատ են մեծանում և թէ աւելի լաւ կրթութիւն են ստանում, քան հայ աղջիկները. մինչդեռ նրանք ինչ են անում.—կամ քնում են, կամ իրենց վորի համար միայն աշխատում։ Ասացէք, խնդրեմ, ո՞ր երիտասարդը, քաղաքում հանգիստ ու ապահով կեանք վարող երիտասարդն եմ ասում, սիրտ կանէ կորած տեղեր գնալ աչքից ընկած, մտքից մոռացուած ժողովրդի բարօրութեան գործին ծառայելու համար։ Ասացէք, կա՞յ այդպիսի երիտասարդ։

—Իմ եղբա՛յրը,—դուրս թռաւ Եւայի բերանից, և նրա մտախոհ հայեացքի մէջ յանկարծ ինչ-որ կայծ վառուեց, բայց իսկոյն էլ հանգաւ։

Այն աստիճան ազդու էր նրա ձայնը, որ ամենքն էլ ակամայ նայեցին նրան։

Եւան վեր կացաւ տեղից, և կայծը նորից վառուեց նրա գեղեցիկ աչքերի մէջ։

—Իմ եղբա՛յրը,—կրկնեց նա։—Ես կերդուեմ, որ ոչոք չի կարող նրան հասնել... Ա՜խ, ինչպէս ուզում եմ, որ այս րոպէիս այստեղ լինի նա...

Օր. Սահակեանը սիրով ու կարեկցութեամբ նայեց նրան և այլևս չշարունակեց վիճաբանութիւնը։ Թեկլէի աչքերը լցուեցին մայրական սիրոյ կարօտակէզ արտասուքներով։ Իսկ Մարութեանը, որի հայրական սիրտը նոյնպէս սաստիկ շարժուել էր դէպի իր

հեռացած որդին, իրեն սրտապնդելու համար սկսեց բարձրաձայն հազալ։

—Ի դէպ, պարոն Բաղէնեան, դուք չէ՞ք ճանաչում օրիորդի եղբօրը—Արմենակին։

—Ոչ։

—Զարմանալի է։ Որքան իմացել եմ, դուք ևս ծառայում էք միևնոյն գործին, ինչ որ նա, և ի՞նչպէս է, որ չէք ճանաչում նրան...

—Ուրիշ ի՞նչ է գրում,—շտապով դարձաւ Մարութեանն օր. Սահակեանին, վախենալով, թէ մի գուցէ նա մի նոր յարձակում սկսի Բաղէնեանի դէմ։—Չի՞ տխրում, գո՞հ է իր վիճակից։ Մեզ գրած նամակների մէջ իր կեանքի մասին ընդհանրապէս ոչ մի ղժգոհութիւն չի յայտնում. բայց ես հասկանում եմ, որ մեզ ուրիշ կերպ չի գրիլ, իսկ ձեզ, կարծում եմ, ճշմարտութիւնը պիտի լինի յայտնելիս։

—Ահա, ուզո՞ւմ էք, այդ կտորն էլ կարդամ։

—Խնդրում եմ։

Եւան, մի-երկու անգամ սենեակում անցուդարձ անելուց յետոյ, կամաց նստեց իր առաջուայ տեղը, օր. Սահակեանի մօտ։

VII

«Գիւղն ինձ վրայ, ինչպէս ասացի, խիստ ճնշող տպաւորութիւն գործեց,—կարդաց օր. Սահակեանը։—Աղքատութեանը զուգակից է տգեղութիւնը, և այդ տգեղութիւնն արդէն չափից դուրս աչքի էր ընկնում այստեղ։ Հէնց միմիայն գիւղի արտաքին տեսքը—նրա ծուռումուռ, անասունների մշտական աղբով ծածկուած, ցեխոտ փողոցները, անճոռնի, շատ տեղ գետնափոր տները, վտիտ անասունները, ճրճռան ծանրաշարժ սայ-

լերը, անագին փափախների տակ ճնշուած մարդիկ, բերանն ու քթները կալած կանայք, կեղտոտ ու գըզ-գզուած երեխաները, անհամար քոսոտ շները,—ամեն, ամեն բան ինձ վերին աստիճանի տգեղ և հակակրելի էր թւում։ Կարծում էի, թէ յանկարծ ընկել եմ վայրենի մի աշխարհ, ուր ամեն ինչ խորթ ու անծանօթ էր ինձ։ Ինձ վրայ նայում էին զարմանքով և կասկածով։ Կանայք մանաւանդ աւելի էին խրտնում ինձնից, —չեմ հասկանում ինչու։ Շատ անգամ, երբ հարևանի կովը ցեխոտ պոչը տատանելով անցնում էր առաջովս, ինձ թւում էր, թէ այդ անասունն անգամ իր յիմար աչքերով ուրիշ կերպ էր նայում ինձ,—ոչ այնպէս, ինչպէս սովորական գիւղացիներին։

«Առաջին իսկ օրից դառնութեամբ, գրեթէ տանջուելով զգացի, որ ոչինչ չպիտի կարողանամ շինել այստեղ։ Իմ և ինձ շրջապատող մարդկանց միջև ոչ մի առնչութիւն չէի տեսնում։ Ոչ ես էի հասկանում սրանց, ոչ սրանք էին հասկանում ինձ։ Այդ քիչ է. ինձ թւում էր, թէ երբէք չպիտի կարողանամ անկեղծօրէն համակրել և սիրել այս բիրտ, կասկածոտ և տգեղ մարդկանց, որոնց բարօրութեան գործին վճռել էի նուիրել ինձ այդ-տեղ իմ մաքուր սենեակում նստած։ Այս կէտը մանաւանդ մեծ մտահոգութիւն էր պատճառում ինձ և երևան էր հանում իմ մէջ այնպիսի անծանօթ գծեր, որ ուղղակի ապշած էի մնում և չէի ճանաչում ինքս ինձ։ Ի՞նչ էր նշանակում այս խորթութիւնը, այս օտարութիւնը, այս զզուանքը, վերջապէս։ Ես արիստոկրատ չէի ծնուել. ընդհակառակը՝ պատկանում էի ժողովրդի նոյն ստորին խաւին, ինչ որ սրանք, այս կոշտ ու կոպիտ, այս անմաքուր ու տգեղ գիւղացիները, և մեր ծագման մի-ջև եթէ մի տարբերութիւն կար, այդ էլ զուտ աշխարհագրական էր. ես ծնուել էի քաղաքում, սրանք—գիւ-

ղում։ Ուրեմն ո՞ւրտեղից էր այս «արիստոկրատիզմը», որի գոյութիւնն իմ մէջ մինչև այստեղ գալս երևակայել անգամ չէի կարող... Այս ու այսպիսի հազարաւոր մտքերի ճնշման տակ, յանկարծ յիմարութիւն և, որ աւելի վատ է, կեղծիք թուաց ինձ իմ «անձնուրացութիւնը»։ Այս էր ամենաանտանելին, որովհետև այս միտքն ինձ նուաստացրեց իմ աչքում վերին աստիճանի, ինքս ինձնից ամաչելու չափ...

«Այսպիսով առաջին օրերն ու շաբաթներն անցան յուզող կասկածների, ծանր անձնաքննութեան և վերին աստիճանի տաղտկութեան մէջ, որի ժամանակ խենթանալու չափ սկսեցի կարօտել քաղաքի կեանքը, ինձ ծանօթ սիրելի դէմքերը, մանաւանդ քեզ և մանաւանդ Եւային, իմ սիրուն, իմ քնքոյշ, իմ պաշտելի Եւային...»։

Այստեղ ամենքի հայեացքը մեքենայաբար դարձաւ դէպի Եւան, որի աչքերի մէջ յանկարծ արտասուքի կաթիլներ ցոլացին։ Նա գլուխը խոնարհեց և մատներով պինդ ծածկեց աչքերը։ Մինչդեռ օր. Սահակեանը, ըստ երևոյթին ոգևորուած նամակից, ուշադրութիւն չդարձրեց այդ բանին և շարունակեց կարդալ.

«Բայց ոչինչ չշինած՝ վերադառնալ, այդ միևնոյնը կը լինէր, թէ զինուորը փախչում է պատերազմի դաշտից՝ մի գնդակ անգամ չարձակած։ Այդպիսի դէպքում աւելի լաւ չէ՞ր լինիլ, որ ուղղակի գետն ընկնէի խեղդուէի, քան թէ վերադառնայի հարազատներիս մօտ այդպիսի խայտառակութեամբ։ Այդ միտքն էր, որ պահպանեց ինձ անկումից և, միևնոյն ժամանակ, քաջութիւն տուեց։ Միւս կողմից, գիտէի, որ ժամանակն ամենալաւ հաշտեցնողն է։ Հարկաւոր էր միայն համբերութիւն և բարոյական ոյժ։ Այդ համբերութիւնն ու բարոյական ոյժը...»։

Օր. Սահակեանը յանկարծ դադարեցրեց ընթերցումը և նամակը շտապով ծալեց։

—Ներեցէք, այլ ես չեմ շարունակիլ,—ասաց նա։

Եւան, մատները հեռացրեց աչքերից և հետաքրքրութեամբ նայեց նրա դէմքին։

—Ինչո՞ւ,—հարցրեց Մարութեանը զարմացած։

—Որովհետև...,—օր. Սահակեանը հաղիւ նկատելի կերպով շփոթուեց,—որովհետև... շարունակութիւնն արդէն ինքնագովութիւն է, որ... պարոն Բաղէնեանը կարող է խիստ կրիտիկայի ենթարկել,—շփոթմունքը զսպելով, վրայ բերեց նա և ժպտալով նայեց Բաղէնեանին։

Բաղէնեանը ոչինչ չասաց, միայն հանգիստ զարմանքով նայեց Մարութեանին, կարծես հարցնում լինէր՝ ինչ է պատահել սրան։

—Է՜հ, կարդացէք,—ասաց Մարութեանը, դժգոհելով, որ օր. Սահակեանն այդպէս յաճախ ընդհատում է նամակի ընթերցումը և ամեն անգամ անտեղի կերպով ուզում է խայթել Բաղէնեանին։

—Բացի ինքնագովութիւնից,—վրայ բերեց օր. Սահակեանը հեգնօրէն,—շարունակութիւնն այսպէս ասած՝ աշակերտական բարոյախօսութիւն է, որը կարող է ձանձրալի լինել, ինչպէս ամեն մի բարոյախօսութիւն։

—Տէր իմ, Աստուած... ձեր ինչ գործն է. դուք կարդացէք։

Օր. Սահակեանը ծիծաղեց Մարութեանի զայրացկոտութեան վրայ և դարձաւ Եւային.

—Կարդամ, Եւա։

—Ինչո՞ւ չպէտք է կարդաս,—ասաց Եւան կամաց։ Նրա դէմքը սառնութիւն էր արտայայտում։

Օր. Սահակեանը նորից բաց արեց նամակը։

«Այդ համբերութիւնն ու բարոյական ոյժն ես արդէն առիթ եմ ունեցել զարգացնելու իմ մէջ»—կարդաց նա կիսատ թողած նախադասութիւնը և լռեց։

Ամենքն էլ տեսան, որ նա շարունակութիւնը մտքումն է կարդում։ Եւան կամաց թեքուեց դէպի նա, սկսեց նայել նամակին և տեսաւ, որ նա մի շարք տողեր բաց թողեց։

Օր. Սահակեանը շտապով դարձրեց թերթը և շարունակեց.

«Ահա հէնց այդ համբերութեամբն ու բարոյական ուժովս էր, որ կարողացայ դիմանալ սկզբնական դժուարութիւններին, որոնք, գուցէ, շատ չնչին բաներ էին, բայց ինձ, որովհետև խամ էի, ծանր էին թւում։ Ծանր էին թւում մանաւանդ այն պատճառով, որ կարծում էի, թէ բաւական է, որ մարդ ոգևորուած լինի այս կամ այն գաղափարով, մնացածը հեշտ է։ Մինչդեռ փորձն ինձ ցոյց էր տալիս, որ գեղեցիկ գաղափարների իրագործումը շրջապատուած է տգեղ պայմաններով, այնքան աւելի տգեղ, որքան մարդ շատ է լինում ոգևորուած։ Կրկնում եմ. այդ ես փորձով տեսնում ու զգում էի, ուրեմն և հասկանում, որ այդ այդպէս էլ պէտք է լինի և ուրիշ կերպ չի կարող լինել։ Միւս կողմից, ինչպէս ասացի, ինձ ոյժ էր տալիս այն գիտակցութիւնը, թէ դժուարութիւններից փախչելն առհասարակ ամօթալի բան է, երբ այդ դժուարութիւններն ինքդ ես կամովին յանձն առել կրելու։ Բացի այդ, ինձ ուսուցել և օրինակ էին տուել անձնականը զոհելու ընդհանրութեանը, ապրելու ուրիշների համար, և ես չէի կարող, չպէտք է դաւաճանէի այդ գաղափարին, մանաւանդ այն ժամանակ, երբ ոտք էի կոխել այդ գաղափարին գործով ծառայելու ճանապարհի վրայ։ Այժմ, երբ սկսել եմ ընտելանալ գիւղական

մայլ կեանքին, այդ գաղափարն աւելի ևս ոգևորում է ինձ, և ես կարողանում եմ զսպել մարդկային թուլութիւնները։ Նոյն իսկ պատահում են ոգևորութեան օրեր, երբ ամէն բան մոռանում եմ և բուռն ձգտումով անձնատուր եմ լինում այս թշուառ մանուկների կըրթութեան գործին—մանուկների, որոնց լոկ տեսքն անդամ անհուն կարեկցութիւն է շարժում։ Սարսափում եմ, որ մտածում եմ, թէ ապագայ այս գեղջուկներն ու գեղջկուհիներն էլ առանց կրթութեան կարող են, նոյն խաւարով շրջապատուած, փտել անասնական նոյն կեանքի մէջ, ինչպէս փտել ու փտում են սրանց պապերն ու տատերը, սրանց հայրերն ու մայրերը։ Չէ՞ որ սրանք էլ մեզ պէս մարդիկ են. չէ՞ որ սրանք մեր քոյրերն ու եղբայրներն են։ Ի՞նչ խղճով պէտք է տեսնենք սրանց այս ողբալի դրութիւնը և օգնութեան ձեռք չկարկառենք, երբ կարող ենք և քանի որ կարող ենք։ Ամօթալի և վիրաւորական չէ՞ միթէ մեզ համար, որ մեզ նման Աստուծոյ պատկերը կրող այս արարածները զրկուած են աստուածային լոյսից։ Խաւարի այս սոսկալի թագաւորութիւնը տեսնելով, մի՞թէ այլ ևս հնարաւոր պիտի լինի անհատի համար եսական կեանքը։

Ես չեմ ուրանում, որ մարդիկ իրար չեն օգնում։ Մարդկային կեանքն իր բոլոր ասպարէզներում փոխադարձ օգնութեան վրայ է հիմնուած։ Բայց, աւաղ, այդ օգնութիւնը դեռ լոկ բնազդական, անգիտակցական և անուղղակի է, որպէսզի ցանկալի պտուղները տար։ Ես կուզէի, որ մարդիկ իրար օգնէին գիտակցաբար։ Այդ քիչ է. կուզէի, որ մարդիկ ուրիշին օգնելու գործում դնէին իրենց սիրտը, հոգին, ամբողջ էութիւնը։ Անպայման անձնուրացութիւն և անձնազոհութիւն եմ պահանջում ես, որովհետև մարդու գոյութեան բուն նպատակը, հետևաբար և նրա իսկական երջանկութեան

գրաւականն ուրիշ ոչ մի բանի մէջ չեմ տեսնում, բացի միայն սեպհական եսն ուրիշի բարիքին զոհաբերելու մէջ։ Այդպէս է քարոզում բոլոր խելօք գրքերից ամենախելօք գիրքը—Աւետարանը, և դրանով միայն մարդը կարող է աստուածանալ, որին ձգտում է նա հասնել։ Բանի՞ դար է ահա, որ քարոզւում է այդ գաղափարը, որը, սակայն, դեռ ևս լոկ մեռած տառ է հանդիսանում և եթէ անցել է գործադրութեան, անցել է չափից դուրս սահմանափակ և չոր մտքով։ Ինչո՞ւ։ Այդ նրանից չէ՞ արդեօք, որ մարդիկ հոգին համաչափ կերպով չեն զարգացնում մտքի հետ։ Պատճառն այն չէ՞ արդեօք, որ միտքն առաջ է սլացել, հոգին յետ է մնացել։ Միտքը հսկայական թռիչքներ է գործում երկրի անդունդներից մինչև երկնքի անհունութիւնը, իսկ հոգին դեռ ևս խարխափում է խաւարի մէջ և շարժւում է կրիայի քայլերով։ Ես հաւատում եմ մտքի յաղթանակին, բայց աւելի ևս հաւատում հոգու յաղթանակին։ Ցանկալի եղեմն այն ժամանակ կըգտնուի, երբ հոգին ու միտքն առաջ կընթանան ձեռք ձեռքի տուած...»

—Ես վերջացրի,—ասաց օր. Սահակեանը և դանդաղօրէն ծալեց նամակը։

Սենեակում կարճ ժամանակ խոր լռութիւն տիրեց։ Այդպէս է լինում միշտ, երբ որևէ գրուածքի ընթերցումը գրողի համար կամ աննպաստ, կամ խիստ նպաստաւոր տպաւորութիւն է թողնում ունկնդիրների վրայ։

VIII

—Բաւ՜ւ,—յանկարծ բացականչեց Մարութեանը խիստ ոգևորուած։—Բաւ՜ւ, Աշխէն, բաւ՜ւ։ Ամէն մի

բառը մի ոսկի արժէ։ Օ՜, խելօք է, շատ խելօք։ Գիտէ մտածել։ Այդպիսի մտքեր... Հիանալի է, հիանալի։ Զարմանալի է. դուք հէնց ամենահետաքրքրական կը-տորը չէիք ուզում կարդալ։

—Է՛հ, թողէք, թէ Աստուած կըսիրէք։ Ի՞նչ հետաքրքրական, ձանձրալի ասացէք,—հեգնօրէն նկատեց օր. Սահակեանը և հարևանցի նայեց Բաղէնեանին։—Խելքին զօր է տուել, էլի։ Փոխանակ ըան գրելու, ինչ-որ անգիր արած ճրճռան ֆռաղներ է շարել իրար յետևից։

—Բա՛ն ասացիք։ Իմ ի՞նչ գործն է, թէ խելքին զօր է տուել։ Դուք յայտնած մտքերն ասացէք։ Յետոյ, ի՞նչպէս թէ անգիր արած։ Ներողութի՛ւն։ Այդպէ՞ս էք ճանաչում ձեր ընկերուհուն։ «Ցանկալի եղեմն այն ժամանակ կըգտնուի, երբ հոգին ու միտքն առաջ կընթանան ձեռք ձեռքի տուած»։ Հրաշալի չէ՞ մի թէ։ Ճիշտ չէ՞ արդեօք, որ մարդիկ մտքի կրթութեան վրայ աւելի են ուշք դարձնում, քան թէ հոգու։ Ճիշտ չէ՞ արդեօք, պարոն Բաղէնեան, ճիշտ չէ՞ արդեօք, պարոն Շահեան, ձեզ եմ հարցնում։

—Բոլորովին իրաւացի է,—ասաց Բաղէնեանը և նոյնը մեքենայաբար կրկնեց Շահեանը։

—Ոչ թէ բոլորովին, այլ դեռ մի բան էլ աւելի է,—բացականչեց Մարութեանն աւելի ու աւելի ոգեւորուելով։—Ասում են, մեծ մարդիկ մեծ էլ պակասութիւններ են ունենում։ Ինչո՞ւ։ Ինչո՞ւ այնպէս չպէտք է լինի, որ մեծ մարդիկ ոչ թէ միայն մեծ, այլ և առհասարակ ոչ մի պակասութիւն չունենան։ Ինչո՞ւ այդպէս է, հարցնում եմ ձեզ։ Որովհետև մեծ մարդկանց, ինչպէս և ամեն մի սովորական փոքր մարդու, հոգին, այսինքն բարոյական ընդունակութիւնները համաչափ կերպով չեն զարգացուում մտաւոր ընդունակութիւնների հետ։

Ասացէք, խնդրեմ. եթէ մենք կարողանում ենք մեր միտքն այնպէս զարգացնել, որ կարող ենք հնարել երկաթուղի, հեռագիր, հեռախօս, ձայնախօս, մահաբեր հրացան ու թնդանօթ, մի՞թէ չենք կարող մեր հոգին էլ այնպէս զարգացնել, որ թշուառների արտասուքը տեսնելիս անտարբեր չմնանք, նեղացածներին օգնենք, տնանկին պատսպարենք, քաղցածին հաց տանք։ Մի՞թէ հոգին աւելի պակաս ընդունակ է կրթուելու և զարգանալու, քան թէ միտքը։ Չեմ կարծում։ Սիստեմը, այժմեան կրթութեան ամբողջ սիստեմն է մեղաւոր այս ափաշքարայ հակասութեան մէջ։ Ես հաւատացած եմ, որ մեծ մարդիկ կրկին չափով մեծ գործեր կլինէին կատարած, եթէ նրանց հոգին զարգացած լինէր ուղեղի հետ համաչափ կերպով։ Այդպիսով մենք մի տասնևինն դար էլ առաջ կըլինէինք գնացած, որովհետև շատ անգամ մի բան, որ անկարելի է լոկ ուղեղով, մտքով ըմբռնել, կարելի է հասկանալ հոգու աջակցութեամբ։ Հոգին մտքի ամենալաւ խորհրդատուն է. միտքը առանց հոգու—զերօ, բայց միտքն ու հոգին միասին — ամեն բան։ «Ցանկալի եղեմն այն ժամանակ կըգտնուի, երբ հոգին ու միտքն առաջ կընթանան ձեռք ձեռքի տուած, մի հաւասար գծով»։ Պարոններ, մի՞թէ սա ճիշտ չէ, մի՞թէ սրանք կլասիքական խօսքեր չեն։

—Եւ ասողն ո՞վ, այդ ասացէք.—մի հայ աղջիկ,—նորից հեգնեց օր. Սահակեանը և դարձեալ նայեց Բաղէնեանին։

Բաղէնեանն այլևս չկարողացաւ համբերել։

—Օրիորդ, իզուր դուք հեգնում էք,—ասաց նա շատ սառն կերպով։—Ես կարող եմ հիանալ այդ նամակի մէջ յայտնուած մտքերից և զարմանալ այն օրիորդի ընդունակութեան վրայ, որ կարողացել է գրել

այդպիսի մի նամակ, բայց և այնպէս այդ չի խանգարում ինձ դարձեալ պնդելու, որ հայ աղջիկներն ընդհանրապէս,—ուսում առած, թէ չառած,—շատ չնչին և դատարկ արարածներ են, որ նրանք...

—Զարմանում եմ ձեզ վրայ...

—Ներողութիւն, թողէք խօսքս վերջացնեմ... Որ նրանք ոչ թէ չեն կարող այդպիսի նամակներ գրել, այլ և երկու տող հասարակ բարովագիր գրելն անգամ մեծ դժուարութիւն է պատճառում նրանց։ Բացառութիւնները...

—Պարոն Բա...

—Ներողութիւն։ Բացառութիւնները շատ ուրախալի են այդպիսի դէպքում, բայց հէնց նրա համար, որ բացառութիւններ են, կորցնում են իրենց նշանակութիւնը։ Ընդհանրութիւնն է, որ իշխում է, ուրեմն և մեծ ցաւ պիտի պատճառէ։

Օր. Սահակեանը ծիծաղեց։

—Ախը, ո՞վ է հակառակը պնդում, պարոն Բաղէնեան, որ դուք առանց ներողութիւնների չէք շարունակում ձեր խօսքը։ Եթէ մեր միջև մի թիւրիմացութիւն կայ, այդ, կարծեմ, ոչ թէ աղջիկների մասին է, այլ—երիտասարդների։

—Գիտեմ։ Բայց ձեր կարծիքը մեր երիտասարդների մասին հերքւում է ամենից առաջ այդ նամակով։

—Ի՞նչպէս։

—Խնդրեմ նորից կարդացէք Մինասեանի մասին գրուած տողերը...

—Ա՜, հասկանում եմ ինչ էք ուզում ասել։

—Յետոյ պարոն Մարութեանի որդին, որի մասին...

—Յետոյ, երևի, դուք... յետոյ, երևի, պարոն Շահեանը,—վրայ բերեց օր. Սահակեանը և սկսեց կուշտ ծիծաղել։

կուշտ ծիծաղել։ Բայց, երևի ինքն էլ զգալով, որ չափն անցաւ, յանկարծ զսպեց ծիծաղը և ուզեց ինչ-որ ասել, սակայն Եւան թոյլ չտուեց։

—Եւայի համբերութիւնն արդէն հատել էր։ Նա խիստ անհանդիստ մի շարժում գործեց և, դժգոհութիւնից յոնքերը կիտած, առանց նայելու օր. Սահակեանին, ակամայ ձեռքով արեց նրան, կարծես հասկացնելու համար, թէ բաւական էր, վերջապէս, որ նա այդքան հեղնօրէն և կոպտութեամբ խօսեց իրենց հիւրի հետ. ապա դարձաւ Բաղէնեանին և շատ լուրջ կերպով նկատեց.

—Իմ կարծիքով, սխալւում էք, պարոն Բաղէնեան, որ ասում էք, թէ բացառութիւններն ընդհանրութեան մէջ կորցնում են իրենց նշանակութիւնը։ Ընդհակառակը, ես կարծում եմ, որ լաւ բացառութիւններն են հէնց, որ առանձին նշանակութիւն են ստանում, այլապէս ումի՞ց պիտի օրինակ առնէինք։ Երկնքի վրայ աստեր շատ կան, բայց լուսինն է միայն, որ պայծառ լուսաւորում է։

—Ներեցէք, օրիորդ. երևի չկարողացայ միտքս պարզ արտայայտել։ Եթէ ասացի, որ բացառութիւնները կորցնում են իրենց նշանակութիւնը, այդ ասացի այն մտքով, որ ընդհանուրի իշխողութեան մէջ ոչնչանում է բացառութիւնների կատարած դերը։ Դուք չնչանում է բացառութիւնների կատարած դերը։ Դուք օրինակ բերիք լուսինն աստղերի մէջ, ես էլ օրինակ կարող եմ բերել մոմի ճրագը գիշերուայ խաւարի մէջ։

—Թող հէնց մոմի, թէկուզ մեղրամոմի, ճրագը լինի,—վրայ բերեց օր. Սահակեանը.—չէ՞ որ մոմի ճրագն էլ լոյս է տարածում իր շուրջը։

Եւան դէմքը ջղային տհաճութեամբ դարձրեց օր. Սահակեանից։ «Տէր իմ Աստուած, ինչքա՞ն անտանելի արարած է եղել», մտածեց նա։

—Ինչի վրա՞յ էք վիճում,—բացականչեց Մարութեանը։—Մի հատ լաւ խնձորը տասը փտած խնձորի մէջ փտում է, տասը լաւ խնձորի մէջ մի հատ փտած խնձորը բոլորին էլ փտեցնում է։

—Հա-հա-հա-հա.—Ինչ օրինակ բերիք,—կանչեց օր. Սահակեանը ծիծաղելով և շտապով վեր կացաւ տեղից։—Եւ, դէ հիմա պաշտպանուիր հօրդ դէմ։

Եւան արագութեամբ դարձաւ դէպի հայրը։

—Այդ օրինակ չի՛ կարող լինել, հայրիկ, որ դու բերիր,—գրեթէ աղաղակեց նա զայրագին։ Օր. Սահակեանի դէմ զգացած բոլոր բարկութիւնը, կարծես, հօր վրայ էր ուզում թափել։

—Զարմանալի է. դուք լուսինն ու ճրագն օրինակ բերիք, ես էլ փտած խնձորներն եմ բերում, ինչո՞ւ չի կարելի։

—Չի կարելի, որովհետև... մենք լուրջ բանի մասին ենք խօսում, իսկ դու... կատակ ես անում։

—Կարելի է, կարելի է, պարոն Մարութեան, դուք սրան մի՛ նայէք,—ասաց օր. Սահակեանը, շարունակելով ծիծաղել, և, միևնոյն ժամանակ, աչքով արեց դէպի Եւան։—Մեր ժամանակում օրինակների մէջ խորութիւն չեն դնում,—աւելացրեց նա բազմախորհուրդ կերպով։

—Բայց չէ՛, պարոններ,—ասաց Մարութեանն այս անգամ լրջօրէն։—Աղջիկս թէև մի քիչ բարկանում է, բայց ճիշտ է նկատում. այսպիսի բաների մասին պէտք է լուրջ կերպով խօսել։ Ես այն համոզմունքն ունիմ, որ լաւն առհասարակ անպատուղ չի անցնում, ինչքան էլ որ շրջապատը վատ լինի, որովհետև մարդիկ միշտ դէպի լաւն են ձգտում։ Լաւի գաղափարը...

—Ներեցէք, պարոն Մարութեան, ես ձեզ ընդհատում եմ,—ասաց օր. Սահակեանը, տեսնելով, որ նա

տրամադիր է նորից ոգևորուել։—Այժմ ինչքան ուզում էք՝ փիլիսոփայութիւններ արէք, բայց իմ և պարոն Բաղէնեանի միջև ծագած թիւրիմացութիւնը չպարզուեց, իսկ ես գնում եմ։

—Գնում է՞ք։ Է՜, ի՞նչ էք ասում։ Նստեցէք, թէ Աստուած կըսիրէք։

—Նստեցէք, ի՞նչ էք շտապում,—իր կողմից ասաց Թեկլէն։

—Չէ, չեմ կարող, արդէն ուշ է, իսկ տանն ահագին քանակութեամբ տետրակներ ունիմ ուղղելու։ Ես, ախր, երկու բանի համար էի եկել. մէկը վերջացրի, մնաց միւսը։ Իսկ այդ միւսը—ահա, պարոն Մարութեան։

Եւ օր. Սահակեանն երեք տոմսակ դրեց Մարութեանի առաջ։

—Կարծեմ, մի տոմսակ էլ որ ձեզ տամ, չէք մերժիլ, չէ՞, պարոն Բաղէնեան։ Բարեգործական նպատակով պարահանդէս ունինք։ Պարոն Շահեանի վրայ արդէն մի տոմսակ սաղացրել եմ երեկ չէ, մէկէլ օր։

Մարութեանն ու Բաղէնեանն ընդունեցին տոմսակները, որից յետոյ օր. Սահակեանը ոտի վրայ, դարձեալ մի թեթև վիճաբանութեան բռնուելով, իրեն յատուկ համարձակութեամբ և կատակով էլի մի քանի բաներ ուտեցրեց Բաղէնեանին և, բարի գիշեր մաղթելով, դուրս գնաց հիւրասենեակից։

Նրա դուրս գնալուց յետոյ, Եւան մեծ թեթևութիւն զգաց։ Բայց յանկարծ նրան թուաց, թէ իր վերջին զայրացկոտութեամբ ինքն իրեն մատնել է մի բանի մէջ, որը չէր ուզում, որ օր. Սահակեանն իմանար. իսկ թէ ի՞նչ բանի մէջ էր մատնել իրեն—ինքն էլ չը-գիտէր... Նա արագ վերկացաւ և դուրս գնաց օր. Սահակեանի ետևից։

Օր. Սահակեանը նախասենեակում շտապով և տնքտնքալով հագնում էր վերարկուն։

—Ինչո՞ւ էիր այնպէս յարձակւում նրա վրայ,—ասաց Եւան բոլորովին հանդիստ կերպով և շտապեց օգնել նրան վերարկուն հագնելու։

—Ո՞ւմ վրայ։ Բազէնեանի՞ վրայ։ Որովհետև, սիրելիս, նա չափից դուրս մեծ բան է երևակայում իրեն, իսկ պարծենկոտներին ես չեմ սիրում։

Եւան ոչինչ չասաց։ Նա տեսաւ, որ օր. Սահակեանը ամենևին ոչինչ չի կասկածել իր դայրացկոտութեան մասին, այլապէս անկարելի էր, որ այդ մասին չխօսէր։

—Բայց զարմանալի է,—ասաց նա կարճ լռութիւնից յետոյ, երբ օր. Սահակեանը հագնում էր կըրկնակօշիկները, յատակն իր ծանր ոտների տակ դրըմբդրմբացնելով.—նրա մէջ մի գիծ կայ, որ երբեմն զարմանալի կերպով յիշեցնում էր եղբօրս...

—Հա՛, լաւ միտս բերիր. եղբօրիցդ նամակ չունի՞ք այս մօտիկ ժամանակներս։

—Անցած շաբաթ ստացանք մի նամակ, բայց շատ վաղ է գրուած, մօտաւորապէս ամիս ու կէս առաջ։ Ի՞նչ է որ։

—Աշխէնն է խնդրել, որ եղբօրդ մասին մանրամասն տեղեկութիւններ գրես իրեն։ Ներսն այդ մասին չասացի քեզ, որովհետև... հասկանում ես էլի... Շատ է զանգատւում, որ Արմենակի մասին ոչինչ չէք գրում։ Կըգրես, չէ՞։

—Կըգրեմ։

—Ուրեմն, բարի գիշեր, սիրելիս։ Աշակերտուհիներդ ի՞նչպէս են, լա՞ւ են սովորում։

—Վատ չեն. գոնէ առայժմ սիրով են կպած գործին։ Ինչո՞ւ մէկ-մէկ անգամ չես գալիս տեսնելու ինչ ենք անում, ինչ չենք անում։

—Սպասիր մէկ այս պարահանդէսի գլխացաւանքից պրծնեմ։ Աշխատիր, աշխատիր, սիրելիս, թէ չէ՝ ձեր այդ նոր բարեկամը դարձեալ մի օրինակով առիթ կունենայ պնդելու, թէ հայ աղջիկները դատարկ և չընչին արարածներ են։ Ասենք, սուտ չէր ասում... Բայց, ի սէր Աստուծոյ, շատ էլ երես մի տաք նրան։ Նրա մասին շատ գովասանքներ եմ լսել, բայց ես իմ սեպհական մեթոդն ունիմ՝—միշտ կրիտիքաբար վերաբերուել նրանց, ում մասին որ շատ են խօսում։ Ինչևիցէ։ Դարձեալ բարի գիշեր։ Զմոռանաս եղբօրդ մասին տեղեկութիւններ հաղորդել Աշխէնին. անհամբեր սպասում է, մեղք է։

Եւ օր. Սահակեանը ներքև վազեց սանդուղքներով, իսկ Եւան վերադարձաւ հիւրասենեակ։

IX

Գիշերը պարզ էր։ Երկինքը ծածկուած էր ձիւնաբեր մոխրագոյն ամպով։ Առատ ձիւնի խոշոր փաթիլները ցած էին թափւում անշարժ օդի մէջ անձայն ու հանդիստ և ծածկում էին գետինը մաքուր սպիտակով։ Ամեն մի ձայն, առանց ցրուելու, կեղրոնանում, խլանում էր փափուկ ձիւնով ծածկուած շրջապատի մէջ։ Ամպով սքօղուած լուսնի լոյսը, միախառնուելով ձիւնի միապաղաղ սպիտակութեան հետ, գիշերուայ մթութիւնը լուսաւորում էր կաթնագոյն փափուկ լուսով։

Երբ երկու ընկերները դուրս եկան Մարութեանների տնից և դուռը փակուեց նրանց ետևից, Բազէնեանը կանգ առաւ ակամայ, նայեց վերև և բացականչեց հիացած.

—Ի՜նչ հրաշալի գիշեր...

—Այո, լաւ գիշեր է,—արձագանք տուեց Շահեանը, սակայն շատ մեռած ձայնով, և ինչ-որ անհասկանալի դառն անձկութեամբ ճմլուեց նրա սիրտը։

—Ի սէր Աստուծոյ, Լևոն, սպասիր։ Մէկ այսպէս վերև նայիր. տես ինչպիսի ախորժելի սառնութեամբ ձիւնի փաթիլները նստում են երեսիդ...

Շահեանը, վերև նայելու տեղ, միայն վերարկուի օձիքը բարձրացրեց և առաջ քայլեց։

—Գրո՞ղը տանի, այս բոպէիս պատրաստ եմ տասը բանաստեղծութիւն գրելու,—բացականչեց Բազէնեանը և հետևեց ընկերոջը։—Սիրում եմ մէկ գարնանային խաղաղ լուսնկայ, մէկ էլ ձմեռային այսպիսի սպիտակ գիշերները։

Շահեանը գնում էր գլուխը մինչև ականջները ներս կոխած վերարկուի օձիքի մէջ, և նրա մարմինը մերթ ընդ մերթ սարսռում էր օդի ցրտութիւնից։ Մինչդեռ Բազէնեանը քայլում էր մորթէ գլխարկը ճակատից յետ ձգած և մուշտակի ձախ թևը միայն հագած։ Օր. Սահակեանի հեռանալուց յետոյ Մարութեաններն երկու ընկերներին պահել էին ընթրիքի, որի ժամանակ Բազէնեանի տրամադրութիւնը խիստ բացուել էր օր. Սահակեանի հետ ունեցած անախորժութիւնից յետոյ։ Այժմ նա քայլում էր ուրախ և երջանիկ, քայլում էր՝ շուտ-շուտ վերև նայելով և լեզուով որսում էր երեսին թափուող ձիւնի փաթիլները։ Փողոցում արդէն բաւական բարձրացած ձիւնը կպչում էր նրա կօշիկներին, որից նա ախորժելի խոնաւ սառնութիւն էր զգում տաքացած ոտների մէջ։

—Ո՞վ է այդ... օր. Սահակեանն է, ինչ է,—հարցրեց նա իր կողքին մռայլ լռութեամբ քայլող Շահեանին։

—Վարժուհի է,—պատասխանեց Շահեանը և կարճ լռութիւնից յետոյ, հարցրեց.—Ի՞նչ է որ։

—Ինչ-որ յոպոպներ ունի։

Եւ Բազէնեանն սկսեց ինչ-որ օպերայից մի կտոր շվշվացնել։

Շահեանն անձայն քմծիծաղ տուեց և ոչինչ չասաց։

—Զգիտեմ, նկատե՞լ ես, Լևոն. տգեղ աղջիկները միշտ աւելի համարձակ են լինում։

—Ո՞ւմ համար ես ասում այդ։

—Այդ յոպոպաւոր օրիորդի համար։ Անունն էլ «օրիորդ» է դրել... Երևի, առնուազն քառասուն տարեկան կըլինի։ Մի քանի անգամ քիչ մնաց «տիկին» անուանէի։ Մեր ամբողջ վիճաբանութեան ժամանակ ես միայն մի եզրակացութեան եկայ.—նա, երևի, շատ է ուզեցել ամուսնանալ, բայց ոչոք, գեղեցկական լեզուով ասենք, ըռնին մտիկ չի տուել։ Եւ ահա խեղճին ուրիշ բան չի մնացել, բացի միայն քացախելուց իր օրիորդութեան մէջ և ատամները սրելուց մեր երիտասարդութեան դէմ։ Հը՞, դո՞ւ ինչ ես կարծում, Լևոն։

—Ես կարծում եմ, որ դու... միայն քո ոխն ես ուզում հանել նրանից։

—Ի՞նչ... Ո՞խը... Հա, հա, հա, հա... Այ թէ հիանալի հոգեբան ես եղել և լաւ ես ճանաչում ինձ... Ես ոխ հանեմ մի պառաւ օրիորդից իր անատամ յարձակումների համար և այն էլ նրա բացակայութեան ժամանակ... Չէ, Լևոն, այդ չեղաւ. ուրիշ բան ասա, թէ չէ՝ կըպայթեմ ծիծաղելուց։

Բազէնեանը ծիծաղում էր այնքան սրտանց և անկեղծ, որ Շահեանին թուաց, թէ իր ասածը պէտք է որ իսկապէս յիմարութիւն լինէր։

—Ասա խնդրեմ, ուրիշ ինչպէս բացատրեմ քո

այդ նաղելի օրիորդի այն տխմար ծայրայեղութիւնը, որ ուրանում էր մինչև անգամ շարժումների նշանակութիւնը, այն շանժումների, որոնք բացառապէս մեր երիտասարդների գործն են։ Նկատիր, սիրելիդ իմ Լևոն, որ նա հայ աղջիկներին էլ չէր պաշտպանում իմ կարծիքի դէմ, որովհետև միւս աղջիկները, գոնէ իրեն շրջապատողները, ինչպէս, օրինակ, Մարութեանի աղջիկը, ջահել և գեղեցիկ են իրենից։ Բայց ինչ եմ ասում. ես ուղղակի սրբապղծութիւն եմ գործում, որ Մարութեանի աղջկան համեմատում եմ նրա հետ։

—Հապա ինչո՞ւ այնպէս եռանդով գովաբանում էր Աշխէնին։

—Նրան, որի նամակը կարդում էր։

—Հէնց նրան։

—Երևի նա էլ իր պէս պառաւ և ագեղ է։

—Ընդհակառակը, նա շատ ջահել է և բաւական էլ գեղեցիկ։

—Կամ գովաբանում էր նրա համար, որ իր մտերիմն է։ Բայց այդ նշանակութիւն չունի։ Նա համաձայն էր ինձ հետ, որ հայ աղջիկներն ընդհանրապէս դատարկ և չնչին արարածներ են։ Իսկ այն գիւղ գնացած աղջիկն էլ իր ճրճռան նամակով, ճիշտը քեզ ասեմ, ուրիշ տեսակ տպաւորութիւն թողեց ինձ վրայ։

—Ի՞նչ տպաւորութիւն։

—Զգիտեմ, ճշմարիտ, ինչպէս ասեմ, որ կարողանամ ճիշտ արտայայտել... Նա, երևի, բանաստեղծութիւններ էլ է գրում թաքուն... Խօսք չունիմ. գրիչը լաւ, մինչև անգամ շատ լաւ է շարժում, եթէ միայն, իհարկէ, չի արտագրում որևէ գրքից. բայց—գոր՞ծ, գոր՞ծ։ Ճրճռան ֆրազներով խելքահան կարելի է անել միայն Մարութեանի պէս միամիտներին, իսկ ինձ հարկաւոր է, որ տեսնեմ, թէ ինչ է շինել նա, կամ

ինչ է շինում... Բայց մի ուրիշ բան եմ ուզում ասել քեզ, Լևոն։ Այդ ինչ հրաշալի աղջիկ է եղել Մարութեանի աղջիկը...

Շահեանն ինքն էլ չնկատեց, թէ ինչպէս մի քանի քայլ առաջ ընկաւ ընկերոջից։

Բաղէնեանը հասաւ նրան և առաւ նրա թևը իր միակ առողջ, ձախ ձեռքով։

—Զարմանալի է, Լևոն,—շարունակեց նա մտերմաբար,—հայ աղջիկներն առհասարակ շատ անճոռնի արտաքին են ունենում. մէջքները ծռած, գլուխներն առաջ ձգած,—կարծես վզակոթներին տուել են,—դիմագծերն անկանոն, կոպիտ ու բութ, շարժումները տգեղ ու ստրկական, իսկ հագուստներն այնքան անճոռնի ու անճաշակ, որ չես ուզում նայել։ Բայց Մարութեանի աղջիկը... Ես մինչև այժմ էլ ապշած եմ մնացել և հարցնում եմ ինքս ինձ՝ մի՞թէ դա հայ ընտանիքի ծնունդ է։ Այդպիսի աղջիկներ ես տեսել եմ միայն Եւրոպայում։ Հայ աղջիկ և այդպիսի՞ գեղեցկութիւն, այդքան դրացիա... Իսկ դատողութիւնը, անբռնազբօսիկ վարուեցողութիւնը, հիւրին զբաղեցնելու ընդունակութիւնը, այսինքն այն բաները, որոնք ամենից աւելի պակասում են հայ աղջիկներին...

Եւ Բաղէնեանը որքան շատ էր խօսում Եւայի մասին, այնքան աւելի Շահեանը զգում էր, որ երկիւղի և ատելութեան նման մի բան էր շարժւում իր սրտի մէջ դէպի ընկերը։ Մի տարօրինակ եսական զգացում թելադրում էր նրան, թէ Բաղէնեանն իրաւունք չունի խօսելու Եւայի մասին այդպիսի հիացմունքով։ Եւ նա կարէվեր ջանք էր գործ դնում, որ դպի այդ զգացումը, անտարբեր ձևանայ և մի բան ասի իրեն չմատնելու համար, բայց չէր կարողանում։

—Այսքան ժամանակ ծանօթ ես այդ ընտանիքի

հետ և ինչպէս է եղել, որ չես սիրահարուել այդ հրաշալի աղջկայ վրայ,—նկատեց Բաղէնեանը և ծիծաղեց։
—Քո տեղ որ ես լինէի, Ատուած է վկայ, Լևոն, անպատճառ կըսիրահարուէի։

Շահեանը քիչ մնաց, որ յետ դառնար և ապտակ տար նրա երեսին—այն աստիճան լիրը և յանդուգն թուաց նրան Բաղէնեանի մեղմ, խորհրդաւոր ծիծաղը։ Նա միայն այնքան քաջութիւն ունեցաւ, որ թեը խլեց ընկերոջ ձեռքից։ Հէնց սկզբից անդիմադրելի մի նողկանք էր զգում Բաղէնեանի ձեռքի շօշափումից։

—Ցիմարութիւններ որ դուրս չտաս, աւելի լաւ կըլինի,—ասաց և քայլերն արագացրեց։ Այդպիսի բառերով դեռ երբէք չէր խօսել Բաղէնեանի հետ։

Բաղէնեանը շարունակեց ծիծաղել։

—Լևոն, դու մատնեցիր քեզ,—բացականչեց նա։

Շահեանը զգաց, որ յանկարծ զգացած բարկութիւնից արդէն խիստ ջղային է դառնում, բայց զսպեց իրեն և ոչինչ չասաց։

—Լաւ, էլ ինչ ես վազում,—կանչեց Բաղէնեանը։
—Այս ձիւնի մէջ դեռ մի լաւ էլ կըդրմփաս։

Շահեանը նոր նկատեց, որ բաւական առաջ է ընկել և իրաւ որ կամայ-ակամայ մատնում է իրեն։ Նա կանգ առաւ, մինչև որ ընկերը հաւասարուեց իրեն։

—Այսօր ինչ-որ ուրիշ տեսակ ես երևում, Լևոն,—նկատեց Բաղէնեանն այս անգամ լրջօրէն։—Մարութեանների տանն էլ ամբողջ ժամանակ նստած էիր այնպէս լուռ ու մռայլ, որ կարծես աշխարհիս բոլոր դարդերը քեզ են տուել։

Շահեանը մեքենայաբար թափ տուեց վերարկուի կրծքին և փեշին սպիտակ շերտով նստած ձիւնը։

—Խօ դեռ տանն ասացի քեզ, որ տրամադրութիւնս այսօր վատ է,—ասաց նա հանգիստ եղանակով։

—Այս անտէր մելամաղձութիւնից չկարողացայ ազատուել։

—Այդ նրանից է, որ ճգնաւորի կեանք ես վարում,—նկատեց Բաղէնեանը, նորից մտերմօրէն առնելով նրա թեը և նրա հետ առաջ քայլելով։—Իմացիր, որ ընութեանը հակառակ գնալը, մանաւանդ երիտասարդական կեանքում, առաքինութիւն չէ և վտանգաւոր բան է... Ես կատակ չեմ անում, Լևոն։ Ուզում ես բժշկեմ քեզ։

—Ի՞նչպէս,—դեռ ևս լաւ չհասկանալով նրա միտքը, հարցրեց Շահեանը։

—Այնպէս, որ ցոյց կըտամ քեզ, թէ ինչն է երիտասարդական մելամաղձութեան իսկական դեղը։ Թող այդ բանում քո մենտորը լինիմ, և դու շատ շնորհակալ կըլինիս ինձնից։ Ուզում ես հէնց այս գիշեր սկսենք, հէնց այս րոպէիս...

Այլևս հարկաւոր չէր, որ Բաղէնեանն աւելի պարզ խօսէր։ Շահեանը հասկացաւ նրա միտքը և խիստ վախեցաւ։ Վախեցաւ և, միևնոյն ժամանակ, զգաց, որ Բաղէնեանը հասկացաւ իր վախը։

—Ոչ, այդպիսի բան երբէք չեմ արել, հիմա էլ չեմ անիլ,—ասաց նա կամաց և ամաչեց իր խօսքերից։

—Այդպիսի դէպքում խորհուրդ կըտամ, որ շուտ ամուսնանաս։ Միակ փրկութիւնն այդ է, ուրիշ ելք չկայ։ Հաւատացնում եմ, Լևոն, ես շատ լուրջ կերպով եմ խօսում։ Քո տեղ որ ես լինիմ, ուղղակի կըխնդրեմ Մարութեանի աղջկայ ձեռքը։ Նա հրաշալի բան է, ախր...

Այս անգամ Շահեանը վերին աստիճանի զզուանք զգաց դէպի ընկերը։ Այն հայեացքը, որով Բաղէնեանը նայում էր Եւայի հետ ամուսնանալու վրայ, սրբանայում էր

պղծութեան պէս մի բան թուաց նրան։ Ճիշտ է, որքան նա իրեն հեռու էր պահում կանանցից, այնքան աւելի ցանկութեամբ և շատ անգամ ուղղակի զուտ անասնական կրքով էր նայում նրանց վրայ. բայց Եւայի վրայ միշտ նայել և մտածել էր իբրև սրբութեան վրայ, որին պիտի սիրել և պաշտել միայն ամենամաքուր զգացումներով։ Նա մէկ ուղեց, որ իր այդ զգացումը յայտնի ընկերոջը, բայց Բազէնեանն արդէն այն աստիճան ատելի էր նրան և այնքան ուզում էր, որ ընկերն այլ ևս չխօսի Եւայի մասին, որ աւելի լաւ համարեց բոլորովին լռել, քան թէ այդ մասին խօսելով նոր նիւթ տալ Բազէնեանին իրեն գրգռելու։

Բայց և այնպէս, երբ նա, հաղիւ հաղ ազատուելով Բազէնեանի ձեռքից, տուն գնաց, չկարողացաւ հանգիստ քնել։ Բազէնեանի խօսքերը սաստիկ շփոթել, սաստիկ տանջում էին նրան...

X

Պարահանդէսի գիշերը, ժամը տասին մօտ, Շահեանը, սիւրտուկը վերևից մինչև ներքև կոճկած, դէմքին կեղծ-անտարբեր արտայայտութիւն տուած, բարձրանում էր ժողովարանի սանդուղքներով։ Ահագին հայելու մէջ տեսաւ իր պատկերը, ուզեց կանգ առնել, բայց ամաչեց, թէ մի գուցէ տեսնող լինի, որ նայում է հայելու մէջ, և շարունակեց բարձրանալ։

Արդէն բաւական թուով հասարակութիւն էր հաւաքուած, և դեռ գալիս էին։ Տղամարդկանց թիւն աւելի էր երևում, քան կանանց։ Բուն Թիֆլիսը բացակայ էր, ինչպէս լինում է հայկական ամեն մի հանդէսի ժամանակ։ Ներկայ էր գաւառը։ Մեծ մասով աչքի էին ընկնում զարաբաղցիք և զոկեր—առաջիններն իրենց խոշոր արտաքինով և ծիծեռնակի թևերի պէս ահագին բեխերով, վերջիններն իրենց պստիկ, նիհար մարմնով և ճմշկած դէմքերով։ Շքեղօրէն լուսաւորուած դահլիճի խորքում, այս ու այնտեղ, կէնտ ու կունտ մարդիկ էին երևում։ Մեծ մասը հաւաքուած էր դուրսը, սրահում։ Դահլիճի դռան մօտ, սեղանի առաջ, նստած էր օր. Սահակեանը իրկու կանանց հետ և տոմսակ էր վաճառում։ Շահեանը մօտեցաւ նրան, ուզեց բարևել, բայց օր. Սահակեանն այնքան զբաղուած էր, որ չնկատեց նրան։ Նա անցաւ։ Սեան տակ տեսաւ Մարութեանին, որ հաստատոր մի պարոնի հետ դէմ առ դէմ կանգնած՝ խօսում էր ձեռքերի և յոնքերի արտայայտիչ շարժումներով։ Մարութեանը նոյնպէս չընկատեց նրան։ Շահեանը մի շրջան արեց սրահում, մտաւ դահլիճ, նայեց բազմաթիւ մոմերով հուրհրատին տուող ջահերին, դուրս եկաւ այնտեղից, քաշուեց մի անկիւն, սկսեց նայել առջևը խռնուող բազմութեանը, և արդէն տաղտկալի թուաց նրան այդ ժողովը։

Արդէն մտածում էր, որ տուն գնայ, երբ յանկարծ նրա աչքովն ընկան Մարութեանի կինն ու աղջիկը, որոնք առաջանում էին դէպի նա։ Մի բան, որ հէնց սկզբից զարմացրեց Շահեանին, այդ՝ Եւայի շատ պարզ, ոչ-պարահանդէսի հագուստն էր, որ գրեթէ անընկատելի էր դարձնում նրան աչք ծակելու չափ պլճնուած-զարդարուած շրջապատող տիկինների և օրիորդների մէջ։ Կարծես հէնց այդ էր պատճառը, որ Եւան այդտեղ այնքան գեղեցիկ ու գրաւիչ չերևաց Շահեանին, ինչպէս տանը։ Հասակով նա, կարծես, փոքրացել էլ էր։ Բայց և այնպէս, նրան տեսնելուն պէս Շահեանի սիրտը թրթռաց վերին աստիճանի քաղցր ու քնքոյշ մի զգացումով։ Այդ զգացումը նոր չէր Շահեանի համար. Եւայի հանդիպումը միշտ միևնոյն զգա-

ցումն էր յարուցել նրա մէջ։ Սակայն այս անգամ այդ զգացումը մի առանձին ոյժ ունէր, անդիմադրելի մի ոյժ, որ քաղցրութեան հետ միասին ինչ-որ անորակելի մի դառնութիւն պատճառեց նրան։ Նա լուռ բարևեց Թեկլէին ու Եւային և զգաց, որ այժմ դէպի նրանց ունեցած իր բարեկամութիւնն այնպէս ազատ ու ինքնաբուղխ չէ, ինչպէս առաջ, երբ նոր էր ծանօթացել նրանց հետ։

—Դուք մենա՞կ էք եկել,—հարցրեց Թեկլէն։

—Այո։

—Հապա պարոն Բաղէնեա՞նը։ Չի՞ գալու։

Շահեանն առաջուց արդէն զգում էր, որ առաջին խօսքը Բաղէնեանի մասին պիտի լինի, և յանկարծ մի տարօրինակ սառնութիւն տիրեց նրան։

—Չգիտեմ,—պատասխանեց նա չոր-չոր։

—Ի՞նչպէս է այժմ նրա ձեռքը։ Յոյս ունիմ, շատ լաւ է։

—Չգիտեմ, չեմ տեսել նրան։

—Մի՞թէ կարելի է, նրա ընկերն էք և չէք հետաքրքրւում նրա առողջութեամբ... Ա՜խ, որ իմանաք, պարոն Շահեան, որքա՞ն երախտապարտ ենք նրան... Ուղղակի որդուս պէս սիրեցի։ Ինչքա՞ն բարի, ինչքա՞ն ազնիւ երիտասարդ է։

Շահեանը թոյլ կերպով ժպտաց, բայց իսկոյն կարծես մի սուր ցաւից, կծեց ներքին շրթունքը և նայեց Եւային։

—Ասացէք, պարոն Շահեան, վաղուց է, որ բարեկամ էք նրա հետ,—հարցրեց Եւան, նայելով նրան իր խոշոր աչքերով տարօրինակ լրջութեամբ։

—Վաղուց է։

—Չէ՞ք կարող ասել, ինչ գործի է նա իսկապէս։

—Ո՛չ մի գործի,—դուրս թռաւ Շահեանի բերանից, և նա թէ վախեցաւ և թէ զարմացաւ այն առանձին շեշտի վրայ, որ տուեց այդ բառերին։

—Բայց անցած դիշեր, մեր տանը, նա պատմում էր...—նկատեց Եւան անմեղ տարակուսանքով։—Ես այդ գործի մասին եմ հարցնում։

—Հա՛,—երկարացրեց Շահեանը երկդիմի ու խորհրդաւոր եղանակով և լռեց։

Եւան նայեց նրան աւելի մեծ տարակուսանքով։

—Ներեցէք հետաքրքրութիւնս,—արտասանեց նա իր մեղաւորութիւնը զգացող մարդու ամօթխած անվստահութեամբ։—Գուցէ նրա գործերը գաղտնի՞ք են, որոնք...

—Այո, նա այդպէս է ասել, ասաց Շահեանը մեքենայաբար և իսկոյն էլ զղջաց, որ այդպէս պատասխանեց, որովհետև զգաց, որ այդ պատասխանով, հակառակ իր ցանկութեան, աւելի ևս ոյժ տուեց Բաղէնեանի անձի այն խորհրդաւորութեանը, որով, ինչպէս երևում էր, առանձնապէս հետաքրքրւում էր Եւան։

Եւան այլ ևս ոչինչ չհարցրեց։ Նրանք երեքով սկսեցին անցուդարձ անել սրահում։ Թեկլէն ինչ-որ բան էր պատմում Շահեանին, բայց Շահեանը չէր լսում. նրա ուշադրութիւնն Եւայի կողմն էր, թէև արտաքուստ ցոյց էր տալիս, թէ անտարբեր է դէպի նա։ Եւան ամենևին չէր խօսում։ Վերջին ժամանակները զարմանալի փոփոխութիւն էր կատարուել նրա մէջ. զարմանալի փոփոխութիւնը մոռացել էր. թէ շարժումառաջուայ շատախօսութիւնը մոռացել էր. թէ շարժումների և թէ խօսակցութեան մէջ զսպած էր պահում իրեն. դէմքի ծիծաղկոտութիւնը չքացել էր. այդ դէմքի և մանաւանդ աչքերի մէջ երևացող առաջուայ չարաճճի աշխոյժի տեղ այժմ պարզ նկատւում էր մտքի մի առանձին լարու�և ինչ-որ անհանգիստ մի տխրութիւն։

Մարութեանը թողեց հաստափոր պարոնին, որի հետ խօսում էր սիւնի տակ, և մօտեցաւ նրանց։ Շահեանին նա էլ խնդրեց հարցրեց, թէ մենաւոր է եկել, որտեղ է Բաղէնեանը։ «Ի՞նչ դառաւ այդ Բաղէնեանը սըրանց համար»—մտածեց Շահեանը նեղսիրտ վիրաւորանքով, տեսնելով, որ այդ ընտանիքի բոլոր ուշքն ու միտքը Բաղէնեանով է զբաղուած։ Նա զգում էր, որ եթէ այդ բոպէին Բաղէնեանը լինէր իր տեղ և ինքը լինէր չեկողը, նրան, Բաղէնեանին, այդպիսի հարցումներ չէին տալ իր մասին, թերևս ամենևին չյիշէին էլ թէ աշխարհիս երեսին գոյութիւն ունի Շահեան անունով մի երիտասարդ։

—Ահա պարոն Բաղէնեանը,—յանկարծ բացականչեց Եւան, և նրա փոքր ինչ անհանգստութիւն արտայայտող դէմքի վրայ մի ուրախ ժպիտ փայլեց։

Շահեանը գունատուեց։

Սրահի մէջ խոնուող հասարակութեան միջից, ոտները զգուշօրէն յատակին քսմսելով՝ որպէսզի կոխ չտայ կանանց շրջազգեստի փեշերը, ձեռքը դեռ ևս սև շորի մէջ կախ արած՝ առաջ եկաւ Բաղէնեանը իր չափազանց դեղեցիկ կրակոտ աչքերով։ Ժպիտը դէմքին, ազատ քաղաքավարութեամբ բարևեց ամենքին, առանց մէկին կամ միւսին նախապատուութիւն տալու։

—Այս ինչ է,—ասաց նա ուրախ.—ես կարծում էի, թէ ուշացել եմ, բայց, ինչպէս երևում է, պարերը դեռ չեն էլ սկսուել։

—Ի՞նչ է, ուզում էք պարե՞լ,—հարցրեց Մարութեանը։

—Այո, եթէ միայն կարելի է մի ձեռքով պարել։

—Մի՞թէ ձեռքերով են պարում. ես կարծում էի ոտներով,—բացականչեց Մարութեանը և, շատ սրամիտ համարելով իր այդ կատակը,—բարձրաձայն ծիծաղեց։

—Ի դէպ. ինչպէս է այժմ ձեր ձեռքը, պարոն Բաղէնեան,—հարցրեց Թեկլէն։

—Փառք Աստուծոյ, տիկին, լաւանում է կամաց-կամաց։

—Է՛հ, ինչ կասի, որ չի լաւանալ,—նկատեց Մարութեանը։—Մեր օրիորդն էլ դժբաղդութիւն ունի այս գիշեր չպարելու։

Բաղէնեանը հետաքրքրուած նայեց Եւային։

—Ինչո՞ւ։

Եւան թեթեւակի շփոթուեց նրա թափանցող հայեացքից։

—Սրտի թրթռոց է ստացել,—պատասխանեց Թեկլէն։

—Երևի ամն օրուանից։

—Այո, այն չարաբաստիկ դէպքից յետոյ, որից ամենից շատ տուժողը դուք եղաք,—ասաց Մարութեանը։—Եւ օրիորդիս դժբաղդութիւնը դուք լիովին կըհասկանաք, երբ ձեզ ասեմ, որ չափազանց շատ է սիրում պարել։

—Ուրեմն կարող եմ երևակայել, թէ որքան տըխուր պիտի անցնի այս հանդէսը ձեզ համար, օրիորդ,—դիմեց Բաղէնեանը Եւային կէս-կատակով, կէս-լրջութեամբ։

—Եւան նայեց նրան, յետոյ հօրը և կամաց ծիծաղեց։

—Դու միշտ չափազանցնում ես, հայրիկ։ Ճշմարիտ է, պարոն Բաղէնեան, պարելիս ես բաւական հաճոյք եմ զգում, բայց ոչ չափազանց, ինչպէս հայրս է ասում։

—Այ, հիմա կուրանայ,—նկատեց Մարութեանը։

—Հայրիկ, շատ որ պնդես, կը պարեմ։

Մարութեանը վեր թռաւ կոմիքական անհանգըստութեամբ։

—Օ՛յ, չլինեմ-չլիմանամ... Բժիշկը մինչև անգամ արգելել է, որ արագ ման չգայ, իսկ սա ասում է՝ պարեմ։ Ո՛չ, սիրելիս, պարն առայժմ պաս է քեզ համար,—աւելացրեց Մարութեանը և, կամաց առնելով աղջկայ ձեռքը, սկսեց շփել հայրական քնքշանքով։

Երաժշտութիւնը նուագեց։ Սրահն արագօրէն դատարկուեց։ Ամենքը հաւաքուեցին դահլիճում, ուր արդէն սկսուել էին պարերը։

Մարութեանները Բաղէնեանի և Շահեանի հետ մտել էին այնտեղ և, դռան մօտ կանգնած, նայում էին նոր սկսուած պարերին, որոնք դեռ ևս շատ սակաւամարդ էին։ Վիզն երկարացրած, պարզ ակնոցների միջից Շահեանը մի քանի գլուխների արանքով մեքենայաբար նայում էր պարողներին, բայց նրա բոլոր ուշադրութիւնը լարուած էր դէպի Եւան ու Բաղէնեանը, որոնք կանգնած էին նրա մօտ, մի քիչ յետև, և երաժշտութեան աղմկալի ձայների միջից հազիւ կարողանում էր լսել նրանց խօսակցութիւնը։ Անցաւ մի քանի րոպէ, և նա այլևս չլսեց Եւայի ու Բաղէնեանի ձայնը։ Յետ նայեց, տեսաւ, որ նրանք չկան։ Տեսաւ միայն Մարութեանին ու նրա կնոջը, որոնք, պատի տակ քաշուած, խօսում էին ինչ-որ մի պարոնի և մի տիկնոջ հետ։

Շահեանը դուրս գնաց դահլիճից։ Սրահում նրա աչքին ընկան Եւան ու Բաղէնեանը բազմոցի վրայ նստած իրար հետ զրոյց անելիս։ Շահեանը ցոյց տուեց, թէ չտեսաւ նրանց և անցաւ օր. Սահակեանի կողմը, որ այս անգամ նստած էր մենակ և մատիտով ինչ որ թուանշաններ էր գրում թղթի վրայ։

—Բարև ձեզ, օրիորդ,—արտասանեց նա սովորականից աւելի բարձր ձայնով։

Օր. Սահակեանն արագ բարձրացրեց գլուխը։

—Ա՛խ, բարև ձեզ, պարոն Շահեան։ Ի սէր Աստուծոյ, մի նեղութիւն տամ ձեզ, յանձն առէք։

—Հրամայեցէք։

—Տեսնում էք այս թուերը. խնդրում եմ գումարեցէք և տեսէք՝ իմ դուրս բերած այս վերջին գումարի հետ ճիշտ է թէ ոչ։ Գլուխս այնքան խառնուել է, որ մի քանի անգամ գումարեցի և ամեն անգամ տարբեր գումարներ ստացայ։ Համեցէք, խնդրեմ, նստեցէք։

Շահեանը նստեց սեղանի մօտ և, աշխատելով բոլոր ուշադրութիւնը կեդրոնացնել թուերի վրայ, սկսեց գումարել։ Գումարը ճիշտ դուրս չեկաւ օր. Սահակեանի ստացած վերջին գումարի հետ։ Կրկին գումարեց, և այս անգամ ուրիշ գումար ստացուեց։ Խնդիրը լուծել չկարողացող աշակերտի պէս, քրտինքը վրայ տուեց նրան։ Որքան բանի կերպով աշխատում էր ուշքն ու միտքը կեդրոնացնել թուանշանների վրայ, այնքան շփոթուում էր և թղթի վրայ, թուանշանների տեղ, տեսնում էր Եւային ու Բաղէնեանին՝ կողք կողքի նստած, իրար հետ քաղցր զրոյց անելիս, ինչպէս ահա այս 53 թիւը, որի 5-ը և 3-ը կտուց կտուցի տուած՝ կարծես քշփշում են իրար հետ։ «Ի՞նչ են խօսում արդեօք»—մտածում էր նա և միևնոյն ժամանակ նրա շրթունքները կրկնում էին մեքենայաբար՝ «53 և 6...»։

—Զվերջացրիք,—հարցրեց օր. Սահակեանը, գլուխը բարձրացնելով իր գործի վրայից։

—Չէ, դուրս չի գալիս. թուանշանները շատ են, համարիչով հեշտ կըլինի... Յետոյ, այստեղ այնպիսի աղմուկ է տիրում, որ...

—Ինչևիցէ. թողէք, սա վաղուան գործ է։

Շահեանը հանեց թաշկինակը և սկսեց սրբել ճակատի քրտինքը։

—Ինչպէս երևում է, եկամուտը լաւ պէտք է լինի,—ասաց նա։

—Վատ չէ։ Բայց այնպէս յոգնած եմ... Երևակայեցէք, առաւօտից մինչև այժմ ամենևին հանգստութիւն չեմ ունեցել։ Էգուց էլ ժամը ութին դասի պէտք է գնամ։ Ամեն բան իմ վրին են դցել ու հեռացել։ Այնպէս զայրանում եմ...

—Միշտ այդպէս է լինում, օրիորդ, երբ ընկերներից մէկը եռանդով է կպչում գործին, միւսները ամեն բան նրա վրայ են թողնում,—նկատեց Շահեանը չլռելու համար, բայց ինքը խիստ հաւանեց իր այդ նկատողութիւնը։

—Դրա համար էլ գործին եռանդով կպչողները շատ շուտ են սառում,—վրայ բերեց օր. Սահակեանը։

—Հիմա Աստուած ոյժ տայ մեր պարողների ոտներին, մինչև լուսադէմ պէտք է մաշեն յատակը։ Դուք չէք պարում։

Շահեանը ժպտաց։

—Ես պարել չգիտեմ։

—Մի՞թէ։ Զարմանալի է։

Թև թևի տուած, բարձրաձայն խօսելով ու ծիծաղելով, մօտեցան օր. Սահակեանին ծանօթ երկու օրիորդ։ Օր. Սահակեանը զբաղուեց նրանցով, իսկ Շահեանն անմիջապէս վեր կացաւ և հեռացաւ։ Եւան ու Բաղէնեանը նստած էին առաջուայ տեղը։ Շահեանը դարձեալ ցոյց տուեց, թէ չտեսաւ նրանց և, շեղակի անցնելով, մտաւ սեղանատուն։

Եւան թեթևակի նայեց Շահեանի ետևից և դարձաւ Բաղէնեանին ժպտալով.

—Գիտէ՞ք ինչ կայ, պարոն Բաղէնեան։ Փոքր ինչ առաջ, երբ դուք դեռ չէիք եկել, ես այնքան անզգոյշ եղայ, որ ուզեցի իմանալ Շահեանից, թէ դուք ինչ գործի էք։ Երևակայեցէք, նա ինձ այնպիսի չոր պատասխան տուեց, որ սաստիկ զղջացի անզգոյշ հետաքրքրութեանս համար։ Ինձ թւում է, թէ Շահեանն իրաւունք ունէր ինձ ոչինչ չասելու, որովհետև...—Եւան, գլուխը թեթևակի յետ ու առաջ տանելով, մեքենայաբար սկսեց ուղղել շրջազգեստը ծնկների վրայ,—որովհետև լաւ չէ առհասարակ, որ մարդ անտեղի հետաքրքրւում է ուրիշի գործերով... Այնպէս չէ՞,—հարցրեց նա և յանկարծ նայեց Բաղէնեանին համարձակ, մտերմական ժպիտով։

—Չէ, ինչո՞ւ։ Վատ բան ես այդտեղ ոչինչ չեմ գտնում։ Ընդհակառակը, շատ լաւ է, նոյն իսկ անպատճառ հարկաւոր է, որ մարդ իմանայ, թէ ում հետ գործ ունի։

Եւան բաւական կոտրուեց Բաղէնեանի այդ լուրջ պատասխանից։

—Այդ, ի հարկէ, այդպէս է. բայց... ձեր վերաբերմամբ...

—Հա, իմ վերաբերմամբ,—երկարացրեց Բաղէնեանը։

Նրա ձայնը խիստ խորհրդաւոր կերպով հնչեց Եւայի ականջին։ Եւան տեսաւ, թէ ինչպէս իր հետ մինչև այդ ժամանակ ուրախ ու մտերմաբար խօսող

այդ երիտասարդը յանկարծ սառեց, թէ ինչպէս մինչև այդ բոլէ նրա շարունակ ժպտող, անհոգ հայեացքը վերին աստիճանի խորհրդաւոր, նոյն իսկ խիստ արտայայտութիւն ստացաւ։ Եւ այդ առաջին անգամն էր, որ Եւան իրեն ճնշուած զրուցեան մէջ զգաց Բազէնեանի առաջ. իսկ վերջն այդ զրուցիւնը երկիւղի նման մի տեսակ զգացման փոխուեց, երբ տեսաւ, որ Բազէնեանը երկար ժամանակ, ինքն իր մէջ կեդրոնացած, լռութիւն է պահպանում, մեքենայաբար ուղղելով ձեռքի փաթաթանը։

—Ես կարծում եմ, օրիորդ,—վերջապէս շատ լուրջ ձայնով և հատընդհատ խօսեց Բազէնեանը, առանց նայելու Եւային և շարունակելով ուղղել ձեռքի փաթաթանը.—ես կարծում եմ, որ դուք պիտի ներէք ինձ, եթէ ասեմ, որ Շահեանն իրաւունք ունէր կամ, աւելի ճիշտը, պարտաւոր էր գաղտնի պահելու իմ պաշտօնն։ Ինչպէս ամենքից առհասարակ, նոյնպէս և ձեզնից, որովհետև... կան բաներ, որոնք խիստ գաղտնի պիտի պահուեն և եթէ ասւում են մէկին, կընշանակի ամենքին են ասւում։ Իմ պաշտօնի գաղտնիքն ես միայն Շահեանին եմ յայտնել, իբրև շատ մտերիմ և շատ հաւատարիմ ընկերոջս, և վստահ եմ եղել, որ նա այդ գաղտնիքն ուրիշներին պատմելու անխոհեմութիւնը չի ունենալ։

—Տեսնում էք, ես էլ հէնց այդ էի ուզում ասել այսինքն... որ ձեր պաշտօնը... լաւ չէ, որ ամեն մարդ իմանայ։

—Ո՛չ, ամեն մարդ, օրիորդ, բայց ոչ ամեն մարդ։

—Եւան մտառութեամբ նայեց Բազէնեանի աչքերին։ Ինչպէս միշտ, երբ աշխատում էր ըմբռնել լաւ մութ խօսքերի իմաստը, այս անգամ էլ նրա աչքերը մեծացել, կեդրոնացել և խիստ գեղեցկացել էին։

—Ներողութիւն, չկարողացայ հասկանալ, թէ ինչ էք ուզում ասել։

—Ես ուզում եմ ասել, օրիորդ, որ մեր գործերը լաւ կըլինի, որ ամեն մարդ իմանայ, եթէ միայն իմացողը մարդ է իսկապէս, ազնիւ, գործի սիրով վառուող մարդ։ Բայց որովհետև աշխարհս լիքն է վատ, մութ մարդկանցով, որոնք անկաշառ գործչին մօտենում են Յուդայի համբոյրով, ուստի մեր գաղտնիքը պէտք է իմանայ ոչ ամեն մարդ։ Մենք առհասարակ խիստ զգոյշ ենք, որովհետև գործն ինքը չափազանց մեծ զգուշութիւն է պահանջում...

—Հասկացայ... Այժմ հասկացայ։ Հա, ի հարկէ, դուք իրաւացի էք։ Բայց ես կարծում եմ, որ դուք միևնոյն հայեացքով չպէտք է նայէք ամենքի վրայ։

—Ես պարտաւոր եմ, օրիորդ, թերահաւատութեամբ նայելու ամենքին, որովհետև, կրկնում եմ, գործն ինքն է պահանջում այդ. այլապէս՝ մի՞թէ չէք հասկանում, որ ես վաղուց արդէն հրաժեշտ պիտի լինէի տուած աղատութեանս և գործին էլ մեծապէս վնասած...

—Եւան անմեղ յանդիմանութեամբ նայեց Բազէնեանի աչքերին։

—Մի՞թէ կարծում էք, որ ինձ վրայ էլ պէտք է կասկածանքով նայել...

Բազէնեանն իր հերթին նայեց Եւայի աչքերին և ակամայ այնպիսի մի շարժում գործեց, որ կարծես թէ ուզում էր բուռն ձգտումով առնել նրա ձեռքերը և ամուր-ամուր սեղմել։ Բայց նա զսպեց իրեն և նորից սկսեց ուղղել ձեռքի փաթաթանը։

—Քանի որ իմ խօսքերը ձեզ վրայ ընդունեցիք, օրիորդ,—խօսեց նա մտախոհ հանգստութեամբ,—ես արդէն ստիպուած եմ համոզել ձեզ, որ դուք չարաչար

սխալւում էք, կարծելով թէ ձեզ վրայ էլ կասկածանքով եմ նայում։ Պէտք է ասեմ ձեզ, որ ես...

Բաղէնեանը յանկարծ թողեց ձեռքի փաթաթանը և արագ, շատ լուրջ հայեացքով նայեց Եւային։

—Լսեցէք, օրիորդ,—շարունակեց նա արագախօսութեամբ։—Ես չեմ ուզում, որ մենք այդպիսի ոլորապտոյտ ճանապարհներով մօտենանք բուն խնդրին։ Քանի որ մենք հասկանում ենք իրար, ուստի դուք ժամավաճառութիւն է այսպիսի խօսակցութիւններով զբաղուելը։ Դանք ուղղակի գործին։ Դուք յանդիմանութեամբ նկատեցիք ինձ, թէ ինչո՞ւ ձեզ վրայ էլ, ձեր կարծիքով, թերահաւատութեամբ եմ նայում։ Կրկնում եմ, դուք շատ սխալւում էք։ Ես աւելի քան տեսնում եմ, որ ձեր հետաքրքրութիւնը բղխում է բոլորովին աղնիւ, մաքուր աղբիւրից։ Տեսնում եմ, որ դուք լոկ հետաքրքրութեան համար չէ, որ հետաքրքրւում էք։ Ուստի աւելորդ է, որ ուրիշներից էք ուզում իմ մասին տեղեկութիւններ ստանալ։ Հրամայեցէք ուղղակի ինձ։ Ես ինքս անձամբ պատրաստ եմ ամենայն ուրախութեամբ լի ու լի գոհացում տալ ձեր հետաքրքրութեանը։

Եւան թեթեւակի շառագունեց։

—Շնորհակալ եմ, որ վստահում էք ինձ,—շշնջաց նա։

—Չի կարելի վստահել միայն նրան, ով այսպիսի գործերով հետաքրքրւում է չար դիտաւորութեամբ։

Եւան նայեց նրան և ժպտաց։ Նոյնն արեց և Բաղէնեանը։ Այդ փոխադարձ հայեացքից դրդուած, ինչ որ անմեղ չարաճճի մի զգացում յանկարծ թելադրեց նրանց, թէ քաղաքավարական այդ խօսակցութիւնն արդէն չափից դուրս անհամ ու անհոտ է, որ իրենց համար աւելի լաւ, աւելի հաճելի կըլինի, եթէ բոլորովին

մտերմաբար խօսեն իրար հետ, և նոյն իսկ վատ չի լինիլ, եթէ մի քիչ էլ կատակ անեն։

—Ի՞նչ գիտէք, թէ ես այդպիսի հետաքրքրուողներից չեմ,—առաջինն ինքը Եւան կատակի ձև տուեց խօսակցութեանը։

—Որովհետև այդ միտնոյնը կըլինէր, թէ մեղուն ծաղկից հիւթ է քաղում, որ թոյն շինի,—վրայ բերեց Բաղէնեանը նոյնպէս կատակով։

—Ինչո՞ւ մեղուն վերցրիք և ոչ օձը, որ ծաղկի հիւթից իսկապէս թոյն է շինում,—ասաց Եւան ծիծաղելով։—Դա աւելի յարմար կըլինէր, քանի որ ձեր համեմատութիւնն ինձ է վերաբերում, իսկ օձ անունը հէնց կանանց համար են գործածում։

—Այո, բայց հրեշտակ անունն էլ են գործածում,—նկատեց Բաղէնեանը նոյնպէս ծիծաղելով։—Օձը հակառակ ծայրն է։

—Ինչպէս և հրեշտակը։

—Ուրեմն դարձեալ մեղուն է յարմարը, որ ես գործածեցի։

—Բայց դուք մեղը շինելու կողմից վերցրիք. մեղուն, ախր, սարսափելի խայթում էլ է։

—Այդ ինչաս չունի. մեղուի խայթելը չի խանգարում նրա քաղցը մեղրը վայելելու։

Այդ այլաբանական խօսակցութիւնը բղխում էր ինքնաբերաբար և մեծ հաճոյք էր պատճառում երկուսին էլ։ Նրանք անկեղծ, ուրախ կերպով խնդում էին անդադար։

—Մենք, կարծեմ... շեղուեցինք,—առաջինը զսպելով իրեն, ասաց Եւան և լուրջ կերպարանք ընդունեց։—Ուրեմն դուք վստահում էք ինձ...

—Մինչև անգամ աւելի, քան դուք կարող էք ենթակայել,—վրայ բերեց Բաղէնեանը եռանդով։—Որով-

հետև. . Թո՞յլ կըտաք ինձ, օրիորդ, անկեղծ լինիմ ձեզ հետ։

Եւան զարմանքով նայեց նրա աչքերին։

—Մի՞թէ անկեղծութիւնն ամենամեծ առաքինութիւնը չէ,—հարցրեց նա։

—Նայելով թէ ով ինչպէս է նայում—հաւատո՞վ թէ թերահաւատութեամբ։

Եւան այս անգամ ժպտաց։

—Մեր դերերը կարծես թէ փոխւում են,—նկատեց նա.—այժմ դուք էք սկսել կասկածել, թէ ես թերահաւատութեամբ պիտի նայեմ ձեզ վրայ... Առհասարակ պիտի ասեմ ձեզ, պարոն Բաղէնեան,—լրջօրէն աւելացրեց Եւան,—որ ես մեծ դժուարութեամբ եմ ընդունում, թէ մարդիկ կարող են անկեղծ չլինել, որովհետև չէ՞ որ այդ լաւ չէ... լաւ չէ ամենից առաջ հէնց իրենց համար։ Չէ՞։

—Շատ իրաւացի է ձեր նկատողութիւնը, օրիորդ, և այդ միանգամայն պատիւ է բերում ձեր սրտի մաքրութեանը։ Դրանով դուք աւելի ևս խրախուսում էք ինձ, որ ձեզ հետ անկեղծ լինիմ։ Ձեզ վրայ ունեցած վստահութիւնս այնքան մեծ է, որ ես ամենևին երկիւղ չունիմ ձեր առաջ բանալու մեր գործի այսպէս ասած՝ սրբութեան սրբոցը։ Ճիշտ է, անցած գիշեր ձեր տանն արդէն շատ բան պարզեցի, բայց ոչ այն, ինչ որ մեր գործի իսկական գաղտնիքն է կազմում։ Ես աւելին կասեմ. մինչև անգամ Շահեանին չեմ վստահացել յայտնել այն, ինչ որ ձեզ պիտի յայտնեմ։ Այսքան ժամանակ ես թափառում եմ երկրից երկիր, քաղաքից քաղաք, անցել եմ համարեա բոլոր հայաբնակ վայրերը, շատ կանանց, շատ օրիորդների հետ եմ ծանօթացել, բայց ոչոք այնպիսի վստահութիւն և համակրանք չի ներշնչել ինձ, ինչպէս դուք...

Եւան ամեն կերպ աշխատեց, որ հանգիստ մնայ, բայց և այնպէս նկատելի կերպով շփոթուեց,—շփոթուեց ոչ այնքան Բաղէնեանի խօսքերից, որքան այն տարօրինակ վառուող հայեացքից, որ Բաղէնեանը յառել էր իր վրայ։

Բաղէնեանը տեսաւ նրա շփոթմունքն և իսկոյն զսպեց իրեն։

—Ներեցէք, օրիորդ. ես, կարծեմ, արդէն չափից դուրս անկեղծ եղայ,—ասաց նա ժպտալով։—Այս դէպքում անկեղծութիւնն արդէն առաքինութիւն չէ։ Ես խիստ տպաւորուող եմ, և ընաւորութեանս այս գիծն ինձ միշտ վնասել է։ Խնդրում եմ ներեցէք։

Եւան բոլորովին շփոթուեց։ Այդ բոպէին նա սաստիկ ցանկանում էր, որ հայրը կամ մայրը, կամ մի որևէ ծանօթ մարդ գար և խանգարէր այդ խօսակցութիւնը։

Սակայն Բաղէնեանն ինքը վերջ տուեց այդ խօսակցութեանը։

—Մենք պէտք է խօսէինք ուղղակի գործի մասին, մինչդեռ աւելի հեռացանք գործից,—ասաց նա և, շուրջը մի զգուշաւոր հայեացք ձգելուց յետոյ շարունակեց։—Ես չեմ կարող և չպէտք է ծածկեմ ձեզնից մեր գործի գաղտնիքները հէնց թէկուզ նրա համար, որ դուք, ինչպէս տեսնում եմ, ի սրտէ համակրում էք այդ գործը, և համոզուած եմ, որ լոկ համակրելով չէք բաւականանալ, եթէ ամեն բան բոլորովին պարզ լինի ձեզ համար։ Ի դէպ պէտք է ասեմ, որ հասարակութեան մէջ, դժբաղդաբար, կանխակալ կարծիքներ շատ կան տարածուած մեր մասին։ Այդ կարծիքները շատ անգամ ուղղակի հրէշաւոր գոյներով են ներկայացնում մեզ։ Մարդիկ կան, որոնք նոյն իսկ ուրանում և վնասակար են համարում մեր կատարած գործը։ Ձեր բա-

բեկամ օր. Սահակեանն օրինակ։ Ինքներդ տեսաք, թէ անցեալ օր ինչ աչքով էր նայում նա գործի վրայ...

—Օ՜, նա շատ բարի է. դուք նրա լեզուին մի նայէք,—բացականչեց Եւան։

—Նրա բարութեան մասին ես տարակոյս չունիմ, օրիորդ. բայց ես նրա աննպաստ հայեացքն եմ ասում, որով նայում էր վերջին շարժումների վրայ։ Դժբաղդութիւնն այն է, որ մենք չենք կարող գործը հրապարակի վրայ դնել, որպէսզի ամենքի համար պարզ լինի, որպէսզի ոչոք չկասկածի, թիւր կարծիքներ տանելու տեղիք չունենայ։ Այդ, իհարկէ, շատ ցաւալի է և շատ է ձլատում մեզ։ Բայց ո՞ւր կը գնար, եթէ այդպիսի բաներից յուսահատուէինք։ Մենք հաւատում ենք մեր գործի սրբութեանը և յանուն այդ գործի պատրաստ ենք ամեն հալածանք տանելու։ Զրպարտութիւնը մեզ համար ոչ մի նշանակութիւն չունի. դա մի ժանդոտ զէնք է, որ կեղտոտում է միայն, բայց ոչ սպանում։ Ե՞րբ և ո՞ւրտեղ չեն հալածել հասարակական գործչին։ Եւ հալածանքն այնքան սաստիկ է լինում, որքան հասարակական գործիչը բարձր է լինում կանգնած ամբոխի հոգու և մտքի ըմբռնողութիւնից։ Մեզ էլ հալածում են։ Է՛հ, թող հալածեն։ Մենք խօ մեր անձնական շահերի համար չենք գործում, որ վախենանք։ Մենք միայն ցաւում ենք, որ մեզ հալածելով ազգի շահերն են հալածում, այսինքն այն շահերը, որոնց օգտին աշխատում ենք մենք, որոնց պաշտպանութեանը նուիրել ենք մեր կեանքը։ Ո՞ւմ համար խաչուեց Քրիստոսը։—հէնց այն ամբոխի համար չխաչուեց, որը խաչեց Նրան։ Մեզ համար առանձնապէս գործի դժուարութիւնը այն է, որ հալածանքը մեր դէմ երկու կողմից է —ներքին և արտաքին։ Մենք աշխատում ենք խուսափել արտաքին հալածանքներից, բայց արի տես, որ

ստիպուած ենք ներքին հալածանքների դէմ էլ կռուելու։ Այս իսկապէս խիստ տրագիքական դրութիւն է։ Այսպիսի դրութեան մէջ, ի հարկէ, մեծ ուրախութիւն և խրախուսանք է մեզ համար, որ մեր ներքին հալածողների դէմ գտնւում են անհատներ, որոնք համակրում են մեր վարած դատը և այդպիսով մի տեսակ գործակից են հանդիսանում մեզ այդ դատի պաշտպանութեան համար։ Մեր նպատակներից մէկն էլ այն է, որ հասարակութեան մէջ որքան կարելի է շատ գտնենք այդպիսի անհատներ, ինչպէս, օրինակ, գտնուեցաք դուք։ Կանանց համակրութիւնը մեզ համար առանձնապէս մեծ նշանակութիւն ունի, որովհետև նրանց սիրտը մաքուր է, հետևաբար—աւելի ընդունակ գործը բուռն սիրով սիրելու։ Ես աւելին կասեմ.—կանանցից մենք հերոսներ ենք սպասում։ Մի Ժանն դ'Արք մի ամբողջ հայրենիք փրկեց։ Հինգերորդ դարը... Ինչքա՜ն ամեն անգամ հրճուանքով ենք յիշում հինգերորդ դարը։ Նրա համար չէ՞ արդեօք, որ այդ դարում հայ կինը թերևս աւելի, քան տղամարդը, ցոյց տուեց իր բուռն հայրենասիրութիւնը, իր հերոսական անզուգական անվեհերութիւնը...

Եւան անզգայաբար առաւ Բաղէնեանի ձեռքը։

—Սպասեցէք, պարոն Բաղէնեան։ Այս աղմուկն անտանելի է։ Գնանք... այնտեղ... առանձին սենեակներ կան։

Եւ Եւան արագ վերկացաւ տեղից։ Նրա գեղեցիկ աչքերը վառւում էին մի տեսակ ինքնամոռացութեան կրակով։

Բաղէնեանը հետևեց նրան։

—Ներեցէք, օրիորդ. դուք եկել էք այստեղ զբաղարճանալու, իսկ ես ձեզ զբաղեցնում եմ այսպիսի...

—Ո՛ւֆ, չէ... եկէք։

XII

Շահեանը շատ շուտ թողեց պարահանդէսը և դիմեց դէպի տուն։ Այդ պարող երկսեռ հասարակութիւնը, երաժշտութեան այդ խլացուցիչ ձայները, շուրջը տիրող ուրախ խօսակցութիւնն ու քրքիջները, ժողովարանի պայծառ լուսաւորութիւնը—ամէն ինչ ատելի էր թւում նրան, և նա այդ ամենի մէջ ճնշուած, մենակ և տխուր էր զգում իրեն։ Առաջուայ ծանօթ մելամաղձութիւնն իր ամբողջ ծանրութեամբ նորից պաշարել էր նրան։ Նա շատ անգամ փորձել էր, որ հոգեկան այդ դրութիւնն առանձին ուժգնութեան էր հասնում միշտ այն ժամանակ, երբ ներկայ էր լինում այդպիսի ուրախ հանդէսների։

Միքայէլեան կամրջով անցնելիս նա մի-երկու րոպէ կանգ առաւ և նայեց ներքև։ Ջիւնածածկ ափերի սպիտակին տուող զուգահեռական գծերի մէջ պարզորոշ աչքի էր ընկնում գետն, իր սևին տուող ժապաւէնով։ Հանդարտ ու դանդաղ շարժւում էր այդ ժապաւէնը։ Խուլ ու միահաւասար լսւում էր գետի հոսանքի հետ առաջ ընթացող սառցաշերտերի ֆշշոցը։

Շահեանի աչքերը մեխուած էին մնացել գետի հոսանքի մի կէտի վրայ, ուր կամրջի բարձրութիւնից լապտերներից մէկի լոյսը խաւար կերպով անդրադառնում էր ջրի մէջ։ Գետի հոսանքն այդտեղ արագ, խորհրդաւոր և սարսափելի էր թւում։ Շահեանի աչքերը կարծես մագնիսացել էին այդ տեղում։ Նա բռնել էր կամրջի վանդակապատից և մատները ջղային ուժգնութեամբ սեղմում էին սառն երկաթը։ Յանկարծ նրան թուաց, թէ ոտներն իրենք իրենց բարձրանում, անցնում են վանդակապատի այն կողմը, մատներն

ուղղակի ցցւում են երկաթի մէջ և... Նա յետ քաշուեց և աշխատեց կարելոյն չափ շուտով անցնել կամուրջը։

Մայրը զարմացաւ, որ որդին այդպէս շուտ էր վերադարձել։

—Ինչո՞ւ այսպէս վաղ եկար,—հարցրեց պառաւը։

Շահեանը չպատասխանեց և ուղղակի անցաւ իր ննջարանը։

Մայրը վախեցած հետևեց նրան։

—Լևոն ջա՛ն... ասա, է։

Շահեանն ուզեց պինդ գոռալ մօր վրայ, բայց պատասխանեց հանդիստ ձայնով.

—Որովհետև ձանձրացայ։

—Թէ՞ հիւանդ ես,—չհաւատալով հարցրեց մայրն անհանգստացած։

Շահեանը դարձեալ զսպեց իրեն, որ չգոռայ։ Լուռ ու դանդաղօրէն սկսեց շորերը հանել։

—Լևոն ջա՛ն... դու վախեցնում ես ինձ։

Շահեանը կատաղօրէն սիւրտուկը յանկարծ շպրտեց աթոռի վրայ։

—Հիմա շա՛տ պէտք է զահլա տանես,—բռնկաց նա։—Հազար անգամ ասել եմ, որ, երբ վատ տրամադրութեան մէջ եմ լինում, մի՛ խօսիր ինձ հետ, հարցուփորձ մի՛ անիր, հանդիստ թող ինձ։ Երանի չէ՞ր լինիլ, որ միանգամից հիւանդանայի ու սատկէի, որ վերջապէս պրծնէի քո ձեռքից...

—Աստուած ոչ անի, որդի ջան, ինչի՞ր ես ասում,—ես ի՞նչ եմ անում, որ...

—Ա՛յ, հիմա կըշարունակի,—աչքերը ոլորելով մօր վրայ, արտասանեց Շահեանը զսպած կատաղութեամբ։

Այն աստիճան սարսափելի էր նրա հայեացքը, որ խեղճ մայրը, կուչ գալով, լռեց։

Շահեանն երեսն ի վեր ընկաւ մահճակալի վրայ, ձեռքերը դրեց գլխի տակ և մնաց անշարժ։ Երկար ժամանակ ծանր լռութիւն տիրեց։ Մօր վրայ այդպիսի խստութեամբ յարձակուելով նա մի տեսակ վայրենի զուարճութիւն էր զգում։ Այդպիսի դէպքերում իրեն առհասարակ այնքան չէր կորցնում, որ շարունակ դիտում էր իրեն և, երբ տեսնում էր որ լաւ է բարկանում, հաւանում էր։ Այս անգամ էլ հաւանեց իր խիստ վարմունքը, որովհետև տեսաւ, որ լաւ բարկացաւ։ Նա ուզում և սպասում էր, որ մայրը դարձեալ մի քանի խօսք ասի, որպէսզի աւելի լաւ, այսինքն աւելի խիստ բառերով ու ձևերով արտայայտի իր բարկութիւնը։

Յիրաւի, մայրը խօսեց, բայց ոչ այնպիսի բան, որ որդին պատճառ ունենար իր բարկութիւնը ցանկացած կերպով արտայայտելու։

—Լևոն ջան,—ասաց նա անհամարձակօրէն։—Այս գիշեր Ստեփանն եկաւ. ասաց, որ փակ խանութներից մէկի կտուրը փուլ է եկել ձիւնից։

—Ջհաննամը,—արտասանեց Շահեանը։

—Էգուց գնա տես։

—Այդ ես դիտեմ, իսկ դու... գնա քնիր։

Մայրն այլևս ոչ մի խօսք չարտասանեց և սուս ու փուս դուրս գնաց։ Նոյն րոպէին դռան ետևից ինչոր խուլ հեկեկանքի ձայներ լսուեցին։ Շահեանը փշաքաղուեց։ Գլուխը բարձրացրեց և, շունչն իրեն քաշելով ականջ դրեց։ Մայրն էր լաց լինում։ Փիչ մնաց վեր թռչէր մօր մօտ ծնկաչոք ներողութիւն խնդրելու, բայց միայն ձեռքը ջղաձգաբար բռունցք սեղմեց և պինդ խփեց բարձին։

«Ո՛չ, հարկաւոր չէ, այսպէս աւելի լաւ է»—մտածեց նա և նորից պառկեց։

Հետևեալ օրն աւելի ևս վատ տրամադրութեան մէջ էր։ Կարծես մէկը մահու չափ վիրաւորել էր նրան, և նա երբէք չպէտք է մոռանար այդ վիրաւորանքը։

Թէյի ժամանակ եկաւ կալուածների կառավարիչը —Ստեփանը։ Դա միջահասակ մի մարդ էր խիստ մապակալած երեսով. արխալուղի վրայ հագած էր հնամաշ մի սիւրտուկ, որի օձիքը պլպլում էր քրտնքի կեղտից։ Բացի Շահեանի կալուածներին վերահսկելուց, նա դալլի բազմազան արհեստով էլ էր պարապում։ Վերջին հանգամանքը նրան վերին աստիճանի լեզուանի, խորամանկ և հաճոյախօս էր դարձրել իր գրպանի օգտին։ Ում հետ էլ որ գործ ունենար, անկարելի էր, որ չխաբէր նրան. իսկ Շահեանին խօ խաբում էր ամեն մի քայլափոխում։

Նա պատմեց փակ խանութներից մէկի կտրան փուլ գալը և ասաց, որ քաղաքային վարչութեան և ոստիկանութեան կողմից մարդիկ էին եկել, որոնք, բոլոր խանութները դիտելուց յետոյ, գտել էին, որ ամբողջ շէնքը պէտք է հիմքից քանդուի, այլապէս, խիստ խարխուլ լինելով, վտանգ է սպառնում անցուդարձ անողներին տակովն անելու։

Շահեանին խիստ անհաճոյ թուաց այդ պատմութիւնը. տեսաւ, որ այդ խանութների գործը պէտք է բաւական անհանգստութիւն պատճառի իրեն, ուստի առաջարկեց Ստեփանին, որ ծախի։

Ստեփանն ընդդիմացաւ. ասաց, որ խանութները թէև շատ էլ բանուկ տեղ չեն, բայց նոր որ շինուեն, լաւ եկամուտ կբերեն։

—Չէ, ծախիր, չեմ ուզում,—կարճ կտրեց Շահեանը։

Ստեփանը, հակառակ իր ցանկութեան, ստիպուած էր հնազանդուել։

Նա նոր էր դուրս գնացել, որ Շահեանի մօտ մտաւ Բաղէնեանը խիստ ուրախ տրամադրութեամբ։

Այդ անսպասելի այցը վերին աստիճանի անհաճոյ թուաց Շահեանին։ Ընկերոջ անհոգ, ուրախ դէմքն ու գեղեցիկ արտաքինն երբէք այնպէս ատելի չէին թուացել նրան, ինչպէս այժմ։ Բայց նրան ամենից աւելի ատելի թուաց Բաղէնեանի՝ սև շորի մէջ կախ արած ձեռքը։

Շահեանն աշխատեց սառն ընդունելութիւն ցոյց տալ Բաղէնեանին և մինչև անգամ այնպէս անել, որ նա հասկանայ, թէ այժմ այլևս ամենևին հաճելի չեն իրեն նրա այցելութիւնները, բայց իր թոյլ բնաւորութեան շնորհիւ այդ բոլորն արտայայտեց այնքան անշնորհք կերպով, որ Բաղէնեանն ամենևին չը՞նկատեց էլ, թէ նրա տրամադրութեան մէջ որևէ փոփոխութիւն է կատարուել դէպի ինքը։

Շահեանը կարծեց, թէ Բաղէնեանի առաջին խօսքը լինելու է այն մասին, թէ ինչո՞ւ ինքը, Շահեանը, երեկ գիշեր այնպէս շուտ էր հեռացել պարահանդէսից, բայց խիստ վիրաւորուեց, երբ Բաղէնեանը հարցրեց՝

—Ինչո՞ւ երեկ գիշեր պարահանդէս չէիր եկել։

—Երևի արդէն շատ մեծ մարդ ես դարձել, որ ինձ չես նկատել,—ասաց Շահեանը հանդիստ ձայնով։

Բաղէնեանը մի բոլէ անկեղծ զարմացած նայեց Շահեանի դէմքին։

—Ա՛խ, իրա՛ւ,—յանկարծ բացականչեց նա.—դուխս Մարութեանների հետ էիր, որ եկար։ Ի՞նչպէս մոռացել եմ։ Բայց մեղաւորը Մարութեանի աղջիկն է. ընեց և այլևս բաց չթողեց։ Նա հարցրել է քեզ իմ պարապմունքի մասին, և դու ոչինչ չես ասել։ Շնորհակալ եմ գաղտնապահութեանդ համար. բայց ես ինքս ամեն բան պատմեցի նրան։ Նա պարզապէս զերեց ինձ։

Ոչ ասեմ, թէ չիմացանք, թէ ինչպէս անցաւ պարահանդէսը, չես հաւատալ։ Ինքը մազնիսացել և ինձ էլ մագնիսացրել էր իր կողքին։ Պէտք է տեսնէիր, թէ ի՞նչպիսի ոգևորութեամբ, ի՞նչպիսի համակրութեամբ էր լսում... Խոստացաւ հօրը խնդրել, որ միորևէ գումարով նպաստի գործին։ Մինչև անգամ հասկացրեց, որ ինքն էլ իր կողմից պատրաստ է զոհաբերելու, ինչ որ կարող է... Մի խօսքով՝ գանձ, կատարեալ մի գանձ, որ ես ամենևին յոյս չունէի տեսնելու մեր ներկայ հայ աղջիկների մէջ։ Հը՞, ի՞նչ կասես, Լևոն։

Շահեանը կամաց, կարծես ուժասպառ, երեսն ի վեր պառկեց փափուկ օթոցի վրայ և ձեռքերը դրեց գլխի տակ։ Նա կարէվեր ջանք էր գործ դնում, որ կարելոյն չափ հանգիստ ու անտարբեր մնայ։ Նա ոչինչ չպատասխանեց։

—Լսի՞ր, Լևոն, քեզ եմ հարցնում. գանձ չէ՞ այսպիսի մի աղջիկ։ Ի՞նչ անտարբեր և անքաղաքավարի մարդ ես,—բացականչեց Բաղէնեանը ծիծաղելով և, նրա ոտներից հանելով ծաղկանկար մաշիկներից մէկը, ձգեց յատակի վրայ։

Այդ բանը խիստ գրգռեց Շահեանին, և նա այլևս չկարողացաւ զսպել իրեն։

—Դէ՛ որ գանձ է, թող գանձ լինի, էլ ի՞նչ ես ինձ հարցնում,—շատ կոպիտ կերպով ասաց նա, նստեց և կռացաւ, որ մաշիկը հագնի։

Բաղէնեանը նայեց նրա կարմրատակած ու ձըգձգուող դէմքին և շարունակեց ծիծաղել։

—Լաւ, էլ ինչո՞ւ ես բարկանում։

—Բարկանում եմ, որովհետև... ի՞նչ գործ ունես մաշիկներիս հետ։

Եւ Շահեանը նորից պառկեց, բայց դէմքն այս անգամ պատի կողմն արեց։

Բաղէնեանը մատը կծեց։

Շահեանը, դէմքը պատի կողմն արած, թէև չէր տեսնում նրան, բայց խկոյն զգաց, որ նա հասկացաւ, թէ ինչ էր կատարւում իր ներսը, և շատ զղջաց, նոյն իսկ ամաչեց, որ ակամայ արտայայտեց իր ներքինը։ «Մաշիկները... Ինչ յիմար, ինչ երեխայական պատճառաբանութիւն»—մտածեց նա։

Բաղէնեանը կարճ ժամանակ լռեց և, բեխի ծայրը ոլորելով, անթարթ նայում էր ընկերոջ ծոծրակին։

Շահեանը վախեցաւ այդ խորհրդաւոր լռութիւնից։ Այժմ նա բոլորովին համոզուեց, որ Բաղէնեանը լիովին հասկանում է իրեն։ Նա գրեթէ սարսափով սպասում էր, թէ Բաղէնեանն այդ մասին հարցումներ պիտի անի իրեն, և զգում էր, որ ինքը ոչ մի կերպով չպիտի կարողանայ ծածկել նրանից, որ նախանձից առում է նրան։

Սակայն Բաղէնեանը նստեց նրա մօտ, աթոռի վրայ, և մեծ ճարպիկութեամբ փոխեց խօսակցութիւնը, առանց այլևս ոչ մի խօսք արտասանելու Եւայի մասին։

Բայց դրանով Շահեանի դրութիւնը չթեթևացաւ։ Նա աւելի ուրախ կը լինէր, եթէ Բաղէնեանը շարունակէր խօսել Եւայի մասին, քան թէ խոյս տալով Մարութեանի աղջկայ մասին խօսելուց, դրանով զգացնել տար, որ խղճում է իրեն։

Բաղէնեանն այժմ խօսում էր ոչ առաջուայ մտերմական անկեղծութեամբ։ Նոր մտած ժամանակ այնքան ուրախ և ոգևորուած լինելով, այժմ խիստ զսպած, նոյն իսկ սառն էր պահում իրեն։ Բայց նրա ձայնի մէջ հետզհետէ և աւելի ու աւելի տիրապետում էր լսողին գերող այն տխուր լարը, որ հնչում է ուրիշի թշուառութեան համար անկեղծօրէն ցաւող մարդու ձայնի մէջ։ Նա խօսում էր ազգի թշուառութեան մասին։

Շահեանը պառկած էր, դէմքը շարունակ պատի կողմն արած։ Նա ուշի ուշով լսում էր Բաղէնեանին և մտածում էր ոչ թէ այն մասին, թէ ինչ էր խօսում ընկերը, այլ այն մասին, թէ ինչպէս էր խօսում նա, թէ ինչպէս էր հնչում նրա ձայնը։ Եւ Բաղէնեանն այդ կողմից կատարեալ կախարդ էր թւում նրան։ Նա զգում էր, որ այդ գեղեցիկ երիտասարդն եթէ ամենքի հետ էլ այդպէս է խօսում, անկարելի է, որ չգերէ նրանց, մանաւանդ Եւային, այդ անկեղծ բուռն զգացումներով ապրող անփորձ աղջկան։ «Եւ ես ուզում եմ սրա հետ մրցել»—մտածեց նա խորին դառնութեամբ։

Երբ Բաղէնեանը գնաց, Շահեանը դեռ երկար ժամանակ պառկած էր նոյն դրութեան մէջ։ Նա ընկել էր խորը մտածմունքների մէջ։ Յետոյ կամաց վերկացաւ, նստեց գրասեղանի մօտ և մի նամակ գրեց։ Գրելուց յետոյ կարդաց, բայց չհաւանեց, պատռեց և մի ուրիշը գրեց։ Այդ էլ չհաւանեց։ Այդպիսով մի քանի թուղթ գրեց։ Այդ էլ չհաւանեց։ Յետոյ, վերջիվերջոյ գրելիքը խմբագրեց հեզրելուց յետոյ, վերջիվերջոյ գրելիքը խմբագրեց հետևեալ կերպով.

«Սիրելի ընկեր.

«Ի հարկէ, հասկացար, թէ իսկապէս ինչու այնպէս յանկարծ դրդռուեցի այսօր... Եւ թերևս ինձ խըղճալուդ համար էր, որ չհարցրիր պատճառը։ Բայց և այնպէս, անկեղծօրէն պիտի խոստովանուեմ քեզ այդ պատճառը. միտք էլ չունի, որ ծածկեմ։—Ես սիրում եմ Եւային, սիրում եմ անյոյս, անպատմելի տանջանքով, որովհետև զգում եմ և հաւատացած եմ, որ նա երբէք չպիտի կարողանայ սիրել ինձ նման մի ողորմելի արարածի...

«Տեսնում ես, ես խօսում եմ անկեղծօրէն։ Եկ դու էլ ոչինչ մի ծածկիր ինձնից. ասա ուղղակի, որ արդէն սիրում ես նրան։ Ես համոզուած եմ, որ նա էլ անտարբեր չէ դէպի քեզ, որովհետև ձեր ծանօթանալու առաջին իսկ րոպէից տեսայ, որ դու զօրեղ տպաւորութիւն ես գործել նրա վրայ։ Ուրիշ կերպ անկարելի էր։ Նա այնքան զգայուն աղջիկ է... Թերևս ոչոք նրա հոգին այնպէս չհասկանայ, ինչպէս ես։ Մի զարմանար, որքան արտաքուստ մեռած եմ երևում, այնքան նուրբ է հոգուս ըմբռնողութիւնը։

—«Լսիր, Բաղէնեան։ Այն օրից, որ իմ մէջ գիտակցութիւն է զարթել, ես միշտ թշուառ եմ զգացել ինձ։ Բայց այժմ իմ այդ թշուառութիւնը հասել է իր գագաթնակէտին։ Ես տանջւում եմ, անասելի կերպով տանջւում։ Անհնար է, որ այլ ես դիմանամ այս տանջանքին։ Ի՞նչ արած, ընութիւնը զրկել է ինձ այդ քաջութիւնից։ Այս տանջանքին վերջ տալու համար մնում է երկու բան.—կամ անձնասպանութիւն գործել, կամ վերջ դնել իմ ու քո միջև եղած բարեկամութեանը։ Քեզ եմ թողնում—ընտրիր՝ որն ուզում ես... Այս մասին չեմ երկարացնում։ Յոյս ունիմ, ինձ հասկանում ես... Ա՜խ, տուր ինձ հոգու անդորրութիւն, հոգու անդորրութիւն միայն, մնացածը,—Աստուած քեզ հետ,—մնացածը թող քեզ լինի. ես կը հաշտուեմ դրութեանս հետ...

«Մաս բարեաւ, երջանիկ ընկեր, կրկին անգամ մնաս բարեաւ։

«Քո դժբախտ Լևոն Շահեան»։

Շահեանը խիստ հաւանեց իր այդ նամակը, այնքան հաւանեց, որ չծուլացաւ մաքուր արտագրելու և

արտագրածը մի քանի անգամ կարդալու։ Նամակը սպասածից աւելի աջող էր դուրս եկել, թէև բոլորովին ուրիշ բնաւորութիւն ունէր, քան մտադիր էր տալ սկզբում։ Ինչ որ սրտաշարժ բան էր նկատում իր գրածի մէջ և հէնց այդ սրտաշարժ բանն էր, որ հաւանում էր։

Նամակը փակելով ծրարի մէջ, տուեց ծառային որ տանի յանձնի Բաղէնեանին «Լոնդոն» հիւրանոցում։

XIII

Ծառան վերադարձաւ և յայտնեց, թէ Բաղէնեանը տանը չէր, ուստի նամակը տուել է հիւրանոցի դռնապանին, որ նրան յանձնի։ Շահեանը համոզուած էր, որ եթէ ոչ այդ օրը, գոնէ հետևեալ օրն անպատճառ պատասխան կը ստանայ։ Բայց ոչ այդ և ոչ հետևեալ օրը ոչ պատասխան եկաւ Բաղէնեանից և ոչ ինքն երևաց։

Շահեանը վախկոտ մտահոգութեան մէջ ընկաւ։ Կարդաց նամակի սևագրութիւնը, թէև բառ առ բառ անգիր գիտէր, և այս անգամ խիստ դժգոհեց այն բանից, ինչ որ գրել էր։ Տեսաւ, որ շատ բան կեղծել է և շատ բան չափազանցրել։ Գլխաւորը, որ նա բոլորովին չհաւանեց այս անգամ, այդ այն էր, որ նամակը սկզբից մինչև վերջը վիպական ինչ որ ծիծաղելի սանտիմենտալ բնաւորութիւն ունէր, այսինքն այն, ինչ որ նամակը գրած ժամանակ խիստ հաւանել էր։ Եւ շատ զըղջաց, որ այդպիսի նամակ էր գրել Բաղէնեանին։ Այդ նամակի մէջ նա ներկայանում էր իբրև վերին աստիճանի խղճալի արարած՝ զուրկ արժանապատուութեան զգացումից, սանտիմենտալ իր սիրոյ մէջ, վախկոտ իր տեսլութեան մէջ։

Բայց նամակն արդէն գրուած ուղարկուած էր, և

Նա այս անգամ պատասխանին սպասում էր գրեթէ սարսափով։ Պատասխանը ստացուեց երրորդ օրը քաղաքային պոստով։ Բաղէնեանը գրում էր.

«Անգին իմ Լևոն.

«Թերևս զարմացած ես, թէ ինչո՞ւ այսպէս ուշ եմ պատասխանում Նամակիդ։ Զարմանքդ կըփարատուի, եթէ գէթ հարևանցի երևակայես դրութիւնս։ Նամակդ այնպէս ցնցել է ինձ, որ մինչև այս րոպէիս էլ խելքս, կարծես, գլխիս չէ։ Հաւատո՞ւմ ես, ոչ երէկ և ոչ այս գիշեր չեմ քնել կամ, աւելի ճիշտը, չեմ կարողացել քնել, որովհետև շարունակ մտածում էի, թէ ինչ պատասխանեմ։

«Յիրաւի, ի՞նչ պատասխանեմ...

«Սակայն, փորձեմ պատասխանել։ Թերևս շատ էլ դժգոհ չմնաս իմ պատասխանից։

«Դու ինձ անկեղծօրէն խոստովանուում ես բոլորը։ Դա ինձ համար մեծ գին ունի։ Եւ ուզում ես, որ ես էլ ոչինչ չծածկեմ քեզնից։ Թոյլ տուր միջանկեալ նկատեմ քեզ, սիրելիս, որ լսուր ես կարծում, թէ ես որևէ բանում կարող եմ անկեղծ չլինել։ Եւ կեղծեմ ո՞ւմ առաջ։ Քո՞։ Ինչո՞ւ համար։ Եւ ի՞նչ միտք ունի կեղծիքն այս դէպքում։

«Եթէ դու այնքան սկեպտիկ չես, Լևոն, և խօսքերս որև է նշանակութիւն ունին քեզ համար, ապա կարող եմ քեզ հաւատացնել, որ ընկերներիցս ոչոքի, —այո՛, ո՛չ ոքի,—այնպէս չեմ սիրել, ինչպէս քեզ...

«Սակայն, այս մասին կարճ եմ կտրում, որովհետև ո՞վ գիտէ՝ ինչ բացատրութիւններ տաս խօսքերիս...

«Գանք ուղղակի գործին։

«Ինչպէս տեսնում ես, սիրելիս, ես աշխատում եմ կարելոյն չափ հանգիստ հոգով գրել։

«Քո նամակովդ, Լևոն, իսկապէս մեծ ծառայութիւն մատուցիր ինձ,—այնպիսի մի անգնահատելի ծառայութիւն, որի համար երբէք չպիտի դադարեմ քո անունն երախտագիտութեամբ յիշելու, քանի շունչս բերնումս կըլինի։ Ասեմ ինչու։

«Դու չես սխալուում. ես անտարբեր չեմ դէպի Մարութեանի աղջիկը։ Կարծեմ իմ առաջին այցելութեան առաջին գիշերն իսկ ասացի քեզ, որ այդ աղջիկը խիստ դիւր է եկել ինձ։—Տեսնո՞ւմ ես, առանց քո ասելու էլ ես անկեղծ եմ եղել դէպի քեզ։—Ճշմարիտը խոստովանուելով, պիտի ասեմ քեզ, որ Եւայի ինձ վրայ թողած տպաւորութիւնը եթէ արդէն սէր չէ, գոնէ շատ շուտով կարող է սիրոյ փոխուել։ Ես այդ աւելի քան նախազգում եմ։ Գիտեմ, թէ ինչ է այն զգացումը, որ «սէր» է կոչուում։ Այդ մասին ես քեզ մի պատմութիւն արդէն արել եմ իմ կեանքից։ Այժմ կարող եմ աւելացնել հետևեալը.

«Եթէ այն ժամանակ այն էլզասցի աղջկան սիրել եմ, որքան ընդունակ է մարդ-արարածը սիրելու, այնուամենայնիւ զգացել եմ, որ այդ աղջիկն օտար է ինձ համար, այնքան օտար, որքան օտար կարող են լինել թէև միևնոյն դաղափարով համակուած, բայց տարբեր ազգութիւնների պատկանող և իւրաքանչիւրն իր հայրենիքի թշուառութեան մասին մտածող երկու սիրող սիրտ։ Բայց այժմ զգում եմ, որ եթէ հազարաւոր այդպիսի օտարուհիներ պատահեն ինձ, ես դրանց բոլորին էլ չեմ փոխիլ մի,—այո՛, մի,—հայ Եւայի հետ։ Մի հարազատ աւելի սիրելի է, քան հազարաւոր օտարներ միասին առած։ Դա բնական օրէնք է։

«Ներիր, սիրելիս, ինձ թւում է, թէ տրամաղիր եմ գործից հեռանալու։ Կարճ կտրեմ, աւելի լաւ է։

«Քանի որ ասում ես, թէ սիրում ես Եւային, իսկ Եւան դէպի ինձ է հակուած (այդ ես էլ եմ նկատում. պարզ խօսելը լաւ է), և հոգիդ անդորը պահելու համար անհրաժեշտ ես գտնում, որ վերջ տրուի իմ ու քո միջև եղած բարեկամութեանը,—համաձայն եմ. տուր ինձ ձեռքդ։ Հարկաւ, դա շատ ծանր է ինձ համար, բայց աւելի լաւ է՝ հեռու մնանք իրարից իբրև բարեկամ, քան մօտիկ լինինք իրար իբրև թշնամի։ Անձնասպանութեան մասին աւելորդ եմ համարում խօսել, որովհետև այդ, ի հարկէ, շատ յիմար մի միտք է, որ ծագել է գլխումդ։ Ես միայն զարմանում եմ, թէ այդ ինչ հրէշաւոր գաղափար ունիս իմ մասին, որ բաւական չէ այդ մասին գրում ես ինձ, այլ և իմ ընտրութեանն ես թողնում...

«Ինչևիցէ, այս թողնենք։ Ես քեզ ուրիշ բան եմ ուզում ասել,—և նամակովդ ինձ մատուցած մեծ ծառայութիւնն այդ բանը համարիր։

«Քո և իմ միջև եղած բարեկամութեանը վերջ դնելով, ես միևնոյն ժամանակ այսօրուանից վերջ եմ դնում իմ ու Եւայի միջև եղած բարեկամութեանը, համակրութեանը, սիրոյն,—ինչպէս ուզում ես՝ անուանիր։

«Այս բանը թերևս անսպասելի լինի քեզ համար։ Բայց մի զարմանար, Լևոն։ Քեզ յայտնի է, որ իմ անձը սուրբ երդումով նուիրել եմ իմ թշուառ հայրենիքին, հետևաբար այդ անձը չի կարող, իրաւունք չունի պատկանելու միւրևէ անհատի, թէկուզ այդ անհատը լինէր Եւայի պէս մի աղջիկ, որի համար,—ծ, սիրոյ յանցաւոր պաշտելի ասուած,—արժէ մոռանալ հայրենիքն էլ, ամեն բան էլ... Միւս կողմից, ինչ

խղճով ես կարող եմ վայելել մի սէր, երբ ինձ համար պարզ է, որ եթէ ես չլինէի, կարող էր պատկանել իմ ընկերոջը։ Ո՛չ, այդպիսի սէրն երջանկութիւն չէր բերիլ ինձ համար, այլ սոսկալի թշուառութիւն, որովհետև գիտակցութիւնս աչքիս առաջ շարունակ պիտի ներկայացնէր այդ սիրոյ պատճառով թշուառացած թանկագին ընկերոջս տանջանքները...

«Այդպէս ուրեմն, անգին բարեկամ և աղնիւ ընկեր, այս օրուանից ամեն բան արդէն վճռուած է։ Հաւաքում եմ սրտիս բոլոր քաջութիւնը, մտքիս բոլոր խոհականութիւնը և հրաժեշտ եմ տալիս քեզ և քեզ հետ միասին—Եւային։ Եթէ մի քանի կարևոր գործերս չլինէին, որոնց, սակայն, յոյս ունիմ շուտով վերջացնելու,—կըհեռանայի հէնց այսօրևէթ։ Սակայն, այդ միևնոյն է. այսօրուանից այլևս երբէք չեմ տեսնիլ Եւային և կաշխատեմ մտքիցս ու սրտիցս հանել նրա պատկերը։

«Ի վերջոյ պարտաւորութիւնս եմ համարում յատուկ շնորհակալութիւնս յայտնել քեզ, որ իր ժամանակին հանեցիր ինձ ինքնամոռացութիւնից և, թէև անուղղակի, յիշեցրիր ինձ իմ վեհ նպատակը։ Ուրեմն մնաս բարեաւ, իմ անգին ընկեր։ Մնաս բարեաւ և դու, Եւա։ Ես գնում եմ այնտեղ, ուր պարտաւոր եմ գնալ... Թէև յոյս չունիմ, թէ կենդանի կըմնամ այնտեղ, բայց այս անակնկալ դէպքից յետոյ մահն աւելի ևս քաղցր կըլինի ինձ համար։

«Կրկին անգամ մնաս բարեաւ, իմ անգին, իմ աղնիւ, իմ անկեղծ ընկեր։

«Ընդմիշտ քո Սուրէն Բաղէնեան»։

Շահեանը չկարողացաւ միանգամից ըմբռնել այդ

նամակի միտքը։ Կարդաց երկրորդ անգամ, երրորդ անգամ... և, հետզհետէ աղդուելով, ընկղմուեց ծանր մտատանջութեան մէջ։

Մթթէ, յիրաւի, Բաղէնեանն այդ աստիճան վեհանձն, անձնազոհ և հայրենիքին այդպէս նուիրուած երիտասարդ էր։ Մինչդեռ ինքը, Շահեանը, իր համար անաջող ու անյոյս սիրոյ մէջ նրա ախոյեանը հանդիսանալով, լցուել է դէպի նա չար նախանձով ու ատելութեամբ,—Բաղէնեանն, ընդհակառակը, քրիստոնէական ամենամեծ պատուէրի հետևող էր հանդիսանում—իր բաղդը, իր երջանկութիւնը զոհում էր ընկերոջ օգտին։

Այդ այնքան պարզ էր Բաղէնեանի նամակից, որ Շահեանը մինչև անգամ զզուանքով ամաչեց դէպի նա տածած իր փոքրոգի և նախանձոտ ատելութիւնից։

Սակայն, այդ ատելութիւնն այժմ չքացաւ միանգամից։ Շահեանը զգում էր այժմ, որ պատրաստ է առաջուանից էլ աւելի բուռն զգացումով սիրելու և յարգելու Բաղէնեանին, եթէ նրա հոգին չդառնանար այն գիտակցութիւնից, թէ՝ միևնոյն է, Եւան Բաղէնեանի հեռանալովը խօ չի փոխել իր համակրութիւնը. ընդհակառակը, իբրև չափից դուրս զգայուն աղջիկ, աւելի ևս կըսիրէ անձնազոհ և հայրենիքի ազատութեան գործին նուիրուած Բաղէնեանին, իսկ իրեն, Շահեանին, ատելով կատի, երբ իմանայ, որ իր սիրած երիտասարդին իրենից անջատողը այդ չնչին, ողորմելի Շահեանն է։

Վերջին միտքը խելագարեցնելու չափ անտանելի թուաց Շահեանին։ Նա ապշեց։ Ի՞նչ միտք ունէր, որ խառնուում էր Եւայի և Բաղէնեանի միջև սկսուած յարաբերութիւններին, քանի որ հէնց սկզբից համոզուած էր, որ նրանց սրտերն արդէն կապուած են իրար հետ, և Եւան ոչ մի կերպ չի կարող սիրել իրենն։ Ճիշտ է, Բաղէնեանին իր նամակը գրեց այն մտադրութեամբ միայն, որ նա հեռու մնայ իրենից, որպէս զի ինքը կարողանար հոգու անդորրութիւն գտնել, բայց ի՞նչպէս չէր հասկանում, որ իր նամակն իսկապէս ստոր նախանձով լցուած սրտի խուլ ու ապօրինի մի բողոք էր այն երջանկութեան դէմ, որ պիտի ունենային Եւան ու Բաղէնեանն իրար սիրելով։ Մեղաւոր էր Եւան, որ համակրում էր Բաղէնեանին. մեղաւոր էր Բաղէնեանը, որ համակրում էր Եւային։ Ինչո՞ւ նրանց թշուառութեան պատճառ է դառնում։ Ի՞նչ իրաւունքով։ Եսասէր մարդու ստոր նախանձի արդիւնք չէ՞ արդեօք իր վարմունքը։

Շահեանը քստմնեց իրենից։ Այս անգամ զգաց, որ իր հոգին անդորր կարող էր լինել այն դէպքում միայն, երբ ամենևին չդրէր իր նամակը Բաղէնեանին և շարունակէր նրա հետ իր առաջուայ բարեկամութիւնը։ Այո՛, հաղարապատիկ աւելի լաւ է, որ մարդ ինքը տանջուի ուրիշի պատճառով, քան թէ զգայ, որ ինքն է պատճառն ուրիշի տանջանքի,—մտածում էր Շահեանը։

Շահեանի հանդիստը միանգամայն կորել էր, և նա որքան շատ էր մտածում իր վարմունքի մասին, այնքան աւելի ու աւելի զգում էր, որ արդարանալու ոչ մի կէտ չունի։ Նրան թւում էր, թէ մարդ է սպանել և ոչ մի զղջում չպիտի կարողանայ քաւել այդ յանցանքը։

Բաղէնեանի գրութիւնը նրան պարզապէս տրագիքական էր թւում։ Եւ նա զգում էր, որ Բաղէնեանին ոչ թէ միայն այլևս չի ատում և չի կասկածում նրա վեհ առաքելութեան մասին, այլ և այդ երիտասարդը չափից դուրս բարձրացել է իր աչքում։

Զնայելով Բաղէնեանի պարզ ու հատու նամակին, Շահեանին թւում էր, թէ իրենց յարաբերութիւնները չափազանց խճճուել են, թէ այդ յարաբերութիւնները պարզելու համար անպատճառ հարկաւոր է մի բան անել, բայց թէ ինչ բան,—չգիտէր։ Ի հարկէ, ամենից լաւն այն կըլինէր, որ անձամբ տեսնուէր ու խօսէր Բաղէնեանի հետ, բայց այժմ աւելի, քան երբէք, վըտահութիւն չունէր այդ բանն անելու։ Նա խիստ ամաչում էր, իր նամակից յետոյ, գնալ Բաղէնեանի մօտ և չգիտէր էլ, թէ իսկապէս ինչ պիտի խօսէր նրա հետ։

XIV

Անցաւ մօտ մի ամիս։ Շահեանը դեռ ևս մտատանջւում էր, թէ ինչպէս տեսնուի Բաղէնեանի հետ, երբ մի օր յանկարծ ուրախացած կանգ առաւ այն մտքի վրայ, թէ Բաղէնեանն այդ մի ամսուայ ընթացքում անշուշտ արդէն հեռացած կըլինի Թիֆլիսից, ուրեմն աւելորդ է այլևս այդքան մտատանջուել նրա հետ տեսնուելու և խօսելու մասին։ Այս միտքն անասելի մի թեթևութիւն պատճառեց նրան, որպիսի թեթևութիւն զգում են առհասարակ անվճռական մարդիկ, երբ իրենց որևէ մի ծանր պարտականութիւնն անկատար թողնելու համար յանկարծ բանաւոր պատճառ են գտնում։

Բայց սխալուեց։

Մի երեկոյ, երբ Շահեանը, զբօսանքի դուրս եկած ժամանակ, անցնում էր Միքայէլեան կամրջով, յանկարծ նրա դէմն ելաւ Բաղէնեանը մուշտակի մէջ կոլոլուած և մոխրագոյն մորթէ գլխարկով, որը, ծուռ ծածկած, չափազանց սազում էր նրան։ Այդ հանդի-

պումն այնքան անակնկալ էր Շահեանի համար, որ նա ակամայ կանգ առաւ, կարմրեց ու գունատուեց։

Բաղէնեանը նրան դիմաւորեց բաւական զսպուած կերպով։ Նրա դէմքը լուրջ էր, աչքերը նայում էին մտահոգ հանգստութեամբ։

—Մի՞թէ, յիրաւի, մենք պիտի բաժանուէինք իրարից այնպէս, որ, գէթ վերջին անգամ, չպիտի տեսնէինք իրար,—ասաց նա սառն, հաւասար ձայնով և ձախ ձեռքը մեկնեց Շահեանին։ Աջ ձեռքը դեռ ևս կապած էր։

—Ես էլ այդ էի մտածում,—պատասխանեց Շահեանը, խիստ անյարմար դրութեան մէջ զգալով իրեն ընկերոջ սառն ընդունելութիւնից։

—Այդ մի փոքր տարօրինակ կըլինէր,—աւելացրեց Բաղէնեանը։—Գոնէ ինձ համար...

—Ինձ համար էլ,—մեքենայաբար վրայ բերեց Շահեանը։

—Թողնենք մեր պատանեկութիւնը... այս վերջերս, կարճ միջոցում, այնքան մօտեցանք իրար, գոնէ ես ինձ այնքան մօտ էի զգում քեզ, որ համոզուած էի, թէ ոչ մի բան չպիտի կարողանար արգելք լինել մեզ անջատման ժամին եղբայրաբար սեղմելու իրար ձեռք և մնաս բարեաւ ասելու իրար վերջին անգամ։

Շահեանը զգացուեց։ Առանց յանդիմանութեան և թախծօրէն արտասանուած այդ խօսքերն այնպիսի ազդեցութիւն ունեցան նրա վրայ, որ նա անկարող եղաւ զսպել իրեն և բացականչեց ամենայն անկեղծութեամբ.

—Այո՛, այո՛, մենք դարձեալ ընկերներ ենք... Պէտք է ներես, Սուրէն... Զգում եմ, որ մեղաւոր եմ քո առաջ. չպէտք է գրէի քեզ այն նամակը...

Բաղէնեանը փորձող հայեացքով նայեց նրա շփոթուած դէմքին և հանդիստ վեր քաշեց ուսերը։

—Տեսնում ես, դու ուրիշ բան հասկացար,—ասաց նա։—Իսկ ես այդ չէի ուզում ասել։

—Գիտեմ, գիտեմ,—արագ, աւելի ևս անկեղծօրէն վրայ բերեց Շահեանը։—Եւ իզուր ես կարծում, թէ խօսքերդ ակնարկութիւն եմ ընդունում իմ այն չարաբաստիկ նամակի համար։ Ընդհակառակը, Սուրէն. ես աւելի քան հաւատում եմ քո ընկերական անկեղծութեանը, և եթէ ասացի, թէ չպէտք է գրէի քեզ այն նամակը, ասացի նրա համար, որ... խիղճս հանգիստ չէ։ Կարծես մի ծանր յանցանք եմ գործել, որ ոչ ես և ոչ ուրիշն երբէք չպէտք է ների ինձ...

Բաղէնեանն իր սուր հայեացքով մի բոպէ վերին աստիճանի լրջօրէն նայեց Շահեանի խեղճ, միամիտ աչքերին։

—Խղճիդ մի հաւատար, Լևոն,—ասաց նա հանդիստ։—Զափազանց զգայուն լինելուց խիղճդ ծայրայեղութեան մէջ է ընկնում։ Երկար չեմ ուզում խօսել այս մասին,—աւելացրեց նա կտրուկ կերպով։—Այսքանս միայն կասեմ, որ վատ բան արած կըլինէիր, եթէ այն նամակը չգրէիր ինձ։

—Ի՞նչպէս,—զարմացաւ Շահեանը։

—Այնպէս որ...—Բաղէնեանը բռնեց Շահեանի թևից և քաշեց կամրջի վանդակապատի կողմը, որպէս զի ազատ ճանապարհ լինին տուած անցուդարձ անողներին։—Լսիր, Լևոն, ինչ եմ ասում։ Այնպիսի ընկերների մէջ, որպիսին ես ու դու ենք, գաղտնապահութիւն չպէտք է լինի ամենևին։ Պարզ կերպով, առանց յետին մտքի, իրարու ամեն բան խոստովանուելը միակ միջոցն է ընկերական յարաբերութիւնները հաստատ հիմքերի վրայ դնելու։ Մինչև անգամ ես կարծում եմ, որ երբ երկու ընկերների միջև ինչ-ինչ պատճառներով հակակրանք է ծագում, այդ դէպքումն էլ շատ լաւ կըլինի, որ նրանք իրենց այդ զգացումը չծածկեն իրարից։ Սիրում ես ընկերոջդ,—այդ ինքն ըստ ինքեան կարտայայտուի. սկսել ես տեսել,—այդ էլ մի աշխատիր ծածկել։ Բաշուելն աւելի վատ է այդ դէպքում։ Խօսքն ուղղակի տուր ճակատին և հեռացիր։ Այդ հանդստութիւն կըտայ քեզ, կամրացնի հոգիդ։

Շահեանը մնացել էր շփոթուած և ապշած։ Նրան թւում էր, թէ Բաղէնեանը թափանցել է իր հոգու խորքը և գիծ առ գիծ երևան է հանում հակակրանքի այն զգացումը, որ ինքը սկսել էր տածել դէպի ընկերը։ Բայց այժմ այդ զգացումն այլևս չկար նրա մէջ։ Այս անգամ նա թէ վախենում էր Բաղէնեանի թափանցողութիւնից և թէ զգում էր, որ պատրաստ է առաջուանից աւելի սիրելու ընկերոջը, որի մէջ այժմ բոլորովին նոր ու սրտագրաւ մի բան էր տեսնում։

—Ինչպէս տեսնում եմ, Սուրէն, դու դարձեալ կասկածում ես դէպի քեզ տածած զգացումներիս վերաբերմամբ,—մեղմօրէն կշտամբեց նա։

—Է՜էհ, ինչ տեսակ մարդ ես,—նեղացաւ Բաղէնեանը։—Ինչու՞ խօսքերս միշտ քեզ վրայ ես ընդունում։ Ես խօսում եմ ընդհանրապէս։ Դու ասացիր, թէ մեղաւոր ես իմ առաջ, թէ չպէտք է գրէիր ինձ այն նամակը, իսկ ես ուզում եմ ապացուցանել, որ դրանով վատ բան արած կըլինէիր։ Եւ վատ բան արած կըլինէիր նրանով, որ...

—Բայց, ախր, դու չհասկացար ինձ...

—Սպասիր։ Վատ բան արած կըլինէիր նրանով, որ... Ի՞նչպէս չհասկացայ քեզ։ Ուզում ես ասել, որ նամակովդ ակամայ առիթ ես տուել ինձ հեռանալու Եւայից, որ դու ամենևին ի նկատի չես ունեցել, թէ նամակդ ինձ համար, քո կարծիքով, այսպիսի ծանր

հետևանք կունենայ, որ հէնց այդ բանի համար էլ խիղճդ տանջում է քեզ։ Այդպէս չէ՞։

—Այո։

—Տեսնում ես, որ հասկացել եմ։ Ա՛յ, դու չես հասկացել քեզ գրած պատասխանիս միտքը... Դժբաղդաբար, ժամանակ չունիմ, Լևոն, երկար խօսելու,—մի շատ կարևոր գործի համար շտապում եմ մի տեղ.— բայց որպէսզի քո գովելի բարեսրտութեամբ շատ էլ չչափազանցնես դրութիւնս, ահա թէ ինչ պէտք է ասեմ քեզ։ Իրաւ է, Եւան ինձ վրայ մեծ տպաւորութիւն է թողել. ընդամենը մի քանի անգամ եմ տեսել նրան, և նրա մօտ լինելը, նրա հետ խօսելը միշտ մեծ հաճոյք է պատճառել ինձ. բայց միայն այդքան։ Այն զգացումը, որ ես տածում եմ դէպի նա, սէր չէ, ինչպէս դու ես կարծում. հետևաբար այդ զգացումը մեռցնելու համար մի առանձին դժուարութիւն չկայ։ Բաւական է, որ հեռու մնամ, և ամեն բան կըվերջանայ ինքնըստինքեան։ Առանց այդ էլ շուտով պէտք է հեռանայի այստեղից, և եթէ մինչև այժմ մնում եմ այստեղ, պատճառը մեր գործի հետ կապ ունեցող մի քանի անակնկալ հանգամանքներ են։ Գուցէ, քեզ գրած պատասխանիս մէջ, նամակիդ ազդեցութեան տակ, փոքր ինչ չափազանցրել եմ դրութիւնս, բայց այժմ դէպի Եւան տածած զգացումս բոլորովին պարզ է ինձ համար։ Ծանօթանալուս առաջին օրերն էին... Եւան շնորհալի, հեռաքրքրուող, ինքնուրոյն, գեղեցիկ աղջիկ է, որպէսին առաջին անգամն եմ պատահում հայ աղջիկների մէջ... Վերջապէս, ինքս խիստ տպաւորուող եմ... Է՛հ, այսպիսի պայմաններում շատ հասկանալի է, որ փոքր ինչ ինքնամոռացութեան մէջ ընկնէի։ Բայց, փառք Աստուծոյ, այժմ բանը չի կարող հեռու գնալ, որովհետև... շնորհակալ եմ, քո և միայն քո նամակի

շնորհիւ ես, բարեբաղդաբար, խոհեմութիւն ունեցայ իր ժամանակին զսպելու ինձ և յետ քաշուելու։ Այն գործը, որին նուիրուած եմ ես, պահանջում է ամենից առաջ անձնուրացութիւն, իսկ սիրոյ մէջ իր շրջանակից դուրս չկայ այդպիսի անձնուրացութիւն։ Ժողովրդական գործին նուիրուած մարդը կատարելապէս ազատ պիտի լինի անձնական զգացումներից, գոնէ նա չպէտք է թոյլ տայ, որ այդ զգացումները գերիշխող դեր կատարեն իր կեանքի մէջ. իսկ սիրոյ զգացումն այն առանձնայատկութիւնն ունի, որ մարդուն ամենանեղ եսասէր է դարձնում։ Բիչ չի պատահել, որ մարդիկ հայրենիքի դաւաճան են հանդիսացել նրա համար միայն, որ սիրել են։ Այդ դաւաճանութիւնն եղել է գիտակցաբար և անգիտակցաբար։ Անգիտակցաբար դաւաճանողներից մէկն էլ ես կարող էի հանդիսանալ. անձնատուր կըլինէի սիրոյ հրապոյրներին և... այդ հրապոյրներից դուրս թէկուզ ամբողջ աշխարհը կործանուէր, այդ մասին ես ամենևին չէի հոգալ։ Մինչդեռ ես ընկերներ ունիմ... նրանք գործում են... հաւատում են, որ ես էլ ցմահ իրենց հետ եմ... ես ինքս եմ խօսք տուել... մենք ուխտել ենք միասին... և ինչպէս կարող եմ դրժել իմ խօսքը, իմ ուխտը... Ահա թէ ինչու համար եմ ասում, որ վատ բան արած կըլինէիր, եթէ չգրէիր ինձ այն նամակը,—մի նամակ, որը սթափեցուցիչ մի դեղ էր ինձ համար։

Բաղէնեանը խօսում էր հանգիստ և իր մտքերին անձնատուր եղած մարդու ոչինչ չտեսնող հայեացքով նայում էր գետի խաղաղ ընթացքին։ Այդ միջոցին նրա ամբողջ արտաքինն այն աստիճան աղդու կերպարանք էր առել, նրա հանգիստ ձայնի մէջ այնպիսի վշտաբեկ մի լար էր հնչում, որ Շահնանը զգաց, թէ

նրան երջանկացնելու համար պատրաստ է զոհել ամեն բան, ինչ որ կարող է։

—Լսիր, Բաղէնեան,—ասաց նա կամաց, բռնելով նրա թևից։—Իմ կարծիքով, սէրն արգելք չպիտի լինի քեզ, որ շարունակես գործել հայրենիքի համար, մանաւանդ Եւայի պէս մի աղջկայ սէրը...

Բաղէնեանը չպատասխանեց։ Նա շարունակ նայում էր գետի հոսանքին, բայց այս անգամ յոնքերը կիտեց, և նրա մտախոհ հայեացքը փոքր ինչ խիստ արտայայտութիւն ստացաւ։

Շահեանը, կարճ լռութիւնից յետոյ, աւելացրեց.

—Ինձ թւում է, թէ այդ զոհաբերութիւնն անում ես... ինձ համար։

Բաղէնեանը դառնութեամբ ժպտաց և թեթեակի նայեց նրան։

—Ուզում ես ասել, թէ աւելորդ է, որ հայրենիքն եմ մէջ բերում...

—Ո՛չ, Աստուած է վկայ, ո՛չ, Սուրէն,—եռանդուն անկեղծութեամբ վրայ բերեց Շահեանը և մինչև անդամ նեղացաւ, որ նա այդպիսի մի անակնկալ բացատրութիւն տուեց իր խօսքերին։—Ասում եմ, զոհաբերութիւնդ ինձ համար ես անում, որովհետև... Եւան երբէք չի կարող քեզ արգելք լինել, որ դու շարունակես գործել հայրենիքիդ համար։ Ընդհակառակը, ես կարծում եմ, նոյն իսկ համոզուած եմ, որ նա քեզ սիրում է հէնց այդ բանի համար... Զէ՞ որ ես ճանաչում եմ նրան։

Բաղէնեանը մի խիստ շարժում գործեց։

—Ինչևիցէ, այս մասին այլևս չխօսենք,—ասաց նա, կարծես ինքն իր դէմ դայրացած։—Գործի վրայ ես ուրիշ տեսակէտից եմ նայում։ Վճիռս անդարձ է։

Եւ նա պատրաստուեց, որ հեռանայ։

—Այս մեր վերջին տեսակցութիւնն է, թէ՞ էլի կըտեսնուենք,—հարցրեց նա։

—Է՛լի, էլի,—արագ վրայ բերեց Շահեանը։—Ե՞րբ ես գնում։

—Կարծեմ, դարձեալ մի շաբաթ կըմնամ։

—Որ այդպէս է, Սուրէն, վաղը ճաշին արի ինձ մօտ... առաջուայ պէս։ Կըգա՞ս։

—Տեսնեմ... չափազանց զբաղուած եմ։

—Զէ՛, անպատճառ արի. այլապէս՝ կը կարծեմ, որ նեղացած ես ինձնից։

—Լաւ, կըգամ,—ժպտաց Բաղէնեանը և ձախ ձեռքը մեկնեց նրան։

—Զարմանալի է. ձեռքդ դեռ ես չի՞ առողջացել։

—Ինչպէս տեսնում ես, աջ ձեռքս դեռ ես դատապարտուած է անգործութեան։

Նրանք բաժանուեցին իրարից խիստ սրտագին։

XV

Հետևեալ օրը Շահեանն երկար ժամանակ սպասում էր Բաղէնեանին։ Այդ օրը յատկապէս փառաւոր ճաշ էր պատրաստել տուել նրա համար։ Բայց Բաղէնեանը չէր երևում։ Վերջապէս մի նամակ ստացաւ նրանից հետևեալ բովանդակութեամբ.

«Սիրելի ընկեր.

«Ներիր, որ, խոստմանս հակառակ, այսօր չեմ կարող գալ։ Հէնց այս րոպէիս մի խիստ կարևոր նամակ ստացայ. անսպասելի նորութիւն են յայտնում. ամենաեռանդուն ընկերներից երկուսը սև մահնութեան զոհ են գնացել... Խիստ անհանգիստ դրութեան

մէջ եմ։ Անյապաղ օգնութիւն է պահանջւում։ Մի խո-
շոր գումարի կարիք կայ։ Ինձ մօտ այդ գումարը պա-
կասում է։ Հարկաւոր է դարձեալ հազար ռուբլի։ Պա-
հանջը ստիպողական է։ Գնում եմ ճար տեսնելու։ Նա-
մակս այրիր։

«Բո Ս. Բ.»։

«Յ. Դ.—Պակաս գումարը ճարելուս պէս անմիջա-
պէս ուղևորուելու եմ։ Թերևս այլևս չըտեսնենք իրար։
Մնաս բարեաւ։ Կրկնում եմ, նամակս այրիր»։

Կարդալուց յետոյ, Շահեանը նամակը ձգեց վա-
ռարանը։ Յետոյ արագ մօտեցաւ դրասեղանին և դուրս
քաշեց գզրոցներից մէկը։ Այնտեղ հազար և մի քանի
հարիւր ռուբլի կար։ Այդ գումարից հազար ռուբլին
ոտացել էր նախորդ օրն իր կալուածների կառավար-
չից, որը ծախել էր փուլ եկած շէնքը։ Նա վերցրեց
ջոկ դրած այդ հազար ռուբլին, դրեց մի ծրարի մէջ,
ծոցը կոխեց և անմիջապէս գնաց Բաղէնեանի մօտ։

Բաղէնեանը տանը չէր։

Շահեանը վերադարձաւ տուն այն մտադրութեամբ,
որ երեկոյեան դարձեալ գնայ ընկերոջ մօտ։ Բայց երե-
կոյեան էլ նրան տանը չգտաւ։ Իր անելիք գոհարերու-
թիւնը Շահեանին ազնիւ անհամբերութիւն էր ներ-
շնչել։ Այդ օրը գիշերն էլ գնաց։

Դեռ ևս բաւական վաղ էր։ Հիւրանոցի դռնապա-
նից իմացաւ, որ Բաղէնեանն այս անգամ տանն է։
Դռնապանն աւելացրեց, որ նա «մենակ չէ», սակայն
Շահեանը չլսեց և արագ բարձրացաւ վերև։ Նա բռնեց
Բաղէնեանի սենեակի դռան փականքից և առաջ մղեց։
Դուռը փակ էր։ Նա ծեծեց։

—Ո՞վ է,—լսուեց ներսից Բաղէնեանի ձայնը։

—Ես եմ։

—Լևոն։

—Ես եմ։

—Իսկոյն։

Մի րոպէ Շահեանին թուաց, թէ ներսից ինչ-որ
քչփչոցի ձայներ լսեց, յետոյ սեղան էր թէ աթոռ՝
թրխկաց, և կարծես մէկը բոբիկ ոտներով վազեց սե-
նեակի մի ծայրից միւսը։

Դուռը բացուեց։ Շեմքում երևաց Բաղէնեանը
սիւրտուկն ու ժիլետն հագած։ Նրա ձեռքաստած ձեռքը
կապած չէր։

Շահեանը մտաւ։ Սանդուղքներով արագ վերև
բարձրանալուց և այն դիտակցութիւնից, թէ շուտով
պէտք է ուրախացնի ընկերոջը, նրա սիրտը թրթռում էր։

—Դու մենակ ես,—հարցրեց նա կամաց, շնչա-
սպառ, նայելով սենեակի չորս կողմը։

—Մենակ եմ։ Ներիր, որ քեզ այսպէս եմ ընդու-
նում։ Հէնց նոր ուզում էի պառկել։

Շահեանը նոր նայեց ընկերոջ դէմքին։

—Այսպէս վա՞ղ։

—Ի՞նչ անեմ, սիրելիս, սաստիկ յոգնած եմ. այ-
սօր շան պէս չարչարուել եմ... Ներողութիւն, այսօր
երկու անգամ եկել ես, տանը չեմ եղել։

—Այո, ես... Նամակդ ստացայ... Իզուր այդքան
նեղութիւն ես կրել... Խնդրում եմ, ընդունիր այս իմ
կողմից...

Եւ Շահեանը, ծոցից հանելով ծրարը, տուեց Բա-
ղէնեանին։ Նա աշխատում էր կարելոյն չափ հանգիստ
մնալ և ցոյց տալ, թէ բոլորովին հասարակ մի գործ է
կատարում։

Բաղէնեանը մեքենայաբար առաւ ծրարը և մի բո-
պէ նայեց Շահեանին լուռ ու զարմացած։

—Այս ի՞նչ է,—հարցրեց նա։

—Այդ... այն զումարն է, որ... պահանջել են քեզ-նից։

—Ի՞նչ զումար։

—Այսօր որ գրել էիր։

Բաղէնեանն ուրախութիւնից, կարծես յանկարծ, կորցրեց իրեն։

—Լևոն... Սպասիր... Զգիտեմ, ճշմարիտ, ինչ ասեմ... Դու այնպիսի բարի, այնպիսի ազնիւ գործ ես կատարում, որ... Ո՛չ, այդ մասին չեմ ուզում խօսել։ աւելորդ է. ինքդ արդէն զգում ես, թէ ինչ արժէ այս զոհաբերութիւնդ... Եթէ դէթ մի բոպէ երևակայես, թէ ինչ վիրաւորանքներ եմ կրել, ինչքան ստորացրել են ինձ... Ամեն կողմից կասկածանք, ամեն կողմից երկդիմի հեգնութիւն... Բայց, որ ամենից աւելի սարսափելին է, վեհ զգացումների կատարեալ մեռելութիւն... Կարծես թէ գործն իմ անձնական շահերին է վերաբերում, կարծես թէ այդ գործն իրենցը չէ, ընդհանրութեանը չէ... Կարծես թէ ես մի եղուիտ, մի սրիկայ, մի աֆերիստ եմ, որ ասպարէզ եմ եկել երեսիս դիմակ առած՝ մարդկանց խաբելու... Ինչ է մնում, որ այս բանն ուղղակի երեսիս ասեն։ Այս սարսափելի է։ Բար, անդգայ քար պէտք է լինել այս բոլորը տեսնելու և տանելու համար։ Գործունէութեանս ընթացքում ես այն համոզման եմ եկել, Լևոն, որ ամբողջ հայութեան, ամենաանշան բացառութեամբ, մի բան, մի ահագին բան է պակասում. դա հոգու այն լարն է, վերածնող այն ոյժը, որը հիմն ի վեր ցնցում է մարդու ամբողջ էութիւնը, վառում, ոգևորում է նրան սրբազան գործի համար։ Ամեն տեղ անձնական նեղ սահմանափակումն, յեղափոխական գործի մէջ մկան վախկոտութիւն, քաղաքացիական զգացումների կատարեալ մեռելութիւն, նուիրաբերութեան մէջ չարչիական առևտուր. կոպէկի համար սատկում են, տալիս էլ կարծես թէ իրենց մսից են կտրում։ Այսպիսի պայմաններում կարելի՞ է յաջողահատուել... Մանաւանդ Թիֆլիսը, այս այլասերուած, ապազգայնացած Թիֆլիսը... Ճիշտը քեզ ասեմ, Լևոն, այն նամակը գլուխդի քեզ, բայց շատ ղըջացի։ Մտածում էի, ո՞վ գիտէ, գուցէ կարծէիր, թէ դա մի խաղ է իմ կողմից, թէ դրանով ուզում եմ մի աւելորդ անգամ փող կորզել քեզնից...

Շահեանը խիստ անհանգիստ մի շարժում գործեց և նայեց նրան անկեղծ յանդիմանութեամբ։

Բաղէնեանը նկատեց այդ և արագ առաւ նրա ձեռքը։

—Խնդրում եմ, Լևոն, ներիր ինձ,—յուզուած ասաց նա։—Կեանքի դառն փորձերն այն աստիճան յուսահատ են դարձրել ինձ, որ ես, տեսնում ես, թոյլ եմ տալիս ինձ կասկածելու մինչև անգամ քո ազնիւ սրտի մաքրութեան վրայ... Ա՜խ, Լևոն, իմ պատուական ընկեր, որքա՜ն շնորհակալ եմ քեզնից...

Եւ Բաղէնեանն ամուր-ամուր սեղմեց Շահեանի ձեռքը։

Շահեանը հաղիւ ազատեց իր ձեռքը։ Այն աստիճան շփոթուած և վերացած էր, որ չլսեց, թէ ինչպէս այդ միջոցին ինչ-որ, ըստ երևոյթին կնոջ, հաղուստի խշխշոց եկաւ, և ոչ էլ տեսաւ, թէ ինչպէս սենեակի անկիւնում դրուած պատուարի չթի պատերը թեթևակի շարժուեցին։ Մեքենայաբար բարի գիշեր մաղթեց Բաղէնեանին, ասաց, որ նա յոգնած է, չի ուզում անհանգստացնել նրան, դուրս եկաւ, անցաւ երկայն միջանցքով և սկսեց մանրիկ արագ քայլերով իջնել սանդուղքի ցածր աստիճաններով։ Դռնապանը շտապեց յարգական պատրաստակամութեամբ բանալ նրա առաջ

դուռը։ Շահեանը կանգ առաւ, վերարկուի գրպանից հանեց արծաթ մի դրամ, կոխեց դռնապանի բուռը, առանց նայելու նրան, կարծես ամաչելով, որ փող է տալիս նրան, և շտապով դուրս դնաց փողոց։ Իր արած զոհաբերութեան դիտակցութիւնից, Բաղէնեանի խոստովանութիւնից և շնորհակալութիւնից շշմել էր նրա դլուխը։ Նա քայլում էր արագ և վստահօրէն և ոչինչ չէր մտածում. զգում էր միայն, որ չափից դուրս երջանիկ է։ Դա հոգին ու միտքն ազնուացնող այն վեհ, այն հպարտ երջանկութիւնն էր, որ զգում է մարդ ինքնաբերաբար որևէ բարի գործ կատարած ժամանակ։

—Պարոն Շահեան... պարոն Շահեան,—լսեց նա իր ետևից։

Շահեանը կանգ առաւ և արագ շուռ եկաւ։ Խանութների վառ ճրագների լոյսի մէջ տեսաւ Մարութեանին ու Եւային, որոնք դալիս էին իր ետևից։ Կանչողը Մարութեանն էր։ Շահեանը շտապեց դէպի նրանց։

—Դուք անցաք ուղղակի մեր կողքով և չբարևեցիք մեզ։ Չլինի՞ թէ դարձեալ խռովել էք, — նկատեց Մարութեանը ծիծաղելով։

Շահեանը սեղմեց հօր ու աղջկայ ձեռքը։ Նա ժըպտում էր։ Նրա դէմքը վառւում էր հոգեկան բերկրանքով։ Եւայի հանդիպումն այդ րոպէին մի կատարեալ երջանկութիւն էր նրա համար։

—Ներեցէք, չնկատեցի,—պատասխանեց նա Մարութեանի նկատողութեանը, և իսկապէս որ չէր նկատել նրանց։

Մի րոպէ կանգ առնելով, նրանք երեքը միասին շարունակեցին ճանապարհը։

—Ներելի է,—ասաց Մարութեանը, — որովհետև շատ շտապում էիք, երևի ցրտից շուտով պատսպարուելու համար։ Տեսնում էք, ինչ վառաւոր ցուրտ է։

Բայց լաղաթ ունի, որ սառած գետնի վրայ մեզ ես դալիս այսպէս կակտալի։ Ինձ որ հարցնէք, ձմեռն էլ ունի իր բանաստեղծական հրապոյրները։ Օրինակի համար, մէկ նայեցէք երկնքին. ո՞ր մի գարնանային դիշեր երկնքի կապուտակն այնպէս ամուր է լինում, այնպէս հաստատ, ինչպէս այժմ. ի՞նչ էք տեսել, որ աստղերն այնպէս մեծ երևան, այնպէս հուրհրատին տան, ինչպէս այս դիշեր...

Մարութեանն աչքերը հեռացրեց երկնքից, նայեց Շահեանին և ծիծաղեց։

—Երևակայում եմ, թէ ինչքան ծիծաղում էք ինձ վրայ մտքներումդ,—բացականչեց նա։

—Ընդհակառակը, ես նախանձում եմ ձեր ոգևորութեանը։

Մարութեանն առաւ նրա թեը։

—Որ այդպէս է, երիտասարդ բարեկամ, դուք դեռ շատ բանում պիտի նախանձէք ինձ... Աղջիկս է միայն, որ,—չգիտեմ, ճշմարիտ, այս ի՞նչ փոփոխութիւն է,—ոչ ոգևորւում է, ոչ խօսում։ Ասացէք խնդրեմ, կարելի՞ է այսպիսի մի հրաշալի դիշեր մեզ դալ լուռ ու մունջ. իսկ մենք, ես ու աղջիկս, ահա մի ժամ է, որ դուրս ենք եկել մի քիչ սառն օդ կուլ տալու, և, բացի մի քանի կցկտուր խօսքերից, ուրիշ ոչինչ չեմ լսել սրա բերանից։ Մտածում է, ինչ որ խորին խորհուրդներ է խորհում, բայց թէ ինչ բանի մասին,—այդ Բարձրեալին է միայն յայտնի։

Եւ Մարութեանը, դէմքին ծաղրական արտայայտութիւն տուած, ուսի վրայից նայեց աղջկայ դէմքին. կարծես, ուզում էր դրդռել նրան, որ դայրանայ, խօսի։

Բայց Եւան, կարծես, չէր լսում, թէ ինչ է ասում հայրը։ Ձեռքերը մուֆթի մէջ դրած, մերթ առաջ ընկնելով, մերթ յետ մնալով, նա քայլում էր հօր կողքից

և մեքենայաբար նայում էր ցրտից կուչ եկած անցուդարձ անողներին։ Նրա թէ քայլուածքի և թէ հայեացքի մէջ նկատւում էր ինչ-որ զսպուած անհանգստութիւն։ Երբեմն անհանգիստ հայեացքն ուղղում էր Շահեանին, ըստ երևոյթին ուզում էր բան հարցնել, բայց ոչինչ չէր ասում և դարձեալ կամ առաջ էր ընկնում հօրից, կամ յետ մնում նրանից։

—Ձեզ մի բան եմ ուզում հարցնել, պարոն Շահեան,—ասաց Մարութեանը, կատակով խօսելու եղանակը թողնելով։—Ո՞ւր է այս ձեր պարոն Բաղէնեանը։

Եւան առաջ ընկաւ և շեշտակի նայեց Շահեանի աչքերին անհամբեր հայեացքով։

Շահեանն իր կողմից նայեց նրան և զգաց, որ յանկարծ փոխուեց իր ուրախ տրամադրութիւնը։

—Բաղէնեանը,—արտասանեց նա, հաղիւ զսպելով իր մէջ յանկարծ բռնկած նախանձի կիրքը։—Բաղէնեանը... Այս րոպէիս նրա մօտ էի։

—Հա-ա։ Այս ինքեղ է, որ էլ չի երևում։ Անցեալները, սրանից մօտ մի ամիս առաջ, ճաշին մեր տանն էր։ Խոստացայ մի գումար նուիրել գործի օգտին. բայց այն օրուանից էլ չերևաց. չգիտեմ ինչ է պատճառը։

«Պատճառը»—մտածեց Շահեանը և դարձեալ նայեց Եւայի դէմքին։ Տէր Աստուած, ինչպիսի զայրացնող անհամբեր հետաքրքրութիւն էր արտայայտում այդ չքնաղ դէմքը...

—Ինչ-որ նամակ էր ստացել,—ասաց նա, աշխատելով կարելոյն չափ անտարբեր ձևանալ։—Գրում էին, որ ընկերներից երկուսին ինչ-որ դժբաղդութիւն է պատահել և փող էին պահանջում նրանց համար։ Երևի, այդ փողը գտնելու եռեից ընկնելով, ժամանակ չի ունեցել ձեզ այցելելու։

—Զարմանալի է։ Ես ձեզ ասում եմ, որ նրան փող էի խոստացել, ուրեմն ամենից առաջ, կարծում եմ, ինձ մօտ պէտք է գար, եթէ այդպիսի կարիք ունէր։

Շահեանը յիշեց իր նամակին Բաղէնեանի գրած պատասխանը, որի մէջ գրում էր, թէ Եւայից հեռու մնալու համար վճռել է այդ օրուանից միանգամայն կտրել իր յարաբերութիւնները Մարութեանների հետ, և նրա համար հասկանալի դարձաւ, թէ ինչու Բաղէնեանը փողի համար չէր դիմել Մարութեանին։ Նա զարմացաւ Բաղէնեանի այդ հաստատակամութեան վրայ և զգաց, որ մի բոպէ առաջ իր մէջ դէպի նա բռնկած նախանձի կիրքը չքացաւ։

—Սպասեցէք։ Ե՞րբ է ստացել այդ նամակը, որի մէջ գրում են ընկերների դժբաղդութեան մասին, և փող են պահանջում,—հարցրեց Մարութեանը։

—Այսօր։

—Այսօ՞ր։ Ուրեմն, կարծում եմ, գոնէ վաղը կըգայ մեզ մօտ։

—Չեմ կարծում։

—Ինչո՞ւ։

—Որովհետև... փողն արդէն ճարել է (Շահեանն ուզեց աւելացնել՝ «ես տուի», բայց համեստութիւնից լռեց այդ մասին) և շուտով գնալու է։

—Հա-ա,—բացականչեց Մարութեանը և յանկարծ կանգ առաւ։—Ա՛յ, այդ վատ բան ասացիք։ Ես վախենում եմ, թէ մի գուցէ գնայ առանց մեզ հանդիպելու։ Չը՞, ինչ էք կարծում։

—Չգիտեմ... շատ կարելի է,—ասաց Շահեանը վարանելով և թէպէտ չէր նայում Եւային, բայց զգում էր, որ նա աչքերով ուտում է իրեն։ «Կասկած չկայ. սիրում է»—մտածում էր նա մի տեսակ բութ յուսահատութեամբ։

Մարութեանը յանկարծ մօտեցաւ մերձակայ խանութի լուսաւորուած լուսամուտներին, հանեց ժամացոյցը և նայեց։

—Ժամը 8½ է։ Չի՞ լինիլ, որ այս բոպէիս ինքներս գնանք նրա մօտ։ Հը՞, Եւա։

Եւան նայեց հօրը։ Շահեանը տեսաւ, որ նրա աչքերը վառւում են տարօրինակ վճռականութեամբ։

—Գնանք,—ասաց աղջիկը հաստատուն ձայնով։

—Շատ լաւ։ Գնանք։ Իսկ դուք, պարոն Շահեան, կըգա՞ք մեզ հետ։

—Ի դուր էք գնում,—ասաց Շահեանը.—նա այժմ քնած կըլինի։

—Ի՞նչ էք ասում, այսպէս վա՞ղ։

—Այո, ես որ գնացի, արդէն պատրաստուում էր քընելու։ Ասաց, որ շատ յոգնած է։

—Է՜,—յուսահատօրէն թափահարեց ձեռքը Մարութեանը։—Ես զարմանում եմ, ճշմարիտ, ինչո՞ւ էլ չեկաւ մեզ մօտ։ Ախր դուք չգիտէք, պարոն Շահեան, բանն ինչումն է։ Երկար ժամանակ է, որ մենք նամակ չունինք մեր որդուց։ Վերջին անգամ, որ Բաղէշեանը մեր տանն էր ճաշին, ասաց, որ գնալու է այն կողմերը։ Հիմա մենք մտածել ենք, որ նրա ձեռքով մի նամակ ուղարկենք մեր որդուն և ուզում ենք խնդրել, որ եթէ, Աստուած մի արասցէ, որևէ բան է պատահել նրան, տեղեկութիւն տայ մեզ։ Իսկ դուք ասում էք, թէ շուտով գնալու է և հաղիւ թէ դայ մեզ մօտ։ Հիմա ի՞նչպէս անենք, որ տեսնենք նրան։

—Վաղն առաւօտ անցիր նրա մօտ, ի՞նչ կայ որ,—ասաց Եւան։

—Բանն այն է, թարսի պէս, որ հէնց վաղն առաւօտ ես ժամանակ չունիմ։ Ա՜խ, ի՞նչ լաւ կըլինէր,

որ հիմա գնայինք։ Սպասիր, գիտե՞ս ինչպէս կանենք։ Պարոն Շահեան, դուք խօ վաղը կըտեսնէ՞ք նրան։

—Զգիտեմ, ճշմարիտ...

—Զէ, անպատճառ տեսէք։ Յատուկ խնդրում եմ, պարոն Շահեան։ Եւ ասացէք նրան, որ գնալուց առաջ անպատճառ հանդիպի մեզ։ Խոստանո՞ւմ էք։

Թէև Շահեանը խոստացաւ, որ այդպէս կանի, բայց մտքումը վճռեց, որ այլևս երբէք չհանդիպի Բաղէշեանին։

Ինչքան էլ որ նա հէնց սկզբից համոզուած էր, և շատ բնական էր համարում, որ Բաղէշեանի՝ իր խոստման հաւատարիմ մնալը, այսինքն՝ Եւայից ընդմիշտ հեռանալը ոչ թէ չի թուլացնիլ Եւայի մէջ դէպի նա ծագած սէրը, այլ ընդհակառակը, աւելի ոյժ կըտայ այդ սիրոյն,—այնուամենայնիւ, այն ժամանակ նա դաղտնի, վախկոտ ուրախութեամբ պարուրում էր իրեն այն յուսով, թէ կարող է պատահել, որ Եւան, եթէ ոչ շուտով, գոնէ ժամանակի ընթացքում, բոլորովին մոռանայ Բաղէշեանին, և այնուհետև ինքը, Շահեանը, եթէ քաջութիւն ունենայ խնդրելու նրա ձեռքը, գուցէ նա չմերժի։ Բայց այժմ, տեսնելով Եւայի տենդային ղբրութիւնը, միանգամից կորցրեց այդ յոյսը։ Նա զգաց առաջին անգամ, որ ինքը շատ կեղծ, նոյն իսկ անպատուաբեր դրութեան մէջ է դրել իրեն Եւայի ու Բաղէշեանի միջև։ Եւ մինչդեռ մի կէս ժամ առաջ հաւատացած էր, թէ հաղար ռուբլին Բաղէշեանին յանձնելով՝ մաքուր սրտից բղխած զոհաբերութիւն է անում մի շատ բարի գործի համար, այժմ իր սրտի խորքում զաղրանքով զգաց, որ այդ զոհաբերութիւնն իսկապէս վարձատրութեան պէս մի բան է եղել այն բանի համար միայն, որ Բաղէշեանը Եւային զիջել է իրեն։ Այդ միտքն այնքան ծանր եկաւ նրան, որ նրան թուաց,

թէ ինքը վերին աստիճանի անբարոյական մի քայլ է արել, որի համար ամենքը, առաւելապէս Եւան, դարշանքով պէտք է դէմքը շրջեն իրենից...

Շահեանն այլ ևս քաջութիւն չունեցաւ մնալու Մարութեանի և նրա աղջկայ մօտ։ Նա օգուտ քաղեց առաջին յարմար դէպքից և կանգ առաւ, որ բաժանուի նրանցից։

—Ուրեմն դուք խոստանում էք, որ վաղն անպատճառ կըտեսնէք նրան և կասէք, որ գնալուց առաջ անպատճառ հանդիպի մեզ։ Հա,—հարցրեց Եւան, նայելով նրան այնպիսի յուսահատական-աղերսական հայեացքով, որ Շահեանի բարի սիրտը ճմլուեց անհուն խղճահարութեամբ։

Այս անգամ Շահեանը հաստատ խօսք տուեց, զգալով, որ անպատճառ պարտաւոր է հօր ու աղջկայ խնդիրքը յայտնել Բաղէնեանին ոչ թէ նրա համար, որ այդ կարևոր էր նրանց, այլ նրա համար, որ այդ անհրաժեշտ էր իրեն, որովհետև զգում էր, որ Եւայի ու Բաղէնեանի միջև նոր սկսուած և իր պատճառով խըզուած սրտագին յարաբերութիւնները նորոգելով միայն կարելի է սրբել այն դարշելի կեղտը, որ սպառնում էր առ միշտ ծանրանալ իր խղճի վրայ Բաղէնեանին տուած հաղար ռուբլու բուն շարժառիթի դիտակցութիւնից...

XVI

Հետևեալ օրը Շահեանը գնաց Բաղէնեանի մօտ։

Այն միջոցին, երբ ուզում էր բանալ ընկերոջ սենեակի դուռը, ներսից ինչ-որ տաք խօսակցութեան ձայներ լսեց։ Լսւում էր իրեն՝ Բաղէնեանի ձայնը և մի ինչ-որ կանացի ձայն. առաջինը խօսում էր բարկացած, երկրորդը՝ յանդիմանութեամբ և լացագին։

Շահեանն ականջ դրեց մի բոպէ միայն և հեռացաւ։ Նա անցաւ հիւրանոցի միջանցքի ծայրը և շուռ եկաւ, որ յետ դառնայ, երբ նոյն բոպէին Բաղէնեանի սենեակից դուրս եկաւ մի յաղթանդամ կին։ Շահեանն իսկոյն ճանաչեց նրան։ Դա պանի Զդանևիչն էր։ Շահեանը չկամեցաւ, որ նա տեսնի իրեն, և ծռուեց անկեան միջանցքը։ Պատի եռևից ծածուկ նայելով, տեսաւ, թէ ինչպէս պանի Զդանևիչը, գլուխը հպարտօրէն բարձր բռնած, անցաւ գլխաւոր միջանցքով և լիքաւ սանդուղքներով դէպի դուրս։ Շահեանը սպասում էր, որ Բաղէնեանն էլ դուրս կըգայ սենեակից, բայց Բաղէնեանը չերևաց։

Այս դէպքը շատ օտարոտի թուաց Շահեանին։ Նա ամենևին չէր սպասում, թէ Բաղէնեանի մօտ եղած կինը պանի Զդանևիչը կըլինի և նա այդ կնոջ հետ կըլինի այնպէս բարկացած խօսելիս։ Բայց ինչ կապ կար նրանց միջև... Շահեանի մէջ նորից զարթեց Բաղէնեանի և լեհացի կնոջ փոխադարձ յարաբերութեան վերաբերեալ այն կասկածը, որ ծագել էր նրա մէջ դեռ ևս «Միխայլովո» կայարանում, ուր առաջին անգամ հանդիպել էր նրանց իրար հետ աշնան սկզբին, երբ ինքը Բաթումից վերադառնում էր Թիֆլիս։

Նա չէր իմանում, այդ դէպքից յետոյ յարմար էր արդեօք, որ մտնի Բաղէնեանի մօտ։ Յամենայն դէպս երկար ժամանակ սպասեց, յետոյ դուրս եկաւ թաղսի տեղից և դիմեց դէպի ընկերոջ սենեակը։

Երբ նա մտաւ, Բաղէնեանը ջղային արագ քայլերով անցուդարձ էր անում սենեակում։ Բարկութիւնից նրա դէմքը ձգձգուում էր, աչքերը չար արտայայտութիւն էին ստացել։

Շահեանը վճռել էր ցոյց տալ, թէ ոչինչ չգիտէ և ոչինչ չի տեսնում. բայց Բաղէնեանի դրութիւնն այն

աստիճան արտասովոր երևաց նրան, որ չկարողացաւ չհարցնել։

—Ի՞նչ է պատահել. դու բարկացած ես երևում։

—Դատարկ բան է... Անախորժ լուր ստացայ, դրանից է,—ասաց Բաղէնեանը, աշխատելով իրեն տիրապետել։—Նստիր, խնդրեմ։ Լաւ է, որ եկար։ Այս րոպէիս ինքս էի ուզում գալ քեզ մօտ մի շատ կարևոր գործի համար։

—Ի՞նչ կայ,—հարցրեց Շահեանը, զարմացած նայելով նրա արտասովոր լուրջ դէմքին։

Բաղէնեանը պատասխանելու տեղ ծոցից մի նամակ հանեց և տուեց նրան, որ կարդայ։

Շահեանը կարդաց լուռ։ Նամակը Մարուքեանից էր, որը թախանձագին խնդրում էր Բաղէնեանին մեկնելուց առաջ հանդիպել իրենց, և յիշեցնում էր իր խոստացած նուիրաբերութիւնը։ Ներքևը Եւան աւելացնում էր՝ «Ես ևս աղաչում եմ։ Զափազանց կը՞պարտաւորեցնէք»

—Ես էլ հէնց այս բանի համար եմ եկել,—ասաց Շահեանը, նամակը վերադարձնելով։

—Ի՞նչպէս թէ այս բանի համար,—զարմացաւ Բաղէնեանը։

—Երէկ գիշեր, որ քեզնից հեռացայ, հայր ու աղջիկ հանդիպեցին ինձ փողոցում. Մարուքեանը խնդրեց քեզ ասելու, որ գնալուց առաջ անպատճառ հանդիպես իրենց, որովհետև ուզում է նամակ տալ քեզ, որ տանես իր որդուն։ Եւան էլ շատ խնդրեց,—աւելացրեց Շահեանը միանգամայն անտարբեր եղանակով։

Բաղէնեանը ոչինչ չասաց։ Նա յոնքերը կիտեց և սկսեց նորից անցուդարձ անել սենեակում մտախոհ և մռայլ։ Յետոյ յանկարծ կանգ առաւ Շահեանի առաջ

և շատ լուրջ հայեացքով նայեց ուղղակի նրա աչքերին։

—Լսիր, Լևոն։ Ես որ ուզում էի գալ քեզ մօտ, այդ բանի համար էի ուզում գալ, որ խօսեմ քեզ հետ։ Լսիր, ինչ եմ ասում և պատասխանիր ինձ անկեղծ կերպով։ Դու ինձ իրաւունք տալիս ես, որ գնամ Մարուքեանների մօտ։

Շահեանն ապշեց։

—Ի՞նչպէս թէ՝ իրաւունք...

—Ներողութիւն, այդ չէի ուզում ասել։ Ուզում էի ասել, թէ անախորժ չի՞ լինիլ քեզ համար, որ գնամ...

—Ի սէր Աստուծոյ, Սուրէն, այդ մասին աւելորդ է խօսելը,—ընդհատեց նրան Շահեանը վրդովուած։—Եթէ Մարուքեանների մօտ գնալդ անախորժ լինէր ինձ համար, ես ինքս չէի գալ քեզ մօտ, որ նրանց խնդիրքը յայտնեմ քեզ։ Դու ազատ ես. ինչ ուզում ես և ինչպէս ուզում ես՝ արա։ Ես ոչ իրաւունք և ոչ ցանկութիւն ունիմ խառնուելու։ Կարող եմ քեզ հաւատացնել, որ ես վճռել եմ բոլորովին հեռու մնալ։ Իմ մասին ամենևին մի մտածիր, խնդրեմ։

Բաղէնեանը մի րոպէ տխուր նայեց Շահեանի աչքերին։

—Բայց և այնպէս, դու նեղանում ես, Լևոն։

Շահեանն ուսերը վեր քաշեց և հանգիստ հեռացաւ նրանից։

—Այսօր կամ վաղը ես գնում եմ,—կարճ լռութիւնից յետոյ, ասաց Բաղէնեանը,—և գուցէ այլևս երբէք չտեսնենք իրար։ Ուզում եմ, որ ինչպէս մտերմական անկեղծութեամբ, եղբայրական սիրով մօտեցանք իրար, այնպէս էլ բաժանուենք իրարից։ Դրա համար է, որ հարցնում եմ, թէ անախորժ չի՞ լինիլ

քեզ համար, որ գնամ Մարութեանների մօտ։ Եթէ գիտենամ...

Շահեանն անհամբերութեամբ մի խիստ շարժում գործեց։ Այս անգամ ընկերոջ ամեն մի խօսքը կեղծաւորութիւն և քսութիւն էր թւում նրան։

—Դու դարձեալ ստիպում ես ինձ կրկնելու,—ասաց նա հանդիստ ձայնով, բայց ամեն մի բառը շեշտելով,—որ՝ եթէ Մարութեանների մօտ գնալդ անախորժ լինէր ինձ համար, ես ինքս իմ ոտով չէի գալ քեզ մօտ, որ նրանց խնդիրքը յայտնեմ քեզ... մանաւանդ որ առանձնապէս խնդրողը... Եւան էր։

—Ա՛խ, այդ բանն ես վերագրում եմ քո չափազանց ազնուութեանը, և,—ներիր խնդրում եմ,—քո թոյլ կամքին, Լևոն,—բացականչեց Բաղէշեանը։—Հայը ու աղջիկ քեզ մի յանձնարարութիւն են արել, առանց հասկանալու, թէ որքան ծանր պէտք է լինի քեզ համար այդ յանձնարարութեան կատարումը, և դու քաջութիւն չես ունեցել մերժելու, և կատարել ես, բայց կատարել ես,—մի՞թէ չեմ տեսնում,—սիրտդ սեղմելով... Լևոն, ինձ գրած նամակիդ մէջ խնդրում էիր, որ անկեղծ լինիմ քեզ հետ։ Այժմ ես նոյնը պէտք է խնդրեմ քեզ։ Աղաչում եմ, ոչինչ մի ծածկիր ինձնից, ինչպէս, տեսնում ես, ինքս ոչինչ չեմ ծածկում քեզնից։ Եթէ առանց քաշուելու, անկեղծօրէն ասես ինձ, որ Մարութեանների մօտ գնալս սրտովդ չի լինիլ, հաւատացնում եմ քեզ, մեր եղբայրութիւնը վկայ, Լևոն, հէնց այսօր, հէնց այս րոպէիս ես կըհեռանամ կըգնամ, ինչքան էլ որ ծանր լինի ինձ համար այն գիտակցութիւնը, թէ Մարութեանները շատ դժգոհ և զարմացած պիտի մնան իմ վարմունքից, որը, ի հարկէ, անհասկանալի կը մնայ նրանց համար։ Տեսնում եմ, որ խօսքերս քեզ վրայ բռնութիւն գործ դնելու տպաւորութիւն

են թողնում։ Բայց այս էլ ի նկատի ունեցիր, Լևոն, որ այս գործն ինձ համար աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ քեզ համար։ Եթէ ես այսպէս, գրեթէ բռնանալով, թախանձում եմ քեզ, որ անկեղծ լինիս ինձ հետ, այդ անում եմ,—ինչո՞ւ ճիշտը չասեմ,—այդ անում եմ ոչ այնքան նրա համար, որ չեմ ուզում քեզ տհաճութիւն պատճառած լինել, որքան նրա համար, որ... Լսիր, Լևոն, ինչ եմ ասում։ Դու, անշուշտ, ուշադրութեան առար այն մի քանի խօսքը, որ աւելացրել է Եւան հօր նամակի տակ։ Այդ մի քանի խօսքն ինձ համար մի ամբողջ պատմութիւն է, մի ամբողջ տրագեդիա։ Նամակդ ստանալուցս յետոյ, գրեթէ մի ամիս, ես խուսափել եմ Մարութեաններից, որպէսզի չտեսնեմ Եւային քեզ յայտնի պատճառով։ Բայց այժմ նա ուղղակի ինքն է հրաւիրում ինձ։ Ի՞նչ անեմ։ Գնամ։ Ուզում եմ գնալ, սիրտս ձգտում է գնալ, բայց չպէտք է գնամ, որովհետև զգում եմ, որ այս այցը ճակատագրական նշանակութիւն պիտի ունենայ ինձ համար. զգում եմ, որ եթէ մի անգամ էլ տեսնեմ Եւային, կամքս ստստիկ պիտի թուլանայ, և այն ժամանակ ես կորած եմ, կորած այն գործի համար, որին ուխտել եմ ծառայել անձնական ամեն երջանկութիւն մոռացած... Ահա սրա համար եմ ուզում, որ գոնէ դու պատրուակ դառնաս, որպէսզի չտեսնեմ Եւային և հեռանամ, գնամ այստեղից։ Փրկիր ինձ այս դայթակղութիւնից, աղաչում եմ քեզ, Լևոն։ Ուղղակի արգելիր ինձ Մարութեանների մօտ գնալ։ Արա այս բանը եթէ ոչ նրա համար, որ դու ես սիրում ես Եւային, գէթ ի սէր այն մեծ գործի, որին ես ծառայում եմ... Լսո՞ւմ ես, Լևոն, ինչ եմ խնդրում քեզ։

Եւ Բաղէշեանը նայեց Շահեանին այնպիսի յու-

սահմանական աղերսանքով, որ կարծես նրա պատասխանից էր կախուած իր փրկութիւնը։

Սակայն, Շահեանը կանգնած էր շատ սառն և անտարբեր և զարմանում էր, թէ ինչպէս նա չի նկատում, որ ինքը չի հաւատում նրա խօսքերին և նրա վարմունքը համարում է պարզապէս մի դերասանութիւն, որը ոչ մի նպատակ չունի, բացի միայն այն բանից, որ սիրաշահէ իր սիրոն իրենից ստացած հազար ռուբլու փոխարէն։ Շահեանն առանց այն էլ զարշում էր, երբ մտածում էր, որ այդ գումարը տուել էր Բաղէնեանին այն բանի համար, որ նա Եւային ղիջել էր իրեն. իսկ այժմ աւելի ևս զարշեց, տեսնելով, որ Բաղէնեանն էլ ուրիշ նպատակով չէր ընդունել այդ փողը և այժմ սոփեստութիւններով աշխատում էր ծածկել այդ նպատակը։

—Դու ինքդ էլ գիտես, որ... անմիտ բան ես խընդրում ինձնից,—ասաց նա, ուրիշ աւելի մեղմ բառ չը գտնելով «անմիտ» բառի տեղ։—Ի՞նչպէս կարող եմ արդելել, որ Մարութեանների տուն չգնաս։ Ուզում ես՝ գնա, ուզում ես՝ չէ։ Իսկ ինձ, խնդրում եմ, ազատ պահիր այս բանից։

Սառն եղանակով արտասանուած այդ հատու խօսքերն, ըստ երևոյթին, անսպասելի էին Բաղէնեանի համար, որովհետև նա շատ զարմացաւ։

—Սպասիր, Լևոն։ Այդ ի՞նչպէս ես խօսում։ Զլինի՞ թէ որևէ վիրաւորական բան ասացի։ Հմ։

—Վիրաւորական ոչինչ չես ասել ինձ, միայն թէ... ես չեմ հասկանում քեզ,—ասաց Շահեանը, աշխատելով խուսափել Բաղէնեանի սրաթափանց հայեացքից և զգալով, որ պատրաստ է ճշմարտութիւնը նետելու նրա երեսին։

—Այսինքն ի՞նչ չես հասկանում։

—Օրինակ... առաջ իրաւունք էիր խնդրում ինձնից, որ գնաս Մարութեանների մօտ, իսկ հիմա խընդրում ես, որ արգելեմ... Ես չեմ հասկանում, թէ ո՞րտեղից յանկարծ այդպիսի մի իշխանութիւն ձեռք բերի քեզ համար...

—Ինչ ասացի՞ր... իշխանութի՞ւն,—արագօրէն հարցրեց Բաղէնեանը, կարծես կայծակնահար եղած այն մտքից, որ յանկարծ ծագեց իր գլխում։—Ա՜, ուրեմն այն փողը, որ երէկ գիշեր...

Նա ձեռքը պինդ խփեց ճակատին, մատներով հուպ տուեց քունքերը և, կարծես ներքին մի սուր ցաւի խայթոցից, աչքերը փակեց։ Մի բոպէ այդպէս մնալուց յետոյ, ձեռքը յանկարծ հեռացրեց ճակատից, շտապով յետ արեց սիւրտուկի կոճակները, ծոցի գրպանից հանեց նախորդ գիշերը Շահեանի տուած ծրարը և հաստատուն ձեռքով դրեց նրա առաջ, սեղանի վրայ։

—Որպէսզի չկարծես, թէ այդպիսի մի իշխանութիւն տուել եմ քեզ այս հազար ռուբլու փոխարէն, խնդրեմ յետ վերցրու, — ասաց նա Շահեանի համար սպանիչ հանգստութեամբ։

Շահեանը տեղնուտեղը ցամաքեց։

—Սուրէն,—շշնջաց նա։

—Չէ՛, չէ՛, խնդրում եմ,—եռանդով ընդհատեց նրան Բաղէնեանը և ծրարը քաշեց նրա կողմը։—Ես կատակ անել չեմ սիրում։

—Ախ ես... այդպիսի բան չասացի...

—Ա՛խ, այդ միևնոյն է։ Ինձ համար մի բառն էլ, մի ամենաթեթև ակնարկն էլ բաւական էր։ Իմ մասին ամեն բան կարող ես կարծել. բայց, որ կարծել ես, թէ յիմար եմ, սխալուել ես։ Այս փողը, որ տուիր ինձ երէկ գիշեր, վերադարձնում եմ քեզ ամբողջութեամբ։

Ուրիշ հնար չկայ, ուրիշ հնար չեմ տեսնում վարուելու քո կասկածը լսելուց յետոյ...

—Սուրէն, մի՞թէ չես նկատում, որ մորթում ես ինձ քո խօսքերով,—հառաչեց Շահեանը։

—Բայց դու աւելի առաջ մորթեցիր ինձ,—նկատեց Բաղէնեանը անողոք խստութեամբ։—Ինչպէ՞ս,—սկսեց տաքանալ նա։—Ուրեմն ես օգուտ եմ քաղել այն բանից, որ դու անտարբեր չես դէպի Եւան, իսկ Եւան անտարբեր չէ դէպի ինձ։ Ուրեմն ես կամեցել եմ շահագործել ձեր երկուսիդ զգացումները էլ։ Ուրեմն, աւելի պարզ ասած, Եւային ես կամեցել եմ ծախել քեզ վրդով... Գէթ մի ըսպէ, մի վայրկեան մտածի՞լ ես, թէ ի՞նչ հրէշաւոր կասկած է այդ... Այս փողը պիտի ուղարկէի այսօր, և ի՞նչ լաւ է, որ դեռ չեմ ուղարկել, թէ չէ՝ խօ կը գժուէի... Եթէ դու այդպիսի մի հրէշաւոր կասկած տարել ես իմ մասին, ուրեմն ի՞նչ զարմացք, որ այն էլ կարծած լինիս, թէ ես քեզ խաբել եմ, թէ ընկերներիս սև մատնութեան զոհ դնալը հնարել եմ, թէ այս փողը նրանց փրկութեան համար չէ, այլ շորթել եմ քեզնից իմ անձիս համար... Օ՜, ինչպէս հոգիս չէր խաբում ինձ, ինչպէ՞ս չէր խաբում...

Եւ Բաղէնեանը նստեց, ըստ երևոյթին, զօրեղապէս յուզուած և գլուխն առաւ ձեռքերի մէջ։

Շահեանը կանգնած էր դունատ ու կարկամած և նայում էր Բաղէնեանին սարսափով։

—Սուրէն,—թոթովեց նա,—ինչո՞վ կարող եմ համոզել քեզ, որ սխալւում ես...

—Ո՛չ մի բանով,—աղաղակեց Բաղէնեանը և վեր թռաւ տեղից, աչքերը փայլեցնելով։ Նա վերցրեց սեղանի վրայ դրուած մի բաժակ, ուժգին թափով զարկեց յատակին և փշրեց։—Միացրու այս կտորտանքը

խնդրեմ, ամբողջացրու այս բաժակը, եթէ կարող ես։ Այսպէս փշրեցիր դու իմ սիրտը։ Ես քեզ այնքան սիրում, այնպիսի ջերմ փափագով ուզում էի վերադարձնել քեզ քո խնդրած հոգու անդորրութիւնը, որ պատրաստ էի զոհելու իմ ամենալաւ, իմ ամենաքնքոյշ զգացումները. մինչդեռ ի՞նչ արիր դու ինձ, ի՞նչ բացատրութիւն կամեցար տալ իմ այդ անկաշառ ձգտումին... Եւ այդ բոլորն այս չարաբաստիկ, այս ատելի փողի պատճառով։ Յե՛տ վերցրու, յե՛տ վերցրու, խնդրում եմ, այս փողը, և թող այլևս ո՛չ մի խօսք չլինի մեր միջև Եւայի մասին։ Ես այժմ գիտեմ, թէ ինչ կանեմ, և կապացուցանեմ քեզ, որ ես, այնուամենայնիւ, գիտեմ կատարել եմ ընկերական պարտքը...

Եւ, որովհետև Շահեանը մոտենալ անդամ չկամեցաւ սեղանի վրայ դրուած փողի ծրարին, Բաղէնեանը վերցրեց այն և զօրով ուզեց դնել նրա ձեռքը։ Շահեանը ձեռքերը ետեւը տարաւ և յետույետ քաշուեց։ Ծրարը ընկաւ յատակի վրայ։

—Վերցրու, թէ չէ՝ վառարանը կը գցեմ,—սպառնաց Բաղէնեանը։

—Դցիր, բայց չեմ վերցնիլ։

—Որպէսզի ինձ միանգամա՞յն ստորացրած լինիս,—հարցրեց Բաղէնեանը չարագուշակ հանգստութեամբ, նայելով նրան յոնքերի տակից։

—Ոչ, որպէս զի ապացուցանեմ, որ դու... ա՜նարդար ես,—եռանդով վրայ բերեց Շահեանը։

Բաղէնեանն այլևս ոչինչ չասաց, նոյն չարագուշակ հանգստութեամբ կռացաւ, վերցրեց փողի ծրարը և վճռական քայլերով դիմեց դէպի վառարանը, որի մէջ ճրթճրթում էր կրակը։

Նոյն միջոցին Շահեանն առաւ գլխարկը և դուրս փախաւ սենեակից։

Երբ նա արդէն փողոցումն էր և քայլում էր սառած ձիւնի վրայ, նոր նկատեց, որ կրկնակօշիկները թողել է հիւրանոցում։ Բայց ուշադրութիւն չդարձրեց այդ բանին և շտապած՝ շարունակ կրկնում էր մեքենայաբար. «Մի՞թէ սխալուեցի, մի՞թէ սխալուեցի...»։ Այժմ չէր յիշում, թէ ինչ ասաց իսկապէս, որ Բաղէնեանն այնպիսի թափանցողութեամբ հասկացաւ իր ներքինը և ջախջախեց իրեն այնպիսի անողոք խստութեամբ։ «Անկարելի է, որ այդ էլ դերասանութիւն լինէր»—մտածում էր նա, մտապատկերելով փողի ծրարն այնպիսի յամառութեամբ վերադարձնելու տեսարանը։

XVII

Վերջին օրերը Եւան շատ անսիրտ և անկանոն կերպով էր պարապում ընկերուհիների հետ։ Մի-երկու անգամ նոյն իսկ հիւանդ ձևացաւ և չընդունեց նրանց։ Մինչդեռ սկզբում գործին կպել էր իր առաքելութեանը հաւատացող մոլեռանդ միսիոնարի եռանդով։ Անընդհատ զրոյց ու ծիծաղ սիրող, մշտատև շարժունութեան ու աղմուկի պէտք զգացող այդ աշխոյժ, այդ անհանգիստ աղջիկն այժմ դարձել էր լռակեաց, մենակեաց, անհամբեր և ջղային։ Հօր սովորական կատակները նրան անտանելի էին թւում. իսկ երբ մայրը հոգացողութեամբ հարցնում էր նրան, թէ ինչ է պատահել, քիչ էր մնում լաց լինէր բարկութիւնից։ Ինչ որ տենդային անհանգստութիւն էր տիրել նրան։ Տանը ոչ մի բանի վրայ սիրտ չունէր. որևէ գործ կատարելիս ձգում էր կիսատ. Աշխէնին գրելիք մի նամակ մի երես չգրած՝ պատռեց դէն ձգեց։ Երեկոները նրա ականջը շարունակ դռան կողմն էր, և ամեն անգամ, երբ լսում էր դռան զանգակի ձայնը, նրա սիրտը թրթռում էր ցնցողաբար։ Նրա մտքերը, հակալ-հակալ ընկած հաւերի նման, թռչում էին առարկայից առարկայ և ոչ մի բանի վրայ չէին կարողանում կանգ առնել։

Զափից դուրս տպաւորուող ընտաւորութիւն ունենալով, Եւայի վրայ միշտ խոր ազդեցութիւն էր ունենում առհասարակ այն ամենը, ինչ որ այսպէս թէ այնպէս, աւելի կամ պակաս հերոսութեան կնիք էր կրում։ Իր հեռացած եղբօրը պաշտում էր ոչ այնքան նրա համար, որ նրա քոյրն էր, որքան նրա համար, որ Արմենակի մէջ հերոս էր տեսնում։ Եթէ այնքան սիրում էր հօրեղբօր աղջկան, պատկառում էր նրանից, այդ միայն նրա համար, որ Աշխէնը կամքի այնպիսի ոյժ, հոգու ամրութիւն և կատարեալ անձնուրացութիւն էր ցոյց տալիս։ Իր չափազանց վառ երևակայութեամբ Եւան արտասովոր իրականին միշտ իդէալական գոյն էր տալիս։ Ամեն ինչ, որ վեհ էր, կրկնակի մեծութիւն էր ստանում նրա աչքում։ Բաւական էր մի չնչին տպաւորութիւն, այնուհետև երևակայութիւնն իր գործն էր տեսնում. ինչպէս սերմը պարարտ հողի մէջ, այդ տպաւորութիւնն աճում, զարգանում էր նրա հոգու մէջ ամբողջ էութիւնը։

Այդ պատճառով, ահա, նա զերծ չէր մնացել Բաղէնեանի զօրեղ ազդեցութիւնից։ Այդ ազդեցութեան սաղմն ընկել էր նրա հոգու մէջ, անշուշտ, այն օրից, երբ Բաղէնեանն ազատեց նրա փոքրիկ եղբօրը կառքի կատաղած ձիերի ոտների տակ ջարդուելուց, և այնուհետև աճել, զարգացել էր այն օրից, երբ ծանօթացաւ այդ անվեհեր երիտասարդի հետ։ Առաջին անգամն էր, որ նրա կուսական սիրտն սկսել էր բաբախել սիրոյ քաղցրատենչ զգացումով։ Եւ թէպէտ, ինչպէս առհասարակ լինում է անդրանիկ սիրոյ գիտակցութեան առաջին օրերին, նա մի կողմից բնազդական անհասկա-

նալի վախկոտութեամբ ուզում էր չճանաչել այդ նոր զգացումը, կարծես այդ մի յանցանք լինէր,—այնուամենայնիւ, միւս կողմից, երջանիկ ինքնամոռացութեամբ, գողունի քաղցրութեամբ շոյում, փայփայում էր իր հոգու խորքում այդ նոր զգացումը, կարծես անգին մի գիւտ լինէր այդ, որի կորուստն անտանելի վիշտ պիտի պատճառէր իրեն։

Եւ այդ վիշտը, աւելի՝ քան կարծում էր, զգաց նա, երբ Շահեանից անսպասելի կերպով տեղեկացաւ, որ Բաղէնեանը շուտով մեկնելու է։ Գրեթէ մի ամիս էր, որ չէր տեսել Բաղէնեանին, և այդ բանը առանց այն էլ մեծ կարօտ էր յարուցել նրա մէջ. իսկ այժմ նրան թուաց, թէ այլ ևս երբէք տեսնելու չէ իր սիրած երիտասարդին։

Այդ գիշեր քնել չկարողացաւ և իսկապէս այդ օրուանից զգաց, թէ ո՞ր առտիճան գերել է Բաղէնեանն իր սիրտը։ Հետևեալ առաւօտեան չկարողացաւ զսպել իրեն և հօր կողմից Բաղէնեանին գրուած հրաւիրատոմսի տակ աւելացրեց այն մի քանի խօսքը, որ կարդաց Շահեանը Բաղէնեանի մօտ գնացած ժամանակ։ Բայց որքան մեծ եղաւ նրա յուսահատութիւնը, երբ այդ օրը ոչ Բաղէնեանն եկաւ և ոչ որևէ պատասխան ստացուեց նրանից։ Սակայն, ճաշին տուն եկած ժամանակ հայրը լուր բերեց, թէ փողոցում հանդիպել է Բաղէնեանին։ Բաղէնեանը շատ ներողութիւն է խնդրել, ասել է, որ մի շաբաթ դարձեալ Թիֆլիսումն է, որ չավաղանց զբաղուած է և անպատճառ կայցելի, հէնց որ աղատ ժամանակ գտնի։

Այնուհետև անցաւ դարձեալ մի երկու օր Եւայի համար անտանելի սպասողական դրութեան մէջ։

Բաղէնեանն այցելեց չորրորդ օրը, կէսօրից առաջ։ Մարութեան ամուսիններն տանը չէին։ Փոքրիկ Սուրէնը մանկապարտէզումն էր։ Եւան մնացել էր մենակ և փակուած էր իր սենեակում։ Այդ ժամին նա ամենևին չէր սպասում Բաղէնեանին, այնպէս որ, երբ աղախինը մտաւ և յայտնեց հիւրի գալուստը, նա գունատուեց և սրտի յանկարծական ուժգին բաբախումից քիչ մնաց ուշագնաց լինէր։

Անցաւ բաւական երկար ժամանակ, մինչև որ կարողացաւ տիրապետել իրեն։ Նա վճռեց բոլորովին հանգիստ պահել իրեն և նախապէս զգաց, որ անկարող է։ Մինչև այժմ նրա բոլոր ցանկութիւնն այն էր, որ գէթ մի անգամ էլ տեսնի Բաղէնեանին, խօսի նրա հետ. այժմ գիտէր, որ այնտեղ, հիւրասենեակում, սպասում է իրեն իր ցանկալի երիտասարդը. սակայն ոչ մի ժամանակ այնպիսի անվստահութիւն, այնպիսի վախկոտութիւն չէր զգացել, ինչպէս այժմ, երբ արդէն իր ցանկութիւնը կատարուած տեսնելու համար մնում էր, որ մտնի հիւրասենեակ։ Համ ուզում էր մտնել, համ չէ։ Զգում էր, որ թէ վախենում և թէ ամաչում է Բաղէնեանից։ Թւում էր նրան, թէ Բաղէնեանն արդէն ամեն բան գիտէ կամ իրեն տեսնելուն պէս ամեն բան պիտի հասկանայ, և այդ կասկածը կաշկանդում էր նրան։ Նա փափագեց, որ հայրը կամ մայրը տանը լինէին, որ ինքը մենակ չմնար Բաղէնեանի հետ։ Նրան թւում էր, թէ այնտեղ, հիւրասենեակում, սպասողն իր ծանօթ Բաղէնեանը չէ, այն Բաղէնեանը, որի հետ խօսել, վիճաբանել, նոյն իսկ կատակներ է արել, այլ—միանգամայն անծանօթ մի մարդ, ահարկու մի իշխանաւոր, որի մի հատիկ խօսքից է կախուած իր բաղդը, իր ապագան, իր ամբողջ կեանքը։

Նա ձեռքերով կամաց շփեց դէմքը, մազերը շտկեց, կամաց, կարծես չկամենալով, վերկացաւ և դուրս գնաց, զգալով, որ սիրտը նորից սկսել է բաբախել արագօրէն։

XVIII

Հիւրասենակում Բաղէնեանը կանգնած էր լուսամուտի առաջ և մտազբաղ հայեացքով նայում էր դէպի դուրս։ Վնասուած ձեռքը տրագիքական հանգստութեամբ հանդչում էր վզովը կախ արած սև շորի մէջ։ Դռան բացուելու վրայ, կարծես, յանկարծ սթափուեց իր մըտախոհութիւնից և, արագ շուռ գալով, առաջ շտապեց դէպի Եւան։

Եւան կանգ առաւ և ձեռքը լուռ մեկնեց նրան։

Բաղէնեանը սեղմեց ձախ ձեռքով։

—Ա՜խ, ինչ անյարմար է այսպէս,—կամաց արտասանեց Եւան և թոյլ կերպով ժպտաց.—ես աջ, դուք ձախ...

Բաղէնեանը ոչինչ չասաց և գլուխը, յայտնի չէ ինչու, թեթև խոնարհեց։ Լրջութիւնը չէր հեռանում նրա դէմքից։

Եւայի անձկալի հայեացքն անվստահօրէն թռաւ նրա կարճ խուզած սևաթոյր մազերի վրայով։

—Ներեցէք, դուցէ ձեզ երկար սպասեցնել տուի,—ասաց նա։—Բայց ես փոքր ինչ տկար եմ...

—Այդ ես տեսնում եմ,— կամաց արտասանեց Բաղէնեանը, տխուր-մտախոհ հայեացքով նայելով նրա դժգոյն և բաւական նիհարած դէմքին։—Եւ, ներեցէք, դուցէ ես անյարմար ժամանակ եմ եկել,—աւելացրեց նա։

—Ո՛չ, ո՛չ։ Ընդհակառակը։ Խնդրեմ նստեցէք։ Այսօր բոլորովին մենակ եմ մնացել տանը։ Լաւ է, որ եկել էք։ Փոքր ինչ կըխօսենք,—իր համար անսպասելի ազատութեամբ շարեց իրար ետևից Եւան և նստեց բազկաթոռի վրայ։

Բաղէնեանը նոյնպէս նստեց, բայց նրանից բաւական հեռու։ Նրա բոլոր շարժումների մէջ տարօրինակ զգաստութիւն և լրջութիւն էր նկատւում։

—Բանի՞ օր է, մենք ձեզ սպասում էինք։ Ինչո՞ւ չէիք գալիս,—հարցրեց Եւան։

—Անցեալ օր պատճառը յայտնեցի ձեր հօրը։ Երկու ընկերներիս պատահած դժբաղդութիւնն ինձ միանգամայն խառնել էր։ Բանն այն է, որ ես էլ վտանգից ազատ չէի... Բայց այժմ, փառք Աստուծոյ, վտանգն անցած կարելի է համարել։

Եւան ուզում էր հարցնել, թէ այդ ինչ վտանգ էր, բայց զարմանքով տեսնում էր, որ այլ ևս չի տիրապետում իրեն այնպէս ազատ, ինչպէս պարահանդէսի գիշերը ժողովարանի սրահում Բաղէնեանի հետ խօսելիս։ Նրան շփոթում էր Բաղէնեանի աչքերի մէջ նկատուող տխուր մտախոհութիւնը և այն զգաստ-հանդարտ եղանակը, որով խօսում էր նա։ Եւայի ուշադրութիւնից չէր վրիպել և այն հանգամանքը, որ Բաղէնեանը նստել էր բաւական հեռու։

—Դուք ուզում էիք նամակ տալ ինձ ձեր եղբօրը տանելու,—ասաց Բաղէնեանը։—Այժմ եկել եմ դրա համար, որովհետև այս օրերս գնալու եմ։

—Գնալո՞ւ էք,—մեքենայաբար հարցրեց Եւան։

—Ինձ հրամայուած է ճանապարհուել վաղը։ Բայց եթէ վաղը չկարողացայ,—մի գործ կայ, որ դեռ չեմ վերջացրել,—միւս օրն անպատճառ կըճանապարհուեմ։ Նամակը պատրաստ է։

—Նամա՞կ...Նամակը...,—արտասանեց Եւան, զգալով, որ մտքերը խառնուում են գլխում, որ ինքն այդ միջոցին ամենևին չի հետաքրքրուում նամակով, որ ինքն ուրիշ բան ունի ասելու, որ այդ բանն ահագին կարևորութիւն ունի իր համար։ Նա գիտէր, թէ ինչ

բան էր այդ, բայց չգիտէր, թէ ինչպէս պիտի արտայայտէր։ Բաղէնեանի տարօրինակ լրջութիւնն ու վճռականութիւնը պարզապէս շփոթել էին նրան։ Նրա սիրտը պատառւում էր, որ Բաղէնեանն իր հեռանալու մասին խօսում էր այնքան անփոյթ կերպով։ Նրան թւում էր, թէ Բաղէնեանը, իր առաջ նստած, հեռզհեռէ հեռանում, անմատչելի է դառնում իրեն և շրջապատւում է ինչ որ վեհ, ինչ որ խորհրդաւոր մշուշով, որի մէջ յանկարծ պիտի չքանայ անհետ, իր տեղ թողնելով իր սիրելի, իր անձկալի և անշօշափելի ուրուականը միայն...

Եւան յուսահատական մի շարժում գործեց և ձեռքերով սկսեց շփել ծնկները չղաձգաբար։—Սպասեցէք, —ասաց նա, աշխատելով բռնի տիրապետել իրեն։—Մի՞թէ դուք այլ ևս չէք հանդիպելու մեզ։

—Հաղիւ թէ կարողանամ, օրիորդ։

—Ուրեմն... Ուրեմն այս մեր վերջին տեսակցութիւնն է։

—Ես կարծում եմ։

Եւան այլևս չհասկացաւ, թէ ինչ է պատահում իրեն։ Նրա գլուխը կարծես պտտւում էր տենդով բռնուածի պէս։ Մի բան ալեկոծում էր նրա ներսն ուժգնօրէն և, կարծես, ուզում էր յանկարծ դուրս ժայթքել։ Սաստիկ անհանգիստ, վեր կացաւ, նստեց մի ուրիշ աթոռի վրայ, մէջքը լուսամուտի կողմն անելով, և սկսեց աջ ձեռքով պինդ շփել ծնկան վրայ դրած ձախ ձեռքի երեսը։ Նրա դէմքն այժմ դանւում էր ետևից ներս թափանցող լոյսի հակառակ կողմը, կիսախաւարի մէջ։ Մազերը սանրած էր դէպի վերև և հաւաքած գագաթի վրայ, որից արտաքուստ աւելի հասակաւոր կնոջ էր նմանում, քան նորատի մի աղջկայ։ Հրաշալի անբիծ սպիտակութեամբ փայլում էր նրա երկայն վիզը,

որ լիքը նստուածքով բարձրանում էր մոխրագոյն հագուստի օձիքի միջից և այնտեղ, ուր մտնում էր մազերի մէջ, թուխ թաւշի գոյն ունէր։

—Իսկ այնտեղից... Ե՞րբ էք վերադառնալու,— հարցրեց նա, ահագին ջանք գործ դնելով, որ խօսքի թելը չկորցնի։

Բաղէնեանը ժպտաց։

—Դեռ ևս հարց է, օրիորդ, թէ այլևս կը վերադառնամ արդեօք,—ասաց նա մելամաղձօրէն։

—Ի՞նչպէս...

—Կրակի մէջ նետուողը կարող է ասել, թէ դուրս կըզայ այնտեղից ողջ և անվնաս...

Եւան ցնցուեց, և նրա հայեացքը քարացաւ Բաղէնեանի տխրօրէն ժպտող աչքերի մէջ։

—Սպասեցէք... Ես ձեզ հասկանում եմ... Ուրեմն...

—Ուրեմն էլ ի՞նչ։ Նա, ով իր անձը նուիրում է այսպիսի մի գործի, չի կարող երաշխաւորել իր վաղուայ կեանքի համար,—վրայ բերեց Բաղէնեանը շատ անփոյթ կերպով, յետոյ յանկարծ վեր կացաւ և ջղուտ քայլերով սկսեց անցուդարձ անել փափուկ գորգի վրայ։ —Բայց մի բան ինձ սաստիկ զայրացնում է,—ասաց նա իրենից դժգոհ մարդու եղանակով։—Վերջին օրերս զարմանալի մելամաղձութիւն է տիրել ինձ, հակառակ կամքիս։ Ես նախապաշարումներ չեմ ճանաչում և առաւել ևս հեռու եմ միստիկականութիւնից։ Բայց, չը-գիտեմ ինչու, վերջին օրերս, կարծես, համ նախապաշարուած եմ դարձել, համ միստիկ։ Աջ աչքս շարունակ խաղում է. ասում են դա մահուան նշան է... Երէկ էլ մի երազ տեսայ. ինչ-որ սև ու տձև ոգիներ, ագռաւների նման, իջել էին մի մարդու գլխի վրայ և չգիտես՝ յոշոտում էին, թէ զմռսում... Իսկ նրանց գլխին,

վերևում, օդի մէջ սաւառնում էին, միշտ միևնոյն շըրջանակի մէջ պտտուելով, ուրիշ ոգիներ փոքրիկ ձիւնափայլ թևերով և երգում էին զարմանալի ներդաշնակ մի երգ, որից ես յիշում եմ այս խօսքերը միայն. «Ամրիւնը կարմիր, արիւնը կարմիր միշտ սրբանում է, երբ թափւում է»։

Բաղէնեանը նայեց Եւային և կամաց ծիծաղեց։

Եւան նայում էր Բաղէնեանին, և նրա հայեացքն անմիտ սարսափ էր արտայայտում։

—Սրանք, ի հարկէ, զրդռուած երևակայութեան արդիւնք են,—շարունակեց Բաղէնեանը։—Բայց զարմանալին այս է, որ մարդ որքան աշխատում է չհաւատալ այսպիսի յիմար բաների, այնքան աւելի կաշկանդւում է դրանց ազդեցութեան տակ։ Առաջ ես ամենևին չէի մտածում, թէ պիտի մեռնեմ. բայց այժմ ինչ որ նախազգուշացում, կարծես, շարունակ փսփսում է ականջիս, որ իմ մահը շատ շուտ պիտի լինի... Է՛հ, ինչ անենք,—կարճ մտախոհ լռութիւնից յետոյ աւելացրեց նա անվութիւնն և տխուր ժպիտով նայեց Եւային։—Ոչ հայր ունիմ, ոչ մայր, ոչ եղբայր, ոչ քոյր, —ոչոք չունիմ, որ դարդ անի ինձ համար...

—Եւան զգաց, որ մի բան յանկարծ վեր նետուեց սրտից դէպի կոկորդը և սկսեց խեղդել։ Անհուն ցանկութիւն զգաց վեր թռչելու տեղից, ուղղակի փարելու Բաղէնեանի վզին և աղաղակելու. «Անտաստուած, մի՞թէ չես զգում, որ ես քո քոյրն եմ, աւելի՝ քան քոյրը... և չեմ թողնիլ, որ մեռնես...»։ Բայց նա միայն մատներով ցնցողաբար սեղմեց աթոռի ծայրերը, կարծես աշխատելով պահել իրեն, որ այդպիսի խելացնոր բան չանի։

—Վերջին ժամանակս յանկարծ ինձ շրջապատուած եմ տեսնում այնպիսի անակնկալ և ծանր հանգամանքներով, որ մահը պարզապէս ցանկալի է դարձել ինձ համար,—նորից խօսեց Բաղէնեանը մելամաղձօրէն, շարունակելով անցուդարձ անել սենեակում, Եւայի առաջ։—Բայց մարդը զարմանալի եսասիրական մի զգացում ունի. ուզում է իր հեւից թողնել գէթ մէկը, գէթ մի մերձաւոր, մի սրտակից, որին իր մահով վիշտ լինի պատճառած։ Եթէ ես ունենայի այդպիսի մէկը, որ արտասուքի գէթ մի քանի կաթիլ թափէր գերեզմանիս վրայ...

Բաղէնեանը լռեց, անցաւ դէպի լուսամուտներից մէկը և ճակատը սեղմեց ապակուն։

Եւան զգում էր, որ եթէ նա դարձեալ այդպիսի մի քանի խօսք արտասանի, այլևս չի կարող զսպել իրեն և անպատճառ կանի այն խելացնոր բանը, որը չանելու համար այնպէս պինդ պահում էր իրեն աթոռի վրայ, մատների մէջ ցնցողաբար սեղմելով աթոռի ծայրերը։ Նա վախենում էր շարժուել տեղից և նայել եւաները, ուր կանգնած էր Բաղէնեանը։ Նրան թւում էր, թէ այնտեղից, դարան մտած, կամաց-կամաց մօտենում է իրեն ահարկու մի բան, որ յանկարծ վրայ պիտի ընկնի և պիտի խլի, փախցնի իրեն փոթորկի պէս ուժգնօրէն...

—Աշխարհիս երեսին երկու բան կայ հզօր և ամենակարող՝—սէրը և մահը,—հնչեց Եւայի ականջին Բաղէնեանի ձայնը հեւից այնքան հանգիստ և տխրագին, որ կարծես գերեզմանից էր հնչում։—Մի ամբողջ ամիս չէի գալիս ձեր տուն... և այսօր էլ չէի գալ, եթէ... դուք չստիպէիք... և եթէ չհամոզուէի վերջի վերջոյ, որ սիրոյ դէմ մաքառելը նոյնքան անկարելի է, որքան և մահի դէմ։ Այժմ, որ եկել եմ, այլ ևս չեմ կարող զսպել ինձ և պիտի ասեմ, որ... սիրում եմ ձեզ...

Եւան մէկ վերկացաւ, բայց նորից նստեց, կար-

ձեռ ոյժ չունենալով ոտի վրայ կանգնած մնալու։ Նրա ամբողջ մարմինը թրթռաց հրաշալի, խելագարեցնելու չափ հրաշալի մի ցնցումով։ Շունչն իրեն քաշելով, նա տեղնուտեղը մարեց. կարծես մի հրաշալի երազ էր այն, որ իր ամենափոքր շարժումից անգամ կարող էր չքանալ։

Բազէնեանը կամաց դարձաւ Եւայի կողմը, մի բոպէ ինչ-որ օտարոտի հայեացքով նայեց պերճ վզին, յետոյ մի քանի քայլ արաւ դէպի նա, բայց յանկարծ ճանապարհը ծռեց և անցաւ դռան կողմը։

—Ներեցէք, ես... ես գնում եմ,—ասաց նա։

Եւան վերթռաւ տեղից և ձեռքերը տարածեց դէպի նա։

—Կացէք...

Բազէնեանն արագ յետ դարձաւ։

Եւայի ձեռքերն ու գլուխն ընկան նրա ուսերի վրայ։ Ահա, վերջապէս, այն ահարկու բանը, որ եկաւ և յափշտակեց նրան փոթորկի ուժգնութեամբ... Յանկարծ նա ցնցուեց և դուրս խլուեց Բազէնեանի գրկից։ Կարծես տենդի մէջ, առաւ Բազէնեանի ձեռքը և դէմքն այնքան մօտեցրեց նրա դէմքին, որ նա զգում էր Եւայի տաք շնչառութիւնը։

—Դու չես մեռնիլ,—շշնջաց Եւան, խիստ արագ շնչելով։

Բազէնեանը փորձեց նորից գրկել նրան, բայց նա թոյլ չտուեց։

—Դու չես մեռնիլ... Ասա՝ չէ։

—Կըմեռնեմ երջանկութիւնից...

—Ձեմ ուզում... Ասա՝ չէ։

—Չէ։

—Ինձ էլ կըտանես հետդ...

—Եւա...

—Ասա՝ այո։

—Այո։

Եւան շուռ եկաւ, մէջքով կպաւ Բազէնեանի կըրծքին և վիզը ձգեց նրա ուսի վրայ։ Անհուն երջանկութեան հրաշալի մի ժպիտ հալուում էր նրա կիսաբաց շրթունքների վրայ և կիսախուփ աչքերի մէջ, որոնք նայում էին Բազէնեանի աչքերին։

Բազէնեանը ելեքտրականացել էր։ Նա ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս ետևից գրկեց Եւայի իրանն և, գլուխը կամաց-կամաց առաջ տանելով, շրթունքները պինդ սեղմեց նրա ծնօտի տակ...

...Յանկարծ Եւան ճչաց և դուրս պրծաւ նրա գըրկից այնպիսի ասստկութեամբ, որ Բազէնեանը մի երկու քայլ յետ մղուեց։ Նա կանգ առաւ դողալով և նայեց Բազէնեանի աչքերին չռած աչքերով։ Եւ նկատեց այնտեղ ինչ-որ անծանօթ, ինչ-որ սարսափելի մի բան, որ կարծես խլել էր նրանից այն ամենը, ինչ որ մարդկային է... Եւային թուաց, թէ իր աչքերի առաջ մի բոպէի մէջ հրաշք կատարուեց, անաւոր մի հրաշք, որով կրթուած մարդը յանկարծ իջել էր մինչև վայրենու աստիճանը, որով բանական արարածը դազան էր դարձել... Բնազդական սոսկումով նա յետ ու յետ գընաց անգիտակցաբար և քիչ մնաց, որ նորից ճչայ, որովհետև նրան թուաց, թէ այդ գազանն ուզում է յարձակուել իր վրայ և, եթէ յարձակուի, այլևս փրկութիւն չկայ...

Նա շուռ եկաւ և խելագարի պէս դուրս վազեց սենեակից։

Բազէնեանն ուշքի եկաւ և վախեցած նայեց չորս կողմը. կարծես մէկը պարան լինէր մտած սենեակում և, յանկարծ դուրս պրծնելով, պիտի յարձակուէր իր վրայ։ Յետոյ հանգստութեամբ ուղղեց փողկապը և դի-

մեց դէպի դուրս։ «Շտապեցի... շատ շտապեցի...» մը-տածում էր նա մեքենայաբար, նախասենեակում վերարկուն և կրկնակոշիկները հագնելիս։

Դուրսը, փողոցում, հէնց դռան մօտ հանդիպեց Թեկլէն, որը տուն էր գալիս։

—Ա՛խ, դուք եկել էք, վերջապէս,—բացականչեց նա ուրախացած։

—Եւ գնում եմ, տիկին,—վրայ բերեց Բազէնեանը ժպտալով։

—Գնում է՞ք... ի՞նչ էք ասում։

—Օրիորդը տկար է, չուզեցի անհանգստացնել և, բացի դրանից, ժամը երկուսին անպատճառ պէտք է լինեմ մի տեղ, իսկ այժմ (Բազէնեանը նայեց ժամացոյցին) երկուսից քառորդ պակաս է։

—Դէ, ներս եկէք, լաւ։ Ամուսինս էլ շուտով կը-գայ։ Ճաշին կըմնաք մեզ մօտ։

—Հաւատացնում եմ, տիկին, չեմ կարող։ Այժմ չեմ կարող ոչ մի պայմանով։ Կաշխատեմ գալ երեկո-յեան. իսկ եթէ երեկոյեան չկարողացայ գալ, կը գամ վաղն անպատճառ։ Մի քանի օր դարձեալ այստեղ եմ։

Թեկլէն թախանձեց, որ անպատճառ գայ, ասաց, որ իրենց որդուն տանելիք նամակն ահագին կարևո-րութիւն ունի իրենց համար, և մեծ անհանգստու-թեամբ սկսեց գանգատուել, որ երկար ժամանակ է նը-րանից ոչ մի տեղեկութիւն չունին։

Բազէնեանը նորից խոստացաւ, որ անպատճառ կըգայ և, բաժանուելով տիկին Մարութեանից, շտապով հեռացաւ։ «Շտապեցի... շատ շտապեցի» — շարունակ կրկնում էր նա մտքումը Եւայի հետ ունեցած իր վար-մունքի մասին։

XIX

Թեկլէն աղջկան գտաւ իր սենեակում չափազանց տարօրինակ դրութեան մէջ։ Եւան նստած էր աթոռի վրայ և, կարծես, սառել էր նստած տեղը։ Դէմքը սպի-տակել էր քաթանի պէս։ Զռած աչքերի մէջ դեռ ևս նկատելի էին սարսափի հետքերը։ Կուրծքը նկատելի կերպով բարձրանում ու ցածրանում էր, կարծես վա-զել էր երկար տեղ ու այժմ հազիւ էր շունչը յետ բե-րում։ Դռան բացումը երկիւղի զօրեղ ցնցում պատճա-ռեց նրան։

—Ե՛ւա, ի՞նչ է պատահել քեզ,—կանչեց մայրը վախեցած։

Եւան իր չռած աչքերով նայեց մօրը, մի բոպէ ոչինչ չկարողացաւ արտասանել, յետոյ շատ հանգիստ ձայնով պատասխանեց։

—Մի վախենար, մայրիկ, ոչինչ չկայ. յանկարծ վատ դառայ։

Նրա խաղաղ ձայնը բաւական հանգստացրեց մօ-րը։ Մայրը նկատեց սակայն, որ նրան առանց լուրջ բժշկութեան թողնել անկարելի է, որ այդ բոլորը կաու-քի կատաղած ձիերից վախեցած լինելու հետևանքն է և, վերջիվերջոյ, ստիպեց աղջկան, որ պառկի։ Եւան անխօս հնազանդուեց մօրը և պառկեց։ Նա ուզում էր, որ մայրը շուտով հանգիստ թողնի իրեն, որպէս զի կա-րողանայ կարգի դնել իր մտքերն ու զգացումները, ո-րոնք մի կատարեալ քաօս էին կազմում նրա մէջ։

Բայց և այնպէս, մօր դուրս գնալուց յետոյ էլ, Եւան երկար, շատ երկար ժամանակ չէր կարողանում կատարելապէս ուշքը գլուխը ժողովել։ Այնտեղ, հիւրա-սենեակում կատարուած իրողութիւնն իր վերջաբանով

հին ի վեր ցնցել էր նրա հոգեկան աշխարհը։ Այդ բոլորն այնքան անսպասելի էր նրա համար, նրա մտքից այնքան հեռու էր Բաղէնեանի հետ ունեցած խօսակցութեան վերջաբանը, որ նա կասկածում էր, թէ չլինի՞ այդ բոլորը երազի պէս մի բան էր միայն, այլ ոչ կատարուած իրողութիւն։ Այդ կասկածն այնքան աւելի բնական էր թւում նրան, որքան երաշ համարած իրողութիւնը, անսպասելի լինելով հանդերձ, կատարուել էր արագ, գրեթէ վայրկենաբար։ Մինչև այժմ էլ նա, կարծես, զգում էր Բաղէնեանի ծանր, սարսափ ազդող տաք շնչառութիւնն իր ծնօտի տակ... Նա ձեռքը քսեց ծնօտի տակ և նոր զգաց, որ ցաւում է այդտեղ։ Վեր կացաւ, նայեց հայելու մէջ և տեսաւ, որ ծնօտի տակ, Բաղէնեանի շրթունքների կպած տեղը կարմրել է և նոյն իսկ առանձին հետքեր է կրում։ Սակայն, Եւայի վրայ ամենից աւելի սարսափ էին բերել Բաղէնեանի աչքերը, առաջուայ այն գեղեցիկ, մտախոհ, թախծալի աչքերը... Եւային թուաց, որ երբ շները կատաղում են, նրանց աչքերն էլ այդպէս են փոխւում...

Սիրոյ, մանաւանդ իր սիրոյ մասին Եւան չափից դուրս վեհ և անպայման մաքուր գաղափար ունէր, որպէսզի կարողանար հաշտուել Բաղէնեանի աչքերի մէջ նկատած փոփոխութեան հետ,—մի փոփոխութիւն, որ ամէն անգամ մտապատկերելիս ընդդէմ դող էր զգում մարմնի մէջ... Եթէ նա սիրել էր Բաղէնեանին, եթէ իր անարատ սիրոյը նուիրել էր նրան, դրա պատճառն այն էր միայն, որ Բաղէնեանի մէջ մսից և արիւնից կազմուած մարդ չէր տեսել, այլ գերբնական մի արարած, մի իդէալ, որի մէջ տեղ չպիտի ունենար ախտաբանական մարդը... Եւան նոր էր մտածում, որ այդ թերևս շատ անհեթեթ մի պահանջ էր իր կողմից, թերևս այդպիսի մարդ չկայ աշխարհիս երեսին, որովհետև չի կարող լինել, որովհետև մարդը, ինչքան էլ որ այս կամ այն կերպ իդէալ ներկայանայ, էլի նոյն մսից ու արիւնից կազմուած մարդն է,—բայց սիրոյ սրբագործող աշխարհում, որ նոյնքան անիմանալի է, որքան և աստուածային էութիւնը, մարդու մէջ, Եւայի կարծիքով, իսպառ պիտի ոչնչանար անասնականը և շնայինը, կամ գոնէ այդ անասնականն ու շնայինը պիտի ստանար աստուածային պատկերը կրող արարածին վայել ամենաբարձր, խելացի արտայայտուն։ Իր միամիտ անմեղութեամբ Եւան հաւատում էր սիրոյ սրբագործող այդ զօրութեանը, և որքան մեծ էր այդ հաւատը, այնքան սարսափելի—հիասթափութիւնը։ Նա տեսաւ, որ ժամանակակից քաղաքակիրթ մարդը սիրոյ, թերևս աւելի՝ քան ուրիշ բանի, մէջ նոյնն է, ինչ որ նախատիպ մարդն իր ամենակոպիտ ընազդով... Եւան փշաքաղւում էր, արիւնը սառում էր նրա երակների մէջ, երբ մտածում էր, թէ որքան զզուելի և սոսկալի էր այդ նախատիպ մարդը։ Նա աւելի շուտ կը-համաձայնէր մեռնել, քան թոյլ տալ, որ այդ գաղանացած մարդը վիրաւորէր ու անարգէր այն սրբութիւնը, որ կրում ու փայփայում էր իր սրտի մէջ սիրոյ անունով...

Սակայն, դրանք ծանր տպաւորութեան առաջին ծանը լոպէներն էին,—լոպէներ, երբ նրա ուղեղը գործում էր զրգռուած ջղերի ազդեցութեան տակ, գործում էր ուժգնապէս լարուած մեքենայի նման և միշտ միևնոյն ուղղութեամբ։ Այնուհետև, երբ նա կամաց-կամաց հանգստացաւ և սկսեց մտածել սառն ուղեղով, տեսաւ, որ իր վարմունքն իսկապէս շատ օտարոտի, շատ զարմանալի էր։ Բաղէնեանը իր սիրելին էր, իր անձկալին. ամբողջ օրերով միմիայն նրա մասին էր մտածում, միմիայն նրան էր ցանկանում. նոյն իսկ պատրաստ

էր թողնել ծնողներին, թողնել տունը, ամենքին և ամենն բան և գնալ նրա հետ՝ ուր որ կըտանէր,—և այդ բոլորից յետոյ յանկարծ...

Եւան դէմքը ծածկեց ձեռքերով. կարծես մէկը ներկայ լինէր, որ կարող էր տեսնել իր ամօթը...

XX

Բաղէնեանը, հակառակ Թեկլէին արած իր խոստման, չեկաւ ոչ այդ օրն երեկոյեան և ոչ հետևեալ օրը: Այնուհետև անցաւ դարձեալ երկու օր, և նա դարձեալ չերևաց: Այդ բանը շատ տարօրինակ էր թւում Մարութեան ամուսիններին: Ուրիշ պատճառ չգտնելով իրենց բարեկամի այդ վարմունքը բացատրող, նրանց թւում էր ընդունել, որ Բաղէնեանն իսկապէս ժամանակ չի գտնում իրենց այցելելու:

—Կամ, դուցէ, արդէն գնացի՞լ է,—հարցրեց Մարութեանն աղջկան:—Անցեալ օր որ եկաւ, ի՞նչ ասաց, ի՞րը էր գնալու:

—Ասաց, որ եթէ հետևեալ օրը չէ, երրորդ օրն անպատճառ պէտք է ճանապարհ ընկնէր,—պատասխանեց Եւան բոլորովին հանգիստ կերպով:

—Իսկ ինձ ասաց, թէ մի քանի օր դարձեալ թնալու է այստեղ,—ասաց Թեկլէն:

—Սպասիր: Երրորդ օրն երէկ էր, ուրեմն արդէն գնացել է,—բացականչեց Մարութեանը:—Այս բանից ես ոչինչ չեմ հասկանում, ճշմարիտ: Ուրիշ ոչինչ չլինի, գոնէ մեր խոստացած փողը պէտք է ընդունէր. դրա համար էլ չեկաւ: Ասենք, այդ կողմից ես անքաղաքավարի եղայ. պէտք է փողն անմիջապէս ուղարկէի իրեն: Բայց ախր... Չէ, անկարելի է. դեռ գնացած չի լինիլ: Պէտք է ինքս անձամբ գնամ նրա մօտ: Նամակն,

երկու օր է, մնում է գրպանումս: Փողն էլ ինքս անձամբ կըտանեմ կըտամ:

—Ա՜խ, նամակը,—արտասանեց Թեկլէն յուսահատօրէն:—Երանի գոնէ այդ նամակը հասնի Արմենակիս, և մի պատասխան ստանանք նրանից...

—Ես խսկոյն գնում եմ Բաղէնեանի մօտ,—ասաց Մարութեանը, վճռապէս վերկենալով տեղից:—Եւա, ուղղում ես, դու էլ արի:

—Ոչ, ես չեմ գալ:

—Զբօսնելով կըգնանք, ի՞նչ կայ որ:

—Չէ, հայրիկ, չեմ կարող:

—Դէ, գնա, էլի—ասաց մայրն աղջկան:—Մի քիչ պարզ օդ կըծծես: Քանի՞ օր է, տանից դուրս չես գընացել:

—Ի՞նչ անենք որ:

—Ա՛յն անես, որ տես ինչ ես դարձել,—զայրացած վրայ բերեց Թեկլէն:—Չեմ հասկանում, այս վերջին օրերն ինչ է պատահել քեզ: Մէկ նայիր հայելում, տես ինչ ես դարձել: Եղբօրդ հոգսը բաւական չէ, մի հոգս էլ դու դարձիր գլխիս:

Եւան ոչինչ չպատասխանեց մօր այդ յանդիմանական խօսքերին:

Այն հանգամանքը, որ Բաղէնեանը, վերջին տեսակցութիւնից յետոյ, խոստացել էր գալ և չէր գալիս և, դուցէ, արդէն հեռացել էր Թիֆլիսից, սաստիկ մըտատանջում էր Եւային: Նրա մէջ բոլորովին չքացել էր այն սարսափը, որ ազդել էր նրան Բաղէնեանի աչքերի մէջ նկատած փոփոխութիւնը. կարծես մի ծանր երազ լինէր այդ, որի ազդեցութիւնն անցել էր ժամանակի հետ: Այժմ Բաղէնեանը ներկայանում էր նրան դարձեալ առաջուայ նման իր անդիմադրելի գրաւչութեամբ. այժմ այդ երիտասարդն աւելի ևս անձկալի էր թերևս

այն պատճառով, որ Եւան յոյս չունէր, թէ երբեւիցէ այլեւս պիտի տեսնի նրան։ Եւ այդ բանում Եւան մեղը լիովին իր վրայ էր առնում. իր անփորձութեան մէջ, լոկ բոպէի ազդեցութեան տակ դէն հրեց իրենից այն երիտասարդին, որին սիրում էր և որը նրան էր սիրում. իր օտարոտի վարմունքով սիրած երիտասարդին կորցրեց ընդմիշտ իր համար, միևնոյն ժամանակ կորցնելով իրեն նրա համար։ Եւան երևակայում էր, թէ ինչքան զարմացած պիտի լինէր Բաղէնեանն իր վարմունքից, որ այժմ իր համար էլ անհասկանալի էր մնում։ Բաղէնեանն անշուշտ վիրաւորուեց և հէնց այդ պատճառով չեկաւ, որ նրան դէթ իր վերջին հրաժեշտը տայ։

Որքան շատ էր մտածում Եւան այս մասին, այնքան աւելի անկեղծ զղջմունքը կրծում էր նրա սիրտը։ Այդ զղջմունքն երբեմն այն աստիճանի էր հասնում, որ իրեն պատրաստ էր զգում ընկնելու Բաղէնեանի ոտները և ներողութիւն խնդրելու նրանից, եթէ միայն Բաղէնեանին մի անգամ էլ տեսնելու լինէր։

Բայց ո՞ւրտեղ էր Բաղէնեանը։ Եւան գրեթէ համոզուած էր, որ նա անպատճառ արդէն հեռացել էր։ Եւ այժմ, երբ մերժում էր հօր հետ Բաղէնեանի մօտ գնալ, մերժում էր ոչ թէ այն պատճառով, որ վերջին անցքից յետոյ ամաչում էր Բաղէնեանի աչքին երևալուց, այլ նրա համար միայն, որ իր մէջ քաջութիւն չէր զգում անձամբ անձին համոզուելու, որ նա իսկապէս հեռացել է։ Այդ արդէն խիստ մեծ հարուած կըլինէր նրա համար. դրանով խոպառ պիտի փշրուէր յուսոյ այն վերջին նշոյլը, որ դեռ ևս առկայծում էր այնտեղ, սրտի խորքերում թագնուած։ Սակայն, միևնոյնը չէ՞ր. իսօ արդէն համոզուած էր, որ Բաղէնեանն այլևս Թիֆլիսում չէ. սիրելն արդէն գործուած էր և այլևս ոչ

մի կերպ չէր կարելի ուղղել. ուրեմն աւելի լաւ չէ՞ր, որ միանգամից վերջ դնէր իր անտանելի դրութեանը։ Եւ Եւան յանկարծ յուսահատական մի քաջութիւն ըզգաց իր մէջ, այնպէս որ, երբ հայրը նորից առաջարկեց, որ միասին գնան Բաղէնեանի մօտ, նա համաձայնեց։

«Միանգամից, միանգամից... ինչի՞ց եմ վախենում...» մտածում էր նա, երբ հօր հետ անցնում էր սառած ձիւնով ծածկուած փողոցներով։

Նոր երեկոյանում էր։ Զմեռային կարճատև օրուայ անզօր արևը դժգոյն երկնքի վրայ արդէն բոլորովին թեքուել էր դէպի արևմուտք և անփայլ, թառամած ճառագայթներով ներկում էր բարձր շէնքերի կտուրները ու տերևաթափ ծառերի կատարները։ Օդը շարժուում էր անախորժ սառնութեամբ։ Ցուրտը կծում էր մարդու ականջները ու քիթը։

—Ուզո՞ւմ ես, սահնակ նստենք, Եւա,—հարցրեց հայրը։

—Ոչ, ոտով աւելի լաւ է,—ասաց Եւան, չնայելով, որ եղանակը սաստիկ անախորժ էր թւում նրան։ Նրա ծնօտները թեթև դողդողում էին։

—Գրաղ կըգամ, որ Բաղէնեանը դեռ այստեղ է,—բացականչեց Մարութեանը, երկար տեղ լուռ քայլելուց յետոյ։—Առանց ինձ տեսնելու, անկարելի է, որ գնար։

Եւան ոչինչ չպատասխանեց։ Յիրաւի, եթէ Բաղէնեանն իսկապէս դեռ գնացած չլինէր և այդ բոպէին էլ տանը լինէր, ի՞նչպէս պիտի հանդիպէր նրան, ի՞նչ երեսով պիտի ներկայանար նրան։ Եւան նոր մտածեց այդ մասին և զգաց, որ այդ հանդիպումը չափազանց ծանր պիտի լինէր իր համար։ Մի բոպէ նա կանգ առաւ սաստիկ տատանման մէջ և ուզեց հօրն ասել, որ

ուզում է տուն դառնալ, բայց ոչինչ չասաց և հօր հետ շարունակեց ճանապարհը։ «Աւելի լաւ,—մտածեց նա.—կըհասկանայ, որ ես զղջացել եմ վարմունքիս համար, և այլ ևս չի նեղանալ ինձնից»։

Յիրաւի, երբ հայր ու աղջիկ հասան «Լոնդոն» հիւրանոց, և Մարութեանը զոնապանին հարցրեց, թէ Բաղէնեանն արդէն հեռացե՞լ է Թիֆլիսից, զոնապանը պատասխանեց, որ Բաղէնեանը դեռևս ընակւում է հիւրանոցում, բայց այդ լոպէին տանը չէ։

—Զասացի՞, չասացի՞,—բացականչեց Մարութեանն ուրախացած, դառնալով աղջկան։—Գիտէի, ախր, որ առանց ինձ տեսնելու չէր գնալ։ Բայց այս լաւ չէ, որ հիմա տանը չէ։ Ի՞նչ անենք։

Այն միջոցին, երբ Մարութեանը փոփոխակի նայում էր մերթ զոնապանին, մերթ աղջկան, մտածելով, թէ ինչ անի, մի կառք դղրդալով մօտեցաւ և կանգ առաւ հիւրանոցի դռան առաջ։

Եւան դռան ապակու միջից դուրս նայեց և դողաց։

Կառքի մէջ նստած էր Բաղէնեանը։ Նա արագ իջաւ կառքից և շտապ քայլերով դիմեց դէպի դուռը։

—Ահա ինքը,—բացականչեց զոնապանը և շտապեց դուռը բանալ նրա առաջ։

Բաղէնեանը մտաւ մուշտակի կոճակները բաց և մոխրագոյն մորթէ գլխարկը ճակատից վոքր ինչ յետ գցած։ Դռների մօտ տեսնելով Մարութեանին ու Եւային, յանկարծ կանգ առաւ, ըստ երևոյթին, խիստ ապշած։ Պարզ երևում էր, որ այդ հանդիպումը միանգամայն անսպասելի էր նրա համար։

—Ա՜, պարոն Բաղէնեան,—բացականչեց Մարութեանը խիստ ուրախացած։—Տեսնում էք, մենք եկել

ինք ձեզ մօտ, իսկ դուք տանը չէք։ Ի՞նչ լաւ արիք, որ եկաք, թէ չէ՝ մտածում էի, թէ ինչպէս անենք, որ ձեզ գտնենք։

—Մի՞թէ ես արժանի եմ այդ պատուին,—արտասանեց Բաղէնեանը փոքր ինչ խանձուած ձայնով և սեղմեց Մարութեանի ձեռքը վերին աստիճանի զսպած քաղաքավարութեամբ։ Այնուհետև առանձին յարգանքով դարձաւ դէպի Եւան և, առանց նայելու նրան, խոնարհ գլուխ իջեցրեց՝ գլխարկը ձեռքին։

Եւան անհամարձակութեամբ նայեց նրա վայր թողած աչքերին և մեքենայաբար ձեռքը մեկնեց նրան։

Բաղէնեանն արագ մի քայլ առաջ դրեց և նոյն զսպած քաղաքավարութեամբ սեղմեց նրա ձեռքն էլ։ Այդ միջոցին Եւան ակամայ ուշադրութիւն դարձրեց այն բանի վրայ, որ Բաղէնեանն իր ձեռքը սեղմեց ՁԼասուած աջ ձեռքով, թէև սև շորը դեռ ևս կախած էր վզից։ Այս անդամ Բաղէնեանն այնքան մօտ էր Եւային և գլուխն այն աստիճան խոնարհել էր ուղղակի նրա քթի տակ, որ Եւային թուաց, թէ ինչ-որ քացախած հոտ առաւ նրա բերանից։

Մարութեանն սկզբում զարմացած էր մնացել նրա զսպած ընդունելութեան վրայ և հետաքրքրութեամբ դիտում էր նրան. յետոյ նրա ծանր շնչառութիւնից տեսաւ, որ նա արբած է և աշխատում է այդ բանը ծածկել։

—Եղբայր, այս ի՞նչ էք անում,—ասաց նա ժըպտալով.—խոստանում էք, թէ կըգաք և չէք գալիս։ Կարծում էինք, թէ արդէն գնացել էք։

—Լիովին զղում եմ յանցանքս և հազար ներողութիւն եմ խնդրում,—ասաց Բաղէնեանը նոյն խանձուած ձայնով։—Պատճառ ունէի, ի հարկէ, մի շատ յարգելի պատճառ, որ խոստումս չկատարեցի... չկարողացայ կատարել... և չէի կարող կատարել...

—Եւ ինչ էր այդ պատճառը։

—Այդ պատճառը,—արտասանեց Բաղէնեանը և առաջին անգամ, բայց մի վայրկեան միայն, նայեց Եւային, որը խկոյն հասկացաւ նրա միտքը և աչքերը վայր թողեց շփոթուած։—Պատճառը... Շատ ցաւում եմ, պարոն Մարութեան, որ պատճառը չպիտի կարողանամ յայտնել...

—Ուրեմն, ներողութիւն անտեղի հետաքրքրութեանս համար,—արագ վրայ բերեց Մարութեանը։—Ես, իհարկէ, այն մտքով չհարցրի պատճառը, որ ձեր գաղտնիքներն իմանամ, բայց... Մենք շատ սպասեցինք ձեզ։ Երկու օր է, որ նամակը փտում է գրպանումս։ Եւ եթէ գիտենայիք, թէ որքան երախտապարտ պիտի լինինք ձեզ, եթէ այդ նամակը հասցնէք մեր որդուն։

—Ես միշտ պատրաստ եմ, պարոն Մարութեան, իմ ծառայութիւնը մատուցանելու ձեզ։ Անցեալ օր հէնց այդ նամակի համար էլ եկել էի ձեր տուն, բայց դուք, դժբաղդաբար, տանը չէիք։ Ես երէկ պիտի ճանապարհուէի, բայց մի քանի անակնկալ հանգամանքներ պահեցին ինձ այստեղ։ Ամենայն հաւանականութեամբ, կը մեկնեմ վաղը չէ, միւս օրը, և իմ պարտքս կըլինի ամենից առաջ տեղ հացնել ձեր նամակը։ Բայց ինչ ենք կանգնել այստեղ։ Խնդրում եմ, պատուեցէք թափառաշրջիկիս ժամանակաւոր օթեւանը ձեր ներկայութեամբ։

—Գնանք, Եւա,—ասաց Մարութեանը դիմելով դէպի վեր։

Եւան մի վայրկեան տատանուեց և հետևեց հօրը։

Իսկ Բաղէնեանը ձեռաց հանեց կառքի փողը, տուեց դռնապանին, որ կառքը ճանապարհ ձգի, և վազեց նրանց ետևից։ Սանդուղքի առաջին աստիճանների վրայ հասաւ Եւային և սկսեց բարձրանալ նրա հետ կողք-

կողքի։ Երկուսն էլ ոչ մի խօսք չարտասանեցին։ Եւան դարձեալ զգաց նրա ներքանից փչող քացախած հոտը։ այդ հոտն այս անգամ այնքան անախորժ թուաց նրան, որ նա մի քանի վայրկեան ակամայ պահեց շնչառութիւնը։

Բաղէնեանը բաց արեց իր սենեակի դուռը և Մարութեանին ու Եւային ներս հրաւիրեց։

—Ուրեմն վաղը չէ, միւս օրն էք գնում,—ասաց Մարութեանը, կողք կողքի նստելով աղջկայ հետ։

—Այո։ Վաղը չէ, միւս օրն անպատճառ,—արտասանեց Բաղէնեանը, ծանր շնչելով։

Նա հանեց մուշտակը և ձգեց աթոռի մէջքին։ Մուշտակի ծոցի գրպանից դուրս պրծաւ մի ինչ-որ լրագիր նամակի ծրարի չափ ծալուած և, բացուելով, ընկաւ յատակի վրայ։ Եւան նստած տեղից կարդաց վերնագիրը և տեսաւ, որ արտասահմանում հրատարակուող յեղափոխական թերթերից մէկն է։

—Դուք ստանում էք այդ թերթը,—հարցրեց նա, յարմար առիթ գտնելով խօսելու, որովհետև զգում էր, որ իր ակամայ լռութիւնն արդէն չափից դուրս աչքի է ընկնում։

—Այո, օրիորդ։ Ես էլ որ չստանամ, հապա էլ ո՞վ պիտի ստանայ,—ասաց Բաղէնեանը և թերթը վերցրեց յատակից։—Եթէ հետաքրքրւում էք, կարող էք վերցնել կարդալու։ Վերջին համարն է, նոր ստացայ։

—Եթէ դուք արդէն կարդացել էք...

—Ոչ, դեռ ես ժամանակ չեմ ունեցել կարդալու։ Բայց այդ միևնոյն է. ինձ համար այստեղ հաղիւ թէ որևէ նորութիւն լինի, որովհետև բոլոր տեղեկութիւնները ես ստանում եմ, այսպէս ասած, առաջին ձեռքից և աւելի մանրամասնօրէն։ Խնդրեմ վերցրէք։

Եւան առաւ թերթը, ծալեց և վերարկուի գըրպանը դրեց։

—Հա՛, մոռացայ. այդ համարից երկու օրինակ ունէի,—ասաց Բաղէնեանը և սկսեց քրքրել գրպանները։—Ո՞րտեղ դրի... Ահա, դտայ։

Նա հանեց նոյնչափ ծալուած մի ուրիշ թերթ, ձգեց սեղանի վրայ և նստեց։

—Ուրեմն, առանց մեզ այցելելու էլ պիտի գնայիք,—դարձաւ առաջուայ խօսակցութեանը Մարութեանը։

—Մի՞թէ այդ կարելի էր, երբ խօսք էի տուել, որ ձեր յանձնարարութիւնը պիտի կատարեմ ամենայն պատրաստակամութեամբ,—ասաց Բաղէնեանը։—Ձեզ մօտ պիտի դայի այս երեկոյ, բայց դուք կանխել էք և ինքներդ էք եկել ինձ մօտ, որով մեծ պատիւ էք արել ինձ։

—Մենք, դժբաղդաբար, ոչոքի պատուել չգիտենք, բացի նեղութիւն տալուց,—վրայ բերեց Մարութեանը բարեսիրտ կատակով։—Ահա այն նամակը, որ պիտի յանձնէի ձեզ։ Այս էլ, ահա, այն գումարը, որ խոստացել էի նուիրաբերել ձեր և մեր ամենիս սիրած գործին...

Եւ Մարութեանը նամակի ծրարի հետ սեղանի վրայ դրեց մի ուրիշ հաստ ծրար։

Զարմանալի ներգործութիւն ունեցաւ այդ հաստ ծրարը Բաղէնեանի վրայ։ Մինչև այժմ նա իրեն պահում էր բաւական զգաստ և, եթէ ծանր շնչառութիւնն ու բերնից վչող գինու անտանելի հոտը չլինէր, դժուար կարելի էր իմանալ, թէ նա խմած է։ Բայց այժմ, սեղանի վրայ տեսնելով փողի հաստ ծրարը, նրա աչքերը վառուեցին տարօրինակ կրակով, և այդ կրակը, կարծես, յանկարծ լուսաւորեց նրա ներսը մի մութ աշխարհ...

Եւան նայեց նրա աչքերին և ութոն ակամայ մօտ

քաշեց հօրը։ Նրան թուաց, թէ իր առաջ նորից տեսնում է այն Բաղէնեանին, որին տեսաւ իրենց վերջին տեսակցութեան վերջին րոպէին։ Նա շրջեց դէմքը, որպէսզի չտեսնի Բաղէնեանի աչքերը։ Այդ սևաթոյր ու կրակոտ աչքերը, որոնք զարմանալի ընդունակութիւն ունէին վայրկենաբար ամենածայրայեղ հակադիր զգացումներ արտայայտելու. փոփոխակի, շատ օտարոտի տպաւորութիւն էին թողնում Եւայի վրայ. դրանք թէ գրաւում էին նրան վերին աստիճանի և թէ սարսափեցնում։ Այդ աչքերը պարզապէս տանջում էին Եւային, մանաւանդ այն ժամանակ, երբ Բաղէնեանը նայում էր նրան լուռ ու անթարթ, հիպնոսահարողի պէս։

Փողի հաստ ծրարը տեսնելուց յետոյ, Բաղէնեանն այլևս չկարողացաւ զսպել իր մէջ գինու եռացող շոգու ոյժը, և այդ ոյժն այժմ, ազատ զգալով իրեն, սկսեց դուրս ժայթքել մի երկար շարք ճրճռան ֆրազների մէջ հայրենիքի աղէտների մասին... Երբէք Բաղէնեանը չէր խօսել այնպէս ազատ, համարձակ և ոգևորուած, ինչպէս այժմ, թէև նրա ձայնը հետզհետէ աւելի ու աւելի խանձւում էր, այնպէս որ երբեմն ինչ-որ անորոշ խռպոտ հնչիւններ էին լսւում միայն։ Նրա դէմքը կարմրել էր, աչքերը պլպլում էին անմիտ, անախորժ փայլով և նրանց տակը ծածկել էին քրտնքի մանրիկ կաթիլներ։ Այն հանգամանքից, որ իր երկար ճառախօսութեան ժամանակ Մարութեանն ու Եւան լռել էին ակամայ և լսում էին նրան, նա, ըստ երևոյթին, կարծում էր, թէ կատարելապէս տիրել է նրանց ուշադրութեանն ու զգացումներին, ուստի աւելի ևս ազատութիւն էր տալիս իր խօսքերին, թէև այլևս հաշիւ չէր պալիս իրեն, թէ ինչ է ասում...

Այն ինչ հայր ու աղջիկ, ապուշ-ապուշ նայելով նրա այլանդակուած դէմքին, այդ ժամանակ ճնշւում

էին միևնոյն անախորժ զգացման տակ։ Այդ այն զգացումն էր, որ պաշարում է լուրջ մարդկանց, երբ նրանք ստիպուած են լինում լսել արբած մարդու անկապ, յամառ շառաչոսութիւնը, օդի մէջ շնչել նրա բերնից արտադրուող գինու անտանելի քացախած հոտը և, շարունակ լռելով, այն են մտածում միայն, թէ ինչպէս անենն, որ հեռանան նրանից, հեռանան այնպէս, որ նա չըհասկանայ (արբած մարդիկ խիստ կասկածոտ են լինում), թէ իրենք փախչում են նրանից։

Երբ Բաղէնեանը, կարծես յոգնելով, վերջը ինչ խաղաղեց, Մարութեանը շտապեց վեր կենալ։ Նրա հետ վերկացաւ և Եւան, որին անհասկանալի և անդիմադրելի մի նոր զգացում թելադրում էր շուտով դուրս փախչել այդտեղից դէպի ազատ օդ։

—Շատ ցաւում եմ, պարոն Բաղէնեան, որ մենք երկար չպիտի կարողանանք մնալ ձեզ մօտ,—ասաց Մարութեանը և, որպէսզի նա չկարծի, թէ իրենք փախչում են նրանից, որովհետև նա արբած է, շտապեց աւելացնել.—Մենք այս րոպէիս մի տեղ պիտի գնանք մի շատ հարկաւոր գործի համար... Բայց յատկապէս խնդրում ենք, որ մեկնելուց առաջ մի անգամ ևս հանդիպէք մեզ։ Կըգամ։

—Կըգամ,—արտասանեց Բաղէնեանը բոլորովին յոգնած ձայնով և կանգնած տեղը երերուեց։ Նա ինքն արդէն զգում էր, որ այլ ևս չի կարող զբաղեցնել հիւրերին, ուստի, գոնէ քաղաքավարութեան համար, ամենևին փորձ էլ չարեց նրանց երկար պահելու իր մօտ։ Նա հաւաքեց վերջին ոյժերը և այցելուներին ճանապարհ դրեց մինչև հիւրանոցի սանդուղքի գլուխը։

—Ուրեմն սպասե՞նք,—վերջին անգամ հարցրեց Մարութեանը։

—Կըգամ, կըգամ,—արտասանեց Բաղէնեանը բոլորովին խանձուած ձայնով և սպասեց սանդուղքի գլխին, մինչև որ հայը ու աղջիկ իջան և չքացան աչքից։ Այնուհետև անհասատատ քայլերով վերադարձաւ իր սենեակը, նստեց սեղանի մօտ, վերցրեց Մարութեանի թողած փողի ծրարը, միջից հանեց չորս հատ հարիւր ռուբլանոց թղթադրամ, նորից մէջը կոխեց և ծրարը դրեց ծոցի գրպանը դանդաղօրէն և ժպտալով։ Յետոյ կամաց յետ ընկաւ աթոռի մէջքին, ձեռքերը դրեց սեղանի վրայ և սկսեց թրխկթրխկացնել մատներով։

Սպասաւորը ներս բերեց վառած լամպը, դրեց սեղանի վրայ և հարցրեց՝ հեշտաեռ դնի։

Բաղէնեանը գլխով բացասական շարժում արաւ։ Յետոյ, երբ սպասաւորը դուրս էր գնում, կանչեց յանկարծ.

—Կա՛ց։

—Սպասաւորը կանգ առաւ և յետ նայեց։

—Մօտ արի։

Սպասաւորը մօտեցաւ և կանգնեց նրա եռևը։

Բաղէնեանը, առանց գլուխը վերելու, երկու մատը կոխեց ժիլետի գրպանը, հանեց մի հատ արծաթ դրամ և տուեց նրան ուսի վրայից։

Սպասաւորը փողն առաւ և սպասում էր նրա պատուէրին, բայց տեսնելով, որ ոչինչ չի ասում, հարցրեց.

—Ի՞նչ կըհրամայէք բերեմ։

—Ի՞նչ պիտի բերես, յիմար,—ասաց Բաղէնեանը։—Թեղ եմ բախշում։

Սպասաւորն սկզբում նայեց նրան զարմացած, չհասկանալով, թէ ինչ էր նշանակում այդ անառիթ վարձատրութիւնը, յետոյ շնորհակալութիւն յայտնեց, առանց քծնելու, և դուրս գնաց հանգիստ։

Բաղէնեանի աչքն ընկաւ սեղանի վրայ ընկած

յեղափոխական լրագրի վրայ։ Լամպը մօտ քաշեց, կուրծքը յենեց սեղանի ծայրին և սկսեց թերթել լրագիրը։ Նրա արբած աչքերի առաջ տողերն ու տառերը թւում էր, թէ շարժւում ու խաղում են լամպի լոյսի տակ, և նա կարդում էր անուշադիր ու յօրանջելով։ Մի տեղ նրա աչքովն ընկաւ իր ազգանուան պէս ինչ-որ մի բառ. լաւ նայեց և տեսաւ, որ այդ իսկապէս իր ազգանունն է։ Նրա արբածութիւնը կարծես միանգամից անցաւ, և նա, զարմացած ու հետաքրքրուած, սկսեց կարդալ այն տեղերը, որոնց մէջ նկատեց իր ազգանունը։ Կարդալիս նրա դէմքն արագապէս փոխուեց, իսկ երբ վերջացրեց, հէնց այնպէս էլ խոնարհուած մնաց կարդացած տողերի վրայ լայն բացած աչքերով։ Յանկարծ յիշեց, որ լրագրի մի օրինակը տուել էր Եւային, և վեր թռաւ տեղից կարիճից խայթուածի պէս։ Աթոռը, որի վրայ նստած էր, յետ թռաւ և գլորուեց յատակի վրայ։

—Ա՜, այս ի՜նչ յիմարութիւն եմ արել,—արտասանեց նա, ձեռքն ուժգին խփելով ճակատին, և մնաց քարացած։

XXI

Երբ հայը ու աղջիկ դուրս եկան հիւրանոցից, արեւն արդէն մայր էր մտել։ Երկնքի անփայլ կապուտակը մթնում էր արագօրէն։ Օդը, որ արև եղած ժամանակ շարժւում էր անախորժ սառնութեամբ, այժմ ուղղակի խանձում էր մարդու դէմքը։ Սառած գետինը քարի կարծրութիւն էր ստացել։

Եւան վազում էր՝ հօր առաջն ընկած. կարծես փախչում էր մի բանից և, միևնոյն ժամանակ, ուզում էր ցոյց տալ, թէ ոչ մի բանից չի փախչում։ Հայրը

հազիւ էր հասնում աղջկայ ետևից, թէև նա էլ չէր հասկանում ինչու, քայլերը սովորականից աւելի արագացրել էր։

—Կամաց գնա, Եւա, ի՞նչ ես վազում,—կանչեց Մարութեանը։

Եւան կանգ առաւ, մինչև որ հայրը հասաւ նրան։ Նրանք չնայեցին իրար երեսին։ Բայց նրանցից ամեն մէկը հասկացաւ, որ երկուսն էլ ճնշուած են Բազէնեանի թողած անախորժ տպաւորութեան տակ։ Նրանք շարունակեցին ճանապարհն այս անգամ կողք կողքի և հանդարտ քայլերով։

—Է՜, դա խմած էլ է, -- խօսեց Մարութեանը, կարծես ինքն իրեն։—Զհաւանեցի... Թէև խմելն, իհարկէ, սովորական բան է,—աւելացրեց նա,—կարճ մտախոհ լռութիւնից յետոյ.—մարդը ուրախ տրամադրութեան մէջ մի քիչ խմել է. այդ բանը մեզնից ոմ չի անում. բայց չգիտեմ ինչո՞ւ, ինձ վրայ անախորժ տպաւորութիւն թողեց։ Ախտա՞ս։ Իլլիւզիաս կորաւ։

Եւան ցնցուեց և ակամայ նայեց հօր մտախոհ դէմքին։ Նա տեսաւ, որ հայրը նոյն հիասթափութիւնն է զգում, ինչ որ ինքը, թէև, ի հարկէ, ոչ այնքան զօրեղ կերպով, ինչպէս ինքը։

Մարութեանն այլ ևս ոչինչ չխօսեց Բազէնեանի մասին։ Իսկ Եւան ամենևին ձայն չէր հանում։ Նա գընում էր և չէր իմանում՝ ուր. մտածում էր և չէր իմանում՝ ինչ։ Երբեմն վայրկենաբար նրա դեռ ևս թարմ յիշողութեան մէջ վերակենդանանում էին այն օրերը, երբ ինքը տանջող կարօտով սպասում էր Բազէնեանին. յիշում էր իրենց սիրային առաջին և վերջին տեսակցութիւնը, այդ տեսակցութիւնից յետոյ իր զգացած սարսափը, դարձեալ իր յուսահատական դրութիւնը, Բազէնեանին տեսնելու տենչը... Յիշում էր այդ

բոլորը և տեսնում էր, որ բոլորովին հանգիստ, անկարեկից է. կարծես թէ այդ բոլորն երէկ-մէկէլ օրը չէր, որ կատարուել էր, այլ շատ տարիներ առաջ. կարծես թէ այդ բոլորն ինքը չէր զգացողը, այլ մի ուրիշը, բոլորովին մի այլ աղջիկ, որին չէր ճանաչում և որի հետ ինքը ոչ մի առընչութիւն չունէր։

—Պարոն Մարութեան, Ե՛ւա,—յանկարծ լսեցին հայր ու աղջիկ իրենց ետևից կանացի մի ձայն։

Նրանք դարձան և տեսան օր. Սահակեանին, որ իր գէր մարմնով բադի պէս օրօրուելով՝ շտապում էր հասնել նրանց։ Զնայելով սառնամանիքին, նրա լիք այտերն այրուում էին տաքացած։ Նա հասաւ Մարութեաններին և անցաւ հօր ու աղջկայ մէջտեղը։

—Բարև ձեզ։ Ի՞նչպէս էք,—ասաց նա իր աշխոյժ, կայտառ ձայնով և, առնելով Եւայի թևը, առաջ անցաւ նրա և Մարութեանի հետ։—Այսօր դարձեալ նամակ ստացայ Աշխէնից։ Այս երկրորդ նամակն է, որ գրում է։ Այսպէս շուտ-շուտ է յիշում ինձ։ Բայց վառք Աստուծոյ, այս անգամ գոհ է և ուրախ։ Միայն խիստ գանգատւում է, Եւա, որ դու վերջերս կամ ոչինչ չես գրում իրեն, կամ միայն չոր ուցամաք բարևներ ես գրում։ Լաւ չես անում։ Մի մուանաբ, որ կարօտը միայն քո նամակներից է առնում։ Երևակայիր, որ մինչև անգամ կասկածում է, թէ մի գուցէ հիւանդ ես, որ ոչինչ չես գրում։ Կըգժուեմ, ասում է, եթէ...

Օր. Սահակեանը յանկարծ լռեց և զարմացած նայեց նախ Եւայի, ապա Մարութեանի դէմքին։

—Ի՞նչ է պատահել,—հարցրեց նա անհանգստութեամբ։—Ինչ որ... տխուր էք երևում։

Մարութեանը, զարմանք կեղծելով, նայեց օր. Սահակեանի փորձող աչքերին։

—Տխո՞ւր... Ինչի՞ց պիտի տխրէինք։

—Ես ի՞նչ գիտեմ։ Ձեզ դեռ երբէք այդպէս չեմ տեսել... Ո՞րտեղից էք գալիս։

—Բաղէնեանի մօտից։

Օր. Սահակեանը յանկարծ կանգ առաւ, թողեց Եւայի թևը և բերանը բաց, աչքերը չռած՝ մնաց նայելիս Մարութեանի դէմքին։

Ակամայ կանգ առան և հայր ու աղջիկ և գրեթէ սարսափած միաժամանակ նայեցին նրան, կանխազգալով, որ նա ինչ-որ բան պիտի ասի, կայծակի պէս շանթող անսպասելի մի բան, որը կուզէին և՛ իմանալ, և՛ չիմանալ։

—Բաղէնեանի մօտի՞ց, ասում էք... ի՞նչ ունէիք նրա մօտ։

—Նամակ յանձնեցինք, որ տանի Արմենակին։ Վաղը չէ՝ միւս օր նա գնում է այն կողմերը,—ասաց Մարութեանը։

Օր. Սահակեանը գլուխը յետ ձգեց և խիստ բարձրաձայն ծիծաղեց։ Շատ տարօրինակ էր նրա ծիծաղը։

Հայր ու աղջիկ ապշած նայում էին, թէ ինչպէս ծիծաղից դողդողում էր նրա կախ ընկած կզակը։

—Եւ միայն նամա՞կ յանձնեցիք,—հարցրեց օր. Սահակեանը։

Մարութեանն այլևս քաջութիւն չունեցաւ ծածկելու։

—Փող էլ,—ասաց նա։

—Այսինքն ի՞նչ փող. Արմենակին տանելո՞ւ, թէ...

—Ոչ, իրրև նուիրաբերութիւն...

—Սուրբ գործի օգտին,—լրացրեց օր. Սահակեանը, և նրա ծիծաղը սաստկացաւ։ Նա ծիծաղում էր երկար, և նրա ամբողջ ահագին մարմինն ուժգին ցնցւում էր այդ տարօրինակ ծիծաղից։ Բայց յանկարծ դադարեց իրեն, իր ուժեղ ձեռքով արագօրէն բռնեց Մա-

ըուլթեանի թեւից և անհանդիստ մի շարժում արեց, որով ուզում էր հասկացնել, որ նա իսկոյն յետ դառնայ։

—Այս ըոպէիս գնացէք և յետ առէք նամակն էլ, փողն էլ,—ասաց նա շատ լուրջ և հաստատուն ձայնով։—Շտապեցէք, մի նայէք ինձ այդպէս զարմացած... Դէ, գնացէք շուտով ձեզ ասում եմ,—աղաղակեց ուղղակի հրամայողաբար, տեսնելով որ Մարուքեանն ապուշ կտրուած միայն նայում է իր դէմքին։

Մարուքեանը պարզապէս վիրաւորուեց նրա այդ վարմունքից։

—Սպասեցէք,—ասաց նա և թեւը կամաց խլեց օր. Սահակեանի ձեռքից։—Ի՞նչ էք ասում, չեմ հասկանում։

—Ա՛յն եմ ասում, պարոն Մարուքեան, որ դուք սրիկայի ձեռք էք ընկել, և նա փառաւորապէս խաբել է ձեզ, ինչպէս խաբել է ձեզ նման շատերին։ Այժմ հասկացաք։ Դէ, գնացէք շուտով, այս ըոպէիս գնացէք, թէ չէ՝ ձեր փողերը կորած են... Տէր Աստուած, ի՞նչ տեսակ մարդ էք։ Մի՞թէ չէք հաւատում ինձ։

—Իհարկէ, չեմ հաւատում,—աղաղակեց Մարուքեանը դրեթէ կոպտաբար։—Ի՞նչպէս թէ սրիկայ, ի՞նչ էք ասում։ Նրա մասին բան գիտէք, այնպէս էք խօսում, թէ հէնց այնպէս, որովհետև... Նրա քիթը դուր չի եկել ձեզ։

—Ի հարկէ, բան գիտեմ, որ այսպէս եմ խօսում, թէ չէ՝ ես ի՞նչ գործ ունիմ նրա քթի հետ։

—Ի՞նչ գիտէք։

—Ա՛յն գիտեմ, պարոն Մարուքեան, որ նա Հայաստանի մասին այնքան է մտածում ու հոգում, որքան ես ու դուք—Զինաստանի մասին։ Ձեր այդ պարոն Բաղէնեանը, որին քիչ է մնում աստուածացնէք,

ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կատարեալ խաբեբայ, որ, հանգամանքներից օգուտ քաղելով, գեղեցիկ դիմակի տակ, պարապում է նուիրական զգացումներ շահագործելով։ Այդ պարոնի իսկական անձնաւորութեան հետ ինձ ծանօթացրեց շատ յարգելի, շատ պատուական մի տիկին, որ հէնց ինքը զոհ է գնացել այդ աֆերիստի ճարպիկ խաբեբայութեանը։ Այդ տիկինը զրիմցի է։ Նրա հետ ծանօթ եմ Զրիմում եղած վարժուհութեանս ժամանակից և շատ լաւ ծանօթ եմ։ Անձնական գործերի համար այս օրերս Թիֆլիս է եկել և անցեալ օր մեր տանն էր։ Հէնց այդ օր փողոցում հանդիպել էր Բաղէնեանին, և տեսնէիք, թէ ինչքան յուզուած էր... Եւ, իսկապէս, կարելի՞ է մի թեթէ խաղաղ հոգով տեսնել, թէ ինչպէս ամենասուրբ, ամենանուիրական զգացումներդ շահագործութեան առարկայ են դարձած մի մութ անձնաւորութեան ձեռքի, որին սկզբում հաւատում էիր կուրօրէն և համոզուած էիր, թէ նա քո ամենալաւ, ամենաբարձր բաղձանքների իրագործողն է... Հէնց դուք. այս ըոպէիս դուք միևնոյնը չէ՞ք զգում, ինչ-որ զգացել է այն պատուական կինը. դուք ևս միևնոյն ծանր հիասթափութեան տակ չէ՞ք այս ըոպէիս...

Եւ օր. Սահակեանը, լռելով, փոխէփոխ նայեց Մարուքեանի և Եւայի դէմքին։ Մարուքեանը վերին աստիճանի ապշած էր, ինչպէս մի մարդ, որի մոքի առաջ յանկարծ սարսափելի և անհաւատալի մի գաղտնիք է բացւում։ Իսկ Եւան կանգնած էր անշարժ և, յոնքերը կիտած, անթարթ նայում էր գետնին։ Վերին աստիճանի խիստ հանգստութիւն էր արտայայտում նրա ամբողջ արտաքինը։ Նրա անշարժացած դէմքը դունատուել էր և աչքերի վայր թողած կոպերը դողդողում էին իրենց երկայն թերթերունքներով։

—Օ՜, իսկապէս որ սարսափելի է, սարսափելի,—

հառաչեց Մարութեանը ծանր երազից արթնացողի պէս և առաջ անցաւ.

—Եւան և օր. Սահակեանը հետևեցին նրան։

—Ա՜, վերջապէս հասկացաք և հաւատացիք,—բացականչեց օր. Սահակեանը։—Ես զարմանում եմ, պարոն Մարութեան, որ դուք երբէք չէք հարցրել ինքներդ ձեզ, թէ՝ լաւ, եթէ մեր այս պարոն Բաղէշեանը, որ այսքան շատ է խօսում հայրենիքի թշուառութեան մասին, իսկապէս գործիչ է, հապա այս ի՞նչպէս է հագնւում սա, այս, ի՞նչպէս է ապրում սա։ Հայրենիքի թշուառութեան համար մտածողն ու գործողն ո՞վ, առաջնակարգ հիւրանոցում ապրողն ո՞վ, վերջին մոդով հագնուողն ո՞վ, անդադար կառքով ու սահնակով զբօսնողն ո՞վ։ Ախր, այս բաներն ինչ-որ չեն բռնում իրար։ Հէնց առաջին օրը, հէնց առաջին րոպէին, որ տեսայ նրան ձեր տանը, մեծ թերահաւատութեամբ նայեցի նրա վրայ։ Նրա հագուստից այնպիսի հոտ էր բուրում, որ ամենակոկետ կնոջից անգամ չեմ առել։ Ախր սրանք ուշադրութեան արժանի բաներ են, պարոն Մարութեան, իսկ դուք, ինչպէս երևում է, ամենևին ուշադրութիւն չէք դարձրել։

—Է՛հ, ո՞վ էր հետևում այդ մանրամասնութիւններին,—նկատեց Մարութեանը դառնութեամբ։—Նա մեզ այնպէ՞ս կաշկանդել էր...

—Ասացէք՝ կաշառել էր։

—Ի՞նչպէս թէ կաշառել։

—Չէ՞ որ փրկել էր ձեր Սուրէնի կեանքը։

—Դուք էլ բան ասացիք. նա ի՞նչ էր իմանում, թէ ո՞վ ենք մենք, որ մեր երեխայի կեանքը փրկելով կաշառէր մեզ։

—Ո՞ր այդպէս է, դուք չէք հասկանում այդ պարոնների հոգեբանութիւնը։ Ձեզ չկաշառէր, հասարակութեանը խօ կըկաշառէր։ Չէ՞ որ Բաղէշեանի պէս մարդկանց ամենամեծ ջանքն այն է, որ հասարակութեան աչքերը որքան կարելի է պինդ կապեն, և Բաղէշեանը դրա համար աւելի լաւ առիթ չէր կարող գտնել, քան մի փոքրիկ երեխայի՝ կառքի տակ չարաչար մեռնելուց ազատելը։ Կարծում էք Բաղէշեանի համար քիչ բա՞ն է, որ լրագրութեան մէջ գրւում և հասարակութեան մէջ խօսւում է, թէ այս-ինչ պարոնն այս-ինչ անձնազոհութեան օրինակն է ցոյց տուել։ Եւ ի՞նչպէս նա մինչև այժմ էլ ձեռքը կապած է պահում... Ե՛ս մեռնեմ, թէ նրա ձեռքն իմ ձեռքից էլ առողջ չըլինի. բայց կապած է պահում, որովհետև չէ՞ որ նրա անօրինակ անձնազոհութեան նշանն է այդ և, վերջապէս, դրանով նա, ախը, աւելի գրաւիչ է երևում... է՜, պարոն Մարութեան, ինչպէս տեսնում եմ, դուք դեռ ևս շատ միամիտ մարդ էք։ Դուք չգիտէք, թէ որոշ ժամանակներ լաւ մարդկանց հետ ինչպիսի վատ մարդիկ էլ են ստեղծում։ Մեր այժմեան ժամանակը ստեղծել է ձեր որդուն—Արմենակին, բայց և ստեղծել է Բաղէշեանին։ Դուցէ, ժամանակն ու հանգամանքները շատ ժլատ են ձեր որդու նմաններին ստեղծելում, բայց երևում է, որ շատ շռայլ են Բաղէշեաններ արտադրելում։ Մի բոպէ թողէք ազամարդուն ոչ-վայել ձեր այդ պարզամտութիւնն ու դիւրահաւատութիւնը, իրերի վերայ նայեցէք առողջ, քննական հայեացքով, և կըտեսնէք, թէ ովքեր են Բաղէշեանները. կըտեսնէք, որ այդ դարշելիները ոչ այլ ինչ են, եթէ ոչ պարզապէս մեր այժմեան կեանքի նշանաւոր երևոյթների զազրալի վիժումները։ Դրանք ծոյլ և անբարոյական արարածներ են, որոնք լաւ ապրել են ուզում։ Աղնիւ գործը, չարքաշ աշխատանքն անմատչելի է դրանց։ Դրանք փող աշխատելու դիւրին ասպարէզ են հոտոտում, և ահա պատ-

բաստ է մեր ներկայ ժամանակի հասարակական նուիրական զգացումների շահագործութեան ասպարէզը,—մի ասպարէզ, ուր ինչպէս ասում են, շունը տիրոջը չի ճանաչում։ Խաւարի ծնունդ լինելով, խաւարի մէջ էլ գործում են դրանք։ Զգացումներ և ձգտումներ կեղծելու ընտուր ճարպիկութիւնը դրանց ամենամեծ զէնքն է։ Այդ զէնքով զինուած՝ թափառում են քաղաքից քաղաք, երկրից երկիր և ձեզ նման միամիտ հաւատացողների դրպանից փողեր են կորզում։ Սուրբ գործի անունով հաւաքած այդ փողերը ցրում են անձնական զաղրելի կրքերի, ապականութեան ճանապարհի վրայ։ Հասարակական ամենանուիրական գործն այդպիսով պատուանդան են դարձրել ցոփութեան յաղթանակի համար։ Սուրբ գործի այդ պարագիաները բաղդաւոր են նրանով, որ խառնաշփոթութիւնն ընդհանուր է և այդ խառնաշփոթութեան մէջ ոչ իսկական գործիչն է երևում, ոչ իսկական կորզիչը։ Այդ պատճառով էլ յաղթանակում են խաւարի ծնունդները, իսկ մեծ գործը կործանւում է...

Մարութեանի և Եւայի մէջտեղ ծանր քայլելով, օր. Սահակեանը խօսում էր ազնիւ բարկութեամբ վառուած։

—Շատ ճիշտ է, շատ ճիշտ է,—մէջ ընդ մէջ արտասանում էր Մարութեանը դառն մտախոհութեամբ։

—Ցաւալին այն է, որ չարիքը ոչ կարող ես ծածկել, ոչ կարող ես հրապարակ հանել,—շարունակեց օր. Սահակեանը։—Ծածկես—Բաղէնեանի պէս մութ անձերի ջնասակար գործունէութեանը պիտի ազատ ասպարէզ տաս. հրապարակ հանես—ամենքը յետ պիտի փախչեն գործից հիասթափուած և այլևս չպիտի հաւատան ոչոքի։ Ո՞րն անես—մնացել ես տարակուսած։ Իմ կարծիքով պէտք է չարիքը չծածկել։ Իսկ այդ չարիքը չափից դուրս մեծ է և անկարելի է անուշադիր

թողնել։ Պէտք է բանալ հասարակութեան աչքերը, պէտք է հասկացնել նրան, որ չհաւատայ ամեն մի բաղդախնդրի...

—Հեշտ էք ասում։ Համեցէք, խօսեցրէք Բաղէնեանին և կասկածեցէք, թէ նա բաղդախնդիր է։ Նշանաւորն այս է, որ նա ոչ թէ միայն ուղղակի չի առաջարկել մեզ, որ նուիրաբերութիւն անենք, այլ և մի խօսք, մի ակնարկ անգամ չի արել այդ մասին։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ ես ասել էի նրան, որ գայ ստանայ իմ խոստացած գումարը և նամակով էլ հրաւիրեցի, չեկաւ, և ես իմ ձեռքովս տարայ տուն, տուի ինքնաբերաբար։

—Ճարպիկութիւնն էլ հէնց այդ է, է։ Կընշանակի՝ ցանցն այնպէս լարել է, որ ինքներդ էք գնացել մէջն ընկել։

—Հէնց այդ պատճառով էլ չեմ կարող գնալ և տուած գումարս յետ պահանջել։ Յետ տալով յետ կը տայ,—այդքան ազնուութիւն ու պատուասիրութիւն կունենայ, ես կարծում եմ,—բայց... Ինչ փաստ կայ ձեռիս, որ ես կարող լինիմ համարձակ ասել նրան՝ թէ՝ պարոն, իմ տուած փողը յետ եմ պահանջում նրա համար, որ ձեզ չեմ հաւատում այլևս, որովհետև դուք խաբերայ էք, աֆերիստ էք, սրիկայ էք...

—Փաստը—իմ ասած տիկինը։ Ուզում էք, իմ անունս էլ տուէք։ Ես նրանից չեմ վախենում։

—Այդ է, ձեր ասած տիկնոջ և ձեր անունը որ տուի—փաստ դառաւ, և Բաղէնեանը խոտ է կերել, ոչինչ չի գտնիլ ասելու։

—Ուզում էք, տիկնոջն երես առ երես կըկանդնեցնեմ նրա հետ։ Ուզո՞ւմ էք։ Ասացէք, ուզո՞ւմ էք։

—Է՛հ, թողէք, թէ Աստուած կըսիրէք,—արտասանեց Մարութեանը զրգռուած։—Լեզուն հեշտ է շարժ-

ւում։ Մէկէլ կըտեսնէք, այնպիսի օյին կըհանի ձեր տիկնոջ և իմ ու ձեր գլխին, որ մի բան էլ դեռ մենք պարտական կըմնանք նրան. ինքներդ էք ասում, թէ Բազէնեանները ճարպիկ են և միևնոյն ժամանակ այդպէս էք խօսում։

Նա յանկարծ կանգ առաւ և զսպած զայրոյթով նայեց օր. Սահակեանի դէմքին։

—Կուզէ՞ք ուզիղն ասեմ, օրիորդ,—նկատեց նա սրտանց։—Մեղաւորը դուք էք։ Այո, դուք, որովհետև ձեզ վաղուց յայտնի է եղել, թէ ինչ մարդ է Բազէնեանը, և մեզ այժմ էք միայն յայտնում այդ, այն էլ պատահաբար։

Եւ Մարութեանը նորից առաջ անցաւ գրգռուած։

—Դուք ճշմարիտ էք ասում, պարոն Մարութեան,—կարճ լռութիւնից յետոյ, ասաց օր. Սահակեանը Եւայի հետ քայլելով նրա հետից։—Ես կատարելապէս արժանի եմ ձեր յանդիմանութեանը և ցաւում եմ, որ անմիջապէս չեմ շտապել յայտնելու ձեզ, թէ ինչ մարդ է ձեր այդ Բազէնեան կոչուածը։ Բայց այս էլ ի նկատի պիտի ունենաք, պարոն Մարութեան, որ ես երբէք չէի կարող կարծել, թէ դուք, Արմենակի պէս որդի ունենալով, կարող էիք ոգևորուել մի որևէ բաղդախնդիր Բազէնեանով։

Մարութեանը ոչինչ չասաց. օր. Սահակեանի վերջին նկատողութիւնն, ըստ երևոյթին, միանգամից զինաթափ արեց նրան։

Կարճ ժամանակ երեքն էլ քայլում էին լուռ։

—Եւ դուք նամակ էք յանձնել նրան, որ ձեր որդուն տանի,—նկատեց օր. Սահակեանը, գլուխը շարժելով դառնութեամբ։

Եւայի դէմքը, օր. Սահակեանի այդ խօսքերի վերայ, կարծես ներքին մի սուր կսկծից, ծամածռուեց,

բայց նրա ամբողջ արտաքինը առաջուայ պէս պահպանում էր իր խրոխտ հանգստութիւնը։

—Արմենակ Մարութեան և Բազէնեան... Ինչպիսի՜ հեգնութիւն,—աւելացրեց օր. Սահակեանը։

Մարութեանը զայրագին պինդ թքեց մի կողմ և քայլերն արագացրեց։

—Այսպէս թէ այնպէս, վերջապէս, — ասաց օր. Սահակեանը։—Պարոն Մարութեան, ցտեսութիւն, ես այս կողմն եմ գնում։ Հաւատացնում եմ ձեզ, լաւ կանէիք, որ ձեր փողերը մի կերպ յետ առնէիք, և աւելի լաւ կանէիք, որ այդ փողերն ուղարկէիք Աշխէնին իրենց աղքատ ուսումնարանի համար գործադրելու։ Բայց այդ դուք գիտէք։ Ցտեսութիւն։ Ցտեսութիւն, Եւա։ Այդ ի՞նչ է. մրսո՞ւմ ես,—հարցրեց նա, զարմանալով Եւայի դէմքի տարօրինակ գունատութիւնից։

Եւան հազիւ նկատելի կերպով շփոթուեց նրա թափանցող հայեացքից։

—Այո, ցուրտ է,—կամաց արտասանեց նա և աւելացրեց. — Այս քանի օրս մի քիչ տկար եմ զգում ինձ։

—Որ այդպէս է, ինչո՞ւ էիր այս սառնամանիքին դուրս գալիս տնից։ Յիշո՞ւմ ես, Եւա, որ ձեր տանը Բազէնեանի հետ վիճաբանութեան բռնուելուցս յետոյ, երբ գնում էի, նախասենեակում հարցրիր ինձ, թէ ինչո՞ւ էի այնպէս յարձակւում նրա վրայ, և մինչև անդամ ասացիր, թէ նրա մէջ մի գիծ կայ, որ զարմանալի կերպով յիշեցնում է քեզ եղբօրդ։ Այժմ գնա տուն և լաւ մտածիր, թէ ընդդէմ խարո՞ւմ էր ինձ, որ այնպէս յարձակւում էի նրա վրայ, և կա՞յ արդեօք որևէ նման գիծ եղբօրդ և այդ խարեբայի մի՞ջև... Է՜, մարդիկ, մարդիկ, ինչպէս հեշտ էք խաբւում։ Բայց—այսպէս, թէ այնպէս, վերջապէս։ Այս իմ սովորական երգն

է, որ կրկնում եմ միշտ, երբ տեսնում եմ, որ բանը բանից անցած է արդէն։ Դէհ, գնացէք, յաջողութիւն։

XXII

Աղջկայ հետ որ տուն գնաց, Մարութեանը պատմեց կնոջը, թէ ով է եղել Բաղէնեանը և թէ ինչպիսի խաբերայութեան զոհ են դարձել իրենք նրա ձեռքին։ Այդ բանն այնքան անսպասելի էր Թեկլէի համար, այնքան ապշեց նա, որ երկար ժամանակ չէր կարողանում լաւ ըմբռնել, թէ ինչ է ասում ամուսինը։ Դրան նպաստում էր այն հանգամանքը, որ ամուսինը, սաստիկ զրգռուած, պատմում էր կցկտուր բառերով, կարծես աշխատում էր շուտ վերջացնել այդ ծանր բացատրութիւնը։ Կինն իր չհասկանալովը այնքան չարչարեց ամուսնուն, որ Մարութեանը, վերջապէս, դուրս եկաւ համբերութիւնից։

—Օ՛հ, ինչ բթամիտն ես եղել,—յանկարծ բռնկաց նա և, աւելի զայրացած այն բանից, որ այդպիսի կոպիտ բառ թոցրեց բերանից, հեռացաւ իր առանձնասենեակը։

Թեկլէն այս անգամ ձեռք առաւ աղջկան և նրան էլ բաւական կըշարչարէր, եթէ Եւան կատարեալ հանգստութեամբ, թէև համառօտ, բայց շատ պարզ կերպով չպատմէր նրան այն բոլորը, ինչ որ իմացել էր օր. Սահակեանից Բաղէնեանի մասին։

—Մի՞թէ այդ ճշմարիտ է, մի՞թէ այդ ճշմարիտ է,—կրկնում էր Թեկլէն ապշած։—Այնպէս խօսողը—խաբեբա՞յ... Սուրէնիս ազատողը—խաբեբա՞յ։ Այդ անկարելի է, այդ անհաւատալի է։ Ուրեմն մեր փողերը մի աւազակի ձեռք են ընկել, ուրեմն նամակն էլ իզուր

ինք յանձնել նրան։ Տէր Աստուած, մի՞թէ այդ ճշմարիտ է, մի՞թէ այդ կարելի է։

«Մի՞թէ այդ ճշմարիտ է, մի՞թէ այդ կարելի է»—մտքումը կրկնում էր Եւան մօր բացականչութիւններն այդ գիշեր անկողնում պառկած։ Նրա դէմքի վրայ հիւանդոտ, դառն մի ժպիտ էր խաղում շարունակ, և այդ ժպիտը, կարծես, ասում էր՝—մի՞թէ այլևս տարակուսելու տեղիք կայ. ամեն բան պարզ է հայելու նման։ Դիմակը վերևից մինչև ներքև պատառուել է, և Բաղէնեանը կանգնած է իր այլանդակ հոգու ամբողջ մերկութեամբ։ Եւ Բաղէնեանի այդ պատկերն այնքան ատելի գարշելի էր, որքան գրաւիչ էր գաղտնիքը բացուելուց առաջ։ Զարմանալի հանգստութեամբ Եւան դիտում էր իր հոգու աչքերով այդ գարշելի պատկերը և զգում էր, որ իրեն այնքան տանջող սիրոյ նշոյլն անգամ չի մնացել իր սրտի մէջ։ Նրան թւում էր այժմ, թէ այդ սէրը ոչ այլ ինչ է եղել, եթէ ոչ անտանելի մի կեղտ, որ բարերար մի ձեռքով յանկարծ ջընջուել, անհետացել է, անհուն թեթևութիւն պատճառելով իրեն։ Այլ ևս չեն կարող լինել անհանգիստ սպասումներ, անքուն գիշերներ, յարատև լարուած դրութիւն, սարսափ ու զղջում. վերջացաւ, անցաւ այդ բոլորն իբրև ծանր մի պատրանք։ «Օ՜, որքան բաղդաւոր եմ, որքան շնորհակալ եմ օր. Սահակեանից, որ այսպէս թեթևացրեց հոգիս»—շշնջում էր նա։

Վերջին օրերից յետոյ, այդ առաջին գիշերն էր, որ Եւան քնեց շատ հանգիստ, իսկ առաւօտեան այնքան առողջ ու զուարթ էր զգում իրեն, որ նրա հոգին, կարծես, ոչ մի ծանր յուզման չէր ենթարկուել։ Նա բոլորովին անտարբեր մնաց մինչև անգամ այն ժամանակ, երբ, թէյ խմելու համար դուրս գնալով սեղանատուն, տեսաւ, որ հայրն ու մայրը շատ վատ տրամա-

դրութեան մէջ են։ «Խեղճը,—մտածեց նա անկարեկից կերպով,—ինչ էք զգացել դուք՝ համեմատած իմ զգացածների հետ»։ Եւ, մինչև անգամ ժպտալով, նըստեց իր սովորական տեղը, հօր մօտ։

Մարութեանը, չնայելով իր վատ տրամադրութեան, հաւատարիմ էր մնացել իր ամենօրեայ սովորութեանը—թէյի ժամանակ լրագիր կարդալուն։ Թեկլէն նորից սկսեց երկար ու բարակ բացականչութիւնները Բազէնեանի մասին։ Ամուսինը յամառօրէն լռում էր, աչքը լրագրին տնկած, բայց վերջը, համբերութիւնից դուրս գալով, լրագիրը յանկարծ մի կողմ շպրտեց և այնպէս պինդ գոռաց կնոջ վրայ, որ Թեկլէի բերնից դուրս թռչող բացականչութիւններից մէկը կիսատ մնաց, իսկ փոքրիկ Սուրէնը, որ, մօր կողքին նստած, հանգիստ վայելում էր իր հացը մեղր ու կարագով, վախից վեր թռաւ տեղից։

—Դարդդ այն փողի համար է, որ տուի նրան,—բացականչեց Մարութեանը։—Ջըհաննամը. թող այդ փողը մի վարձատրութիւն լինի նրան, որ մեր երեխայի կեանքը փրկեց վտանգից։

—Հայրիկ, ինչ հարկաւոր է, որ այդպէս գրգռւում ես,—ասաց Եւան հանդարտ, հաշտեցնող եղանակով։—Աւելի լաւ չէ՞, որ այդ մասին ամենևին չխօսէք։

—Այ, այլ ես ոչ մի խօսք այդ աւազակի մասին։ Վաղը նա գալու է, եթէ միայն արդէն չի ծլկել այստեղից, և ես շան պէս դուրս կանեմ նրան մեր տնից։

—Ինչու այդպէս խիստ, հայրիկ. աւելի լաւ չէ՞ քաղաքավարի կերպով հասկացնես նրան, որ այլ ևս չի կարող տեղ ունենալ մեր տանը։ Այդպէս աւելի ազդու կըլինի։

—Ո՛չ, շան պէս, շան պէս,—կրկնեց Մարութեանը։—Ոչինչ ինձ այնքան չի զայրացնում, որքան նրա անամօթ լրբութիւնը, որ մեզնից առաւ Արմենակին գըրած նամակը՝ իբր թէ նրան տանելու, մինչդեռ այդ նամակը պէտք է պատռէր և դէն շպրտէր, ինչպէս արդէն արել է, ի հարկէ։

—Ահա այդ է, որ ինձ այսպէս այրում է, և ոչ թէ քո նրան տուած փողը,—նկատեց Թեկլէն ամուսնուց սաստիկ նեղացած։

—Տեսնում էք, դուք դարձեալ սկսեցիք,—ասաց Եւան նոյն հանդարտ, նոյն հաշտեցնող եղանակով։—Ինչ մեծ ցաւ է այդ նամակը. ուրիշը կըգրենք, ինչ կայ որ։

—Հարիւրը կըգրես, բայց տանողն ով է,—բարկացած կանչեց մայրն աղջկայ վրայ։

—Միևնոյն է, Բազէնեանն էլ խօ չպէտք է տանէր։

—Բաս ինչու էր առնում, որ չպէտք է տանէր, այն անասուածը, այն անխիղճը...

—Թիո՛ւ,—թքեց Մարութեանը զայրալին և նորից ձեռքն առաւ լրագիրը։

Եւան տեսաւ, որ իր միջամտութիւնը, հանդարտացնելու փոխարէն, աւելի ևս գրգռում է հօրն ու մօրը, ուստի աւելի լաւ համարեց լռել։

—Դուք ամենևին ուշադրութեան չէք առնում իմ դրութիւնը,—շարունակեց Թեկլէն լացակումած ձայնով, և նրա աչքերը լցուեցին առատ արցունքով։—Քանի ժամանակ է նամակ չունինք, իսկ այնտեղ այնպիսի բաներ են կատարւում... Գիշերները քուն չունիմ... Աստուած գիտէ, թէ ինչեր եմ մտածում... Իսկ դուք ամենքդ էլ դեռ ինձ վրայ էք յարձակւում։

—Եւ Թեկլէն թաշկինակը պինդ սեղմեց աչքերին, հաղիւ կարողանալով զսպել հեկեկանքը։

Եւան իր մեծ-մեծ աչքերով նայեց մօրն անհուն կարեկցութեամբ և ուզում էր քաջալերական խօսքեր ասել, բայց տեսաւ, որ սաստիկ զգացուել է մօր սրբատաճմլիկ խօսքերից և ինչ-որ մի բան, հակառակ իր կամքին, եկել դէմ է առել բկին։

Մարութեանը դարձեալ լռում էր յամառօրէն. լրագիրը ոչ թէ կարդում, այլ ուղղակի ճմռում էր ձեռքին, բայց ցոյց էր տալիս, թէ կարդում է։

Եւան արմունկներով յենուեց սեղանին և դէմքն առաւ ձեռքերի մէջ։ Բաղէնեանի հմայքից աղատուելուց յետոյ, այս առաջին անգամն էր, որ նա սկսեց լրջօրէն մտածել իր հեռացած եղբօր վիճակի մասին, մօր խօսքերի ազդեցութեան տակ։ Յիրաւի, ինչ է պատահել Արմենակին. ինչո՞ւ այսքան ժամանակ ոչ մի տեղեկութիւն չի տալիս իր մասին. ժամանակ չունի՞ արդեօք նամակ գրելու, թէ հիւանդ է։ Եւ, առհասարակ, ինչ է կատարւում արդեօք այնտեղ։

Եւան յանկարծ յիշեց Բաղէնեանից առած յեղափոխական թերթը։ Եւ յիշելուն պէս վերկացաւ, անցաւ իր սենեակը և վերարկուի գրպանից հանեց թերթը։ Ձեռքը թերթին կպչելուն պէս նրան թուաց, թէ քթին դիպաւ ճիշտ միևնոյն անտանելի քացախած հոտը, որ փչում էր Բաղէնեանի բերանից երէկ երեկոյ հիւրանոցում նրան այցելած ժամանակ։ Այդ հոտի հետ միասին Եւայի մէջ մի ակնթարթում վերարտադրուեց Բաղէնեանի պատկերն իր բարոյական բոլոր տգեղութեամբ, այնպէս, ինչպէս ներկայացրել էր նրան օր. Սահակեանը։ Եւ Եւան, որ մինչև այժմ այնքան հանդիսատէր էր, յանկարծ զգաց այնպիսի մի անդուսպ զարշանքով, որ քիչ մնաց թերթն ուղղակի շպրտի վառարանի մէջ ճրթճրթացող կրակը։ Սակայն, զսպեց իրեն, և հիւանդոտ, դառն ժպիտը նորից ծամածռեց նրա գեղեցիկ դէմքը։ «Ինչո՞ւ,—մտածեց նա։—Մեղաւո՞ր է այս խեղճ լրագիրը, որ նա իր բազմաթիւ զէնքերից մէկն է շինել՝ միամիտներին խաբելու համար»։ Առաջուայ հանդարտութեամբ վերադարձաւ ծնողների մօտ, նըստեց լուսամուտի առաջ և սկսեց թերթել լրագիրը։

Նախ կարդաց մանր լուրերը, ուր մի առ մի յիշատակւում էին զանազան տեղերից ստացուած նուէրները, յայտնւում էին տեռորի ենթարկուած մի քանի մատնիչների անուններ, հաղորդւում էին հալածանքի և բռնութեան նորանոր դէպքեր։ Այդ լուրերի շարքում Եւան սկզբում զարմացած, յետոյ անհուն գոհունակութեամբ կարդաց մի լուր, ուր մերկացւում էր Բաղէնեանի իսկական անձնաւորութիւնը։ Կուսակցութեան օրգանը, բացէ ի բաց մերժելով Բաղէնեանի մասնակցութիւնն այն գործին, որի անունով փողեր էր հաւաքում, հասարակութեանը զգուշացնում էր այդ «խաչագողից» և «սուրբ գործի պարապիտից»։ Քիչ մնաց, որ Եւան՝ վեր թռչէր ուրախութիւնից և այդ յայտարարութիւնը բարձրաձայն կարդար ծնողների առաջ, բայց խելացի համարեց առժամանակ պահել այդ բանը, մինչև որ հայրն ու մայրը բոլորովին կը հանգստանային։ Նա անցաւ առաջնորդող յօդուածին, որի մէջ խմբագրութիւնը խիստ յարձակումներ էր գործում աղատ-կծու լեզուի ամենաղօրաւոր արտայայտութիւններով։

Այնուհետև Եւան աչքի անցկացրեց մի քանի ուրիշ յօդուածներ և թղթակցութիւնները։ Թղթակցութիւնների մէջ նրա առանձին ուշադրութիւնը գրաւեց մի նամակ, որ, ինչպէս երևում էր, վերջին դէպքերի ընդհանուր մի տեսութիւն էր պարզ ու հատու լեզուով գրուած։ Եւան ագահօրէն սկսեց կարդալ այդ նամակը։ Ընթերցման միջոցին նրա սիրտը յանկարծ սկսեց ա-

բազմոցին բարախել և դեմքը մի ակնթարթում մեռելի գույն ստացաւ...

Մէկ էլ—հայրն ու մայրը լսեցին սարսափելի մի ճիչ, այնքան սարսափելի, որ Թեկլէի ձեռքից վայր ընկաւ թէյի բաժակը և շրխկալով փշրուեց յատակի վրայ։ Հայրն ու մայրն խսկոյն վեր թռան տեղից և վազեցին դէպի աղջիկը։

Եւան քարացել էր աթոռի վրայ և անմիտ չուած աչքերով նայում էր ձեռքին բռնած լրագրի տողերին, կարծես այդ տողերը զարհուրելի օձեր լինէին, որոնք շարժւում էին իրենց լպրծուն մարմնի ահաբեկող-ճկուն գալարումներով, և նա չէր կարողանում աչքերը հեռացնել դրանցից։

—Ի՞նչ պատահեց, Եւա, ի՞նչ պատահեց,—կանչեցին Մարութեանն ու Թեկլէն սաստիկ վախեցած։

—Տեսէք, տեսէք... Արմենակը...,—խելագարի նման արտասանեց Եւան, մատը դնելով կարդացած վերջին տողերի վրայ։ Նրա ձեռքը սաստիկ դողում էր։

Մարութեանը լրագիրը խլեց նրա ձեռքից։

—Ի՞նչ կայ այստեղ... ի՞նչ կարդացիր... Արմենակն, ասում ես... Այս ի՞նչ թերթ է... Հա... Ո՞ւրտեղ է... Ո՞ւրտեղ կարդացիր Արմենակի մասին...

Եւան վերկացաւ տեղից։

—Տեսէք, տեսէք,—կրկնեց նա։—Արմենակը... Ա՛յ այստեղ... Չէ, այստեղ չէ... Ա՛յ... Չէ, սպասեցէք, այդ էլ չէ... Ո՞ւրտեղ է... Ա՛յ... Ո՜ւֆ, չէ։—Նա աչքերը պինդ տրորեց ձեռքերով և դողացող մատը նորից սկսեց շարժել լրագրի տողերի վրայ։—Ա՛յ, ա՛յ,—սարսափելի շընչիւնով արտասանեց նա, վերջապէս գտնելով կարդացած վերջին տողերը։

Մարութեանն ագահ աչքերով սկսեց լափել այդ տողերը։ Սկզբում կարդում էր ցածր, բայց յետոյ նրա

ձայնն սկսեց հետզհետէ բարձրանալ և վերջն արդէն կարծես խելագարի ճիչեր էին դուրս թռչում նրա բերանից։

Լրագիրը դուրս պրծաւ Մարութեանի ձեռքից, և բարակ, խշխշուն թերթիկները, բաժան-բաժան եղած, թրթռալով օդի մէջ, թեթև ցրիւ եկան յատակի վրայ։ Նրա ծնկները, սաստիկ դողդողալով, թուլացան, և նա, ձեռքով յենուելով լուսամուտի տախտակին, կամաց, կարծես խիստ յոգնած, նստեց աթոռի վրայ, զգալով, որ աչքերը մթնում են։

Նրան ուշքի բերեց ինչ-որ փափուկ և ահագին մարմնի ուժգին մի հարուած, որ յանկարծ դիպաւ նրա ծնկներին և վայր ընկաւ։ Նա բաց արեց աչքերը և, կարծես երազի մէջ, տեսաւ կնոջը իր ոտների առաջ, յատակի վրայ տարածուած...

Լրագրի մէջ յիշատակւում էր Արմենակ Մարութեանի չարաչար մահը թրքական ահարկու բանտի մէջ...

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Շահեանը ճաշը նոր վերջացրել և, ըստ սովորականին, պառկել էր, որ քնի, մէկ էլ վերմակի տակից լսեց, որ դուռը բացուեց զգուշօրէն։

—Լևոն,—լսեց նա մօր ձայնը։

Այդ ձայնը տարօրինակ շշնջիւնով և խիստ խորհրդաւոր հնչեց նրա ականջին։ Վերմակը արագ յետ քաշեց դէմքից և հարցական հայեացքով լուռ նայեց մօր աչքերին։

—Ինչ-որ կին է եկել, քեզ է ուզում տեսնել։

—Կի՞ն... Ի՞նչ կին,—զարմացաւ Շահեանը։

—Չգիտեմ։

Շահեանը դէն շպրտեց վերմակը և նստեց։ Ինչքան էլ որ նա հետաքրքրութեամբ հարցափորձ արեց, այնուամենայնիւ մօր պատասխաններից չկարողացաւ իմանալ, թէ ով կարող էր լինել իրեն տեսնել կամեցող կինը։ Շահեանի մայրն ինքն անձամբ չէր տեսել այդ կնոջը, այլ ասում էր այն, ինչ որ ասել էր իրեն նրան ներս հրաւիրող ծառան։ Շահեանի հետաքրքրութիւնը խիստ լարուեց մանաւանդ այն ժամանակ, երբ իմացաւ, որ այցելու կինը չափազանց կարևոր գործ ունի իր հետ և անպատճառ ուզում է տեսնել իրեն։ Այդպիսի անծանօթ մի հիւրի այցելութիւնն այնպիսի

եղակի երևոյթ էր նրա փակ կեանքի մէջ, որ մինչև անգամ իր ծուլութեանը յատուկ դժգոհութիւն չզգաց նա, երբ տեսաւ, որ ստիպուած է խանգարել իր սովորական հանգիստը։

Իսկոյն վերկացաւ, կարելոյն չափ շտապով լուացուեց, հագնուեց, մաղերը սանրեց, շտկուեց, թաշկինակով սրբեց ակնոցի ապակիները, դրեց աչքերին և սրտի թեթև դողոցով դիմեց դէպի հիւրասենեակ, ուր ծառան ներս էր հրաւիրել այցելու կնոջը։

Հիւրասենեակում սպասող այցելուն պանի Զդանևիչն էր։ Նախասենեակում նա չէր հանել իր երկայն ու լայն վերարկուն, որի սպիտակ մորթուց կարուած օձիքի երկայն ու դանդուր մաղերն օձապտոյտ իջնում էին ուսերից։ Գլխին փաթաթած էր նուրբ գործուածքի մետաքսեայ սև շալ, որի տակ նրա խիստ հարուստ մաղերը, ծոծրակի վրայ հաւաքուած, սար էին կազմել։ Շահեանին սպասելով յետ ու առաջ էր քայլում հիւրասենեակի երկարութեամբ փռուած գորգի վրայ, և նրա երկայն վերարկուի փոքր ինչ ցեխոտ փեշերն եռևից քարշ էին գալիս գետնին։

Այն հանգամանքը, որ այցելուն պանի Զդանևիչն էր, այնքան անակնկալ էր Շահեանի համար, որ հիւրասենեակը մտնելուն պէս տպշած կանգ առաւ ակամայ, մոռանալով հիւրասիրութեան ամենատարրական պայմաններն անգամ։

—Տեսնում եմ, որ չէիք սպասում, թէ ես կարող եմ լինել,—խօսեց պանի Զդանևիչն, արագ մօտենալով և մեկնելով նրան իր ձեռքը, որի վրայ ձեռնոց չունէր։ —Ներեցէք խնդրում եմ. տեսնում եմ, որ ձեզ խիստ անժամանակ եմ անհանգստացրել։

Շահեանը խիստ շփոթուած, բայց պինդ սեղմեց

նրա տաք ձեռքը և արագ շարժումներով, անկտրտ բառերով խնդրեց, որ նստի։

Պանի Զդանևիչը նստեց Շահեանի առաջարկած բազկաթոռի վրայ, նախապէս վերցնելով վերարկուն ու գլխի ծածկոցը։ Շահեանը ծառայութիւն մատուցանելու նախապատրաստ մարդու արագութեամբ առաւ նրա ձեռքից վերարկուն, որը զարմանալի թեթև թըւաց, տարաւ դրեց աթոռներից մէկի վրայ և նոյն արագութեամբ մի աթոռ առնելով՝ մօտ բերեց, բայց չնստեց։ Նոր զգաց, որ հիւրասենեակում բաւական ցուրտ էր, որովհետև երկար ժամանակից ի վեր վառարան չէր վառուել այդտեղ, ուստի պանի Զդանևիչին հրաւիրեց իր առանձնասենեակը, որտեղ վառարանն ամեն օր վառւում էր։ Բաւական կոկիկ կահաւորուած և զարդարուած տաք առանձնասենեակում պանի Զդանևիչին բազմեցրեց մութաքաներով և ասեղնագործ թաւշեայ բարձիկներով զարդարուած փոքրիկ բազմոցի վրայ, իսկ ինքը դարձեալ մի աթոռ առաւ, մօտ բերեց, բայց դարձեալ չնստեց։ Այժմ նա այնքան տիրապետում էր իրեն, որ կարողացաւ, թէև անշնորհք կերպով, իր «անչափ ուրախութիւնը» յայտնել պանի Զդանևիչի անսպասելի այցելութեան համար։

—Անսպասելի ոչ թէ միայն ձեզ, այլ և ինձ համար, պարոն Շահեան,—վրայ բերեց պանի Զդանևիչը և նայեց նրա ակնոցներին խիստ տխուր ժպիտով։— Այս իմ առաջին այցելութիւնն է, որ երևի և վերջինը կըլինի։

—Դուք գնո՞ւմ էք։

Պանի Զդանևիչը ծանր թառանչ արձակեց։

—Այո՛, պարոն Շահեան, ես հեռանում եմ,—ծանր, հանդիսաւոր ձայնով արտասանեց նա, իր հանգիստ դառնութեամբ լի աչքերը չհեռացնելով Շահեանի ակ-

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Շահեանը ճաշը նոր վերջացրել և, ըստ սովորականին, պառկել էր, որ քնի, մէկ էլ վերմակի տակից լսեց, որ դուռը բացուեց զգուշօրէն։

—Լևոն,—լսեց նա մօր ձայնը։

Այդ ձայնը տարօրինակ շշնջիւնով և խիստ խորհրդաւոր հնչեց նրա ականջին։ Վերմակը արագ յետ քաշեց դէմքից և հարցական հայեացքով լուռ նայեց մօր աչքերին։

—Ինչ-որ կին է եկել, քեզ է ուզում տեսնել։

—Կի՞ն... Ի՞նչ կին,—զարմացաւ Շահեանը։

—Չգիտեմ։

Շահեանը դէն շպրտեց վերմակը և նստեց։ Ինչքան էլ որ նա հետաքրքրութեամբ հարցուփորձ արեց, այնուամենայնիւ մօր պատասխաններից չկարողացաւ իմանալ, թէ ով կարող էր լինել իրեն տեսնել կամեցող կինը։ Շահեանի մայրն ինքն անձամբ չէր տեսել այդ կնոջը, այլ ասում էր այն, ինչ որ ասել էր իրեն նրան ներս հրաւիրող ծառան։ Շահեանի հետաքրքրութիւնը խիստ լարուեց մանաւանդ այն ժամանակ, երբ իմացաւ, որ այցելու կինը չափազանց կարևոր գործ ունի իր հետ և անպատճառ ուզում է տեսնել իրեն։ Այդպիսի անծանօթ մի հիւրի այցելութիւնն այնպիսի

նոցից։—Հեռանում եմ ամեն կերպ ստորացած, ամեն կերպ անարգուած, ամեն կերպ... խայտառակուած։

Նրա լայն բացած աչքերի կոպերը և լիքը կզակը դողդողացին։ Նա շրթունքները պինդ սեղմեց իրար այն մարդու նման, որի սիրտը յանկարծ լցւում է։ Այնուհետև, առանց շտապելու, հանեց թաշկինակը և սկսեց ծայրով սրբել արտասուակալած աչքերը։

Շահեանը չափազանց հետաքրքրուեց։ Նա նոր էր տեսնում, որ պանի Զդանևիչի մէջ մեծ փոփոխութիւն էր կատարուել։ Արտաքինով այդ կինը նոյնն էր,—նոյն հսկայ, «սարսափելի» գեղեցիկ և վեհանձն կինը։—բայց նրա խորհրդաւոր խօսքերը, նրա ճնշուած ձայնը, յուսահատական հայեացքը, վերջապէս այդ արտասուքը... ի՞նչ էին նշանակում դրանք... Շահեանը կամաց նստեց աթոռի վրայ և դրեթէ շշնջալով, կարծես վախենալով, հարցրեց.

—Պանի Զդանևիչ, ի՞նչ է պատահել։

Պանի Զդանևիչը թաշկինակը հեռացրեց աչքերից։

—Մի՞թէ, յիրաւի, դուք ոչինչ չգիտէք,—հարցրեց նա արագախօսութեամբ։—Մի՞թէ դոնէ չէք կասկածել...

—Ի՞նչ։

Պանի Զդանևիչը կարճ ժամանակ զարմացած նայեց Շահեանի աչքերին։ Մի տեսակ մանկական վախկոտ ապշութիւն արտայայտող այդ տնալի աչքերն այնքան բարի, այնքան միամիտ էին և այնպիսի վստահութիւն ներշնչող, որ պանի Զդանևիչը նստած տեղում ակամայ մի շարժում գործեց, որով կարծես ուզում էր մօտենալ նրան և առնել նրա ձեռքը։

—Լսեցէք, պարոն Շահեան,—շշնջաց նա նոյն արագախօսութեամբ, և նրա ձայնը դողում էր կոկորդի մէջ։—Թէև իսկապէս ոչ դուք էք ճանաչում ինձ, ոչ ես ձեզ, բայց և այնպէս ինձ թւում է, թէ սիրտս չի խաբել ինձ, որ եկել եմ ձեզ մօտ, իբրև եղբօրս մօտ, որի առաջ կարող եմ թափել սրտիս բոլոր դառնութիւնը... Այո՛, դուք չգիտէք, թէ ով եմ ես, և, եթէ իմանաք, պիտի ասէք, թէ ինչպէս ես այժմ խօսում եմ ձեզ մօտ այսպիսի յուսահատութեամբ, այսպէս լաց եմ լինում ձեր առաջ...

Եւ պանի Զդանևիչն այս անգամ հեկեկաց, թաշկինակը պինդ սեղմելով աչքերին։

Շահեանը վշաքաղուեց և չափազանց անյարմար դրութեան մէջ զգաց իրեն։ Մինչև այժմ պանի Զդանևիչի վրայ նայում էր այն ասոիճան պատկառանքով, այդ կնոջ արտաքինն այն ասոիճան ճնշում էր նրան իր սքանչելի վեհութեամբ, իր տիպական գեղեցկութեամբ, որ այժմ այդ հպարտ կնոջ հեծկլտանքը կատարեալ մի դիսոնանս էր առաջացնում նրա զգացումների և տպաւորութիւնների մէջ։ Առաջուայ վեհանձն, խշխող, ընկճող պանի Զդանևիչն ընկել էր իր բարձրութիւնից այն ասոիճան, որ այժմ դարձել էր պարզապէս ողորմելի, կարեկցութիւն շարժող հասարակ մի կին։ Շահեանը յիշեց, որ պանի Զդանևիչին այդպիսի դրութեան մէջ, թէև բոլէաբար և հեռուից, տեսել էր մէկ էլ «Լոնդոն» հիւրանոցի միջանցքում, երբ նա լացակումած դուրս եկաւ Բազէնեանի սենեակից։ Այդ յիշողութիւնը Շահեանի մտքի մէջ կայծակի արագութեամբ վերարտադրեց պանի Զդանևիչի և Բազէնեանի միջև եղած խորհրդաւոր յարաբերութիւնների այն պարագաները, որոնց ինքն անձամբ ականատես էր եղել նախ «Միխայլովո» կայարանում, յետոյ «Լոնդոն» հիւրանոցում, հիւանդ Բազէնեանին այցելած ժամանակ։ Եւ նա, որ մինչև այժմ լոկ ենթադրութիւններով էր զոհացում տալիս իր ակամայ հետաքրքրութեանն այդ յարաբերութիւնների իսկական բնաւորութեան մասին,

այժմ մի անգամից, թէև ոչ բոլորովին, կարծես դլխի ընկաւ, թէ ինչ էին նշանակում պանի Զդանևիչի կըցկտուր խօսքերը, նրա յուսահատական հեկեկանքը...

Մինչդեռ Շահեանն, այդ յայտնագործութիւնից ապշած, խօսք չէր դտնում ասելու, պանի Զդանևիչը, թաշկինակն աչքերին սեղմած, շարունակում էր զսպած կերպով հեծկլտալ, որից նրա հսկայական մարմինը ցնցւում էր ամբողջապէս։

Յանկարծ վերին աստիճանի անկեղծ և յարդական-կարեկցական մի զգացում շարժեց Շահեանի սիրտն այն աստիճան, որ նա մոռացաւ իր ընածին ամօթխած անվստահութիւնը և, մեքենայաբար վերկենալով, մօտեցաւ պանի Զդանևիչին։

—Պանի Զդանևիչ,—շշնջաց նա։—Հանգստացէք խնդրում եմ։

—Պանի Զդանևիչը յանկարծ դադարեց հեծկլտալուց, արագ վեր կացաւ տեղից և յուսահատական աղերսանքով առաւ նրա ձեռքը։

—Պարոն Շահեան, սիրելի բարեկամս,—արտասանեց նա, արտասուքը կուլ տալով։—Աննեբելի անմտութիւնս է, թէ ճակատագիրս,—ձգել է ինձ այս օտար, այս անծանօթ քաղաքը, ուր բացի ձեզնից, ոչ մի բարեկամ չեմ ճանաչում, չունիմ։ Եւ ահա ես եկել եմ ձեզ մօտ, իբրև մի մարդու մօտ, որը, հաւատացած եմ, կըհասկանայ ինձ, կըմտնէ դրութիւնս, չի դատապարտիլ ինձ և... չի խնայիլ իր օգնութիւնը։ Ինձ չափազանց հեռու կըտանի, եթէ պատմեմ ձեզ, թէ ինչն է ստիպել ինձ, որ եկել եմ ձեր դուռը։ Բաւական է ասեմ, որ ձեր ընկերոջ՝ Բաղէնեանի շնորհիւ ես այժմ զրկուած եմ միանգամայն ոչ թէ միայն իմ դիրքից, իմ անունից, իմ պատուից, այլ և իմ ամբողջ կարողութիւնից... Նա ըներից ինձ այստեղ, ձգեց մինակ ու անօգնական և... փախաւ։ Փախաւ ամենաանարդ կերպով, փախաւ թաքուն, գողի նման... Եւ, ահա, ստիպուած եկել եմ ձեզ մօտ... Ուզում եմ վերադառնալ... միջոց չունիմ, որովհետև կողոպտուած եմ... Եթէ դուք... ես պատրաստ եմ մուրհակ... տոկոս տալ...

Շահեանը կամաց ազատեց իր ձեռքը նրա ցնցողաբար սեղմող ձեռքի միջից։

—Ո՞րքան կըկամենայիք,—հարցրեց նա հանդիստ, լուրջ ձայնով։

—Այսպէս... մի երկու հարիւր... աւելի չէ։ Ես պատրաստ եմ...

Շահեանը ձեռքի շարժումով հասկացրեց նրան, որ հարկաւոր չէ այդ մասին խօսել, արագ մօտեցաւ դրասեղանին, դուրս քաշեց գզրոցներից մէկը և միջից հանեց մի կոյտ թղթադրամ։ Այդ իր կալուածների ամսական վարձագնի մի մասն էր, որ Ստեփանը, կալուածների կառավարիչը, հաւաքել և մի քանի օր առաջ յանձնել էր նրան։ Նա համարեց քսան հատ տասն ռուբլանոց, սակայն առանց հաշիւ տալու իրեն՝ ճիշտ քսան հատ համարեց, թէ աւելի կամ պակաս, որովհետև խիստ յուզուած էր, և դրեց պանի Զդանևիչի առաջ։

Պանի Զդանևիչը, սաստիկ զգացուած, արտասուքն աչքերին, մօտեցաւ նրան, բայց նա յետ քաշուեց և արագախօսութեամբ նկատեց.

—Եթէ շնորհակալութիւն պիտի յայտնէք, ես դուրս կըգնամ։

Պանի Զդանևիչը ձեռքերն աղերսագին մեկնեց դէպի նա։

—Ոչ, ես ոչինչ չեմ ասիլ. միայն թոյլ տուէք սեղմեմ ձեր բարի ձեռքը։

Շահեանը պարզեց ձեռքը։

Պանի Զդանևիչը առաւ այդ ձեռքն իր տաք ձեռ-

քերի մէջ և լուռ հիացմունքով, անհուն երախտագի-
տութեամբ սեղմեց իր փափուկ կրծքին։

II

Շահեանը մինչև փողոցի դուռը ճանապարհ ձգեց
պանի Զդանեիչին։ Այստեղ նա վերին աստիճանի յար-
գանքով բաժանուեց պանի Զդանեիչից և չհեռացաւ
դռնից, մինչև որ պանի Զդանեիչը, վերարկուի երկայն
փեշը սառած ձիւնի վրայ քարշ տալով ետևից, ծռուեց
փողոցի անկիւնը և չքացաւ։ Նա դուռը փակեց և վա-
ղեց վերև։

Սանդուղքի գլխին, նախասենեակում, նրա դէմն
ելաւ մայրը։

—Ո՞վ էր,—հարցրեց Թամարը հետաքրքրութեամբ։

Շահեանը յանկարծ, բոլորովին հակառակ իր
բնաւորութեան, կատակ անելու տրամադրութիւն
զգաց։

—Իմ սիրուհին, մայրիկ,—բացականչեց նա։—Եւ
գիտե՞ս ինչու էր եկել։ Եկել էր փող խնդրելու։ Ես էլ
տուի։

—Ես էլ հաւատացի,—հանդիստ նկատեց մայրը։

—Այդ աւելի լաւ, որ չես հաւատում,—նկատեց
Շահեանը ծիծաղելով։—Բայց տեսնը նրան։

—Տեսայ։

—Հաւանեցիր։ Սիրուն էր, չէ՞։ Ես տգեղ սիրու-
հիներ չեմ պահիլ։

Մայրն այս անգամ պարզապէս ապշած նայեց
որդու անսովոր ուրախութիւնից փայլող աչքերին։

—Լեռն, այդ ինչեր ես ասում...

—Ի՞նչ է, ամենքը սիրուհի են պահում, ես էլ ո՞ր
պահեմ, ամօթ բան է։

—Ի՜հ, գնա, քո գլուխը չունեմ,—քրթմնջաց բարի
պառաւը։—Ներս գնա, ներս, մրսեցիր։ Այս ցրտին գըլ-
խաբաց էլ գնում ես մինչև դուռը ճանապարհ դնելու...
Նրա աչքն էլ կարեմ։

—Օ՜, մայրիկ, զգուշացիր. ես թոյլ չեմ տալ, որ
նրա հասցէին այդպիսի խօսքեր ասես։

—Ցիմար-յիմար մի խօսիր, ներս գնա ասում
եմ,—հրամայեց նրան մայրը բարկացած։

Շահեանը բարձրաձայն ծիծաղեց և անցաւ իր
ննջարանը։ Բայց այնքան ուրախ էր, սրտի մէջ այն-
պիսի մի թեթևութիւն, երակների մէջ այնպիսի մի
դրդիռ էր զգում, որ այլևս պառկել քնել չէր կարող։
Մի բան, անհասկանալի մի զօրութիւն մաղնիսի պէս
ձգում քարշում էր նրան դէպի առանձնասենեակը—
այնտեղ, ուր մի քանի րոպէ առաջ պանի Զդանեիչի
հետ էր։ Եւ անցաւ դէպի այդ սենեակը։ Մտնելուն պէս
նրա քթովը դիպաւ պանի Զդանեիչի հագուստին սրբս-
կուած հոտաւէտ օծանելիքի սուր բուրմունքը, որ դեռ
ևս կանգնած էր այնտեղ։ Նա կանգ առաւ ակամայ և
առանձին ախորժակով ծծեց սենեակի՝ անուշհոտու-
թեամբ յագեցած օդը։ Գեղեցիկ կնոջ մարմնի ներկա-
յութիւնը նա զգաց միայն այժմ, երբ այդ կինն այլևս
այնտեղ չէր։ Շահեանի համար այդպէս էր եղել միշտ,
այդպէս էր և այժմ. կինը մօտիկից, կինն իրականու-
թեան մէջ, շօշափելի կինը նրա վրայ այն տպաւորու-
թիւնը չէր գործում, ինչ որ կինը հեռուից, կինը երևա-
կայութեան մէջ, անշօշափելի կինը։ Կնոջ մտացա-
ծին պատկերն աւելի զօրեղ ազդեցութիւն ունէր նրա
վրայ, քան թէ իրական կինը։ Իրականութեան մէջ
կոյսի պէս ամօթխած լինելով, երևակայութեան մէջ
համարձակ էր ցինիկի և էրոտիկի պէս...

Շահեանը նստեց բազմոցի վրայ, այնտեղ, ուր

նստած էր պանի Զդանևիչը, և հաւաքեց իր վաւաշոտ երևակայութեան բոլոր ոյժն աւելի որոշ կերպով մտապատկերելու համար այդ հրաշալի կնոջ խոշոր, տիպական դէմքը, նրա հարուստ մազերը, հագուստի մէջ ամուր սեղմուած լիք իրանը։ Նա առանձին հեշտանքով կանգ առաւ մանաւանդ այն մտապատկերի վրայ, երբ պանի Զդանևիչն առաւ նրա ձեռքն իր երկու ձեռքերի մէջ և սեղմեց իր կրծքին։ Ինչքան փափուկ, ինչքան տաք էին այդ ձեռքերը, այդ փափուկ կուրծքը... Եւ Շահեանը յանկարծ ցանկացաւ գժի պէս համբուրել այդ ձեռքերը, դէմքը թաղել այդ կրծքի մէջ և հալուել, ինչպէս հալւում է ձիւնը արևի տաք ճառագայթների տակ։

Կարծես մոգական մի գաւազանի զօրութեամբ չքացել էր Շահեանի սովորական քնածութիւնը. երիտասարդական արիւնն սկսել էր եռալ նրա երակների մէջ անսովոր տաքութեամբ։ Օրն անցկացրեց տենդային տանջող դրութեան մէջ, մթագնած ուղեղով, խառնաշփոթ անմաքուր զգացումներով։ Արիւնը գլուխն էր ընկել և կատաղի ալիքներով զարկւում էր քունքերին։ Նրա մէջ շարժուել էր արուն, ախտաբանական արարածը, որից աւելի զօրաւոր ոչինչ չկայ աշխարհիս երեսին, բացի մահից։ Գիշերը նրա քունը նման էր պարզապէս մի մղձաւանջի, որի մէջ չէր իմանում՝ քնած է, թէ արթուն. զգում էր միայն, որ սարսափելի տանջւում է։

Առաւօտեան վերկացաւ սաստիկ թուլացած մարմնով և շատ վատ տրամադրութեան մէջ։ Անլուայ երեսով, խալաթը հագին նստած էր լուսամուտի առաջ, մռայլ կարմրատակած աչքերով նայում էր դուրս և մտածում էր պանի Զդանևիչի մասին, երբ ծառան մտաւ և մի նամակ յանձնեց նրան։ Նա պատռեց ծրարը, հանեց նամակը, և նրա քթին նորից դիպաւ նոյն անուշահոտ օծանելիքի սուր բուրմունքը։ Նամակի մէջ խոշոր, փութկոտ, համարձակ գրերով գրուած էր հետևեալը.

«Աղնիւ բարեկամս արդեօք կըհաճի՞ այսօր, երեկոյեան ժամը 7-ին, կամ երբ ինքը ցանկայ, շնորհ բերել ինձ մօտ («Կաւկազ» հիւրանոց, № 18)։ Եթէ պ. Շահեանը չի մերժիլ այս խնդիրքը, անչափ գոհ կըլինի նրանից իր երախտապարտ և իրեն սպասող

«Պանի Զդանևիչը»։

Շահեանը կարդաց այդ նամակը, և նրա սիրտը դող ընկաւ։ Այն անհամեստ միտքը, որ տանջում, խելայեղորութիւն էր պատճառում նրան ամբողջ գիշերը, այժմ մեխի պէս ցցուեց նրա գլխում, և նա սարսափեց։ Դա անփորձութեան սարսափն էր իրականութեան առաջ։

Պանի Զդանևիչի վրայ, երեկուայ այցելութիւնից յետոյ, նա արդէն որոշ գաղափար էր կազմել.—այդ կինը Բազէնեանի սիրուհին է եղել. դա նշանակում է, որ նա ծախու կին է, թէև, շատ կարելի է, ոչ սովորական ծախու կանանցից։ Յամենայն դէպս, պանի Զդանևիչը խստապահանջ բարոյականութեան տէր կին չէր, Շահեանի կարծիքով։ Արդ՝ ի՞նչ միտք ունէր այդ կինը, որ, իր երեկուայ այցից յետոյ, այժմ հրաւիրում էր նրան իր մօտ։ Իր խնդրած օգնութիւնը ստացաւ, ուրիշ ի՞նչ էր կամենում։ Արդեօք նորից փող խնդրել, թէ՞ վարձահատոյց լինել...

Շահեանը չէր կարծում, թէ պանի Զդանևիչը դարձեալ փող խնդրելու համար լինէր իրեն հրաւիրելիս. այդպիսի դէպքում դարձեալ ինքը կըգար (և ոչ տեղից դիտէր նա իր տան հասցէն)։ Մնում էր երկրորդ հնը

թաղրութիւնը, այն է՝ պանի Զդանևիչն իրեն հրաւիրում էր վարձահատոյց լինելու համար այն բանով, ինչով որ վարձահատոյց են լինում առհասարակ ծախու կանայք... Ահա, այդ միտքն էր, որ սարսափեցրեց Շահեանին։ Այն, ինչ որ նրա վաւաշոտ երևակայութեան համար խաղ ու պար էր, այժմ մերկ իրականութեան առաջ փախուստ էր տալիս վախկոտ մկան պէս։

Երբէք նա, իբրև աղամարդ, իրեն այնպէս թոյլ, երկչոտ ու ողորմելի չէր զգացել մի կնոջ վերաբերմամբ, ինչպէս այժմ։ Իր կատարեալ անփորձութեան, իր կուսութեան սարսափը չէր միայն, որ ստիպում էր նրան փախչելու պանի Զդանևիչից, այլ և այն ամօթի զգացումը, որ ինքն անկարող պիտի լինի այդ կնոջ հետ վարուել ազատ, համարձակ, աղամարդի պէս, ինչպէս վարուում է մինչև անգամ վերջին գիմնազիստը։

Ամբողջ օրը խիստ տարօրինակ անհանգստութեան մէջ էր Շահեանը։ Նա, որ երբէք սովորութիւն չունէր սենեակի մէջ քայլելու, այժմ արագ յետ ու առաջ էր շրջում և մտածում՝ գնա՞ր, թէ չգնար պանի Զդանևիչի մօտ։

Քսան անգամ կարդաց նամակը, քսան անգամ նստեց, որ պատասխան գրի, թէ՝ «դժբաղդաբար, գործերի պատճառով» չի կարող գնալ,—ձեռքն առաջ չէր գնում. ամեն անգամ նրա առաջ պատկերանում էր պանի Զդանևիչը իր յաղթական հասակով, իր փարթամ իրանով, իր ամբողջ էութեան անդիմադրելի հմայքով։ Իսկ նամակից բուրող այդ դրգռիչ անուշահոտութիւնը, խելագարեցնելու չափ հեշտանք էր պատճառում նրան... Նրան թւում էր, թէ արհեստական հոտ չէ այդ, այլ հէնց ցանկալի կնոջ մարմնի բուրմունքը...

«Օ՜հ, կըգնամ, կըգնամ, մեռնեմ էլ—կըգնամ... վը՞

պակոթիս տալով կըտանեմ ինձ», բացականչեց նա ինքըն իրեն, շարունակելով արագ քայլել սենեակում։

Ճաշին մայրը զարմանքով տեսաւ, որ որդին գինին սովորականից աւելի է խմում և մերթ մտախոհութեան մէջ է ընկնում, մերթ խիստ ուրախանում։ Նրանց ճաշը սովորաբար անցնում էր սուս ու փուս, բայց Շահեանն այս անգամ լեզու էր կորուել։ Այս անգամ մօրը պատմեց, թէ ով էր երեկուայ այցելու կինը և ինչու էր եկել, բայց չասաց, թէ այդ երեկոյ հրաւիրուած է նրա մօտ։ Ճաշից որ վերկացաւ, ուղղակի արբած էր և գինու ազդեցութեան տակ հաստատ վճռել էր, որ անպատճառ պիտի գնայ պանի Զդանևիչի մօտ։ Եւ արբել էր հէնց այն նպատակով, որ գնայ։

Այդ օրը, ճաշից յետոյ, քնելու մասին մտածել անգամ չէր կարող—այն աստիճան գերել էր նրան ժամը 7-ին պանի Զդանևիչի մօտ լինելու միտքը։ Եւ նա սրատարով սպասում էր, թէ երբ պէտք է օրը մթնի։

Սակայն, ձմեռուայ կարճատև օրը շատ շուտ մթնեց։ Ժամը 6-ին, պանի Զդանևիչի նշանակած ժամանակից մի ժամ առաջ, Շահեանը հագնուեց առանձին խնամքով և, մօրն ասելով թէ գնում է թատրոն, դիմեց դէպի «Կաւկազ» հիւրանոց։ Սկզբում քայլում էր կայտառ, համարձակ, բայց յետոյ, քանի մօտենում էր հիւրանոցին, այնքան նրա քայլերը դանդաղում էին։ Ձմեռուայ ցուրտ օդը կամաց-կամաց սառեցնում էր նրա արհեստական կերպով տաքացած արիւնը։ Սկզբում չէր զգում, բայց յետոյ տեսաւ, որ ատամները դարկւում են իրար։ Շրթունքները պինդ հուպ տուեց, որ զսպի ամբողջ մարմնի մէջ զգացած տարօրինակ դողը, բայց և այնպէս ներանի մերթ այս, մերթ այն կողը ջղաձգաբար վերև էր թռչում, իր հետ վերև ձգելով նաև վզի մկանունքները։ Եւ այդ բոլորը հետզհետէ

սաստկանում էր, քանի մոտենում էր հիւրանոցին։ Նա պարզ հաշիւ չէր կարողանում տալ իրեն, թէ ինչից էր այդ տարօրինակ դողը—ցրտից արդեօք, թէ՞ այն բանից, ինչ որ սպասում էր գտնել պանի Զդանևիչի մօտ։

Դեռ «Կաւկազ» հիւրանոցին չմօտեցած՝ կանգ առաւ պայծառ լուսաւորուած խանութներից մէկի առաջ, ժամացոյցը հանեց և նայեց, ժամը 6-ից անցած էր 25 րոպէ։ «Դեռ վաղ է,— մտածեց.— մի քիչ ման կը գամ այստեղ, մինչև որ 7-ը լրանայ»։ Ու յետ դարձաւ։

Գինու ազդեցութիւնը դեռ ևս բոլորովին չէր անցել նրա գլխից, բայց ցուրտ, թարմ օդը հետզհետէ աւելի զգաստացնում էր նրան։ Եւ որքան զգաստանում էր, այնքան աւելի ու աւելի զգում էր, որ խիստ բաղդաւոր պիտի լինէր, եթէ ստացած չլինէր պանի Զդանևիչի նամակը։ Ի՞նչ էր ուզում այդ կինն իրենից։ Ինչո՞ւ եկաւ և վրդովեց իր հանգիստը, որ հազիւ հազ ձեռք էր բերել վերստին, Եւայի և Բազէնեանի հետ ունեցած միջադէպից յետոյ։ Ինչո՞ւ առիթ տուեց, որ նրա մէջ այժմ նորից շարժուել է իր կեանքն այնքան դառնացնող անձնաքննութեան թոյնը։ Ահա, նա նորից լցուել է ատելութեամբ դէպի ինքը,—ինչո՞ւ համար...

Սակայն, ի հարկէ, Շահեանը շատ լաւ հասկանում էր, որ պանի Զդանևիչն այդ բոլորի մէջ ամենուին յանցանք չունէր. այդ կնոջ յանցանքն այն էր միայն, որ գեղեցիկ էր, եկել էր Շահեանից օգնութիւն խնդրելու և միւս օրը հրաւէրի մի նամակ էր գրել։ Ճշմարիտ է, այդ նամակը պարզ չէր. բայց մի՞թէ հէնց նրա համար, որ այդ նամակը պարզ չէր, պանի Զդանևիչի հրաւէրին նա անպատճառ այն բացատրութիւնը պիտի տար, որ այնքան ցանկալի էր նրա վաշտ

ուշոտ երևակայութեան համար և որը, միևնոյն ժամանակ, այնքան սարսափեցնում էր նրա վախկոտ կամքը։ Պանի Զդանևիչը կարող էր Բազէնեանի սիրուհին լինել, բայց այդ չէր նշանակում, թէ նա անպատճառ և ծախու կին պիտի լինի։

Շահեանն այս անգամ քստմնեց ինքն իրենից. քստմնեց այն վատ, անմաքուր մտքերից, որոնք այնքան յուզում, այնքան պղտորում էին իր զգացումները։ Շատ լաւ ճանաչում էր իրեն. գիտէր, որ կնոջ վերաբերմամբ որքան որ գործնականապէս անարատ է ինքը կոյսի նման, այնքան տեսականապէս ապականուած և այլասերուած է զգայումներով. բայց չէր կարծում, թէ այդ ապականումն ու այլասերումն իր մէջ այն աստիճան զարգացած կարող է լինել, որ հասարակ մի նամակի մէջ, այդ նամակից բուրող անուշահոտութեան մէջ անգամ ուրիշ բան չի կարող տեսնել, քան եթէ միայն կնոջ տաք գրկախառնութիւն, կնոջ մարմնի իւրայատուկ բուրմունք... Այդ սոսկալի է. այդ նշանակում է բարոյական կատարեալ անկումն և աւելի դարշելի ու կորստաբեր անկումն, քան օր ու գիշեր անառականոցներումն անցկացնող մարդու անկումը...

Եւ Շահեանը կատարեալ յուսահատութեամբ նորից կանգ առաւ Գալաւինսկի պրոսպեկտի պայծառ լուսաւորուած խանութներից մէկի առաջ։

Երեկոն շատ ցուրտ էր. ձիւնի հատ-հատ փաթիլներ, փողոցի լուսաւորութեան մէջ սպիտակին տալով, դանդաղօրէն ցած էին թափւում սառած, պլպլող գետնի վրայ. լայն մայթը կամաց-կամաց ծածկւում էր սպիտակ սաւանով։ Անցուդարձը շատ քիչ էր. Շահեանի առաջով շտապ քայլերով անցնում էին կէնտուկունտ մարդիկ, վերարկուների օձիքը բաձրացրած և

ձեռքները դրպանների մէջ կոխած։ Բաւական լաւ հագնուած մի կին վարդագոյն այտերով, տափակ քթով յանկարծ կանգ առաւ նրա առաջ և նայեց նրան տարօրինակ պլպլող աչքերով։

—Ներեցէք, պարոն. ժամը քանիսն է,—հարցրեց նա։

Այդ անակնկալից շփոթուած, Շահեանը մեքենայաբար հանեց ժամացոյցը և նայեց. ժամը 7-ից պակաս էր մի քառորդ։

—Օ՜հ, ինչ վաղ է դեռ,—բացականչեց կինը, մի բոպէ աննպատակ կերպով նայեց այս ու այն կողմը, յետոյ նորից փայլեցնելով իր տարօրինակ պլպլող աչքերը Շահեանի վրայ, անցաւ և կանգնեց Շահեանից մի երկու քայլ հեռու։

Շահեանը շտապեց հեռանալ և, վախենալով որ կինը կարող է հետամուտ լինել իրեն, քայլերն արագացրեց։ Բաւական երկար տեղ անցնելուց յետոյ յետ նայեց և, ոչ մի կին չտեսնելով, հանգստացաւ։ «Կաւկազ» հիւրանոցի առաջ կանգ առաւ և նայեց քաղաքային տան ժամացոյցին. սլաքները ցոյց էին տալիս 7-ից 10 բոպէ պակաս։ Ուրեմն դեռ ևս ժամանակ կար մտածելու—գնա՞ր պանի Զդանևիչի մօտ, թէ ոչ։ Եւ յետ դարձաւ։ Դառնալիս հանդիպեց ժամը հարցնող կնոջը մի սպայի հետ։ Կինն անցաւ ուղղակի Շահեանի կողքով առանց ուշադրութիւն դարձնելու նրա վրայ. անցաւ բարձրաձայն և ուրախ խօսելով սպայի հետ, որը նայում էր նրան արուի աչքերով և ձեռքով ոլորում բեխի մի ծայրը։

Շահեանը մի քանի անգամ անցաւ ու դարձաւ և այդ բոլոր ժամանակ իբրթէ մտածում էր՝ գնա՞ր պանի Զդանևիչի մօտ, թէ ոչ, բայց իսկապէս այլևս ոչինչ չէր մտածում, այլ միայն դիտում էր իր օտարոտի

վարմունքը, մտքումը ծիծաղում էր իր վրայ, ծաղրում էր իր անհամարձակութիւնը. սրտանց հայհոյում էր իրեն, կարծես ինքը չէր իր այդ դիտողութեան, այդ ծիծաղի, ծաղրի և հայհոյանքի առարկան, այլ մի ուրիշը, որին արհամարհում և ատում էր հոգու բոլոր կարողութեամբ։

Երբ քաղաքային տան ժամացոյցը խփեց եօթը և մի կէս ժամ էլ անցաւ, Շահեանը յանկարծ թքեց ինքն իր հասցէին և վճռեց տուն դառնալ։ «Այսպէս է լինում միշտ, երբ մարդ ինքն իր վզակոթին տալով է ուզում իրեն որևէ տեղ տանել»—մտածեց նա։

III

Բայց հազիւ նա մի քանի քայլ էր արել, որ գնայ նստի հրապարակում կանգնած կառքերից մէկը, երբ յանկարծ կանգ առաւ դրեթէ սարսափած։

Նրա առաջ կանգնած էր ինքը պանի Զդանևիչն իր պարթև հասակով, մազածածկ վերարկուի մէջ կոլոլուած։

—Բարև ձեզ, պարոն Շահեան, բացականչեց պանի Զդանևիչն ուրախացած և ամուր սեղմեց նրա ձեռքը։—Ստացա՞ք նամակս։

—Ստացայ։

—Յետո՞յ։ Ձէ՞ք ուզում գալ ինձ մօտ։

Շահեանը հազիւ կարողացաւ տիրապետել իրեն։

—Ինչպէս չէ... Հէնց դրա համար էլ դուրս եմ եկել... Բայց... այստեղ մի փոքրիկ գործ ունէի... ասացի մէկ գնամ վերջացնեմ, յետոյ...

—Այդ լաւ է։ Ուրեմն դուք դեռ չէք մտել ինձ մօտ։ Ես մեկնելու եմ վաղն առաւօտեան, դրա համար դուրս եկայ մի քանի բաներ գնելու և դռնապանին

պատուիրել էի, որ եթէ գաք, խնդրէ, որ սպասէք ինձ. սենեակիս դուռն էլ, յամենայն դէպս, բաց էի թողել: Բայց, իսկապէս, չէի կարծում, թէ կըգաք, որովհետև նամակիս չէիք պատասխանել: Ես այժմ ինչ որ հարկաւոր էր, առել պրծել եմ և տուն եմ գնում: Ուրեմն ձեր գործը վերջացնելուց յետոյ կըգաք, սպասեմ, հմ:

—Այո, ես խոկոյն...

Եւ Շահեանը, ցոյց տալու համար, որ իբրթէ խոկապէս գործ ունի, արագ քայլերով հեռացաւ: Նա գնաց, գնաց և, երբ բաւական հեռացաւ, քայլերը դանդաղեցրեց և ծիծաղեց ինքն իր վարմունքի վրայ: Անցաւ Դիվարցովայա փողոցը, ամբողջ Գալաւինսկի պրոսպեկտը և յետ դարձաւ: Ինչպէս գնալիս, այնպէս և դառնալիս, կանգ էր առնում այս ու այն խանութի պատուհանների առաջ, անուշադրութեամբ դիտում էր ներսը դասաւած իրերը, որոնք, սակայն, պարզ չէին երևում քրտնած ապակիների միջից, և այդ բանն անում էր միմիայն նրա համար, որ կարելոյն չափ ուշանայ և իր ուշանալովը ապացուցանի պանի Զդանևիչին, թէ ինքն իսկապէս գործի համար է եղել գնացած:

Կէս ժամ անցնելուց յետոյ, վերջապէս վճռեց, որ այժմ կարելի է գնալ: Զգնալ այլևս չէր կարող, որովհետև խօսք էր տուել: Բայց կեղծիքը պէտք էր շարունակել. ամեն բանով այժմ ցոյց պիտի տար պանի Զդանևիչին, որ ինքը, հակառակ իր ցանկութեան, փոքր ինչ ուշացել է. դրա համար խիստ արագացրեց քայլերը, չնայելով որ ամեն մի քայլափոխին ոտները սահում էին ձիւնի վրայ. նոյնպիսի արագութեամբ բարձրացաւ հիւրանոցի սանդուղքով և միջանցքում պատահած առաջին սպասաւորին դիտմամբ բարձրաձայն հարցրեց № 18 սենեակը, թէև առանց հարցնելու էր կարող էր գտնել:

Նոյն րոպէին նրանից մի քանի քայլ հեռու մի դուռ արագօրէն բացուեց, և շեմքում երևաց պանի Զդանևիչը ժպտադէմ:

—Համեցէք, այս է իմ սենեակը:

Շահեանը գործից վերադարձող մարդու բռնի կեղծ աշխոյժով թափ տուեց վերարկուի կրծքին և ուսերին նստած ձիւնը, ներս մտաւ և դռան մօտ սկսեց հանել կրկնակօշիկներն ու վերարկուն:

—Ներեցէք, դուցէ փոքր ինչ աւելի սպասեցնել տուի ձեզ,—ասաց նա:

—Բան չկայ, գիշերն երկար է: Բացի դրանից, վերջին ժամանակներս ես տանջւում եմ անքնութիւնից: Համեցէք այստեղ:

Շահեանն անշնորհք երեխայի պէս հետևեց պանի Զդանևիչին և թաղուեց նրա առաջարկած դահաւորակի վրայ: Դահաւորակն այնքան ցածր էր, որ նրան թուաց, թէ գետնին նստեց:

—Դուք մրսել էք: Մի բաժակ թէյ չէք մերժիլ, չէ՞:

Շահեանը, պատասխանելու տեղ, ժպտաց:

—Ձեզ էի սպասում, որ միասին խմենք, և վառարանն էլ պատուիրեցի, որ նորից վառեն,—ասաց պանի Զդանևիչն և արագ քայլերով ինչ-որ բանի համար անցաւ սենեակի անկեանը դրուած պատուարի կողը:

«Մահճակալն անշուշտ այնտեղ է դրուած»—մտածեց Շահեանը և հայեացքն ամօթխածութեամբ ուղղեց դէպի պատի վառարանը, որի օդանցքները վառուում էին մի շարք հրավայլ աչքերի պէս: Ձէր իմանում, սենեակն էր շատ տաք, թէ այդ րոպէին իր ղգացած վախկոտութիւնն էր, որ յանկարծ վառեց նրա ճակատն ու ականջները. բայց ձեռքերը սառն ու թաց էին շան

դնչի պէս և ամբողջ մարմինը մերթ տաքանում էր, մերթ հովանում։ Նրան թուաց, թէ այդ բոլորը նրանից է, որ շատ ցածր է նստած, այնքան ցածր, որ ծնկները գրեթէ հաւասարւում են կրծքին, ուստի վերկացաւ դահաւորակից և նստեց աթոռի վրայ։

—Երևակայում եմ, թէ ինչքան զարմացած պիտի լինէիք երէկ, որ եկայ ձեզ մօտ,—ասաց նա պանի Զդանևիչի ձայնը պատուարի ետևից։

—Ի դէպ. ո՞րտեղից գիտէիք իմ տան հասցէն։

—Ձեր տան հասցէ՞ն... Այդ յետոյ կըպատմեմ։

Պանի Զդանևիչը դուրս եկաւ պատուարի ետևից մաքուր մի անձեռոցիկ ձեռքին, մօտեցաւ թէյի սեղանին և սկսեց թէյի պատրաստութիւն տեսնել։

—Այս գիշեր ես ձեզ ամեն բան կըպատմեմ, ամեն բան... Յիշո՞ւմ էք, մենք ծանօթացանք Բաղէնեանի մօտ, երբ նա պառկած էր հիւանդ։ Այն ժամանակ արդէն զգացի, հոգիս վկայեց, վաղ թէ ուշ կարօտ կըլինիմ ձեր օգնութեանը և վստահ կերպով կարող եմ դիմել ձեզ, որովհետև առաջին իսկ հայեացքից տեսայ, որ չափազանց բարի էք և...

—Այդ թողնենք, պանի Զդանևիչ։

—Այս կըթողնենք, ի հարկէ, որովհետև չեմ ուզում կարծէք, թէ իւղում եմ ձեր գլուխը։

—Երբոր այդպէս է, պանի Զդանևիչ, խնդրում եմ էլի այդ մասին խօսեցէք,—վրայ բերեց Շահեանը ծիծաղելով։

Պանի Զդանևիչը, թէյի բաժակները սրբելով, նայեց նրան և նոյնպէս ծիծաղեց։

—Ոչ, այդ մասին այլևս չեմ խօսիլ, պարոն Շահեան, բայց պիտի խօսեմ այն մասին, թէ ինչու համար եմ այս ցուրտ գիշերին նեղութիւն տուել ձեզ ինձ մօտ գալու։ Պէտք է ասեմ ձեզ, որ ես չափազանց ինքնասէր եմ, և չեմ ուզում, որ դուք ինձ ճանաչէք միայն իբրև ձեր պարտապանի։ Ես ուզում եմ... Զգիտեմ թէ ձեր և Բաղէնեանի միջև ինչպիսի բարեկամութիւն է եղել, և նա որևէ բան պատմե՞լ է ձեզ իմ մասին, բայց ինձ թւում է, ես զգում եմ, որ դուք... (պանի Զդանևիչի դէմքը հոգեկան մի սուր ցաւից ծամածռուեց և նա մեծ դժուարութեամբ աւարտեց ասելիքը) նպաստաւոր գաղափար չունիք իմ մասին... Ա՜հ,—հառաչեց նա անզօր զայրոյթով և բաժակը շըրխկացնելով վայր դրեց բաժակակալի վրայ։—Դուք կարծում էք, թէ էժա՞ն է նստել ինձ ձեզ մօտ գալս, ձեզնից օգնութիւն խնդրելս։ Դժոխքի տանջանքներ եմ կրել ես, մինչև որ վստահացել եմ ձեր դռան զանգակը քաշել։ Ո՞ւր եմ գնում,—ասում էի ինքս ինձ։—Ի՞նչ պիտի ասեմ։ Ի՞նչպէս պիտի յայտնեմ իմ վիճակը։ Ի՞նչ պիտի մտածի նա իմ մասին։ Ի՞նչ աչքով պիտի նայի ինձ վրայ, երբ ինքս իմ բերանով խոստովանուեմ, որ Բաղէնեանի սիրուհին եմ եղել, որ նա ձգել է ինձ, փախել... Եւ եթէ չհաւատայ խօսքերիս ու քաղաքավարի ճանապարհ դնի ինձ դատարկաձեռն... Ինչքան էլ համոզուած լինէի, որ դուք ջենտլմէն էք, ինչքան էլ զգացումս թելադրէր ինձ, որ լիովին կարող եմ վստահիլ ձեր բարութեան վրայ, այնուամենայնիւ այսպիսի անսովոր վիճակի մէջ չէի կարող ազատ լինել կասկածներից և յոռետեսութիւնից։ Փառք Աստուծու, կասկածներս ու յոռետեսութիւնս սխալ դուրս եկան ձեր վերաբերմամբ. դուք շատ բարի զտնուեցաք դէպի ինձ, որի համար չափազանց շնորհակալ եմ ձեզնից. բայց... ձեր այդ բարութիւնն ինձ հոգեկան աւելի մեծ տանջանք պատճառեց, քան այն, եթէ դուռն ուղղակի յետ դնէիք երեսիս։ Երբէք ինձ այնքան նուապ-

տացած չէի զգացել, ինչպէս այն ժամանակ, երբ դուրս եկայ ձեր տնից։ Ես—մի օտար կին ձեզ համար, դուք —մի օտար մարդ ինձ համար. իսկապէս ոչ ես եմ ճանաչում ձեզ, ոչ դուք ինձ։ Եւ յանկարծ մտնում եմ ձեզ մօտ, լաց եմ լինում ձեր առաջ, փող եմ խնդրում ձեզնից... Դուք չէք մերժում, որովհետև բարի էք, ջենտըլմէն էք։ Բայց մի՞թէ այդ գեղեցիկ յատկութիւնները կարող են արգելք լինել մարդու, որ նա իր հոգու խորքում չկասկածէ այն անծանօթի մասին, որը գիմում է իր օգնութեանը և որի ասածներին ստիպուած է հաւատալ բարեկրթութիւնից դրդուած։ Դուք ինձ օգնեցիք իսկոյն, առանց խօսելու, առանց նոյն իսկ կամենալու հետամուտ լինել իմ ասածների ճշմարտութեանը, և չկամեցաք անգամ, որ շնորհակալութիւն յայտնեմ. բայց և այնպէս ինչո՞վ կարող էի հանգստացնել ինձ, փարատել կասկածս, որ ձեր սրտի խորքում ընկած կին, խարերայ, նոյն իսկ Բաղէնեանի գաղտնի դաշնակիցը չէք համարում ինձ...

—Պանի Զդանևիչ,—այլևս չկարողանալով համբերել, բացականչեց Շահեանը սաստիկ զգայուած և վերկացաւ տեղից։—Այդ ի՞նչ էք ասում։ Մի՞թէ ինձ կանչել էք նրա համար, որ վիրաւորէք։

Պանի Զդանևիչը, խիստ յուզուած, արագօրէն մօտեցաւ նրան և առաւ նրա ձեռքը։

—Ա՜խ, աղնիւ բարեկամս, ներեցէք ինձ։ Ես ձեզ վիրաւորելու ամենևին միտք չունիմ։ Ես միայն իմ դրութիւնս եմ պատմում։ Պատմում եմ բարոյական այն տանջանքները, որ կրել եմ այն ցած մարդու պատճառով։ Ինձ համար ահագին թեթևութիւն է, որ կասկածներս ձեր մասին սխալ են եղել։ Ես ուզում եմ, որ դուք, եթէ չէք ճանաչում ինձ, ճանաչէք, և լաւ ճանաչէք, պարոն Շահեան։ Այդ ուզում եմ ոչ թէ ձեր,

այլ ինձ համար, իմ հանգստութեանս համար։ Ա՜հ... Լսեցէք, պարոն Շահեան, իմ թանկագին բարեկամ... Ասացի, որ վաղն առաւօտ հեռանում եմ. զոհեցէք ինձ այս երեկոն և թոյլ տուէք անկեղծօրէն պատմեմ ձեզ այն բոլորը, ինչ որ պատահել է. թոյլ տուէք սրտիս վրայ ծանրացած դառնութիւնը թափեմ ձեր առաջ և այնպէս հեռանամ։ Ես ձեզ դատաւոր չեմ կարգում,—ո՛չ.—իմ դատաւորն ես ինքս եմ, և ամենախիստ դատաւորը.—ես միայն ուզում եմ ձեր առաջ, իբրև խոստովանահօրս առաջ, իբրև հարազատ եղբօրս առաջ, իմ խոստովանանքս անել, որովհետև, չգիտեմ ինչու, ինձ թւում է, թէ այդպիսով միանգամայն հանգստացած պիտի լինիմ։ Այդ բանն ուզում էի անել երէկ, բայց երէկ այնքա՛ն ճնշուած էի զգում ինձ, այնքա՛ն ամաչում էի ձեզնից... Իսկ այժմ աւելի ազատ եմ զգում ինձ և այնքան սիրեցի ձեզ, որ ամեն բան պիտի պատմեմ։ Ոչինչ չեմ թագցնիլ ձեզնից. ամեն բան կըպատմեմ այնպէս, ինչպէս որ պատահել է, և դուք կըտեսնէք, թէ որպիսի խորամանկ, խարերայ և անաստուած արարածի հետ եմ ես գործ ունեցել։ Խնդրում եմ, աղաչում եմ նստեցէք։

Շահեանը նստեց։ Բոլոր ժամանակ, երբ այդպէս յուզուած խօսում էր պանի Զդանևիչը, նա խիստ ճընշուած դրութեան մէջ էր զգում իրեն այդ կնոջ հսկայական հասակի առաջ, որի մէջ հրաշալի ներդաշնակութիւն էին կազմում ֆիզիքական ոյժն ու կանացի գեղեցկութիւնը։ Եւ այդ ճնշուած դրութեան մէջ Շահեանն այնքան շփոթուել էր, որ հազիւ թէ լսում էր պանի Զդանևիչի ասածները, այլ միայն, անդիմադրելի մի զօրութիւնից ստիպուած, նայում և դիտում էր նրա զարմանալի արտայայտիչ աչքերը, յուզումից դող-

դողացող լիք կզակը և կզակի վրայ մի խալ ցանցառ մազերով, որ նոր էր նկատում։

Պանի Զդանևիչը նորից արագ քայլերով մօտեցաւ թէյի սեղանին, երկու բաժակ թէյ ածեց և շաքարի, կարտած կիտրոնի ու մի աման պաքսիմատի հետ միասին բերեց դրեց կլորիկ սեղանի վրայ, որի առաջ նստած էր Շահեանը և սուս ու փուս, շփոթմունքից դեռ ևս լաւ ուշքի չեկած, հետևում էր նրա ջղային շարժումներին։

—Ասացէք խնդրեմ, պարոն Շահեան,—հարցրեց պանի Զդանևիչը, մի աթոռ առնելով և նստելով Շահեանի դիմացը,—վաղուց է, որ ընկեր էք նրա հետ։

—Բաղէնեանի՞ հետ,

—Այո։

—Վաղուց է... Բայց ի՞նչպէս թէ ընկեր։ Ես նրա հետ երբէք ընկեր չեմ եղել և նոյն իսկ չգիտեմ, թէ որտեղացի է և ում զաւակն է։ Մենք միայն փոքր հասակում դասակիցներ ենք եղել։ Տաս-տասներկու տարի կայ, որ նա կորած էր, այնպէս որ մինչև անգամ բոլորովին մոռացել էի նրան։ Այս աշունքին միայն նա լոյս ընկաւ, և նորոգուեց մեր հին, աշակերտական ծանօթութիւնը։

—Այդպէս։ Իսկ նա որևէ բան պատմի՞ է ձեզ իմ մասին։

—Ձեր մասի՞ն,—հարցրեց Շահեանը, աշխատելով յիշել, թէ ինչ է պատմել Բաղէնեանը պանի Զդանևիչի մասին։—Պատմել է։

—Ի՞նչ։

Եւ պանի Զդանևիչը հետաքրքրութեամբ նայեց Շահեանի ակնոցին, որի ապակիները շողշողում էին լամպի լոյսի տակ։

—Նա առհասարակ... ձեր մասին... պէտք է խոստովանած,—շատ բան չի պատմել,—յապաղելով և, ըստ երևոյթին, ամեն մի խօսքը կշռադատելով, պատասխանեց Շահեանը։—Առաջին անգամ ձեզ նրա հետ տեսայ «Միխայլովո» կայարանում անցած ամառուայ վերջերին, երբ Բաթումից Թիֆլիս էի վերադառնում։

—Ա՛խ, այն դուք էիք, որ վագոնի առաջ խօսում էիք նրա հետ։

—Ես էի։

—Յետո՞յ։

—Նա ինձ ասաց, որ ձեզ հետ ծանօթացել է ճանապարհին, որ դուք իբրթէ գնում էք... չգիտեմ ուր... հա, կարծեմ, ասաց Կարս, ուր ձեր ամուսինը իբրթէ ծառայում է։

Պանի Զդանևիչը ծիծաղեց ակամայ, բայց իսկոյն էլ զսպեց իրեն և, ձեռքերը դնելով սեղանի վրայ, աւելի մեծ հետաքրքրութեամբ նայեց Շահեանի ակնոցներին։

—Յետո՞յ,—հարցրեց նա։

—Ձեր մասին այս է միայն պատմել ինձ։

—Ա՞յդ միայն և ուրիշ ոչի՞նչ։

—Ինչ վերաբերում է ձեր անձնաւորութեանը,—աւելացրեց Շահեանը նայելով իր թէյի բաժակին, որովհետև պանի Զդանևիչը յամառ հետաքրքրութեամբ շարունակում էր նայել նրա ակնոցին, — ձեր անձնաւորութեան մասին պատմել է, որ դուք... շատ պատուական կին էք... որ դուք... Առհասարակ,—անկեղծ եմ ասում, պանի Զդանևիչ, ձեր մասին նա միշտ յարգանքով է խօսել և ոչ մի աննպաստ խօսք չի ասել ինձ ձեր մասին։

—Ա՛խ, երևի դուք կարծում էք, թէ նրա համար եմ ձեզ հարցուփորձ անում, որ իմանամ, թէ նա լաւ կամ վա՞տ է խօսել ձեզ մօտ իմ մասին,—բացականչեց

պանի Զդանևիչը ժպտալով։—Ո՛չ, աղնիւ բարեկամս. ես ուզում եմ միայն իմանալ, թէ՝ եթէ նա ձեզ որևէ բան պատմել է իմ մասին, որքան ճիշտ է պատմել ձեզ մօտ Է՞լ սուտ է խօսել, ինչպէս միշտ սուտ էր խօսում ինձ մօտ։ Բայց ինչևիցէ, այս թողնենք։ Ես մի ուրիշ բան եմ ուզում հարցնել ձեզ։ Ասացէք խնդրեմ, ինչ դաղափար ունիք դուք նրա մասին։

—Ես... ինչպէս ասեմ... Ճիշտն ասած, նրան ճանաչել չկարողացայ։ Այն աստիճան ճարպիկ լեզու ունի և վարւում էր այնպիսի վարպետութեամբ, որ իր մասին կազմած ամեն մի աննպաստ դաղափարս խլոյն ջրում էր։ Մի բանի պատճառով ես սկսել էի նրան ատել, բայց նա այնպիսի ֆոկուս սարքեց, որ նորից սկսեցի սիրել։ Բայց և այնպէս, ես արդէն դլխի էի ընկել, որ շատ ճարպիկ աֆերիստներից մէկն է։ Ինձնից բաւական դումարներ կորզեց, և այժմ ձեզնից եմ իմանում, որ ծլկել է այստեղից։

—Հա՜, հա՜, հա՜... ձեզ Է՞լ է կողոպտել,—ծիծաղեց պանի Զդանևիչը դառնութեամբ։

—Հապա՛։

Պանի Զդանևիչը ծանր թառանչ քաշեց և կարճ ժամանակ դառն մտախոհութեան մէջ ընկաւ։ Յետոյ ջղային մի ցնցումով սթափուեց և նայեց Շահեանին շատ լուրջ հայեացքով։

—Բայց գիտէ՞ք, որ նա տաղանդ էր, մեծ տաղանդ...

—Միամիտներին խաբելու մէջ,անշուշտ,—նկատեց Շահեանը։

—Իր ցանցերը լարում էր այնպիսի ճարպիկութեամբ,—շարունակեց պանի Զդանևիչը,—որ զոհն ինքն իր ոտով էր գնում մէջն ընկնելու և նոյն իսկ մեծ հաճոյք էր զգում, որ նրա ցանցի մէջ է, իսկ յետոյ, երբ ուզում էր դուրս գալ, չէր կարողանում... Բայց լսեցէք պատմութիւնս և կըտեսնէք, թէ որքան ճիշտ եմ ասում։

IV

Ինչպէս անունս ցոյց է տալիս, ես լեհացի եմ, ռուսական լեհերից։ Սերւում եմ լեհական մի հին տոհմից, որը երկու քաջ զինուոր է տուել մեր Կոսցիւսկոյին, 1794 թուի ապստամբութեան ժամանակ։ Հօրս չեմ յիշում. որովհետև չորս տարեկան եմ եղել, որ վախճանուել է։ Մայրս սրանից տասն տարի առաջ մեռաւ։ Շատ խելօք կին էր և չափազանց սիրում էր ինձ, թէև շատ էլ երես չէր տալիս։ Նա ինքն էր կառավարում մեր պապական բաւական մեծ և արդիւնաւէտ կալուածները, որոնք յետոյ, իբրև օժիտ, անցան ամուսնուս ձեռքը։ Ծնողներիս միակ զաւակն էի ես։ Կրթութեանս ու դաստիարակութեանս վրայ ոչինչ չի խնայուած, բայց ես բաւական էքսցենտրիկ բնաւորութիւն ունէի և ընկայ առաջին պատահած մարդու գիրկը։ Ամուսինս իսկապէս վատ մարդ չէր, բայց շուտով տեսայ, որ իմ ամուսնութիւնը նրա հետ մի խոշոր սխալ էր իմ կողմից։ Մի պակասութիւն ունէր, որ ամենից աւելի դիւր չէր գալիս ինձ. այդ նրա անյագ շահասիրութիւնն էր և իր ոյժերից վեր խոշոր ձեռնարկութիւնների մէջ մտնելու ձգտումը, որին և զոհ գնաց թէ մեր կալուածների մեծ մասը և թէ ինքը։ Բաներկու տարեկան էի, որ այրեցայ։ Շատերն էին խնդրում ձեռքս, բայց ես նորից ամուսնանալու մասին մտածել անգամ չէի ուզում։ Միակ այն հանդամանքը, որ ամուսնուս շնորհիւ գրեթէ աղքատացել էի, մի տեսակ հակակրանք էր զարթեցրել իմ մէջ դէպի տղա-

մարդիկ առհասարակ։ Բացի դրանից, շատ երևոյթներ դիտելով, այն համոզման էի եկել, որ տղամարդիկ կնոջ վրայ նայում են կամ շահախնդրական, կամ սեռական տեսակէտից. տղամարդիկ ամուսնանում են կամ հարստանալու, կամ գեղեցիկ կին ունենալու համար. ուրիշ տեսակէտ չկայ։ Իսկ ես նոր էի զգում, որ կարօտ եմ սիրոյ, այնպիսի բուռն, անկեղծ սիրոյ, որ ինքն է միայն իր նպատակը։ Այդպիսի բան չէի տեսնում ձեռքս խնդրողների մէջ. ամեն տեղ մեծ ուշադրութիւն էին դարձնում ինձ, ջծնում էին առաջս, սիրոյ երդումներ էին անում, նոյն իսկ սպառնում էին անձնասպանութիւն գործելու, բայց սիրտս շարժելու տեղ՝ արհամարհանքս էին շարժում։

—Ձեր թէյը սառեց, պարոն Շահեան,—նկատեց պանի Զդանեիչը, պատմութիւնն ընդհատելով։

Շահեանը վերցրեց իր թէյի բաժակը։

Իսկ պանի Զդանեիչն իր բաժակից մի քանի կում արեց և շարունակեց.

—Այս միջոցներին էր, որ ծանօթացայ Բազէնեանի հետ։ Ծանօթացայ ահա թէ ինչպէս։ Մի օր անցնում էի փողոցով (այս բոլորը պատահեց Վարշաւում)։ Յանկարծ այնպիսի մի ուժգին քամի բարձրացաւ, որ ուղղակի քշում էր մարդու։ Նախ քան ձեռքս կը տանէի, որ գլխարկս բռնեմ, մէկ էլ տեսնեմ՝ գլխարկս արդէն գլորւում է գետնին աչք կուրացնող փոշու հետ խառնուած։ Դիմացից եկող մի երիտասարդ իսկոյն վազեց, բռնեց, բերեց տուեց ինձ և նախ քան բերանս բաց կանէի, որ շնորհակալութիւն յայտնեմ, անցաւ գնաց։

Այդ երիտասարդը Բազէնեանն էր։

Մի քանի օր յետոյ նրան տեսայ թատրոնում, խաղամիջոցի ժամանակ, ֆոյէում։ Նայեց ինձ և, չգիտեմ, ճանաչե՞ց, թէ ոչ, բայց անցաւ գնաց։ Դարձին, երբ ուղղակի պիտի անցնէր մօտովս, կանգ առայ ակամայ և ժպտալով նայեցի նրան։ Նա նոյնպէս կանգ առաւ։

—Ինձ չէ՞ք ճանաչում,—հարցրի։

—Եթէ չեմ սխալւում,—ասաց,—ես պատիւ եմ ունեցել անցած օր ձեր գլխարկն ազատելու քամու ճիրաններից։

Շատ դիւր եկաւ ինձ առանց որևէ շփոթմունքի և վերին աստիճանի նուրբ կոմիկութեամբ արտասանուած այդ պատասխանը։

Եւ ձեռքս մեկնեցի նրան։

—Այն ժամանակ դուք ինձ միջոց չտուիք շնորհակալութիւն յայտնելու, ուրեմն այժմ ընդունեցէք շնորհակալութիւնս։

—Որ այդպէս է,—ասաց, ես շատ ցաւում եմ, որ ձեր գլխարկն ազատելիս ոտս չկոտրեցի։

—Ինչո՞ւ,—հարցնում եմ զարմացած։

—Որպէսզի իսկապէս արժանի լինէի ձեր շնորհակալութեանը։

Ուրիշ այսպիսի կէս-քաղաքավարական, կէս-հեգնական մի քանի պատասխաններից յետոյ նա ինձ գրաւեց միանգամայն, և ես հրաւիրեցի նրան օթեակս։ Արտաքինով շատ գեղեցիկ էր, հագնուած էր մեծ ճաշակով, վարմունքի մէջ գռեհկականութեան նշան անգամ չկար։ Ուստի երկիւղ չունէի նրա հետ միասին նստելու։ Ասենք, այդ կողմից ես միշտ հեռու եմ եղել որոշ նախապաշարումներից։ Թէև ծագումով արիստոկրատ, բայց հայեացքներով դեմոկրատ եմ եղել միշտ։ Այս էլ ասեմ, որ նրան օթեակս հրաւիրեցի գլխաւորապէս մի հուսար սպայի ջգրու, որը սաստիկ ձանձրացրել էր ինձ և որին այդ երեկոյ պարզապէս արգելել էի օթեակս մտնելու։ Ինձ հետ էր ծերունի, բայց

իրեն միշտ երիտասարդ ձևացնող, մօրեղբայրս—ինքնահաւան և խելքից մի քիչ պակաս մի արիստոկրատ, որի համար ով պան չէր—մարդ չէր։ Բաղէնեանի արտաքինը հաւանեց, բայց երբ ծանօթացաւ նրա հայեացքների հետ, ականջիս փսփսաց, որ ոչ մի պայմանով գործ չունենամ այդ երիտասարդի հետ։ Բանն այն է, որ, երբ մօրեղբայրս սկսել էր արիստոկրատիայի գովքն անել,—այդ նրա հիւանդութիւնն էր,—Բաղէնեանը շատ հանդիստ կերպով և շատ բանաւոր պատճառաբանութիւններով նկատեց, որ արիստոկրատիզմը մի անախրոնիզմ է մեր ժամանակում, որ արիստոկրատիան նոյն դերն է կատարել և կատարում մարդկային կեանքի մէջ, ինչ որ պարազիտները կենդանական աշխարհում։ Յետոյ, երբ ես նրան յայտնեցի, որ մօրեղբայրս անխառն արեան տէր արիստոկրատ է, բացականչեց.

—Ինչո՞ւ այդ վաղ չէիք ասում. ես իսօ աւելի խիստ լեզուով կը խօսէի նրա հետ։

—Բայց դուք մոռանում էք, որ ես էլ արիստոկրատ եմ թէ՛ հօրս և թէ՛ մօրս կողմից,—նկատեցի ես, ծիծաղելով։

—Ափսոս, որ ես այդ չգիտէի այն ժամանակ, երբ աղատեցի ձեր գլխարկը, թէ չէ...

—Թէ չէ՞...

—Շատ պարզ է. չէի ազատիլ ձեր գլխարկը,—ասաց նա կոմիքական հանդստութեամբ։

Մի բան, որ չափազանց դիւր էր դալիս ինձ, այդ այն էր, որ նա խօսում էր անբռնազբօսիկ կերպով. խօսում էր պարզ, համարձակ, առանց շփոթուելու, շատ անդամ կատակով, երբեմն կծու հեգնութեամբ, եթէ դիմացինը ծաղրելի էր, և ամենևին չէր քաշւում ոչ հասակից, ոչ դիրքից, ոչ տիտղոսից, ոչ մի բանից։

Երկրորդ անդամ նրան հանդիպեցի մի հայի վաճառատան մէջ, ուր պատահմամբ մտել էի մի քանի մանր-մունր բաներ գնելու։ Նա կանգնած էր վաճառատան տիրոջ մօտ և ինչ-որ լուրջ խօսակցութեան մէջ էր։ Ինձ նկատեց ոչ-իսկոյն և նկատելուն պէս աբագ մօտեցաւ և բարևեց իրրև հին ծանօթ։

—Մի՞թէ չէք խորշում հայի խանութ մտնելուց,—ասաց իրեն յատուկ հումորով։

—Մի՞թէ կարծում էք, որ պիտի խորշեմ,—պատասխանեցի ծիծաղելով։

—Որ այդպէս է,—ասաց,—ուրախութեամբ ողջունում եմ մի օտարուհու, որ իրեն հեռու է պահում հայերից, ուզում եմ ասել՝ հայ վաճառականներին շատ էլ նպաստաւոր գոյներով չներկայացնող մի ընդհանուր նախապաշարումից։

—Երևում է, որ ազգային հպարտութիւն ունիք,—նկատեցի ես։—Այդ, իհարկէ, գովելի է։ Բայց ի զուր էք կարծում, թէ մենք՝ լեհացիներս էլ կարող ենք ուրիշների նման աննպաստ գաղափար ունենալ հայի վրայ. բաւական է յիշենք, թէ հնումն ինչ ծառայութիւն են մատուցել հայերը Լեհաստանում։

—Եւ, երևի, այդ ծառայութիւնները վարձատրելու համար էր, որ ձեր երկրում խլեցիք նրանց կրօնը,—վրայ բերեց նա։

—Այդ բանում մեղ ազրեցէք ձեր Նիկոլին։

—Նիկոլը մերը չէր, Նիկոլը ձերն էր։

Գնեցի, ինչ որ ուզում էի, և պատրաստւում էի, որ հեռանամ, մէկ էլ տեսնեմ գնածս իրերն առաւ կը-ման տակը։

—Ի՞նչ էք ուզում անել,—հարցրի։

—Ուզում եմ ծառայութիւն մատուցանել ձեզ։ Ես պէտք է մոռանամ, որ հայ եմ և գտնւում եմ Լեհաստանում։

—Յետոյ չէ՞ք վախենում, որ ի վարձատրութիւն ձեր ծառայութեան՝ խլեմ ձեր կրօնը։

—Խլեցէք թէկուզ ինձ ամբողջովին,—ասաց նա, վաճառատան դուռը բանալով առաջս։

Այսպէս խօսելով և կատակ անելով հասանք մինչև մեր տան դուռը։ Այստեղ գնածս իրերը յանձնեց ինձ և բաժանուեց։ Շատ խնդրեցի, որ տուն մտնի, չմտաւ։

Հետևեալ օրը դարձեալ գնացի այն հայի վաճառատունը, թէև ամենևին կարիք չունէի որևէ բան գնելու։ Երեկոյ չէի, ի հարկէ. շատ լաւ հասկանում էի, թէ ինչն է դրդում ինձ այնտեղ մտնելու։ Բայց այս անգամ չտեսայ այնտեղ Բաղէնեանին։

Այնուհետև գրեթէ ամեն օր մտնում էի այն հայի վաճառատունը և միշտ էլ... յուսահատուած ասեմ, չէ՛, —բարկացած էի դուրս գալիս այնտեղից։ Խիստ վիրաւորական էր թւում ինձ այն բանը, թէ ինչու՞ ես ուզում էի տեսնել Բաղէնեանին, խօսել նրա հետ, իսկ նա չէր երևում։ Ես բարկանում, զայրանում էի ինձ վրայ միայն, որ անփորձ աղջկայ նման կորցրել էի խելքս, մինչդեռ ամեն բանից երևում էր, որ նա չէր էլ մտածում իմ մասին։ Այլապէս, եթէ ես նոյնպիսի մի զգացում լինէի ներշնչած նրան, որպիսին նա էր ներշնչել ինձ, չէ՞ որ չէր կարող ինձ տեսնել չցանկանալ, ինչպէս ես էի ցանկանում նրան տեսնել, մանաւանդ որ ինքս էի խնդրել, որ չմոռանայ ինձ։

Ըստ երևոյթին, այս այսպէս էլ պէտք է վերջանար, բայց բաղդն երևի ուրիշ կերպ էր տնօրինել։

V

Պանի Զդանևիչն արագ խմեց իր սառած թէյը և

վերցնելով Շահեանի արդէն դատարկած բաժակը, վերկացաւ երկրորդ բաժակը լցնելու։ Այդ մի քանի րոպէի գործ էր։ Այնուհետև նորից նստեց իր տեղը և շարունակեց.

—Մի երեկոյ ինձ մօտ հաւաքուած էին չորս ուրիտասարդ, երեքը—մեր շլեախտիչներից, չորրորդն—իմ ասած հուսար սպան, չորսն էլ մէկը միւսից աւելի դատարկագլուխ, կանանց շուրջը քծնող, ձիերի անունով երդուող, կանաչ սեղանի սիրահար և վերին աստիճանի մեծամիտ։ Երբեմն ձանձրանում, երբեմն զայրանում, բայց շատ յաճախ զուարճանում էի այդ յիմարների վրայ։ Սեղանի շուրջը բոլորած՝ թուղթ էինք խաղում։ Բայց աւելի շատ զբաղուած էինք մի ինչ-որ շատ յիմար խօսակցութեամբ։ Այդ միջոցին մտաւ ապրանքներ և մի այցետոմս տուաւ ինձ։ Նայեցի—Բաղէնեանի այցետոմսն էր։ Իսկոյն հրամայեցի, որ ներս հրաւիրի, և, թղթերը խառնելով, վերկացայ սեղանի մօտից։

—Վերկացէք, պարոններ,—ասացի.—ամենքդ էլ ոտի վրայ պէտք է ընդունէք նրան։

—Ո՞վ է։ Մինիմար է եկողը,—հարցրեց մէկը։

Ներս մտաւ Բաղէնեանը։ Տեսնելով, որ ինձ մօտ հիւրեր կան, սկզբում կանգած մնաց դռան մօտ և մի թուղթիկ հայեացք ձգեց ամենքի վրայ. յետոյ արագ մօտեցաւ ինձ և բարևեց։ Ես կշտամբեցի նրան, որ ինձ մոռացել էր, և ներկայացրի հիւրերիս։ Մօտեցաւ իւրաքանչիւրին և յարգանքով սեղմեց նրանց ձեռքը։ Այդ միջոցին ակամայ դիտում էի հիւրերիս և տեսնում էի, որ նրանք մի քիչ զարմացած, մի քիչ հետաքրքրուած, բայց ամենքն էլ նախանձով դիտում էին Բաղէնեանի արտաքինը։ Իսկ ես, այդ բանը դիտելով, երբէք այնպիսի ինքնագոհ հաճոյք չէի զգացել, ինչպէս այդ բո-

պէին։ Բայց նախանձն ամենից աւելի վառել էր հուսարին։

—Այս այն պարոնը չէ՞,—դարձաւ նա ինձ կիսաձայն, թթուած դէմքով և բեխի սուր ծայրը ոլորելով։

—Ո՞ր պարոնը։

—Ա՛յն, որին դուք թատրոնում...

—Նա է, նա է,—վրայ բերի ես, ջղրացնելով նը-ը-ան, և բռնելով Բաղէնեանի ձեռքից, տարայ նստեցրի կողքիս։

Հուսարս բեխն այնպէս ձիգ տուեց, որ քիչ մնաց պոկի, և դարձաւ ընկերներին.

—Պարոններ, կարծում եմ, մենք կարող ենք շարունակել մեր խաղը։

—Բայց, իսէր Աստուծոյ,—բացականչեցի ես,—այդ սեղանը հեռացրէք մեր մօտից։

—Մեր մօտից,—սառրաղծեց հուսարը և բռնեց սեղանի մի ծայրից։—Օգնեցէք, պարոններ, սեղանը հեռացնենք Նրանց մօտից։ Կամ,—յանկարծ դարձաւ նա ինձ,—դուցէ, կըհրամայէիք, որ մենք հեռանանք միւս սենեակը, որպէսզի չխանգարենք ձեզ։

—Ոչ, ոչ, խնդրեմ. մենք չենք քաշուիլ ձեր ներկայութիւնից,—նկատեցի ես ծիծաղելով։

Սեղանը հեռացրին, և հուսարս, երևի ցոյց տալու համար, որ մեզ արհամարհում է, նստեց մէջքը մեր կողմն արած։ Բայց և այնպէս, նա չկարողացաւ դիմանալ և աթոռի վրայ յանկարծ դարձաւ Բաղէնեանի կողմը։

—Ներեցէք, պարոն,—ասաց նա,—դուք, կարծեմ, ասացիք, որ ձեր ազգը Բաղաղեանց է։ Ես եղել եմ Կովկասում, Թիֆլիսում, և, եթէ չեմ սխալւում, այնտեղ բազում անունը տալիս են ճոթավաճառներին։ Դուք ճոթավաճառ էք։

Բաղէնեանն սկզբում այնպիսի արագ և խիստ ու սուր մի հայեացք ձգեց նրա վրայ, որ, ճիշտն ասած, ես վախեցայ. բայց յետոյ ժպտաց և խիստ կոմիքական հանդստութեամբ պատասխանեց.

—Այո, ձերդ գերազանցութիւն, ես դժբաղդութիւն ունիմ ճոթավաճառ լինելու, որովհետև ազգանունս Բաղաղեանց է։ Ուրիշ ի՞նչ կըհրամայէիք իմանալ։

—Ուրիշ ոչինչ։ Հա, մէկ էլ այս էի ուզում իմանալ. դուք Թիֆլիսի՞ց էք եկել։

—Ոչ, ձերդ գերազանցութիւն. Թիֆլիսի մօտ մի գիւղ կայ—այնտեղից եմ եկել։

—Վարշաւ եկել էք ինչո՞ւ համար. կօշիկնե՞ր գընելու։

—Ոչ, ձերդ գերազանցութիւն. դուք ասացիք, որ ես ճոթավաճառ եմ։

—Դէ, այդ միևնոյն է։

—Ոչ, ձերդ գերազանցութիւն. ես կարծում եմ, ճոթավաճառը այստեղ որ դայ, ճոթ կըգնի, բայց ոչ կօշիկ։

—Դէ, ձեր արհեստից արդէն ես ոչինչ չեմ հասկանում,—ասաց հուսարը և մէջքը նորից մեր կողմն արեց։—Այսքանս միայն իմացել եմ, որ ձեր Կովկասի վաճառականները մաշեննիկ են։

—Մեծ մաշեննիկ, ձերդ գերազանցութիւն,—վրայ բերեց Բաղէնեանը նոյն հեգնական խոնարհ տոնով։

—Գալիս են խաբում այստեղի միամիտ գործաբանատէրերին, ապառիկ ապրանք տանում և յետոյ մնանկանում, փողերը տակովն անում։

—Ձերդ գերազանցութիւն, թոյլ տուէք նկատեմ. հապա ասացիք, որ բան չէք հասկանում մեր արհեստից։

—Ես իմ լսածն եմ ասում։

—Հա։

—Ի՞նչ է, սխալւո՞ւմ եմ։

—Ի՞նչպէս կարող է սխալուել ձերդ գերազանցութիւնը։ Ձեր բերանով ինքը ճշմարտութիւնն է խօսում։

Այս բոլոր խօսակցութիւնն այն աստիճան զուարճալի էր, որ կատարեալ հաճոյք էր պատճառում ինձ, մանաւանդ այն տոնը, նուրբ, հեգնող, խայթող տոնը, որով խօսում էր Բազէնեանը։ Եւ ես անդադար ծիծաղում էի։ Ինձ հետ զուարճանում էին և միւս երեք հիւրերս, որոնք մի քիչ աւելի խելք ունէին, քան թէ հուսարը, և որոնք յետոյ շատ բարեկամացան Բազէնեանի հետ և իրենք էին ծաղրում հուսարին, իւրացնելով Բազէնեանի հեգնական տոնը։

Մի ուրիշ անգամ դէպքն այնպէս բերեց, որ հուսարն ու Բազէնեանը դարձեալ հանդիպեցին իմ տանը։ Այս անգամ ինձ մօտ էին և ուրիշ բարեկամներ ու ծանօթներ, ի միջի այլոց, և մօրեղբայրս։ Հուսարը խիստ գրգռուած էր, որ իմ ուշադրութեան գլխաւոր առարկան Բազէնեանն էր, և, ինչպէս նկատում էի, առիթ էր որոնում մի սկանդալ սարքելու։ Բայց ես կարևորութիւն չէի տալիս այդ բանին և միայն զուարճանում էի հուսարի անզօր կատաղութեան վրայ։ Սակայն, սկանդալը պատահեց։ Մօրեղբօրս ու Բազէնեանի միջև վիճաբանութիւն էր ծագել սոցիալական խնդիրների մասին։ Ամենքս շրջապատել էինք նրանց և լսում հետաքրքրութեամբ։ Հուսարը քաշուած էր մի կողմ և լսում էր բեխերը կատաղի կերպով ոլորելով և յամառօրէն նայելով իր կօշիկների ծայրերին։ Բազէնեանը պաշտպանում էր իր գաղափարներն այնպիսի եռանդով և պերճախօսութեամբ, որ մօրեղբայրս, վերջիվերջոյ, չկարողացաւ դիմանալ և դրեթէ սարսափահար բացականչեց. «դուք պարզապէս անիշխանական էք, պարոն. անպատճառ ռումբ էլ կունենաք ձեր գրբպանում»։ Հուսարը մօրեղբօրս այդ խօսքերի վրայ յանկարծ բարձրացրեց գլուխը և ծիծաղեց շատ բարձրաձայն և շատ անբնական կերպով։

—Հայ և ռումբ,—բացականչեց նա։—Դեռևս Պուշկինն է ասել իսկ՝ „ты рабъ, ты трусъ, ты армяшка"...

Նա դիտմամբ „армянинъ" բառն „армяшка"-ի փոխեց, որ աւելի կծած լինի Բազէնեանին։

Ես նայեցի Բազէնեանին և սարսափեցի—այն աստիճան յանկարծ գոյնը նետեց։ Չգիտեմ, ինչ էր ուզում անել, բայց յիշում եմ, որ ձեռքն ամուր բռնեցի։ Նա նայեց ինձ, սարսափով և աղերսանքով լի աչքերիս, էլ չխօսեց, յետոյ շատ շուտով վերկացաւ և գնաց։

Հետևեալ օրն ինձ լուր տուին, որ Բազէնեանը ռեստորանում, մարդկանց ներկայութեամբ, ապտակ է տուել հուսարին։ Լուր տուողը մօրեղբայրս էր, որը, չնայելով իր ծերութեան և արիստոկրատիզմին, սկանդալների սիրահար էր։ «Այս բանն, իհարկէ, առանց մենամարտի չի վերջանալ»—աւելացրեց նա։ Սակայն, հետևեալ օրը նոյն մօրեղբայրս հաղորդեց ինձ.

—Քո այդ Բազէնեանին սկսում եմ կամաց-կամաց սիրել, չնայելով իր անտանելի անիշխանական հայեացքներին։ Գիտե՞ս ինչ է պատասխանել հուսարի ուղարկած մարտավկաներին. «Ես իմ մենամարտը վերջացած եմ համարում,—ասել է.—Նա ինձ „армяшка„ անուանեց, ես նրան ապտակ տուի, ուրիշ ի՞նչ է ուզում»։ Արևելցու պարզ ու սիրելի լոգիկա։ «Բայց որպէսզի չկարծի, պարոններ, թէ ես „трусъ" և „рабъ" եմ,—աւելացրել է նա,—ես նրա սուրը կը հանեմ պատեանից և կը կոտրեմ ձեր և իր իսկ աչքի առաջ»։

Բայց և այնպէս, ինչպէս երկու օր յետոյ իմա-

ցայ, Բազէնեանը գիջել էր հուսարի սպառնալիքներին, թէ ուղղակի վողոցում կը բռնի կըսպանի նրան, եթէ վերջնականապէս հրաժարուի մենամարտից։ Մօրեղբայրս չէր գիմացել դէպի սկանդալներն ունեցած իր հիւանդութեանը և, բոլորովին մոռանալով իր արիստոկրատիզմը, համաձայնել էր Բազէնեանի մարտական լինելու։ Կատարելապէս հիացած Բազէնեանի սառնասրտութեան վրայ, պատմեց ինձ, թէ ինչպիսի հեգնական ժպիտով ատրճանակն արձակել էր օդում և թէ ինչպէս, այդ բանից կատաղած, հուսարը լարել էր բոլոր ուժերը, որ չվրիպի, բայց հէնց այդ պատճառով էլ վրիպել էր գնդակն արձակելիս։

Այս դէպքը վճռական նշանակութիւն ունեցաւ դէպի Բազէնեանը տածած զգացմանս համար։ Քանի որ խօսք ու զրոյց կար մենամարտի մասին, ես սարսափելի անհանգիստ դրութեան մէջ էի, իսկ երբ մօրեղբայրս յայտնեց, որ Բազէնեանը ողջ ու անվնաս է մնացել, լաց եղայ ուրախութիւնից։ Իր դեղեցկութեամբ, յանդգնութեան աստիճանի հասցրած իր խիզախ, աներկիւղ բնաւորութեամբ նա ինձ համար դարձել էր արդէն այնպիսի մի արարած, որի վերաբերմամբ այլևս չէի կարող տիրել ինձ անտարբեր մնալու և չմտածելու այն մասին, թէ ես արդեօք դի՞ւր եմ գալիս նրան,— կնոջ սիրահարուած լինելու ամենահաստատ նշանը։

Բայց նա ինձ ուրիշ բանով էլ էր գերել.—իր խօսքի ուժով։ Արդէն գիտէի, որ ջերմ հայրենասէր է իրրթէ և ինչ-որ գաղտնի առաքելութիւն ունի իրրթէ։ Սկզբում խոյս էր տալիս այդ մասին խօսելուց, ինչ-որ խիստ խորհրդաւոր կերպարանք էր առնում, բայց յետոյ կամաց-կամաց, կարծես թէ, մոռանում էր իրեն, մոռանում էր, թէ որտեղ է, ում հետ է խօսում. իր պատմած վայրերը, անձերը, անցքերը, կարծես թէ,

ուղղակի տեսնում էր իր աչքի առաջ, և այդ բոլորի մասին խօսում էր վարակիչ ոգևորութեամբ, ներքին լափող կրակով, լսողի աչքերից արտասուք քամող պատկերաւորութեամբ, դառն կսկիծով, բայց երբէք—յուսահատութեամբ,—մի բան, որի նշոյլն անգամ չէի տեսնում նրա մէջ,—ընդհակառակը, ամենավառ յոյսեր էին, որ այդպէս կրակում էին նրան։ Երբ խօսում էր այդպէս, ինձ թւում էր, թէ նստած եմ նաւակի մէջ և կատաղի մի հեղեղ քշում տանում է ինձ ուր-որ շշմեցնող արագութեամբ։ Սովորաբար, երբ ոգևորւում էր, նըստած չէր մնում. ամբողջ մարմինը ցնցւում էր, շարժւում, աչքերը զարմանալի կերպով վառւում, մեծանում, այրւում էին, և խօսքերը բերանից դուրս էին թռչում կարճ պարբերութիւններով, արագ առոգանութեամբ, ուժեղ, միշտ պատկերաւոր արտայայտութեամբ և առանց ընդհատումների, սուր, կտրուկ, հեղեղի նման։ Շատ անգամ ինձ թւում էր, թէ նստած եմ թատրոնում, թէ առաջս կանգնած է մի հանճարեղ արդիւկ իր ամենապատեհիկ դերում, մի դերասան, որ իր հանճարեղ խաղով, իր խօսքի ուժով ընդունակ է մոռացնել տալու հանդիսականներին իրենց տեղը, իրենց ներկան, իրենց գոյութիւնը և իր հետ քշելու տանելու նրանց այն աշխարհն, ուր այդ միջոցին ապրում է ինքը...

Պէտք է ասեմ, որ յաճախ չէր այցելում ինձ։ Այցելած ժամանակ էլ թէև շատ աղատ էր պահում իրեն, բայց երբէք յարդանքի սահմանից չէր անցնում։ Շատ անգամ ուղղակի տանջանքով զգում էի, որ եթէ մի տասը տարով ջահել լինէի, նրա յարաբերութիւնը դէպի ինձ բոլորովին ուրիշ ընոյթ կունենար, այսինքն այն ընոյթը, որ ես էի ցանկանում... Խոստովանւում եմ, մինչև այդ ժամանակ երբէք չէի մտածել, որ ջա-

հել չեմ, և միայն նրա յարաբերութիւնից զգացի, որ տարիքս արդէն ճնշում է ինձ, այնքան ճնշում, որ, մանաւանդ նրա ներկայութեան ժամանակ, պարզապէս ամաչում էի հասակիցս. ես տանջւում էի այն գիտակցութիւնից, որ նա ինձ վրայ նայում է իբրև տարիքն անցած կնոջ վրայ, մի կնոջ, որը, բացի յարգանքից, ուրիշ զգացում չի կարող ներշնչել։ Մինչդեռ շուրջս քծնող ուրիշ երիտասարդների հետ վարւում էի իբ յաղթանակող գեղեցկութեան վրայ վստահ կնոջնման, վարւում էի ազատ, արհամարհանքով, շատ անգամ իբրև բռնակալ,—նրա ներկայութեամբ, ընդհակառակը, մի տեսակ կուչ էի գալիս, շփոթւում, և ինձ միշտ թւում էր, թէ դէմքիս վրայ կնճիռներ կան, և նա տեսնում է այդ կնճիռները... Կեանքիս մէջ դրանք միակ լոպէներն էին, որոնք հոգեկան անասելի տանջանք էին պատճառում ինձ։

Մի անգամ բոլորովին անակնկալ կերպով նա եկաւ ինձ մօտ, ասաց, թէ հետևեալ օրը հեռանում է և եկել է հրաժեշտ տալու։ Մի լոպէ ինձ թուաց, թէ ինքս ինձ կորցնում եմ, թէ պատրաստ եմ գժի պէս փարելու նրա վզին, սարկի պէս թաւալգլոր գալու նրա ոտների տակ, մի խօսքով—յուսահատական այնպիսի մի բան անելու, որ նա չգնայ, որ նա մնայ, իմը լինի... Այնուհետև, երբ կարեվէր ջանք գործ դնելով զսպեցի ինձ և նայեցի նրա աչքերին,—յարգանքով լի աչքերին,—զգացի, թէ ատում եմ նրան, այնքան ատում, որքան ոչոքի չէի ատել դեռ։ Այդ միջոցին կրկին անդամ և վերջնականապէս համոզուեցի, որ միմիայն յարգանքի զգացում է տածում դէպի ինձ, որ նրան միմիայն այդ զգացումն է թելադրել վերջին անգամ գալու ինձ մօտ, որ նա ամենայն հանգստութեամբ կարող էր, առանց ինձ վերջին անգամ տեսնելու էլ, հեռանալ

գնալ, առանց մտածելու, թէ ես գոյութիւն ունիմ աշխարհիս երեսին... Ոչ մի ժամանակ այնպէս չէր վիրաւորուել հպարտութիւնս, ինչպէս այդ րոպէին։ Այդ պատճառով, երբ վերջին անգամ առաւ ձեռքս և համբուրեց, սառն էի վերին աստիճանի. կարծես արեանս շրջանառութիւնը յանկարծ կանգ էր առել երակներիս մէջ։

Այդ բանն աննկատելի չմնաց նրանից. գլուխն աբաղ բարձրացրեց, իր թափանցող հայեացքով նայեց աչքերիս և հարցրեց անհանգստութեամբ.

—Ի՞նչ է պատահել ձեզ. ձեր երեսին գոյն չկայ։

Քիչ մնաց սիրտս փուլ գար։ Բայց անձնասիրութեան յամառութեամբ վճռեցի չընկճուել այդ կախարդի լոպէական քնքշանքի տակ և կրկնապատիկ սառնութեամբ պատասխանեցի, թէ այդ օրը վատ եմ զգում ինձ։ Շատ լաւ զգացի, որ չհաւատաց, բայց և այնպէս ոչինչ չասաց, դռան մօտ խորին յարգանքով գլուխ իջեցրեց և դուրս գնաց։

Դռան եռանը կանգնած, ուշի ուշով ականջ էի դնում, թէ ինչպէս նախասենեակում հագնում էր վերարկուն, թէ ինչպէս սանդուղքով իջաւ ներքև, թէ ինչպէս դուռը բացուեց և ապա փակուեց։ Այնուհետև ոչ մի ձայն, ոչ մի շշուկ։ Երբ ուշքի եկայ, տեսայ, որ, ճակատս դռանը սեղմած, ցնցւում եմ բոլոր ջղերովս և անդուսպ հեկեկանքի նման ինչ-որ վայրենի ձայներ դուրս են թռչում բերանից։ Վերին աստիճանի կատաղի մի յուսահատութիւն էր տիրել ինձ։ Զգում էի, որ եթէ Բաղէնեանը վերադառնար և կանգնէր առաջս, պատրաստ էի և՛ խեղդել նրան, և՛ փարել նրա ոտներին։ Շուտով չհանգստացայ, բայց յետոյ կամաց-կամաց այնպիսի մի ամայութիւն զգացի շուրջս, որ կարծես թէ ամբողջ աշխարհը յանկարծ քարացել, մթնել

է և այդ սոսկալի ամայութեան մէջ ես եմ միայն կենդանի մնացել...

—Պարոն Շահեան, մի բաժակ էլ,—խնդրեց պանի Զդանևիչը, նոր տեսնելով, որ նրա բաժակը դատարկ դրուած է նրա առաջ։

—Չէ, շատ շնորհակալ եմ։ Ձեր պատմութիւնն այնքան հետաքրքրական է, որ...

—Կարելի է և երրորդ բաժակը չխմել,—վրայ բերեց պանի Զդանևիչը ժպտալով և ջրի պէս խմեց իր սառած թէյը։

VI

Նոյն օրուայ գիշերը,—ժամը, կարծեմ, տասնմէկն էր,—դէմքս ծածկեցի հաստ վուալով և դուրս եկայ,—շարունակեց պանի Զդանևիչը։—Գիտէի որ հիւրանոցումն էր իջած։ Գնում էի, բայց չէի իմանում ինչու։ Այնպէս էի զգում, թէ սաստիկ տենդի մէջ եմ։ Հիւրանոցի դռնապանից իմացայ, որ տանը չէ, դեռ չի վերադարձել։ Յուսահատուեցի։ Գրեթէ մի ժամ կանգնած էի հիւրանոցի դռանը, ամայացած փողոցում,—խիստ քամի էր,—և չէի վախենում ամենևին։ Կարծես ժամանակաւոր խելագարութիւն էր եկել վրաս։ Սպասում էի։ Երբեմն-երբեմն մարդիկ էին անցնում առաջովս, և տեսնում էի, որ օտարոտի հայեացքներ են ձգում վրաս։ Մէկը նոյն իսկ մօտեցաւ ինձ և ինչ-որ ասաց։ Կարծեմ, ապտակ տուի, և նա սուս ու փուս հեռացաւ։ Քայլերի ձայներ լսելիս, հեռու մթութեան մէջ մարդկային ստուեր տեսնելիս դողում էի ամբողջապէս. միշտ թւում էր ինձ, թէ նա է։ Տէր իմ Աստուած, այն ի՞նչ բոպէներ էին...

Վերջապէս, դեռ շատ հեռուից, փողոցի լապտերի լուսաւորութեան տակ, ճանաչեցի նրան ու վազեցի դէպի նա։

Սկզբում կանգ առաւ շփոթուած և երևի խիստ զարմացած և չճանաչելով ինձ, նայեց վուալիս։

Արդէն բոլորովին կորցրել էի ինձ։ Այդ բոպէին չկար ինձ համար ոչ ամօթ, ոչ պատկառանք, ոչ արժանապատուութեան զգացման նշոյլ անգամ, այն խըստագոյն արժանապատուութեան, որը ստիպեց ինձ այնքան սառնութեամբ ընդունել նրա հրաժեշտը և որի համար այնպէս սոսկալի կերպով պատժուեցի։ Վճռել էի ուղղակի բռնի կերպով նետուել նրա գիրկը, եթէ զզուանքով անգամ դէն հրելու էլ լինէր ինձ։ Վերին աստիճանի յուսահատուած էի, վճիռս էլ նոյնքան յուսահատական էր։

Շատ լաւ յիշում եմ, ոչինչ չկարողացայ արտասանել, այլ միայն, որքան ոյժ ունէի, ամուր բռնեցի ձեռքից և գրեթէ քարշ տուի ետևիցս։

Նա, վերջապէս, ճանաչեց ինձ։

—Պանի Զդանևիչ,—շշնջաց նա, չգիտեմ՝ խիստ զարմացած, թէ խիստ վախեցած։

—Ե՛կ,—արտասանեցի ես ատամներս սեղմած և բոլոր ուժովս քարշ էի տալիս նրան։

Մտանք հիւրանոց։ Ես վազում էի առաջ և ամբողջ մարմնովս դողում։ Երբ մտանք նրա սենեակը, և նա ճրագը վառեց, ես վուալս, կարծեմ, պատռեցի ուղղակի և դէն շպրտեցի։

—Տեսնում ես,—ասացի,—դու այնպիսի դրութեան մէջ ես դրել ինձ, որ ուղղակի իմ ոտովս եմ եկել քեզ մօտ։

Ճիշտը ձեզ ասեմ, այդ միջոցին արդէն այնքան կորցրել էի ինձ, որ այլ ես ոչ մի ընդունակութիւն չունէի դիտելու, թէ իմ յանկարծակի երևումը, իմ

խօսքերը, իմ դրութիւնն ինչ տպաւորութիւն են գործում նրա վրայ։ Պէտք է որ չափազանց զարմացած լինէր։ Յետոյ միայն անհուն բերկրութեամբ տեսայ, որ նա չոքած է ոտներիս առաջ, քնքշանքով համբուրում է ձեռքերս և... լալիս է։

Այլևս ոչինչ չէի տեսնում, բացի առաջս խոնարհուած այն գեղեցիկ գլխից հրաշալի սևաթոյր մազերով ծածկուած. այլևս ոչինչ չէի զգում, բացի անհուն մի երանութիւնից, որի ժամանակ մեռնէի էլ, ամենաերջանիկը կըլինէի...

Ա՜խ, կախարդ էր նա, աւելի քան կախարդ...

Այդ գիշեր ամեն բան խոստովանուեց։ Ասաց, որ ինքն իրրթէ տանջւում է եղել ինձ սիրելուց, բայց զսպելիս է եղել իրեն, որովհետև ինքը կնոջ սիրոյ համար չէ ծնուած, այլ—իր թշուառ հայրենիքի համար։ Առաջս չոքած, ձեռքերս բռնած, ներքևից նայում էր աչքերիս և վերին աստիճանի վառուած, կարծես բերան արած խօսքերով նկարագրում էր իր հայրենիքի անտէրութիւնը, այնտեղ տիրող սարսափները, իր հայրենակիցների անտանելի վիճակը։ Նրա ձայնը մարդկային ձայն չէր, այլ հրաշալի մի միւզիկ, որ հնչում էր ականջիս, ամբողջ էութիւնս տակն ու վրայ անելով։ Մէջ ընդ մէջ մերթ ջերմ համբոյրներ էր դրոշմում ձեռքերիս, մերթ յուսահատական աղերսանքով կրկին նայում աչքերիս և աղաչում ու պաղատում, որ արգելք չլինեմ իր սրբազան ուխտը կատարելու։

—Դուք էլ ունիք մի թշուառ հայրենիք,—ասում էր նա,—բայց ոչ այնքան թշուառ, որքան իմը։ Աղաչում եմ, թոյլ տուէք գնամ իմ պարտքը կատարելու...

Տէր Աստուած, ինչքան գեղեցիկ, ինչքան հրաշալի էր նա այդ միջոցին. որքան ազդու, որքան գերող նրա հայեացքը, ձայնը, ինքն ամբողջապէս...

Անկամայ խոնարհուեցի և ձեռքերովս առայ նրա դէմքը։

—Անմիտ, անմիտ,—շշնջացի ուղղակի շրթունքների մօտ,—միթէ ես կարող եմ որևէ բանում արգելք լինել քեզ։ Ես ուզում եմ նուիրուել քեզ, որպէսզի քեզ հետ միասին նուիրուած լինիմ և քո հայրենիքին։ Ուզում ես—առ ինձ և տար՝ ուր ուզում ես. չես ուզում—սպանիր ինձ և ապա թէ գնա՝ ուր ուզում ես...

Զգիտեմ՝ հոգեզմայլութիւնից, շնորհակալութիւնից, թէ նրանից, որ այլ ևս ոյժ չէր զգում դիմադրելու, նրա աչքերը նորից լցուեցին արտասուքով։ Եւ նա անձնատուր եղաւ ինձ, առանց որևէ առարկութեան, լուռ ու հնազանդ և ողջագուրանքի առարկայ եղող ներեխայի քծնող քնքշութեամբ...

Պանի Զդանևիչը, կարծես ինքնամոռացութեան մէջ, վերկացաւ դէպի լուսամուտը և յետ քաշեց լուսամուտի ասուեգործ վարագոյրը։ Ձեռքով նա սրբեց քրտնած ապակին և երկար ժամանակ լուռ ու մտախոհ նայում էր դէպի դուրս, որտեղ, գիշերային խաւարի մէջ, հրապարակի վրայ երևում էին խանութների և կառքերի անհամար ճրագներ։

Շահեանը, արձանի նման, լուռ ու անշարժ, նայում էր նրա ետևից։ Նրա կարճատես աչքերի առաջ, ակնոցի պլպլան ապակիների միջից, լուսամուտի վարագոյրի արանքում երևում էր պանի Զդանևիչի բարձր, ամուր, լի մէջքը հագուստի մէջ պինդ սեղմուած։ Սկզբում նա անյարմար դրութեան մէջ էր զգում իրեն, որ պանի Զդանևիչն այնպիսի անկեղծութեամբ իր անձնական գաղտնի պատմութիւնն էր անում. բայց յետոյ շատ շուտով ընտելացաւ այդ կնոջ ազատ, մտերմական վարմունքին և լսում էր նրան ամենայն հետաքրքրութեամբ, միանգամայն պատկերացնելով իր

առաջ նրա պատմութեան բոլոր մանրամասնութիւնները։

Պանի Զդանևիչը խորը հառաչեց, դանդաղ քայլերով վերադարձաւ և նստեց առաջուայ տեղը։ Այժմ նրա դէմքը խիստ տխուր էր։ Շահեանին մինչև անգամ թուաց, թէ նրա աչքերը թաց են։ «Մի՞թէ դեռևս սիրում է»—մտածեց զարմացած։

—Երկու ամսից յետոյ ես արդէն ծախել-ծախծխել էի շարժական և անշարժ կայքերիս մեծ մասը և նրա հետ գնացի արտասահման,—առաջ տարաւ իր պատմութիւնը պանի Զդանևիչը յոգնած ձայնով։—Նա զիջել էր իմ թախանձանքին, որ մի կարճ ժամանակ նուիրուի իմ սիրոյն։ Շրջեցինք եւրոպական գրեթէ բոլոր նշանաւոր վայրերը, գնացինք և Ամերիկա։

Ի դէպ։ Միացեալ Նահանգներում ի մօտոյ ծանօթացայ լեհ հայրենասիրական մի ընկերութեան հետ, որի մասին շատ բան էի լսել։ Զգիտեմ, ձեզ յայտնի՞ է թէ ոչ,—լեհական վերջին անաջող ապստամբութիւնից յետոյ իմ հայրենակիցներից շատերը փախան ովկիանոսի այն կողմը և այնտեղ կազմեցին հայրենասիրական զօրեղ մի գաղութ, որ մինչև օրս էլ գոյութիւն ունի և որի նպատակն է ազատ հասարակապետութեան ազատ հողի վրայ նախապատրաստուել ապագայի համար։ Այդ տարագիրները սպասում են միայն քաղաքական աջող դիպուածների, որոնցից օգտուել չեն յապաղիլ։ Այս բոպէիս ամբողջ հիւսիսային և հարաւային Ամերիկայում երկու միլիոնից աւելի լեհացի կայ և այնտեղ նրանք կատարելապէս պահպանում են իրենց ինքնուրոյնութիւնը, ունին իրենց ազգային դպրոցները, մայրենի լեզուով հրատարակուող բազմաթիւ լրագրներ, ունին իրենց կաստեօլները, որոնց միաբանութիւնները ոչ այնքան կրօնական նպատակ ունին, որքան քաղաքական-հայրենասիրական, այնպէս որ միաբաններից շատերը լեհ զինուորի հագուստ ու զէնք են կրում։

Բայց այս ի միջի այլոց։

Պէտք է խոստովանուեմ, որ Բազէնեանը սկզբում չափազանց նուիրուած էր ինձ. առանց ինձ ոչ մի տեղ չէր գնում, առանց իմ կարծիքս իմանալու ոչինչ չէր անում. այնպիսի մի քնքշանք ու հոգացողութիւն էր ցոյց տալիս, որ երբեմն նոյն իսկ վիրաւորական էր թուում ինձ։ Մի անգամ հիւանդացայ. ամբողջ մի շաբաթ տանից դուրս չգնաց և շարունակ նստած էր մօտս, մի լաւ հիւանդապահի պաշտօն կատարելով։ Օ՜, նա շատ խորամանկ էր և մեծ հոգեբան։ Յետոյ, շատ յետոյ իմացայ, որ նրա ամեն մի քայլը չափուած ու ձևուած էր. անկաշառ զգացումից դրդուած ոչինչ չէր անում և ինչ որ անում էր, միշտ յատկն նպատակ ունէր։ Շատ լաւ գիտէր, թէ որքան սիրում էի իրեն։ Ինքն ինձ հպատակուելով ուզում էր ինձ ստրկացնել իրեն։ Ամեն կերպ ինձ պարտաւորեցնելով ուզում էր, որ ինքն ազատ մնայ որևէ պարտաւորութիւնից։ Այո, վերջը տեսայ, որ չէր սխալուել։ Կամաց-կամաց այն աստիճան ստրկացրել էր ինձ, այնպիսի անլեզու մի արարած էր դարձրել, որ երբ, ամիսներ անցնելուց յետոյ, տեսայ, որ հետզհետէ սառչում է դէպի ինձ, չէի համարձակւում բերան բանալ յանդիմանելու համար։ Պարզապէս տեսնում էի, որ արդէն ձանձրացել է ինձնից և ինձ հետ շարունակում է ապրել ճարահատուած միայն։ Ես տանջւում էի, նրա սառնութիւնը մահ էր ինձ համար, բայց տեսնում էի, որ իրաւունք չունէի բողոքելու և չէի կարողանում ձայն հանել։ Զարմանալին այն էր, որ որքան սառչում էր նա ինձնից, այնքան սէրս աւելի բորբոքւում էր։ Բանի որ ոչ մի

կասկած չունէի նրա փոխադարձ սիրոյ և անձնուիրութեան վրայ, ինձ մինչև անգամ թւում էր, թէ իսկապէս սիրահարուած չեմ նրա վրայ. բայց այժմ, երբ ոչ թէ կասկածում, այլ ամենապարզ կերպով տեսնում էի, որ սոսկալի մի վիհ արդէն սկսել է բաժանել նրան ինձնից, զգում էի, թէ որքան զօրեղ ու խորն է այն զգացումը, որ կապում է ինձ նրա հետ: Սարսափով տեսնում էի, որ վերջիվերջոյ պիտի ձգի ինձ ու հեռանայ: Եւ այդ բանն ինձ աւելի ևս ստիպում էր լուռ մնալ: Ցոյց էի տալիս, թէ չեմ տեսնում իր սառնութիւնը, թէև նա ամենևին չէր էլ փորձում գէթ արտաքուստ ծածկել իր մէջ կատարուող փոփոխութիւնն իմ վերաբերմամբ: Իմ այդ կամաւոր կուրութիւնն, ըստ երևոյթին, զայրացնում էր նրան. ինչպէս նկատում էի, ուզում էր, որ տրտնջայի, յանդիմանէի, կռուէի հետը, որպէսզի առիթ ունենար աւելի հեշտ պրծնելու ինձնից: Դրա համար երբեմն ուղղակի կոպտաբար էր վարւում ինձ հետ, երբեմն էլ ամբողջ օրերով մենակ էր թողնում ինձ և վերադառնում էր ուշ գիշերին: Բայց և այնպէս, ես էլի լուռ էի, ցոյց էի տալիս, թէ ոչինչ չեմ տեսնում և աղի արցունքներ էր, որ թափում էի մենակ ժամանակ:

Ի հարկէ, չէր կարող այսպէս երկար շարունակուել, մանաւանդ որ նա, լռութիւնից խրախուսուած, սկսել էր այլևս բանի տեղ չդնել ինձ: Դանակը ոսկորին էր հասել, և մի անգամ, այլևս չկարողանալով դիմանալ, սկսեցի յանդիմանել: Նա սաստիկ բորբոքուեց և ասաց, որ ես միանգամայն կործանում եմ իրեն, որ ես կապել եմ իր ձեռքերն ու ոտները, որ ես ստիպել եմ իրեն դաւաճանել իր ընկերներին, դրժել իր սրբազան ուխտը և այլն, և այլն: Բանը վերջացաւ նրանով, որ յանցաւորն ես եղայ և գլխովին պարտա-

կան մնացի նրան: Տէր Աստուած, ինչքան միամիտ էի, ինչպէս սիրում ու հաւատում էի նրան...

Մի անգամ շատ զգուշօրէն խօսք բաց արի այն մասին, թէ ինչու մեր կապը չենք կնքում օրինաւոր ամուսնութեամբ: Նա ծիծաղեց և նկատեց.

—Մթթէ դու որևէ նշանակութիւն ես տալիս այդ յիմար ձևականութեանը:

—Բայց ես շուտով մայր պէտք է լինիմ,—յայտնեցի ես:

Այս բանն, ըստ երևոյթին, այնքան անակնկալ էր նրա համար, որ նա վեր թռաւ տեղից գրեթէ սարսափած.

—Ճիշտ,—բացականչեց նա, յետոյ ինչ-որ մտախոհութեան մէջ ընկաւ և ասաց շատ հանգիստ.—Հա, երբոր այդպէս է... պէտք է օրինական անուն տալ մեր զաւակին:

Ես խիստ ուրախ էի, որ գոնէ օրինաւոր ամուսնութեամբ և զաւակի միջոցով կարող կըլինէի նրան առմիշտ կապել ինձ հետ, բայց շուտով այդ բանումն էլ հիասթափուեցի: Ամուսնութիւնը նա միշտ յետաձգում էր զանազան պատրուակներով, իսկ զաւակս ծնուեց մեռած... Ես սոսկում եմ հիմա, որ մտածում եմ, թէ ինչ պիտի անէի այժմ, եթէ զաւակս մեռած չծնուէր և ապրէր...

Գարնանը վերադարձանք Վարշաւ: Այստեղ մօրեղբօրս մեռած գտայ: Ամուրի էր և անզաւակ, միակ ժառանգն ես էի, ուստի մեծ յոյս ունէի, որ իր բաւական մեծ կարողութիւնն ինձ կըլինի թողած, բայց կտակի մէջ մի կոպէկ անգամ չգտայ իմ օգտին, որովհետև նրա արիստոկրատիզմը սաստիկ վիրաւորուել էր, որ իր քրոջ աղջիկը ստորին դասակարգի պատկանող միորևէ կնոջ պէս փախել էր առաջին պատահած արկածախնդիր մի մարդու, այն էլ ոչ-կաթոլիկի և

այն էլ «անիշխանական» հետ, արատաւորելով իր ամբողջ տոհմի անունը։ Մինչդեռ ես աւելի քան կարօտ էի նրա ժառանգութեան, որովհետև վողերս հատնելու վրայ էին և Բաղէնեանին ես էի պահում, որովհետև նա գրող չունէր։ Բաղէնեանն ինչ-որ վիճելի կէտեր գտաւ կտակի մէջ և ստիպում էր ինձ ժառանգական դատ բանալ, բայց ես բացէ ի բաց մերժեցի, որովհետև ես էլ ունէի իմ պատուասիրութիւնը։ Դեռ ես, փառք Աստուծու, այնքան ունէի, որ կարող էինք քաղցած չմեռնել։

Ամառն անցկացնելու համար գնացինք Եալթա, ուր մի քիչ կազդուրուելու պէտք ունէի անաջող որդեծնութիւնից յետոյ։ Շուտով Եալթայում ինձ մենակ թողեց, ասաց, թէ մի քանի կարևոր գործերի համար գնում է մօտակայ քաղաքները և շուտով կըվերադառնայ։ Լուութեամբ հնազանդուեցի վիճակիս և սկսեցի սպասել։ Հաշւում էի օրերը, ժամերը, րոպէները և կասկածներից քիչ էր մնում խելագարուէի։ Ինձ թւում էր, թէ արդէն ձգել է ինձ և փախել և չի վերադառնալ այլ ևս։ Բայց բանից երևաց, որ կասկածներս հիմք չունէին, որովհետև մի ամսից վերադարձաւ և այնքան ուրախ էր, այնպիսի կարօտով գրկեց ինձ, որ միանդամայն վարձատրեց ինձ պատճառած տանջանքների համար։ Յետոյ, շատ յետոյ իմացայ, որ այդ ուրախութիւնն ինձ համար չէր, այլ նրա համար, որ Ղրիմում կատարած իր շրջագայութեան ժամանակ առատ հունձ էր ունեցել...

Ինձ թւում է, թէ այնժամանակ իսկ ես հասկանում էի արդէն, որ նրա անձնուէր հայրենասիրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի դիմակ միայն, որի տակ ծածկուած՝ հետամուտ է լինում զուտ անձնական շահերի։ Բայց այն աստիճան ճարպիկ էր նա, և սէրն

այնքան կուրացրել էր ինձ, որ այդ բանը չէի տեսնում կամ, աւելի ճիշտն ասած, չտեսնելուն էի տալիս։ Ինքս սրտով ու զգացումներով մաքուր լինելով, չէի ուզում որևէ արատ տեսնել ուրիշների, մանաւանդ նրա մէջ, որին սիրում էի, որին նուիրուել էի առմիշտ։ Ուրիշ ոչինչ որ չլինէր, խնդիրն այստեղ վերաբերում էր արդէն իմ պատուին։ Ես ուզում էի խաբուած լինել չհիասթափուելու համար, իսկ հիասթափումն այդ դէպքում մահ կըլինէր ինձ համար։

VII

Օգոստոսի վերջերին ասաց, թէ վերևից հրաման է ստացել անյապաղ գնալ Անդրկովկաս մի քանի գործեր կարգադրելու համար և ապա անցնել Հայաստան, ուր արդէն սկսուած է ապստամբական շարժումը։ Ընդսմին ցոյց տուեց հայերէն գրուած ինչ-որ նամակներ, որ իբրթէ ստացել էր արտասահմանից։ Այս անգամ ուղղակի ասաց, թէ այլևս հնարաւորութիւն չունի ինձ իր հետ ման ածելու և թէ գործն արդէն ինքն է ստիպում, որ մենք բաժանուենք իրարից։ Նա խօսում էր խիստ վճռական լեզուով։ Երկար ժամանակ ընկած էի նրա ոտների առաջ և, յուսահատական արտասուք թափելով, աղաչում, պաղատում էի, որ չձգի ինձ, որ ես իր աղախինը կըլինիմ, իր սորու...

—Օ՜,—ֆիզիքական ցաւ զգալու չափ հառաչեց պանի Զդանևիչը և դէմքը ծածկեց ձեռքերով։ Անցաւ բաւական երկար ժամանակ, մինչև որ կարողացաւ ճնշել իր ինքնանուաստութեան սուր յիշողութեան խայթոցը և շարունակեց պատմութիւնն այս անգամ դրգռուած և արագախօսութեամբ.

—Նա համաձայնեց ինձ իր հետ առնելու, միայն

հասկացրեց, թէ փող չունի,—կարծես թէ ինքն էր պահում ինձ, և ոչ թէ ես—իրեն։ Իսկոյն հեռագրեցի հաւատարմատարիս, որ ծախի վերջին կալուածքս (այդ կալուածքը պահում էի սև օրուայ համար) և փողն ուղարկի այնտեղ, որտեղից նամակ կամ հեռագիր կուղարկեմ իրեն։ Ճանապարհ ընկանք դէպի Անդրկովկաս։ Պէտք է ասեմ, որ հէնց սկզբից պատուիրել էր ինձ, որ ոչ մի տեղ ցոյց չտամ, թէ որևէ մերձաւոր կապ կայ մեր միջև, այլ ես էլ, ինքն էլ պէտք է ցոյց տայինք միայն, թէ մենք լոկ ուղեկիցներ ենք՝ ճանապարհին ծանօթացած, և ուր իջնում էինք, ես առանձին էի ապրում, նա առանձին, ինչպէս այստեղ-Թիֆլիսում։ Այսպիսով շրջեցինք այս կողմերի գաւառական հայաբնակ քաղաքները և վերջն եկանք Թիֆլիս։ Այստեղ ինձ թողեց և գնաց Բաղու։ Բաղուից վերադարձաւ շատ վատ տրամադրութեան մէջ։ Երևի, սպասած հունձը չէր ունեցել։ Թիֆլիսում մանաւանդ խստիւ պատուիրեց, որ բոլորովին հեռու մնամ իրենից և, եթէ կարելի է, ամենևին տեսակցութիւն չունենամ իր հետ։ Ստրկի պէս կատարում էի նրա պատուէրները։ Դուք նկատեցի՞ք, թէ սկզբում ինչքան զայրացաւ, որ ես յանկարծ մտայ իր սենեակը «Լոնդոն» հիւրանոցում, իր հիւանդ պառկած ժամանակ։ Այն աստիճան սաստել էր ինձ, որ մինչև անգամ եթէ հաստատ գիտենայի էլ, թէ այդ միջոցին նրա մօտ մարդ չի լինիլ, էլի չէի համարձակուիլ գնալ նրա մօտ. բայց լրագրի մէջ որ կարդացի այն լուրը, ինքս ինձ մոռացայ և գլխապատառ վազեցի, որ տեսնեմ, թէ ճի՞շտ է, որ նրա կեանքին վտանգ է սպառնում։ Սակայն, չգիտեմ, իրեն պատահած դժբաղդութի՞ւնն էր պատճառը, թէ՞ այն, որ այդ օրերը հաւատարմատարիցս ստացած վերջին փողերս իրեն էի տուել,—նա զարմանալի կերպով քնքշացել էր դէպի ինձ։ Այդ բաւական էր, որ ես կատարելապէս մոռանայի նրա ինձ պատճառած այնքան տանջանքները և նորից առաջուայ բուռն սիրով անձնատուր լինէի նրան։

Բայց այդ քնքշանքն էլ երկար չտևեց. շատ շուտով տեսայ, որ նորից սառել է դէպի ինձ, և մի քանի անգամ էլ, մանաւանդ վերջին օրերում, նկատեցի, որ իմ ներկայութիւնն իր մօտ պարզապէս անտանելի է նրա համար։ Նորից կծկուել, նորից ձայն չէի հանում. ուզում էի տանջանքս մէջս խեղդելով և խոնարհ լռութեամբ ընկճել նրան, շարժել նրա գութը,—ոչինչ չէր օգնում. նա մռայլւում էր աւելի ու աւելի, վարւում էր ինձ հետ թէև զսպած, բայց արդէն խիստ աչքի ընկնող կոպտութեամբ. նրա դէմքի վրայ պարզապէս ջղային ատելութեան նշաններ էի տեսնում։ Ինչքան էլ որ հիւանդ սիրոյ այս ատելի, այս գարշելի զգացումը մեռցրած լինէր իմ մէջ ըմբոստութեան ոգին և բարոյապէս վալաս լինէր դարձրած ինձ, այնուամենայնիւ ֆիզիկապէս արդէն անկարելի էր կրել այս յարատև տանջանքները, այս վիրաւորանքները, այս նուաստացումը և ոչ մի անգամ բողոք չբարձրացնել։ Եւ ես գնացի բողոքելու։ Գնացի նրա մօտ։ Այդ անցեալ շաբաթ էր։ Բանը վերջացաւ նրանով, որ ես, — դարձեա՛լ ես,—սև օրս ողբալով դուրս եկայ նրա սենեակից...

Այլ ևս աւելորդ է, որ երկարացնեմ։ Դուք գիտէք, որ նա փախել է։ Եւ փախաւ ամենաանարգ կերպով, փախաւ իրրև գող։ Եւ իսկապէս որ գող էր. ամենաճարպիկ կերպով գողացաւ իմ ամենանուիրական զգացումները, իմ անունը, իմ պատիւը, գողացաւ և իմ ամբողջ,—այո՛, ամբողջ,—կարողութիւնը։ Նա քամեց, ճզմեց ինձ կիտրոնի պէս և երբ տեսաւ, որ ծծելու այլ ևս հիւթ չունիմ, ձգեց ու փախաւ։

Բայց,—պոնի Զդանևիչը յանկարծ վեր կացաւ տեղից,—ոչ, ոչ, ոչ, նա մեղաւոր չէ ամենևին։ Մեղաւորը ես եմ միայն և ամենևին իրաւունք չունիմ նրան դատապարտելու, ոչ, չունիմ, քանի որ նա, դոնէ արտաքուստ, հէնց սկզբից վամենում էր հեռու մնալ ինձնից, և ես էի, որ զօրով փաթաթուեցի նրա վզին, ինչպէս այդ բանը նա երեսուն տուեց մեր վերջին տեսակցութեան ժամանակ։ Օ՜, այս գիտակցութիւնը... սա ուղղակի խելագարացնում է ինձ։ Ես, որ այնքան անձնասէր էի, այնքան հպարտ և, առանց այլևայլութեան, մերժում էի ձեռքս խնդրողներին, որոնց մէջ կային անպայման ազնիւ և պատուաւոր մարդիկ,—ինչպէս թոյլ տուի ինձ այս աստիճան կուրանալ և ընկնել անծանօթ, մի անյայտ, մի բաղդախնդիր երիտասարդի դիրքը, որը կորցնեց իմ անունս էլ, իմ պատիւս էլ, իմ կարողութիւնս էլ և շինեց ինձ պարզապէս մի մուրացիկ։ Նա իր արհեստն էր բանեցնում, իսկ ե՞ս ինչ էի մտածում, այս ահագին կինս։ Եթէ անփորձ մի աղջիկ լինէի, տղամարդկանց չճանաչող ու միամիտ, էլի հասկանալի կըլինէր մոլորութիւնս և արդարանալի. բայց այս հասակում... տղամարդկանց այնպէս լաւ ուսումնասիրած լինելուց յետոյ... Օ՜, սարսափելի է, սարսափելի...

Շահեանը վեր կացաւ. մի ուժգին բան ներսից դրդում էր նրան խօսել, քաջալերել։

—Մի յուսահատուէք, պանի Զդանևիչ,—ասաց նա անհամարձակօրէն։—Թքեցէք և մոռացէք նրան։

—Ա՛խ, դուք կարծում էք, թէ ես դարձեալ նրա՞ համար եմ մտածում,—բացականչեց պանի Զդանևիչը, և նրա աչքերը վառուեցին անհուն ատելութեան կրակով։—Բաւական չեղա՞ւ, որքան այս դարշելի կիրքը կուրացրեց ինձ... Ո՛չ, պարոն Շահեան, դուք սխալւում էք. ես այժմ այնպէս ատում եմ նրան, ինչպէս դեռ ոչոքի չեմ ատել։ Յուսահատութեանս պատճառը, այո՛, այն չէ, որ ես դարձեալ սիրում եմ նրան,—այդ խօսքն արտասանելուց անգամ դարշում եմ այժմ,—այլ այն, որ ինքս իմ աչքում կորցրել եմ իմ յարգը։ Իմ տեղս պիտի լինիք, որ հասկանաք, թէ ինչ է նշանակում, երբ մարդ դադարում է ինքն իրեն յարգելուց։ Հասկացող մարդու համար դրանից աւելի մեծ տանջանք չի կարող լինել։ Բացի դրանից, չէ՞ որ ես այժմ աղքատացած եմ, բոլորովին աղքատացած։ Ի՞նչ պիտի անեմ, ո՞ւր պիտի գնամ, ինչո՞վ պիտի ապրեմ... Այսպիսի դրութեան մէջ խելագարուել միայն կարելի է...

Շահեանը, առանց որևէ յետին մտքի, ինքնաբերաբար և ամենայն անկեղծութեամբ, ուզում էր ասել, որ ինքը միշտ պատրաստ է նրան օգնելու, բայց յանկարծ մտածեց, թէ մի գուցէ պանի Զդանևիչն իր խօսքերը վատ մտքով բացատրի, և ոչինչ չասաց, ուրիշ բան էլ չգտաւ ասելու։

Ես այժմ մի բան եմ մտածել,—շարունակեց պանի Զդանևիչը։—Այսպիսի խայտառակութեամբ և ամօթով վարշաւ վերադառնալ, հարկաւ, չեմ կարող։ Ուզում եմ գնալ Ամերիկա իմ ասած լեհ հայրենասիրական դաղութի հետ միանալու։ Եթէ որևէ բանով պէտքական եղայ այնտեղ, խօ—լաւ, իսկ եթէ ոչ, աշխարհս մեծ, ման կըգամ և կաշխատեմ որևէ վարձկան պաշտօն ճարել։ Փառք Աստուծու, եւրոպական մի քանի լեզու գիտեմ և շատ էլ ագէտ չեմ։

Շահեանը նայեց նրան անկեղծ ափսոսանքով և նորից ուզում էր իր օգնութիւնն առաջարկել, բայց էլի չհամարձակուեց. այժմ վախենում էր, որ դրանով կարող է վիրաւորել պանի Զդանևիչի հպարտութիւնը։

Պանի Զդանևիչը չթողեց, որ Շահեանը շուտ գը-

նայ, և մինչև անգամ մի թեթև ընթրիք պատուիրեց սպասաւորին։

—Վաղը գնում եմ և չեմ ուզում, որ մեր բարեկամութիւնն անցողակի լինի,—ասաց նա։—Ուր էլ որ լինիմ, միշտ պիտի յիշեմ ձեզ երախտագիտութեամբ, որովհետև... Հա, մոռացայ ձեզ ասեմ. նրա փախստի օրն, ախր, մի նամակ ստացայ նրանից։ Այդ նամակը պահեցի, որ կարդամ ձեզ մօտ։ Տեսէք ինչ է գրում։

Պանի Զդանևիչն արագ մօտեցաւ գրասեղանին, դզրոցը դուրս քաշեց, հանեց մի նամակ, գնաց նստեց Շահեանի կողքին և, նամակը բռնելով այնպէս, որ Շահեանն էլ կարողանայ կարդալ, կարդաց.

«Իմ քաղցրիկ Էլիզա.

«Այս բոպէիս այնպիսի մի հսկայական յիմարութիւն գործեցի անզգուշաբար, որից ստիպուած եմ անմիջապէս հեռանալ։ Կուզէի անձամբ տեսնել քեզ, բայց ժամանակը չի ներում. գնացքը մեկնելու է մի ժամից, հազիւ թէ վրայ հասնեմ։ Այս բոպէիս ինքս էլ չգիտեմ, թէ ուր եմ գնում, բայց պիտի գնամ, անպատճառ պիտի գնամ։ Ճանապարհից կըհեռագրեմ քեզ, թէ որտեղ կարող ես ինձ գտնել։

«Նամակս գրում եմ, որպէսզի չկարծես, թէ փախել եմ քեզնից։ Վերջին ժամանակս դու այդ բառը շատ էիր կրկնում, որով շատ էիր դայրացնում ինձ։ Վկայ է Աստուած, որ ես քեզ սիրել եմ, սիրում եմ և պիտի սիրեմ, քանի շունչս բերնումս է։ Վերջին սրիկան պիտի լինիմ, եթէ գէթ մի բոպէ մոռանամ այն անիծաբերելի զոհաբերութիւնը, որ դու արել ես ինձ համար։ Եթէ որևէ տհաճութիւն եմ պատճառել քեզ,

այդ պիտի վերագրես միայն իմ դժբաղդ կրքոտ բնաւորութեանը, որից ինքս էլ գոհ չեմ։

«Ցտեսութիւն, կեանքիս քաղցրիկ ընկերուհի։

«Ցմահ քո Սուրէն։

«Ց. Գ.—Փողի կարիք որ զգաս, դիմիր Լևոն Շահեանին, որի հետ ծանօթացար ինձ մօտ, երբ ես պառկած էի հիւանդ։ Նա շատ ազնիւ, շատ պատուական երիտասարդ է, և կարող ես վստահիլ նրան առանց քաշուելու։ Ցամենայն դէպս յայտնում եմ քեզ նրա հասցէն»։

—Հետևում է ձեր հասցէն—միակ բանն ամբողջ նամակի մէջ, որ կարևորութիւն ունեցաւ ինձ համար, ասացածը՝ գրոշ,—ասաց պանի Զդանևիչը և հանգիստ ու կամաց ճղեց նամակը վերևից մինչև ներքև։—Եւ այս խորամանկ-թշուառականը կարծել է, թէ այնքան բաներից յետոյ պիտի հաւատամ իր այս ստութեան և կեղծաւորութեան շեղհօվին,—աւելացրեց նա, նամակը ճմռելով ափի մէջ և հանգիստ գաբշանքով շպրտելով վառարանի կողմը։—Ինչու չի գրում, թէ այն ինչ հսկայական յիմարութիւն է, որ գործել է և որից ստիպուած է եղել այնպէս շուտափոյթ հեռանալ և իբրթէ ժամանակ չի գտել ինձ էլ իր հետ առնելու։ Այսօր ճիշտ տասն օր է, որ գնացել է, և ուր է այն հեռագիրը, որով ճանապարհից պիտի յայտնէր ինձ, թէ որտեղ կարող եմ գտնել իրեն։ Աստուծուն վկայ է բերում, թէ սիրել է ինձ, սիրում է և... Է՛հ, բաւական է, բաւական։ Նորից արիւնս տակնուվրայ է լինում...

Պանի Զդանևիչը սաստիկ գրգռուած վեր կացաւ, յատակից վերցրեց նամակը, վառարանի դուռը բաց արեց և ներս շպրտեց։ Նա այլևս ոչ մի խօսքով չյիշեց

Բազէնեանին, ասելով, որ ուզում է իսպառ մոռանալ նրան և, վերջին յուսահատական ոյժերը հաւաքած, մի նոր, խելացի, առողջ կեանք սկսել հիւանդ սիրուց յետոյ։ Նա նորից յիշեց Ամերիկայում իր տեսած լեհական գաղութը և մեծ ոգևորութեամբ սկսեց խօսել այդ գաղութի նպատակների մասին։ Նրա տրամադրութիւնը հետզհետէ այն աստիճան բացուեց, որ ընթրիքի ժամանակ մինչև անգամ ուրախ էր։

Շահեանը նոյնպէս բացուել էր. պանի Զդանևիչի ցոյց տուած մտերմութիւնը չափազանց գրաւել էր նրան, և նա չէր իմանում ինչպէս անի, որ ցոյց տայ, թէ ինքը գնահատում է այդ մտերմութիւնը և ամենայնիւ պատրաստ է թեթևացնելու նրա վիճակը։ Երբ, ընթրիքից յետոյ, պատրաստուեց գնալու, այլևս չկարողացաւ դիմանալ և ուղղակի ասաց.

—Պանի Զդանևիչ, եթէ, ուր էլ որ լինիք, օգնութեան կարիք ղդաք, կարող էք, առանց այլևայլութեան, դարձեալ ինձ դիմել։

Պանի Զդանևիչն առաւ նրա ձեռքը և ջերմագին սեղմեց։

—Ոչ, աղնիւ, սիրելի բարեկամս,—ասաց նա քընքշօրէն.—ես անչափ գոհ եմ ձեր ինձ արդէն արած օգնութիւնից և յոյս ունիմ, որ այլևս կարիք չեմ ղգալ ձեզ նեղացնելու։ Բայց մի բան միայն կըխնդրէի ձեզ նից—այն, որ դուք շատ էլ դժգոհ չմնաք, եթէ ձեզ հասանելիքը շուտ չկարողանամ վերադարձնել։

Շահեանը նայեց նրան յանդիմանութեամբ։

—Հաւատացնում եմ, պանի Զդանևիչ, ես սաստիկ վիրաւորուում եմ, երբ դուք խօսում էք այդ մասին։

—Հապա ի՞նչպէս անեմ։

—Ինչպէս ուզում էք արէք, միայն թէ այդ մասին ինձ ոչինչ մի ասէք,—ասաց Շահեանը և սկսեց հագնել կրկնակօշիկները։ Յանկարծ նա ծիծաղեց։

—Ինչի՞ վրայ էք ծիծաղում,—հարցրեց պանի Զդանևիչը հետաքրքրուած։

—Կրկնակօշիկներիս վրայ։ Սրանք իրենց մի մաղալու պատմութիւնն ունին, որ յանկարծ յիշեցի։

Եւ Շահեանը համառօտակի պատմեց Բազէնեանի հետ ունեցած իր վերջին տեսակցութիւնը, իր նրան տուած հաղար ռուբլու միջադէպը, թէ ինչպէս Բազէնեանը կամեցաւ այդ դումարը յետ տալ իրեն և երբ ինքը հրաժարուեց յետ ընդունել, նա վերցրեց ծրարը և մօտեցաւ վառարանին, որ կրակը նետի, իսկ ինքն այդ միջոցին առաւ գլխարկը և դուրս փախաւ, կըրկնակօշիկները մոռանալով հագնել։ Շահեանն այս բանը պատմում էր այժմ իբրև մի կուրիոզ և անդադար ծիծաղում էր։

—Յետոյ, յի՞տ ստացաք ձեր կրկնակօշիկները,—հարցրեց պանի Զդանևիչը ժպտալով։

—Նոյն օրն իսկ ուղարկել էր հիւրանոցի ծառայի ձեռքով։

—Իսկ փողը. կրանկն էր նետել, թէ... գրպանը։

—Այդ արդէն մի հանելուկ է, որ դուք ինձնից աւելի լաւ կարող էք լուծել,—ասաց Շահեանը, շարունակելով ծիծաղել և, բարի գիշեր մաղթելով, դուրս գնաց։

—Պարոն Շահեան,—յանկարծ կանչեց պանի Զդանևիչը, դուրս գնալով նրա ետևից։

Շահեանը կանգ առաւ միջանցքում և արագ շուռ եկաւ։

—Վաղը կըգամ ինձ ճանապարհ դնելու։

—Ի հարկէ, անպատճառ,—բացականչեց Շահեանն

անսովոր եռանդով և, նորից շուռ գալով, վազեց դէպի սանդուղքները։

VIII

Շահեանը վերադարձաւ տուն խիստ ուրախ տրամադրուած։ Ցիշում էր, այդպիսի ուրախ տրամադրութեան մէջ մէկ էլ եղել էր Եւայի հետ ծանօթանալու առաջին գիշերը, երբ երկաթուղու կայարանից կառքով ճանապարհ էր դրել նրան մինչև նրանց տան դուռը։ Այժմ նա զարմանում էր, թէ որքան հասարակ բան էր եղել պանի Զդանևիչի մօտ գնալը, որից այնքան սարսափում էր այդ օրը։

Գիշերը բաւական ուշ էր, և Շահեանն անմիջապէս պառկեց, որ քնի, բայց էլի, ըստ հին սովորութեան, ցնորքները թոյլ չտուին, որ քունը շուտ մօտենայ աչքերին, չնայելով որ նախորդ գիշերը վատ էր քնել և ամբողջ օրն անց էր կացրել անսովոր յուզման մէջ։

Նա մտածում էր պանի Զդանևիչի մասին։

Այժմ այլևս անասնական ցանկութիւնը չէր, որ զբաղեցնում էր նրա հիւանդոտ երևակայութիւնը պանի Զդանևիչի վերաբերմամբ, այլ մտածում էր այն մասին, որ ինքը մի մեծ բարիք էր մատուցել այդ դժբաղդ կնոջը, հանելով նրան իր անել դրութիւնից։ Եւ նրան առանձին ինքնագոհութիւն էր պատճառում նրա անձնասիրութիւնը փայփայող այն հանգամանքը, որ պանի Զդանևիչի պէս մի կին իր վրայ նայում էր անկեղծ երախտագիտութեամբ, իրեն անուանում էր իր «ազնիւ», «սիրելի» բարեկամը, իր «եղբայրը» և այնքան մտերմութիւն էր ցոյց տալիս, որ մինչև անգամ պատմում էր իր անձնական ամենանուիրական գաղտ-

նիքը, բաց էր անում նրա առաջ իր վիրաւոր սիրտը և այդ բանի մէջ էր որոնում իր սփոփանքը։

Զոր ուղեղով նա շատ ցած էր համարում Բազէնեանի վարմունքը, բայց զգացումով բոլորովին անտարբեր էր. ընդհակառակը, սրտի խորքում, կարծես ինքն իրենից ծածուկ, մինչև անգամ նախանձում էր Բազէնեանին, որ կարողացել էր այնպէս գերել պանի Զդանևիչի պէս մի կնոջ։ Ա՜խ, ինչ լաւ կըլինէր, եթէ ինքն էլ ունենար այդպիսի գէթ չնչին մի շնորհք։ Այն ժամանակ ոչ թէ Բազէնեանի պէս անխիղճ կերպով կըվարուէր այդպիսի հրաշալի մի կնոջ հետ, այլ կատուաածացնէր նրան, մինչև վերջին շունչը կըպաշտէր նրան, ուրախութեամբ կըմեռնէր նրա համար։

Եւ Շահեանի սիրտը նորից համակուեց յուսահատական թախիծով։ Թերևս երբէք նրա կուսական սիրտն այնպէս ջերմ կերպով չէր փափագել սիրել ու սիրուել, ինչպէս այժմ։ Իր անապատ-կեանքի մէջ հանդիպեց մի հրաշալի Եւա, որին, ըստ երևոյթին, սիրեց հէնց առաջին անգամից, բայց յուսախարութիւնը շուտով էլ մեռցրեց սիրոյ առաջին սաղմերը։ Այժմ բաղդը նրան դէմ յանդիման էր բերել մի պանի Զդանևիչ, որը կանգնած էր իր կանացի գրաւչութեան գագաթնակէտին, հսկայի պէս գեղեցիկ ու հոյակապ։ Շահեանը մտքումը համեմատութիւն էր անում Եւայի ու պանի Զդանևիչի միջև և տեսնում էր, որ Եւայի կուսական անմեղ, անարատ գեղեցկութիւնը կամաց-կամաց աղօտանում, ցնդում է օդի մէջ, իբրև անմարմին մի բան, իբրև հրաշալի մի երազ, պանի Զդանևիչի հուժկու և մեղսալից փարթամ գեղեցկութեան առաջ։ Եւ նա մտածում ու չէր կարողանում որոշել, թէ որի՞ն արդեօք առաւելութիւն կըտար—Եւայի՞ն, թէ՞ պանի Զդանևիչին, եթէ միաժամանակ երկուսն էլ ցանկութիւն յայտնէին իրենը

լինելու։ Նա կըփափաքէր ունենալ երկուսին էլ,—Եւային՝ պաշտելու իբրև սրբութիւն, պանի Զդանևիչին՝ տիրապետելու իբրև ցանկալի կնոջ։ Սակայն, Շահեանը զգում էր, որ պատրաստ է իր իդէալական սէրն էլ, իր կիրքն էլ հաւասար չափով կեդրոնացնելու միմիայն պանի Զդանևիչի վրայ, բայց և, միևնոյն ժամանակ, զգում էր, որ ինքը, իբրև սիրահար և իբրև ամուսին, շատ չնչին արարած կըլինէր այդ հոյակապ կնոջ առաջ։ Նրան թւում էր, թէ պանի Զդանևիչի պէս մի կին եթէ իրեն այնպիսի ուշադրութեան առարկայ էր դարձրել, պատճառն այն էր միայն, որ կարիքն էր ստիպել, այլապէս երբևիցէ մտքովը կմտցկացնէր արդեօք, թէ աշխարհիս երեսին Շահեան էլ գոյութիւն ունի։

Եւ Շահեանը նորից եկաւ կանգ առաւ այն մտքի վրայ, որ ինքը ջրի տարած մէկն է, անշնորհք, ողորմելի մի արարած, որը կարծես թէ ապրում է նրա համար միայն, որ ամեն մի դէպքի առթիւ շարունակ մըտածի իր ոչնչութեան մասին և աւելի ու աւելի տանջուի այդ գիտակցութիւնից։

Շահեանը նորից ուժգին մի կատաղութիւն զգաց ինքն իր դէմ։—Ո՛չ, պէտք է կամ ապրել այնպէս, ինչպէս ուրիշները, ինչպէս ամենքն են ապրում, կամ պէտք է չապրել ամենևին... Այլապէս դիմանալ չի կարելի այդ յարատև տանջանքներին, ամեն մի առիթից ծագող այդ տաժանելի ինքնաքննութեան։ Այս աշխարհում ապրելու և հոգեկան այդ սոսկալի տանջանքներից ազատ լինելու համար հարկաւոր է լինել Բաղէնեանի պէս համարձակ, յանդուգն, անխիղճ, խաբեբայ, նոյնիսկ անբարոյական, այո՛—անբարոյական։ Այդ էլ մի շնորհք է, որ բնութիւնը տուել է գրեթէ ամենքին, որով և ամենքն ապրում են անհոգ ու երջանիկ. Շահեանն է միայն, որ զրկուած է մնացել այդ շնորհքից և այդ պատճառով այնքան որբ ու օտար է զգում իրեն կեանքի խնճոյքի մէջ։ Ուրիշն էլ ինչու է ապրում։ Ի՞նչ բան է կեանքը։ Կեանքը կինն է, ցանկալի կինը։ Ալիր աշխարհից կին ասուած արարածը, և ասկետներն անգամ չեն կամենալ ապրել։ Սխալւում են մոբալիստները, որոնք անհատական երջանկութեան հիմքը համարում են ալտրուիզմը։ Այդ շատ միակողմանի վարդապետութիւն է, որովհետև քաղցածի փորը չի կշտանալ, երբ նա ուրիշի համար հաց բրթի։ Կինը, ցանկալի կինը—ահա միակ բանալին, որ բաց է անում ոչ թէ ցնորական, այլ իրական երջանկութեան դուռը։

Կնոջ գաղափարը Շահեանի համար միշտ մութ ու անորոշ էր եղել, բայց երեկուանից դէս այդ գաղափարը միանգամից պարզ ու որոշ ձևեր էր ստացել և մարմնացել էր պանի Զդանևիչի մէջ։ Կին և պանի Զդանևիչ այժմ հոմանիշ էին նրա համար, և կին ասուած արարածը նա ուրիշ կերպ չէր կարողանում երևակայել, քան պանի Զդանևիչի պէս խելագարեցնելու չափ ցանկալի։

Շահեանի հիւանդոտ երևակայութիւնը նորից գրգռուեց։ Դէպի պանի Զդանևիչը փոքր ինչ առաջ տածած ասպետական զգացումը նորից տեղի տուեց զուտ ախտական զգայման, և պանի Զդանևիչը նրա գրգռուած երևակայութեան առաջ նորից կանգնած էր արուի մէջ անզուսպ անասնականը շարժող իբրև էգ միայն իր իգական բոլոր անդիմադրելի հրապուրանքով...

Ցանկարծ նա վեր թռաւ և նստեց անկողնում կայծակնահար այն մտքից, որ պանի Զդանևիչն առաւօտեան պիտի մեկնէր։ Առաւօտեան... այդպէս շուտ... Իսկ ինքը... ի՞նչ պիտի անի ինքն այնուհետև իր մէջ

վառուող և իր ամբողջ էութիւնը լափող այդ զգացումով... Կարո՞ղ է դիմանալ... չի՞ դժուիլ արդեօք... Չի՞ դժուիլ արդեօք այն մարդը, որ երկար ժամանակ ծարաւից պապակուելով թափառում է անապատի մէջ և, յանկարծ մի աղբիւր գտնելով, վրայ է ընկնում, որ ծարաւը յագեցնի, բայց ջուրը յանկարծ յետ է քաշուում և երկրի ծոցը մտնում, առանց մի կաթիլ թողնելու... Ո՛չ, ո՛չ, անկարելի է։ Պէտք է մի բան անել... պէտք է այնպէս անել, որ պանի Զդանևիչը չգնայ, մնայ, մնայ անպատճառ և...

Շահեանը խոնարհուեց ծնկների վրայ և տաքացած գլուխն առաւ ձեռքերի մէջ։ Երկար ժամանակ նստած էր այդպէս, մտածելով, թէ ինչ պիտի անել և ինչ կարող է անել։ Քունքերին սեղմած ափերի վրայ զգում էր գլխի երակների զարկն այնքան ծանր ու հաստու, որ կարծես գլխի մէջ թագնուած մի բան տնքում էր տանջանքով։

Յանկարծ նստեց ուղիղ և չռած աչքերով նայեց օդի մէջ, իբրև մի մարդ, որի միտքը յանկարծ պարզուում է մի նշանաւոր գիւտից։ Կարճ ժամանակ այդպէս մնալուց յետոյ, կամաց ինչաւ մահճակալից, ոտները մեքենայաբար կոխեց մահճակալի առաջ դրուած մաշիկների մէջ, նոյն չռած աչքերով, լուսնոտի պէս, մօտեցաւ գրասեղանին, նստեց, առաւ մի թուղթ, առաւ գրիչը և կանգ առաւ։ Յետոյ կամաց ու զգուշօրէն, կարծես վախենալով, որ այն, ինչ որ մտածել էր, կարող էր մոռանալ, սկսեց գրել.

«Շատ յարգելի պանի Զդանևիչ.

«Մի չափազանց յանդուգն առաջարկութիւն եմ ուզում անել Ձեզ.—կրկամենայի՞ք արդեօք իմ կինս լինել, կինս—Աստուծոյ և մարդկանց առաջ։ Եթէ այո—պատասխանեցէք, եթէ ոչ—նոյնպէս։ Երկու դէպքումն էլ Ձեր պատասխանը, որին պիտի սպասեմ սրտատրոփ, կընդունեմ ամենայն շնորհակալութեամբ։ Յամենայն դէպս, աղաչում եմ, առանց պատասխանի մի թողնէք։

«Մշտապատրաստ Ձեր խոնարհ ծառայ
Լևոն Շահեան»

«Յ. Գ.—Առաջարկութիւնս նամակով եմ անում, Ձեզ և ինձ ազատ պահելու համար այս մասին անձամբ խօսելու անխուսափելի ծանր դրութիւնից»։

Յամենայն դէպս ներքևն աւելացրեց իր հասցէն, այնուհետև ամբողջ նամակը խնամքով արտագրեց ուրիշ թղթի վրայ, փակեց ծրարի մէջ և կրկին ընկղմուեց խոր մտածմունքների մէջ։ Այժմ դժուար լուծելու մի ուրիշ հարց կար. ի՞նչպէս պիտի յանձնէր այդ նամակը պանի Զդանևիչին—անձամբ արդեօք, թէ ծառայի միջոցով։ Վերջինս անյարմար էր և, բացի դրանից, այդ դէպքում ստիպուած կըլինէր առաւօտեան չգնալ պանի Զդանևիչի մօտ, մինչդեռ այս անգամ ուզում էր տեսնել նրան՝ դիտելու համար ոչ թէ առաջուայ պանի Զդանևիչին, այլ իր ապագայ կնոջը, և այդ բանն այնպիսի անդիմադրելի հետաքրքրութիւն զարթեցրեց նրա մէջ, որ վճռեց անպատճառ գնալ և իր ձեռքով յանձնել նամակը։ Յանձնել—բայց ե՞րբ, ո՞րտեղ. հիւրանոցո՞ւմ, երկաթուղու կայարանո՞ւմ, թէ՞ ամենավերջին բոպէին, վագոնում, հրաժեշտ տալու միջոցին։ Վերջինը, ի հարկէ, աւելի յարմար էր, որովհետև առաջին երկու դէպքում նա ուղղակի գետինը կըմտնէր ամօթից, տեսնելով, թէ ինչպէս պանի Զդանևիչն իր աչքի առաջ բաց է անում նամակը, կարդում և...

«Այդպէս, ուրեմն, նամակս կը յանձնեմ ամենավերջին բոպէին, երբորդ զանգը խփած ժամանակ, այնպէս որ այնուհետև ստուերս անդամ չի տեսնիլ»—վրճռեց Շահեանը և խիստ ուրախացած ու թեթևացած դընաց պառկեց։ Բայց յանկարծ նորից վերկացաւ, ծրարը պատռեց և նամակի տակն աւելացրեց հետևեալը.

«Եթէ Ձեր պատասխանը դրական լինի, հարկաւ կը վերադառնաք առաջին իսկ կայարանից և կարող էք իջնել ուղղակի իմ տանը, ուր կը գտնէք ամեն յարմարութիւն և անհուն երջանկութեամբ բաբախող մի սիրտ...»։

Վերջին խօսքերը, որոնք գրուեցին ինքնաբերաբար, այնքան դիւր եկան Շահեանին և այնպիսի վառ յուսով լցրին նրա սիրտը, որ այնուհետև, երբ նորից պառկեց, շարունակ կրկնում էր մտքումը, մինչև որ քունը կամաց-կամաց յաղթեց նրան։

Առաւօտեան, երբ աչքերը բաց արեց, կարծեց, թէ այդ օրն էլ իր սովորական պարապ օրերից մէկն է, որ կարող է դառնալ միւս կողքի վրայ և նորից քնել մի-երկու ժամ էլ. բայց յանկարծ միտն եկաւ, որ այդ առաւօտ պիտի գնայ ճանապարհ ձգելու պանի Զգանեիչին, և օձից խայթուածի պէս վեր թռաւ անկողնից։

Առաջին բանը, որ արաւ, այդ այն էր, որ վրայ ընկաւ նամակին և կարդաց։ Կարդաց և սարսափեց։ Թէև նամակի բառերը գիշերն անկողնի մէջ շատ կը կարդնելուց անգիր գիտէր, բայց այժմ նոյն այդ բառերը թղթի անցկացրած և ցերեկուայ լոյսի տակ բոլորովին նորութիւն հանդիսացան նրա համար։ Գիշերը նա միայն ցնորում էր և այդ ցնորքների արտայայտութիւնն էր, որ անց էր կացրել թղթի. գիշերն անցել էր և իր հետ յօդս էր ցնդեցրել նրա ցնորքները, բայց այդ

ցնորքների արտայայտութիւնը մնացել էր թղթի վրայ։ Եւ այդ թուղթը պիտի յանձնէր պանի Զգանեիչին, և պանի Զգանեիչը պիտի կարդար այդ թուղթը... Ի՞նչ անենք, թէ ինքը ներկայ չի լինիլ կարդալիս, բայց խօ գիտէ, երևակայում է, թէ ինչպիսի ապշութեամբ պիտի կարդայ պանի Զգանեիչն իր յանդուգն առաջարկութիւնը, և եթէ նրա պատասխանը մերժողական լինի կամ թէ ճիշտ որ առաջին իսկ կայարանից վերադառնայ և ուղղակի դայ իր տուն... Շահեանը չէր իմանում, թէ որն աւելի սարսափելի կը լինէր իր համար—Պանի Զգանեիչից մերժողական պատասխան ստանալը, թէ՞ նրան իր տան մէջ ընդունելը։ Առաջին դէպքում մահացու հարուած պիտի ստանար իր անձնասիրութիւնը, իսկ երկրորդ դէպքում... Սակայն, այստեղ Շահեանը հրաժարւում էր երևակայել անդամ, թէ ինչ կը պատահէր իրեն. երբ պանի Զգանեիչն ուղղակի երկաթուղու կայարանից դար իր տուն և ասէր. «Ահա, ես վերադարձայ և համաձայն եմ. ձեր կինը լինելու»։

«Ո՛չ, ո՛չ, անպատճառ խելագարուած եմ եղել գիշերը, որ այսպիսի նամակ եմ գրել»—ասաց ինքն իրեն Շահեանը և նամակը շտապով շպրտեց վառարանի մէջ ճրթճրթացող կրակը։

IX.

Երբ Շահեանը մտաւ պանի Զգանեիչի մօտ, վերջինս իր հաշիւներն էր տեսնում հիւրանոցի սպասաւորի հետ։ Սենեակի դռան մօտ դրուած էին երկու մեծ ճամպրուկ։ Ինքը պանի Զգանեիչը ճանապարհորդական փոքր ինչ հնացած, բայց կոկ և ճաշակով կարուած հագուստի մէջ էր, ուսին սակ-վօյաժ ձգած։

Շահեանին ընդունեց շատ սիրալիր և մտերմօրէն, յետոյ ներողութիւն խնդրեց և նորից դարձաւ սպասաւորի ներկայացրած հաշիւներին։

Շահեանը նստեց հեռու և սպասում էր մի տեսակ բութ հանգստութեամբ։ Նա նմանում էր կեանքի հետ իր հաշիւները վերջացրած սառն ու անտարբեր մարդու։ Այն կրակը, որ այնպիսի կատաղութեամբ վառուել էր նրա մէջ պանի Զդանևիչի վերաբերմամբ, կարծես հանգել էր այժմ, և նրան թւում էր, թէ այդ հանգած կրակն այժմ այնտեղ, հոգու խորքում, ծուխ է արձակում այնքան թանձր ու ծանր և այնքան հեղձուցիչ, ինչպէս վառուած փայտը վրան ջուր թափելուց յետոյ։

Պանի Զդանևիչը շուտով արձակեց սպասաւորին և, երբ սպասաւորը դուրս գնաց, արագ դարձաւ Շահեանին։

—Երևակայեցէք,—բացականչեց նա մի տեսակ անհոգ ծիծաղով։—Եթէ դուք չլինէիք, բոլոր ունեցածչունեցածս պէտք է թողնէի այստեղ։ Բայց հիմա, փառք Աստուծոյ, բոլոր իրեղէններս փրկուած են։

Նա շտապով հաւաքեց այս ու այնտեղ թափթփած մի քանի մանր-մունր բաներ և սկսեց տեղաւորել ճամպրուկներից մէկի մէջ, նոյն անհոգութեամբ գանգատուելով հիւրանոցում տիրող անկարգ կարգերից, անաստուած թանկ գներից և զանազան յարմարութիւնների բացակայութիւնից։ Իր անհոգ շատախօսութեան միջոցին յանկարծ խօսքը կիսատ թողեց բերանում, ընազդմամբ յետ նայեց Շահեանի կողմը, մի բոպէ ուշադրութեամբ դիտեց նրա քարացած դէմքը, յետոյ կամաց բաց թողեց ձեռքին բռնած մի ինչ-որ իր և մօտեցաւ նրան։

—Ի՞նչ է պատահել ձեզ, պարոն Շահեան,—հարցրեց նա մտահոգութեամբ։

Շահեանը թեթև կերպով ցնցուեց։ Մինչև այդ բոպէ կարծես քնած էր և այդ բոպէին միայն սթափուեց։

—Ի՞նձ... ոչինչ,—արտասանեց նա, մեքենայաբար վեր կենալով տեղից և զարմանալով, թէ ի՞նչ էր նկատել իր մէջ պանի Զդանևիչը։

—Հապա ինչո՞ւ այդպէս գունատ էք։

—Գունատ... մի՞թէ։

—Նայեցէք հայելուն։ Դուք անպատճառ հիւանդ էք։

Շահեանը, շփոթուած, հեռուից մեքենայաբար նայեց պատի վրայ կախուած հայելուն և չտեսաւ իր դէմքը։

—Այս, երևի, նրանից է, որ գիշերը սովորականից ուշ քնեցի և այս առաւօտ վաղ վերկացայ, որ հասնեմ ձեզ,—ասաց նա և աշխատեց ժպտալ։

Պանի Զդանևիչը լուրջ դէմքով և թերահաւատութեամբ շարժեց գլուխը, իր փորձող աչքերը չհեռացնելով Շահեանի ակնոցից։

—Մեղն ուզում էք ինձ վրայ ձգել, բայց ափսոս, որ չեմ կարողանում համոզուել, թէ մեղաւորն իսկապէս ես եմ։ Ցամենայն դէպս, թոյլ տուէք ձեզ նկատեմ, պարոն Շահեան, դուք շատ զարմանալի երիտասարդ էք երևում. այնքան սառն էք և անտարբեր, որ կարծես թէ աշխարհս գոյութիւն չունի ձեզ համար։

Շահեանը շատ օտարոտի կերպով ծիծաղեց։ Նրա ծիծաղի մէջ լսւում էին վիրաւորուած անձնասիրութեան շեշտեր։

—Երանի չէ՞ր լինիլ, որ այդպէս լինէք, — ասաց նա կամաց և յետոյ աւելացրեց իրեն ոչ յատուկ զայ-

բացկոտութեամբ.—Աշխարհս ոչ թէ միայն գոյութիւն ունի ինձ համար, այլ և նրա գոյութիւնն այնքան ճըն-շում է ինձ, որ կեանքիս գնով կըցանկայի նրանից ա-զատուել։

Պանի Զդանևիչն ապուշ կտրուեց։

—Այդ դո՞ւք էք ասում, պարոն Շահեան...

—Այո՛, ես եմ ասում։

—Այդպէս երիտասարդ հասակո՞ւմ...

—Այսպէս երիտասարդ հասակում։

—Եւ առանց կատակի։

—Առանց կատակի։

Շահեանն իր պատասխանները տալիս էր խկոյն և համարձակ։ Այդ բանում նրան քաջալերում էր պանի Զդանևիչի մտերմական-հովանաւորող վերաբերմունքը։ Նա տեսաւ, որ խիստ հետաքրքրել է պանի Զդանևի-չին, ուստի փքւում էր և չէր վախենում իր մտքերն ուղղակի յայտնելուց։ Արագ քայլերով անցուդարձ էր անում սենեակի երկարութեամբ, որի ժամանակ թեթև կերպով ճրճռում էին նրա կօշիկները, և թէև չէր նա-յում պանի Զդանևիչին, բայց զգում էր, որ նա, զար-մացած, աչքերով հետևում էր իրեն։ Այդ բանը խիստ հաճելի էր Շահեանի համար, և այդ միջոցին նա զգում էր, որ բարձրացել է ինքն իր աչքում։

—Լսեցէք, պարոն Շահեան,—խօսեց պանի Զդա-նևիչը կարճ լռութիւնից յետոյ։ — Դուք, ի հարկէ, չափազանցնում էք, որովհետև, ինչպէս տեսնում եմ, դեռևս շատ անփորձ էք։ Երևի միտրևէ անախորժ դէպք է պատահել ձեզ, որ այդպէս...

—Այո՛, մի խիստ անախորժ դէպք, պանի Զդա-նևիչ,—վրայ բերեց Շահեանը խիստ ու կտրուկ և ա-կանջ դրեց կօշիկների ճրճռոցին։

Ի՞նչ դէպք։

—Այն, որ ես ծնուել եմ։

Շահեանն խկապէս շատ լուրջ կերպով ասաց այդ խօսքերը, բայց յետոյ, ինքն էլ չհասկացաւ ինչու, նա-յեց պանի Զդանևիչին։ Նրանց աչքերը հանդիպեցին իրար, և երկուսն էլ միաժամանակ ծիծաղեցին։

—Եւ դուք ասում էք, թէ կատակ չէք անում,—նկատեց պանի Զդանևիչը։

—Ոչ, իզուր էք կարծում, թէ՝ որ ծիծաղեցի, կա-տակ եմ անում։ Ամենալուրջ կերպով կրկնում եմ, որ միակ և ամենամեծ անախորժ դէպքը, որ պատահել է ինձ, այդ այն է, որ ես ծնուել եմ։

—Բայց չէ՞ որ այդ վաղուցուայ դէպք է,—բա-ցականչեց պանի Զդանևիչը, շարունակելով ծիծաղել։

—Այո՛, բայց, դժբաղդաբար, այնպիսի մի դէպք, որի ծանրութիւնը մարդ յետոյ է զգում։

—Դուք փիլիսոփայ էք եղել, պարոն Շահեան։

—Այդ աւելի վատ։ Ես կըկամենայի անասուն լինել։

—Ա՛խ, դուք կրկնակի փիլիսոփայ էք եղել,—բացականչեց պանի Զդանևիչն այս անգամ արդէն բարձրաձայն ծիծաղելով։ Դուք յոռետես էք, այդ իմա-ցայ. անշուշտ և աթէիստ էք։ Չէ՞։

Շահեանը յոնքերը կիտեց և կանգ առաւ։

—Դուք ինձ ծաղրում էք, պանի Զդանևիչ,—նկա-տեց նա վիրաւորուած։

—Ի հարկէ, ծաղրում եմ, հապա ի՞նչ էիք կարծում,—վրայ բերեց պանի Զդանևիչը լուրջ, մտերմական յանդիմանութեամբ։—Քանի՞ տարեկան էք։

Շահեանը չպատասխանեց։ Նա նայում էր պանի Զդանևիչի փեշերին։

—Հաղիւ թէ քսան-քսանհինգ տարեկան լինիք, չէ՞։ Եւ այդ հասակում թոյլ էք տալիս ձեզ այդպիսի

պառաւական հայեացք ունենալու կեանքի վրայ։ Եւ ձեր այդ երիտասարդական հասակը, ձեր արիւնը, ձեր ամբողջ էութիւնը չի՞ բողոքում այդ փտած հայեացքի դէմ։ Կարելի բա՞ն է միթէ այդ։ Ձեր հասակում մարդը մարմնացած մի ցանկութիւն պիտի լինի ապրելու, ապրելու և միմիայն ապրելու. կեանքին նուիրած օրհներգներ պիտի յօրինի նա, պիտի վայելի ագահօրէն կեանքի բոլոր բարիքները, շատ անգամ զօրով խլելով նրանից այդ բարիքները, և, յամենայն դէպս, կատաղի կռիւ պիտի մղի մահուան գաղափարի դէմ։ Իսկ դուք...

—Իսկ ես դատարկ և աննպատակ բան եմ համարում այդ բոլորը։

—Ա՛խ, դուք նպատակ էք ուզում։

—Անպայման։

—Բայց այդ բոլորի նպատակը հէնց այն է, ինչ որ ասացի։ Ուրիշ ի՞նչ էք ուզում։

—Դուք ինձ չէք հասկանում, պանի Զդանևիչ։

—Ես ձեզ շատ լաւ հասկանում եմ, պարոն Շահեան։ Դուք հետևում էք բոլոր յոռետեսներին յատուկ մի ընդհանուր պակասութեան. չէք տեսնում ձեր քթի տակ գտնուած գանձը և ձգտում էք տեսնել անծանօթ մի գանձ, որը գտնուում է ձեր տեսողութիւնից դուրս և միանգամայն անմատչելի է ձեզ։

«Այս ի՞նչ է, այլաբանութի՞ւն»—մտածեց Շահեանը, լաւ չհասկանալով պանի Զդանևիչի խօսքերի իմաստը, և կամաց, վախեցած նայեց նրա մեղմօրէն և փոքր ինչ ծաղրաբար ժպտող աչքերին։

Պանի Զդանևիչը մօտեցաւ նրան և այս անգամ սկսեց խօսել այնպէս, ինչպէս հասակաւորը խօսում է երեխայի հետ։

—Ես ուզում եմ մի քանի խրատ տալ ձեզ, պարոն Շահեան։ Ամենից առաջ պիտի ասեմ ձեզ, որ դուք

ձեր այդ յոռետեսութեամբ ինձ վրայ այնպիսի տպաւորութիւն էք թողնում, ինչպիսի տպաւորութիւն որ կը թողնի ծխախոտ ծխող երեխան։ Ես նեղողութիւն չեմ խնդրում ձեզնից իմ այս համեմատութեան համար, որովհետև այնքան համակրեցի և սիրեցի ձեզ, իմ աղնիւ բարեկամ, որ անկեղծօրէն կը փափագէի ձեզ ազատուած տեսնել այդ սարսափելի հիւանդութիւնից։ Իսկ յոռետեսութիւնն իսկապէս որ սարսափելի հիւանդութիւն է, որից ամեն կերպ պիտի աշխատէք ազատուել։ Եւ այդ բանը դժուար չէ. հարկաւոր է միայն կեանք մտնել, կեանքը ճաշակել և... դէն շպրտել այն գրքերը, որ կարդում էք։ Այո՛, այո՛, իմ սիրելի բարեկամ, ես տեսնում եմ, որ դուք շատ անփորձ էք, կեանքը չէք ճանաչում, նրա համը չէք առել ամենևին և խօսում էք միմիայն գրքերից։ Բայց եթէ կեանքի գիրքը էլ կարդայիք, կըտեսնէիք, որ նրա էջերը ձեր կարծածի չափ սև չեն։ Ի նկատի ունեցէք, որ այս բանն ես ասում եմ կեանքի մէջ այնքան դառնութիւններ ճաշակելուց յետոյ։ Կեանքը, ինչ էլ որ լինի նա, միշտ սիրելի է, յամենայն դէպս—աւելի սիրելի ու ցանկալի, քան մահը, ճիշտ այն բնական օրէնքի զօրութեամբ, որով մարդուս համար աւելի սիրելի ու ցանկալի է իր աշխարհագրական հայրենիքը, քան օտար, անծանօթ մի երկիր։ Մեռնել միշտ կարելի է, պարոն Շահեան, ով ցանկանում է այդ, բայց նորից ապրել, աւա՜ղ, այդ միայն Ղազարոսին էր վիճակուած։ Մտածեցէք, ինչքան ուզում էք՝ մտածեցէք և խորը գնացէք կեանքի վերջնական նպատակը գտնելու, մարդու գոյութեան հանելուկը լուծելու համար—ի՞նչ դուրս կը գայ դրանից։ Ոչինչ։ Մտածելով չէք կարող փոխել աշխարհիս օրէնքները։ Այդ օրէնքներն եղել են, կան և կը մնան նոյնը, անկախ այն բանից, թէ ինչ մեկնութիւն էք տալիս

դուք նրանց։ Մտածելով աւելի ևս կենթարկէք ձեզ նրանց ճնշմանը, աւելի ևս կըտանջուէք անորոշութեան մէջ և մի ծայր, որին վերջիվերջոյ կըհասնէք, այդ այն կըլինի, որ կըվճռէք անձնասպանութիւն գործել։ Բայց ինչո՞ւ համար, հարցնում եմ ձեզ, ի՞նչ նպատակով։ Դուք կեանքի նպատակն էք փնտրում, բայց ինչո՞ւ մահուան նպատակի մասին ևս ոչինչ չէք մտածում։

Պանի Զդանևիչը լռեց և նայում էր Շահեանի դէմքին առաջուայ նման հանդարտ, փոքր ինչ ծաղրաբար ժպտող աչքերով, բայց համակրանքով։

Շահեանը սուս էր կացել։ Նա զգում էր, թէ այժմ նոյն դրութեան մէջ է, ինչ որ Աշխէնի և Եւայի հետ միևնոյն նիւթի մասին ունեցած խօսակցութեան ժամանակ։ Սակայն, այդ երկու յարաբերման դրութեան միջև էական մի տարբերութիւն կար։ Աշխէնի և Եւայի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ նա պարզապէս զգում էր, որ ինքն ակամայ երևան է հանել իր մտաւոր ու բարոյական կատարեալ դատարկութիւնը և ծաղրի ու հիասթափութեան առարկայ է դարձել —մի բան, որ մահ էր իր համար։ Մինչդեռ այժմ այդպիսի բան ամենևին չէր զգում։ Ճիշտ է, տեսնում էր, որ պանի Զդանևիչն էլ ծաղրում, նոյն իսկ երեխայ է անուանում իրեն, բայց այդ ծաղրը սիրելի և հաճելի էր նրա համար և դրանով իրեն աւելի մօտեցած էր զգում պանի Զդանևիչին։ Նա զգում էր, որ ինքն ամենևին յոռետես չէ, և զայրանում էր, թէ ինչո՞ւ կեղծում էր, ինչո՞ւ համարձակութիւն չունէր սիրտը բանալու պանի Զդանևիչի առաջ, որն իր մտերմականհովանաւորող վարմունքով այնքան վստահութիւն էր ներշնչում նրան։ Եւ առաջին անգամ խիստ ափսոսաց, որ շտապեց նամակն այրել։

Այժմ նա կանգնած էր պանի Զդանևիչի առաջ պարզապէս յուսահատուած այն բանից, որ ինքը, չնայելով իր ներքին ուժեղ դրդման, վախկոտութեամբ յետ էր նահանջում ճշմարտութիւնն ասելուց։ Իսկ այդ ճշմարտութիւնն այն էր, որ նա ցանկանում էր ապրել, ցանկանում էր ընկնել այդ սիրելի, այդ պաշտելի կնոջ առաջ, գրկել նրա ոտներն և աղաղակել. «Աւելորդ են խրատներդ. քեզնից աւելի լաւ եմ հասկանում, թէ որքան սիրելի բան է կեանքը։ Բայց կեանքը, իմ կեանքը դու ինքդ ես։ Կա՛ց, մի՛ գնա։ Կա՛ց, իմս եղիր և կըտեսնես, թէ ինչպիսի օրհներգներ կընուիրեմ կեանքին, ինչպէս կաստուածացնեմ, կըպաշտեմ քեզ և քեզ հետ—կեանքը...»։

—Ի՞նչպէս է, ընդունո՞ւմ էք խրատները, թէ ոչ, —հարցրեց պանի Զդանևիչը ժպտալով։

—Այդ խրատները ես ինքս էլ շատ լաւ եմ հասկանում, բայց... հասկանալը բաւական չէ,—ասաց Շահեանը, աշխատելով չկորցնել իր խօսակցութեան նախկին եղանակը։—Կեանքը սիրելու համար, հարկաւոր է նրան տիրել...

—Տիրեցէք, ո՞վ է ձեզ արգելում։

—Ո՞վ է արգելում... Ես ինքս։

—Դուք ինքնե՞ր։

—Ես կամք չունիմ... ես փալաս եմ,—արտասանեց Շահեանը, և նրա ձայնը դողաց։ Նա նստեց և քիչ էր մնում լաց լինի։

Պանի Զդանևիչը նայեց նրան լրջօրէն և զարմացած։ Յետոյ յանկարծ ուսից հանեց սակ-վոյաժը և ձգեց մի կողմ։

—Ես այլևս չեմ գնում, մնում եմ,—ասաց նա։

Շահեանը վեր թռաւ տեղից, և արտասուքը, որ խեղդում էր նրան, ցամաքեց կոկորդի մէջ։

—Մինչև որ չիմանամ ինչ է ձեր վիշտը և չը-հանգստացնեմ ձեզ, չեմ հեռանալ այստեղից,—աւելացրեց պանի Զդանևիչը։

Շահեանը կարկամել էր և չէր իմանում ինչ ասի։ Ապուշի պէս նայում էր պանի Զդանևիչին իր պլպլան ակնոցի միջից, և նրան թւում էր, թէ խելքը կորցնում է։ Նա սառում ու տաքանում էր այն կասկածից, թէ մի գուցէ մատնել է իրեն, և պանի Զդանևիչն արդէն հասկացել է, թէ ինչ է պատահում իրեն։

Պանի Զդանևիչն առաւ նրա ձեռքը և յամառ ու փորձող հայեացքով նայում էր նրա աչքերին։

—Լսում էք, պարոն Շահեան, ես մնում եմ, չեմ գնում։ Ձեր դրութիւնը, ձեր խօսքերն ինձ շատ տարօրինակ են թւում, իսկ ես այնքան համակրում եմ ձեզ, որ չեմ կարող հանգիստ սրտով հեռանալ, մինչև որ չիմանամ, թէ ինչ է պատահում ձեզ։ Ես տեսնում եմ, որ դուք մի վիշտ ունիք, որ դուք ուզում էք ինչ-որ ասել, բայց չէք վստահանում։ Ասացէք, մի՛ վախենաք. ինձնից աւելի լաւ բարեկամ և խորհրդատու չէք կարող ճարել։ Ասացէք, ասացէք համարձակ։

—Ես... ես ոչինչ չունիմ ասելու,—շշնջաց Շահեանն այնպիսի ողորմելի ձայնով, որ կարծես թէ իրեն մեղադրում էին ինչ-որ մահացու մի յանցանքի համար, որից ուզում էր հրաժարուել։ Եւ նա, առանց զգալու, ընազդական վախկոտութեամբ ձեռքը կամաց դուրս քաշեց պանի Զդանևիչի ձեռքից ու յետոյից քաշուեց, կարծես այդ կինը սպառնում էր ճխլել նրան իր հսկայական հասակի տակ, ոչնչացնել նրան իր հետաքրքիր աչքերով։

Պանի Զդանևիչը հէնց այնպէս էլ սառած մնաց իր տեղում։ Մի բոլորովին կատաբելապէս ապշած նայում էր Շահեանի ճակնդեղի պէս կարմրատակած դէմքին,

յետոյ ուսերը վեր քաշեց, վերցրեց սակ-վոյաժը, ձգեց ուսին և մօտեցաւ ճամպրուկներին։

—Չեմ հասկանում, ոչինչ չեմ հասկանում,—ասաց, կարծես ինքն իրեն, և զբաղուեց մնացած իրերը ճամպրուկի մէջ տեղաւորելով։

Շահեանը զգաստացաւ և նոր զգաց, թէ որպիսի թանկագին բոլորովին բաց թողեց ձեռքից։ Ուզում էր սխալն ուղղել, բայց ուշ էր արդէն։ Տեղն ի տեղն արձանացած, այժմ քաթանի պէս գունատուել էր։ Այդպէս է լինում, երբ ձեռքիդ բռնած չափազանց նուրբ ու թանկագին մի անօթ յանկարծ ընկնում կոտրուում է և կոտրածը ոչ կարելի է ամբողջացնել, ոչ նոյն իսկ կոծկել։ Շահեանը զգաց, որ եթէ ինքը մի որևէ բանով գրաւել էր պանի Զդանևիչին, այդ մի բանն էլ կորաւ, չքացաւ անդարձ, և այժմ ինքը պարզապէս ապուշի տպաւորութիւն է թողնում այդ կնոջ վրայ։ Եթէ աւելի մեծ խայտառակութեան երկիւղը չունենար, ուղղակի կառնէր գլխարկը և դուրս կըփախչէր, որպէսզի չտեսնէր պանի Զդանևիչի հիասթափուած, ապշած դէմքը...

Նրանք կայարան հասան այն ժամանակ, երբ երկրորդ զանգն արդէն տուել էին։ Պանի Զդանևիչը սպասում էր, որ Շահեանը կօգնի իրեն շուտով վագոնների մէկում տեղաւորուելու, բայց տեսնելով, որ նա փայտի պէս կանգնած է մնացել մի տեղում, ինքը վազեց տոմսակ գնելու և յետոյ իր ճամպրուկները շալակած բեռնակրին առաջ գցեց դէպի երկաթուղու կառախումբը։ Շահեանը մեքենայաբար հետևեց նրան և պլատֆորմի վրայ խռնուող բազմութեան մէջ քիչ մնաց, որ աչքից կորցնէր նրան։ Պանի Զդանևիչը հաղիւ ժամանակ ունեցաւ նրա ձեռքը սեղմելու.

—Մնաք բարեաւ, պարոն Շահեան,—ասաց նա։

—Ես ոչ ձեզ կը մոռանամ, ոչ իմ պարտքը։ Իսկ դուք չմոռանաք, որ ինձ համար հանելուկ մնացիք,—աւելացրեց նա ժպտալով և կրկին անդամ պինդ սեղմեց նրա ձեռքը։—Մնաք բարեաւ։

Նա հաւաքեց իր երկայն վերարկուի փեշերը և բարձրացաւ վագոնն այն ժամանակ, երբ գնացքն արդէն սկսել էր շարժուել տեղից։

Շահեանն այլևս չտեսաւ նրան։

X

Ննջարանի առաստաղից կախուած գնդաձև լապտերն իր միապաղաղ կարմիր ապակու միջից մեղմ, անշարժ լոյս էր տարածել սենեակում։ Խուլ լռութեան մէջ թւում էր, թէ այդ լոյսը, սաստիկ տխրած, նիրհում է։ Լուսամուտների ասուեղծ վարագոյրների ծակոտիներից երևում էր, թէ ինչպէս ձմեռային օրուայ սառած ու անփայլ վերջալոյսը, արագօրէն խաւարելով, հանդչում էր դաժան հանգստութեամբ և թանձր մառախուղը դորշ ամպի նման ծանրութեամբ նստում էր երկրի վրայ։

Մահճակալի վրայ պառկած էր Թեկլէն այնքան անշարժ, որ թւում էր, թէ մեռած է։ Լապտերի կարմիր լոյսի մէջ նրա խոշոր դէմքն իր լի կղակով, կարծես, պատած էր կարմիր շղարշով, որի մէջ բնականից աւելի սևին էին տալիս նրա փակ աչքերի չափից դուրս լայն փռուած թերթերունքները, ինչպէս խաւարած կիսալուսիններ։ Դէմքն այնպէս սառն էր և անշարժ, որ դլուխը կարծես կերտած լինէր մի կարծր քարից և այդ քարն իր ամբողջ ծանրութեամբ թաղուել էր փափուկ բարձի մէջ։

Ննջարանի խորքում նստած էր Մարութեանը և

վշտահար խոնարհուել էր ծնկների վրայ։ Մօր մահճակալի մօտ նստած էր Եւան և անթարթ աչքերով նայում էր հիւանդի դէմքին։ Լապտերի կարմիր լոյսի տակ նրա դէմքը սրուել պլպլում էր, աչքերն անբնական կերպով մեծացել, սառել էին։ Շուրջը տիրող քարացած լռութիւնը, լապտերի միապաղաղ աղօտ-կարմիր լոյսը մահուան տպաւորութիւն էին թողնում։ Եւ մահուան այդ կաշկանդող տպաւորութեան տակ Եւայի անշարժ հայեացքը յառած էր մօր դէմքի վրայ, մինչև որ նրան թւում էր, թէ կարմիր լոյսի թափանցիկ շղարշով պատած այդ դէմքը կամաց-կամաց շարժւում, երկարում ու լայնանում է, փակ աչքերի լայն փռուած թերթերունքները բարձրանում են ծանրութեամբ, բերանը սկսում է բացուել և ահա, որտեղ որ է, պիտի լսուի այն սարսափելի ճիչը, որ արձակեց մայրն այդ առաւօտ որդու մահուան դոյժը լսելով։ Եւան ցնցւում էր, անթարթ նայելուց շաղուող հայեացքը հեռացնում էր մօր դէմքից, գլուխը յետ էր ձգում աթոռի մէջքի վրայ և աչքերը փակում։ Լապտերի լոյսը վերևից ուղղակի ընկնում էր նրա դէմքին, և այդ դէմքն այնքան անշարժ, այնքան անդգայ էր երևում։

Անշարժ շրջապատի կաշկանդող տպաւորութեան տակ Եւային թւում էր, թէ ամբողջ ննջարանը լիքն է ուրուականներով, որոնք իրար են անցնում հանդիսաւոր լռութեամբ, և ինքն իր փակ աչքերով տեսնում է նրանց ու չի վախենում։ Թողնելով, որ ուրուականներն իրենց յիմար պարը բռնեն, նա անձնատուր էր լինում անորոշ մտածմունքների և անմեղ զարմանքով հարցնում էր ինքն իրեն. «Այս ինչ է կատարւում շուրջս»։ Ծայրայեղ վիշտը բթացրել էր նրա զգացումները, այնպէս՝ որ նա կարծում էր, թէ ինքը վիշտ չի զգում ամենևին, այլ միայն ինչ-որ վերին աստիճանի օտարո-

տի մի բան կաշկանդել է իր ամբողջ էութիւնը, և ինքը ոչ մի կերպ չի կարողանում դուրս գալ այդ կաշկանդուած դրութիւնից։ Նրան թւում էր, թէ յանկարծ ընկել է բոլորովին նոր ու անծանօթ մի աշխարհ, ուր ամեն ինչ մութն էր ու լուռ, ինչպէս գերեզմանի մէջ։ Այդ սոսկալի մթութեան ու լռութեան մէջ մի լոյս կար միայն, արեան նման կարմիր մի լոյս, որի մէջ հանդիսաւոր պար էին բռնել ինչ-որ անձև ու անմարմին ուրուականներ... Նա աչքերը բաց էր անում, նայում էր առաստաղից կախուած լապտերին և կրկին անգամ հարցնում էր ինքն իրեն անմեղ զարմանքով. «Այս ի՞նչ է կատարւում շուրջս»։

Նրա ուղեղի մէջ ամուր կերպով, ինչպէս ոսոը վայրի մէջ, ցցուած էր մի գիտակցութիւն միայն— եղբայրն այլևս չկար, նա այլևս չէր վերադառնալու, նրան այլևս չէր տեսնելու, երբէք, երբէք... Մնացածը, ինչ որ մտածում ու զգում էր,—խառնւում էր իրար, կուտակւում ու ցրւում, առանց որևէ հետք թողնելու։ Երկար ժամեր մօր մահճակալի մօտ նստած, չէր հասկանում, թէ ինչ դեր է կատարում ինքը, ինչու մայրը շարունակ պառկած է անշարժ, ինչու հայրն այնպէս խոնարհուել է ծնկների վրայ, ինչու ամբողջ տան մէջ տիրում է այդ զարհուրելի լռութիւնը։ Երբեմն, երբ դուրս էր գալիս այդ կաշկանդուած դրութիւնից, նայում էր շուրջը և մտքումը դարձեալ կրկնում էր. «Այս ի՞նչ է կատարւում շուրջս»։ Նրան թւում էր, թէ խելագարւում է։ Բայց այդ միտքն ամենևին չէր սարսափեցնում նրան։ Եղբօր մահից յետոյ մահն անգամ սարսափելի չէր նրա համար, այն մահը, որից այնքա՛ն վախենում էր առաջ։ Եղբայրը չկայ այլ ևս — վերջացաւ. այլ ևս երբէք չպիտի տեսնի նրան, երբէք։ Իսկ նրանից յետոյ թէկուզ

ամբողջ աշխարհը կործանուի և ինքն էլ հետը միասին։ Աշխէնը,—ահա թէ ում համար պէտք է ցաւել... Սակայն, Աշխէնի համար միևնոյնը չէ՞—Արմենակն ապրո՞ւմ է, թէ ոչ. չէ՞ որ նրանք երկուսն էլ վաղուց արդէն թաղել են իրենց իրար համար... Մի՞թէ։

«Ո՛չ, ո՛չ, ո՛չ»—շշնջաց Եւան մտքումը և խոնարհուեց ծնկների վրայ։

Նրա առաջ պատկերացաւ հօրեղբօր աղջիկն այն դրութեան մէջ, երբ նա, իր վզին փարած, ծանր հեկեկանքով իր դժբաղդ սիրոյ պատմութիւնն էր անում։ Եւան այն ժամանակ վերին աստիճանի հիասթափուած էր, ուստի սառն և անկարեկից։ Բայց այժմ միանգամից զգաց Աշխէնի բոլոր տանջանքն ու յուսահատութիւնը։ Եւ հոգով-մտքով թռաւ այնտեղ, ուր հեռացել էր Աշխէնը մեղմելու համար իր տանջանքներն անձնուրաց գործունէութեան մէջ։ Ա՜խ, ինչպէս կըցանկար, որ այդ բոպէին իսկապէս այնտեղ լինէր, ինչպիսի կարօտով ու տանջանքով կրծքին կըսեղմէր իր սիրելի Աշխէնին, որպէսզի մխիթարէր նրան, որպէսզի մխիթարուէր ինքը... Բայց արդեօք գիտէ՞ Աշխէնը, որ իր սիրած երիտասարդն այլ ևս չկայ... Եւ, եթէ չգիտէ ու նոր իմանայ, ի՞նչ կանի...

«Տէր Աստուած, Տէր Աստուած, այս ի՞նչ է պատահում ինձ»—շշնջաց Եւան անտանելի տանջանքով, խոնարհուած ծնկների վրայ և մատներով սեղմելով իր ուսերը ցնցողաբար։ Նոր էր զգում իր վիշտը, նոր էր տեսնում, թէ ի՞նչ սոսկալի թշուառութիւն էր պատահել իրենց ընտանիքի մէջ...

Եւան նստեց ուղիղ և նայեց չորս կողմը։

Լապտերի մեղմ լոյսն իր կարմրութեամբ, կարծես, գոլորշիանում էր։ Խուլ լռութեան մէջ ականջները թշշում էին։ Թեկլէի՝ բարձի մէջ ծանր քարի նման

թաղուած գլուխն իր դէմքի մեռելային անշարժութեամբ զարհուրելի տպաւորութիւն էր գործում։ Մարութեանն, առաջուայ նման անշարժ, խոնարհուած էր ծնկների վրայ. նրա ճաղատ ծոծրակը, կարմիր լուսով լուսաւորուած, վշտահար ցնցւում էր կարծես։ Թւում էր, թէ միշտ ուրախ, միշտ զուարճախօս այդ մարդը, որ այժմ այդպէս խղճալի կերպով կուչ էր եկել, լաց է լինում անձայն, և անմխիթար արտասուքները ողողում են նրա ծնկները։ Անհուն խղճահարութեամբ ու վշտով նայում էր Եւան նրա կախուած գլխին, որ կարծես հարիւր տարեկան ծերունու գլուխ լինէր, և խելագարեցնելու չափ տանջում էր նրան այն միտքը, որ ինքը ոչ մի, ոչ մի բանով չպիտի կարողանայ մխիթարել այդ թշուառ հօրը։

«Օ՜ֆ, Տէր Աստուած,—շշնջաց նա, անտանելի վշտից աչքերը փակելով,—ինչ կըլինի, որ այս բոլորն երազ լինի միայն, այն սարսափելի երազներից մէկը, որից մարդ զարթնում է սրտի անհուն թեթևութեամբ և ուրախանում, որ իր բոլոր տեսածն ու զգացածը լոկ երազ է եղել...»

XI

Թեկլէն առաջին օրն անցկացրեց խորին անզգայութեան մէջ։ Նա ուշքի եկաւ հետևեալ օրը և նստում էր լեսարգիական քնից արթնացողի։ Այնուհետև սկսուեցին որդեկորոյս մօր ծանր վշտի ծանր օրերը։ Նա լալիս էր մերթ մեղմօրէն, առանց արտասուքի, երկար, աղէկտուր բառերով, մերթ ողբում էր կատաղի ջղայնոտութեամբ, որի միջոցին խելագարի պէս փետում էր մազերը, ճանկռոտում էր երեսը, կոծում էր ծնկները ինչ-որ վայրենի ճիչերով, որից յետոյ

հանդստանում էր յանկարծ, գլուխը կախում էր կրծքին և մղկտում էր լուռ, առանց բառեր արտասանելու, և աչքերից թափւում էին արտասուքներն առուի պէս։ Երբ կսկծի ուժգին թափն անցաւ, նա այլ ևս չէր ողբում, նրա աչքերն այլևս թաց չէին լինում. նա մանէր գալիս ուրուականի պէս, նայում էր շարունակ լայն բացած աչքերով, կարծես զարմացած ինչ-որ խիստ զարմանալի մի բանի վրայ, և շատ քիչ էր խօսում. երբեմն էլ ամբողջ ժամերով նստած էր մնում մի տեղում անշարժ ու լուռ և չէր իմանում ինչ է մտածում։ Շատ յաճախ որդու լուսանկարը դնում էր առաջը, նայում էր, նայում, յետոյ գլուխը դնում էր վրան և նրան թւում էր թէ հանգիստ ու քաղցր մի քուն է մտնում։ Մի-երկու անգամ ուշագնաց եղաւ այդ դրութեան մէջ, և հազիւ կարողացան նրան ուշքի բերել։

Մարութեանն այլ ևս այն Մարութեանը չէր. թւում էր, թէ առմիշտ կորցրել էր իր աշխոյժը, դարձել էր լռակեաց և ջղային և գրգռւում էր ամեն մի չնչին բանից։ Նա միշտ խոյս էր տալիս թէ կնոջից, թէ աղջկանից և տանն եղած ժամանակ մեծ մասամբ փակուած էր մնում առանձնասենեակում։

Եւան նոյնպէս բոլորովին փոխուել էր։ Եղբօր չարաչար մահը և Բաղէնեանի վերաբերմամբ ունեցած ծանր հիասթափութիւնը, փոխանակ ընկճելու, ինչ-որ վեհութիւն էին տուել նրա հոգուն։ Այդ վեհութիւնն արտայայտւում էր նրա ամբողջ արտաքինի մէջ. հասակով կարծես աւելի ևս բարձրացել էր, մանէր գալիս առանց շտապելու, հաստատուն քայլերով, նայում էր վիրաւորուած մարդու հպարտ հայեացքով, խօսում էր վճռական ձայնով և թւում էր, թէ հօր ու մօր վշտի վրայ նայում էր առանց որևէ կարեկցութեան։ Սակայն, շատ դիշերներ, երբ պառկում էր քնելու, քունը

մօտ չէր գալիս նրա աչքերին. դէմքը թաղում էր բարձի մէջ և հեկեկում էր երեխայի պէս։ Նրա ամբիծ հոգին խիստ վրդովուած էր։ Ամենևին չէր ուզում հաշտուել այն մտքի հետ, թէ իր եղբայրն այլևս չկայ, այլևս երբէք չպիտի տեսնի նրան։ Միւս կողմից նրան կատաղի վրդովմունք էր պատճառում այն հանգամանքը, որ մի ինչ-որ անծանօթ, բաղդախնդիր երիտասարդ կարողացաւ ամենաանարգ կերպով խաբել իրեն և գողանալ իր անարատ սիրտը։ Շատ ժամանակ չէր անցել, դեռ երէկ էր, որ նա լի էր կենսունակութեամբ, վառվռուն զգացումներով, ոսկեվառ յոյսերով. իսկ այժմ յանկարծ ամեն ինչ քարացել էր նրա մէջ և իր ծանրութեան տակ անտանելի կերպով ճնշում էր նրա հոգին։ Իր շուրջն ու ներսը տեսնում էր զարհուրելի դատարկութիւն ու խաւար, ինչպէս մի մարդ, որ կուրանում է յանկարծ։ Մարդկանց և աշխարհի վրայ ինչպիսի պայծառ հայեացք ունէր և յանկարծ ինչ էր տեսնում։ Իրենց տունը մանաւանդ նրան ներկայանում էր իբրև մի դրախտ, ուր թշուառութիւնը չպիտի համարձակուէր ներս մտնել։ Մինչդեռ—ահա իր սիրասուն եղբայրն այլևս չկայ, ահա մայրը գրեթէ խելագարուած, ահա հայրը, այդ՝ երիտասարդական աշխոյժով լի, այդ բարի ու կենսուրախ հայրը վշտից ծերացած և դաժանացած։ Ահա և ինքը։ Ո՞ւր են, ո՞ւր չքացան իր անհանգիստ պայծառ հոգու անդուսպ ձգտումները, որոնք թև էին տալիս թռչելու դէպի բարին, դէպի ճշմարիտը, դէպի սիրոյ և անձնազոհութեան գերագոյն մի իդէալ, որը ներկայանում էր նրան միշտ արևի կենսատու շողերով լուսազարդուած... մեռելութիւն, ամեն տեղ մեռելութիւն, սոսկալի՜ մեռելութիւն... Նրա համար օրը լուսանում և մթնում էր իբրև բնութեան մեքենական մի գործողութիւն, առանց հարցնելու մարդ-

արարածին, թէ կամենո՞ւմ է նա արդեօք, որ այդ գործողութիւնը կատարուի։ Ծայրայեղ յուսահատութեան մէջ կեանքը նրան ներկայանում էր իբրև բոլորովին աննպատակ մի բան, այնպէս որ, լաւ որ մտածում էր, ապշած էր մնում, թէ ուրեմն էլ ինչի՞ համար էին այդ անտանելի տանջանքները, որ այժմ կրում էր ինքը, ինչպէս և այն երջանիկ օրերը, որոնք անցան դնացին...

Նրա մէջ զարթել էր խորաղնին միտքը—բոլոր տանջուողների մխիթարութեան այդ միակ աղբիւրը։ Մի բան, որ նա սաստիկ փափագում էր, այդ այն էր, որ լինէր մէկը, որի առաջ կարողանար թափել իր բոլոր զգացածները ու մտածածները։ Մի անգամ այդ բանը փորձեց անել հօր մօտ. բայց հայրն այնպէս բարկացաւ նրա վրայ, որ նա խկոյն լռեց։ Մի ուրիշ անգամ օր. Սահակեանի մօտ արեց նոյն փորձը և նոյն անաջողութեանը հանդիպեց. օր. Սահակեանը պարզապէս ծաղրեց նրան։ «Եղբայրս որ մեռաւ,—ասաց նա,—կարծում էի, թէ ես էլ հետը կը մեռնեմ վշտից, կամ, եթէ չմեռնեմ էլ, անպատճառ կը գժուեմ. բայց, ինչպէս տեսնում ես, ոչ մեռայ, ոչ էլ գժուեցի, և տես դեռ ինչքան էլ չաղացել եմ նրա մահից յետոյ»։

XII

Մի օր աղախինը Եւային յանձնեց մի նամակ, որ պոստից հէնց նոր էր ստացուել։ Եւան խկոյն ճանաչեց Աշխէնի գիրը։ Սաստիկ ճնշող մի զգացումով բաց արեց նամակը և կարդաց.

«Եւա ջան.

«Ուռա՜... տօներին քեզ մօտ եմ։ Դժուում եմ, որ մտածում եմ, թէ ինչպիսի երջանիկ ժամանակ պիտի

անցկացնեմ քեզ մօտ ամբողջ երկու շաբաթ։ Կարծես տասն տարի է, որ չեմ տեսել քեզ։ Ինչքան խնդրեցի, որ լուսանկարդ ուղարկես,—չուղարկեցիր, ծուլացար։ Շատ բարի. երևի առիթ կունենամ փոխարէնը հատուցանելու։ Սենեակս արդեօք պահպանե՞լ ես նոյնութեամբ։ Մի վայրկեան անգամ չպիտի թողնեմ, որ հեռանաս ինձնից։ Գիշերներն էլ պէտք է միասին քընենք, իրար գրկած։ Այլապէս թւում է, թէ չեմ կարող բոլոր կարօտս հանել երկու շաբաթուայ ընթացքում։ Հայրիկն ի՞նչպէս է, մայրիկը, Սուրէնը, վերջապէս՝ դո՞ւ ինչպէս ես, դու, իմ ծլլան ծիծեռնակ։ Ա՛խ, ի՞նչ սիրուն համեմատութիւն. գրչիցս թռաւ ինքնաբերաբար։ Ցիրաւի, որ յիշում եմ անհանգիստ սիրելի շատախօսութիւնդ, իսկոյն աչքիս առաջ պատկերանում է ծիծեռնակը գարնանային հրաշալի առաւօտեան ծլլալիս։ Բայց դու էլ, ամենքդ էլ անասնատուած մարդիկ էք. ինչո՞ւ վերջին ժամանակս շուտշուտ նամակ չէք գրում։ Գրածներդ էլ ի՞նչ է։ Նե՞ր էք սովորել այդպէս չոր-չոր բաներ գրելը։ Աւելի լաւ է ոչինչ չգրէք կամ ուղղակի գրեցէք, էլի, ռամիկ մարդկանց պէս. «նախ և առաջ կը հարցանեմ ձեր առողջութիւնը. եթէ մեզանից հարցանէք, փառք Աստուծոյ, մենք էլ ողջ և առողջ ենք և կըցանկանք ձեր առողջութիւնը»։ Ու պրծաւ։ Իմացիր, որ առանձնապէս բարկացած եմ քեզ վրայ, Եւա։ Ի՞նչ յիմարութիւններ էիր գրել վերջին նամակիդ մէջ։ Ինչ-որ փիլիսոփայ ես դարձել։ Ասենք, առաջ էլ փիլիսոփայ էիր, բայց այժմ փիլիսոփայութիւնդ այնքան «խուրը տկեմէն» է, ինչպէս կասի Թիֆլիսցին, որ գլուխս բան չի մտնում։ Օրինակ. ի՞նչ է նշանակում՝ «թշուառ է նա, ով միշտ ուրախ և երջանիկ է»։ Սրանք քո իսկական խօսքերն են, որ ես բառացի արտագրում եմ քո վերջին նամակից։ Աստուած է վկայ, այնպէս պիտի կռուեմ քեզ հետ այդ խօսքերի համար, որ... Սպասիր մէկ գամ։ Այդ խօսքերի վրայ ինչե՞ր, ինչե՞ր չեմ մտածել, բոլորը—յիմարութիւններ, իհարկէ... Ա՛խ, քոյրիկ ջան, Աստուած ոչ անի, որ դու երբևիցէ թշուառ լինիս։ Կը մեռնեմ, որ քեզ թշուառ տեսնեմ։ Բայց այդ անկարելի է. ծիծեռս մի՞թէ կարող է բու դառնալ... Ո՞ւֆ, քիչ է մնում, որ նորից յիմար մտքեր ծագեն գլխումս այս ցնծագին տրամադրութեանս միջոցին, երբ ուրիշ ոչ մի բանի մասին չեմ ուզում մտածել, բացի միայն այն բանի մասին, որ շուտով պիտի գամ, պիտի տեսնեմ քեզ, պիտի գրկեմ քեզ, պիտի համբուրեմ սիրունիկ աչերդ...«Ո՞ւֆ»։ Գիտե՞ս, այդ բացականչութիւնը որ գրեցի, ո՞վ պատկերացաւ իսկոյն առաջս.—դու։ Ճիշտ է, լուսանկարդ չուղարկեցիր, բայց ես աւելի զօրեղ միջոց ունիմ քեզ տեսնելու, քան մեռած թուղթը կարող է ցոյց տալ. ամենն անդամ, որ ուզում եմ քեզ պատկերացնել, դէմքս քեզ պէս թթուեցնում եմ զայրացկոտութեամբ, գլուխս ցնցում, ձեռքս խփում ծնկանս և ինքս ինձ արտասանում սրտանց «ո՞ւֆ»։ Այդ բաւական է լինում, որ քեզ ոտով-գլխով տեսնեմ աչքիս առաջ։ Հեշտ միջոց է, չէ՞։ Դրա՞նով եմ ապրել այս մեռելութեան մէջ այսքան ժամանակ։ Զարմանալի է. այդտեղ եղած ժամանակս այնքան չէի սիրում քեզ, ինչքան հիմա, այստեղ։ Բայց այս էլ ճիշտ է, որ դու կախարդ ես։ Կախարդ որ չլինէիր, քեզ տեսնելու կարօտն այսպէս չէր սպանիլ ինձ։ Ա՛խ, ե՞րբ պէտք է անցնի այս երկու շաբաթը։ Ահա թէ ե՞րբ է հարկաւոր, որ մարդիկ թեւեր ունենանային։

«Այսօր թեմական տեսուչն եկաւ մեր գիւղը (տեսնո՞ւմ ես, ես արդէն «մեր» եմ ասում), այցելեց մեր ուսումնարանը, ներկայ եղաւ դասերիս և շատ գոհ մնաց. այնքան գովեց, այնքան գովեց, որ... պատրաստ եմ

տասն անգամ, հարիւր անգամ համբուրելու քեզ։ Ինքս ինձ վրայ զարմացած եմ մնացել. ես այսքան փոխուած... Առաջ, որ կատարելապէս անտարբեր էի, թէկուզ արժանիքներիս համար մի ամբողջ թագաւորութիւն էլ տային ինձ,—այժմ ամենաչնչին գովասանքից անգամ ուրախանում եմ երեխայի պէս։ Ինչով կը բացատրես այս հանելուկն, իմ սիրուն փիլիսոփայ։

«Գիտե՞ս երբ եմ գլուխս այս տողերը,—գիշերուայ ժամը տասին։ Այդ արդէն շատ ուշ է այստեղ։ Դուրսն երեք վերշոկ ձիւն է նստած, շները խուլ ոռնում են։ Առաջս, սեղանիս գլխին, պատի վրայ, մեխից կախուած ճկճկում է ծոցիս ժամացոյցը, բուխարուսը փայտեր են ճրթճրթում,—միակ ձայները, որ լսում եմ գիշերային այս լռութեան մէջ։ Այս երեկոյ (շաբաթ) Մինասեանի քոյրը սենեակումս երկու մոմ վառեց և խունկ ծխեց։ Մոմերը վաղուց են հանգել, իսկ խունկի ծուխն ու հոտը դեռ ևս չեն անցել։ Սիրում եմ մեղրամոմի դժգոյն լոյսն ու խունկի հոտը, թէև դրանք մեռելի և մահուան գաղափարն են յիշեցնում ինձ միշտ։ Ականջումդ մի բան ասեմ, ոչոքի չասես,—առաջ ես սկեպտիկ և աթէիստ էի։ Դու այդ չգիտէիր։ Իսկ այժմ... զարձեալ զարմանալի փոփոխութիւն.—մինչդեռ շուրջս այս տգէտ ու գռեհիկ ամբոխի մարդկանց բերանից հայհոյանքներ եմ լսում նոյն իսկ Աստուծու հասցէին, ես լի հաւատով ու ակնկալութեամբ պաշտում եմ այն խաչը, որի վրայ չարչարեցին, մահացրին Նրան։ Երբեմն, կէս գիշերին, մենակութեանս մէջ, այս խուլ անկիւնում, ուր կեանքը ներկայանում է իր ամենամռայլ գոյներով,—հոգիս լցւում է անտանելի թախծութեամբ և այդ թախիծը կարողանում եմ փարատել միայն լուռ արտասուելով և աղօթելով։ Ո՞ւմ համար եմ աղօթում, ո՞ւմ համար կարող եմ աղօթել,—այդ դու գիտես...

Աղօթքի բոլոր զօրութիւնը, բոլոր քաղցրութիւնը զգացի այն ժամանակ միայն, երբ գործնական կեանքի մէջ համոզուեցի, թէ, յիրաւի, ինչ սքանչելի բան է անձնուրացութիւնն ուրիշի բարօրութեան օգտին։ Մարդիկ անմիտ են, Եւա ջան. նրանք ուզում են երջանիկ լինել, բայց չգիտեն, թէ ո՞րն է երջանկութեան ուղիղ ճանապարհը։ Երջանկութիւնը նրանք որոնում են անձնական բարօրութեան, եսասիրութեան մէջ, մինչդեռ այդտեղից է, որ բղխում է բոլոր թշուառութիւնների աղբիւրը։ Մարմինը, մարմինը և միմիայն մարմինը,—ահա մեր դարի կուլտը։ Մինչդեռ ի՞նչ է դա, այդ մարմինը,—մի բուռ հող, որ այսօր-էգուց պիտի միախառնուի մայր հողի հետ։ Այն ինչ հոգին, այդ միակ բանը մարդու մէջ, որ անմահ է և որը միայն ոյժ ունի անմահացնելու մարդու անունը,—ինչո՞ւ մոռանանք այդ հոգին։ Բանի՞ գրոշ արժէ մարմնական թէկուզ ամենամեծ վայելքը հոգեկան այն սքանչացման դէմ, որ զգում ես դու, երբ տեսնում ես, որ ուրիշի օգտին լաւ բան ես գործել, թէկուզ այդ ուրիշը լինի մի անասուն, այո՛,—պարզապէս մի անասուն։ Փորձիր. դուրսը, փողոցի մէջ ցրտից կսկծոռնացող, քաղցած մի շուն ներս կանչել սենեակդ, տաքացնել, կերակրել և կը տեսնես, թէ որքան թեթևանում է հոգիդ, որքան նրբանում են զգացումներդ, որքան ուզում ես սիրել և բարիք գործել...

«Ցտեսութիւն, իմ աննման Եւա, ցտեսութիւն։ Նուտով կը տեսնեմ քեզ գրկիս մէջ, կարօտակէզ սրտիս սեղմած։ Ա՛խ, թեմբ, թեմբ... Բարեւիր հայրիկին, մայրիկին՝ Սուրէնին պաչիր իմ կողմից։ Իսկ ես պաչպչորում եմ սիրուն աչիկներդ։

«Քո Աշխէն»։

«Յ. Գ.—Հէնց որ դուրս գամ, առաջին իսկ կայարանից կըհեռագրեմ։ Արմենակից ինչ տեղեկութիւն։ Ինչու՞ ոչինչ չէք գրում»։

XIII

Մարութեանը հէնց նոր վերադարձել էր ճաշի, երբ աղջկայ սենեակից լսեց զսպուած հեկեկանքի ձայներ։ Նա ջղային գայրոյթով դէն շպրտեց գլխարկը և անցաւ աղջկայ սենեակը։

—Է՞լ ինչ է պատահել,—հարցրեց սաստող, բայց վախեցած ձայնով։

Եւան, նամակը ձեռքին, վեր թռաւ տեղից։

—Չեմ կարող, հայրիկ, չեմ կարող,—աղաղակեց յուսահատօրէն։—Սպանիր ինձ կամ տուր ինձ իմ եղբայրը... Ի՞նչ պատասխանեմ ես սրան, ի՞նչ ասեմ...

Մարութեանն արագ մօտեցաւ նրան և առաւնրա ձեռքի նամակը։ Մինչդեռ շտապով աչքի էր անցկացնում եղբօր աղջկայ նամակը, Եւան շարունակում էր հեկեկալ յուսահատական տանջանքով։ Ընթերցումը վերջացնելուց յետոյ, Մարութեանը նամակը վերադարձրեց աղջկան։

—Լաւ, էլ ինչու՞ ես այդպէս լաց լինում,—ասաց այս անգամ մեղմօրէն։

—Ա՜խ, հայրիկ, եթէ իմանաս, թէ ինչ սարսափելի հարուած պիտի լինի նրա համար, երբ գայ և իմանայ, որ Արմենակն այլեւ չկայ... Դու չգիտես, դու ոչինչ չգիտես, հայրիկ... Մենք ենք, որ գիմանում ենք, բայց նա... Մի՞թէ չես երեւակայում, թէ թէկուզ հէնց իմ այս սև հագուստը միայն ի՞նչ հարուած պիտի տայ նրան... Նա լաւ աղջիկ է, հայրիկ. առանց իր գրելու էլ գիտեմ, որ սաստիկ սիրում է ինձ, սիրում է ամենքիս, իսկ Արմենակին... Հիմա մտածիր. Արմենակի մահը, մեր վիշտը... այդ ամբ մահ կըլինի նրա համար, նա չի կարող դիմանալ, չի կարող... ես գիտեմ, գիտեմ... Ո՛չ, ոչ, հայրիկ ջան, չեմ ուզում, չեմ կարող... Թող չգայ, թող ոչինչ չիմանայ...

—Դու դարձեալ սկսեցիր քո յիմարութիւնները,—նկատեց հայրը զայրացած։—Միևնոյն է, վաղ թէ ուշ, պիտի իմանար, թէ ինչ դժբաղդութիւն է պատահել մեզ, բայց դու չթողիր, որ մինչև անգամ յայտարարութիւն տայինք լրագրներին հոգեհանգստի մասին. չթողիր, որ ակնարկութիւններով, բաներով քիչ-քիչ նախապատրաստէինք նրան։ Հիմա լաւ է, որ բոլորովին ոչինչ չի իմանում, և հարուածը յանկարծական պիտի լինի։

Եւան վերին աստիճանի յուսահատութեամբ ձեռքերը կոտրատեց։

—Դու ճիշտ ես ասում, հայրիկ։ Բայց ինչու՞ էիր լսում ինձ։ Հիմա ի՞նչ անենք։ Ես չեմ կարող նրան երկաթուղու կայարանում դիմաւորել, չեմ կարող, հայրիկ, Աստուած է վկայ, չեմ կարող...

—Լաւ, մի՛ գնա կայարան. քեզ ո՞վ է ասում, որ գնաս։ Տէր Աստուած, այս աղջիկը գժուել է... Լաւ, էլ ինչու՞ ես այդքան յուսահատւում։ Հարուածը մեզ համար, կարծեմ, աւելի սաստիկ էր և անակնկալ, բայց տեսնում ես, որ մենք չմեռանք, ուրեմն նա էլ չի մեռնել, անհոգ կաց։

—Օ՜, կը մեռնի՜, հայրիկ, կը մեռնի՜,—աղաղակեց Եւան, և հեկեկանքը նորից խեղդեց նրան։

—Ասում եմ՝ գժուել ես և ճիշտ որ գժուել ես,—սաստիկ զայրացած բացականչեց հայրը, դուրս գնաց և դուռը պինդ շրխկացրեց իր ետեւից։ Սակայն նորից

ներս մտաւ խակոյն և արագ քայլերով մօտեցաւ աղջկան։

—Իսէր Աստուծոյ, Եւա, պահպանիր քեզ,—ասաց լուրջ աղերսանքով։—Լսո՞ւմ ես ինչ եմ ասում։ Վիշտն առանց այն էլ սպանել է ինձ և, եթէ դու էլ հիւանդանաս, էլ չգիտեմ, թէ ինչ կըպատահի ինձ...

Եւան պինդ փաթաթուեց հօր վզովը։

—Հայրիկ ջան, սովորեցրու, ասա, ինչո՞վ կարող եմ այս սարսափելի վիշտը դուրս կորզել սրտիցս, ինչո՞վ կարող եմ հանգստանալ։

—Զսպիր քեզ, որդիս, միշտ զսպիր և մտածիր, որ հայր ունիս, մայր ունիս, եղբայր ունիս, վերջապէս հօրեղբօր աղջիկ ունիս, որոնք բոլորն էլ քեզմով են ապրում։ Մտածիր և այն մասին, որ եղբայրդ անօգուտ չմեռաւ։ Թող նրա յիշատակը ոգևորի քեզ, և ոչ թէ յուսահատեցնի։ Բոլոր քոյրերը պէտք է երանի տան քեզ, որ այնպիսի մի պատուական եղբայր ես ունեցել։ Մինչդեռ հարիւրաւոր երիտասարդներ մեր ժամանակում, անձնատուր եղած անձնական վայելքների, շատ անգամ մեռնում են անառակ, ցոփ կեանքի մէջ խայտառակ մահով, քո եղբայրը, բոլոր անձնականը մոռացած, գործեց և մեռաւ իբրև հերոս իր հայրենակիցների համար...

Մարութեանն երկար ժամանակ այսպէս մխիթարում էր աղջկան։ Եւան այժմ նստած էր հօր առաջ բաւական հանգստացած, բայց և այնպէս արտասուքի կաթիլները դեռ ևս գլորւում էին նրա աչքերից։

Նոյն օրն երեկոյեան, երբ Եւան նստած էր իր սենեակում և զբաղուած էր ընթերցանութեամբ, դուռը բացուեց և ներս մտաւ օր. Սահակեանը։

—Եւա ջան, եկել եմ քեզ ուրախացնելու. այսօր նամակ ստացայ Աշխէնից, տօներին գալիս է։

—Լա՜ւ ուրախութիւն է,—հանգիստ դառնութեամբ նկատեց Եւան, առանց գլուխը բարձրացնելու գրքի վրայից։

Օր. Սահակեանը սկզբում զարմացաւ. յետոյ խիստ կոտրուեց։

—Իրաւ, այժմ նա ատելի պիտի լինի քեզ համար. նա որ չլինէր, եղբայրդ այժմ այստեղ էր և կենդանի...

—Ո՛ւֆ,—բացականչեց Եւան յանկարծական զայրացկոտութեամբ և առջևը դրած գիրքը շպրտեց յատակի վրայ այնպիսի կատաղի ուժով, որ ահագին թրխկոց բարձրացաւ։—Ինչե՞ր ես ասում, չեմ հասկանում...

Նրա աչքերը լցուեցին անզուսպ բարկութեան արտասուքներով։

—Դեռ լաւ իմացիր, թէ ինչ եմ ասում, յետոյ յանդիմանիր, եթէ արժանի եմ,—աւելացրեց նա, դէմքը վիրաւորուած կերպով շրջելով օր. Սահակեանից։

Օր. Սահակեանը տեղնուտեղը սառած մնաց։

—Լաւ, էլ ինչո՞ւ ես բարկանում այդպէս,—նկատեց մեղմօրէն։

—Որովհետև վիրաւորում ես։

—Ի՞նչ ասացի, որ վիրաւորուեցիր։

—Ա՛յն ասացիր, որ... Լաւ հասկացիր. ես այնքան յիմար չեմ, որ եղբօրս հեռանալու պատճառը համարեմ Աշխէնին։ Դրանով ես վիրաւորած կըլինէի եղբօրս զգացումները, ստորացրած կըլինէի նրա համոզումները։ Եղբայրս այն երիտասարդներից չէր, որոնք իրենց վեհ գործի են նուիրում և զոհ գնում այն ժամանակ միայն, երբ տեսնում են, որ իրենց անձնական կեանքի մէջ դժբաղդ են։ Այդպիսի ճարահատուած անձնազոհութիւններն ինձ համար ոչ մի նշանակութիւն չունին։ Անձնազոհութիւնը պէտք է լինի ինքնա-

բերաբար, առանց որևէ կողմնակի դրդիչ պատճառի։ Ի՞նչպէս կարող եմ ես գնահատել մի զոհուած կեանք, երբ այդ կեանքն իր տիրոջ համար արդէն ոչ մի արժէք չի ունեցել։ Աշխէնը լինէր, չլինէր—եղբայրս դարձեալ կըգնար այնտեղ, ուր գնաց և զոհուեց։ Ես այդպէս եմ համոզուած։ Եթէ այդպէս համոզուած էլ չլինիմ, դու ինքդ պէտք է աշխատես ինձ այդպէս համոզել, եթէ դէթ փոքր ինչ յարգում ես եղբօրս յիշատակը և չես ուզում, որ սիրտս կտրեմ նրանից։ Մինչդեռ դու հակառակն ես անում։ Մի անգամ ինքն Աշխէնն ինձ նոյնն ասաց, ինչ որ այս րոպէին դու ասացիր, և ես նրա վրայ էլ բարկացայ։ Առհասարակ ես խիստ նեղանում եմ, երբ ինձ վերագրում են մի բան, որ մտքովս անգամ չի անցել։

Օր. Սահակեանն անցաւ նրա եռևը և, խոնարհուելով նրա ուսի վրայ, ժպտալով նայեց նրա դէմքին։

—Եւա, թոռյլ կըտաս համբուրեմ։

Եւան վիրաւորուած հանգստութեամբ լռում էր։

Ի զուր սպասելով նրա պատասխանին, օր. Սահակեանը երկու ձեռքով բարձրացրեց նրա գլուխը և համբուրեց շրթունքներից։

—Գիտե՞ս ինչ կայ, Եւա ջան,—ասաց նա, արագօրէն մի աթոռ առնելով և նստելով նրա մօտ։—Մինչև այժմ ում հետ էլ որ խօսել եմ, ամենքն էլ, ծանօթ-անծանօթ, վիրաւորուել են ինձնից։ Բայց, Աստուած է վկայ, ես երբէք ոչոքի վիրաւորելու միտք չեմ ունեցել. ես միայն, իմ կարծիքով, ճշմարտութիւնն եմ ասել, և ինձնից վիրաւորուողներից ոչոք չի կարողացել ինձ համոզել, որ սխալուել եմ։ Բայց այս անգամ, քո վերաբերմամբ, պէտք է անկեղծ խոստովանուեմ, մեղաւոր եմ, որովհետև համոզուեցի, որ ճշմարտութիւնը չեմ ասել։ Ուստի պէտք է ներես ինձ։ Ի

նկատի ունեցիր, որ այս առաջին անգամն է, որ ինձնից վիրաւորուողից ներողութիւն եմ խնդրում։ Այդ նշանակում է, որ ես լիովին համոզուած եմ, որ սխալուել եմ։ Եւ շատ ուրախ եմ, որ սխալուել եմ, որովհետև գիտե՞ս, թէ ինչպիսի հարուած պիտի լինէր քո ատելութիւնն Աշխէնի համար, որը բառիս բուն նշանակութեամբ պաշտում է քեզ։ Ուզում ես, ցոյց տամ նրա նամակը. տես ինչպիսի կարօտով է քեզ յիշում, ինչպիսի ուրախութիւն է յայտնում, որ շուտով պիտի տեսնի քեզ։

—Գիտեմ. նոյնն ինձ է գրում,—ասաց Եւան խրո

—Չեմ կարող։

—Իսկ հա՞յրդ։ Գիտեմ, որ մայրդ չի կարող, հիւանդ է։

—Հօրս էլ չեմ թողնիլ, որ գնայ։

Օր. Սահակեանը կարճ ժամանակ սիրով նայեց Եւայի հանգիստ և հաստատ վճռականութիւն արտայայտող դէմքին։

—Հասկանում եմ քեզ, Եւա ջան,—ասաց նա։—Բայց ի զուր ես կարծում, թէ նա այնքան թուլասիրտ կըգտնուի, որ չի կարող դիմանալ հարուածին։ Ճիշտ է, նա բոլորովին չի իմանում, թէ ինչ է պատահել բայց որքան նրա սիրտն ընդունակ է սիրելու, այնքան և ամուր է հոգին։ Բացի դրանից, չէ՞ որ միևնոյն հարուածը պէտք է ստանայ այստեղ, տանը. խօ չէ՞ք կարող նրանից թագցնել...

—Ո՛չ, ո՛չ, ո՛չ,—արտասանեց Եւան անտանելի տանջանքով և գլուխը դրեց սեղանի վրայ։ Նա գալիս է ուրախ և երջանիկ, կարծելով, թէ պիտի գտնի իր թողած նախկին կենսուրախ տունը, մինչդեռ...

Եւ Եւան լռեց լացակումած։

Օր. Սահակեանը նայեց նրան խորին կարեկցութեամբ. ուզում էր շոյել նրա փափուկ մազերը, որոնք, մի գիսակի մէջ հիւսուած, փայլում էին ճրագի լոյսի տակ. ուզում էր մխիթարական խօսքեր ասել, բայց զգաց, որ դրանով միայն իւղ կարող էր թափել կրակի վրայ։

—Յամենայն դէպս, հեռագիրը որ ստանաք, իմաց տուր ինձ,—ասաց նա։—Իսկապէս որ շատ լաւ կըլինի՝ ոչ դու գաս, ոչ հայրդ, որովհետև ո՞վ գիտէ ինչ կըպատահի, որ ձեզ այդպէս տեսնի։ Աւելի լաւ է, մենակ ես գնամ. մինչև տուն հասնելը կընախապատրաստեմ նրան, որպէսզի հարուածը յանկարծական չլինի։

Եւան գլուխը բարձրացրեց արագ. նրա աչքերը լիքն էին արտասուքով։

—Խնդրում եմ, Վարօ ջան, այդպէս արա,—բացականչեց նա։—Դու ինձ ազատած կըլինիս մի անտանելի դժուարութիւնից։

XIV

Մի շաբաթ յետոյ գիշերը ստացուեց Աշխէնի հեռագիրը, որով յայտնում էր, թէ առաւօտուայ գնացքով Թիֆլիսում կըլինի։ Եւան հեռագիրն անմիջապէս ուղարկեց օր. Սահակեանին։

Առաւօտեան օր. Սահակեանը գնաց երկաթուղու կայարան։ Նա շատ անհանգիստ դրութեան մէջ էր, և այդ անհանգստութիւնն աւելանում էր բոպէ առ բոպէ, քանի մօտենում էր գնացքի ժամանման բոպէն։ Դեռ ևս չէր որոշել, թէ ինչպէս պիտի նախապատրաստէր Աշխէնին սարսափելի հարուածին դիմանալու համար։ Երևակայում էր, թէ ինչպիսի ուրախութեամբ, ինչպիսի կարօտով Աշխէնը պիտի ընկնէր իր գիրկը, ինչպիսի անհամբերութեամբ պիտի շտապեցնէր իրեն շուտով տուն հասնելու, Եւային, իւրայիններին տեսնելու համար։ Եւ ինքը մի քանի կցկտուր խօսքերով միանգամայն պիտի ջախջախէր նրա ուրախութիւնը և նրա սիրած, անձկալի երիտասարդի չարաչար մահուան սարսափելի գոյժը պիտի տար նրան։ Օր. Սահակեանը սարսափում էր երևակայել, թէ ինչ կըպատահէր Աշխէնին, և զգում էր, որ կորցնում է իր քաջութիւնը։

Հեռուից խուլ կերպով լսուեց շոգեմեքենայի սուլոցը։ Օր. Սահակեանը կանգ առաւ պլատֆորմի ծայրին և աչքը տնկեց այն կողմը, որտեղից որ պիտի երևար գնացքը։ Մի-երկու բոպէից երկու բլրի խոր մի-

ջանցքում, պայծառ սպիտակին տուող ձիւնի ֆոնի վրայ, երևաց շոգեմեքենայի հուժկու սև կուրծքը և ապա վագոնների երկայն շղթան։ Պլատֆորմին մօտենալիս շոգեմեքենան դանդաղեցրեց ընթացքը և յամրընթաց առաջ սողաց դէպի պլատֆորմի միւս ծայրը։ Վագոնները մէկը միւսի ետևից միակերպ խուլ գրգռոցով անցնում էին օր. Սահակեանի առաջով։ Օր. Սահակեանը նայում էր ամեն մի լուսամուտի։ Բոլոր լուսամուտները փակ էին։ Բայց ահա լուսամուտներից մէկի ապակին ցած ընկաւ յանկարծ, և երևաց Աշխէնի գլուխը։

—Վարօ ջան, ողջո՞յն, ողջո՞յն,—աղաղակեց Աշխէնը ձեռքը շարժելով դէպի նա։

Օր. Սահակեանն առաջ վազեց։ Գնացքը դեռ ևս կանգ չէր առել, որ նա թռաւ վագոնի սանդուղքի աստիճանը, շտապով բարձրացաւ վերև և ներս մտաւ։

Աշխէնը կախուեց նրա վզից և սկսեց համբուրել նրան երկարատև և ամուր։

—Վերջապէս դարձեալ տեսայ քեզ... Ինչքան կարօտել էի, Տէր Աստուած, ինչքան կարօտել, — ասում էր նա։—Երևակայիր. գալիս էի ու մտածում. յանկարծ որ գնացքը շուռ գայ ու տակոմն անի, ի՞նչ կըլինի... Էլ խօ չե՞մ տեսնիլ իմ Վարօյին, իմ...

Յանկարծ Աշխէնը թողեց ընկերուհուն և նայեց չորս կողմը։

—Եւան ո՞ւր է,—հարցրեց նա։—Երևի նա, հայրիկը, մայրիկը դուրսն են։ Հա՞։

Աշխէնը վրայ ընկաւ լուսամուտին և տենդային անհամբեր հայեացքով սկսեց որոնել իւրայիններին պլատֆորմի վրայ խռնուող հասարակութեան մէջ։

—Ո՞ւր են... չկան... չեն երևում... Երևի դահլիճումն են։ Հա՞,—դարձաւ նա օր. Սահակեանին զարմացած։

—Նրանք չեն եկել։

—Չեն եկի՞լ... ինչո՞ւ։

—Որովհետև... Եւան մի քիչ տկար է... Ես ինքս խորհուրդ չտուի, որ այս սառնամանիքին դուրս գայ տնից, թէ չէ ինքը շատ էր ուզում գալ... Հայրն ու մայրն էլ չկամեցան նրան մենակ թողնել... Դէհ, որոնք են քո իրեղէնները, վերցնենք գնանք։

Աշխէնը բռնեց օր. Սահակեանի ձեռքից և շատ լուրջ հայեացքով նայեց նրա շփոթուած աչքերին։

—Սպասիր, ի՞նչ տեսակ ես խօսում,—ասաց նա թերահաւատութեամբ և սաստիկ վախեցած։—Ի՞նչպէս թէ տկար... Պառկա՞ծ է։

—Չէ։ Յարբուխ ունի և հազում է։

—Ճի՞շտ ես ասում,—շատ լուրջ կերպով հարցրեց Աշխէնը իր փորձող հայեացքը չհեռացնելով ընկերուհու աչքերից։

—Զարմանալի է, ի՞նչ ունիմ խաբելու,—բացականչեց օր. Սահակեանն ինքն իր դէմ զայրացած, որ այդքան շփոթւում է սուտ խօսելուց և Աշխէնի սուր հայեացքից։

Աշխէնը նոյն փորձող սառն հայեացքով մի բոպէ դարձեալ նայեց նրա աչքերին, յետոյ շուռ եկաւ և սկսեց հաւաքել իրեղէնները։

—Զարմանալի է, շատ զարմանալի,—ասում էր նա, կարծես ինքն իրեն։

—Սպասիր, այդքանը չես կարող տանել, մի բան ինձ տուր։

Աշխէնն իր բարձը տուեց ընկերուհուն, մնացածն ինքն առաւ և առաջ ընկաւ։

Օր. Սահակեանը հետևեց նրան։ Նա ամենևին չէր զարմանում Աշխէնին յանկարծ տիրած սառնութեան իրայ. մինչև իսկ, կարծես, ուրախ էր, որ Աշխէնն արդ-

դէն նախադդում էր, որ իրենց տանն ինչ-որ դժբաղ-դութիւն է պատահել։

Աշխէնը վազում էր. կարծես, մոռացել էր, որ օր. Սահակեանն իր հետ էր։ Կայարանի հրապարակում շտապով բարձրացաւ մի կառք։ Օր. Սահակեանը նստեց նրա կողքին։ Կառքն առաջ շարժուեց։

—Ուրի՞շ, ի՞նչ կայ, ի՞նչ չկայ ձեր գիւղում։ Մի-նասեանն ի՞նչպէս է,—հարցրեց օր. Սահակեանը բռնի աշխոյժով և ուզում էր նոյն եղանակով էլ շարունա-կել, բայց լռեց, տեսնելով Աշխէնի զարմանալի լուրջ, սառն հայեացքը, որ նա յառել էր իր աչքերին։

—Ես զարմանում եմ քեզ վրայ, Վարօ,—ասաց Աշխէնը։—Մի՞թէ յիրաւի դու ինձ երեխայի տեղ ես դնում և կարծում ես, թէ կարելի է ինձ խաբել։ Ասա՛ ճշմարիտը, ասա՛ միանգամից—ի՞նչ է պատահել մեր տանը։

Աշխէնի յամառ հայեացքից, նրա հրամայողական ձայնից օր. Սահակեանն այն աստիճան շփոթուեց, որ դէմքն անգիտակցաբար շրջեց նրանից։ Այնուհետև զգաց, որ Աշխէնի մատները սաստիկ սեղմում են իր թեւը, և երբ դարձաւ ու նայեց ընկերուհու դէմքին, վախից քարացաւ.—Աշխէնի դէմքը մեռելի գոյն էր ստացել, աչքերը չռած էին անսովոր սարսափով։

—Մեռե՞լ է,—աղաղակեց Աշխէնը խելագարի պէս։

—Ո՞վ... ի՞նչ ես ասում։

—Եւան։

—Գի՞ժ ես, ինչ ես, ինչո՞ւ ես դուրս տալիս։

—Ասա՛, թէ չէ՝ այս րոպէիս ինձ կառքի տակ ձգեցի։

Եւ Աշխէնը մինչև անգամ փորձեց, որ վերկենայ, բայց օր. Սահակեանը վրայ ընկաւ նրան և պինդ պա-հեց իր տեղը։

—Ցիմա՛ր, խելագա՛ր,—բացականչեց նա։—Տեղդ հանգիստ նստիր, թէ չէ... Ինչո՞ւ ես անում, ի՞նչ յի-մար բաներ ես մտածում։ Ո՞րտեղից խելքիդ փչեց, թէ մեռել է։ Մեռել է, չէ՛, փտել է։

—Ա՛խ, անաստուած, ինչո՞ւ ես սպանում ինձ,—արտասանեց Աշխէնը սրտաճմլիկ ձայնով, և նրա աչ-քերը լցուեցին արտասուքով։

—Աշխէն ջան, խնդրում եմ, հանգիստ մնա. Եւան ողջ և առողջ է, Աստուած է վկայ, երդւում եմ արևով, ողջ և առողջ է։

—Չէ, չեմ հաւատում, Վարօ ջան. մեր տանը մի բան պատահել է, և դու ծածկում ես ինձնից։

—Հա՛, պատահել է, հիմա՛,—բացականչեց օր. Սա-հակեանն ինքն իր անվստահութեան վրայ զայրացած։

Աշխէնը նոր սարսափով վրայ ընկաւ նրա ձեռ-քերին։

—Պատահե՞լ է... ի՞նչ... ո՞ւմ... Ասա՛, աղաչում եմ, ասա։

Օր. Սահակեանը կամեցաւ մի անգամից վերջ տալ այդ անտանելի դրութեանը։

—Պատահել է, բայց... ոչ Եւային, ինչպէս դու ես կարծում։

—Հապա՞... հայրիկի՞ն... մայրիկի՞ն... Սուրէնի՞ն... Հա՞։

—Չէ՛, չէ՛...

—Հապա՞, հապա՞։

—Դէ՛, էլ ո՞վ մնաց... ինքդ հասկացիր, էլի...

—Արմենակի՞ն,—ճչաց Աշխէնն այնպիսի սարսա-փելի ձայնով, որ կառապանը յետ նայեց։

—Այո,—կարճ պատասխանեց օր. Սահակեանը, վախենալով նայել նրա աչքերին։

Աշխէնը յանկարծ սաստիկ թուլութիւն զգաց ամ-

բողջ մարմնի մէջ. ուզում էր էլի, ըստ երևոյթին, ինչ-որ հարցնել, բայց ձայնը չհպատակեց նրան։ Ինչ-որ սև բան, մշուշի պէս, եկաւ ծածկեց նրա աչքերի առաջը։ Նա կամաց յետ ընկաւ կառքի խորքը, և նրա աչքերի կոպերը ծածկուեցին։

Օր. Սահակեանը սաստիկ վախեցած վրայ ընկաւ նրա սառոյց կտրած ձեռքերին։

—Աշխէն...

Աշխէնն աչքերը բաց արեց, և նրա անմիտ հայեացքն ընկաւ ընկերուհու վախից չոռած աչքերին։

—Սիրտդ խօ չի՞ նեղանում։

Աշխէնը գլուխը շարժեց։

—Չէ,—շշնջաց նա հազիւ լսելի ձայնով և հէնց այնպէս էլ սառած մնաց։

Այնուհետև մինչև տուն հասնելը երկու ընկերուհիներից ոչ մէկը գրեթէ ոչ մի խօսք չարտասանեց։ Օր. Սահակեանը, Աշխէնի սառած ձեռքն իր ձեռքի մէջ առած, երբեմն-երբեմն անհանգիստ հայեացք էր ձգում նրա կտաւի գոյն ստացած դէմքին, իսկ Աշխէնը, յետ ընկած կառքի խորքը, անմիտ հայեացքով անթարթ նայում էր կառապանի մէջքին և, ըստ երևոյթին, ամենևին չէր իմանում, թէ որտեղ է ինքը և ուր է գնում։

Կառքը, վերջապէս, կանգ առաւ Մարութեանների տան առաջ։ Օր. Սահակեանը շտապով իջաւ և սեղմեց դռան զանգակի կոճակը։

—Աշխէն, իջիր, հասանք,—կանչեց նա։

Աշխէնը, ըստ երևոյթին բոլորովին հանգիստ, կամաց վերկացաւ և իջաւ կառքից։ Օր. Սահակեանը բռնեց նրա ձեռքից և տարաւ դէպի դուռը, որ հէնց նոր բաց արեց ծառան։

Աշխէնը չտեսաւ իրենց հին ծառայի բարևը, մըտաւ և հանդարտ քայլերով սկսեց բարձրանալ սանդուղքով, ձեռքով վանդակապատից բռնած։ Հազիւ մինչև սանդուղքի գլուխը հասած, այլ ևս չկարողացաւ առաջ գնալ և, ուժասպառ հիւանդի պէս, նստեց վերջին աստիճանի վրայ։

Օր. Սահակեանը բոլոր իրեղէնները տուեց ծառային, շտապով վճարեց կառապանին և հասաւ ընկերուհուն։

—Ինչո՞ւ ես նստել, վերկաց,—ասաց նա և ուզեց օգնել, որ Աշխէնը վերկենայ։

—Սպասիր, մի քիչ հանգստանամ. ծնկներս դողում են,—ասաց Աշխէնը կամաց։—Զարմանալի է. ամբողջ մարմինս, կարծես, փալաս է դարձել,—աւելացրեց նա և գլուխը դրեց ծնկանը յենած ձեռքի վրայ։

Այդ րոպէին սենեակներից մէկի դուռը բացուեց և նախասենեակը դուրս վազեց Եւան։

—Քոյրիկ ջան,—աղաղակեց նա։

Աշխէնը ցնցուեց, արագ բարձրացաւ և կամաց ընկաւ նրա գիրկը։

Մինչդեռ նրա գլուխը խաղաղ հանգչում էր հօրեղբօր աղջկայ ուսի վրայ, Եւան, իր գրկի մէջ պինդ սեղմելով նրա նիհար իրանը, յուսահատական հեկեկանքով համբուրում էր նրա հանգած աչքերը, նրա սառն շրթունքները։ Այդ հեկեկանքի և համբոյրների մէջ միացած էին կարօտը, վիշտը և մխիթարելու անհուն ցանկութիւն։

—Մի՞թէ ես քեզ այսպէս պիտի ընդունէի, քոյրիկ ջան,—ասում էր նա։ Մի՞թէ ուրախութեան արտասուքների տեղ վշտի և յուսահատութեան արցունքներ պիտի թափէի, իմ սիրելի, իմ անգին քոյրիկ...

Օր. Սահակեանը տեսաւ, որ բանը հեռու կարող է գնալ և ուզում էր բաժանել նրանց, բայց այդ մի-

ջոցին Աշխէնը կարծես յանկարծ ուշքի եկաւ ինչ-որ խոր թմրութիւնից, կամաց ազատուեց Եւայի գրկից, նրա գլուխն առաւ իր ձեռքերի մէջ և անձկալի վշտով համբուրեց նրա շրթունքները։ Բայց նրա աչքերն առաջուայ պէս ցամաք էին. առաջուայ պէս լուռ էր նա. նրա բերանից վշտի ոչ մի խօսք, ոչ մի հառաչանք դուրս չէր եկել դեռ։

Արագ քայլերով դուրս եկաւ Մարութեանը։

Աշխէնը մէկ ուզեց առաջ գնալ դէպի նա, բայց կանգ առաւ քարացած, յանցաւորի պէս։

Մարութեանը մօտեցաւ նրան, գրկեց և համբուրեց նրա մազերը։

—Բարով ես եկել, զաւակս,—ասաց նա, և նրա ձայնը սաստիկ դողաց։ Նա կուլ տուեց թուքը և հարցրեց.—Առողջ ես։

Աշխէնը, բոլորովին կարկամած, միայն գլխով արաւ։

—Պէտք է ներես, որ մեզնից ոչոք չկարողացաւ գալ քեզ դիմաւորելու,—ասաց Մարութեանն այս անգամ աւելի հանդիստ։—Օրիորդ Սահակեանն, երևի, ասած կըլինի քեզ պատճառը... Բան չկայ, զաւակս։ Փառք տանք Աստծուն, արհամարհանքով նայենք անպէտքների վրայ և մխիթարուենք նրանով, որ մեր կորուստն ապարդիւն կորուստ չէ։ Սա մի զոհ էր, որ տուինք հայրենիքի սեղանի վրայ... Դէ, ներս եկէք, այստեղ ցուրտ է։

Ասիական փոքրիկ թախտի վրայ կուչ էր եկած Թեկլէն։ Այն աստիճան փոխուել էր նա, որ Աշխէնն առաջին նուագ չճանաչեց նրան։ Վերին աստիճանի խղճալի տպաւորութիւն էր գործում նա իր ցամաքած աչքերով և սառած դէմքով. նրա վշտի բոլոր հիւթը կարծես քամուել ցամաքել էր։

Աշխէնը չոքեց նրա առաջ, առաւ նրա ձեռքը և լուռ համբուրեց։

Թեկլէն գրկեց նրա գլուխը, շրթունքները կըպցրեց նրա ճակատին, այնուհետև, ցամաք աչքերով նայելով նրա աչքերին, սկսեց խաղաղ կերպով սգալ իր որդու մահը։

—Դու գնացիր և եկար, Աշխէն ջան, բայց գիտէս, որ նա, իմ Արմենակս, էլ չի գալ, էլ չեմ տեսնիլ նրան... Անօրէնները կախեցին նրան, խեղդեցին, որդի ջան... Աւելի լաւ չէ՞ր լինիլ, որ իմ որդին իմ ձեռքերի վրայ մեռնէր... Գոնէ կըգիտենայի, թէ որտեղ է նրա գերեզմանը և ամեն անգամ կըգնայի կողբայի իմ վիշտը... Իսկ այժմ ո՞ւր գնամ ես, ո՞ւր փընտրեմ նրա գերեզմանը...

Մարութեանը չկարողացաւ դիմանալ կնոջ այդ սրտաճմլիկ խօսքերին և բարձրաձայն հաղալով դուրս գնաց շտապով։

Եւան թաշկինակը պինդ սեղմել էր աչքերին, և հեկեկանքը պատառում էր նրա սիրտը։

Օր. Սահակեանը նոյնպէս լալիս էր։

Աշխէնն էր միայն, որ, կարծես անտարբեր ու հանդիստ, լսում էր դժբաղդ մօր ծանր վշտի խաղաղ արտայայտութիւնները, նրա առաջ չոքած։ Նրան թւում էր, թէ այդ ողբն իր համար է, թէ ինքն է այդ ողբի առարկան։ Եւ նա բոլորովին սառն էր ու անզգայ, ինչպէս մեռելը իր մահը ողբացողի առաջ...

XV

Աշխէնը քաշուեց իր նախկին սենեակը, որ Եւան առանձին խնամքով պատրաստել էր առաջուայ նման։ Օր. Սահակեանն ու Եւան, խիստ անհանգստացած նրա

տարօրինակ դրութիւնից, չէին կամենում մենակ թողնել նրան, բայց նա ասաց, որ ուզում է մի քիչ հանգստանալ, որովհետև յոգնած է և գիշերը չի քնել։

Եւ Աշխէնը մենակ մնաց։ Նա պառկեց մահճակալի վրայ, ձեռքերը դրեց գլխի տակ և քարացած աչքերը յառեց առաստաղին։ Նրա դժգոյն դէմքը դեռ ևս պահպանում էր առաջուայ խաղաղ արտայայտութիւնը։ Անակնկալ հարուածը, կարծես, բոլորովին բթացրել էր նրա զգացումները։ Ամէն ինչ նրա աչքում անշարժացել, սառցել էր, ինչպէս սոսկալի հրդեհից յետոյ ծաղկաթափ մի անտառ։ Արմենակն այլ ևս չկար. այդ միևնոյն էր, թէ հանգել էր այն փարոսը, որ լուսաւորում էր իր դժուարին ճանապարհը։ Այժմ ումից պիտի ստանար այն լոյսն ու յոյսը, որոնցով առաջնորդւում էր մինչև այժմ։ Փորձութեան այս տաժանելի ժամին նա աւելի, քան երբևիցէ, զգում էր, որ իր նոր սկսած գործունէութեան մէջ միակ խթանն ու քաջալերողն եղել է այն երիտասարդը, որին նուիրել էր իր կուսական սիրտն անդրանիկ սիրոյ բոլոր զօրութեամբ։ Շատ անգամ, երբ գիւղական մռայլ կեանքի մէջ տիսուր փափկակեցութեան ձգտումը պաշարել էր նրան և նա յուսահատուած սկսել էր ողբալ իր անձնական դժբաղդութիւնը, վերջիվերջոյ միխիթարուել և քաջալերուել է միմիայն գիտակցութեամբ, թէ որքան պիտի ուրախանայ Արմենակը, երբ իմանայ, թէ իր սիրած աղջիկը գործունէութեան ինչ ասպարէզ է ընտրել։ Եւ նրան նոր ոյժ, նոր եռանդ էր տալիս այն յոյսը, թէ կըգայ ժամանակ, երբ երկարամեայ գործունէութիւնից յոգնած-վաստակած երկու սիրող սրտերը դարձեալ կը հանդիպեն իրար միևնոյն յարկի տակ, ուր երկուսն էլ սնուել ու սիրել են իրար, և պայծառ զգացումներով, կայտառ հոգով կըպատմեն իրար,

թէ իրենցից իւրաքանչիւրն ինչ է արել։ Նրանք կընայեն իրար առաջուանից աւելի մեծ անձկութեամբ, նրանց փոխադարձ սէրն աւելի ևս հաստատուն կլինի, սակայն ոչ այնպէս աչք կուրացնելու չափ պայծառ և այրելու չափ տաք, ինչպէս ամառային արևի ճառագայթները, այլ անդորր ու քնքոյշ, ինչպէս գարնանային լուսնի լոյսը։ Երիտասարդական անդրանիկ սիրոյ կամովին ճնշուած զգացումն այլևս խուլ բողոք չի բարձրացնիլ առաջուայ պէս, այլ Աստծու սեղանի առաջ ողջակէզ գառան նման խոնարհ իր վիճակին՝ կասի. «ա՜խ, այսպէս աւելի լաւ է»։ Եւ երբ կըգայ հրաժեշտի ժամը և կըկոչի նրանց նորից ի գործ, նրանք նոյն պայծառ զգացումներով, նոյն կայտառ հոգով և նոր ոյժ, նոր եռանդ ստացած՝ կըբաժանուեն իրարից, շարունակելու համար իրենց բարի գործը թշուառների օգտին... Ա՜խ, ցնորքներ, քաղցրիկ ցնորքներ... ուր էք, ուր թռաք այդպէս յանկարծ, այդպէս անակնկալ... Նրա առաջ կանգնած է այժմ իրականութիւնը, դաժան, անողոք իրականութիւնը. եկաւ և իր ահաւոր շնչով յօդս ցնդեցրեց հրաշալի երազները, որոնցից դուրս խաւարի և մահուան թագաւորութիւնն է... Էլ ինչով մըխիթարուի, ինչով յուսայ, ինչով նոր եռանդ, նոր ոյժ ստանայ... Աղբիւրը ցամաքեց, ծաղիկը պիտի թողնի անջուր, պաղակած...

Դուռը զգուշօրէն բացուեց, և ներս մտաւ Եւան։

Աշխէնը, անձնատուր եղած իր մտքերին, նայեց Դրան այնպիսի հայեացքով, որից երևում էր, որ չի տեսնում նրան, յետոյ մեքենայաբար վերկացաւ և նըստեց։

Եւան չոքեց նրա առաջ և առաւ նրա ձեռքերը։ Երկար ժամանակ արտասուալից աչքերով, անհուն սի-

բով ու կարեկցութեամբ լուռ նայում էր Աշխէնի գունատ, անզգայացած դէմքին։

—Այնպէս հասկանում եմ քո վիշտը, քոյրիկս,—վերջապէս ասաց նա դրեթէ շշնջալով, կարծես վախենալով խանգարել բոպէի հանդիսաւորութիւնը։—Ես էլ երբ անակնկալ կերպով իմացայ եղբօրս մահը, քեզպէս անզգայ էի դարձել, չէի իմանում ինչ է պատահում ինձ և արտասուքի ոչ մի կաթիլ չէի կարողանում թափել։ Բայց յետոյ, բայց այժմ և այսուհետև ես միշտ լաց եմ եղել, լալիս եմ և պիտի լամ, քանի որ եղբօրս յիշատակը կենդանի կըմնայ սրտումս։ Ասում են, որ ժամանակն ամենակարող է, որ նա բուժում է բոլոր վշտերը։ Եթէ այդ ճշմարիտ է, եթէ, յիրաւի, ժամանակն այնպէս պիտի անի, որ ես այլ ևս այսպէս չպիտի տանջուեմ եղբօրս մահուան համար և պիտի մոռանամ նրան,—ես այդ չէի կամենալ, երբէք, երբէք, որովհետև այդ կընշանակէր, թէ եղբայրս միևնոյնն է եղել ինձ համար, ինչ որ մի անշունչ առարկայ, մի խաղալիկ, որը ձեռքիցս ընկել կոտրուել է, և ես սկըզբում ափսոսացել եմ, յետոյ մոռացել։ Ո՛չ, այդ սարսափելի է, այդ անկարելի է, չեմ ուզում։ Եթէ հնարաւոր լինէր, որ յաւիտեան ապրէի,—սիրով կըկրէի սրտիս մէջ այս անտանելի վիշտը, որպէսզի դրանով լիովին արտայայտած լինէի այն զգացումները, որ ես տածել եմ դէպի եղբայրս։ Եղբօրս մահից յետոյ ես այլևս ոչ մի ուրախութիւն չեմ ուզում. այդ սրբապղծութիւն կըլինէր, այդ անարգանք կըլինէր նրա յիշատակին։ Իմ ուրախութիւնն իմ այս վիշտն է, որ հպարտութեամբ կրում եմ սրտիս մէջ և կըփայփայեմ միշտ, քանի կենդանի եմ...

Մինչդեռ Եւան իրեն յատուկ կրակոտ արտայայտութիւններով իր վիշտն էր թափում հօրեղբօր աղ-

ջկայ առաջ, Աշխէնը նստած էր անշարժ, անթարթ նայում էր նրա աստասուալից աչքերին և թւում էր, թէ լսում է նրան առանց որևէ կարեկցութեան։

Եւան լռեց և, կարծես յոգնած, գլուխը դրեց Աշխէնի ծնկներին։

—Կարո՞ղ ես պատմել, թէ ինչպէս է պատահել նրա մահը,—կամաց հարցրեց Աշխէնը։

Եւան վեր կացաւ, դուրս գնաց և շուտով վերադարձաւ Բաղէնեանից ստացած յեղափոխական թերթը ձեռքին։

—Ահա կարդա,—ասաց նա ցոյց տալով եղբօր մահուան վերաբերեալ տեղեկութիւնը։

Աշխէնը թերթն առաւ նրա ձեռքից և սկսեց կարդալ լուռ և խիստ ուշադիր։ Կարդալուց յետոյ ձեռքերը թուլացած ընկան ծնկների վրայ, և երկար ժամանակ նստած էր լուռ, գլուխը կրծքին խոնարհած։ Յանկարծ գլուխը բարձրացրեց և հարցրեց.

—Ուրիշ տեղեկութիւն չունի՞ք։

—Մեր ունեցած տեղեկութիւնն այդ է միայն,—պատասխանեց Եւան։

—Ի՞նչպէս... սրանի՞ց էք միայն իմացել։

—Այո։

Աշխէնի մեռած դէմքը յանկարծ կենդանութիւն ստացաւ. յոյսը վառուեց նրա հանգած աչքերի մէջ։ Նա վեր թռաւ տեղից։

—Իսկ եթէ սո՞ւտ լինի,—աղաղակեց նա։—Բի՞չ այսպիսի սուտ են գրում ժողովրդին գրգռելու համար...

Եւան վշտահար շարժեց գլուխը։

—Մենք էլ սկզբում այդպէս էինք կարծում,—ասաց նա.—բայց ստուգեցինք և, դժբաղդաբար, ճիշտ

դուրս եկաւ։ Ա՜խ, եթէ սուտ լինէր, եթէ սուտ լինէր, —աւելացրեց Եւան ծանր հառաչելով։

Խաբուսիկ յոյսը հանգաւ Աշխէնի աչքերի մէջ։ Նորից թուլացած նստեց, խոնարհուեց ծնկների վրայ և ճակատն առաւ ձեռքերի մէջ։ «Եթէ սուտ լինէր... եթէ սուտ լինէր...»—կրկնում էր մտքումը Եւայի խօսքերը։

Եւան նստեց նրա մօտ և այս անգամ հանգիստ կերպով սկսեց մանրամասնօրէն պատմել, թէ եղբօր մահուան գոյժն ինչ ազդեցութիւն և հետևանք ունեցաւ իրենց տանը, թէ ինչու այդ մասին ոչինչ չէին գրում Աշխէնին և ինչու իրենցից ոչոք չգնաց երկաթուղու կայարան նրան դիմաւորելու։ Բայց Եւան ոչ մի խօսք չարտասանեց Բաղէնեանի մասին, որը պատճառ էր դարձել Արմենակի մահուան գոյժն առնելուն։ Բաղէնեանի մասին ոչինչ չէր ուզում պատմել ոչ թէ նրա համար, որ ամաչում էր Աշխէնից և չէր ուզում, որ նա իմանայ, թէ ինչպէս ինքը խաբուել էր այդ բաղդախնդիր երիտասարդից, այլ նրա համար միայն, որ նոյն իսկ Բաղէնեանի անունը լոկ խորին զզուանք ու զայրոյթ էր ազդում նրան։

Եւան լռեց և սպասում էր, թէ Աշխէնը կըխօսի, բայց Աշխէնը շարունակ խոնարհուած էր ծնկների վրայ և այնքան հանգիստ էր երևում, որ թուում էր, թէ մինչև անգամ չի շնչում։ Եւան կամաց գրկեց նրա իրանը։

—Աշխէն ջան, ինչու՞ չես խօսում,—հարցրեց նա այնպէս, ինչպէս խօսում են ծանր հիւանդների հետ։

Աշխէնը նստեց ուղիղ։ Նրա աչքերը բացուած էին լայն և կեղրոնացած նայում էին անորոշ տարածութեան մէջ։

—Ի՞նչ խօսեմ,—ասաց նա մեռած ձայնով։

—Ես ի՞նչ գիտեմ։ Գոնէ մի կերպ արտայայտիր վիշտդ։

—Ի՞նչպէս արտայայտեմ։ Մաղերս փետեմ, աղաղակե՞մ, թաւալգլո՞ր գամ...

—Չէ, ինչո՞ւ։ Բայց... ախը դու չափազանց ուրիշ տեսակ ես դարձել... Ես քեզ համար եմ ասում, քեզ համար եմ հոգում։

Աշխէնը նայեց Եւայի աղերսող աչքերին և դառն կերպով ժպտաց։

—Ի՞նձ համար...

—Այո՛։ Ես վախենում եմ, որ այդպէս դու կըհիւանդանաս։

Աշխէնը շարժեց գլուխը։

—Ա՛յ խեղճ, ա՛յ թշուառ, այսուհետև քանի՞ գլոշ արժէ իմ կեանքը, որ այդքան հոգում ես։ Մինչև այժմ արժէ իմ կեանքը, որ այդպէս մի պայծառ աստղ ունէի, որ լուսաւորում էր ճանապարհս. հանգաւ այդ աստղը. այսուհետև դէպի ո՞ւր խարխափեմ... Պայծառ լոյսից յետոյ յանկարծ գարխարխափեմ... Ոչինչ չեմ տեսնում, ոչինչ... Դէպի ո՞ւր խարխափեմ...

Հանգիստ, հանդիսաւոր կերպով արտասանուած այդ խօսքերից իւրաքանչիւրի վրայ Եւան սառչում էր ղգում իր ամբողջ մարմնի մէջ։ Նա տեսաւ, որ միևնոյն ղգում իր ամբողջ մարմնի մէջ։ Նա տեսաւ, որ միևնոյն յեղաշրջումը, որ կատարուել էր իր, կատարուում է և Աշխէնի մէջ։ Եւ այժմ միայն զգաց, թէ որքան սարսափելի բան էր այդ։

—Այդ դո՞ւ ես ասում, Աշխէն,—շշնջաց նա, սարսափահար թեքուելով դէպի նրա դէմքը։

Աշխէնը, պատասխանելու տեղ, նորից խոնարհուեց ծնկների վրայ, դէմքն առաւ ձեռքերի մէջ, և նրա ուսերն ու մէջքը սաստիկ ցնցուեցին։

Եւան մի ձեռքով գրկեց նրա իրանը, միւս ձեռ-

քով՝ գլուխը և շրթունքները սեղմեց նրա բարակ նիհար վզին։

Կարեկցութեան և ողջագուրանքի այդ լուռ արտայայտութիւնից Աշխէնն այլևս չկարողացաւ զսպել խեղդող հեկեկանքը։ Նա սկսեց լալ ծանր և ուժգին. լալիս էր տղամարդի պէս, քարէ արտասուքներով։

XVI

Աշխէնը գրեթէ ամենևին դուրս չէր գալիս իր սենեակից։ Թէյի, ճաշի և ընթրիքի ժամանակ միայն, երբ նրան հրաւիրում էին սեղանատուն, դուրս էր գընում հանդարտ քայլերով, ցոյց էր տալիս, թէ ուտում, խմում է, բայց իսկապէս ոչինչ չէր ուտում, ոչինչ չէր խմում և նորից փակւում էր իր սենեակում։ Եւ այդ բոլոր ժամանակ լուռ էր, ձկան պէս։ Մինչև որ բան չէին հարցնում, ինքն ամենևին չէր խօսում։ Նրա դէմքը այնքան անշարժացել, քարացել էր, որ թւում էր, թէ այլևս ոչ մտածում է, ոչ զգում։ Օր. Սահակեանն ամեն օր այցելում էր նրան և ամեն անգամ հեռանում էր խիստ մտահոգ դրութեան մէջ։ Պակաս մտահոգ դրութեան մէջ չէր նաև Մարութեանը, որին խիստ ազդել էր եղբօր աղջկայ վիշտը։ Նոյն իսկ Թեկլէն, մոռանալով իր դրութիւնը, ամեն անգամ հոգացողութեամբ հարցնում էր Աշխէնին, թէ ինչո՞ւ է այդպէս, հիւանդ խօ չէ՞։ Իսկ Եւան պարզապէս յուսահատուած էր։ Ոչինչ այնքան չէր վախեցնում նրան, որքան Աշխէնի տարօրինակ հանգստութիւնը և լռութիւնը։ Պատահում էր երբեմն, որ ինքը մինչև անգամ ամբողջ ժամերով խօսում էր հօրեղբօր աղջկայ հետ և Աշխէնի բերանից գրեթէ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսում։ Նրա սիրտը ճաքում էր, նա ընկնում էր Աշխէնի ոտ-

ները և արտասուալից աչքերով աղաչում-պաղատում էր, որ ձայն հանի, բան ասի։ «Ի՞նչ ասեմ, Եւա»,— այդ էր լինում Աշխէնի պատասխանը։

Եւան իր մահճակալը տեղափոխել էր Աշխէնի սենեակը, որպէսզի գիշերները նրան մենակ թողած չլինի։ Ամեն գիշեր, երբ, բարի գիշեր մաղթելով, ցոյց էր տալիս, թէ քնում է, վերմակի տակից երկար ժամանակ դիտում էր Աշխէնին և տեսնում էր, որ նա, անշարժ պառկած, վշտահար կեղրոնացած հայեացքով անթարթ նայում է անորոշ տարածութեան մէջ։ Երբ այնուհետև, առաւօտները, Եւան նայում էր նրան, տեսնում էր, որ նա կամ ամենևին չի քնել, կամ շատ քիչ է քնել—այնքան նրա դէմքը գունատ, աչքերը ուռած, կարմրած և մեռած էին լինում։

Աշխէնի այդ վիճակը տեսնելով, Եւան մոռացել էր իր սեպհական վիշտը։ Նա մտաբերում էր Աշխէնի վերջին նամակը, համեմատում էր այդ նամակի մէջ արտայայտած ուրախութիւնը հօրեղբօր աղջկայ այժմեան թշուառութեան հետ, և անհուն կարեկցութիւնից ճմլւում էր նրա սիրտը, արտասուքով լցւում էին նրա աչքերը։ Զգում էր, որ եթէ Աշխէնը վշտի և յուսահատութեան արտասուքներ թափէր, խօսքեր արտասանէր,—այնքան չէր ազդել իրեն, որքան ազդում էր իր այդ վերին աստիճանի խաղաղ դրութեամբ, այդ հանդարտ, ցամաք աչքերով, այդ անտրտունջ լռութեամբ։ Նրա առաջ ներկայանում էր վերին աստիճանի սրտաշարժ մի պատկեր. նա տեսնում էր, որ բարձրաձայն բողոքելու իրաւունք ունեցողը լուռ և անտրտունջ խոնարհւում է իր ճակատագրին։ Դա զուտ քրիստոնէական համբերութեան փառաւոր մի յաղթանակ էր, որ մի աղջիկ, մի թոյլ արարած, կարողանում էր մարմնացնել իր մէջ։

Աշխէնի անհուն վիշտն այդպիսի արտայայտութեամբ իսկապէս ոչ թէ վիշտ էր ներկայանում Եւային, այլ հոգին ու սիրտը վեհացնող, մարդուն իր բոլոր մարմնական-անցողականը մոռացնող և աստուածութեան հասցնող գերբնական մի երջանկութիւն, որին նախանձում էր բոլոր սրտով։ Եւ ինչպէս չնախանձէր, երբ, կամայ-ակամայ համեմատելով, տեսնում էր, թէ ինչ ահագին վիհ կար իր սիրած երիտասարդի — Բազէնեանի և Աշխէնի սիրած երիտասարդի—Արմենակի միջև։ Եւ մինչդեռ ինքն իր սիրած երիտասարդի լոկ անունն անգամ միշտ քստմնելով պիտի յիշի, Աշխէնը, ընդհակառակը, ցմահ պաշտելով, շարունակ պիտի փայփայի իր սրտի խորքում այն երիտասարդի յիշատակը, որի շրթունքները մահուան վերջին րոպէին, ո՞վ գիտէ, գուցէ նրա անունն են շշնջացել։ Գոնէ Եւան այնպէս էր զգում, որ ինքը չափազանց երջանիկ կըլինէր, եթէ իր սէրը ծագէր նման պայմաններում, ինչպէս Աշխէնինը, և իր սիրած երիտասարդը դէթ հեռաւոր կերպով նման լինէր Արմենակին և մեռնէր նման գործի համար, նման պարագաներում, ինչպէս Արմենակը...

Մի գիշեր, երբ Եւան, իր մահճակալի վրայ պառկած, գաղտագողի կերպով դիտում էր Աշխէնին և անձնատուր էր եղել այդպիսի մտածմունքների, տեսաւ, որ Աշխէնը վերկացաւ անկողնից, մօտեցաւ իր մահճակալին և խոնարհուեց իր դէմքի վրայ։ Նա, վախեցած, վերմակը յետ քաշեց գլխից և նայեց հօրեղբօր աղջկայ աչքերին։

—Դու քնած չէ՞ս, Եւա,—հարցրեց Աշխէնը։

—Չէ։

—Թո՞յլ կըտաս մօտդ պառկեմ։

Եւան լուռ տեղ տուեց նրան իր մահճակալի վրայ։

Աշխէնը պառկեց և գրկեց նրան։

—Յիշո՞ւմ ես, Եւա, վերջին նամակս,—հարցրեց նա։

—Յիշում եմ։

—Գրել էի թէ, որ վերադառնամ, այսպէս միասին պիտի քնենք, այսպէս գրկած։ Յիշո՞ւմ ես։

—Ինչպէս չէ։

Աշխէնը մի շատ թոյլ թառանչ քաշեց։

—Որ գիտենաս, Եւա, ինչքան ուրախ էի այդ նամակը գրելիս... Կամայ-ակամայ հաւատում ես մեր պառաւների այն նախապաշարմունքին, որ ասում է, թէ՝ խիստ ուրախացողը շուտ կըտխրի։ Երեխան որ շատ է ծիծաղում, ասում են՝ լացի հոտ է գալիս։ Միակ երջանկութիւնը, իրական, շօշափելի երջանկութիւնն ինձ համար այն պիտի լինէր, որ նորից պիտի տեսնէի քեզ, հայրիկին, մայրիկին, Սուրէնին, Վարօյին։ Ահա, քանի օր է եկել եմ և տեսնում եմ ձեզ, բայց ո՞ւր է այն երջանկութիւնը, որ պիտի վայելէի, ո՞ւր է... Այդ երջանկութիւնն այն րոպէից թունաւորուեց, ես այն երջանկութիւնն այն րոպէից սպանուեցի, երբ երկաթուղու կայարանում չըրոպէից սպանուեցի, երբ երկաթուղու կայարանում չըտեսայ ձեզնից ոչոքի։ Վարօն որ ասաց, թէ չէք եկել, ինձ այնպէս թուաց, թէ մինչև այդ ժամանակ թռչում էի օդի մէջ, թեթև, ծոի պէս, բայց յանկարծ թևերս կոտրեցին, և ես ցած ընկայ... Այժմ, երբ անցել են սարսափելի հարուածի առաջին օրերը, և ես կարծես մի խոր թմրութիւնից ուշքի եմ եկել, գիտե՞ս ում մասին եմ մտածում։ Մտածում եմ ձեր մասին—հայրիկի մասին, մայրիկի մասին, քո մասին, Եւա ջան։ Այսօր առաջին անգամ սարսափեցի, որ նայեցի մայրիկին. որքա՜ն նիհարել է, որքա՜ն ցամաքել։ Իսկ հայրիկը... ո՞ւր է նրա այն մշտական զուարթութիւնը, նրա այն վարակիչ աշխոյժն ու եռանդը։ Իսկ դո՛ւ, դո՛ւ, Եւա ջան... ո՞ւր է, ինչո՞ւ այլ ևս չի հնչում քո արծաթահնչ

չիւն ծիծաղը... Այս ինչ է պատահել ձեզ։ Մթթէ ձեզ էլ, մանաւանդ քեզ, Եւա Ջան, վիճակուած է ինձ նման չորացած մի ծառ դառնալ, կենսունակութեան բոլոր հիւթից զրկուած։ Այդ սոսկալի է... Երբէք իմ օրինակը թող խրախուսանք չլինի քեզ համար, երբէք։ Յիշում ես այն խօսքերը, որ ասացիր ինձ գիւղ գնալուս օրը. «Օ՜, Աստուած չանէ,—ասացիր, որ երբևիցէ չոր ուղեղն իշխէ իմ մէջ։ Ամենամեծ դժբաղդութիւնն ինձ համար այն օրը կլինի,—ասացիր, երբ ես դադրեմ սրտով մտածելուց»։ Սրտով մտածելուց... Մի մոռանար, Եւա, այդ հրաշալի խօսքերը և լաց եղիր, աղաղակիր, բողոքիր նոյն իսկ իրեն՝ Աստծու դէմ, բայց երբէք, երբէք մի զսպիր քեզ ինձ պէս և ինձ նման մի ասիր, թէ՝ ինչ օգուտ դրանից։ Այդ մահ է, աւելի վատ, քան մահը։ Պարզ օրինակն աչքիդ առաջն եմ։ «Սիրտս լցուած է թոյնով. վշտից քիչ է մնում խելագարուեմ. ուզում եմ գժի նման աղաղակել, ուզում եմ բարձրաձայն անիծել և հայհոյել ամենքին և ամեն ինչ, բայց սառն դատողութիւնս, — ո՜, այս գարշելի սառն դատողութիւնը, այս չոր ուղեղը, — ասում է ինձ՝ «ինչ օգուտ դրանից»։ Բայց և ինչ օգուտ այս սառն դատողութիւնից, այս չոր ուղեղից։ Մթթէ, որ զսպում եմ ինձ, որ սառն դատողութեամբ աւելորդ բան եմ համարում յուսահատական աղաղակներ բարձրացնելը, տրտնջալը, բողոքելը,—մթթէ այդպիսով չեմ տանջւում կամ պակաս եմ տանջւում։ Ընդհակառակը։ Ամեն անգամ, երբ արտասուքը գալիս, բռնում է բուկս, երբ անդիմադրելի պահանջ եմ զգում լաց լինելու, վշտից և յուսահատութիւնից մաղերս փետելու և, սառն դատողութեանս հետևելով, զսպում եմ ինձ,— ես միևնոյն տանջանքն եմ զգում, ինչ տանջանք որ կըզգար ծարաւից պապակող այն մարդը, որ ջրի տեղ

հալած արճիճ խմէր։ Մինչև այժմ ինքս ինձ պարծեցել եմ նրանով, թէ իմ մէջ զարգացրել եմ ասկետական համբերութեան այնպիսի աննկուն մի ոյժ, որով կարող եմ յաղթահարել ամեն բանի. բայց այժմ, կրիտիքական այս վայրկեաններին եմ միայն զգում, թէ դրանով ինչ սոսկալի թշուառութեան աղբիւր եմ պատրաստել ինձ համար։ Երևակայիր, որ երբեմն նոյն իսկ այնպէս է թւում ինձ, թէ վիշտս կեղծ է, որովհետև ինչո՞ւ չպէտք է ամեն գիշեր ողողեմ բարձս արտասուքներով, ինչո՞ւ չպէտք է խելագարուեմ վշտից, ինչո՞ւ այսպիսի մի ճգնաժամին կարողանում եմ այսպէս և այս աստիճան սանձահարել ինձ։ Ի՞նչ է նշանակում այս.—մթթէ այն, որ ես արհեստական կերպով դուրս եմ շպրտել ինձ բնական օրէնքների սահմանից և խարխափում եմ ինչ-որ անծանօթ, ոչ-մարդկային, վայրենի զգացումների և մտածողութիւնների աշխարհում... Լսիր, Եւա։ Մի լռիր այդպէս, խօսիր։ Ասա, գուցէ, յիրաւի, սիրտս մեռել է արդէն, գուցէ խսպառ կորցրել եմ արդէն զգալու ընդունակութիւնը, գուցէ վիշտս երևակայում եմ միայն, այլ ոչ զգում... Ասա, Եւա Ջան, ասա աղաչում եմ. ինչ ես մտածում, ինչ է մտածում այս մասին քո... սիրտը։

—Իմ սիրտը,—շշնջաց Եւան և, գրկելով Աշխէնի իրանը, պինդ սեղմեց կրծքին։—Ականջ դիր և կըլսես, թէ ինչ է մտածում սիրտս.—Նա նախանձում է քեզ...

Աշխէնը ձեռքով արագ փակեց նրա բերանը։

—Նախանձո՞ւմ,—զարմանքով և սարսափով արտասանեց նա։—Անմիտ, այդ ինչ ես ասում...

—Այո՛, նախանձում եմ քեզ, Աշխէն, ամբողջ սրտովս նախանձում,—եռանդով վրայ բերեց Եւան,—որովհետև ես հաղարապատիկ աւելի թշուառ եմ, քան թէ դու... Դու չգիտես, դու ոչինչ չգիտես... Եթէ իմա-

նաս, թէ քո բացակայութեան ժամանակ ինչեր են պատահել ինձ... Այդ մասին մինչև այժմ ոչինչ չեմ ասել քեզ, նամակներումս էլ ոչինչ չեմ գրել, որովհետև կամեցել եմ մոռացութեան տալ այն, ինչ որ պատահեց։ Իսկ այն, ինչ որ պատահեց, այն աստիճան վշտացրել է սիրոս, այն աստիճան վրդովել է հոգիս, որ ինձ թըւում է, թէ ես այլևս այն չեմ, ինչ որ առաջ։ Գիտես, թէ առաջ ինչքան միամիտ էի, ինչքան պայծառ ու մաքուր հայեացք ունէի մարդկանց և աշխարհի վրայ. իսկ այժմ ամեն ինչ կեղծ, սոսոր, զզուելի է թըւում ինձ և այնքան խարդախ, որ ես պատրաստ եմ նոյն իսկ ամենամեծ սրբութեանը չհաւատալ։ Կուսական անդրանիկ սիրոյս սրբութիւնն ես անարգուած տեսայ դեռ ևս իր սաղմի մէջ։ Եւ անարգողը երևակայիր, նա էր, որին պատրաստ էի նուիրաբերել այդ սէրը։ Թերևս այնքան չվշտանայի, այնքան չվրդովուէի, եթէ սիրոյս հետ սերտ կերպով կապուած չլինէր մի վանեմ գործ, որի համար զոհեց և մեռաւ եղբայրս։ Եւ այդ պատճառով, ահա, անարգուած սիրոյս մէջ անարգուած տեսայ ոչ թէ միայն սրտիս նորածին սրբութեան սրբոցը, այլ և—անգին եղբօրս գործունէութիւնը, նրա պաշտելի յիշատակը։ Լսիր, քոյրիկ, այժմ այլևս չեմ կարող լուել, բոլորը պիտի խոստովանեմ առաջին և վերջին անգամ։ Եւ այս ոչոք չգիտէ և ոչոք չպիտի իմանայ, բացի քեզնից։

Եւ Եւան մանրամասնօրէն սկսեց պատմել այն դէպքը, որ առիթ էր եղել ծանօթանալու և բարեկամանալու Բազէնեանի հետ. նոյնպիսի մանրամասնութեամբ պատմեց Բազէնեանի հետ ունեցած յարաբերութիւնները, տեսակցութիւնները, խօսակցութիւնները. թէ ինչ կարծիք ունէին սկզբում նրա մասին և թէ ինչպէս յետոյ իմացան, որ նա խաբեբայի մէկն է եղել։ Եւան պատմում էր վառ գոյներով և որքան պատ-

մութիւնն առաջ էր պանում, այնքան վարուում էր. այն տեղերում, ուր Բազէնեանի խաբեբայութիւնն էր պատմում, նրա ձայնը հնչում էր պնդուսպ գարշանքով։ Տպաւորութիւնները դեռ ևս այնքան թարմ էին, որ նրան թուում էր, թէ իր պատմած դէպքերը հէնց այդ րոպէին էին կատարուում։

Աշխէնն ապուշ էր կորուել։ Նա մոռացել էր իր վիճակը և ագահութեամբ պակնջ էր դնում Եւայի կըրակոտ խօսքերին։ Եւայի պատմութեան ամբողջ ընթացքում խօսք չէր գտնում ասելու—այնքան այդ պատմութիւնը նորութիւն էր նրա համար։

—Ասա, ինչ կըզգայիր դու,—բացականչեց Եւան, պատմութիւնը վերջացնելուց յետոյ,—երբ յանկարծ իմանայիր, որ Արմենակն այն չի եղել, ինչ որ կարծում էիր, ինչի համոզուած, ինչի հաւատում էիր անպայման։ Կապշէիր, կըվրդովուէիր, կըկատաղէիր, կըյուսահատուէիր, չէ՞, երբ տեսնէիր, որ քո պաշտած երիտասարդը, որի մէջ իղձերիդ, բաղձանքներիդ մարմնացումն էիր տեսնում, ոչ այլ ինչ է եղել, եթէ ոչ մի եղուկտ, մի խաբեբայ, ամենաստորին տեսակի մի աֆերիստ, որի համար ամեն ինչ լաւ է և աղնիւ, բացի լաւից և աղնիւից, որի համար ամեն ինչ սուրբ է, բացի սրբութիւնից։ Այդ միևնոյնը զգացի ես և զգում եմ դեռ այս րոպէիս էլ։ Սիրել և յանկարծ ատել նրան, ում սիրում էիր, գարշել նրանից,—չէ՞ որ այդ վիճակի մէջ կարելի է խելագարուել։ Եւ երբ մտածում եմ, որ եղբօրս այնտեղ սպանեցին չարաչար, իսկ սա շրջում է այստեղ անհոգ ու երջանիկ, միամիտներին խաբելով այն գործի անունով, որի համար զոհուեց եղբայրս... Ասում ես՝ բողոքիր։ Քեզ պէ՞ս եմ ուզում բողոքել։ Բայց ո՞ւմ դէմ, ասա, ո՞ւմ դէմ։ Ցոյց տուր, ասա, ո՞վ է այս անարդարութեան տնօրինողը, շոշափելի կերպով

դիր դրան իմ առաջ, և կըտեսնես, թէ ինչպիսի զայրոյթով սրտիս բոլոր մաղձը կըթափեմ նրա վրայ։ Չկայ, չես կարող։ Իսկ լոկ երևակայութեամբ ստեղծել այսպիսի բոլոր անարդարութիւնների մի սկզբնապատճառ,—այդ թէ շատ քիչ է և թէ դրա վրայ չես կարող զայրոյթդ թափել։ Շօշափելի մարմին եմ ուզում ես, մի մարմին, որ երևար աչքիս առաջ իբրև նիւթ, որպէսզի անզուսպ ցասումով ապտակ տայի երեսին և ասէի՝ դու անարդար ես, դու իրաւունք չունիս այդպէս վարուելու... Ա՛խ, քոյրիկ, որ իմանաս, թէ երբեմն ինչ սոսկալի մտքեր են անցնում գլխովս... Գիտես, թէ ինչքան անգութ կերպով ենք վարուում մենք, մարդիկս, անասունների հետ. մենք ծեծում ենք շներին, մենք տանջում ենք ձիերին, մենք հրացանի գնդակով գետին ենք տապալում օդում իր համար ազատ թռչող թըռչունը, մորթում ենք դեռ երէկ ծնուած գառը և կարծես թէ, որովհետև այդ բոլորը մենք կարողանում ենք անել, այդ մեր իրաւունքն է, և խիղճը չի տանջում մեզ։ Ինձ թւում է, թէ մենք, մարդիկս էլ, նոյն այդ անկար անասունների դերն ենք խաղում մեզ անհասկանալի մի էակի ձեռքի, որ ամենաանգութ կերպով տանջում, չարչարում է մեզ, որովհետև կարողանում է։ Ու թպրտում ենք նրա ձեռքին, թպրտում իզուր, ինչպէս հաւը դանակի տակ, և ազատում չկայ մեզ—երբէք, յաւիտեան... Ո՞վ է նա, ի՞նչ է նա, ո՞ւր է նա,—ինչո՞ւ չգիտենք և ինչո՞ւ չգիտի կարողանանք մեր վրէժը լուծել...

Աշխէնը, որ այս անդամ պարզապէս սարսափով էր նայում Եւայի վառուած աչքերին, այլ ևս չկարողացաւ դիմանալ, կարծես նրան մի վտանգաւոր ինքնամոռացութիւնից հանելու համար, կամաց գրկեց նրա իրանը և շշնջաց.

—Լռի՛ր, Եւա, լռի՛ր... Զնայելով, որ դու այն ես ասում, ինչ որ ես եմ մտածում, բայց... Այդ սարսափելի է։ Լուռ մտածածն այնքան զգալի չէ, որքան այն, երբ այդ մտածածը խօսքերով է արտայայտուում։ Մըտքումդ ամենայն հանգստութեամբ կարող ես հայհոյել, բայց բարձրաձայն—այդ շատ ծանր է։ Այդ ես նոր եմ զգում, երբ դու պահանջում ես մեր բաղդը տնօրինողին, որպէսզի... Ո՛չ, ես յետ եմ առնում իմ խօսքերը, Եւա, որովհետև... Ա՜խ, մի՞թէ մենք այնքան թուլամորթ ենք, որ չենք կարող մոռանալ մեր անձը, որպէսզի մեր հոգին այսքան չպղտորուի։ Նկատիր, որ մեր այս բոլոր տրտունջները ոչ այլ ինչ են, եթէ ոչ տկար հոգու յուսահատական ողբ այն բանի համար, որ մեր անձնական երջանկութիւնը կորցրել ենք։ Ինչո՞ւ միևնոյն ողբը չենք բարձրացնում մենք, երբ տեսնում ենք ուրիշի թշուառութիւնը։ Ինչո՞ւ ենք թոյլ տալիս, որ մեր հոգին այնքան նեղ լինի, որ, բացի մեր անձից, ուրիշ ոչոքի համար տեղ չունենայ իր մէջ։ Եւ արդեօք այս եսասիրութիւնը չէ՞ պատճառը, որ մենք այսքան տանջուում ենք։ Ո՛չ, ո՛չ, Եւա ջան, էլի՛ հնազանդութիւնը, էլի՛ լռութիւնը, էլի՛ անձնուրացութիւնը—այդ է միակ ճանապարհը հոգու և մտքի այս սարսափելի քաոսի մէջ չմոլորուելու համար։ Վերջին նամակիս մէջ գրել էի քեզ, թէ գտել եմ երջանկութեան ուղիղ ճանապարհը։ Դու գիտես, թէ ո՞րն է այդ ճանապարհը։ Եւ քանի որ ոտս դրել եմ արդէն այդ ճանապարհի վրայ, պիտի գնամ առաջ մինչև վերջին շունչս։ Այս խորհրդաւոր ժամին, երբ ես կեանքիս ամենածանր բոպէներն եմ հաշուում, երբ անդառնալի կերպով արդէն թաղել եմ անձնական բաղդաւորութեանս միակ յոյսը,—այս ճգնաժամին շպրտում եմ ձեռնոցս բաղդիս երեսին և աղաղակում՝ ինձ համար այլևս գո-

յութիւն չունի անձս։ Ես կարծում էի, թէ Արմենակի մահով հանգել է լուսատու աստղս, մինչդեռ, ընդհակառակը, այժմ է, որ այդ աստղը լուսաւորում է ճանապարհս առաջուանից աւելի պայծառ և կանչում է ինձ... Եւ ես պիտի գնամ նրա ետևից, պիտի գնամ, պիտի գնամ...

—Եւ ինձ էլ պիտի տանես քեզ հետ,—շշնջաց Եւան, սրբաղան մի սառուցեալ զգալով իր մարմնի մէջ Աշխէնի խօսքերի աղդեցութեան տակ։

Աշխէնը պինդ գրկեց Եւայի իրանը։

—Գնանք, գնանք միասին նրա ետևից,—ասաց նա էքստազի մէջ։

XVII

Հետևեալ օրն առաւօտեան, երբ օր. Սահակեանը գնաց Աշխէնին տեսնելու, ինչպէս անում էր ամեն առաւօտ, Աշխէնը նամակ էր գրում։ Նախկին օրերի հետ համեմատած, այս անգամ նկատելի չէր այն բթացած վիշտը, որ իր կնիքն էր դրել նրա դէմքի վրայ և խօսակցութեան ու շարժումների մէջ։ Նա թողնում էր ծանր հիւանդութիւնից նոր առողջացած մարդու տպաւորութիւն։ Այդ անակնկալ փոփոխութիւնը խիստ ուրախացրեց օր. Սահակեանին։

—Փառք Աստուծու, որ այսօր լաւ ես,—բացականչեց նա։—Լաւ ես, չէ՞։

—Այո, վիշտս կարծես թէ արդէն... հնացաւ,—հեգնեց Աշխէնը դառնութեամբ ժպտալով։

—Ա՜, դու մինչև անգամ ժպտում ես,—ծիծաղեց օր. Սահակեանը և, չափազանց ուրախութիւնից գրկելով, պինդ համբուրեց նրան։—Որ իմանաս, սիրելիս, որքան մտահոգութիւն էր պատճառում ինձ դրութիւնդ,

թէև գիտէի, որ դա անցողակի է և բնութիւնդ կըյաղթի։ Դու միշտ քաջ ես եղել և քաջ էլ մնացիր։ Կեցցէ՛ս։ Բայց քեզ մի ուրախալի լուր հաղորդեմ. Մինասեանն այստեղ է։

—Այստե՞ղ է։

—Երէկ է եկել։ Երեկոյեան ինձ մօտ էր։

—Բայց նա ինձ ոչինչ չի ասել, թէ գալու է։ Ինչո՞ւ է եկել։

—Նոր գիրք է ուզում հրատարակել։

—Ճիշտ է, նա մի նոր բան է պատրաստել, բայց ասում էր, որ ամառը կըյանձնի տպագրութեան։

—Բո գալուց յետոյ միտքը փոխել է։

—Իսկ ես սրան նամակ էի գրում այս բոպէիս։

—Ի՞նչ էիր գրում։

—Գրում էի, որ մի-երկու շաբաթ կուշանամ։

—Ինչո՞ւ։

—Որովհետև չի՞ կարելի խօ սրանց այսպէս թողնել։

«Սրանց» բառն արտասանելիս Աշխէնը ցոյց տուեց հարևան սենեակի դուռը, դրանով հասկացնել ուզելով, թէ խօսում է հօրեղբօր ընտանիքի մասին։

—Նոր եմ տեսնում, թէ ինչ սոսկալի փոփոխութիւն է կատարուել այստեղ։ Հօրեղբօրս որ նայում եմ, ուղղակի չեմ ճանաչում։ Էլ չեմ խօսում նրա կնոջ մասին։ Իսկ Եւան... Իսկապէս Եւայի համար է, որ ուզում եմ մնալ։ Մենակ թողնել նրան այս մեռելութեան, այս վշտի մէջ—նշանակում է թողնել, որ նա... Չեմ իմանում, ճշմարիտ, ինչ կըպատահի նրան,—այնքան վտանգաւոր ընթացք են ստացել նրա մտածմունքները։ Երէկ գիշեր մենք երկար խօսում էինք. պարզապէս չէի հաւատում ականջներիս, թէ ինձ հետ խօսողն Եւան է, իմ ճանաչած կենսաթրթիռ Եւան... Կրմնամ,

անպատճառ կըմնամ մի-երկու շաբաթ աւելի և մինչև անգամ մտածում եմ, որ ինձ հետ գիւղը տանեմ նրան։ Յամենայն դէպս, մենակ թողնել նրան այստեղ անկարելի է։

—Դու նրա մասին ես հոգում, իսկ նա՝ քո մասին։ Այդպէս էլ պէտք է. դուք կը փրկէք իրար։

Այդ միջոցին մտաւ Եւան։

—Արի, արի այստեղ. այս րոպէիս քո մասին էինք խօսում,—ասաց օր. Սահակեանը։

Եւան հարցական հայեացքով նախ նայեց նրան, յետոյ Աշխէնին։ Աշխէնը գլխով արեց նրան և ժպտաց քնքոյշ սիրոյ ժպիտով։ Այդ ժպիտը խիստ զուարթացրեց Եւային։

—Բամբասում էիք ինձ,—հարցրեց նա։

—Ի հարկէ, բամբասում։ Աշխէնը ասում էր, որ մտածմունքներդ ինչ-որ վտանգաւոր ընթացք են ստացել. բայց, կարծեմ, դու այնքան խելօք աղջիկ ես, որ...

—Իմ խելքը մի կողմ թող, վաղօ, և ինձ այս ասա. թողնե՞մ, որ Աշխէնը մի-երկու շաբաթ աւելի մընայ ինձ մօտ։

—Ի՞նչ է, մի՞թէ չես ուզում։

—Չե՛մ ուզում,—բացականչեց Եւան և գրկեց Աշխէնի գլուխը։ Ես կուզէի մինչև անգամ փեշս փեշիցը կարել, որ երբէք չհեռանայ ինձնից, բայց այդ զոհաբերութիւնն անել ինձ համար ի՞նչ գործի...

—Բայց գիտե՞ս, Եւա ջան, Մինասեանն այստեղ է,—ասաց Աշխէնը։

—Մի՞թէ։ Ո՞վ ասաց։

—Վաղօյի մօտ է եղել երէկ երեկոյ։

—Հա՜-ա։ Ցեռոյ, ինչո՞ւ չի գալիս մեզ մօտ։

—Երևի, կըգայ,—ասաց օր. Սահակեանը։—Բայց

զարմանալի մարդ է. գիտեմ, որ աղքատ է, իսկ հիւրանոցներում կողոպտում են. խնդրեցի, որ գայ մեր տանը մնայ, չկամեցաւ։

—Ուո՛ւ, ի՞նչ լաւ բան ասացիր, — բացականչեց Եւան։—Գիտե՞ս ինչ կայ, Աշխէն. արի հրաւիրենք, որ մեր տանը մնայ. ազատ տեղ խօ շատ ունինք։ Հը՞, ի՞նչ ես կարծում, լաւ միտք չէ՞։

—Չի գալ,—ասաց օր. Սահակեանը,

—Չի գալ,—պնդեց Աշխէնը։

—Կըգայ։ Հայրիկիս կասեմ, որ բերի։ Սպասեցէք։

Եւան դուրս վազեց և մի-երկու րոպէ չանցած՝ ներս մտաւ հօրը։

—Հայրիկ, խօսք տուր սրանց մօտ, որ Մինասեանին կըհրաւիրես մեր տուն։

—Ո՞րտեղ է իջած, ասացէ՛ք, ես իսկոյն կըգնամ նրա մօտ,—ասաց Մարութեանը։

—Չի գալ, պարո՛ն Մարութեան,—ասաց օր. Սահակեանը։—Մեր տանն աւելի համարձակութեամբ կըմնար, բայց վճռապէս մերժեց։

—Այդ ե՞ս գիտեմ։ Դուք ինձ ասացէք որտեղ է իջած։

—«Ֆրանսիա» հիւրանոցում։

—Այս րոպէիս գնում եմ նրա մօտ։ Իսկ դուք գրաղ եկէք՝ կըբերեմ թէ ոչ։

—Նա կըգայ, ի հարկէ, այցելութեան,—ծիծաղեց օր. Սահակեանը։

—Չէ՛, կըբերեմ իր իրեղէններով, — վրայ բերեց Մարութեանը և շտապով դուրս գնաց։

Նա անմիջապէս գիմեց դէպի «Ֆրանսիա» հիւրանոց։ Զափազանց ուրախ էր. ուրախ այն պատճառով, որ աղջկան և Աշխէնին այնքան զուարթ էր տեսնում այդ օրը։ Քայլում էր կայտառ քայլերով և զգում էր,

թէ վերադարձել է իր նախկին աշխոյժը։ Եւ շրջապատը աւելի քան յարմարում էր նրա տրամադրութեանը։ Օրթոդոքսների Ծննդեան տօներն էին և մօտենում էր նոր տարին։ Փողոցները լիքն էին ցնծալի դէմքերով։ Օդն աղմկւում էր ուրախական բացականչութիւններով։ Մարդիկ և կանայք, իրար անցած, մըրջիւնների պէս, տանում էին՝ ոմանք — տօնածառ, ոմանք — կողոմներով լի ուտելեղէն, ոմանք—փաթեթների մէջ նոր հագուստեղէն, ոմանք—ով գիտէ ինչ, միայն թէ ամենքը մի բան տանում էին, շտապում էին ուր-որ, ոչոք պարապ չէր, ամենքը զբաղուած էին և ամենքի դէմքի վրայ տօնական ցնծալի արտայայտութիւն կար։ Եւ ձմեռային սառնամանիքն ուրոյն գրաւչութիւն էր տալիս այդ ընդհանուր կենդանութեանն ու ժխորին։

«Ֆրանսիա» հիւրանոցում Մարութեանը Մինասեանին գտաւ իր սենեակում թէյ խմելիս։ Մինասեանը նստած էր ձմեռային բաւական հնացած վերարկուով և գլխարկով. առաջը դրած էր ձեռագիր մի տետրակ և համ թէյ էր խմում, համ մատիտով ուղղում ձեռագիրը։ Սկզբում բաւական շփոթուեց և չճանաչեց Մարութեանին, բայց երբ Մարութեանը տուեց իր անունը, գլխարկը վերցրեց և պինդ սեղմեց նրա ձեռքը։

—Պէտք է ներէք ինձ, որ չճանաչեցի, — ասաց նա.—չէ՞ որ ձեզ միայն մի անգամ եմ տեսել և, բացի դրանից, դուք չափազանց փոխուել էք. ես ձեզ այդպէս ծերացած չեմ տեսել երեք ամիս առաջ։

Մարութեանը հառաչեց։

—Մթթէ դուք դեռ չէք իմացել մեզ պատահած դժբաղդութիւնը։

—Այո, օրիորդ Սահակեանը ինձ պատմեց երէկ։ Ձեր որդու մահը չափազանց ցաւալի է։

—Ի՞նչ արած։ Նախախնամութեան տնօրինութիւնը մնրդս չի կարող հասկանալ. գուցէ որդուս մահն անհրաժեշտ էր այն գործի համար, որի համար մեռաւ. գուցէ նա աւետարանական ցորենի այն հատիկն էր, որ մեռնում է բազում արդիւնք տալու համար,—ով գիտէ... Գոնէ ես աշխատում եմ դրանով մխիթարուել և, փառք Աստուծոյ, շատ էլ չեմ ընկճւում, թէև ասում էք, որ ինձ այսպէս ծերացած չէք տեսել երեք ամիս առաջ։ Երեք ամիս առաջ... Մթթէ կարծում էք, որ երեք ամիսը կարճ ժամանակ է ծերանալու համար։ Ծերանալ կարելի է մի օրում, մի ժամում, մի րոպէում։ Եւ եթէ ձեզ ասեմ, որ ես ծերացայ մի րոպէում, թերևս չհաւատաք։

—Խնդրում եմ, պարոն Մարութեան, այդ մի ասէք, վրայ բերեց Մինասեանը եռանդով։—Ես լիովին հասկանում եմ ձեր դրութիւնը և...

—Ինչևիցէ, ինչևիցէ, այդ թողնենք։ Ես դրա համար չեմ եկել։ Ես եկել եմ ձեզ յանդիմանելու, որ ուղղակի մեր տուն չէք իջել։ Մենք պարզ ընտանիք ենք. մեզնից խորշելու ամենևին հարկ չկայ, մանաւանդ, որ ձեր վարժուհին մեր աղջիկն է։ Խնդրում եմ, վեր կացէք գնանք։

Մինասեանն ուզում էր հրաժարուել, բայց Մարութեանը լսել անգամ չկամեցաւ։

—Մթթէ կարելի է այսպիսի ցուրտ սենեակում ապրել,—բացականչեց նա։—Ահա, դուք մինչև անգամ թէյ խմելիս ստիպուած էք վերարկուով նստել։ Ես էլ վերարկուս չեմ հանում, որովհետև սարսափելի ցուրտ է այստեղ։ Խնդրեմ, վերջացրէք ձեր թէյը, և մենք իսկոյն կըհաւաքենք ձեր ունեցած-չունեցածն ու կըգնանք մեր տուն։ Փառք Աստուծոյ, ազատ տեղ ունինք։ Ի նկատի ունեցէք, որ ես իսկապէս յատուկ պատգամա-

ւոր եմ ուղարկուած մերոնց կողմից։ Օր. Սահակեանն էլ այս լոպէիս մեր տանն է։ Ես ուզում եմ, որ այս տօներին ձեր միջոցով մի քիչ կենդանութիւն մտնի մեր տուն, թէ չէ վիշտը մեզ ամենիս էլ սպանում է։ Դէ, շուտ արէք. ես սպասում եմ։

Ճար չկար։ Մինասեանը հաւաքեց իր ունեցածչունեցածը, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ իր ջարդուած ճամպրուկն ու նախնջին, և կէս ժամից յետոյ Մարութեանը նրան իրենց տուն էր տանում կառքով։

Եւան, Աշխէնը և օր. Սահակեանը հաւաքուած էին Թեկլէի մօտ, երբ Մարութեանը յաղթական կերպով ներս տարաւ Մինասեանին։ Ընդունելութիւնը շատ սիրալիր էր, բայց ընդհանուր տրամադրութիւնն առժամանակ խանգարեց Թեկլէն, որը, Մինասեանի մխիթարական խօսքեր ասած ժամանակ, սկսեց սովորական ողբն իր որդու մահուան համար։ Մի բան, որ իսկոյն նկատեց Մինասեանը, այդ՝ Աշխէնի մէջ կատարուած փոփոխութիւնն էր։ Օր. Սահակեանը նախորդ օրը, իբրև գաղտնիք, պատմել էր նրան, թէ ինչ կապ կար Աշխէնի և Մարութեանի սպանուած որդու միջև, և այդ բանը բաւական զօրեղ տպաւորութիւն էր թողել նրա վրայ։ Այժմ նրան այնքան չէր ազդում որդեկորոյս մօր աղիկտուր ողբը, որքան իր ծանր վիճակի հետ հաշտուած Աշխէնի լուռ վիշտը։ Գիւղում, իրենց ամենօրեայ յարաբերութիւնների ժամանակ, Մինասեանն արդէն կարողացել էր մի անգամ առմիշտ գնահատել Աշխէնի արժանիքները, չափազանց յարգում էր նրան և, միևնոյն ժամանակ, հղբայրական այնպիսի մի քնքոյշ սէր էր տածում դէպի նա, որ այժմ հոգով չափ ցանկանում էր որևէ բանով մխիթարած լինել նրան, բայց ոչ մի խօսք չկարողացաւ արտասանել, այլ միայն լուռ և խիստ զգացուած սեղմեց նրա ձեռքը։ Մինչդեռ Եւային կարողացաւ մի քանի մխիթարական խօսքեր ասել։ Եւան, որ սկզբում ջսպում էր իրեն, այժմ չկարողացաւ դիմանալ և սկսեց լաց լինել մօր հետ։ Աշխէնը ներքին շրթունքն առաւ ատամների մէջ, նրա քթի պնչերը սաստիկ լայնացան, աչքերը լցուեցին արցունքով և նա կամաց դուրս գնաց։

Մարութեանները Մինասեանին յատկացրին առանձին սենեակ բոլոր յարմարութիւններով և ամեն կերպ աշխատում էին չճնշել նրա ազատութիւնը։ Առաջին իսկ օրուանից զգալի եղաւ Մինասեանի բարերար ազդեցութիւնը. ընտանեկան ծանր դժբաղդութեան տակ ճնշուած Մարութեաններն ունէին մի հիւր, որ իր կենսաթրթիռ հայեացքներով մեծ խթան էր նրանց համար վերակենդանանալու։ Զմեռային երկար գիշերներն ամենքը հաւաքւում էին սեղանի շուրջը, գրեթէ ամեն գիշեր նրանց հետ էր լինում օր. Սահակեանը, և լուսամուտների փեղկերը փակուած, պայծառ լուսաւորուած տաք սենեակում մինչև ուշ գիշեր տեղի էր ունենում ընդհանուր կենդանի զրուցատրութիւն այնպիսի առարկաների և երևոյթների մասին, որոնք ընդունակ են բարձրացնելու մարդու սիրտը, հոգին, միտքը։ Ժամերն անցնում էին թեթև, աննկատելի, նոյն իսկ երբեմն սենեակում բարձրանում էր ուրախ, առողջ մի քրքիջ։

XVIII

Նոր տարու առաջին օրը Մինասեանը պատրաստուեց այցելութիւն տալու քաղաքում ունեցած իր բարեկամներին։ Ամենից առաջ գնաց Շահեանի մօտ։ Առաւօտեան ժամը 11-ի մօտերքն էր։ Նրան ընդունեց

Շահեանի մայրը։ Ամուսնու մահից յետոյ Թամարը բոլորովին պառաւել էր, թէև տարիքով համեմատաբար ջահէլ կին էր։ Խորշոմներով ծածկուած նրա բարի, փափուկ դէմքն այս անգամ աւելի, քան երբէք, կրում էր մշտական թախիծի կնիքը։ Մինասեանին որ տեսաւ, չափազանց ուրախացաւ. յետոյ սկսեց լաց լինել և գանգատուել իր վիճակից. ասաց, որ իր որդու դրութիւնը մեծ անհանգստութիւն է պատճառում իրեն. Լևոնը բոլորովին փոխուել է, ոչ ուտում է, ոչ խմում, ոչ խօսում, սենեակից ամենևին դուրս չի գալիս, սարսափելի բարկանում է, երբ մէկն անհանգստացնում է իրեն, իսկ բժիշկ անունը լսել անգամ չի կամենում։ Վերջը խեղճ պառաւը թախանձագին աղաչեց Մինասեանին, որ իր ազդեցութիւնը գործ դնի Լևոնի վրայ, իմանայ նրա ցաւը, որպէսզի կարելի լինի մի ճար անել։

Զնայելով, որ Մինասեանը նախապատրաստուած էր, թէ ինչ դրութեան մէջ պիտի գտնէր Շահեանին, այնուամենայնիւ, երբ մտաւ նրա սենեակը, ակամայ կանգ առաւ դռների մօտ ապշած։

Շահեանը նստած էր բազկաթոռի վրայ, գլուխը յետ էր ձգել բազկաթոռի թիկունքին և ոտները դրել էր առջևը գտնուած մի աթոռի վրայ, այնպէս որ գլուխն ու ոտների ծայրերը գրեթէ հաւասար բարձրութեան վրայ էին գտնուում։ Հագած էր իր տնային սովորական խալաթը, որ առջևից բոլորովին բաց էր և որի փեշերը փռուել էին յատակի վրայ, արծուի կոտրատուած թևերի պէս։ Խալաթի տակ, բացի շապկից և վարտիկից, ուրիշ բան չունէր հագած։ Ոտները մերկ էին և նրանց ծայրերից կախուած էին փափուկ մաշիկները։ Մազերը խիստ երկարել էին և չէին սանրուած. աչքերը, որոնց վրայ չէր կրում սովորական

ակնոցը, ուռած, կարմրած և պատած էին կէս-կապտաւուն, կէս-սեաւուն շրջանակներով. դէմքը դալջի գոյն էր ստացել և խիստ լղարել։ Թւում էր, թէ նոր է վերկացել անկողնից խիստ անհանգիստ քնից յետոյ և դեռ ժամանակ չի ունեցել ոչ լուացուելու, ոչ հագնուելու։

Մինասեանը կարծում էր, թէ իր առաջ տեսնում է ոչ թէ Շահեանին, այլ նրա ուրուականը, և երկար ժամանակ կանգնած էր դռների մօտ լուռ ու ապշած այն տարօրինակ փոփոխութիւնից, որ տեսնում էր ընկերոջ մէջ։

Շահեանը ոտները կամաց ցած դրեց աթոռից, այնքան զգուշօրէն, որ ծայրերից կախուած մաշիկները ճնան ոտներին, յետոյ նստեց ուղիղ և նայեց Մինասեանին լուռ ու երկարատև, կարծես չկարողանալով իսկոյն ճանաչել նրան։ Այնուհետև, երբ Մինասեանը մօտեցաւ նրան, նա վերկացաւ դանդաղօրէն և մեքենայաբար սկսեց կապել խալաթի ծոպերը։

—Լևոն, այդ դու ես,—հարցրեց Մինասեանը, այս անգամ աւելի ապշած նրա տարօրինակ յամառ հայեացքից, քան թէ նրա ընդհանուր արտաքինից։

Շահեանը չպատասխանեց։ Նայում էր Մինասեանի աչքերին և շարունակում էր մեքենայաբար կապել խալաթի ծոպերը։

—Ի՞նչ ես այդպէս նայում. չե՞ս ճանաչում,—բացականչեց Մինասեանը։

—Ինչպէս չէ,—կամաց արտասանեց Շահեանը, սակայն դեռ ևս շարունակելով նայել նրան իր տարօրինակ յամառ հայեացքով։

—Դէ, որ ճանաչում ես, ինչո՞ւ ես ինձ այդպէս խոր նայում։

—Որովհետև... չէի սպասում,—պատասխանեց Շա-

հեանը և նստեց բազկաթոռի վրայ ծանր ու դանդաղօրէն, երկար ժամանակ ոտի վրայ մնալու անկարող հիւանդի նման։ Զայնն էլ հնչում էր թոյլ ու խուլ, ինչպէս հիւանդներինը։—Նստիր, ինչու չես նստում,—աւելացրեց նա, իր առջևը դրուած աթոռը ցոյց տալով։

Մինասեանը նստեց։

—Լևոն, այդ ի՞նչ է դրութիւնդ։ Շատ ծանր հիւանդի տպաւորութիւն ես գործում։ Ի՞նչ է հիւանդութիւնդ։

—Զգիտեմ։

—Ցաւ չե՞ս զգում։ Չե՞ս հաղում։

—Ամենևին։ Միայն ընդհանուր թուլութիւն եմ զգում։ Ցետոյ, գլուխս ծանր է շարունակ և սիրտս կանոնաւոր չի խփում։

—Եւ չես բժշկւում։

—Ոչ։

—Ինչու։

—Որովհետև չեմ ուզում։

—Որովհետև յիմար ես, չնեղանաս խնդրեմ,—վերայ բերեց Մինասեանը մտերմական կշտամբանքով։—Զօրով ես ուզում մեռնել, ինչ է։

Շահեանը չպատասխանեց։ Նստած էր փալասի պէս թոյլ, գլուխը կրծքին կախած։

—Նո՞ր ես վերկացել,—շարունակեց Մինասեանն իր հարցուփորձը։

—Ոչ։

—Հապա ինչու մինչև այժմ հագնուած չես։

—Ինչի՞ համար հագնուեմ։

—Ի՞նչպէս թէ ինչի համար։ Հապա ամբողջ օրն այդպէ՞ս ես մնում—խալաթով և առանց երեսդ լուանալու։

—Ամբողջ օրն և ամեն օր։

—Բայց այսօր մարդ կարող է գալ մօտդ։

—Ի՞նչ մարդ։ Ինչի՞ համար։

—Նոր տարին շնորհաւորելու համար։

—Ի՞նչ նոր տարի։

—Ա՛յ տնաշէն, բաս այսօր յունուարի մէկը չէ՞։

—Յունուարի մէ՞կը... Զգիտեմ, շատ կարելի է։

Մինասեանի զարմանքն իր գագաթնակէտին հասաւ։ Աթոռը մօտ քաշեց և, նայելով Շահեանի հանդած աչքերին, առաւ նրա ձեռքը։

—Լսիր, Լևոն. դու քեզ ապուշ ես ձևացնում, թէ իսկապէս ոչինչ չես հասկանում։ Ի՞նչպէս թէ չգիտես, որ այսօր նոր տարի է։

—Ես չեմ հետաքրքրւում այդպիսի բաներով,—ասաց Շահեանը, ձեռքը խլելով նրա ձեռքի միջից, և նստած տեղը յետ գլորեց իր բազկաթոռը։ Ըստ երևոյթին, սկսել էր դրգռուել Մինասեանի հարցուփորձից։

—Դու կորած ես, Լևոն,—բացականչեց Մինասեանը։—Մի՞թէ Շոպենհաուէրն է քեզ այդպէս վայրենացրել, եթէ աւելին չասեմ։ Բայց քեզ այդպէս չի կարելի թողնել. քեզ անպատճառ հարկաւոր է բժշկել և հիմնաւորապէս բժշկել։ Ես քեզ շատ բարի էի կարծում, մինչդեռ ամենաանխիղճներից մէկն ես եղել։ Գիտե՞ս մայրդ այս րոպէիս ինչպէս էր գանգատւում քեզնից։ Մեղք չէ՞ այն խեղճ պառաւը։ Կարելի՞ է միթէ մօրն այդպէս տանջել։ Ինչու չես մտնում նրա դրութիւնը։ Մի՞թէ չես հասկանում և չես տեսնում, թէ ի՞նչ սոսկալի տանջանքներ է կրում, որ քեզ այդ դրութեան մէջ է տեսնում։ Իսկ դու երբևիցէ ուշադրութիւն դարձրի՞ ես դրութեանդ վրայ։ Մէկ նայիր հայելու մէջ, տես ինչ ես դարձել։ Ճիշտը քեզ ասեմ, չճանաչեցի, որ մտայ, և այժմ էլ չեմ ուզում հաւատալ, թէ այդ դու ես։ Մի՞թէ կարելի է, որ մարդ կամովին ինքն իրեն այդպէս

սպանի։ Երիտասարդ մարդ ես, ի՞նչ ես նստել տան չորս պատերի մէջ և ուղեղդ ու մարմինդ փտեցնում մետաֆիզիքական տխմար վերացումների մէջ։ Մի քիչ թափահարիր քեզ, շարժուիր, դուրս արի լոյս աշխարհ, պարզ օդ ծծիր, շփուիր մարդկանց հետ, վերջապէս,—ապահովուած մարդ ես,—պսակուիր, զաւակներ, ժառանգներ ունեցիր, մխիթարիր պառաւ մօրդ, որի միանուագար զաւակն ես, բաղդաւորուիր ինքդ և այն ժամանակ, ես համոզուած եմ, Շոպենհաուէրն ինքդ քո ձեռքով վառարանը կը շպրտես։ Ես հասկանում եմ յոռետեսութիւնը, երբ դա արդիւնք է կեանքի դառն փորձառութեան, և այդ դէպքում յոռետեսն արդարանալու հիմքեր ունի. բայց քո յոռետեսութիւնն ախր լոկ երևակայական է, լոկ մտաւորական և բոնազբօսիկ, չունի իրական ոչ մի հիմք, հետևաբար և՝ ոչ մի արդարացում և, յամենայն դէպս, անպայման կործանարար է։ Դու չափազանց անփորձ ես, դու ամենևին չգիտես, թէ կեանքի այն աննպատակաւորութեան մէջ, որի վերայ հիմնուած է քո այդ շոպենհաուէրեան յոռետեսական փիլիսոփայութիւնը, որպիսի մեծ և քաղցր նպատակներ կան, որոնց համար, հաւատացնում եմ քեզ, արժէ ապրել, գործել և տանջուել։ Լսո՞ւմ ես, Լևոն, ինչ եմ ասում,—հարցրեց Մինասեանը, տեսնելով, որ Շահեանը նստած է թմրած, գլուխը կրծքին կախած։

—Լսում եմ,—կամաց արտասանեց Շահեանը։

—Յետո՞յ։ Ի՞նչ կասես։

Շահեանը գլուխն արագ բարձրացրեց և նայեց Մինասեանին այնպիսի մի հայեացքով, որից երևում էր, որ մի միտք յանկարծ կենդանութիւն տուեց նրան։ Մի բոպէ, լուռ ու կեդրոնացած, նայեց Մինասեանի աչքերին, ըստ երևոյթին, զբաղուած այն մտքով, որ հէնց նոր էր ծագել իր գլխում, յետոյ ասաց.

—Պատասխանս կը ստանաս գրաւոր...

—Ի՞նչպէս թէ գրաւոր,—զարմացաւ Մինասեանը։

—Գրաւոր,—կրկնեց Շահեանը, կարծես ինքն իրեն, և նրա կեդրոնացած հայեացքն աւելի կենդանութիւն ստացաւ։

—Ես քեզ չեմ հասկանում։ Այսինքն պատասխանը դը կը գրես թղթի վրայ և ի՞նձ կը տաս. Ա՞յդ ես ուզում ասել։

—Այո։

—Բայց ինչո՞ւ ախր։ Լեզու չունի՞ս, ինչ է։ Թէ՞ ես խուլ եմ։

—Այո՛, ես լեզու չունիմ, և դուք էլ խուլ էք...

—«Դուք»։ Ո՞վ է այդ «դուք»-ը։

—Դուք, ամենքդ... Միայն դու չես, որ ասում ես ինձ այդ բաները. ուրիշներն էլ կան... կային։ Եւ ես պէտք է պատասխանեմ ամենքիդ... միանգամից։ Եւ կը պատասխանեմ... Եւ կը տեսնէք, որ ճշմարիտը ես եմ... ես եմ...

Շահեանը վերկացաւ և սկսեց անցուդարձ անել սենեակում արագ և այնքան յուզուած, որ Մինասեանին թուաց, թէ յանկարծ մի հրաշք կատարուեց իր աչքի առաջ—մեռելը յարութիւն առաւ։ Սակայն, այդ բանը երկար չտևեց. Շահեանի աչքերի մէջ բռնկած կրակը հանգաւ արագօրէն, նա կարծես թէ յոգնեց անսովոր արագ քայլելուց և գնաց նստեց մահճակալի վրայ, որ չափազանց անկարգ դրութեան մէջ էր։ Նըստեց, խոնարհուեց ծնկների վրայ և գլուխն առաւ ձեռքերի մէջ։

Մինասեանը վերկացաւ, մօտեցաւ նրան և ձեռքը դրեց նրա ուսին։

—Լևոն, եկ քո բժիշկն ես դառնամ,—ասաց նա այնպէս, ինչպէս խօսում են ծանր հիւանդների հետ,

քաջալերական տոնով և թեթև կատակով։—Եթէ մի քանի օրում քեզ նախկին Լևոնը չշինեմ, նախկին Լևոնից էլ աւելի լաւ Լևոն, առողջ ու կենսուրախ մի Լևոն,—ինչ ուզում ես՝ ասա։ Համաձայն ես։

Շահեանը չպատասխանեց։ Վերկացաւ և գնաց նստեց իր նախկին տեղը, բազկաթոռի վրայ։ Ըստ երևոյթին, ուզում էր հեռու մնալ Մինասեանից։ Սակայն Մինասեանը հետևեց նրան և այս անգամ գրկեց նրա ուսը։

—Բժշկութիւնը կըսկսեմ հէնց այսօրուանից,—ասաց նա։—Դրա համար հարկ կըլինի, որ այժմ վերկենաս, լուացուես, հագնուես, ինչպէս կարգն է, և միասին դուրս գնանք։ Այսօր նոր տարի է, այցելութիւնների օր է։ Ամենից առաջ կըգնանք Մարութեանների մօտ. դա այնպիսի մի հրաշալի ընտանիք է, որի մէջ մի ժամ ժամանակ անցնելն ինչ ասես՝ արժէ։ Ի դէպ. լսե՞լ ես նրանց որդու մահը։

Շահեանը ցնցուեց և նայեց Մինասեանի աչքերին կարծես վախեցած։

—Մա՞հը,—հարցրեց նա, ըստ երևոյթին առանձին ուշադրութիւն դարձնելով այդ բառի վրայ, սակայն առանց այդ դաղափարը կապելու Մարութեանի որդու հետ։—Մահը լաւ բան է,—արտասանեց նա, և մի վայրկեան նրա աչքերը վառուեցին ինչ-որ տարօրինակ փայլով։

—Այո՛, մահը լաւ բան է, Լևոն, երբ մարդ մեռնում է լաւ գործի համար, վսեմ նպատակի համար, ինչպէս Մարութեանի որդին։

—Մահուան նպատակն ինքը մահը պէտք է լինի,—նկատեց Շահեանն այս անգամ փիլիսոփայական հանգստութեամբ։

—Յիմարութիւններ մի դուրս տուր և վերկաց

գնանք,—ասաց Մինասեանը կամաց խփելով նրա մէջքին։—Ես կարծում եմ, որ դեռ ես արիւն կայ մէջդ և այդ արիւնը կարելի է տաքացնել։ Իսկ երբ որ կը ծերանանք, ես էլ կըմիանամ քեզ հետ և միասին այնպիսի խոր փիլիսոփայութիւնների մէջ կըմտնենք մահուան մասին, որ Շոպենհաուէրի ոսկորները գերեզմանի մէջ պար կըգան ուրախութիւնից։ Մարութեաններն երէկ շատ էին հետաքրքրուում քեզնով և խնդրեցին, որ անպատճառ տանեմ քեզ իրենց մօտ։ Հա՛, գիտե՞ս ինչ կայ, Լևոն. արի քեզ ամուսնացնենք Մարութեանի աղջկայ հետ. նա հրաշալի աղջիկ է և այնպիսի երջանկութիւն կըտայ քեզ, որ Շոպենհաուէրն անգամ չի կարող խոստանալ Նիրվաննայի մէջ։ Ա՛յ լաւ միտք։ Վեր կաց, վեր կաց։

Շահեանը վերկենալու տեղ մի թառանչ քաշեց և խոնարհուեց ծնկների վրայ։

—Կինը սոսկալի բան է,—ասաց նա։—Աստուած նրան պատիժ է ստեղծել մարդկութեան համար։ Նա դառն հաբ է շաքարի կեղևի մէջ։ Կնոջ մարմինը... Ի՞նչ բան է կնոջ մարմինը։ Ըստ երևոյթին, ոչինչ. մարմին է, ինչպէս մեր մարմինը.—ոսկորներ, միս և կաշի։ Բայց ի՞նչ կայ նրա մէջ, այն ի՞նչ դև է թագնուած նրա մէջ, որ դուրս է սողում այնտեղից, մըտնում է մարդու արիւնը և... Օ՜, այս կիրքը... Ես ճանաչում էի մի կին. նա երևաց ինձ, ինչպէս մի երազ, և երազի պէս էլ ցնդեց... Ինձ թւում է, թէ ես կուտէի նրա մարմինը, կուտէի ուղղակի գազանի պէս, եթէ... Ո՞ւր է նա... Բեր նրան այստեղ, նրա՛ն միայն, ուրիշ ոչ մի կին, և ես պատրաստ եմ յարութիւն առնելու...

Մինասեանը խիստ հետաքրքրուեց և ուշի ուշով ականջ էր դնում Շահեանի խոստովանութեանը։ Նրան

խիստ զարմացրեց մանաւանդ այն հանգամանքը, որ այնքան հանգիստ ու թմրած Շահեանն այժմ խօսում էր արտասովոր եռանդով և, ըստ երևոյթին, ի ներքուստ զօրեղապէս յուզուած։ Բայց ո՞վ էր այն կինը, որի մասին խօսում էր նա,—Մինասեանը չկարողացաւ իմանալ, որովհետև Շահեանը լռեց և այլևս ոչ մի խօսք չկամեցաւ արտասանել այդ մասին։

—Բայց Մարութեանների տուն գնո՞ւմ ենք, թէ ոչ,—հարցրեց Մինասեանը։

—Ոչ, չենք գնում։

—Ինչո՞ւ։

—Որովհետև... խնդրում եմ խաչ քաշիր ինձ վերայ և անցիր գնա։

—Իսկ եթէ խաչ չքաշեմ ու չանցնեմ չգնամ։

—Դա պարզ բռնութիւն կլինի։

—Իսկ մօրդ մասին չե՞ս մտածում։

—Ա՜խ, թող, թէ Աստուածդ կըսիրես,—բացականչեց Շահեանը ջղայնոտութեան յանկարծական բռնկումով։—Ո՞վ էր ասում նրան, որ ինձ նման մի թուլամորթ արարած ծնի։ Մնեց, ուրեմն թող կրի իր անմտութեան պատիժը։ Չեմ հասկանում, նա ինչու է ապրում։

—Եւ խիղճդ չի՞ տանջում քեզ, որ այդպիսի բաներ ես ասում մօրդ համար։

—Խիղճը վատ խորհրդատու է։ Եթէ քննես մարդկութեան ներքին կեանքը, կըտեսնես, որ աշխարհիս երեսին ամենադժբաղդն այն մարդիկն են, որոնք խիղճ ունին։

—Դու սոփեստ ես։ Ասենք, սոփեստութիւնը յոռետեսների գլխաւոր յատկանիշն է։ Մի անգամ որ վճռել ես յոռետես լինել, աշխատում ես ամեն բան թարս հասկանալ։ քեզ համար սպիտակը սև է, շաքարը—լեղի, ծիծաղը—լաց, լոյսը—խաւար, այդպէս և խիղճ ունենալը—դժբաղդութիւն։ Բայց ես չեմ ուզում քեզ հետ վիճաբանութեան բռնուել, որովհետև խօսքով քեզ չի կարելի համոզել։ Սոփեստութիւնների բոլոր անհեթեթութիւնը կըհասկանաս այն ժամանակ միայն, երբ կեանքի յորձանքը մտնես, երբ մարդկութեան գործօն անդամներից մէկը դառնաս։ Բայց այդ բանը դու չես ուզում կամ, աւելի ճիշտն ասած, վախենում ես այդ բանից, որովհետև, ինչպէս ինքդ շատ լաւ բնորոշեցիր քեզ, դու թուլամորթ մարդ ես։ Ես քեզ ասում եմ՝ արի բժշկեմ քեզ, դու ինձ ասում ես, թէ խաչ քաշեմ քեզ վրայ։ Մի՞թէ, յիրաւի, քո մէջ արդէն միանգամայն մեռել է ապրելու ձգտումը, որից Աստուած չի զրկել նոյն իսկ ամենաչնչին զեռունին։

—Մեռել է, միանգամայն մեռել է,—ասաց Շահեանը, յետ ընկնելով բազկաթոռի մէջքին, և աչքերը փակեց ձանձրացած։

—Բայց ինչ-որ կնոջ մասին խօսելիս ասացիր, որ եթէ նա քեզ մօտ լինի, յարութիւն կառնես։ Այդ բանը ինձ հիմք է տալիս կարծելու, որ դրութեանդ պատճառն իսկապէս սէրն է, դժբաղդ սէրը։ Հմ։

—Այս սէրը չէ,—պատասխանեց Շահեանը, գլուխը յետ ձգած բազկաթոռի մէջքին և աչքերը փակած։—Այս այն է, ինչ որ կայ ամեն մարդու, ամեն կենդանի արարածի մէջ։ Այս այն է, առանց որի մարդկութիւնը և առհասարակ բոլոր կենդանի աշխարհը պիտի մեռնէր, չորանար և իսպառ ոչնչանար մի սերնդի վերայ, ինչպէս չորանում և ոչնչանում է երկրի կենարար թացութիւնից զրկուած ծառը։ Այս այն դևն է, որի մասին խօսում էի, որ թաղնուած է կնոջ մարմնի մէջ և այնտեղից մտնում է մարդու արիւնը, վառում, բորբոքում, գազանացնում է նրան...

Մինասեանը մտառութեամբ նայում էր Շահեանի շլթունքներին և աշխատում էր թափանցել նրա հոգու խորքը։

—Գիտե՞ս ինչ կայ, Լևոն,—ասաց նա, երկարատև լռութիւնից յետոյ. — արի քո հիւանդութեանն ուրիշ անուն տանք. դու էրոտոման ես, այն սարսափելի էրոտոմաններից, որոնք անկողին են մտնում կնոջ մարմնի մասին մտածելով և անկողնից վեր են կենում դարձեալ կնոջ մարմնի մասին մտածելով, բայց կնոջից այնքան հեռու են, որքան երկինքը երկրից։ Խոստովանուիր, այդպէս է, թէ ոչ։

—Ո՞վ գիտէ, գուցէ և ճիշտ է դիագնոզդ, բայց ամեն մարդ էրոտոման է առաւել կամ նուազ չափով, ոմանք տեսականապէս, ոմանք գործնականապէս։ Եւ եթէ այս հիւանդութիւն է, ապա ամեն մարդ հիւանդ է և ամեն մարդ և ամբողջ մարդկութիւնը պէտք է բժշկուի։ Պէտք է բժշկուի հիմնովին, արմատից։ Դեը, դեը... Պէտք է ոչնչացնել դեը—ահա բժշկութեան միակ միջոցը։

—Սխալւում ես, Լևոն. դեը ոչ թէ պէտք է ոչնչացնել,—և անկարելի է ոչնչացնել,—այլ պէտք է անվնաս դարձնել և իր բնական ճանապարհը տալ նրան։ Քո դեն այդքան սարսափելի է թւում քեզ, որովհետև շեղուել է իր բնական ճանապարհից։ Մենք կըսանձենք նրան։ Վերկաց։ Ես բժշկութեան աւելի լաւ միջոցը գիտեմ։

Մինասեանը բռնեց Շահեանի երկու ձեռքից և ուզում էր զօրով վերկացնել նրան, սակայն Շահեանը պինդ խրուել բազկաթոռի մէջ և դէն հրեց ընկերոջն այնպիսի ուժով, որ Մինասեանն ամենևին չէր սպասում։

—Այդ ի՞նչ կոպիտ վարմունք է,—ասաց Շահեանը, փայլեցնելով նրա վրայ իր աչքերը զսպած զայրոյթով։—Ես այդպիսի բաներ չեմ սիրում։ Ասացի քեզ, որ Մարութեանների տուն չեմ գալ։

—Ուրիշ տեղ կըտանեմ։

—Ո՛չ մի տեղ։ Եւ խնդրում եմ ինձ հանգիստ թող։ Այդ ի՞նչ խնամակալութիւն է, չեմ հասկանում...

Շահեանը խօսում էր այնպիսի վճռական եղանակով և այնքան վիրաւորուած, որ Մինասեանը մնացել էր զարմացած, թէ ո՞րտեղից գտնուեց յանկարծ այդքան կամքի ոյժ և այդպիսի անձնասիրութիւն այդ մեռած երիտասարդի մէջ։

—Բայց դու կորած ես, Լևոն, եթէ դուրս չգաս դէպի ազատ օդ,—բացականչեց Մինասեանը։

—Քեզ ի՞նչ, թող կորչեմ, քեզ ի՞նչ,—պատասխանեց Շահեանն այնքան զրգռուած, որ գաջի գոյն ստացած նրա դէմքի վրայ մինչև անգամ կարմրութեան պէս մի բան երևաց։

Մինասեանը նորից փորձեց համոզել նրան այս անգամ աւելի լրջօրէն և մտերմօրէն, սակայն Շահեանը մնաց անդրդուելի։

—Դէ, որ այդպէս է, պէտք է, ճիշտ որ, խաչ քաշել քեզ վրայ և անցնել գնալ,—բացականչեց Մինասեանը։—Այժմ մեղքն ու վարձքը քո շինքին։

Մինասեանը դուրս եկաւ Շահեանի մօտից միանգամայն համոզուած, որ նրան փրկելու ոչ մի յոյս չըկայ։

XIX

Այդ երեկոյ Մարութեանների տանը խօսակցութեան առարկան Շահեանն էր։ Մինասեանը նկարագրեց նրան իբրև ֆիզիքապէս և, մանաւանդ, իբրև հո-

գեպէս կորած մի մարդու, որ հրաշքով միայն կարող էր ազատուել կեանքի համար։

—Բայց ինչ կասէք, որ ես այդ հրաշքը գործեմ, բացականչեց Մարութեանը։

—Այդ անկարելի է,—ասաց Մինասեանը։—Ես, որ այնքան մօտ եմ նրան, ոչ մի կերպ չկարողացայ համոզել, որ շորերը հագնի և դուրս գայ ինձ հետ։

—Իսկ եթէ ես վաղը բերեմ նրան այստեղ։

—Ի՞նչ ասեմ. մինչև որ չտեսնեմ, չեմ հաւատալ։

—Շատ բարի։

Հետևեալ օրը Մարութեանի առաջին գործն այն եղաւ, որ դիմեց դէպի Շահեանի տուն։ Նրան ոգևորում էր ոչ այնքան «հրաշք գործելու», այսինքն Շահեանին փրկելու ցանկութիւնը, որքան այն, որ Շահեանին իրենց տուն բերելով կենդանութեան մի նոր հոսանք պիտի մտցնէր իր ընտանիքի մէջ, ինչպիսի կենդանութիւն որ մտցրել էր արդէն Մինասեանին իրենց տուն հրաւիրելով, թէև նա շատ հեռու էր Մինասեանի ունեցած ընդունակութիւնները Շահեանին ևս վերադրելու մտքից։

Իրենց տան փողոցը դեռ չէր ծռուել նա, երբ արագ քայլերով նրա դէմն ելաւ օր. Սահակեանը։

—Նոր լուր իմացել էք,—կանչեց օր. Սահակեանը դեռ չմօտեցած։

—Ի՞նչ լուր։

—Շահեանն անձնասպանութիւն է գործել։

Մարութեանը կանգ առաւ քարացած։

—Այդ անկարելի է,—ասաց նա մեքենայաբար։

—Ձեզ ճիշտ բան եմ ասում. ատրճանակով ցրիւ է տուել իր յիմար ուղեղը։ Իր կալուածների կառավարիչը պատմեց։ Մեր բակումն է ապրում։

—Ե՞րբ, ինչ էք ասում։

—Երէկ գիշեր։ Այդպիսով նոր տարուայ առաջին իսկ օրը հայոց աշխարհը դժբաղդութիւն ունեցաւ զրկուելու մի երևելի կեանքից։ Եւ, երևի, դրա համար է, որ այդքան ազդուեցիք։

—Վայ, խեղճ. խեղճ երիտասարդ,—արտասանեց Մարութեանն անկեղծ ցաւով։—Իսկ ես, երևակայեցէք, այս րոպէիս գնում էի, որ նրան մեր տուն բերեմ։

—Ա՞յդ ինչ քամի էր փչել ձեր գլխին։

Մարութեանը պատմեց Մինասեանի պատմածը Շահեանի մասին և ասաց, թէ կամենում էր և յոյս ունէր, որ կըփրկի նրան։

—Ո՞ւմ պէտք է փրկէիք. մի՝ արդէն մեռած մարդու,—բացականչեց օր. Սահակեանը։—Մինասեանն երէկ նրա մօտից ուղղակի մեր տուն էր եկել և նրա մասին խօսում էր իբրև արդէն մեռած մարդու մասին։ Ինձ որ հարցնէք, ես ամենևին չեմ ցաւում, որովհետև, միևնոյն է, անպէտք մարդ էր։

Մարութեանը տխուր ու տրտում վերադարձաւ տուն օր. Սահակեանի հետ։

Տանն ամենքի վրայ խոր տպաւորութիւն գործեց Շահեանի անձնասպանութեան լուրը։ Թեկլէն սկսեց սգալ ցամաք աչքերով, բայց այնպիսի աղեկտուր խօսքերով, որ նոյն իսկ օր. Սահակեանն արտասուեց։ Եւան թաշկինակը սեղմել էր աչքերին և իզուր աշխատում էր զսպել խեղդող հեկեկանքը։ Նա յիշում էր Շահեանի հետ ունեցած իր ծանօթութիւնը և թէպէտ մի առանձին քնքոյշ զգացում չէր տածում դէպի նա, բայց նրան շատ բարի և անվնաս երիտասարդ էր համարում և այժմ սրտի խորքից ցաւում էր նրա եղեռնական վախճանի համար։ Մինչդեռ Աշխէնը նստած էր լուռ, անշարժ, կեդրոնացած հայեացքը յառած մի կէտի, և նրա միտքը, հոգին թռել էր հեռու, այնտեղ,

ուր նոյնպէս մեռել էր իր սիրած երիտասարդը, բայց բոլորովին այլ մահով—պատուաւոր, օգտակար, խրախուսիչ մահով...

Մինասեանը տանը չէր և Շահեանի անձնասպանութեան լուրն իմացաւ այն ժամանակ, երբ ճաշին տուն եկաւ։ Թէև այդ լուրն այնքան էլ անակնկալ չէր նրա համար, բայց և այնպէս այնպիսի ազդեցութիւն ունեցաւ նրա վրայ, ինչպէս գլխին իջեցրած դագանակի մի հարուած։

—Ա՛խ, թշուառակները,—բացականչեց նա,—այդ ինչ է արել։ Հոգիս վկայում էր, ախր, որ նա բնական մահով չի մեռնիլ։ Բայց մայրը, մայրը... Օ, խեղճ պառաւ։ Ի՞նչ կըլինի այժմ նրա դրութիւնը։

Մինասեանը շտապեց դէպի Շահեանի տուն և վերադարձաւ ուշ երեկոյեան, երբ Մարութեանները նստած էին թէյի սեղանի շուրջը։ Օր. Սահակեանն առաւօտուանից մնացել էր Մարութեանների տանը և սպասում էր Մինասեանի վերադարձին, որ իմանայ Շահեանի անձնասպանութեան մանրամասնութիւնները։ Մինասեանը մտաւ յոգնած և խիստ տխուր։ Նա սրտաճմլիկ մանրամասնութիւններ պատմեց Շահեանի մօր վիճակի մասին և ասաց, որ խեղճ պառաւը պարզապէս խելագարուած է վշտից։

—Նա չճանաչեց ինձ և շուրջը հաւաքուած ազգականներին պատմում էր, որ գիշերն իր որդու սենեակում յանկարծ մի աթոռ էր վայր ընկել կոտրուել և, երբ շրխկոցի ձայնի վրայ ներս էր վազել այնտեղ, տեսել էր, որ իր Լևոնը յատակի վրայ չոքած՝ նորոգում է կոտրուած աթոռը։ Ծառայի պատմածից, յիրաւի, երևում է, որ Շահեանն անձնասպանութիւնը գործելիս չոքած է եղել գրասեղանի և աթոռի արանքում և վայր ընկնելիս գլորել է աթոռը։ Ես տեսայ թշուառականի դիակը. ատլճանակն արձակել է աջ քունքի վրայ և գանգի մի մասը փշրել։

—Թուղթ-բան չի՞ թողել,—հարցրեց Մարութեանը։

—Երեք նամակ է թողել. մէկը մօր անունով, որի մէջ գրած էր՝ «Դժբաղդ մայր, քեզ չեմ մեղադրում, որովհետև չես իմացել, թէ ինչ ոճիր ես գործում»։ Միւսի մէջ գրուած էր բառացի հետևեալը. «Անձնասպանութեանս համար ոչոքի չմեղադրել, բացի Աստուծուց»։ Իսկ երրորդն ահա այս ծրարն է իմ հասցէին։

Եւ Մինասեանը ծոցից հանեց մի մեծ ու հաստ ծրար։

—Ի՞նչ է,—հարցրին այս ու այն կողմից խիստ հետաքրքրուած։

—Այ, կարդացէք տեսէք ինչ է,—ասաց Մինասեանը ծրարի միջից հանելով աշակերտական մի տետրակ կապոյտ կազմով։

—Տուէք ինձ, ես կըկարդամ,—ասաց օր. Սահակեանը և տետրակն առաւ նրա ձեռքից։

—Իսկ ինձ, եթէ կարելի է, մի քիչ բան տուէք ուտելու, որովհետև այսօր ոչինչ չեմ կերել։

Եւան վեր թռաւ տեղից։

—Ես պահել եմ ձեր այսօրուայ ճաշը։ Ո՞ւրտեղ կուտէք, այստեղ, թէ ձեր սենեակում։

—Այստեղ, այստեղ, ասա բերեն այստեղ,—պատուիրեց Մարութեանը։

Այն միջոցին, երբ Մինասեանը, սեղանի ծայրը քաշուած, ուտում էր իր ճաշը յոգնած մարդու դանդաղութեամբ, օր. Սահակեանը, շրջապատուած Մարութեաններով, կարդում էր հետևեալը։

XX

ԻՄ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ

Յիշում ես. այսօր, որ կեանքի գովքն էիր անում, ես ասացի քեզ, որ պատասխանս կը ստանաս գրաւոր։ Արդ՝ ընդունիր գրութիւնս իբրև իմ պատասխան և, եթէ գտնես, որ ճշմարիտ չեմ ասում, այրիր այս նամակն այնպէս, ինչպէս որ ես երկրագունդը կայրէի, եթէ կարողանայիր»։

—

Հետևում եմ անձնասպանների օրինակին և, այս ողորմելի անօթը—գանգս—ցրիւ ածելուց առաջ, նամակներ եմ գրում։ Մօրս արդէն գրել եմ։ Հիմա էլ քեզ եմ գրում, կեանքի օրհներգու։ Հա, մի նամակ էլ կը գրեմ, որ անձնասպանութեանս համար ոչոքի չմեղադրեն։ Այդպէս է կարգը և թող այդպէս լինի։ Կամ, եթէ ուզում են անպատճառ մեղադրել մէկի, թող մեղադրեն նրան կամ այն բանին (անունը չգիտեմ. հաւատացեալներն ասում են, որ անունը Աստուած է), որի կամքով ես անգոյութիւնից գոյութիւն ստացայ, ապրեցի ամբողջ 27 տարի առանց իմանալու թէ ինչու, և այժմ գոյութիւնից նորէն գնում եմ դէպի անգոյութիւն՝ զզուած և ձանձրացած այն բոլորից, ինչ որ տեսայ աշխարհ կոչուած այս հսկայական յիմարանոցում։

Զարմանալի տափակութիւն կայ մարդկանց ուղեղի մէջ. երբոր տեսնում են, որ որևէ մէկի անձնասպանութեան մէջ շօշափելի կերպով ոչոք մեղաւոր չէ, նրանք իրենց բոլոր մեղադրանքը թափում են անձնասպանի գլխին։ Մինչդեռ, եթէ նրանք մտքի մի քիչ

խորութիւն ունենային, փաւաց ի փառս պիտի բարձրացնէին անձնասպանին, և ոչ թէ մեղադրէին։ Եթէ մեղադրանքի—և այն էլ մահացու մեղադրանքի—մի կէտ կայ առհասարակ բոլոր անձնասպանների համար, այդ այն է, որ նրանք ապրել են։ Ապրել կը նշանակի ամենամեծ յիմարութիւնը գործել։ Արդ՝ կարելի՞ է մեղադրել նրան, ով չի ցանկանում շարունակել յիմարութիւն գործել։

Ասում են, որ անձնասպանութիւնը խելագարութեան արդասիք է լինում։ Այդպէս ասողներն անշուշտ իրենք են խելագար։ Կամ, եթէ ըստ իրենց հասկացողութեան՝ խելագար չեն, խելագարութիւնը թարս են հասկանում։ Գիտեմ ո՞րն է իսկական, արտօնեալ խելագարութիւնը.—այն, երբ զզում ես, տեսնում ես, համոզուած ես, որ կեանքը դատարկ մի բան է, աւելի քան տորբիչելեան դատարկութիւնը, և, այնուամենայնիւ, շարունակում ես ոչ թէ միայն ապրել, այլ և կաշուցդ դուրս գալ, որ կարելոյն չափ երկար ապրես։

Անձնասպանները ոչ թէ խելագար են, այլ ամենաիմաստուն մարդիկ, որովհետև միայն նրանք գիտեն, թէ ինչ է կեանքի իսկական արժէքը։ Իսկ կեանքի իսկական արժէքն եթէ արտայայտելու լինինք թուանշանով, դուրս կը գայ հսկայական մի զերօ, որի դատարկ շրջագծի միջով իր սարտոմորտաներն է կատարում կամ, հայերէն ասենք, իր գլխկոնձին է անում համաշխարհային կրկէսի այն միմոսը, որի անունն է մարդկութիւն...

Անձնասպանները բացի ամենաիմաստուն մարդիկը լինելուց, այլ ամենաքաջ մարդիկն են։ Ամենամեծ երկիւղը, որ պաշարում է մարդուն, մահուան երկիւղն է։ Եւ իզուր չէ, որ օրէնսդիրները պատժի ամենաբարձրը աստիճանը մահուան պատիժն են սահմանել։ Ապ-

ըել կամենալ—նշանակում է մահից վախենալ։ Արդ՝ ով մահից ոչ թէ միայն չի վախենում, այլ և ինքն է իրեն մահուան գիրկը նետում,—ամենաքաջը չէ՞։

Ապրելու և, այսպէս կոչուած, բնական մահուան սպասելու համար հարկաւոր է երկու բան՝—կամ չմտածել, կամ հասնել մտածողութեան այն կէտին, որի վրայ մարդս կանգնած անսասան՝ ընդունակ դառնայ արհամարհելու, միևնոյն տխմար, աննպատակ բանը համարելու թէ կեանքը և թէ մահը։ Չմտածել չեմ կարող, որովհետև, դժբաղդաբար, անսասունից չեմ ծնուած. կեանքն ու մահն էլ հաւասարապէս արհամարհել նոյնպէս չեմ կարող, որովհետև կեանքը չեմ փորձել նրան արհամարհելու չափ, որով և պայմանաւորուած է արհամարհանքը դէպի մահը։

Զգիտեմ, ինչպէս կըլինի ապագայում, բայց գիտեմ, որ այժմ մարդս ապրում է ոչ իր ցանկութեամբ, ուզում եմ ասել—ոչ իր ազատ կամքով։ Ինչպէս որ նա իր ազատ կամքով չի ծնուում, այնպէս և իր ազատ կամքով չէ, որ ապրում է։ Նրան ծնում են և ստիպում, որ ապրի։ Ծնում է բնութիւնը իրեն միայն հասկանալի նպատակով (կամ, գուցէ, նա էլ ոչ մի նպատակ չունի), որի հետ մարդուն իրաւունք չի տալիս գործ ունենալու։ Նոյն բնութիւնն է, որ ստիպում է նրան ապրել, և դարձեալ ծածուկ է պահում նրանից այն նպատակը, որի համար ստիպում է նրան ապրել։

Սակայն անտանելին և միանգամայն անհասկանալին բնութեան ստիպմունքը չէ, այլ նոյն իսկ մարդկային ստիպմունքը, որը ձևակերպուած է ընտանիքի, շրջանի, հասարակութեան, ազգի, պետութեան և, վերջապէս, ընդհանուր մարդկութեան նախապաշարմունքների, սովորութիւնների, հասկացողութիւնների, օրէնքների, սկզբունքների մէջ։ Գուցէ ուրիշների համար այդ

ստիպմունքն աննկատելի է և անզգալի, իսկ շատերի համար նոյն իսկ քաղցր, բայց ինձ համար միշտ անտանելի է եղել, է և կը լինի, եթէ շարունակեմ ապրել։

Այժմ, երբ կանգնած եմ մահուան դռանը, այդ ստիպմունքը գոյութիւն չունի ինձ համար։ Ես ազատ եմ, ինչպէս օդը։ Եւ, երբ մտածում եմ, որ վաղը և յաւիտեան չպիտի մտածեմ այլ ևս, ինձ թւում է, թէ այս բոպէին ամենաերջանիկն եմ ես բոլոր մարդ արարածների մէջ։ Եթէ մի բան կայ, որից վախենում եմ այս բոպէին, այդ այն է, թէ մի գուցէ այնպէս պատահի, որ ստիպեն ինձ դարձեալ ապրել։ Չէ՞ որ «քաղաքակրթութիւնն» ու «մարդասիրութիւնն» այնպիսի «բարոյական» (ինչ տխմար բառեր) օրէնքներ են սահմանել, որոնց զօրութեամբ մարդն ազատ չէ մինչև անգամ իր սեպհական կեանքին վերջ տալու։ Եթէ ես, փոխանակ սենեակումս փակուած՝ անձնասպանութիւն գործելու, կամենայի կամրջից գետը նետել ինձ, կը բռնէին, թոյլ չէին տալ։ Եւ ես իրաւունք չէի ունենալ բողոքելու։ Իսկ եթէ բողոքէի, դժատուն կը տանէին ինձ։ Ահա թէ ինչու անձնասպանութիւնն էլ, գողութեան պէս, ծածուկ է կատարւում։ Բռնութիւն, բռնութիւն և բռնութիւն—ահա թէ ինչով է շրջապատուած մարդը կեանքի մէջ։ Եւ ես հրաժարւում եմ հասկանալ նրանց, որոնք դատապարտում են այդ բռնութիւնից իրենց օձիքն ազատողներին։

Զգիտեմ, իմ մահը ում և ինչ ցաւ կը պատճառի թէ ոչ. բայց հաստատ գիտեմ, որ մայրս կամ իսկոյն, կամ շատ շուտով կը մեռնի։ Է՛հ, այդ աւելի լաւ։ «Մարդ մի անգամ պիտ մեռնի», բայց երանի՜ նրան, ով շուտ կը մեռնի։ Հազար և բիւր երանի կը լինէր, եթէ ես

մեռնէի այն ժամանակ, երբ դեռ չէր զարթել գիտակցութիւնս։

Գիտակցութի՜ւն... Ահա թէ որտեղ է մարդուս բոլոր թշուառութեան աղբիւրը։ Կը կամենայի իմանալ՝ ով է եղել այն երևելի ծաղրածուն, որ մարդուն անուանել է «ստեղծագործութիւնների պսակ»—մի անհման ծաղր, որ մենք ցարդ լուրջ բանի տեղ ենք ընդունում ու գործածում։ Ա՛յն, ինչ որ բնութիւնը մեզ տուել է իբրև լոկ պատիժ, մենք առանձին շնորհք ենք համարում և պարծենում։ Նա մեզ գիտակցութիւն է տուել, որ շարունակ տանջուենք, իսկ մենք յիմարաբար կարծում ենք, թէ դա մի պսակ է մեր գլուխը զարդարող։

Եթէ ես աշխարհիս տէրը լինէի, կը հրամայէի ոչնչացնել այն բոլորը, ինչ որ նպաստում է մարդու գիտակցութեան, իմացականութեան զարգացմանը, որովհետև ամեն մի քայլ, որ տանում է դէպի զարգացումը, տանջանքի մի նոր դուռ է բաց անում մարդու համար։ Գիտութիւնն ընդունակ է մարդու մէջ զարթեցնելու մի անյագ հարցասիրութիւն, որի առաջ նոյն իսկ ինքն ընկճուում է ինչպէս մի թզուկ իր զարթեցրած հուժկու գաղանի առաջ։ Քաղաքակրթութեան գործն այն է, որ մարդու պահանջներն է աւելացնում—բոլորովին աւելորդ պահանջներ—և տասը նոր պահանջից հազիւ մէկին միայն կարողանում է գոհացում տալ։ Մարդու ուղեղը հեքիաթական այն քնած վիշապն է, որը զարթնելուն պէս անյագ քաղց է զգում. որքան շատ ես տալիս, որ քաղցը յագեցնէ, այնքան աւելի է պահանջում։ Արդ՝ քանի որ ընդունակ չես և անկարելի է նրա քաղցը յագեցնել, աւելի լաւ չէ՞, որ թողնես հանգիստ քնած մնայ իր համար։ Քանի՞ դրոշ արժէ մի դրութիւն, որ հին իմաստասէրը բանաձևել է այս խօսքերով. «Ես միայն մի բան գիտեմ. այն՝ որ ոչինչ չգիտեմ»։ Արժէ՞ արդեօք, որ մարդ այնքան տանջուի, չարչարուի միմիայն այն բանի համար, որ վերջ ի վերջոյ իմանայ, թէ ինքը ոչինչ չգիտէ։

Կարլէյլը ասում է. «Երբ մարդը քաղցած է, հաց է պահանջում, բայց երբ կշտացաւ, հարցնում է՝ ինչու եմ ապրում»։ Ես կուզէի, որ ոչ մի քաղցած մարդ չլինէր, այն ժամանակ ամեն մարդ կիմանար և կըհամոզուէր, որ իզուր է ապրում։ Այստեղ ես գալիս եմ մի զարմանալի եզրակացութեան. արդեօք քաղցածները չէ՞ն, որ անմիջական պատճառ են հանդիսանում մարդկութեան կեանքի յարատևութեան։

Լաւատեսներդ վախկոտ էք և իբրև վախկոտ՝ խաբեբայ էք։ Դուք խաբում էք թէ ձեզ և թէ ուրիշներին։ Դուք համարձակութիւն չունիք ուղղակի նայելու միակ բացարձակ ճշմարտութեան՝ մահուան երեսին։ Ձեր ամբողջ վարդապետութիւնը հիմնուած է կեղծիքի և ինքնախաբէութեան վրայ։ Դուք սուտ էք խօսում, երբ կաշուց դուրս էք գալիս ապացուցանելու համար, թէ ապրելը յիմարութիւն չէ։ Կեանքին նուիրած բարձրաձայն օրհներգների մէջ դուք աշխատում էք խլացնել մահուան ճիչը, որ սարսափեցնելով սարսափեցնում է ձեզ։ Դուք էք, որ ասպարէզ էք նետել «գոյութեան կռիւը», որպէս զի փախուստ տաք մահից։ Դուք շրջապատել էք ձեզ սիրոյ, ատելութեան, կրքի և նախանձի հազարաւոր բարդ իլլիւզիաներով, որպէսզի դրանց թանձր մշուշի մէջ չտեսնէք մահուան անդունդի անտակ խորութիւնը, որի մասին մտածելիս սառչում է ձեր արիւնը։ Ձեզ ծանօթ չէ մռայլ յոռետեսի հպարտ արհամարհանքը, որի առաջ փշրուում, խորտակուում է ամեն ինչ։ Խելագարին յատուկ յամառութեամբ դուք գնում էք որոնելու, որ պաշտէք, մի ինչ-որ, թէ ինչ,

—ինքներդ էլ չգիտէք։ Հին կուսապաշտների նման աստուածներ էք հնարում ձեզ համար և երևակայում, թէ դրանք են ձեր որոնածը։

Օ՜, ողորմելիներ, օ՜, թշուառականներ, օ՜, ատելի սորուկներ...

Դեռ ևս Եպիկուրն է ասել՝ «Մահը մեզ չի վերաբերում»։ Եւ Շոպենհաուէրը,—քո արհամարհած Շոպենհաուէրը,—այսպէս է բացատրում այդ խօսքերի իմաստը. «Երբ մենք գոյութիւն ունինք, չկայ մահ. իսկ երբ կայ մահ,—մենք չկանք։ Կորցնել մի բան, որի բացակայութիւնը կարելի չէ զգալ, դա ցաւալի չէ. հետևաբար գալիք անգոյութիւնը (մահը) մեզ չի վերաբերում, ինչպէս որ մեզ չի վերաբերել անցեալ անգոյութիւնը» (այսինքն այն, երբ մենք դեռ չէինք ծնուած)։

Մի քանի բոպէից յետոյ ես այլ ևս չեմ լինիլ կամ, այլ խօսքով ասած, կը լինիմ գալիք անգոյութեան մէջ։ Մի քանի բոպէից յետոյ ընկած կըլինիմ յատակի վրայ՝ դանգս ցրիւ եկած, արեան մէջ շաղախուած։ Մայրս,—խեղճ, դժբաղդ պառաւ,—կոծելիս կըլինի ծնկները, սենեակս լիքը կըլինի ոստիկաններով և հետաքրքիր մարդկանցով։ Կուզէի մեռած ժամանակս էլ տեսնել՝ դիտելու համար այդ յիմար մարդկանց իրարանցումը, որպէսզի մի կուշտ ծիծաղէի։

Համլէտն անշուշտ ամենամեծ տխմարներից մէկն է եղել, որ դեռ ևս տարակուսել է, թէ մի գուցէ այնտեղ՝ անդրգերեզմանական կեանքի մէջ էլ ինչ-որ երաղներ խանգարեն իր յաւիտենական հանգիստը։ Եթէ մի վայրկեան անգամ այդպիսի տարակուսանք անցնէր մտքովս, այն ժամանակ մեռնելուց առաջ, անշուշտ, եօթն օր կըքաւէի մեղքերս. մինչդեռ այժմ, ինչպէս տեսնում ես, դեռ հայհոյում էլ եմ և հայհոյում ամենահանգիստ խղճով, որովհետև համոզուած եմ, որ հայհոյանքը նոյնքան արժէք ունի, որքան և աղօթքը, այսինքն—ոչ մի արժէք չունի։

Կան չափազանց խորամիտ, բայց և խիստ բարեմիտ մարդիկ, որոնք այն աշխարհի կրօնական գաղափարը մեկնաբանում են իբրև իրականութիւն։ Նրանք այնքան խելօք են, որ, իհարկէ, չեն հաւատում դժոխքի և դրախտի, սատանաների և հրեշտակների գոյութեան, բայց և իրենց խորամտութեամբ հանդերձ այնքան միամիտ են, որ կարծում են, թէ կրօնական այդ ցնդաբանութիւնները որ հանեն հիւանդոտ երևակայութեան աշխարհից և դնեն իմ առաջ իբրև իրական փաստ, ինձ և ինձպէսներին կը համոզեն, թէ դրանք սուտ չեն։

Եթէ կայ մի բան, որ ճշմարիտ է, դա մահն է, որովհետև ճշմարիտն այն է, ինչ որ յաւիտենական է, իսկ մահն է միայն, որ յաւիտենական է։ Ժամանակը գոյութիւն ունի այնքան, որքան մենք ապրում ենք, իսկ մեռնելուց յետոյ ժամանակ գոյութիւն չունի կամ, ուրիշ խօսքով, գոյութիւն ունի այն, ինչ որ մենք անուանում ենք յաւիտենականութիւն։ Մենք մեզ համար սահմանել ենք ժամանակի որոշ չափեր և դրանով ենք ուզում չափել նոյնիսկ անդրգերեզմանական կեանքի տևողութիւնը, եթէ միայն կեանք կարելի է անուանել այն, որ մարմինս հող կը լինի դարձած, այդ հողի վրայ խոտ կը լինի բուսած և այդ խոտի մէջ արածելիս կը լինի մի գառ, որպէսզի այդ գառան միսն ուտողները վերջն ինձպէս հող դառնան և այլն... Կոմեդիա, կատարեալ կոմեդիա... Եւ երբ մտածում ես, որ համաշխարհային այդ կոմեդիան պիտի շարունակուի անվերջ, առանց վերջնական նպատակի... Ծիծաղում ես և, միևնոյն ժամանակ, ապշում, որ մարդիկ,

այս բոլորը գիտենալով հանդերձ, ինչ-որ նոր տարիներ են հնարել, ուրախանում են, տխրում, սիրում, ատում, նախանձում, սպանում, աշխարհ բերում նոր արարածներ... Ցիմարանոց, հսկայական ցիմարանոց... Կալիգուլան ափսոսում էր, թէ ինչու հռովմէացիք մի գլուխ չունէին, որ թրի մի հարուածով վերջ տար նրանց կեանքին։ Նա ափսոսում էր չարութիւնից։ Նոյնն ես եմ ափսոսում ամբողջ մարդկութեան համար, միայն —խղճահարութիւնից։

Բայց եթէ մարդկութիւնը մի գլուխ չունի, ես իսօ մի գլուխ ունիմ։

Գանգս... «Ի՞նչ բան է այս անօթը,—ասում է Շելլինգը,—որ իր մէջ պարունակում է ամբողջ աշխարհը, ամբողջ երկինքը։ Ի՞նչ բան է մոգական այս ամբոցը, ուր սէրն իր հրաշքներն է կատարում, ուր ամեն ինչ, ինչ որ փառաւոր է և վեհ, ինչ որ նողկալի է և սոսկալի, գտնւում է իր սաղմի մէջ կողք-կողքի։ Ի՞նչ բան է գանգ կոչուած մարդկային այս գլուխը, որ ստեղծում է տաճարներ, աստուածներ, ինկվիզիցիա և դևեր։—Որդի՞ բնակարան»։

Այո, միմիայն որդի՞ բնակարան։ Բայց այդ միայն մահից յետոյ։ Իսկ մահից առաջ—տանջանքի՞ շտեմարան։

Օ՜, իսկոյն, իսկոյն կըփշրեմ, կոչնչացնեմ տանջանքի այս շտեմարանը։ Բաւական է, որքան այս անտանելի ծանրութիւնը կրեցի ուսերիս վրայ, այլապէս՝ մինչև ե՞րբ և ինչո՞ւ...

Շոպենհաուէրն ասում է. «Մահուան բոպէն կարող է նման լինել ծանր պատրանքից արթնանալուն»։ Ես ուզում եմ արթնանալ կեանքի ծանր պատրանքից՝ մահուան գիրկը նետուելով։

Ես մեռնում եմ խղճալով ձեզ, կեանքի ստրուկներ, որ ինչքան էլ կամենաք ապրել, այնուամենայնիւ վերջ ի վերջոյ պիտի գաք իմ ետևից...

Շահեանի թաղմանը ներկայ էին, ի միջի այլոց, օր. Սահակեանն ու Մարութեանները։ Մինասեանը չէր հեռանում հանգուցեալի մօր մօտից։

Շահեանը կարծես քնած էր դագաղի մէջ։ Նրա ծնօտները կապած էին սպիտակ թաշկինակով, որ միևնոյն ժամանակ ծածկում էր քունքի և գանգի ջարդուած մասը։ Նրա փոքր ինչ բաց շրթունքների վրայ սառել էր հեգնական մի ժպիտ։

Եւան եկեղեցում կանգնած էր դագաղի մօտ, և նրա ուշադրութիւնն ակամայ գրաւում էր հանգուցեալի այդ ժպիտը։ Նրան թւում էր, թէ Շահեանի շրթունքների վրայ այդ ժպիտը մնացել էր այն րոպէից, երբ գրել էր իր վերջին տողերը. «Անձնասպանութեանս համար ոչոքի չմեղադրել, բացի Աստծուց»։ Ի՞նչ էր այդ՝ կատակ, թէ հայհոյանք։ Մի՞թէ կարելի է կատակ անել մահուան հետ։ Եթէ հայհոյանք—մի՞թէ կարելի է հայհոյել խորհրդաւոր անյայտութեան դուռն առաջ կանգնած միջոցին... «Մի՞թէ եղբայրս իր մահուան ժամանակ կարող էր այսպէս ժպտալ»—մտածեց Եւան և նոյն րոպէին փշաքաղուելով յետ նայեց ակամայ։

Նա տեսաւ Աշխէնին, որ չոքած էր կանանց դասի սիւնի տակ և խուլ կերպով հեկեկում էր, աչքերը թաշկինակի մէջ սեղմած...

ՎԵՐՋ

ՀՐԱՏԱՐԱԿ
ՀԱՅԿ ... ՍՍՌ
Ա. ԻՄ Ա. ...
Ա. ՍԵԱՄԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1
2

«Ազգային գրադարան»
NL0353065

46186
Apr
2-12672